Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1024

1336
S-56

1000

Printed in Turkey

360

384

2010

S-45

Ա. ՏԸՊԵՒ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ

ԾԱԾԿԵՅԵԼՈՅ

ԿԱՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԹԱԳՈՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ՈՐ Ի ՆԱԽՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՑ ՀԵՏՔ ՄԻՆՉԵՒ ՅԱՅՍՕՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Ն. ՁԻՎԱՆԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

1875

133
Տ-56

Ա. ՏՐՄԵԻ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ
ԾԱԾԿԵՑԵԼՈՑ
ԿԱՄ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԹԱԳՈՒԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ՈՐ Ի ՆԱԽՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՑ ՀԵՏԷ ՄԻՆՉԵՒ ՅԱՅՍՕՐ

ՄԱՑԱԿԱՆ, ՀՐԱՏԱՊԱՐԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԱՆ ԱՐՈՒԵՍՏՔ. ԳՂՂՏՆԻՔ, ԽՈՐՀՈՒՐԴՔ. ՆԱԽՆԻ ՄԵՀԵՆԻՑ ՄԻՆՉ ԿԻՐԱԿՈՒԱԼ ՊԱՏՐՈՂԱԿԱՆ ՀՐՆԱՐՔ. ԿՈՉՈՒՄՆ ՈՉԻՑ. ՆԻՒԹՄՈՒՆՔ.—ՕՐԲԱՋԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԻՇՔ.—ՄԵԾՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ.—ՀՐԱՐՈՒԵՑԻՑ.—ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ.—ԳԻՇԵՐԱԺՈՂՈՎ. ՎՀԱՆՑ.—ՎՀՈՒԿՔ.—ԴԻՒԱՑԼՔՔ.—ԱՑՑԱՀԱՐՈՒԹԻՒՆՔ.—ԳԻՒԱՂԱՔԱՐՈՒՄՔ.—ՄԱՆՆԻՄԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—ԽԱՂԻՐԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅԼՆ

ՀԵՂԻՆԱԿ Ա. ՏՐՄԵՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՆՇԱՆ. ՁԻՎԱՆԾԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ

1874

9226-ш

Printed in Turkey

ՅԱՒԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Եթէ կայ բան մը որ 19րդ դարու ամենէն աւելի փառք ու պարծանք պատճառէ, այն ալ ուսմանց եւ դիտութեանց լուսոյն, խմաստասիրութեան եւ ուղիղ տրամաբանութեան լուսոյն օր քան զօր ժողովրդեան անուս եւ սառեցեալ մասին մէջ ներմուծելն եւ ամենէն տկար մտաց ալ դիւրամատչելի դառնալն է։

Ժամանակակից այն մարդասէր դիտնոց մէջ, որ այսպէս բարձրագոյն կարգի դիտութիւնքն ռամկացնելու (vulgariser) եւ հին ու փտած նախապաշարմունքն ժողովրդոց մտքէն ցրելու գովելի նպատակաւ քիրան ու աչխատութիւն չունին խնայեր, մեծ տեղ մը բռնած է Ա. Տըպլէ Գաղղիացի բազմահմուտ հեղինակն իր յոդնաթիւ բանասիրական, առողջապահական եւ ուսումնական երկերովը, ինչպէս են Առողջապահութեան ահաւոր թշնամիքն, Ընական պատմութիւն առն և կնոջ, Թաքուն չէթութիւնք, Դաղտնի փոյթ և ամբնիւանութիւն, Կոքընիական չնչերթ, Առողջաբանութիւն ներքնոցի եւ այլն եւ այլն, ամենքն ալ մինչ քան զմիւսն առաւել հետաքրքրաշարժ եւ հրանանգիչ գրուածներ, եւ որոց առաջին երկուքն արդէն հայերէն թարգմանուած եւ մեծ ընդունելութիւն գտած են ժողովրդէն։

Այս տեղ արդարեւ ցաւալի է ըսել որ մինչդեռ եւրոպիոյ դիւաւոր վիպասանաց, ճարտասանաց եւ բանասաղծից գրեթէ մեծ մասին գործերն ի հայ վերածուած են, մինչդեռ Վիկտոր Հիւկօ, Ժօժէն Սիւ, Ա. Տիւմա, Լամարտին, Պօսիւէ եւ այլք ծանօթ են հայ բանասիրաց, կանդի, Էպինէյ, Լոքը, Քիւվիէ, Տարուինի, Թիէրի, Հումպոլտի, Պիւխնէրի, Առամ Սմիթի եւ այլ սոցա նման մեծահռչակ խմաստասիրաց,

Յաւարտ բանից, բանասիրաց ներողամտութիւնն հայցելով մեր աչխատասիրութեան թերութեանցը վրայ, կը յուսամք թէ ընթերցասէր հասարակութիւնն զմեզ իւր համակրութեամբն կը վարձատրէ։

Ն. ՃԻՎԱՆԵԱՆ

բնագրատուից, բնագիտաց, մատենագրաց, աչխարհագրաց եւ մանաւանդ անուանքն իսկ դեռ չ'են մուտ գտած հայ դրականութեան տաճարին մէջ. այնպէս որ օտար լեզուաց անծանօթ հայ մը պիտի կարծէ թէ բառասեղծներ եւ վիպասաններ միայն կան յԵւրոպա։ Իրաւ է որ Վենեկոյ հարք նախնի անուանի հեղինակաց երկերէն մեծ մաս մը թարգմանած եւ հետզհետէ թարգմանելու ալ վրայ են. բայց սոքա եւս իրենց չըբաւանակ դէրքէն ստիպեալ՝ Եւրոպիոյ վառքն եղող վերսիչեալ հեղինակներէն եւ ոչ մին կրցել են ծանօթացնել ազգին։

Եւ ասկայ այս աչքը ածնէ ասելէ պէտ առնէ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ, ածնէն ասելէ պէտ առնէ ԴՐԱԿԱՆ ԳՐԵԱՆՑ...։

Արդ մեկ կողմանէ իրաց այս վիճակը ցաւօք սրտի դիտելով, եւ միւս կողմանէ հայ ժողովրդեան ազէտ մասին եւ մանաւանդ Հայաստանի ռամիկ ժողովրդեան մէջ ծրքան անթիւ նախապաչարումներ գտնուիլն եւ ծրքան խաբեբայից անունդի օգտին ուռնելով, այս մասին ազգին մերօրեան ծառայութիւն մը մատուցանելու մտօք, զբաղմանէ պատրաստած հանդուռեան ժամերնուս մէկ մասն սոյն երկասիրութիւնս թարգմանելու նուիրեցինք, եւ այժմ 'ի լոյս կընծայեմք։

Գործոյս հանդամանացը վրայ խօսելով որ հեղինակը ինքն խօսի, սա միայն դիտել կուտամք ընթերցողաց որ Տըպէզի ամեն կարծեացը չ'ենք կրնար համամիտ գտնուիլ, մանաւանդ կրօնական խնդրոց եւ հրաչեայ մասին. սակայն եթէ միտք բերենք թէ Լատին կրօնաւորք եւ մանաւանդ Ճիզուիթք յանուն կրօնի ինչեր չ'են ըրեր Եւրոպիոյ մէջ, ինչ խաբեբայութիւններ, ինչ ծաղրելի հրաչքներ, ինչ անպիտանութիւններ, հեղինակին չափազանցութիւնքն թերեւս նուազ մեղադրելի համարուին։

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԵՎԷՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՅԱՒԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Նախնի ժամանակաց եւ միջին դարու մէջ թագուն դիտութեանց ծագմանն ու վիճակին վրայօք կատարեալ պատմութիւն մը ներկայացնել հետաքրքրաց, անհուն աշխատութիւն մ'է՛ր, յոր ուսմանց եւ գիտութեանց ներհուն բազմաթիւ պիտոյ աջակցութեամբն ձեռնարկեցինք։ Զի այս բանիս համար հարկ էր ոչ միայն այն հեռաւոր դարուց պատմական յիշատակարանքն քննել, եւ նոցա ամենեւին ազգային եւ անհետ թեթ մասերն յայտարել։ այլ եւ բնագիտական մեկնութիւնն պէտք էր տալ այն աքանչելարուեստ եղելութեանց եւ հրաշից, զորս կիւսահնդայք եւ հրաշագործք կրնային գործել։ Այն ինչ մեծաւ դժուարութեամբ յաջողած էինք հաւաքելու խել մը նիւթեր այս մեծ չէնքս կառուցանելու համար, եւ ահա դժնդակ հիւանդութիւն մը մեր հետապօտութիւնքն ընդմիջեց։ ուստի այն երկիւղիւ՝ թէ մի գուցէ ակեսել գործն չ'կարենամք ի դլուխ ածել, անհատակի ի լոյս կընծայեմք աշխատասիրութիւն մը, որ թէ եւ կարի անկատար, բայց եւ այնպէս ընթերցողին գաղափար մը կուտայ, թէ ինչ էին թագուն գիտութիւնք ըստ ածն ազիտութեան եւ բարբարոսութեան դարուց մէջ։ Ներկայ գործոյս ինչպէս նաեւ Մաքնէսականոլիեան քաղքենւոց մէջ մանաւորապէս միաք դրած եմք հետաքրքրաշարժ ծանօթութեամբք, վաւերաւն նկարագրութեամբք եւ թատերգական գործուածոց կիրառութեամբ ընթերցողին ուշադրութիւնն գերել, եւ զմեզ լուրջ խնդրոյ մը վրայ թեթեւօրէն ճառած ըլլալնուս համար կշտամբողաց՝ զոյն ինչ յառաջ մէջ բերած պատճառներս յիշելով, կըսեմք թէ՝ կարի լուրջ գրուածներն ընթերցողք

չատ քիչ կը պահուին. մինչդեռ մեք որ խնամանոց քուէն սահմանելու մնապարծութիւնն չ'ենք ստծեր, մեր նպատակն է հասարակ ժողովուրդն եւ մանաւանդ կանայքն լուսաւորել եւ նոցա մտքէն դիւրահաւատութիւնն եւ մնապաշտութիւնն, որք աղբիւրք են այնքան աղէտից, արմատաքէն քեզել, հանել: Կարդացուելու համար հարկ է ընթերցողին հետաքրքրութիւնն չարժել, եւ ահա առ այս նկրտեցաք մեք եւս այն եքիսիրութեանս մէջ:

ԾԱԳՈՒՄՆ

ԹԱԳՈՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Ապաքէն ամէն տուն, եւ ամէն ժողովրդոց մէջ հրաչալին հետաքրքրութեան, երկիւղի եւ մեծարանաց նիւթ մը եղած է: Հրաշալի ըսելով կուզենք հասկնալ այն քնական երեւոյթներն որոց պատճառը անյայտ կը մնայ ասմիկին. երեւոյթք առաւել կամ նուազ հետացուիչք զորս բազում անձինք դերբնական յայտնութիւններ կը համարին:

Այսպէս, մարդկային ընկերութեան ողջութեան ժամանակ, քան զայլս առաւել խելացի եւ առաւել ուշադիր անձինք աստեղաբաշխական ինչ ինչ օրէնքներ, քնագիտական կամ տարրալուծական մի քանի դաղտնիքներ գանելու յաջողելով իրենց նմանեաց աչքին ինքզինքնին իբր Աստուածութեան հետ հաղորդակցութիւն ունեցող առանձնաշնորհեալ էակներ ցուցնել ուզեցին: եւ արդարեւ դժուար չ'եղաւ իրենց, այն ըրած գիւտերնուն չնորհիւ, ոտիէտ եւ անտեսանելի մարդկանց զարմացումն գրաւել եւ պատկառանք ազդել նոցա: Այսպէս եղան գլխաւոր օրէնսդիրք եւ աշխարհակալք հնութեան, ինչպէս Վիշնու, Գրահմա, Մինոս եւ ուրիշ մեծ մարդիկ որք իրենց երկրին օրէնքներ սահմանեցին:

Անհաւն եւ սրամտանական պատճառաբանութիւնը անհամեմատ է յիրաւի ժողովրդեան ամենամեծ մասին: Նա կուզէ հրաշալիք, արուեստք, նորանշան երեւոյթք որ գինքն յուզեն, զարմացնեն, յափշտակեն

եւ զարհուրեցնեն . եւ ահա այս պատճառաւ է որ ամեն ատեն խորագէտ փառասէրը հասարակաց դիւրահաւանութիւնն յօգուտ ՚ի կիր արկին , իբր ճոխ եւ անսպառ հանք մը , հարստութիւն , պատիւ եւ մեծութիւնք ձեռք բերելու իրենց եւ իրենց հաւատարիմ արբանեկաց համար :

Ապաքէն լուսաւորեալ մարդոյն համար ամենայն ինչ հրաշալիք է բնութեան գործողութեանց մէջ . բայց ոչինչ զերբնական է՝ : Սա երբ տարօրինակ երեւութի մը ականատես լինելու ըլլայ , փոխանակ զարհուրելու անկից , նորա պատճառն ի՛որոնէ եւ երեք չկարենայ իսկ գտնել , ի՛սպասէ որ իրենէն աւելի յառաջացեալ հանճար մը անոր բացատրութիւնն տայ : Եւ ահա այսպիսեաւ է որ դիւութեանց ջանն՝ մարդկային հանճարոյն հայհոյեալ հրոյն արծարծելով տակաւ առ տակաւ միջին—դարու նահեմ մայրն փարատեց :

Պատմական ամենէն հնագոյն յիշատակագրոց նայելով Ընդհատան առաջին կիւսահմայից կամ այն հեռագոյն դարուց բնագիտաց խանձարուրքն եղաւ : Անկից այն գիտութիւնս , տակաւին իր սկզբնական վիճակին մէջ եգիպտաց անցաւ , ուր ՚ի տուղ ժամանակի մեծաքայլ յառաջադիմից . բայց անդ եւս քրմաց դասն զայն իր ձեռքն անցնելով , մեհենից սրբավայրին մէջ ծածուկ պահեց զայն , մանուան պատիժ սպառնալով ամեն անոնց որ զայն անսուրբ մարդկան հաղորդելու յանդգնէին՝ : Շատ չ՚անցաւ թագուն դիտութիւնք աստուածպետական ցեղին ամէն անցնելով այնպիսի զօրութիւն մը դարձան , որոյ առջեւ փարատեռներն իսկ սոսկալեցան խոնարհիլ : Խոհեմ հռչակաւոր խորհուրդներն եւ եգիպտական մեծամեծ քաղաքաց մեհեաններուն մէջ նորընծայից վրայ կատարուած արարողութիւնք՝ խորին յարգանք մը ազդեցին խառժամուժին , եւ ահա այնպիսեաւ ժողովրդական տոհմերն (castes) առանձնաչնորհեալ կամ աստուածպետական տոհմին երկրպագեալ դասուցանին՝ ներքեւ տարկաբար դրոշմեցին ծանեցին :

Ո՛չ միայն մահու սպառիժ սահմանուած էր գաղտնիքներն հրապարակելու յանդգնողաց դէմ , այլ եւ քրմապետաց ժողովն այնպէս որոշում տուած էր որ նորընծայն զարմացնելու կամ զարհուրեցնելու համար ՚ի գործ դրուած հնարքներն ոչ հասարակ դրութեամբ եւ ոչ մեհենադրօմ տառերով գրի չ՚առնուին . հապա մանաւոր նշաններ , որք իրենց միայն ծանօթ էին , հնարուած էին անոնց աւանդութիւնն պահելու համար :

Այն գաղտնիքներն յորոց կը բաղկանային այն ժամանակի թագուն դիտութիւնքն , ընդհանրապէս բնադիտութենէ , տարրալուծութենէ եւ աստեղաբաշխութենէ յառաջ եկած բաներ էին , դիպուածով կամ այն դարուն դիանոց հետազօտութեամբն գտնուած : Քահանայական դասն՝ իրենց հանճարովն եւ կամ մանաւոր կարողութեամբն նշանաւոր որ եւ է մարդիկն աւինքն ձգելով կը վարեր իր խորհրդոցը հաղորդակից կընէր զանոնք , եւ այսպէս ամեն անդամ որ ուրիշին չյայնելու կարող նորահրաշ գաղտնիք մը գտնուէր , այն տոհմը անմիջապէս ձեռք կ՚անցնէր զայն եւ ՚ի պահանջել հարկին կը գործածէր : Եւ ահա այն գաղանութեան չնորհիւ , եւ ճարտարութեամբ զայնս ՚ի կիր արկանելովն էր որ նա իր՝ միւս դասակարգութեանց վրայ

---

[1] Ընթերցողը հեղինակին « Կուրիւեռ էնդր » վերնագրով հետաքրքրաշարժ աշխատասիրութեանը մէջ Թեսմոփորեանց կամ Եղեւսիսի խորհրդոց մէջ անցած հղելութեանց ճշդիւ նկարագրութիւնն կրնայ գտնել : Այժ յիշատակագիրս , քսա Աբիսոփանայ Բուզանդացւոյ ամենէն աւելի ընթերցման արժանի բաներէն մէկն է :

ախրապետութիւնն ; իւր առանձնայնութեամբ պիրքն եւ իւր անհուն հարստութիւնքն առացաւ : Սակայն եթէ այս գաղանեացս մէջէն կային այնպիսիք որք օգտակար էին աշխարհավարութեան , մակացութեանց եւ արուեստից · խել մ'ալ այնպիսի բաներ կային որ զբաղս մը դիւրահաւանութեան կրնային միայն վայելիլ , եւ կամ աննպաստ անձր մնապաշտութեան արգասիք էին , ինչպէս որ գործոյս ընթացքին մէջ յաճախ զայս ապացուցանելու առիթն պիտի ունենամք :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԹԱԳՈՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա·

ՀԱՏՈՒԱԾ Ա·

ՄՈԳՈՒԹԻՒՆ

Իւր Տագուհի ու յատկագիտութիւնք

Մոգութիւն բառն իւր նախնական առմամբըն կը նշանակէր ջերմութիւն Մուսոյ . իսկ այս գիտութիւնս բնագիտական զանազան եղելութեանց գաղանի ծանօթութենէն և զայնս նմանողութեամբ յառաջ բերելու արուեստէն կը բազկանար :

Մեք այս տեղ զհետս չպիտի ըլլամք պտռնել գտնելու թէ ո՛վ եղաւ արդեօք առաջին անգամ Մոգութեամբ զբաղողն : Մեր ներհաւանգիտանոց կը թողումք վիճիլ իրենց մէջ թէ արդեօք Հերմէս Եռամեծն , եթէ Սէթ կամ իւր չորրորդ զաւակն Յարեդ , զարձեալ թէ արդեօք Նոյայ որդւոյն Քամ՝ թէ չէ՛ Մոգուց կրօնին հիմնագիրը Զրադաշտայ վերագրելի է Մոգու-

թեան առաջին ուսուցին։ Մեզ բաւական միայն պիտի ըլլայ ըսել թէ այս հեռագոյն ժամանակաց մէջ, յորս մարդոյն հանճարն չէր կրցած տակաւին բնագիտական մակացութեանց սըրբարայրին մէջ ներմուծանել, Մոզերն կամ Քաւդեայք, Աբեւելից և մանաւանդ Հընդկաստանի մէջ ամառնած այս տեսակ մը քրմերս բնութեան և իմաստասիրութեան ուսմանն եւեւէ կըլլային։ Մանրակրկիտ դիտողք այն ամէն երեւութից սրբ իրենց աչացն առջև կը հանդիսանային, կը ջանային զդիւնքներէն ի պատճառն եղնել և այսու այս վերջնոցս բացատրութիւնն գտնել։ Իրբ յարատև, անդեղլի ճանչցուած իւրաքանչիւր երեւոյթ խնամով ի գիր կառնուէր իրենց տարեգրոց մէջ ուրիշ արդէն մեկնուած իրողութեանց քով։ Ահա այսպէս քայլեց դարերով այս ուսուցիս, որոյ բոլան դակութիւնն ի սկզբան ուրիշ բան չէր, բայց եթէ բնագիտական երեւութից և տարրալուծական բաղակցութեանց կոյտ մը, որք թէև բոտ մեծի մասին բազդովին գտնուած, բայց և այնպէս օր մը նիւթոյ տէղ պիտի ծառայէին բընագիտական գիտութեանց այն զարմանազան շէնքն կառուցանելու որ արդի քաղաքակրթութեան փառքերէն մին է։

Հնդկաստանէն Մոգուց գիտութիւնն աշխարհի ամենէն հին ժողովուրդներէն մին եղող Քաղդեացւոց՝ և անկից ալ Եգիպտացւոց անցաւ, որ իսկ թեամբ աստուածպետական կառավարութեան մը լծոյն ներքև կորացեալ նանրահաւատ և դիւրահաւատ ազգ մ'էր։ Անդ Մոգութիւնը, տաճարաց խորը պահուելով քահանայական դասուն մէջ կեդրոնացաւ. դաս մը որ այնքան երկար ժամանակ մարդկային մտաց յառաջադիմութեանց միակ ատենադպահն եղաւ։ Պատմութիւնը մեզ կը տեղեկնայ թէ ինչ անհաւն օգուտ դիտցաւ նա քաղել անկից, ժողովրդոց վրայ տիրապետելու և սրբազից ազդեցութիւնն հաստիչելու համար։

Ներհուն յուսմնոց գիտութեանց Մոխես Մէմնիսէս կը պատմէ մեզ թէ Քաղդեացւոց մոգութիւնն երկու մասի կը բաժնուէր, յորոց առաջինն նիւթը բուսերինաց, հանքածոյից և միւսոցաղաց ծանօթութիւնն էր. իսկ երկրորդը բնագիտական և բնաւրուծական գործողութեանց յաջողութեամբ կատարելուն յարմար ժամանակին, եղանակն ու օգտին միջակը կորոշէր։ Ա. յս հետազօտութիւնքս, առաջին ուղղութիւնք բնական մակացութեանց, իրենց հետեւողն՝ ոգեւոր ուսումին աչացը միշտ հրաշալի կամ գերբնական երեւոյթ բնութեան երեւոյթներն կանխապատրաստելու կարող կընէին։

Քաւդեութիւնն խիստ մեծ դեր մը կը խաղայ եփրատական աւանդութեանց մէջ. — Քահանայիք Ասուրոյ բարիութեանն հանդիպեցան հմայք գործածելնուն համար. — Բաղաամ՝ Եմոսպացւոց Թագաւորէ մը պաշարուելով իւր Թշնամւոյն ձեռքն ինքզինքն ազատելու համար մոգութեան դիմեց։ — Փարաւոնի մը ամուսինն, մոգութեան ներհուն, անոր գաղանիքն Նեղոսի

Հաւրց վրայ ընկճելի եղած մանկան կը հաղորդէ ։ եւայլն ։

Յունաստանի ամենէն մեծ բանաստեղծք և փիլիսոփայք , ինչպէս Որփէոս , Համեր , Պիւթագորաս , Պղատոն , Լիկուրկոս , Կալիմաքոս և այլք Հնդկաստան , Քաղդեացոց և Եգիպտոս մեկնեկան , ուր մոգուց դիտութեանն ծանօթանալով այն տեղ ստացած բնագիտական , աստեղաբաշխական և դիւցազնական տեղեկութիւնները առին իրենց հայրենիքը բերին ։ Բայց Եգիպտացւոց քրմերն՝ առանց բնաւ ուսական բացատրութեանց՝ պարզ ծանօթութիւնները միայն կուտային իրենց ։ Ասոր համար Պղատոն ամենամեծ աշխատութեամբ և բազում հեռաւորութեամբ կըցաւ խուզարկութիւն մը գուշակել ։ Նոյնպէս իւր ընդարձակ ուղեգնդային հնութիւն միայն Պիւթագորաս՝ ներքինազգին քաւականն՝ ուղղանկիւն երեքանկեան միւս երկու կողերուն դումարին հաւասար ըլլալուն ապացուցութիւնն գտաւ ։ Հուսկ ուրեմն ալ Հռոմի Յունաստանէն փոխ առնելով իւր արուեստներն ու գաղափարները , Արեւմտից մնացած մասին վրայ տարածեց զանոնք ։

Եթէ հիւսիսոյ առաւոտեյսահաւն աւանդութիւնն հարցաքննելու ըլլամք , հոն ալ մոգութիւնն միօրինակ հին , միօրինակ զօրաւոր կը գտնեմք ։ Գրոյիդք , իրենց Թաւաւուսներ անուանած մէջ , Օսինի քրմերն իրենց սառնապատ քարանձաւաց խորն , հրաշք գործելու համար Հընդկաց և Եգիպտացւոց ի գործ դրած հնարքներուն

ճիշդ նմանները կը գտնեմք հոն , և անոնց պէս խել մը առասել կամ նուազ անհեթեթ և անպատշաճական գործողութիւնները կը կատարէին ։ Ասոր պատճառ է արդեօք հետեւցնել թէ՝ հին Գաղղիական և Սքանտինաւեան քրմերն իրենց գիտութիւնն Հնդկաստանէն կամ Եգիպտոսէն առած էին , Այս հարցմանս՝ են որ ստոյգապէս և են՝ որ բացատրապէս պատասխանած են ։ Սակայն կարծեաց այս ընդդիմութեանս հակառակ , այսօրուան օրս ընդհանրապէս ընդունուած է թէ՝ առաջին անգամ գիտութեանց մէջ հմտութիւն ստացող անձինքն՝ Մոգ կոչուեցան Պարսից մէջ ։ — Մերկնմոդոփէ՝ Հնդկաց մէջ ։ — Քոռէ՝ Եգիպտացւոց մէջ ։ — Իմոդոպէէ՝ Յունաց մէջ ։ — Դրոյիդ՝ նախնի Գաղղիացւոց մէջ . . . եւայլն եւայլն ։

Բայց վաղ իսկ Մոգութիւնն իւր նախկին պարզութեան դրոշմն կորսուց ։ վասն զի աստիճանակ շարժութեանք և ձեռնածութ խաբեբայք՝ ձեռք անցնելով ինչ որ նա հրաշալի և արուեստական դերբնական բան մը ունէր , Թափառական էնթուզիազմ անուան տակ , առասել կամ նուազ պատրաստական խել մը ծածուկ արարմամբք շրջապատեցին զայն , Հշխանութիւնն ու փարիսեցութիւնքն իրենց գրաւելու , և ապէս ասոնցմէ ահաբեկելով նորա վերայ տիրապետելու կրկին նպատակաւ ։

Այս տեղ առ վայր մի կանգ առնումք , և քննեմք Մոգութեան վիճակն և իւր բուռն յառաջադիմութիւնն Հռոմէական մեծ քաղաքակրթութեան մէջ ։ Եթէ Յոյնք , Աղեք-

ОБЩ. ЧИТАЛЬНИ ГРЕЦЬКОЇ ГРАМОТИ
СОЮЗ-ССР
ІМ. А. МЯСНИЦКОГО
В. ВОЛОДИМИРСЬКА ОБЛАСТЬ

անգրի աշխարհակալութիւնները եաքը, հրապարակ ինքզինքին մագուհեան տուին, Հռոմայեցիք՝ Օգոստէայ օրով շատ եւս ձգեցին զանոնք այս մասին։ Բազմահմուտ Պլինիոս կը կոչէ Թէ՝ Օգոստէայ Թագաւորութեան վերջին տարիներն, որ այնքան նեղութեալ է իբր լուսաւորութեան եւ անգորրութեան դարաշրջան մը, բազմաթիւ փիլիսոփայք մագուհեան դաս կուտային։ — Սուէտոն կը խոստովանի, Ի նախատինս Հռոմայեցւոց, Թէ երկու հազար հարիւրէն աւելի մագուհեան եւ դուշակութեանց մատեաններ կը գտնուէին այն տեղն մատնուած ձեռքն։ — Պրոմիոս կը պատմէ Թէ Հռոմայեցիք գերեզմանաց մէջ կը թափուէին, տկրներ եւ խոտեր ժողվելու համար, որք ոգեկոչութեան արարողութեանց տեղն պէտք կըլլային։ — Տիբեր՝ դիւթերն տարագրեց. բայց ինքն ալ աստեղագէտներ ունէր պալատան մէջ, եւ առանց նոցա խորհուրդ հարցնելու՝ բան մը չէր ըներ։ — Ներոն՝ անուանի Տրդատ մոգը Հռոմ բերել տուաւ, որպէս զի նորա արհեստին գաղտնեացը խելամուտ ըլլայ։ — Վեսպասիանոս հրովարտակներով կիւտահմայներն կը հալածէր, և միանգամայն առաստաձեռն պարգեւօքը վերստին կը կոչէր զանոնք։ — Անգուստոս Դոմիտիանոս՝ անունցմէ խել մը ժողված էր իր քով, յատուկ իր անձին ծառայութեանն համար։ — Անդրիանոս անոնց վերայ կը դնէր իր վատահութիւնը. սոյն կայսրս, որ արհեստից բարեհամ, հռետորաց հետ կը մրցէր պերճախօսու-

թեամբ, խմաստակաց հետ խմաստակութեամբ, ուզից նաեւ կախարդութեամբ մրցիլ կախարդաց հետ։ — Մարկոս Աբեղիանոս՝ բնիկ եգիպտացի Արնուփիոս աստեղագէտը միշտ միատեղ կը պատցնէր իրեն հետ։ — Կարաքալլայի հայրը, իր՝ այնքան խորամանկ և ճարտարագէտ ըլլալովին հանդերձ, չ'կրցաւ ինքզինքն զերծ պահել այս չիմաստութենէն, և պարզմտութիւնն այն աստիճան հասցուց, որ մինչեւ յօժարեցաւ ամուսնանալ կնոջ մը հետ, որոյ համար պատգամ մը բաւած էր Թէ՝ այն կինը աշխարհի վեհապետին հետ պիտի ամուսնանայ։ — Աղեքսանդր Սեւերոս, իր այնքան լուսամիտ մէկն ըլլալովին հանդերձ, աստեղագիտութեան հրապարակական խօսարաններ հաստատեց։ — Դեոկղետիանոս, գաղղիացի քրմի մը մարգարէութեանն անսալով, ինքն իսկ ձեռօքն սպաննեց խեղճ մարդ մը, որոյ անունը իրեն կայսր ըլլալէն գուշակող մարգարէութեան ճիշդ կը պատասխաներ։ — Կոստանդիանոս, նախքան գերիշխանեալ լինելն, բաւ մը պահան ծխի, Լիբիոյ անապատներէն բերուած սեւ ծնծղներ յաղել էր։

Բոլոր այս ժամանակաշրջանին մէջ՝ մագուհիներն սիրող կիրքն գարձաւ։ Քաղաքներն ու գիւղերը լի էին կիւսերով և դիւթերով. իւրաքանչիւր բնակավայր իւր արձանն, իւր Հրաշալի քարայրն ունէր, և չ'կար մարդ մը որ իւր բաժանն չ'ունենար։ Խմաստասէրք՝ դիւթահնար հրաշքներ միայն գործելով՝ կրնային մեծատանց տունը մուտ գտնել իբր դաստիարակ. մագու-

թիւնն ամեն դիտութեանց իբր հիմն կը ծառայէր, և բժշկութիւնն այլ եւս ուրիշ բան չէր, բայց եթէ խորհրդաւոր և անհասկանալի ձեւ ուսումնասիրելի չնչին հաւաքումը։ Քսենոկրատ, Ափրոտիզեմ քաղաքէն, բժշկելու արուեստին վրայօք գրուածք մը շարադրեց, յորում Թովչութիւնն ու յուդութիւնը իբր նման բնութիւն դնելը կը նշանակէր։ Եթէ մէկը թանկագին ինչքեր կորնչցնելու կամ գողնալու ըլլար, գողերն գտնելու համար դաւաստրաց դիմելու տեղ՝ կիսոկց կը դիմէր. վերջապէս պետութեան գլուխներն, կուսակալք և այլք, կայսրութեան ապագան ինչ ըլլալիքը հասկնալու համար, իղձերն ու ջատուկ հանճարն կը հարցաքննէին։ Այսպէս, այս տարօրինակ ախտս, բովանդակ ընկերութեան մէջ ճահաճել կեցոյց, դաղանական մարդախաշոշ կերպարանք մը առաւ։ Մարդաղոհեր սկսան ըլլալ, տղայքներ խողխողեցին, և նոցա անդամներն, ըստ ծխոյ կախարդապաշտ արուեստից, յօշ յօշ եղած՝ անդնդային զօրութիւնն արտաքս կոչելու գործածուեցան։ Այս ողբալի հիւանդութեանն՝ Հոմնայեցւոց և աշխարհակալեալ աշխարհաց մէջ տիրած բովանդակ միջոցին՝ մարդկային բանականութեան մղձաւանջն վերջին աստիճանի հասան։

Իսկ Միջին—դարու մէջ մոգութիւնն ու կախարդութիւնն՝ կրօնական ոխալ գաղափարօք տգիտութեան ընկերութեանց մէջ անհնարին կոտրած ըլլին։ Մարդկութեան յառաջադիմութեանն այնքան աղետաբեր եղող այն ժամանակաշրջանիս

մէջ, դժոխային ուրուականութիւնք[1] ու աւելորդապաշտութիւնն ամեն դիաց ահ ու սարսափ տարածեցին, և բարձրաստիճան մարդիկ ևս, թէ առ երեսս և թէ՛ համոզմամբ, իրենց անխորհուրդ հաւատքովն այս միտասակար գաղափարացքս ընդ միշտ վառ մնալուն աշխատելով՝ այնպէս ըրին որ այլ երկչոտ ժողովուրդն հանապազ դիւական լեգէոնաց, կիսոկց և կախարդաց երեսէն ահուդողի մէջ կապրէին։ Ապաքէն յայտնի է որ սոսկումն կենսական զօրութիւնն կը ջլատէ և վատասիրտ կընէ զմարդ. նոյնպէս յայտնի է որ սոսկումն կընայ համաճարակ կերպիւ տարածուիլ և ամբողջ քաղաք մը, գուցառ մը արշաւել. և ահա այս բանս պատահեցաւ եւրոպիոյ քանի քանի կողմերն, ինչպէս որ այս մասին ամենէն վաւերական իրողութիւնքն սոյն երկասիրութեանս ընթացքին մէջ պիտի պատմուին։ Բարեբաղդաբար գանուեցան հուսկ ուբեմն մի քանի փիլիսոփայք, որք սոյն զեղծմանցս դեմ յարձակելով, դիւապիտութեան այս անհեթեթ հաւատքն արմատաբար բնաջինջ ընելու համար՝ իրենց կեանքն իսկ՝ ի վտանգ դնելէ չ'վախցան։ Բայց այս՝ արտաքս և խելքալմարդասէրներուս լեզուն և գրուածներն ընկերութեան սրամիտ մասն միայն կընար ըմբռնել, մինչդեռ անդին ամբոխն կը մնար տգէտ և վայրագ։ Ուստի պետք եղաւ որ ընկերական մեծ ապտանութիւն մը, արմատական յեղափոխութիւն մը՝ ի բաց և՝ ի

[1] Fantasmagorie

գաղափարս Գաղղիոյ մէջէն այս պլանեգակ հա-
ւատքս քանդէ հանէ, ու Թուիչ տայ բանակա-
բութեան։ Եւ արդարեւ՝ գրեթէ 1793 էն ՚ի վեր
է որ մագուԹիւնը բոլորովին իւր վարկը կորսը-
և Թէ և այսօր ժողովուրդն շատ աւելի լուսա-
ւորեալ է քան զոր երբեմն էր, բայց և այն-
պէս կը գտնուին դարձեալ գիւղերը Վեր մը
պարզամիտ մարդիկ որ կախարդաց, ձիւաղաց
և վարդապետաց քաղից (ԽՈՊՐՈՍ) կը հաւատան։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՄՈԳՈՒԹԵԱՆ ԱՂԱՒԱՂԻԼԸ

Հաւաարակութեան ձեռքն ալ ազգերով մոգութիւնը այլ և այլ տեսակիներու կը բաժնուի.

Բնութեան գաղտնեաց երկաբաւն և հանա-
պազօրեայ հետաքննութեան պատճառն եղող
մագուց գիտութիւնն՝ բազում դարերէ յետոյ
վերջապէս մեհենից սրբավայրէն դուրս ելնելով,
անոնց ամբոխին մէջ եկաւ բնակեցաւ։ Ա. յս
շարժուձեւս այն օրը տեղի ունեցաւ երբ բրմաց
դասակարգութենէն՝ իրենց վիճակէն դժգոհ մի
քանի անձինք՝ իրենց գիտութենէն օգուտ
քաղելով լուսաղոյն վիճակ մը ձեռք ձգելու
աշխատեցան։ Ա. յս փառասէրներս ինչպէս յա-
ռաջ ալ ըսինք ՀՈՎԱՒ, ՀՈՎԻՒ, ՔՈՒ, ՔԵՒ,
ՔՒՆԻ, ԷՒՅ, ՈՍՓՓԵՒ և լն. անուամբ բազ-
մամարդ քաղաքաց մէջ ցրուելով, այն բարբա-

րոսութեան գարուց մէջ, յորս կրօնքն հա-
ւատամոյ թեամբ և մեռսպաշտութեամբ կը
չրջապատուէր ինքզինքն, իրենց սահմանած բնագի-
տական, բնալուծական, և աստեղաբաշխական
ծանօթութեանց չնորհիւ՝ սամիկին աչքին ինք-
զինքնին համարել տուին իբր առանձնաշնորհեալ
անձինք, որոց համար անկարելի բան չ՚կար։ Ա. յս
բանական չէր, սանոյց գպրոցին երեսն առուել
կամ նուազ յանդուգն, առաւել կամ նուազ
ձարտար խել մը չարլաթաններ, շատ չ՚անցաւ,
աներն ուղղ տարածուեցան, և սկսան անտանել-
բար հաչակել Թէ՝ գաղտնաթափոց գիտու-
թեանց բանալին ունէին, Թէ ձակատագրին
մատեանը բացուած էր իրենց առջին. և Թէ
ըստ կամաց հրաշքներ ալ կրնային գործել։

Պիտանի է, որ մագուց գպրոցն ուսմունք
սովրած էր, և բնապատմութեան խորին հմուտ-
Թիւն ունեցող կը համարուէր, իբր ժամանակի
կախարդաց հետ շատ անգամ վէճ կը յարուցա-
նէր, անոնց գործած հրաշալեաց փոխարէն ա-
տաքուստ օգտակարութեան երեւցած բնական
երեւոյԹներ յառաջ բերելով։ Ըստ Լուկիանի,
այն խնամատարեալ աներն հրաշքի չ՚էր հա-
ւատար, և այնպէս համոզուած էր Թէ՝ հրաշա-
գործաց բոլոր վարպետութիւնն դիւրահաս ան
մարդիկը խաբելու վրայ կը կայանար։ Մինչդեռ
ինքն կը բարեզրէր Թէ՝ ճշմարիտ մագութիւնն բը-
նութեան օրինաց և հաստատուն կիրառութեան
և նմանողութեանը վրայ կը կայանար միայն։

Բազմագէտն Մաքսիմ Մէյմենիւսէս, որ երկո-

տատանեցուց դարուն մէջ կ'ապրէր, նոյնպէս կը ճանաչուցանէ մեզ Թէ բուն մոգից դիտութիւնն՝ հանքայց, անկոց և կենդանեայց ճանաչութեան այսինքն բնագատմական հմտութեանց վրայ կը կայանար։

Փոդդէացիք աղաւաղեալ մոգութեան զաղղ առաջին տզրը կը համարուին։ Ասոնք՝ սոյն չնչին և տղայական արուեստիս մէջ այնքան համբաւ հանեցին, մինչ զի հաքերը Փուդէոյէ և Կէս անուններըը գրեթէ հոմանիշ եղան։ Նաբուգոդոնոսորայ օրով կիւսահմայից Թիւն այնքան բազմացաւ, որ նոյն իսկ արհեստին շահուն համար, հարկ եղաւ չորս տարբեր տեսակի բաժնել զայն, որոց իւրաքանչիւրն մէկ մէկ մասնաւոր ճիւղ կը կազմէր։

Խարտոմն կամ գիրք մասնաւորապէս աչք խաբելու և ուրուատեսական առաչօք երեւոյթներ յառաջ բերելու արհեստը գիտէին։

Աշխեմն երազ կը մեկնէին։ Յովսէփ խիստ քաջ հանդիսացաւ սոյն արհեստիս մէջ։ Ամէն մարդ գիտէ Թէ Փարաւոնի երազը մեկնելովն էր որ՝ Եգիպտոսի մէջ այնպիսի բարձր վիճակ մը ձեռք ձգեց նա։

Խոսքեմն կամ քաւգեայք կը պարծէին Թէ ապագայն աստեղաց մէջ կը կարդան, մասնաւորաբար խիստ կարեւոր գործ մը պատահելու առեն խորհուրդ կը հարցուէր սոսնց։

Եւ վերջապէս չորրորդ տեսակին մէջ կը գտնուէին Մեխֆեմն, տեսակ մը կախարդներ, որք Թունաւոր խոտերէ, դիակաց արիւնէ և զազրե-

լի նիւթերէ բաղադրեալ դեղեր կը գործածէին Ամէն մարդ կը վախէր այս չարագործ էակաց մօտենալու, որովհետև այնպէս նկատուած էր Թէ խաւարային ոստուածուԹեանց հետ յարաբերուԹեան մէջ էին նոքա, մինչդեռ առաջին երեք տեսակ կիւսահմայներն, ընդհակառակն, մեծ յարգ ունէին, և մեծամեծաց պալատները կը յաճախէին։ Թագաւորք եւս իրենց առեղագէտն ունէին, և ամէն մարդ խիստ կարեւոր անձինք կը համարէր զանոնք։

Մովսէսի ժամանակ՝ խարդուԹեանք խիստ ճարտար գործած, և մեծ անուն հանած էին, այնպէս որ՝ ի գործ գրած զանազան խաղերնին՝ մեր արդի զբօսեցուցիչ բնագիտուԹիւնէն շատ վար չ'էին մնար։ Սրբազան պատմուԹիւնն կը սէ ԹԷ՝ Փարաւոնի կախարդքն, Յաննէս և Մամբրէս, հնարագիտուԹեան մասին Հրէից օրէնսդրին հետ մրցեցան, և ԹԷ հրաշք մը պէտք եղաւ որ՝ այնու՝ Մովսէս անոնց վրայ յաղթուԹիւն վաստկի։ ՆկարագրուԹիւնք գիտեն որ կիւսեցին, իրենց Թագուն հնարքներն փորձով ցուցնելու համար, գաւազաններն աւազին վրայ նետեցին, որք իսկոյն ոսկան օձի պէս շարժիլ։ Մովսէս միւնոյն քսքանչելիքը գործեց Փարաւոնի և յապաւշ կրեցած խարեբայուԹեանց աչքին առջեւ. բայց զանոնք ամենէն աւելի զարմացնողը սա եղաւ որ, կսեն, իւր գաւազանը միւս գաւազաններըը կլլեց։

Մոգութիւնն աղաւաղուելէ յետոյ երկու տեսակի բաժնուեցաւ. մէկ մը գիւցազն կամ բարի մոգութիւն, որոյ գաղանիքն քու մըր միայն

գիտէին, և մէկ մ՚ալ Սէս հոգուին կամ կասուին, անհեթեթ և չարագործ մոգութիւն։ (Մեր օրերը ալ հոգուին անունը տալին ձեռնածուին արուեստին, յորում խիստ նշանաւոր հանգիստացան Քոնդ և մանաւանդ Հարթերտոս Հաւատէն, հանճարոյ ակը մարդ մը, որը մեծ յաջողութեամբ, իւգարծ կը դնէին բնագիտութեան և բնական ծանութեան զուարճացուցիչ մասերը)։

Ա յսպէս՝ մոգութեան ազատ ասպարէզն սկսաւ՝ որ խիստ հին և հեռաւոր ժամանակ բռնէ է, կամ գէթ անունը տալին հմայութեան պատրազ անձանց, մինչդեռ հոգ և չէք անուններըը քրմական պատուոյ գիտնոցը յատկացան։ Աւելի ետքերն հմայեակ, գուշակութեան, կախարդ, դէոհոդրոյ, հայլն անուններըը տալին կիսատութեան անայն արհեստին հետեւողաց։ Յետագայ դարերուն մէջ մոգութեան այս զանազան տեսակներուն մի առ մի քննութեան պիտի առնուի մեր, որպէս զի ընթերցողին որոշ գաղափար մի տամը անոնց վրայ։

ՀԱՏՈՒԱԾ Գ.

ՊԻՏԱԿԱՆ ՄՈԳՈՒԹԻՒՆ

Դիւցազնութիւն. — Հրաշագործութիւն

Նախնի ժողովրդոց ամենքն ալ իրենց ներքին ընդհատ մարդիկն ունեցել են։

Սրբազան պատմութիւնն Մոսէսէ կոչեց զանոնք, այս է առաւելագոյին ներշնչմամբ ապագայ իրերն նախագուշակող առանձնաշնորհեալ անձինք։

Հեթանոս պատմութիւնն հռուհմոյ, ըբրոհմոյ, ըէոր, ձնդրոբոլի, Պլուտոնեան հոգւոյ, Սիբիլլա և այն. անուանքը յորջորջեց զանոնք [1]։

Գէսար, Պիւթեան հայրդուկը և Սիբիլլեայք նմանապէս առաւելագոյն ներշնչութեամբ զապագային կը նախագուշակէին. — հաւատմայք և լերդահմայք թռչնոց թռչիւն, երգելն և կեր առնելոյ եղանակն, սիւքին՝ ծառոց մէջաեղն մրմնջելն ու ջրոց խճճուռն վրայէն կարկաջելն, ամպոց անցքն, աստղոց գոչիւնն և գլուխնին ու ագինին շարժելու կերպը և այն. գիտելով, նոյնպէս գոհի մը լեարդն ու փորոտիքը քննելով, ծածկեալ իրերն ի վեր կը հանէին։ Ա յսպէս, ըղձութիւնը ներկայն ու անցեալը կը քննէը, մինչդեռ մարգարէութիւնը առ ապիկայ ուներ իրեն զաղափարն։

Ա պաքէն՝ մուսայի և երկրութեանց հետազրնեին մէկը, որ սկզբանէն սեռնեըուն, նորա ի՞նչ հետեւութիւնք ունենալիքն, կամ պատճառը, սեռնելուն, նորա ի՞նչ արդիւնք ունենալիքն անմիջապէս կրմբռնէ, կրնայ մարգարէի տեղ անցնիլ [2]։

---

[1] Կը ցաւիմք որ հեղինակը ճշմարիտ մարգարէներն սուտ մարգարէից և կեղծից կարգը դասել է։ Ը. Թ.

[2] Ա յս տեղ չափազանցութիւն գտնելի յայտնի կերեւի։ Ը. Թ.

Ուսեալ մէկը որ դիմագիտական (Physiognominique) չարժմանց՝ հոգւոյն խանդագատական յուզմանց հետ ունեցած առնչութիւնքն կը ճանաչէ, կրնայ ըղձի տեղ անցնել։

Ա. յօդուան օրս, որ մարդաբէտութեանց ժամանակն անցած է, որ պատգամը եւս լուած են քնական և բարոյական գիտութեանց յառաջադիմութեանն առջեւ, Մոքսէթ անունը փոխաբերաբար միայն կը տրուի այն մտացի և հետաքննին անձին, որ հետեւութիւնը սկզբանց մէջ և արդիւնքին՝ պատճառին մէջ կ'որոնէ։

Օրինակի ազագաւ, աշխարհավարական և քնկերական գիտութեանց ուսմանն տարիներով զհետ եղած, և յայնս ներհուն դարձած մարդ մը՝ խիստ շատ յառաջուց կրնայ գուշակել այն գէպքերն, որք անխուսափելի յեղափոխութեանց պատճառ պիտի տան, և ազգի մը կազմակերպութիւնն փոփոխեն։ Իմաստուն, և իր արուեստին քաջ ծանօթ բժիշկը՝ հիւանդութեան մը երեւցած առաջին օրէն՝ նորա ընթացքը, տեղութիւնը և երջանիկ կամ աղէտալից վախճանը կը գուշակէ։ Ծերուն հինականը, որ անդամին ոգւոյ ութեանէն՝ ի վեր ամէն օր երկնից օդերեւութական վիճակը ուշադրութեամբ դիտած է, խիստ քիչ անգամ կը պատահի որ սխալի, երբ հետեւեալ աւուր համար հողմի, անձրեւ կամ գեղեցիկ օդ պիտի ըլլայ ըսէ։ Սակն կանխատեսութիւնքս, քնաւ ամենեւին գերբնական չ'ըլլալէ զատ, հաւանականութեանց գիտութեան տրամաբանական հետեւութիւնն են։

Սակայն և այնպէս պնդողներ եղել են թէ՝ մանաւանդ առանձնաշնորհեալ անձինք կան, որ տեսակ մը Ինտուպէյշի՝ ծանօթութիւն[1] կանեւնան, ներքին ձայներ կը լսեն, որք իրենցմէ տարակայ և երբեմն անհատատալի հետաքրքրութեամբ տեղի ունեցած եղելութիւն մը կը ծանուցանեն իրենց։ Ա. յս առարկութիւնս իրաւ է որ ճշմարիտ է մինչև տասիճան մը, բայց այս ինքնագործիկ ծանօթութիւնս և այս ներքին ձայներս, որք զառաջինն քնական իրաց ընթացքէն տարբերել կը թուին, տակ քնագիտական պատճառէ մը յառաջ կուգան։ Ա. յս մասին հետաքրքիր երեւոյթն կրնայ մեր Գալվանիզմոյ և Մագնիսականութեան անուն երկաթրութիւնը դիմել, ուր այս հետաքրքրաշարժ խնդիրս պէտք եղած բոլոր մանրամասն պարագայիքն բացատրուած է։

ՀԱՏՈՒԱԾ Դ.

Դիւցազնայոգեբիւն. — Հրաշագործոգեբիւն

Դիւցազնայոգեբիւն. — Հնութիւնը զդիւցազնմայութիւնը կը նկատէր իբր առաջին գիտութիւն մը, ինչպէս որ իր բառակազմութիւնն ալ կը ցուցնէ։ Մոգութեան այս տեսակը՝ գերբնական կամ մարդոյս կարողութենէն վեր արդիւնքներ յառաջ բերելու նպատակաւ՝

[1] Intuition

բարեբար ոգւոյ կամ դիմել վրայ կը կաշխատառ : Դիւցահմայութեան վախճանն էր բանավարութեան ամենէ կարողութիւնքն՝ ի միասին կոչտ բնագրմանց՝ զարդացնելով, մարդոյս միտքն կատարելագործել, և հոգին աւելի սուրբ և ամբիծ ընել :

Աբիսոտիան՝ Որբէոսի կը վերագրէ դիւցահմայական ձեւագրոց[1] առաջին անգամ կիրառութիւնն, որոց նիւթն Եգիպտական մեհեանները մէջէն քաղած էր նա : Այս ձեւագրերս կատարեանէին իբր՝ ինչ կերպիւ պաշտօն մատուցանելու էր ստուածոց, և իբր բարկացած առեններն ինչ կերպիւ ամոքելու էր զանոնք, իբր աճիւնէրն ինչպէս կրնային քաւիլ, և հոգեկան և մարմնական հիւանդութիւնք ջրպիսի եղանակաւ բժշկիլ :

Հետեւեալ հատուածը, զոր Պղատէն իւր գրքուածոց մէջ պահպանելով մեզ աւանդած է, դիւցահմայից զգացմանց սրբութեանն կրնայ իբր ապացոյց ծառայել :

« Ընթացարձակ Հմանատարհս արդարութեան, պաշտօն մատուցէք միտմ արարչին տիեզերաց. միւսոյն, միայնոյն, ինքնագոյին: Ի նմանէ էք համօրէն ընկալեալ ունին զգայութիւն. նոքօք և ինոսա առնէ նա զոր ինչ առնէն. նա է որ զենաւս տեսանէ, և ինքեան աչօք մահացուաց չէ երբեք եկեալ ի տես »:

---

[1] Formules. Ձև կամ օրինակ ասացուածոց կամ արարմանց, եւս և դեղագիր:

Ուսոյն դիւցահմայ քուրմն՝ իբր բարուց և ընթացիցը մէջ անոգիւտ պարտ էր ըլլալ, պաշտօն ընդունելի յառաջ հարկ էր որ պահօք, աղօթիւք, և այլ և այլ անձնաչարչարութիւնքը ինքզինքն այնմ պատրաստէր : Առնք ընելի վերջը միայն Թոյլ կը տրուէր իրեն՝ որ սուճարին դարբերայն մտնէ, ուր տեղ իբր միտքն ամէն երկրաքարշ գազափարներէ զերծ, աստուածային գիտութեան լուսոյն կը լուսաւորուէր :

Բայց քանի դիւցահմայական խորհրդագործութիւնն իբր օրրանէն կը հեռանար, նախնական ձեւագրոց պարզութիւնն կ'ապականէր նորանոր բառից ներմուծմամբ, զորս յատկապէս բառերնուն տեղը լեցնելու համար կատարեին. մինչ դի Յունաց դիւցահմայական ձեւագրերն մեծապէս կը տարբերէին Եգիպտացւոց ձեւագրերէն. իսկ Հռովմայեցւոցն, բան Յամպլիկեայ, այլ եւս ուրիշ բան չէին բայց եթէ Եգիպտական, Յունական և Լատին բառերու այլանդակ խառնուրդ մը, և այս լեզուն խորհրդագործք միայն կրնային հասկնալ. չատ չանցաւ ալ բոլորովին անհասկնալի եղան :

Հրաշագործութիւն. — Հրաշքը կը նշանակէր եղելութիւն մը՝ որ բնական օրինաց հակառակ, դերբնական զօրութեան մը միջամտութեամբն միայն կրնար գործուիլ : — Օրինակի աղագաւ — Բոլորովին նեխեալ դիակի մը վերակենդանանալն. — Արեգական իբր ընթացքէն կասիլն. — Ցոփնանու կէտէն կլնուիլն, որոց նեղ և անձուկ ոլորտին ամենատանջ ձկունք միայն

կրնան անցնիլ ։ — Ամբողջ վախճան և ուխտ ժամ սոյն ձկան փորին մէջ բնակիլն , որ այնչափ երկար ժամանակ անցնելէ յետոյ ողջ առողջ կրկին իւր բարեկամացը կը վերադարձնէ զանի ։ — Հրաբորբոք հնոցին պատմութիւնը , ուստի երբեք երիտասարդք ժամմը փորձէ եռքը դուրս կերնեն անկէզ և առաւել ևս զովացեալ ։ — Ծովուն մէջէն չոր ոտքով անցն և այլն , բոլոր այս իրողութիւնքս հրաշք են ։ զի ասոնք ըլլալու համար պէտք է որ բնութեան կարգը վեր ՚ի վայր շրջի և յաւիտենական օրէնքներն իշխել առ վայր մի դադարին ։

Մեք սոյն եղելութեանցս անկարելութեանն վրայ չ՚պիտի վիճիմք այս տեղ ։ մենք աւելի գիտուններ ճառած են արդէն այս խնդրոյս վրայ , որ բաց աստի , մեր նպատակն ևս դուրս է ։ Միայն դիտել կուտամք թէ՝ ամեն ազգաց պատմութեան մէջ ալ դերբնական եղելութեանց և հրաշից բազմաթիւ օրինակք կան , և մանաւանդ կարելի իսկ է զրուցել թէ՝ նախնի դիւցահմայութիւնն առաւել հարուստ եղաւ այս մասին ինչպէս որ պիտի տեսնեմք ՚ի տորեւ ։

Քաղդէացիք Հնդկաց մոգուց կըսէին . " Մեր հրաշքներն ձերիններէն կը գերազանցեն ,, — եւ գիպտացի քուրմք միևնոյն լեզուն կը խանեցնէին առ Քաղդէացիս ։ — Ցոյնք սա պատասխանը կուտային Եգիպտացւոց , որք իրենց հրաշիցը վրայ կը պարծէին . " Մեք կը խոստովանիմք որ դիւցահմայական արուեստն ձենէ առած եմք . բայց դուք ևս չ՚եք կարող ուրանալ որ ղձեզ շատ անց-

ցած եմք այս մասին ։ Եթէ ձեր աստուածքն մէրթ քնդ մէրթ կիթեւին ձեզ , մերայինք աւելի ընտանի ըլլալնուն ամէն օր այց կելնեն մեզ ։ — Եթէ գուք մի քանի յարութիւնք կը նեկայացնէք մեզ , մեք հարիւրնեռով կը համբերեմք զայդ ։ — Ա. յլակերպութեանց գալով դուք ոչ որքանութեանը և ոչ բազմազանութեանն մասին մեզ հետ բազդատելու չ՚եք կրնար համաձակիլ ։

Ո՞ր թագուհ որ եթէ մարդ այլ և այլ ժողովրդոց սքանչելագործաց ըրած հրաշից մեծ մասն քննութեան ենթարկէ , վաղ ընդ վաղ կը կրնշմարէ որ ամենքն ալ միևնոյն են կամ թէ շատ մեծ նմանութիւն ունին միմեանց հետ ։ Ա. յսպէս՝ հրաշիւք ջուր բղխել տալու բազմաթիւ օրինակք կան . ինչպէս Բագոսբնը որ նիզակը գետնին զարնելով ջուր ժայթքել տուել էր . նմանպէս Ադալանդ ալ ապրիւ մը բխել տուել էր ձեռքի սեգը ժայռ իմը բաղխելով . գարձեալ հողոյն մէջ մխուելով արմատ արձակող ցպոյն պատմութիւնն , և Պոլիկարպեայ գաւազանն որ արմատ արձակելով փառաւոր կեռասենի մը կը դառնայ . ասքս եւս Հերքիւլեայ լաթոյին ընդօրինակութիւնքն են , որ բերոյ մը զառ ՚ի վայրին վրայ անկուելով փառաւոր ձիթենի մը գարձած էր ։ Ա. յսպէս ահա նախնի ժամանակաց գրեթէ բոլոր հրաշալիքներն իրեար կը նմանին ։ Իսկ եթէ նորագոյն դարուց անցնելու ըլլամք գաղձեալ գրեթէ մի և նոյն բաներըը կը տեսնեմք ։ Աստուածուղ , բիբլեան հասուղ արձաններն . լեզու-

եղնով էշերն, ազօթք ընդրելու համար անդիմ աշխարհէն ապին ևկող մեռելոց հոգիքն, առանց մարդ հպելու ինքնիրեն հեղուկ դարձող մահարդեալ արիւնը ևն. ևն. բոլոր այս ամենս ուրիշ բան չ'են այսօր, բայց եթէ բնագիտութեան զուարճալի մասին խաղերը, մինչդեռ ժամանակաւ, և նոյն իսկ մենք ոչ շատ հեռու ժամանակներն, խաւժանը բոլոր այս եղելութիւնքս հրաշք կը համարէր դիւ բահատանութեամբ:

Մեծն Պետրոս, այն ժամանակներն որ իւր ապին մէջ մեծամեծ բարեկարգութիւնք ներմուծանելու եռեռէ էր, լսելով որ տախտակի վրայ նկարուած պատկեր մը՝ իւր բրած վտիտ խաւթեանցը վրայ դժգոհ ըլլալուն 'ինչան' ոզոն արտաստաբ կը հեղուր, պատկերին տէրը եղող կրօնաւորաց ապդ ըրաւ որ այդ հրաշքը գադրեցնեն, թէ չ'է զամենքնին ալ կը կախէ: Կրօնաւորք դիտէին թէ կայսրն խօսքին տէրը մարդ մ'էր, ուստի կեանքնին վրայ տալէ վախցան և պատկերն այլ եւս անդամ մ'ալ չը լացաւ:

Առաջին կայսրութեան օրով, Շամբիոննէ զօրապետը փոքրիկ գունդ մը զօրօք Նաբօլի քաղաքն կը պահպանէր: Անգղիացւոց թեւադրութեամբ դաւաճանութիւն մը նիւթեցաւ Գազիացւոց կենացը դէմ, որ սրբոյն Ջանվիէի տօնին օրը երեւան պիտի ելնէր. իսկ պատրուակն այս էր.

— Այն տարի, վերսիհեալ տօնին օրն, Սբբոյն Ջանվիէի արիւնը սրուակի մը մէջ ամփոփուած բոլորովին թանձրացեալ վիճակի մէջ 'ի տես ժողովրդեան կը դրուի: Ամենուն աչքն սրուակին վրայ է. ամեն մարդ խոյին լռութեամբ կ'սպասէ..... Ցանկալի արիւնը հեղուկ կը դառնայ առանց մարդոյ ձեռք հպելու, և բազմաթիւն ցնծութեան աղաղակներ կարձակէ. վասն զի բարի նշան է այն: Իսկ եթէ ընդհակառակն հեղուկացումն չպատահի՝ գէշ նշան է, աստուածութիւնն բարկացած է: Արդ այն տարին սուրբն Ջանվիէ իւր արիւնն մաշկարդեալ Թողով իւր թէ Գաղղիացւոց դէմ բարկացած պիտի ցուցնէր ինքզինքն: Խարեբայապետ Շամբիոննէ յաջողեցաւ դաւադրութիւնն 'ի վեր հանել. ուստի շուտ մը սրբոյն արեան 'ի ցոյց հատարակաց դրուելիք տեղը վազելով "եթէ արեան հեղուկացումն պահ մը ուշանայ, ըսաւ կամաց մը սրուակն 'ի տես հանողին՝ ատրճանակի մը բերանը ցոյց տալով անոր, անմիջապէս գլուխդ կը ջախջախեմ. լսեցիք ո՞:

Գրեթէ նոյնհետայն արիւնը հեղուկ դարձաւ. դի զօրապետն բնաւ երբէք ընդունայն բան չ'էր ըրուցեր, և դաւադրութիւնն պարապեցաւ:

Արդ՝ սրուակին մէջ պարունակեալ Սբբոյն Ջանվիէի արիւնը կարծուած հեղուկն՝ ուրիշ բան չ'է, բայց եթէ ծծմբուտ եթեր[1] և կարմիր Թորթոմ[2] ներկեալ սպարմաչէթի բաղադրութիւն մը: Այս հեղուկս տասն տասիճան

[1] Ether sulfirique [2] Orcanette.

ջերմութեամբ թանձրացած կը մնայ, տան և հինգ աստիճան ջերմութեամբ կը լուծուի և քան աստիճան ջերմութեամբ կեռայ։

Արդարեւ՝ կարի դժուարաձոյլ բազմաթիւ հատորներ կրնայ կազմել մարդ եթէ բոլոր այս տեսակ իրողութիւնքն ի մի ամփոփելու ըլլայ. վասն զի ամեն տեղ և ամեն ժողովրդոց մէջ կը գտնես զանոնք առաւել կամ նուազ տարբերութեամբ յարդարուած։ Մարդոց հրաշալի իրայ համար ունեցած անզուսպ սէրնէը, և խաբեբայք որք մարդկութեան այս տկարամտութենէն իրենց շահ հանել կը ջանան, կան և կը գտնուին ամեն ուրեք և ամեն տեղ. ասկից եղած է այն առածը թէ "Նոր տեղնուան նշանքն ու հրաշքներն հիներուն կրկնութիւնքն են"։

"Պարծուկ չազակրաւութիւնն և զմարդ խաբելով ոտակն գողնալու արհեստը, եթէ ներելի է ինձ այս բառս գործածել, կրսէ Եւսեբիոս Սալլերտացին, անտարակուսելի է թէ մեծ դեր խաղացած են հրաշագործական արարուածոց մէջ։ Ան երբեմն յոյժ զարմանալի ձեռագ ձարպկութեան խաղերն, զորս մեր Թատրոնաց վրայ կընեն մեր արդի ճարտար ձեռնածուք, շատ անգամ բնազիտական և բնալուծական ըմբռնութիւններէ յառաջ եկած եղելութիւնք են։ Ըստ ոմանց և շաղակրատ պարծկին, սոյն ձեռնածութեանցս գաղտնիքն խելմբ մտանատր ձեռագործութեամբ և արարմանց վրայ կը կայանայ. միևչդեռ ըստ ուսեալ մարդկան, այս ձեռագործս ճշմարիտ գիտութենէ մը ծնունդ առած են և

այս բանս կը գտնեմք դարձեալ մեհենից մէջ, երբ պատմութեան լոյսն կը թողու մեզ նոցա խորը թափանցել . . ։

Բազում այն հրաշքներն որք ձեռագ ճարպկութեան կամ խաբէութեան կարգէն չ'էին, սոյն Թագուն գիտութենց արդիւնքն էին. ի մի բան ճշմարիտ բնագիտական փորձեր էին։ Ան բանից կամ արարմանց ձեւերն, որոց միջոցաւ կարելի էր զայնս յայտնել, կերեւի թէ այն տեղնուան կրօնական ուսման մասն կը կազմէին։ Արդ եթէ այժմեան հրաշագործք՝ իրենց ուզածէն աւելի լուսաւորեալ հանդիսականօք շրջապատեալ, հրաշք գործել չ'են ուզեր, պատճառն այն է որ գիտեն թէ հրաշից ժամանակն անցած է։ Մեք այս բաներուս չ'հաւատալու չափ լուսաւորեալ եմք այսօր[1]։ Կամ առնկբսեմք, այն բանն որ մի միայն առանձնաշնորհեալ դասու մը վերապահեալ Թագուն գիտութիւն մը կը կազմէր, ամեն մարքերու դիւրամատչելի գիտութեանց կարգն մտած է այսօր։

Ցուսկ ուրեմն հրաշագործութեան վերջին արդիւնքն սա եղաւ որ՝ ժողովուրդք հրաշալի բաներ տեսնելով տեսնելով կամ նոցա պատմութիւնքն լսելով լսելով, ատոնց սովրեցան, և ալ այնուհետեւ իբր հասարակ բան մը սկսան նկատել զայնս. զի սովորութիւնն ամեն բան կը հինցնէ։ Ան տեղն՝ հնոց մէջ այնքան յաճախ պատահած հրաշք ու նշանք տակաւ առ տակաւ նուազեցան

[1] Բոլոր այս, ինչպես նաեւ յետագայ քառածներն սուտ հրաշից նկատմամբ պետք է ըմբռնեմք։

և յարգելին կորսուանելով հետզհետէ առաջ էր հազուագէպ եղան. և այսպիսեաւ հրաշագործութիւնն, որ այնքան փառօք փայլած էր առաջին մը, արդի քաղաքակրթութեան լուսոյն առջեւ անդառնալի կերպիւ խաւարեցաւ։

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՍԵԱՒ ՄՈԳՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԿԻՍՈՒԹԻՒՆ.

Պզտիկն, պարիկը և ցամպղիկ իմաստասէրները սակաւ կը սահմանեն զկիւսութիւնը. Աբուեռ էթիէնն ոչինչեր նկատէ, ոչ իսկ առէք և ապխոռնիւն սխալն մարդոց դէմ։ Բայց և այնպէս այն անուանակոչութիւնս ներքեւ կրնան նաեւ բովանդակուիլ բոլոր հինէ որ ամէն գարու և ամէն ազգի կիսոից և կախարդաց ցնորական արուեստն կը պատկանին. տեսակ մը չիմարք կամ չարամիտ մարդիկ, որք կը պարծէին թէ թագուն զօրութիւնէ մը առացած են գիտութիւնները։

Արդարեւ երբ մարդ՝ մարդկային աւելորդապաշտութեանց տարեգիրներն աչքէ անցնէ երկրագնդին մէն մի կէտին վրայ պիտի գտնէ այն կարգ մը չիմարները, հոգեառներն (illuminés), ու խաբէբաները, որոց խորհրդաւոր, այլանդակ և երբեմն գարշելի արարմունքն ոգեառամիւն վրայ մեծ ազդեցութիւն կրնէին։ Իրաւ է որ գարուց և ազգաց համեմատ սոյն կիսահմայից անուանքն եւս կը փոփոխին. բայց արարմունքն ու նպատակներն մի և նոյնն է. այս է ան ազդել, հարստանալու համար խաբել և գիարդիկ անասնացնելով նոցա վրայ իշխել։

Աղջամուղջին և մրրկալից գիշերները, մարդոյն մտաց մէջ զարհուրելի յիշատակներ զարթուցանող վայրից մէջ, կը գործադրէին կիսաբ իրենց դիւթութիւնքն[1]։ Մանկութեան ապրելու յարմար եղերական հանդերձանօք շրջապատեալ՝ ողբագին ճիչեր կ՚արձակէին, գերեզմաններն կը պղծէին, դիակներն կը գողանային, և նոցա փորոտեալ մէջ կորնչէին որ գտնեն իրենց հմայից, իրենց կախարդանաց բաղադրութիւնն կազմող նիւթերն։ Թունաւոր խոտեր, առուտել կամ նուագ զազիր գոյացութիւններ կը գործածէին, և մինչև իսկ մանր սղոյք կը խողխողէին, որոց արիւնն իրենց դիւթութիւնն առաւել զօրաւոր և սպրդուկընէր։ Այնպէս կենդանագրուէր թէ սոքա իշխանութիւն ունին մարդիկն ու անասուններն ժոգելու, զանոնք հիւանդութեամբ կամ մահուամբ հարուածելու, բնութեան կարգն յեղաշրջելու, տարերքն ու եղանակներն տակն ի վերոյ ընելու, աբեգական ճառագայթներն խափանելու կամ պաղեցնելու, հունձքերն տակաւին չհնձուած չորացնելու, պտղոց հասունցնալն արգիլելու և լն. և լն։

Ո՞ւր համարելու է սեաւ մոգութեան որրանը։ Այս մասին՝ բազմահմուտն Թիէտմանի հետևեր կարծիքն եւս սակ է որ՝ սոյն մոգութիւնս առանձին առանձին զարգացած է իւրաքանչիւր ժողովրդոց մէջ ազ, որովհետև ամեն աւերն փառասէրները, վտարուած ձեռնածուները և անապաշտ մարդիկ կամ անկ ըսեմք, խաբեբայք և խաբե-

[1] Incantation

բայութեան դիւրին օրս ըլլալու յարմար անձինք գտնուած են աշխարհի վրայ։

Արդ ի՞նչ հետեւցնելու է մոգութեան և կախարդութեան վրայ եղած այս բնդհանրական հատատքս, եթէ ոչ սա թէ մոլորմդոց միաբեքան հաւանութիւնն՝ ճշմարտութեան անվրէպ ապացոյց մը չ՚է։ Այս էակներս այնքան սասկ ահ ու սարսափ ազդած էին, մինչ զի նոցա մերձենալու անգամ կը վախէին մարգիկ, և նոցա սրտմտութեանն չ՚հանդիպելու համար ամեն պահանջքնին անմիջապէս կը կատարէին։

Արդէն յիշեցինք այն պատմական իրողութիւնն, որ հին ազգաց մէջէն գաղդէացիքն կը նշանակէ իբր մասնաւորապէս կիսահմայութեան հետեւող։ Եգիպտացիք անոնցմէ ուսան զայն, և սուղ միջոցի մէջ խիստ յաջողակ հանդիսացան գիւակոչութեանց և կախարդանաց արհեստին մէջ։ Երբոյեցիք, բստ որում գերիք Եգիպտացւոց, իրենց աւարցմէ դաս առին զայն, և շատ չ՚անցաւ մոգութիւնն այնպէս յառաջ գնաց Իսրայելի ժողովրդեան մէջ, մինչ զի Մովսէս՝ նորա եւս քան զեւս տարածուելէն զարհուրելով և անոր յառաջանալն արգիլելու միջոց, հրամայեց որ թէ այր և թէ կին ով որ այս գարշելի արուեստին հետամուտ ըլլայ, քարկոծուի։ (Ղեւտացւոց Գիրք Ի.)։

Յունաստան, Իտալիա և Հիւսիս-Գաղղիա իրենց գիւտութիւնքն, արուեստքն, կրօնքն և հետեւաբար նորա յարակից աւերմրդապաշտութիւնքն Եգիպտոսէ ընկալան։ Այժմ պի-

ակ տեսնենք որ ըղձական արուեստն անհուն յառաջադիմութիւն ըրաւ Յունաստանի մէջ, և պատգամաց, ըղձից, Պիւթեան քրմանոց չէց, և վհուկ կանանց Թիւն յիրաւի անհաւատալի կերպիւ բազմացաւ։ Սա հաւատքս կար այն առեն՝ Թէ առանձնաշնորհեալ ինչ ինչ անձինք կրնային բառնալ Թիւն բանեցնել աստուածոց դէմ, և Թէ մահկանացուն կրնայ իւր աղաչանքն ընդունիլ չուզկուբն պատժելու։ Երբ յաղմուկք չարագուշակ երեւէին, Յոյնք կը վերսկսէին զոհս, որպէս զի զդիս իրենց նպաստամատոյց ըլլալու ստիպեն։ Որեւեանք կը պնդէին Թէ մարդս կարող էր ոչ միայն բոլոր իւրեանց նեղութեանց առանել յերկինից, այլ և զանմահն իսկ կրնար մարդկային կամաց հնազանդեցնել։ Մի և նոյն հաւատքն կար նաև Հռովմայեցւոց մէջ։ Պլինիոս, Տիտոս-Լիվիոս և Դիոնեսիոս Աղիկառնացին բազմաթիւ ման մուներ պատմեն Թիւններ աւանդած են մեզ, որոնք կապացուցանեն Թէ՝ աստուածային վէճերն քրմաց վարպետութեամբն կրնային փոփոխիլ կամ ի դերեւ հանուիլ։ Հաւատքի մը հնարագիտութիւնն աստուածոց կամաց դարձուածքը Թիւնն կ'արգելոյր կամ կը փոխէր զայն, և այս բանս կապացուցանեն Պլինիոս, երբ կը նկատցնէ զԱյստազդ՝ Բիքոսի և Փաւնեայի աղդու դիմ ԹուԹեամբն՝ յերկիր գալով Նումայ Պոմպիլեայ հրաշից արուեստն ուսուցանելու համար Ռոմպոսն իշնելու առիթս աճ։—Ղուկիանոսի և Սուտոնիոսի մէջ կը տեսնենք որ ըսպառնալիքներ կըլլան ուրուց, որպէս զի չուտ

հնազանդին։—Յուլիանոս կայսեր օրով, Քրիստոնէից և Մաքսիմոս հրաման կընդունին իրմէ որ ապրեցնէքն երԹան, բայց որովհետեւ բոլոր դիմացին եղած նշաններն չարագուշակ են, ասիկիւք, կրակն, զաստուածներն, որ իրենք ևս կամին ինչ որ մեք կը կամիք, և դիւցազնական գործողութիւնին կը վերսկսին։ Այս գաղափարներս այնքան արմատացեալ էին նախնի քաղաքակրԹութեան մէջ, մինչ զի ասենին բարձրաստիճան և համբաւաւոր մարդիկ միատառաքար կը հաւատային անոնց։

Սա համոզումն՝ Թէ՝ դից կամքն կրնայ կոտրուիլ ինչ ինչ անձանց ամենազօրաւոր կամքն՝ Պարսից, հին Գաղղիացւոց, Գերմանացւոց, Արմորիկեանց և այլ նախնի ժողովրդոց մէջ ևս կը գտնուի։ Դրուիդք ինքզինքնին անխոցելի ընելու, հրդեհի մը առաջքն առնելու, փոԹորիկները գրգռելու կամ ցածուցանելու, և իրենց Թշնամիքն խելայեղելու համար մոգական խօսքեր կը դործածէին։ Դրոդք, կամ Արմորիկի կիսաք կը պարծէին Թէ մի քանի խորհրդաւոր բանից միջոցաւ մեռեալներն կրնային յարուցանել։ Նոյնպէս կը պնդէին Թէ ամեն տեսակ հիւանդու Թիւն կրնային ազդել կամ բժշկել։ Սքանտինաւեան Հառաջդքբաշարժ կտորը կը տեսնենք։

«Գիտէք, կըսէ անգ Օաէն, ինչպէս պէտք է գրել Աքանտինաւեան նշագրերն (runes) ինչպէս մեկնել զանոնք, ինչպէս նոցա զօրութիւնն փորձել հասկանալ։ Ես այնպիսի խօսքեր

գիտեմ, զորս բնաւ մարդոց որդի մը չ'գիտեը. խօսքեր որք արտունջն, ցաւերն ու վիշաերն կը հալածեն. այնպիսիները գիտեմ, որք առաւօտ ապրը կը բթացնեն. որք ամենէն ամրակուռ շղթաներն կը խորտակեն. որք փոթորիկը կը խաղաղեն և երկինքը վերստին կը պայծառացնեն. ամպերն վարող հողմուն կը կատեցնեմ ես, և ի մի հայեացս ալեկոծեալ ծովն կրնամ հանդարտեցնել: Երբ սրբազան նշանագրեր կը գրեմ, բնակիչք գերեզմանաց կը զարթնուն և առիս կուգան: Եթէ նորածին մանկան վերայ լուր հեղուս, ան երկաթը քան մը չէ կարող ընել նորա գէմ: Դից, ոգւոց և մարդկանց բնութիւնն երեւան կը հանեմ. ամենէն ամբիծ կուսին սրբութեան մէջ տենչը կը վառեմ. սէր կամ առնութիւն ներշնչել, կիներն բազմածին կամ ամուլ ընել գիտեմ. կարող եմ զինուորաց քաջութիւնն կրկինատարակել կամ մարել. . . :»

Լատինի ժողովրդոց մէջ եւս հաւատմունք կը պարծէին թէ մոգական խօսքեր արտասանելով կրնան հողմերն չղթայել, փոթորիկը հանգարտեցնել, կայծակին ընթացքն ուղղել, օձերուն թոյնն բառնալ, և որ առաւել զարմանալին է, Հաստատութեան վրայէն լուսինն վար առնել երկրի վրայ բերել:

Սկիւթացիք նմանապէս իրենց կիւսերն ունէին, որք ուրիշ ազգաց կիւսից գործած մի և նոյն հրաշքներն կը գործէին. սակայն սա ալ ըսենք թ'ներքոյ ասցա, որ այս հմայիչքս ուրիշ ազգաց հետ բաղդատմամբ շատ աւելի սակաւաթիւ էին ասոնց մէջ:

Ա. յոպէս՝ եթէ գարեհ գոր գէպ ի յառաջ երթամբ, Յունաստանի դիւցազնական գարուն մէջ կը տեսնեմք որ Կիրկէ անուն վհուկին տեսակ մը ըմպելիքներ կը պատրաստէ, որոց ազդեցութեամբն Ոդիսեայ ընկերքն գազիր անասուններու կը փոխակերպին. եղելութիւն այլաբանորէն պատմեալ, որոյ ճշմարիտ նշանակութիւնն սա է թէ՝ Կիրկէ մառնաւոր տունկերով այնպիսի ըմպելիք մը կը պատրաստէր, որոյ՝ մարդոյն ուղեղին վրայ ըրած ազդեցութեամբն՝ բանականութիւնն ու կամքն պահ մը գործելէ կը դադարին[1]: Բայց ամենէն աւելի, Թունաւորելու արհեստին մէջ էր որ այս վհուկս հրաշակառոր եղաւ: Իւր կազմած բազադրութեանց առաջին փորձն իւր ամուսնոյն վրայ ըրաւ. և այս բանս զինքն այնքան առելի ըրաւ իւր երկրին, որ Տարկադրեցաւ Թողուլ փախչել անկից: Կըսեն թէ Սկիլլան՝ ծովային գազանի և գիքթաս, Իտալիոյ Թագաւորն, կանաչ փայտփորի այլափոխեց: Ինքն իսկ Ոդիսեւս քան զիւր ընկերակիցսն աւելի բարեբաղդ գտնուելով, ուրիշ բանով չկրցաւ ազատիլ Կատկին կախարդանացը ձեռքէն, բայց եթէ հէյ[2] անուն բուսոյ մը միջոցաւ, զոր Ա.Թենաս տուած էր իրեն իբր պահպանիչ դեղ:

Նոյնպէս Մեդեա քաջ հմուտ էր բուսա-

---

[1] «Տես Գ-ղ-ղ-ն ծոյ ։ Մ-ջ-ւ-ն-ն-ր-ն-ն» անուն երկասիրութիւնը, յորում կը գտնուին այն գործողութիւնքն որով կըբնայ մէկը իւր փորձին առարկայ ընել ուզած մարդոյն անհատականութիւնն յիւրմէ բառնալ:

[2] Տեսակ մը խոտոր:

գիտութեան, մինչ զի կրցաւ Եսանը վերըս-
տին երիտասարդացնել, կամ գէթ նպա կեանքը
անդրբան զբնականն երկարել։ Սա ալ կիրկէի
պէս հաչակաւոր եղաւ իբր դեղատու։ Երբ-
պիղէս զանազան մարդ ապաքինութիւնք կը վե-
րագրէ անոր, որոց մէջէն՝ ի մասնաւորի Կիռո-
նի, Ապոլիդեայ և Պեղիասայ մահն. բայց ան-
տի բուն իսկ իբր աղջիկը դեղած ըլլալու ամ-
բաստանութիւն կընէ նորա վրայ, իսկ Դիոդո-
րոս Սիկիլիացի պատմագիրն կը նկարագրէ մեզ
զԿիրկէ և զՄէտէս իբր երկու՝ արհաւիրք և սոս-
կումն ազդող վհուկներ։

Հռոմայեցիք ալ իրենց դիւթերն ու վհուկ-
ներըն ունեցան, Յունաց դիւթից ու վհկաց կա-
զապարին վրայ ձուլեալ. և միայն ոգի ու ա-
միկը չէր որ կը հաւատար նոցա։ Իրաւ է որ
Կատոն, Լուկրետիոս և Կիկերոն կը ծիծաղէին
նոցա վրայ. բայց միւս կողմանէ Վիրգիլիոս,
Ովիդիոս, Որատիոս և այլ բանաստեղծք հա-
ւատք ընծայած կը թուին անոնց։ Որատիոս՝ ի
մասնաւորի կարի գառնապէս՝ Հերմիոնէ, Սա-
կանէ և Փանիտիա անուն վհկաց երեսին կը
զարնէ իրենց գարշելի դիւթութիւններն։ Սե-
քըստոս, մեծին Պոմպէոսի որդին, ամբաստան-
ուած է, այս սոսկալի թովչութեանց մէջն ա-
տեն, տգայ մը խողխողած ըլլալուն համար։ Կը-
ղոդիոս կայսրն իբր կնոջ ներքսիդին վատուած ա-
մօթալի տուխին մարելու համար չատուկ կը-
նոջ մը արհեստին ապաւինեցաւ [1]։

[1] Տես «Ա-ոչ-ը-ո-ա-ի-ն ա-ն-ա-ն-ի-ա-ն» ուր ամբողջ դիտոց մը

Իրենց թաւ ատութեր անատուց մէջաեղ,
Հին—Գաղղիոյ և Բրիտանիական—կղզեաց մէջ
կորդ մը դրսիդք կամ մանաւանդ դրսիդու-
հիք րդձութեան և գիւահմայութեան կը պա-
տպակին։ Իրենց արարմունքն մի և նոյնն էին, ինչ
որ էր այլ ժողովրդոց կիւսահմայիչ արարմուն-
քըն, պոիներն խուժադուժ աւերդ ապաշուա-
թեանց խառնուրդ մը։

Սուբիջ[1], պրանտրօխ[2], պռոխ[3] հռչակքը, օյախաճ
հռչակն պտնուտը, որ այլ և այլ մեծամեծ զո-
րութիւնք ունենալ կը կարծուէր, խորհրդաւոր և
պտնգակ եղանակաւ մը կըլլային։ Դրսիդք ալ
ձեռքերնին, զոր իրենց վերարկուաւն կը ծած-
կէին, պատր խլելէ ետքը՝ գազատպղի և յատ-
ճեպս, իբր թէ գողութիւն մը ըրածի պէս, գոյն
ձահ ձեռքերնին կանցնէին։ Ականջ դուռ, գոյն
քաղելու աւերնին ոտքերնին և դրանին պէտք
եր լաց ըլլար։ Օձակուռ հռչակիքը, իրենց ըտա-
ճին նայելով, սոլնոց տարփանաց եղանակին քերը-
նեբնուն վազած լորձունքէն կը գոյանար։ Բայց
այս հռչակիթս փնտռելէ գտնելը չատ վտանգա-
ւոր էր. վասն զի սոզունք յանչափս կատղե-
լով, իրենց բոլոր զօրութեամբն յանդուգն
յարձակիչն ետեւէն կընային. տարր համար
ան կը միներ որ արագընթաց ձիու մը վրայ

[1] Ինքսե ազգը. Gui [2] կիւվերճին օթու. verveine. [3] Հա-
դայիգ—ին—Նիւմահ հրանկի տեսակ մը. selage ou pulsatille.

հեծած չ'ըլլար, այս բանիս ձեռնարկելու չ'էր համարձակիր. հաւիթը անգամ մը ձեռք անցնելուն պէս, հեծեալը ի փախուստ կը խուճապէր սրտրշաւ։ Ձակուռ հաւիթ մը ձեռք անցնողն առանձնաշնորհեալ մարդ մը կը դառնար. ամեն բանի կրնար ձեռնարկել, ամեն բան կը յաջողէր իրեն. այս հազուագիւտ բժժանքն այնպիսի հրաշալի զօրութիւն մը տուեր, որ անոր գոյէին անգամ բաւականէր անոր բարի ազդեցութիւնն զգալու համար։ Հիւանդութիւնները կը բժշկէր. ցաւ և քաղցածութիւն կուտար, վտանգեալ հարստութիւնները վերսաին կը կանգնէր. առելութիւնները կը ջնջէր. ամենասխրիմ թշնամեաց մէջ սէր և միաբանութիւն կը հաստատէր և այլն և այլն։

Ըզձութեան և հրաշից ձիրքը մանաւանդ գրոյիգուհեաց շնորհաւած էր. որքա իրենց տաճարն, իրենց վարժատունն և իրենց ժողովն ունէին, ուրտեղ իրենցմէ զատ գուրսէն մարդ եթէ մանելու ըլլար, մահ էր պատիժը։ Ա. յս կանոնքս, հին Դազդեացոցմէ յաւգուած ու մեծարուած, անսահման իշխանութիւն մը կը վարէին։ Ա. յնպէս հաւատացուած էր թէ՝ առնք բնութեան համօրէն գաղտնիքները գիտէին. թէ կրնային երջանկութիւն բաշխել ընտանեաց մէջ կամ դժբաղդութեամբ ընկճել զանոնք. ուստի ասոնց քինախնդրութենէն առաջիկ կը վախցուէր, և ամեն մարդ կը կը նայէր որ պարգեւներով ու պատիւներով նոցա բարեկամութիւնն շահի։ Հրամայելուն պէս

հողմանդ յանկարծ կը զայրանային կամ կը խաղաղէին. երկինքն ամպով կը ծածկուէր կամ կը պայծառանար. ջուրց և ածխոց մրմունջէն դուշակութիւններ կը հանէին. բայց աւելի չատ անգամ ըստ օրինակի Գրոյիգաց՝ ոգեկիզաց ջերմաչնչով փորտիքն կը խուզարկէին։ Ա. յս ամենէն ի զատ, առաջնորդն քննելով նոցա մէջ մարդոց ճակատագիրն կարգալու ձիրքն ունէին և իրենց խորհուրդ հարցնելու եկող թագաւորաց և մեծամեծաց ժամագիտակն[1] կը չինէին։

Զարձեալ, ինքզինքին գիւտնմայաթեան առաջ Գրոյիգուհիք իրենց գիւթութենց աւելի ուժ տալու համար քաղց, չղջիկան, սեւ պառնուկի և սեւ կատուի արիւնը կը գործածէին։ Ծխոյ չատկաց նման՝ առքա հոնտեմուտներ և հեռաւոր վայրեր մէջ գործ կը տեսնէին, և իրենց ըստ կանխագուշակութիւնքն քաղցած այն էր՝ որ կիրականային այն ատին և առկման պատճառաւ, զոր իրենց դիմողաց կը յայտնէին։ Ա. յսպէս մոգական և ըզձական արհեստից մէջ այնչափ մեծ համբաւ հանեցին առքա, մինչ ղէ Հռովմոյ կայսերքն Վաղղեայ նուաճմանէն ետև, չատ անգամ Սիբիլլայենց տեղ սոցա խորհուրդ հարցնել կուտային։ Կըսուի թէ Գրոյիգաց նման՝ որք մարդ կը յաղէին իրենց գոհապարծութեանց մէջ, Գրոյիգու-

[1] Horoscope. Ա խիմ է.

հիք ևս իրենց չորս կողմն եղած եղերական տեսարանն առաւել տոկալի ընելու համար ըզ-ղայք կը խոզմոզէին և նոցա սրեաներն գետինը կ'առուղէին։

Ս. յս դիմակահանդէսն ու մարդաշոհիւ տակաւին մեր թուականին հինգերորդ դարուն տեսի կատենային ի Վաղդէա, և տասնգ բոլորովին չնչուիլը՝ Քրիստոնէութեան ձեռօք կատ և պրոյիդական պաշտամանց խաչտնամանէն չատ ժամանակ յետոյ պատահեցաւ։

Ս. պաքէն հին քաղաքակրթութիւնքն թէև ուրիշ մտամբ խիստ ընտիր, սակայն հրաշալեաց վրայ եղած այս սէրս աւմտատոխիլ ընելու չափ դրաւեր չեղան. այնպէս որ ճշմարիտ հիւանդութիւն մը գտնէ այն՝ որ գրեթէ բոլոր աղտոտ մէջ ալ առհասարակ ճարակած էր։ Սակայն դիւրին է նշմարել՝ որ Հռովմայ գիղեցիկ առքն բուռած ժամանակակիցներուն մէջ քանի մարքերը կը լուսաւորէին և նուազ դիւրահատ կըլլային, այնքան ալ կիւսահմայից թիւն կը նուազէր։ Տարաբախտաբար բարբարոսաց արշաւանքն և Հռովմէական կայսրութեան կործանումն մարդկային բանականութեան յառաջդիմութիւնն արգիլելով, մէկդ ու աղջամուղջն ամէն կողմէ նորան ընդոստեցին և ամէն ուրեք անհուն խաւարչափութիւն մէջ տիրեց։

Ս. յս վերջ անձնանուիրութեամբ լի և մարտիրոսաց արեանէն կարմրացեալ դարուցս մէջ էր ալ, սարսափելի կռիւ մը բացուեցաւ հնութեան կողմնակցաց և նոր կրօնի մը առաքելոց մէջ տեղ, որ զմարդկութիւնն բոլորովին պիտի կերպարանափոխէր։ Երկու կողմն ալ այնպիսի տարօրինակ, այնպիսի հիանալի բաներ ըրին, որ եթէ պատմութիւնն ատոնց կերպիւ հատատած չըլլար զանոնք մարդ չպիտի ուզէր հաւատալ։ Տակաւին երկար դարեր տգիտութիւնն ու անապաշտութիւնք իրենց սեւամոյր պատանքն տարածեցին մարդկային ընկերութեանց վրայ, և կիւսահմայք ։-ի-ը անուան ներքեւ իրենց խաղերն ու արտաքնդրան յիմարութիւնքն վերսկսեցին։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՀՆԱՐՔ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ ԿՐՕՆԱԿԱՆՔ

Մոգական գործողութիւնք և արարողութիւնք միշտ այլանդակ և սգաւոր հանդերձանօք չրջապատեալ կըլլային, որպէս զի խորհուրդ հարցնողաց երեւակայութիւնը վրայնեղ գործեն և սեռակ մը երկիւղ ազդեն նոցա. մինչ նոքա անհամբեր գիտնալ կուզեն թէ ինչ պիտի պատահի։ Եւ մանաւանդ կիւսահմայ կանայք կը պարծէին, թէ իրենց դիւթութեանց ուժովն մեռելոց հոգիները կոչընուն պէս երեան գալու կրնային ստիպել, և արուեստի այս ճիւղը բանեցնելով լաւ սուակ չհնեցան։

Սեւ մոգութեան կամ դիւահմայութեան ամենէն ահեղ ստրածուած վայրն Փեռապիա եղաւ : Սիկագէ , յիշեալ երիկին ամենէն հոչակաւոր վհուկներէն մին այնքան մեծ հրմտութեան տուած էր իր արուեստին մէջ, մինչ զի ոամկին հաւատացածին նայելով՝ կրնար քսան կամաց ամենէն ստրօրինակ այլափոխութիւններ ալ ընել. մինչեւ անգամ քսոլ կար թէ լուսինը երկնքէն երկրի վրայ իջնցնելու իշխանութիւն ունէր : Ան ատ որ Փեռապիա այսմուսին այնքան մեծ անուան հանած էր, որ յաճախ հին գործուհիք Փեռապիայի բառը կը դործածեն ճարտար վհուկ մը բնորոշելու մուտ :

Թէ սրտին ծիծաղելի և պժգալի բաներ էին այս վհկաց սրտմտութիւնքներն, և թէ ինչ աստիճան ապերեսութիւն կրնային ունենալ իրենց խոչնդոտ Տէրերնին եկող յիմարաց երկուստ երեսակայութեանն վրայ , հետեւեալ նկարագրութիւնն կրնայ բնի երեսին գաղափար մը տալ այս մասին : Փեռապիան հին ժամանակագրութեան մը մէջ կը տեսնուի հետեւեալ բազատրութիւնն, որոյ միջոցաւ Սիկագէ իւր հմայութիւնքն կը կատարէր :

Վհուկն կամարայի մը մէջ ինի փէր երեք հատ բաւոյ գլուխ, — երեք հատ սեւ կատուի գլուխ, — իմի գլուխ մը, — երկու հատ ամբողջ արջնագոյտ և այնքան ալ ատրամանգ[3], — ինն հատ կարճ

[1] Պարա գարթագր. [2] Ալմենակ. տետակ մը մագիս :

և տասն և եօթը հատ սարդ , — նոխազի մը լեղին, — լարենոյ մը պորտայօղ[4] . — յովազի մը պորտին լարը, — մատակ վագեր մը մէկտեղ — եւ այս տարեկան ատու մը երակէն դեռ նոր հանուած արիւնն, — և վերջապէս մարդկային կմախքի մը գանկն ու անդրակներն . այս գանազան նիւթոց վրայ կատկցնէր նոր ատուել կամ նուազ թանձրացրել խառնելով մելխիոնի , սև խաչխաչ, բանդ[5] , կտզանչան[6] , սեռակ մը մանրագոյ[7] , եւայլն . . . . : Երբ խառնուրդը եփելով բաւականին չափ թանձրացած , վհուկն ուսուցներուս մէջ կը ընուր գոյն , և բերանին կոս մը գոյնելով կը պահէր , որպէս զի պէտք եղած ատեն իւր գործչելի թովչութեանց գործածէ : Ժամանակագիրք կը պատմեն թէ խումբ մը ազգայր դիպուածով այն քարանձաւին քովէն անցնելով ար Սիկագէ իւր քմայելիքներն կը պատրաստէր, անկից դերա նայելու անխոհեմ հետաքրքրութիւնն ունեցան . Փեռապուհիին աչքը բարկութենէն կայծակ արձակեց . խուլ մնչիւն մը երկրէն, և պատրաստած հեղուկն մատ մը նպատ վրայ սրսկելով՝ խեղճ ոտոյք յանկարծ արջուս թաղուհի փոխուեցան :

Ուրոյ թիւն մը սրչափ անհնչմար մնացած է, այնքան ատուել կարեւորութիւն ունի , ատ եթէ երբ պատահի դիտութիւնք անհետից անհետ

[3] Placenta : [4] Պան պոտ : [5] Աքսիկէն : [6] Գան գարատան մատամ քէօթիս :

ԳԼՈՒԽ Գ.

Ս. ՊԱՏԳԱՄ.

Սոցա ընդ և հնոց մէջ առնելոյ խնդրոյն.

Պատգամաց առած պատահանն հնոց մէջ դից կամքն կը համարուէր, մարդկային բերանով մը հաղորդուած. Պատգամը՝ մեհենից կամ մանաւանդ նուիրական տեղւոց մէջ կը տրուէին. ղեղրիճակ լերան մը գագաթն, անառակ մը կամ ճորակի մը խորն, և մանաւանդ քարայրից մէջ. Պատգամատեղին՝ առանց որոշեալ կանոնի մը, կամ այն չատուածոյն կամ դիցուհւոյն անունը կառնուր՝ որուն խորհուրդ կը հարցնէին, և կամ այն քաղաքին անունն, յորում կը գտնուէր.

Ս.յս պատգամաց երեսէն այնքան չահ կրլլուէր, որ ասոնց թիւն սկսաւ տարօրինակ կերպիւ բազմանալ. պարզ ապէս տեսակ մը արհեստ նիւթ դարձաւ, և իւրաքանչիւր երկիր ևս իրենը ունենալ ուզեց. Ս.յն պատգամատեղեաց մէջէն, ուր ամենէն աւելի բազմութիւն ժողովրդեան կը յաճախէր, հետևեալք կը յիշուին.

Ս.զամազդ՝ ի Դոդոնէ և յԱմմոն, ի Լիբիա.
Ս.պոլլն՝ ի Դելփիս, ի Կլարոս, ի Դիդիմէ և ի Հէրիւպօլիս.

դուրս ելնէլէ եաքը, հասարակութեան ձեռքն անցան, քանիմբ՝ որք ի սկզբան հոգ և կրօնից անուանքն պատիւ կը համարէին իրենց, սկսան ալ այնուհետև այս դիտութիւնս վար զարնել, հալածել և դատապարտել. չատ չանցաւ կիւսահմայ անունն թշնամանք մը, ամբաստանութեան նիւթ մը դարձաւ. Քրմապետաց խորհուրդն՝ իբր սրբապիղծ մոգութեամբ ամբաստանեալ բազմաթիւ անձինք հալածել տուաւ և զանոնք ի մահ դատապարտել տալու խակ յաջողեցաւ. Դիմաթենէս կը պատմէ թէ, Աթենացիք Թէսպրիտէ վիկին սոսկալի դիւթութիւնները ըրած բլլալուն համար՝ մըլեխինդ խմցուցին. իբր աղջիկն՝ մորը արուեստին խիստ հմուտ բլլալուն համար տարադրեցաւ և բնական տունն ևս հիմնայատակ կործանեցաւ.

Քանի բարեբախտ եմք՝ որ այն խաւարապատ դարուց մէջ չենք ապրիր, յորս մարդիկ այս օրինակ յիմարութեանց կը հաւատային. այսօրուան օրս՝ վտանգ դարուս լուսաւորութեան, ուղիղ դատողութիւնն bon sens տղայոց մէջ անգամ կը դանուի. Թէսպրոտական ժամանակագրոյն մեկնիչը բազդատութիւն մի ընելով կրսէ թէ, Միլոզէ վիճակն նաւազ անգութ եղաւ քան զայն, որ Դարիւշ տղայոց խաւմբ մը պատժելու համար՝ իբր հրամանաւն անատուէն եղած արկածոյն պատասխանատու զանոնք, Ս.յս երկու առաջելքս հաւատարիմ նկարագիր մի են այն ժողովրդոց բնաւորութեանն, որոց մէջ հնարուեցան.

Հերա՝ ի Կարինեա, ի Դվինեա և յԵգիպտա։
Անահիտ՝ յԵփեսոս։
Աստղիկ՝ ի Փափոս, ի Կարինեա, յԱփեկա և ի Բիբղոս։
Նանէ՝ յԵփեսոս և ի Պերգամա։
Աթենաս՝ ի Աթենքս։
Արէս՝ ի Թրակիա։
Հերմէս՝ ի Բազրաս։
Հեփաիստոս՝ յԱթենս և ի Կազէս։
Պան՝ յԱրկադիա։
Սերապիս՝ յԱղեքսանդրիա, ի Բաբելոն և ի Գանաբէ։
Թրոփոնիոս՝ ի Թէսպիաքս։
Ամֆիարաւս՝ յԱրգոս։
Ամֆիլոքոս՝ յԱրգոս։
Պատգամ Բոմոսի, ի Լիբէա։
Պատգամ Կասմոյի, յԵգիպտոս ապրի, ապրի։

Բայց առնգամէ հնչակաւորագոյնքն էին Ապոլոնի պատգամատունքն՝ ի Դելփիս, Ամֆիարաւի Աքսամազդայն՝ ի Լիբիա, Նանէի զոյգին յԵփեսոս, Թրոփոնիոսինը՝ ի Բեոտիա, և Կասմոյին յԵգիպտոս։ Սակայն Դելփեան պատգամն մանաւանդ քան զիւս ամենն գերազանցեց, այնպէս ամէն կողմէն խորհուրդ հարցընել կուգային անոր, իբր անհուն համբաւն հնուհետէ ալ տարին անցաւ և Քրիստոնէութեան առաւօտվին գաւառ մէջ հազիւ մարեցաւ։

ԴԵԼՓԵԱՆ ՊԱՏԳԱՄ։

Պատմութիւնն յիշատակարանաց մէջ այնքան նշանաւոր եղող Դելփիս քաղաքն պատգամատունն հաստատուելէն յառաջ խիստ ցած վիճակ մ'ունէր. ասոնի իբր պարզագոյնն, ճախարհիներն և իբր մեհենին վաստակաւորներն ոչն պատգամիս չհարհիւն միայն եղաւ։ Դիոդորոս Սիկիլիացին այս նիւթոյս վրայ զրեթէ հետևեալ կերպիւս կը խօսի։

«Դելփիս քաղաքն Պարնասոս լերին թաղնիքն միոյն վրայ կանգնեալ, ասկալի գաւառանդ օր և պարիսպօք շրջապատեալ է։ Լերին այն մասը, որ քաղաքին վրայ բարձրացած է՝ անիծեալ թէատրոնի ձև առնէ, և մէջը դանուած խոռոչը ու փապարք կանչ մը արձականգներ կը պատճառեն, որք չնփոթելոյ և մարդկային ձայնիդ հնչիւնն միմիանց կը յարդարեն. այնպէս որ ասաբականք կը դարմանան և կը գոհանային իսկ։

Ս. յին հնգհնգասին խորն որ մէկ կողմէն քաղաքին սահմանն կը կազմէր, իսկ մյ կողմամ ոչ օր ուշագրութիւնն ըրած էր. Երկնակամիցն մէջ ապաժոդ այծեր յիշեալ խոռոչին մօտ դնացած ըլլալով, յանկարծ սկսան ատրճիռով կզանակաւ մը ատտամել, և բոլորովին նորանոր չան բառանչիւններ արձակել։ Առանց պահապան Քրէքոս հովիւն տեսածն վրայ քաղաչ

կրթած՝ նախ կարծեց որ խոռոչին մէջ հրեշա-
գէմ կենդանի մը պահուած էր, որոյ տեսքն
պատճառ եղած էր իր այծից այնքան զարհու-
րելուն. հետաքրքրութենէ չարժեալ՝ խոռոչին
մէջն նայիլ ուզեց. բայց հազիւ գլուխն ներմու-
ծած էր անդ՝ զառանցական եռանդ մը, տիւն
մը ըզգաց յինքն. ակաա՛ ինքն ևս իր այծից պէս
սատնուլ և վերջապէս քրանաթոր և վատահա-
բեկ դիտինն ընկաւ։ Ա.ին սաւն իրեն այնպէս
եկաւ թէ երկնից մէջ վիճադրուեր էր. բոլոր
տեսածներն հրաշալի կը թուէին իրեն. բախտին
մատեանն իր առջև բացուեցաւ և զապատպան
կարպաց նա անդ։

Մօտերը դանուած գիւղացիք՝ որք այս
բանս իմանալով յախտուն վազել եկել էին,
Քարհդասայ այն կերպիւ զառանցելը լսելուն
անմիջապէս հետեցուցին թէ, խոռոչին եղնող
աստուածային ոգւոյ մը ազդեցութենաւրէն եղած
բլլալու էր այդ բանը. ուստի ամէն մարդ ու-
զեց այդ մարգարէական արուեստին գործու-
թիւնն փորձել. և արդարև խոռոչին մերձենա-
զայ ամէնքն ալ Քարհդաս հովիւին նման աստ-
ուածազգեցիկ յուզմամբ և խանգիս վառեցան։
Համբաւն այս հրաշքներս հրատարակեց, և բազ-
մութիւնն խուռնիմց ամէն կողմէ վազել սկսաւ
նաստես բլլալու անոց։ Բազմաթիւ մարդիանգ
խոռոչին մէջ պահուրտած աստուածն աւելի մօ-
տէն տեսնելու համար ինքզինքնին վհին մէջ
նետեցին։ Այս մոլեգնական եռելութիւնքս

հետզհետէ յաճախելուն, իշխանութիւնն ստիպ-
ուեցաւ միջամտել, և վհին բերանն երկաթէ ձո-
ղերով շնուած վանդակապատ մը դնել տուաւ,
որն որ երեք ոտքի վրայ հաստատուած էր. վա-
նորոյ եռոտանի անունը տրուեցաւ անոնց։ Ա.հա
այն անուանի եռոտանին վրայ էր որ Պիւթեան
հարցուկն պատգամ տուած առենը կը նստէր։
Դելփիսի քուրմք՝ քանի կերթար առաւել գան
կը դարձէին Քարհդաս հովուին առասպելը իբր
ստոյգ իրողութիւն մը տարաձայնել. այս կերպիւ
մարդկանց համոզեցին թէ խոռոչին խորը Ա.պո-
ղոն չաստուածն պահուրտած էր, և թէ անկից
եկած գոլորշին ծծող մարդոյն մարմնոյն մէջ
կանցնէր նա։ Ա.ին վարկենէն սկսաւ, պատգա-
մին յայտնութիւնն ապահովեցաւ. ուստի վու-
թապին փառաւոր մեհեան մը կառուցին սրբազան
տեղին վրայ։ Ա.յս տեսակ մը արհեստ բան-
ընելու համար՝ քրմայ խորհուրդ մը կազմուեցաւ
որ անհուն հարստութեանց աղբիւր եղաւ իրենց
և մանկամարդ աղջիկ մ՚ալ բնտրելին, որ
Պիւթեան Ա.պողոնի պատասխանն մարդոց հա-
ղորդէ։

Ա.յս մանկամարդ աղջիկս Պիւթեան հար-
ցուկ կամ Պիւթոնուհի ըսուեցաւ։ Ի յիշատակ
այն հռչակաւոր պատերազմին, զոր վարեց Ա.պո-
ղոն, Պիւթոն օձին դէմ որ Դելփիսի բոլոր շըր-
ջակայքը կաւերէր ու կապականէր։ Ա.յս ճիւա-
զակերպ սոսկալի խորին իբր կաղապատ յաղթու-
թեան տաճարին մէջ կախուած էր. և երբ Քրմա-

նոյնն եւ ուտանելոյն վրայ նստելու պարագային մէջ բոլորին գոյն։

Բ. ՊԱՏԳԱՄ ԳՈՒՆԱՆԻ (ՑԵՊԻՐՈՍ)

Ա.յս պատգամն՝ որ Յունաստանի ամենէն հինաբնակ մին է, ի սկզբան պարզապէս կազմի անտառի մը մէջէն վազող առուակի մը խոխոջմանն զանազան մեկնութիւն տալով գուշակութիւններ հանելու վրայ կը կայանար։ Ապագայ մը մօտ իրճթի մը մէջ Պեղիա անուն պառաւ կին մը կը բնակէր, որ իրեն խորհուրդ հարցնելու եկողաց ապագան կը յայտնէր՝ Էր-Ամոյ-Ըիեան միջոցաւ։ Նաթերը Սիբիլային բնական խնդճուկ հիւղակին առջեւ հոյակապ մեհեանմը կանդնուեցաւ՝ շարքն մարմարիոնեայ սիւներով զարդարել, որոց վրայ պղինձի անօթներ դրուած էին, գանի հովին կազուսյն ուտերն երերցնէր, ապա պղինձէ անօթից զարնուելով զանազան ձայներ կը հանէին անդադ, զորս քուրմք ըստ քմայից կը թարգմանէին։

Գ. ՊԱՏԳԱՄ ԱՐՕԱՄԱԶԴԱՑ ԱՄՄՈՆԻ (Ի ԼԻԲԻԱ)

Դադանէք պատգամն չափ հռչակաւոր եղող այս պատգամն ալ հետեւեալ կերպիւ կը տրուէր։

Ըսթաուն քուրմուհիները վրայ կը վերցնէին ահագին նաւ մը, որոյ մէջ Ա.րամազդայ անգրին

նստուցած էր Համոնի ոսկւով և գոհարօք ծածկուած, և այսպէս դէպ ի չրջակայ գաւառներն կը քալէին առանց որոշեալ շաւղի մը հետեւելու, իրրեւ թե աստուածային ոգին վարեալ։ Ետեւէն մը մանկամարդ աղջկունք, որոնք ի ձայն ծընծղայից պարելով, այլք ի պատիւ Ա.րամազդայ — Ա.մմոնի օրհնելով ու մխիթարելով վերոյիշեալ թափորին կընկերանային։ Ժամ մը այսպէս քալելէ յետոյ՝ պրոշեալը յանկարծ կը պառաւեցնայ տեղանելուն քարմբ կանգ կառնուին և արձանին ներսիդիէն ելած խուլ ձայն մը պատգամը կուտար։ Եթէ յոնքերն մինչեւ թաթարին վերջն անշարժ մնային, նշան էր թէ Ա.րամազդայ մատուցուած նուէրքն իրեն վայել եզած չեն չէին։ ուստի պատգամը համր կը մնար։

Ցիշեալ պատմութիւնը կարդացողն դիւրաւ պիտի հասկնայ թէ՝ այն արձանին ներսիդիէն ելած խոշրդուսար ձայնն ուրիշ բան ըլլալու չէր բայց եթէ որովայնախօսաց թեան մը արդիւնքն. քրմայ մէջ որովայնախօս մը և մեքենագործ մը կար։ մէն Ա.րամազդայ խօսել կուտար, միւսն ալ յոնքերը շարժել։

Դ. ՊԱՏԳԱՄ ԹՐՈՓՈՆԻՈՍԻ (Ի ԲԻՈՎՏԻՍ)

Թրոփոնիոս ըստ պատմամոյ ոմանց դիւցազն մէր. իսկ ըստ այլոց, աւազակ մը։ Սա իւր ճարտարապետութեան և մոլութեան մասին ունե-

ցած ատաղձագործ խիստ անուանի եղաւ և յետոյ մահուան ալ աստուածոյ կարգն անցաւ ։

Թրոխանեան պատգամն Բէօվտիոյ լեռներէն մէյն վրայ կը տրուէր · պատգամ հարցնելէն յառաջ պէտք էր երեք օր ծոմապահութեամբ և ամէն տեսակ ապաշխարանօք անցուցնել · յետոյ աստուածոյ և Թրոխանիսի յաչս կառնէին ։ Զորրորդ օրն երկու տղայք կուգային պատգամ հարցնողին բոլոր մարմինն մանուածոյ խզբերով կը ծիէին , և երկու տեսակ ըմպելիք լմպել կուտային անոր · մին՝ Լէթէի ջուրց նման նորա մտքէն ամէն պիղծ խորհուրդներն ջնջելու համար, իսկ միւսն որ Մնեմոսինեայ ջուր կըսուէր , զօրութիւն ունէր մտի պահել տալու անոր ինչ որ նուիրական քարայրին մէջ լսէր ու տեսնէր ։

Ա.յս պատրաստութիւններէն զկնի դէպի խառնչ մը կը տանէին զնա , ուր հնոցի մը բերանոյ չափ լայն ծակ մը կար։ Մարդը սանդղով մը այն ծերպին մէջ կիջնէր և վարի ծայրը հասնելուն ինքզինքն ընդարձակ սրահի մը մէջ կը գտնէր, յորում Թրոխոնիոսի հսկայաձև արձանն կանգնած կը կենար ։ Խորհուրդ հարցնողն բագնի մը վրայէն երկու պատառ մեղր առնելով կ'ուտէր և կռնակին վրայ կը պառկէր · յանկարծ իրեն այնպէս կը թուէր թէ ոտքերէն քաշելով սակայն արագութեամբ կառնուին կը տանէին գինքն ։ Խառարին մէջ պատահած այն ուղեւորութիւնս միշտին՝ սակայն զգառունը , տարբերնակ ձայնք լսել կըլլային . կայծակն կ'որոտալ

փայլակն ասոր մուլտապատ վայրերն կը լուսաւորէր մերթ ընդ մերթ, Հուսկ ուրեմն ապմուկն սակաւ առ սակաւ կը նուազէր, Համր լռութիւն մը կը յաջորդէր այն ահռելի ժխորին և մարդն ինքզինքն վերստին մեհենին մէջ կը գտնէր առանց գիտնալու թէ ինչպէս զայն փոխադրուեր էր անդ։ Այն առեն գինքն Մնեմոսինեայ աթոռն վրայ նստեցնելով տեսած-ներուն կամ լսածներուն վերաբեր հարցումներ կընէին իրեն և իր տուած պատասխանան համեմատ քահանայք կը չարագրէին ։

Արդարև յոյժ զարմանալի է ու երկ ։ Հազար տարի է ասկի ժամանակ անընդհատ մը յետոյ հեռաւոր ժողովրդեան մը մէջ միևնոյն սրբատպաթիւնքն միևնոյն աւերտրդապաշտութիւնքն կը պանծանք ։ Թէև տարբեր կրօնական ձևով մը ներքև ։ Բառնները , սիրոյ հաստատէ Սրբոյն Պատրիկի քաւարանն ։

Ե ։ ԾԵՐՊ ԿԱՄ ՔԱՒԻՒԲԱՆ ՍՐԲՈՅՆ ՊԱՏՐԻԿԻ ։

Պատրիկ , Իրլանտայի փորրիկ քաղքէ մը մկնացած բարեպաշտ մէր ։ Հինգերորդ դարուն առաջին կիսոյն մէջ ապրեցաւ , և գործած հրաշքներովն մեծ անուն հանեց ։ Ըստ սրինակի սրբոյն Պօղոսի՝ որ Մելիտ կոչուն եէերան աւերմանքէն ազատեց , Պատրիկ իր կեանքին անատառայ մէջ պահուրտած բոլոր թու-

նաւար անտառներն որոց կամ տատակեց ։ Մեռնելէն վերջը իր նշխարքն ամէն տեսակ պատուոյ եւ յարգանաց կը ժառնկէին. եւ այնպիսի հիանալի բաներ կընէին մինչ դի Իրլանտացիք աւելորդապաշտ թեամբ պաշտօն մատուցին անոր ։ Սակայն ինչպէս ամէն երկրի մէջ եւ թերահաւատք կը գտնուին, կերեւի թէ իր քաղաքակից չուտերն Պատրիկի գործած հրաշից վրայ կը կասկածէին եւ ձեռնածական խաղեր կը համարէին զայն ։ Օր մը որ սուրբը Տերկ լճին կղզեայ մէջն մէկ կը պանդուխտը անհաւատներն ակնկոր ընելու համար թևերն տարածեց եւ իակոյն վեհ մը բացուեցաւ առջեը ներքև ։ Այն առեն սուրբն հրաւիրեց զերծնոք որ մէջն իջնեն վեհն. չուտերն յանձն առին եւ անկից դուրս ելնելէն ետքը անհատական բաներ պատմեցին Ս. Պատրիկ սուրբ մէջէն Ս. գնէխոս անուն անձին ըրած պատմութիւնն, զոր աւանդած է մեզ Դիմնիոս Կարդոեան կրօնաւորն ։

Ս. գնէխոս, որ Պատրիկի սրբութեանն վրայ դեռ տարակոյս ունէր, քաջասրտութեամբ ծերութեան մէջ մտնալով քաւարան իջաւ ։ Դնք քաւական գեղ ընդունելութիւն մը ըրին իրեն. մինչեւ անոգամ բռնեցին վառարանի մը մէջ նետեցին զինքն, ուսկից միայն Պատրիկի անուն յօդնութիւն կոչելով կրցաւ ճողոպրիլ ։ Ցետոյ մեծ դաշտի մը մէջ տեսաւ երեսնուն վրայ պատկած մերկանդամ այրեր ու կիներ. չորս դեք կը ձապկէին անխնայ. ոյդն ինչ ատելի անդին մի-

չապներ տեսաւ, որ եղկելի մեղաւորներն կը պատառէին. եւ ահագին գօշներ, որք զանոնք կընել կը ջանային ։ Ատոնցմէ ի զատ տեսաւ նաեւ վրանին մեծամեծ բեւեռներով ծակծկատած եւ դէպ խիվայր կախուած մարդիկ ։ ուրիշներ ալ՝ զորս տապակի մէջ դրած կը տապկէին կամ կասկարայի վրայ կը խարուէին. եւ վերջապէս ուրիշներ ալ՝ զորս եռացեալ ծծմբի մէջ թաթաւելէ յետոյ, հալած կապար խմելու կ'ստիպէին ։

«Ս. գնէխոս սարսափելի կերպիւ զարհուրեցաւ այս տեսածներէն. բայց երեսը խաչակնքելով եւ զսուրբ Պատրիկ իրեն օգնութեան կոչելով Սատանայէլի ամեն նենգութիւններէն կրցաւ ինքզինքն ազատել ։»

Կրօնաւորք սուրբ Պատրիկի փառարին մօտ վանք մը կառուցին, և այնպէս ձայն հանեցին որ՝ երբ մէկ միմիայն քսան ժամ այդ ծակին մէջ մտնող մեղաւորք երեսց աղօթից զօրութեամբն կրնային քաւարանին այս աշխարհի մէջ կատարել, և դիւրի մահուան ուղղակի երկինք երթալ ։

Եատ չանցաւ Սուրբ Պատրիկի ծերպին ուխտագնացութիւնն այնքան բազմաթիւ և միանգամայն չահաւէտ եղան, մինչ դի բարեպաշտ դուռդադուռդ կը դիմէին հոն ։ Իակ քաւարանը մանաւն տէս ի՛նչ կերպիւ կըլլար. նախ վանականք ուխտաւորը լինն օր վանքին խուցին մէջ կը փակէին մինակ, և նոյն միջոցին տկարացուցիչ կերակուրներ մը կենթարկէին զայն.

դարձեալ թմբլեցուցիչ ըմպելիքներ կը խըմ-
ցուներին անոր և երկարատև խոտամբերու-
թեամբ աւելի կը տկարացնեին զայն. իսկ
իններորդ օրն ամենևին ուտելիք չէին տար
անոր. յետոյ կը խոստովանցնեին, և յորդոր
կը խօսէին իրեն յառաջմանէ իմաց տալով
թէ ինչ՛ր պիտի ուներ: Ա.յս ամէնը ըլլալէն
առքը վէրի մէջ կիջեցնեին գնա, ուր տեղ քուն
կըլլար և զարհուրելի մղձաւանջի մը ենթա-
կայ, որ իրեն աչքին առջև կը բերէր կը պատ-
կերացներ բոլոր այն սարսափելի պարագաները
զոր առաջուց պատմած էին իրեն: Գունատ,
ծիւրեալ, դրեթէ ապուշ դարձած կը հանէին
զայն ծակէն. այնպէս որ՝ ալ այնուհետև միտքը
աներկրպական երկիւղներէ բնաւ երբեք ազա-
տելիք չունէր: Իսկ եթէ բոլորովին երես չդներ,
այնպէս կը տարաճայնէին թէ այս փարձոյս հա-
մար պէտք եղած հաւատքը չունենալուն դատա-
պարտութեան ենթարկուել էր:

1494 թուին քիչ դիւրահաւատ Գաղղիացի մը
այդ քաւարանը տեսնելու գնաց. դիշերն ևս
հոն անցուց, և հետևեալ օրն դուրս ելաւ առանց
բնաւ բան մը տեսած ըլլալու: Ուրիշ մը պատմութեանն
նայելով այդ քաւարան բսուածը ուրիշ բան չէր,
բայց եթէ վանքատուն ուր երկայնութեամբ և
լայնութեամբ քարանձաւ մը. և բոլոր այն տեղ տեսնուած իրաց վրայօք պատ-
մուածներն՝ նախապէս կրօնաւորաց պատմու-
թեամբն ահաբեկ եղած երևակայութեան մը
արդիւնք էին միայն:

Տասնևեօթերորդ դարուն այս ծերպս տա-
կաւին ահագին համբաւ ունէր. բայց Հենրիկոս
Ը. իր գարշելի անոթիապաշտութեամբ պըզ-
ծեալ վայր մը փակել տուաւ զայն:

Հուսկ ուրեմն 18րդ դարուն հիմն իվեր քան-
դեցին այդ քարանձաւն. և Սրբոյն Պատրիկի
ծերպը՝ որ այնքան երկար ժամանակ անհուն
համբաւ ունեցեր էր, խաղաո մոռցուեցաւ:

Չ. ՊՈՏԳՈՄ ԿՈՒՄՈՑԻ (ՅԻԴԱԼԻՍ)

Կումայի պատգամն խիստ հռչակաւոր էր
Հռովմայեցւոց մէջ. ամենէն կարևոր գործերու
մէջ խորհուրդ կը հարցնէին անոր. և այնպէս
համոզուած էին թէ նորա տուած պատասխան-
ներէն և ո՛չ մին սուտ եղած էր երբեք: Ս.Հա-
ւատիկ այս մասին Վ.իրգիլիոսի ըրած նկարա-
գրութիւնն:

«Կումայի դրան մօտ այրի մը խորը կը կե-
նայ այն Սիբիլլան, որ մարդկայնոց աչաց առջև
կը պարզէ ապագային դաղանիքն: Սա թղթոց
պատառներու վրայ կը գրէ իւր պատգամներն
և զանոնք իւր ձեռքէն անձաւին հողին վրայ կը
ջարէ. այս թղթերս ինչ կարգաւ չարեն որ
յարմար գտաէ, այն կարգաւ պէտք է մնան:
Բայց երբեմն կը պատահի որ դուռը բանալու
առենին հողմը թղթերն յիրեար կը խառնէ և
պատգամին պատասխանն ալ կը կորսուի. վանդի հարցուկը չդիջանիր քնաւ զանոնք վերստին
կարգի դնելու»:

Իդալիոյ մէջ այս քարայրէս աւելի հռչակաւոր բան չ'կար. աւերըրդապաշտութիւնն տաճար մը կառուցել էր հոն. և ժողովուրդն ալ այն տեղ մարդաբէացող քրմանոյշներն իբր աստուածոց և մարդկանց մէջ տեղ միջին բնութենէ մը եղող էակները կը համարէր:

Ս. ըդ՝ եթէ 'ի հաշիւ առնումք այն կրօնական հանդերձանքն ու չուքն՝ որովք միշտ շրջապատեալ էին պատգամք, և այն անհուն պէտքըն՝ զոր ունէին ժողովուրդք իրենց ապագայ բաղդն դանալու, այլևս չ'պիտի զարմանամք հնոց պատգամաց մասին ունեցած կոյր հաւատքնուն վրայ: Ս. յապէս առ հասարակ ամէն պարագայից մէջ՝ թէ մեծ գործ մը ըլլար թէ փոքր, պատգամաց, դիտաց և Սիբիլլայից խորհուրդ կը հարցուէր. 'ի մի բան ասի այն ժամանակաց մէկ տեսակ մը մոլութիւնն դարձած էր, ինչպէս մերն ալ իրենները ունի: Ս. պագային դիանալու անյաղթելի փափաքն և ըզձանքն արուեստին շնորհիւ եղած մեծամեծ շահերն՝ պատգամաց և նոցա սպասարկու չաղակատաց թիւը յանչափս աւելցուցին:

Բայց թէ պատգամատուք ի՞նչպէս կրնային գիանալ խորհուրդ հարցանողաց կենաց գնացքն պարագայքը, նոցա հոն գալուն պատճառները և մինչև իսկ իրենց ամենափոքր տեղեկութիւնք, և թէ ի՞նչ հնարք կը բանեցնէին այս բանիս համար, ահաւասիկ պատմեմք:

Պատգամատու մեհենից քուրմերն խել մը

իրենց գաղտնեացը տեղեակ մարդիկ արհեստակիցներ ունէին մեհենին մօտերն և մերձակայ քաղաքաց մէջ. երբ մէկը պատգամին բան մը հարցընելու գար, դեռ մեհեանէն քանի մը փարսախ հեռուէն՝ քրմաց լրտեսներու, ուղեցոյցներու և ճանապարհի ընկերներու կը պատահէր, որոց շատ դժուար էր որ իւր դաղանիքն 'ի վեր չ'հանէ: Բոլոր այն օթևանաց ծառայող անձինքն՝ ուր կ'պադանէին, վաստակնին պատգամ հարցնելու եկողաց երեսէն ըլլալուն, բնականաբար պատգամատուին տրամադրութեան ներքև էին. նոյնպէս արհեստապէտք և վաճառականք միևնոյն կերպիւ հասարակաց շահուն կ'աշխակէին: Բայց ասոնք, պատգամատուն ամէն բանի խելամուտ ըլլալու համար կը չանար որ՝ եղածին չափ ժամանակ ալ շահի. այսօր օրը չարանչան էր, վաղը քաւութեան օր էր ևն ևն: Սոյն պայմանաժամացս միջոցին՝ պատգամ հարցընելու եկողներն պատրաստելու համար շրջագայութիւններ կընէին, երկրին հոյակապ շէնքերն, հետաքրքրական բաներն տեսնելու կերթային. ուղեցոյցք արդէն սատարեալ ըլլալով քուրմերէն՝ անոնց վրայ տպաւորութիւն ընելու յարմար նկարագրութիւններ կընէին: Օրինակի համար սա տեղ սա պատկերն անհաւատից ազանաց տրուած պատիժ մը կը յիշեցնէր. այն ինչ տեղ փաւաւորնուէրներ մի քանի մեծ մարդկանց առ պատգամն ունեցած երախտագիտութեան վկայ կը հանդիսանային: Ս. յս տեսակ

խրատներ մէն մի վայրկեան կը կրկնուէին, և օտարաց սրտին մէջ տեղւոյն չատատածոյն նկատմամբ մեծ յարգութիւն մը, պատկառանք մը կը տպաւորէին։

Երբ քուրմերն իրենց լրտեսից ձեռօք խորհուրդ հարցնելու նկող անձին նպատակին և ընելիք հարցմանը բաւականին չափ տեղեկացային, լուր կուտային իրեն որ պատգամը իրենց ըրած ապաշխարութիւններէն, զոհերէն և ընծայներէն ետև եղած ըլլալով՝ այս ինչ օրս այս ինչ ժամուն իրենց հարցումը մտիկ պիտի ընեն և պատասխանն տար. և այս այսպէս կըլլար առհասարակ ամէն պատգամատեղեաց մէջ, ո՛ր չատատածոյն կամ ո՛ր ազգին ալ որ վերաբերէին։

Ա.հաւասիկ փոքրիկ պատմութիւն մը՝ զոր Ա.թենէ կ'աւանդէ մեզ, և որ պատգամաց ապաստարկուաց ընչասիրութեանն կարի դուշնաքեայ գաղափար մը կուտայ։

«Մէկ քանի նաւաստիք՝ փոթորիկ մը եղբը անձնատամնք ելած ըլլալով, առաջին գործերնին եղաւ աստուածոց ի չնոյհակալութիւն ուխտ մը յուզել։ Եկու տեսոր ուխտը վոխտ էր. զոհին դլուխ կեցող քուրմք այսպիսի գձուձ ձևն մը տեսնելնուն՝ երեսնին թթուեցուցին։ Չոհարարն ուխտը փողոտաց, և մինչդեռ իր պաշտօնակիցքն ու նաւաստիք զոհին լեարդն քննելու զբաղած էին, ինքն մեծ ճարպկութեամբ երիկամունքն խլեց հանեց ու ծակի մը մէջ պահեց։ Չոհ մը որ երիկամունք չունենայ .... շատ գէշ նշան է

այդ ...։ Նաւաստիք փոթորկին ուրիշ ուխտ մը ճարեցին առաջնէն նուազ վտիտ։ Ա.յս անգամ ևս սիրտը չկար ....։ Ա.յսպիսի անօրինակ դէպքի մը վրայ սարսափահար եղած, երրորդ ուխտ մ'ալ նուիրեցին խիստ գեղեցիկ, պարարտ, դիրուկ, և մի բան քրմաց ուզած տեսակը։ Ա.յս երրորդ ձևս հաճոյանցաւ չաստուածոյն, վասնզի բոլոր ներքին գործարանքն խիստ լաւ վիճակի մէջ գտնուեցան, և այն մեծն եղած խորովածն ալ չատ սքանչելի բան ըլլալու էր։»

Ա.պաքէն այսօրուանօրս հաստատապէս ապացուցեալ է թէ, հին աշխարհին ամէն կողմը հաստատուած այնքան բազմաթիւ պատգամք և կիսապատգամք՝ դրեթէ ամենքն ալ Դելփեան պատգամին վրայ ձևեցան։ Մարդ կամ կրօնական ակմբին ընագիտքն երկար՝ հետաքննութիւններէ հետև ատուգեցին, որ Դելփիոյ քահայրէն ելնող թմբրեցուցիչ շոգին մեծ ներգործութիւն կրնեը իր աղեցութեանն ենթարկեալ հարցկին ջղային դրութեան վրայ. և այսպէս խարխափելով խարխափելով և զանազան նիւթեր իրարու հետ բազդատելով, վերջապէս Դելփեան քարայրին կազին յատկութիւնները ունեցող կաղ մը դոյացնել յաջողեցան։ Ա.յս կարևոր գիւտս երկար ատեն թաղուն մնաց մեհենից գաւիթային մէջ. բայց գազանիքին տեղեակ եղողներէն փառասէր անձինք՝ օգուտ քաղել ուզելով անկից, գնային ուրիշ տեղուանք ալ պատգամներ հաստատելին։

Դեղփիսի պատգամն ասոնց իբր տիպար ծառայեց. միայն թէ՝ հետզհետէ ընտանութեանց, տեղեաց և պարագայից համեմատ առաւել կամ նուազ խոր հրդեհոր արարողութիւնք և ղժայրանքներն թուելու և զերեւակայութիւնն ի գլուա բանավարութեան դրդռելու յարմար ուրուագեղական կազմածքներ աւելցուցին անոր վրայ։

Ա.հաւասիկ ասոնք են դրեթէ այն հնարքները՝ որոց շնորհիւ պատգամք ձեռք բերին այն ահագին համբաւն, զոր այնչափ երկար ժամանակ վայելեցին. բայց այն օրն որ բանավարութիւնն խօսեցաւ, և իր ձայնին ականջ տուեցաւ, հրաշքներն մարեցան և պատգամներն ընկան այլևս չկանգնելու պայմանաւ։

Ա.յսպէս ահա վերջ դուաւ հեթանոս աստուածաբեռութեան այս երկարատև կատակերգութիւնս, որ այնքան դարերէ հետէ ժողովրդոց վստահութիւնն գերեց և նոցա դիւրահաւանութեամբն զեղծաւ։ Մեր ընթերցողներէն որոնք որ կուզեն աւելի ընդարձակ տեղեկութիւն քաղել սոյն նիւթոյս վրայ, Վ.ան–Ծալ հռչանաւոր վիվիսոփային երկասիրութիւնն պարտին կարդալ. խորհրդաւոր և կորովամիտ անձ մը, որոյ իմաստուն հետազօտութիւնքն ապացուցին թէ պատգամք ուրիշ բան չէին՝ բայց եթէ շարլաթաններու խաբէութիւնք։ Ա.նուանի Ֆօնդընէլ Գաղղիացւոյն ըրած ազատ թարգմանութիւնը այս մասին հետաքրքիր եղողներն գոհացնելու ամենէն յարմարագոյնն է։

ԳԼՈՒԽ Դ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՊԻԹԻԱՆ ՀԱՐՑԿԱՑ ԵՒ ՍԻԲԻԼԱՅԻՑ ՎՐՁՑ

Պիւթիա կամ Պիւթոնուհի անունը կերևայ թէ մինչեայն Դեղփիսի մեհենին քրմանուշին յատկացեալ էր, որ Ա.պոլոնի պատասխաններն մարդկանց հաղորդելու պաշտօնն ունէր. և այս անունս տրուեցաւ իրեն ի յիշատակ այն հռչակաւոր պատերազմին, զոր վարեց Ա.պոլոն Պ.–ը.ա. բուած ճիւռապագէմ օձին դէմ, որ բոլոր Դեղփիսի շրջակայքն կ'աւերէր ու կ'ապականէր։ Ա.յս խարտանուոյս խորխրն ինչպէս որ արդէն ըսինք, մեհենին միջավայրին մէջ կանուած էր իբր կապուտ յաղթանակի որդւոյն Ա.րամազդայ. և նուիրական եռոտանուոյն շուրջն բոլորուելու կը դործածուէր, երբ հարցուկն անոր վրայ նստելու կըլլար։ Իսկ Սիբիլա անունը անխտիր կը տրուէր բոլոր այն հոգեշունչ կանանց, որ մեհենիս մէջ ուրիշ պատգամաւորէն, և կամ երկրէ երկիր թափառելով ապագայն կը դուշակէին իրենց հաշուին։

Ա.ռջի առեններըը Պիւթիայի մը ընտրութիւնն մեծամեծ դժուարութիւններ և կաղմական

նակ մը պատգամաւորութեան դադարելուն պատճառ ըլլալ, և այս կերպիւ մեհենին մեծ վնաս կը լլար։

Հետևեալը այն նախապատրաստական կանոններն են, որոց քուրմք կենթարկէին քրմանոյշն՝ զանի սրբազան եւստանեսին վրայ նստեցնելէ յառաջ։ — Նախ ամբողջ երեք օր խիստ ծոմապահութեան մը կենթարկէին զայն և մարմինն ալ դրդռիչ դեղերէի՛ք բաղադրեալ խմիրով կօծէին։ Ամէն երեկոյ Կասթալիոյ աղբիւր աւազաններէն միսյն մէջ կ՚երթար կը լուացուէր, յորում Բալասարդի ճիւղեր թրջելու դրած էին կանխաւ. և Աւազանէն ելնելուն ալ՝ այն ջրէն դաւաթ դաւաթ կը խմէր։ Ապա քուրմք վերջապէս մեհեանը կը տանէին դինքն, ուրտեղ ուրիշ մարդարէական հեղուկ մ՚ալ կխմցնէին իրեն։ Ա. յս կարգադրութիւնս Պիւթուհիին ուղեղը ոստիկ կը դրգռէր և զառանցման մօտ վիճակի մը մէջ կը դնէր զնա։

Ա.ի՛ն օրն որ Պիւթեան պատգամ տալու կելլար, անթիւ անհամար բազմութիւն կը խըռնէր մեհենին մէջ և չրջակայքն. ամէն մարդ անհամբեր նորա դալստեանն կսպասէր։ Ետոտ չանցած նուիրական քարայրին խորէն խուլ թնդիւն մը լսելի կըլլար. այս թնդիւնս հետզհետէ կաւելնար և որոտման թնդիւնին կ՚սկսէր նմանիլ. գետինը կը դողար. մեհեանը կարծես թէ՝ ի հիմանց կը սարսէր.... Մէկ մ՚ալ նայիս հեթարճակ կին մը երևան կուգար, զոր քուրմք

զանազան յատկութիւնները կը պահանջէր. զոր օրինակ մանկամարդութիւն, դեղեցկութիւն, կուսութիւն, որք իբր անհրաժեշտ կարևոր համարուած էին. բայց ասոնք ներկայացնելու էր նա այն չղայլին և խիստ զգայուն խառնուածքն՝ զոր մեք աբթանթոխոյին կը կոչեմք, որպես զի աստուածային ոգւոյն հաղորդութիւնը առաւել ոստիկ զգայը։ Բայց վերջերն փարթամ թեսաղացի մը Դեղիխի դեղատեսիլ Պիւթանուհւոյն տարփագին սիրահարելով՝ մեհենին պահապանն կաշառեց և զայն առևանգեց. ուստի քրմաց ժողովն մեծապես յուզուեցաւ այս սըրբապիղծ առևանգութեանն վրայ, և երկար բառնակ խորհրդի նստելէ ետքը՝ որոշեց որ այլ ևս Պիւթեայք յետաս տարեկան կանոնց ժէջէն ընտրուին. բայց դարձեալ մանկամարդ աղջկան զգեստներն ու խորհրդանշանները պահեն։

Պատգամք միմիայն տարին մէկ անգամ, այն է Ա.պրիլի առաջին հնգեւտանեկին մէջ կը տըրուէին։ Յիշեալ օրերն յախուռն բազմութիւն մը կը լեներ քաղաքին մէջ, և խիստ թանկ կը դներ հարցկին երկդիմի պատասխաններն։

Մեհենին մէջ միշտ բազմաթիւ պիւթեայք կային առ ձեռն պատրաստ, որպէսզի երթ ժէկերնին իրենց պաշտօնին բուռն արարողութեան առեն հիւանդանայր կամ մեռնելու բլլար, միւսներն անմիջապէս նորա տեղն անցնէին։ Ա.յս կրկնակութիւնը բանաոր համար անհրաժեշտ հարկ էին, որ այնպիսի դեպք մը կրնար ժամա-

դէպ 'ի եռոտանին կը ձգէին. հոն նստելուն պէս մարգարէական շոգւոյն սոսկալի ազդեցութիւնքըն կ'սկսէր ղգալ. վարսերը կը քաժնէէին մերթ աչքերն հուր ցայտելով արագութեամբ կը դառնային, մերթ զարհուրելի անշարժութիւն մը կը պահէին. դէմքն կը դալկահարէր. բերանը կը փրփրար. քրտնաթոր անդամներն կը քաշուէին. 'ի մէ բան բոլոր մարմինն սարսափելի ջղաձգութեան մը ենթակայ կըլլար:

Հուսկ ապա չ'կարնալով այլևս դինքը տանջող աստուածոյն դէմ դնել՝ սուր ճիչեր կարձակէր, մի քանի աղխաղուրկ խօսքերու հետ խառն, զորս քուրմք մեծ խնամօք դրի կառնուին: — Ա՛հա՛ այս էր պատգամը: Մէկ ժամ ամբողջ այս մարգարէական տենդին ճարակ ըլլալե ետքը Պիւթեանն կառնէին իր խուցը կը տանէին, ուր շատ օրեր կը մնար կրած հոգնութիւններէն հանդչելու համար: Երբեմն ալ կը պատահէր որ յանկարծահաս մահ մը կըլլար իր յիմարական եռանդեան վարձք. և այս բանս կը դիտցնէ մեզ բարեմիտն Ա.միօ՝ իր դարուն պարզ ու անսոթ թեւեթի լեզուաբը: «Պիւթոնուհին եռոտանւոյն վրայ նստելուն պէս՝ կը տեսնէիր որ բոլոր մարմինն կը դողար, և քանի քաւութեան ջուր սրբսկէին վրան՝ այդ դողը ևս քան զևս կը սաստկանար, այնպէս որ ականատեսք կը սարսռէին. մինչ ղի օր մը քրմերն ուղելով որ չափէն աւելի նեղը դնեն զանի՝ որպէս զի պատգամը ժամ յառաջ տայ, այնպիսի կատաղութիւն ու մոլեգնութիւն մը եկաւ վրան, որ չկրնալով հանդուրժել ոգւոյն՝ որ կարի բուռն կերպիւ իր ներսիդին մտած էր, սոսկալի ճիչ մը հլաւ կոկորդէն և չղաձգական տադնապաւ չունչը փչեց:»

Պիւթիոի բերնէն ելած չղաձգական խօսքերն հաւաքելնէն անմիջապէս յետոյ՝ քուրմք խորհրդակցելու համար գաղտնի տեղ մը կը ժողովէին, և պատգամ հարցնողին վրայօք իրենց կանխաւ առացած տեղեկութեանց համապատասխանող մեկնութիւն մը կուտային նորա: Եթէ պատահէր որ այս մասին ճշդիւտ ծանութիւն մը ձեռք բերած չ'ըլլային՝ որ այս բանս դուն ուրիք կը հանդիպէր, այն ատեն խառնաչփոթ և երկդիմի պատասխաններ կը հնարէին՝ որք այլևայլ եղանակաւ ալ կրնային մեկնուիլ:

ՍԻԲԻԼԱՑՔ

Սիբիլլա անունը՝ ըստ մի քանի բառագիտաց երկու յունարէն բառէ ածանցեալ է. այն է Սէօվոխանակ Թէօ՝ որ է Աստուած և Վօւլէ. խորհուրդ. այսինքն է աստուածային խորհուրդ վամնդի կը կարծուէր թէ Սիբիլլայք աստուածներուն մէկէն ներշնչեալ էին, որոյ անուամբը պատգամ կուտային: Իսկ ուրիշ բառագէտք կը պնդեն թէ ամենէն յառաջ ճանչցուած հարցկին անունը, որոյ դիւթիւնն Տրոյիոյ պատերազմէն բաղում դար յառաջ կը դնեն, Սիբիլա էր. և թէ բոլոր այն կանայք որ անկից

եաքը այն արուեստը ի կիր արկին Սիբիլլայք բառնային :

Սոցա մէջէն յոյժ հռչակաւորագոյնքն եղան՝ Սիբիլլա, Մանդէ՝ Թիբէսիասայ աղջիկը, Ռեմոլիէ, Ա.թենայիս, Նիսա, Մեղանքրեն, Դելիոպէ, Թիպուրթինէ և այլն, Սոցա տուած պատասխանքն ընդհանրապէս մանուածոյ ու մթին էին, և ո՛չ միայն տեսակ տեսակ բացատրութիւն կրնային վերցնել, հապա իրարու բոլորովին հակառակ եղող դիպաց ալ կը յարմարէին : Ա.յս երկդիմի ոճս խիստ հարկաւոր էր, որպէսզի՝ պատգամը սխալ չելնէ. ուստի միշտ պատգամին ըսածը ճիշդ էր։ Հետևեալ օրինակներէն կը հասկցուի այս :

Մարք Բաբելացւոց դէմ վարած պատերազմնուն ելքը հասկնալու համար, Ա.բատազդայ-Ա.մմոնի պատգամին խորհուրդ հարցուցին. սա պատասխանս տուաւ . — Յաղթութիւնը անոնց պիտի ըլլայ՝ որոնք որ զաստուածներն ամենէն աւելի պատուեն :

Միւս կողմանէ Բաբելացիք ալ յաղթութեան համար ապահովութիւն առին միևնոյն թէութեամբ. սակայն պատերազմը կորուսին : Ա.յն ատեն ատոր պատճառը գից նկատամամբ եղած պակասութեան մը վերագրեցին :

Փիլիպպոս Մակեդոնացին հետաքրքրութիւն ունեցաւ Թրոփոնիոսի պատգամին հարցնելու թէ՝ որքան ժամանակ պիտի տևէին . պատգամը պատասխան տուաւ :

« Որդեակ իմ , եթէ երկար տեսն ապրիլ կուզես , կառքերէն դուշացիր : »

Ա.յս տզրտարութեանս օրէն ի վեր Փիլիպպոս այլևս կառք չ'հեծաւ : Բանի մը տարի վերջը՝ Պաւսանիաս դաւաճանին ձեռօք սպանուելուն, համայն Յունաստանի մէջ համբաւ տարածուեցաւ թէ պատգամը կատարուել էր . վասն զի սիրտը մխուած սրոյն երախակալին վրայ կառք մը կայ եղել քանդակեալ :

Կորնթացի հարուստ վաճառական մը դեռահասակ Եւթըրոսիոյ մը վրայ սէր ձգելով, որ իր հառաչանքներն կը ծաղրէր, Դելփիսի պատգամին խորհուրդ հարցնել գնաց՝ հասկնալու համար թէ մանկամարդ աղջիկն օր մը պիտի սիրէր արդեօք զինքը, թէ չէ Լեւկադիան ժայռերէն գահավիժիլու փորձն ընէր(*) պատգամը ըսր առաւօրէն վարձատրած էր՝ պատասխան տուաւ իրեն . — Գեանաուիծը փոփոխական է, կինը անոր կը նմանի . — խմասուն եղողն բնաւ երբեք յուսահատելու չէ : »

Օգոստոս Լիվիայի վրայ տարփագին սիրով վառուած , որ վեց ամսուան յղի էր երկանը ձեռքէն հափշտկեց զինա , բայց իրեն կին ընելէ յառաջ պատգամին խորհուրդ հարցուց , և սա

(*) Լևկադիա Աբշխեղագոսի կղզիներէն մին է , որոյ մէկ ծայրը պարեխներ կային ծովուն վրայ սեպաձև։ Հին ատեն սիրահարութենէ մոլեգնեալք վար կը նետէին անկից ինքզինքնին և թէպը ոչ մեռցին , սիրահարութենէն կը բժշկուէին :

պատասխանը ընդունեց. — յղի կնոջ մը հետ ամուսնացողը վատահ է որ զոնէ մէկ տղայ մը պիտի ունենայ անկից: Կեսարու ամուսնութիւնն պիտի յաջողի:

Յայտնի է որ այսպիսի պատասխաններով պատգամը չէր կրնար բնաւ սխալիլ:

Ուրիշ անգամ դուշակութիւններէն բառ առ բառ Լիւժի տօմարին դուշակութեանցը կը նմանէին. ինչպէս որ խիստ իրաւացի կերպիւ դիտել կուտայ Վոլթէռ. Մեծ մարդ մը պէտք դառնայ: — Նաեքենի-ընե պէտ ըլլե: Յիրաւի հազիւ կը պատահի որ տարուան մը շրջանին մէջ մեծ մարդոց մէջէն մեռնող մը կամ ցամաք ինկող նաւ մը չդտնուի: Ասհասիկ պատգամք ևս Մաթիէօ Լէնսպերկի (*) հասկցած եղանակաւը իրաւունք ունէին:

Այս տեղ հարկ է նկատողութեան առնուլ՝ որ պատգամք միշտ իրենց խորհուրդ հարցնելու եկած զօրաւոր մարդոց փափաքանացը համեմատ պատասխան կուտային: Դէզփիսի քուրմերն վախնալով՝ որ Փիլիպպոս մակեդոնացին չդայ մեհեանին աւարի առնու, միշտ իրենց պատգամներն յիշեալ թագաւորին ի նպաստ խօսել կուտային. այս բանս լսել տուաւ Դիմոսթենէսի — « Պէ-ըեռ կը ֆէլէպոօքռե: »

Մեծն Ալէքսանդր ուզելով որ անպատճառ Ամմոնի տղան համարուի. կան-

(*) Վերոյիշեալ տօմարներուն հեղինակն է:

խաւ իմաց տուաւ պատգամին, որ խորհուրդ հարցնելու պիտի դար իրեն: Բայց տարբերն այն պիտի մէկ եղանակին հասնելով՝ որ պատգամը ոչ ևս կը խօսէր, չկրցաւ պատասխան մը առնել: Ձայս որ լսեց՝ մեհեանը մտաւ և Սիբիլլային թևէն քաշելով բռնութեամբ եռոտանւոյն վրայ բերաւ նստեցուց: Սիբիլլան զայս տեսնելուն և դիտնալով թէ դիմացինը ո՞վ և ինչպէս մարդ էր, գոչեց. — ա՛յ ոք կարող է դիմադրել քեզ, որդեա՛կ իմ: Այս բացագանչութիւնս բաւական եղաւ դուշակելու Ալէքսանդրի իր ապագայ աչխարհակալութիւնն:

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՍԻԲԻԼԼԵԱՆ ՄԱՏԵԱՆՔ

Սոյն մատեանքս՝ որք համօրէն Սիբիլլայոյ պատգամաց և մարգարէութեանց իբր հաւաքածոյքն համարուած էին, մեծ յարգ ու պատիւ ունեցան ի հնումն: Ասոնք չափազանդ յօրինուած էին և մեծ խնամքով և նուիրական իրայ վայել եղած ամեն ակնածութեամբ մեհենից խորը կը պահուէին:

Երբոր Տարկինոսի թագաւորութեան օրով անծանօթ պառաւ մը Հռոմ բերաւ Սիբիլեան մատեաններն, և թագաւորին առաջարկեց որ գնէ զանոնք. բայց որովհետև խիստ չափազանց գին

մը կը պահանջէը, թագաւորը սկսաւ ժպտիլ։ Ս.ին առեն պառաւը՝ զոր հոգին ճանչցան թէ Տաճո անուն Սիբիլլան է եղեր, առաջին երեք մատեաններն կրակը նետեց և մնացած վեց հատին համար գործեալ միևնոյն գինը պահանջեց. բայց որովհետև Տարկինոս դեռ կը վարանէր, Տաճո երեք մատեան ևս կրակը ձգեց, և մնացած երեքը միայն ներկայացնելով՝ խրոխտաբար գործեալ միևնոյն գինն ուզեց. սպառնալով, որ թէ չէ՝ այն հազուագիւտ հատաքածոյին մնացած մասն ալ կ'այրէ։ Թագաւորն այսպիսի անյողդողդուքեան մը վրայ զարմանալով՝ հատմայից ժողովը գումարեց, և ամենքն ալ միաբան հաւանութեամբ որոշեցին որ Սիբիլլային առաջարկած պայմանաց հարկէ զիջանիլ, և այն թանկագին գրեանքն անոր ձեռքէն առնուլ։

Սիբիլլեան մատեաններն անմիջապէս գընուեցան և եղենաւայտ արկեղ մը մէջ գըրուեցան. հատմայք մեծաւ հանդիսիւ Կապիտոլ տաճարին պզտնս, և նոցա պահպանութեանը հսկելու համար քրմաց խորհուրդ մը հաստատուեցաւ. վասն զի պատգամ մը գուշակել էր թէ, Հռոմայեցւոց փրկութիւնն անոնց անկորուստ մնալէն կախեալ էր։

Սիզոյի գիկտատորութեան օրով՝ Կապիտոլի հրդեհին ժամանակ Սիբիլլեան Մատեանք հոն ճարակ եղան. մեծ ափսոս մը եղաւ այս. հատարակապետութիւնն իւր կործանման վայրկեանն հասած կարծեց. ուստի փութացին պատ-

գամաւորներ անուանեցին, որք Սերիթբէ, Ի Գեղիւս, Ի Կումա և պատգամ գտնուած այլ ամեն տեղ երթալով քրմաց արտասանած կամ ատենդութեամբ այն տեղ մնացած Սիբիլլեան տաճառորներն Ի մի հատաքեցին։ Ս.յս հազնեցրս անգամ մը չարադրուելէ ետքը՝ Օգոստոս ոսկի տախտ մը մէջ դնել տուաւ զայն և իր չինել տուած պալատինեան տաճարին մէջ Ս. պաղնի արձանին ներքև պահել։ Ս.յսպէս մնացին հոն մինչև մեր թուականին չորրորդ դարը. ուր ահագին հրդեհ մը տաճարն լափելով, Սիբիլլեան մատեաններն ալ հրակէզ եղան և յաւիտեան կորսուեցան։

ԳԼՈՒԽ Ե.

ԻՂՁԲ — ՀԱՒԱՏԱՄԱՑԲ — ԼԵՐԱՀԱՄԱՑԲ

Ա. յս մեծայարդ ախոռականերս կրօնքներն՝ իբր ապագային դիտութեան ծանօթութիւնք ըստացած անձինք համարուած էին հնոց մէջ. և ասի՝ թէ իբր աստուածութեան ուղղակի չնորհ, և թէ խորին հետազօտութեամբն այն զանազան նշանաց՝ զորս չորս տարերքն և բնութեան երեք իշխանութիւնն (*) մանաւանդ կենդանականն իրենց աչաց առջև կը ներկայացնէր:

Առաջին ըղձապատմից ծագումն մարդկային ցեղագրանութեան նախկին դարերը կը հասնի. Հեսիոդոս, Պինտարոս, Համերոս, Պլութարքոս, Պղատոն, Հերոդոտոս և այլք կը պատմեն մեզ թէ դիւցազնական դարուց ազգերն այնքան մեծ պարծանք կը համարէին իրենց ըղձապատումն, որքան մեք մեր դիտուններըը. և անոնց ամէն կանխատեսութեանց կոյր վստահութեամբ հաւատ կընծայէին: Բանակ մը չէիր տաներ, որ իւր իղձերն չտանէնար. ոչ ալ զօրապետ մը, որ անոնց խորհուրդ չ'հարցուցած ճակատամարտ մղէր: Ա. յս յիմարական դիւրահաւանութիւնս, հրաշալեաց վրայ ցուցուած այսերը, առ հասարակ կը նչմարուին երեք քաղաքակրթութեանց մէջ ալ. այն է Եգիպտականին, Յունականին և Հռովմէականին: Մարդ չ'կրնար զարմանքը բռնել, երբ կը տեսնէ որ այդ դարուց մէջ գտնուած ամենէն վառաւոր հանճարներն իսկ այս անհեթեթ հաւատալիքներս յարգել և մինչև անգամ իրենց հաւանութեամբն ալ աւելի հաստատութիւն տալու ջանացել են տոնոց: Նոր քաղաքակրթութիւնը դիտութեանց մասին հին քաղաքակրթութիւններէն այնքան գերադոյն ըլլալովն հանդերձ՝ դրեթէ իւր անդրանիկ քերցը չափ դիւրահաւատ եղած է ի սկզբան. և դեռ շատ տեղ չ'ըներ որ քաւդէութիւնն, դիւահօսութիւնն, կախարդութիւնն և սև մոգութեան այլևայլ ճիւղերն առաջին կարգի արժանեաց աչք եղող մարդկանց մէջ մեծ յարգ ունէին. ահա այս աստիճան էր այն տեղն ժողովրդեան մեծագոյն մասին տգիտութիւնն և մարդկային մտքին դէպ ի հրաշալին ունեցած բուռն ձգտումը:

(*) Règnes, այն է հանքային, բուսային և կենդանական: Ծ. Թ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ԻՂՁԲ ԿԱՄ ԸՂՁԱՊԱՏՈՒՄԲ

ԹԻՐԷՍԻԱՍ: — Հնութեան ժամանակի յոգնաթիւ ըղձից գլուխը կը համարուի Թիրէսիաս

Բաբէ-ղայէ որդին, որոյ համար Պինդարոս ասոնց վրայ ըսած ըսելիքն անունը տուաւ։ Ա.յս Թիրէսիասս երկու կերպիւ անուանի եղաւ. մէկ մը իբր Էդիպ, մէկ մ'ալ իբր Պրոմեթէ և դատաւոր այն սարսափելի խնդրոյն, զոր Ա.քամադդ և Հերա առաջարկեցին իրեն թէ ա՞յրը երէց կինը աւելի հակամէտ է ամուսնութեան հրճուանաց. և թէ ասոնց մէ որը այս հաճոյքս աւելի աստիկ կզգայ։ — Թիրէսիաս՝ որ երկու սեռն ալ միաւորած կը բերէր յանձին, խոստովանեցաւ որ վերջին հարցման դալով կինը երեկ մարդէն շատ աւելի անդին կանցնէր։ — Հերա՝ այս պատասխանիս վրդոյ զայրանալով, Թիրէսիասայ աչքերը կուրցուց. բայց Ա.քամադդ՝ Քարիքղոյի որդին այս աղէտիս վրայ մխիթարելու համար ըղձական արուեստն և բազմադարեան երկարակեցութիւն պարգև տուաւ անոր։

Թիրէսիաս ամեն կենդանեաց լեզուն կը հասկնար. միջատաց բզզիւնէն սկսեալ մինչև առիւծին մռնչիւնը. բայց ամենէն աւելի քաղցրութեամբ մեղուներու մրմունջին, հողմոց չչիւնին և թռչնոց թռիչքին ու ձայնին վրայ կը հիմնէր իւր ըղձական արուեստը. իւր երկարատև ասպարիզին մէջ բազմաթիւ դուշակութիւններ ըրաւ, որոց ամենքն ալ կէտ առ կէտ կատարուեցան կըսեն։ Ա.յս դուշակութեանց շատերն դիւցազնական դարուց խաժադաժ ադիտութեան կրնան իբր նկարագիրն համարուիլ. օրինակի համար՝ այն դուշակութիւնն, որ Թէփեացւոց Ա.րգիացւոց դէմ

տանելիք յաղթութիւնը ապահովելու համար, Թէփէի թագաւորին որդւոյն Մեհեւէ զոհուիլը պահանջեց։ Մենէսէ՝ ըղձին ասկալի խօսքերն իմանալուն, իւր հայրենասիրութեանը միայն ունկն դրաւ. և կամաւ թագուց որ զինքը խողխողեն։ Ա.յս ապանութենէս անմիջապէս ետքը Թէփացիք՝ ի մարտ կաքաւեցին և յաղթութիւնը վաստկեցան։

ԿՈՂՔԱՍ. — Քրմապետ և Գէտ Դրուադայ շուրջը խմբուած յունական բանակին. իւր ժամանակի ըղձապատմից ամենէն ճարտարը կը համարուէր։ Իւր խորամուխ հայեացքը գներկայն զանցնելն ու գապագայն միանդամայն կը տեսնէր։ Կըսեն թէ սա դուշակեց որ Տրուադայ պաշարումը տասը տարի պիտի տեւէր, և թէ Պելղեամայ որդւոյն Ա.քիլլէսին հոն ներկայ գտնուելն յիշեալ քաղաքին առմանը աղետաբեր պայմաններին մին էր։ — Սոյն Կաղքաս էր որ Փիդոնեայի արիւնռուչ յաղթութեան հրամայեց ի պատիւ Ա.նահտայ, իբր միակ միջոց Ա.քիաեան հանդրտանաց մէջ հակառակ հողմերէ արգիլեալ մնացած յունական նաւատորմին ազատելու։ Նոյնպէս գուշակեց որ իւր մահն ալ այն օրը պիտի պատահէր, երբ իրմէ աւելի ճարտար իղձ մը գտնուելու ըլլար. և յիրաւի ալ այսպէս եղաւ. վասնզի Մոփոս անուն Գետին հանդիպելով, և անոր հետ վիճաբանութեան մտնելով ի մասին դիտութեան, յաղթուեցաւ և յուսահատութենէն ինքզինքը ծովը նետելով խեղդուեցաւ։

ՄՈՒՍԱՆ։ — Ա.յս մարդս անհուն համբաւ ստացաւ ըղձապատմական արհեստին մէջ. թադաւորք, իշխանք իրենց դործոցը, զօրապետք իրենց մղելիք ճակատամարտին վախճանին վերայօք խորհուրդ հարցնել կուդային իրեն։ Յողովուրդք, իւր գիտութեանն վրայ ոքանչացած դինքն աստուածացուցին և Կիլիկիոյ մէջ պատդամ մը իւր անուամբը կոչուեցաւ։ Յունական ժամանակադրութենէ մը կը քաղեմք իւր Կաղքասի հետ ըրած վիճաբանութեան հետևեալ երկու կարծներն։

Օր մը, որ երկու իղձերն խուռն ամիսոխ մը ընկերացեալ թաւաստուեր թղենւոյ մը ներքև կանգ առած էին, Մոբսոս ըսաւ իւր ընկերին։

«— Չ՚գիտեր լուսաւորող աստուածային ոդին կրնա՞յ արդեօք յարդոյ ընկերը, անմիջապէս ըսել տալ քեղ թէ քանի՞ պտուղ ունի սա ծառը։

— 6727 թուղ, պատասխան տուաւ նոյն հետևայն Կաղքաս։

— Միայն մէկ հատ մը սխալ ըսիր. վանդիկ ճիշդ թիւը 6728 է։ Բայց որքանութիւնը գիտնալը մեզ նման մարդոց համար չնչին բան մըն է. դործը հասկնալն է թէ քանի՞ հատ կանաչ թուղ կայ, քանի՞ հատ հասուն և քանի՞ հատ փտտած։

Ա.յս անակընկալ հարցմանս վրայ Կաղքաս վարանեցաւ. բայց իւր ախոյեանը ինքզինքը գտնելու ժամանակ չտալով անոր յարեց։

— Ե՛ս իրը թոռն Ա.պողոնի՝ կը պնդեմ թէ այս ծառոյս վրայ 2627 հատ կանաչ, 3736 հասուն, և 365 հատ ալ փտտած թուղ կայ։»

Ա.նմիջապէս ներկայ եղողք պատուիրեն քաղելու սկսան և զանոնք զատելէ և համրելէ ետքը զարմանքնէն ափ ի բերան մնացին։ Մոբսոսի ըսած թիւերն բոլորովին ճիշդ էին։ Ա.յն օրէն հետէ Կաղքասի համբաւը այնպիսի հարուած մը ընդունեցաւ, ուսկից հրաշքով մը միայն կրնար վերականդնիլ։

Հետևեալ օրը երկու ըղձապատումքն առջի օրուան պէս եռանուն զարմայոզայ բազմութիւն մը ձգած վիատեղ չըվազ այելու երևելնուն, մատակ կինճ մը տեսան, որ ձկնելու վրայ էր. Կաղքաս, առջի օրուան վրէժն առնուլ ուզելով, սա հարցումը ուղղեց Մոբսոսի։

«— Դո՛ւ, ընկերակի՛դ իմ, որ այնքան ազեկ ուսած ես թադուն թուոյ գիտութիւնն, բարեհաճէ ըսել ինձ թէ քանի ձագ պիտի ծնանի սա մատակը։

17 հատ, ո՛չ աւելի ո՛չ պակաս, պատասխանեց Մոբսոս. բայց դու ալ, Կաղքա՛ս, կրնա՞ս որոշել թէ այս թիւէն որքանը արու և որքանը էգ պիտի ըլլան, և ի՛նչ դոյն պիտի ունենան։»

Կաղքաս դարձեալ վարանեցաւ, և սաստիկ չփոթելէն չկրցաւ պատասխան մը դտնել։ Ա.յն աւելն Մոբսոս յաղթական ձայնիւ մը դոչեց։

«— Ա.յս դիշեր կինճը 17 ձագ պիտի ծրնանի. 13 ը արու և սև, միսյած 4 ը էգ և բսպիտակ։

Գուշակութիւնը ճիշդ ու ճիշդ կատարուեցաւ. և Կաղքաս իղձը՝ որոյ առաջը նահմացել էր այլևս, յուսահատութենէն ինքզինքը ծովը նետեց։

Ս. յս ռամկական վարժութիւններս իսկը իսպսելով արուեստին առընթերական դործերն (*) էին. գէաք՝ դրեթէ միշտ կղերական կաճառի մը անդամ ըլլալով, իւր արուեստը աւելի բարձր ասպարիզի մը վրայ կը բանեցնէր։ Հասարակաց ազիսից առեն խորհուրդ կը հարցնէին իրեն, որպէս զի չասուածներն իրենց նպատակատատոյց ընելով՝ անոնց առաջքն առնուն. նոյնպէս հասարակային և մասնաւոր դործոց մէջ ալ խորհուրդ կը հարցնէին իրեն, անոնց վախճանը դիտնալու համար։ Ս. յոպէսով հին դարուց մէջ ըղձապատուութեամբ թագաւորաց և աչխարհի մեծատանց սպասաւորութեանն յատկացած՝ որոց աչքին ինքզինքնին անհրաժեչտ կարևոր յուցնելու վարպետութիւնն ունեցած էին, այնպիսի յարդ և համարում կը վայելէին՝ որ չկար կարևոր բան մը, որ առանց իրենց մասնակցութեան դործադրուէր։

Ըղձական արուեստին մէջ բան օրինակի Փիւթհոսաց, Կաղքասաց և Մոքսոսի, անուանի եղող անձանց յանկը հոս պարդելը չատ երկայն ըլլալուն, ասոնցմէ ամենէն երևելիներուն անունները միայն կը նչանակենք։

(*) Hors-d'oeuvre.

Հեղինոս, որդի Պրիամայ. — Ա.միփոքոս. — Ա.միփաւրոս. Եըիմէնիդէս Կրետացին. — Բագիս Բէօվատացին. — Բրանքոս, որոյ համար տաճար մը կանդնեցին ի Միլէդէ, և որն որ Բրանքեանց պատդամը հիմնեց. Փիւնէոս. — Թէոկղիմէն. — Ա.դիաս. . Թիսիս. — Եփէպողոս. — Ոիփևմէ. — Ա.րիսդանար, որոյ խորհուրդ հարցուց Ա.ղէքսանդր Մակեդոնացին. — Լաէմբոն. — Մերոպէս. — Սբաս. — Ա.բարիս Սկիւթացին. — Հերոփիղէ, որ դեղեցիկն Հեղինէին Տրովադայ կործանման պատճառ ըլլալիքն գուշակեց. — Թևղիաս և ուրիշ չատեր որոց անուննները մեզ չեն հասած։

Կանայք ևս ըղձական արուեստին անմասն չմնացին։ Ա.սոնց թիւը թէև նուազ քան զարսնցն, սակայն և այնպէս բաւական ատար է դարձեալ։ Ա.սոնցմէ իրը ամենէն աւելի հռչակաւոր հետևեալքն կը յիչուին։

Կարիքղոյ, մայր Թիրէսիասայ և Մանթօ իւր դուստրը. այս վերջինս Կլարոսի պատդամին քրմանոյշ ալ եղաւ. — Կասանդրէ, Պրիամու դուստրը, որ Տրոյեայ աւերումն ծանոյց և Ա.գամեմնոնի սպանութիւնն դուշակեց. — Դափնէ. — Ա.կղատնիկէ. — Փիթով. — Փէննիս. — Երիքթով. — Քարմանթա, որ այնքան զարմանալի կանխատեսութիւններ ըրաւ, որ Հռոմի իրեն համար մեհեան մը կանդնեցին. — Դևփոբայ, Ա.նտորայի Պիւթեան. — Մարթա մարդարէուհին, որ իւր սխուր կանխատեսութեամբն

Հռովմայեցիքն ահաբեկ ընելու համար Աստրեստանէն Հռովմ եկաւ, և որ Մարիոսի իբր հղերական վախճանը գուժից այլն. այլն։ Ա.յս կարգին մէջ դասելու է նաև բոլոր այն Պիւթեան հարցուկներն, որ հնութեան բազմաթիւ պատմաբանութեանց մէջ կը ծառայէին։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՀԱԻԱՀՄԱՅ

Հաւահմայք աստուածոց իբր թարգմանն համարուած ըլլալով, բարձր ասպիճան մը կը վայելէին նախնի ժողովրդոց մէջ. իրենց պաշտօնն սերութեան առաջին բարձերէն մին կը սեպուէր։ Հռովմ նախ հաւահմայք երեք հոգի ընտրուեցան, այն ալ ամենէն պատուաւոր ընտանեաց մէջէն. բայց եաքերը ասոնց թիւը մինչև տասնեհինգի հասցուցաւ։ Ասոնք հեռահաս եղանակաւ կը դործէին։

Հաւահմայն՝ ծիրանեգոյն պատմուճան մը հագած և դլուխը դալինեայ պսակ, ծանր կերպիւ դէպ ի Ա.րևելք կը դառնար. թևը վեր կը վերցնէր, և ձեռքի հմայական դաւազանաւն երկնքին մէկ մասին վրայ շրջանակ մը կը քաշէր. յետոյ լուռ ու մունջ կ'սպասէր որ թռչուն մը անցնի այն շրջանակեալ միջոցին մէջէն։ Ա.յն ատեն կը քննէր թէ թռչունն հաստատութեան

ո՞ր կէտէն մուած էր հոն, ի՞նչ կերպիւ կը թռչէր, և ուրիշ ո՞ր կէտէն դուրս կելնէր։ Զախ կողմը տեսնուած նշաններն քաջ նշան, իսկ աջ կողմը տեսնուածներըը չեչ նշան կը համարուէին։ Ա.յն թռչուններէն որոց թռչելէն դուշակութիւն կըրնար հանուիլ, արծիւը, անդղը, շահէնը, ուրուրը, ագռաւը, որին, բուն և աղաւնին առաջին կարգը կը բռնէին։

Օթերևութից դիտողութիւնն հաւահմայից դիտութեան հիմնական մասերէն մին էր. սիւքերն, հողմերն, վոլթորկին շլուկն, ամպերն, խաւարումներն, և դիսաւորաց երևնալն առաւել կամ նուազ ապահով ցուցիչներ էին։ Փայլակն ու կայծակը միշտ ստոյգ նշաններ ցոյց կուտային. եթէ կայծակը աջ կողմէն ամպը ճեղքեր անցնէր, չեչ նշան. իսկ եթէ ընդհակառակն ձախ կողմէն փայլակեր, չոչը նշան էր. վասն զի Ա.ստուածոց հօրը աջ ձեռքէն ելած կը համարուէր։

Նուիրական հաւերը խիստ կարևոր դեր մը կը խաղային հաւահմայական արարողութեանց մէջ. մեծամեծ ծախքերով Եւփեա կզբէն բերել կը տրուէին ասոնք, և քուրմերն մեհենին կից ընդարձակ բակի մը մէջ բաղում խնամօք կը մեծցնէին զանոնք։ Ծերակուտին կամ բանակաց մէջ որոշում մը չէր տրուեր, մինչև որ կանխաւ նուիրական հաւերուն ինչ նշան ցուցընէն չդիտցուեր։ Ա.յս նշանաց ամենէն տեղեակ քահանաներն հաւերուն կեր ուտելու եղանակին վրայ կը կայանար. եթէ կերը ագահութեամբ

կընէին, յաջող նշան էր. իսկ երէկ աժենեին կերը առնուլ չ'ուզէին, յախող նշան էր. ուստի եւս կը կենային այն գործէն, որոյ համար խորհուրդ առնելու եկած էին: Սակայն Կիկերոն մեզ կը բացատրէ թէ՝ երբեմն անհրաժեշտ հարկ ըլլար որ այդ նշաններն յաջող ըլլան, զրմներն վանդակի մէջ կը դնէին նոյնական հաւերը և ժամանակ մը սպասէին անոնցմէ կը թողուին զանոնք: Ա.յս բանի ծանօթացումներէս յետոյ՝ դառնին վրայ յորեն կը ցանէին և վանդակը կը բանային. հաւերնալ սովալլուկներու պէս վրայնին նետուելով անմիջապէս կը հաւաքնէին զանոնք:

Հաւատմայք պաշտօնի վրայ եղած առեններն մէկ ծայրը կոր դասաղան մը կը կրէին ձեռքերնին: Ա.յս հաւատմայական դասաղանս ընդունելէ յառաջ, որն որ որբատան ակումբին մէջ ընդհանուած ըլլալու նշան էր, իր բաքանչիր հաւատմայ երդումը կը խոստանար որ բնաւ երբէք երեան չ'հանէ այն դաղանիքներն՝ որոց առանդապահ պիտի ընէին զինքը: Ա.յս երդումը կը պահանջէին այն երկիւղիւ, որ չըլլայ թէ հաւատմայից աղնուապատիւ միաբանութիւնը օր մը իր վարկը կորսնցնէ. վասն զի ուղիղ դատողութեան աչեր անձինք այս խաբեբայութեանս չէին որս ըլլար: Կատան իր բարեկամաց կըսէր թէ, կը զարմանար որ երկու հաւատմայ ի՞նչպէս առանց ծիծաղելու կրնան իրարու երես նայիլ. և Կիկերոն որ անանց կարծեցեալ դիտութիւնը ծաղր կընէր, առ որքան չնչին և աննիւթ բան

ըլլալը ապացուցանելու համար դիրք մը չբաղդիր:

Հաւատմայք Հռոմէական կայսրութեան հետ կորան. բայց՝ տարօրինակ պարագայ, Բրիտանիայք՝ որք Հեթանոսութենէն բան մը չէին ուզեր ուսնենալ, հաւատմայական դասաղանը փոխ առին անկէ, որն որ նախկինպատասխ դասաղանն (աստ) եղաւ:

ՀԱՏՈՒԱԾ Գ·

ԼԵՐԴԱՀՄԱՑ

Լերդահմայք՝ որք կըսուի թէ Հռոմուլոսի ձեռօք հաստատուեցան, մանաւանդ պաշտօն ունէին քննելու

1. Զոհից լեարդը, փորոտիքը և ջերմայերմ միսերը:

2. Զանոնք այրող վայրատակուտին բոցը:

3. Զոհին առեն դարձած ուած խաունկը, գինին, ջուրը և ալիւրը:

Լերդահմայք նախ կը քննէին թէ զոհերն արդեօք քաշքշուելով բադինը կը տարուէին, թէ չէ երկնք երկնից աղաւաօրէն կերթային. թէ առաջնորդնուն ձեռքին ոսանկալ կը փախչէին, թէ չէ հրաւ կ'երևէին. և վերջապէս թէ արդեօք մահառաւ հարուածը անմեռունչ համբերատարութեամբ կընդունէին: Ա.րեան՝ բացուած չըն-

չերակէն առաւել կամ նուազ ուժով դուրս ժայթքելը, արեան գոյնը, և դնդերական նեարդին ձգտումներն ոչ սակաւ կարևոր նշաններ կը ցուցնէին։ Երբ զոհն նուիրական դաշունին ներքև տապալէր, լերդահմայն նորա ներքին գործարանաց ծաւալը, գոյնը և վիճակը քննելու համար անոր կուրծքն ու փորը կը ճեղքէր։ Փոքրիկ կամ խոթացեալ սիրտ մը, խիստ լայնահասոր կամ դալկադոյն լերդ մը աղէտ մը դէպ արկած մը կը ցուցնէին. եթէ ընդերքը զանոնք քննող զոհադործին ձեռքէն սահէին ընկնէին, դուժեալ արկածը աւելի ծանր պիտի ըլլար։ Եթէ զոհը սպառող բոցերը արագութեամբ եւ պայծառ, մաքուր և առանց ճենճերի երկինք երթնէին, շատ բարեյաջող նշան էր. իսկ եթէ վայտակոյտը դժուարաւ հուր առնուր, եթէ բոցը բրգաձև բարձրանալու տեղ՝ կոր գծեր ձևացնէր և ծխալից մրջոյնները թողուր մէջերը, վերջապէս եթէ հողմը արգելք ըլլար անոր, կամ անձրևէն մարելու ըլլար, մեծ դժբաղդութիւններ, մեծ աղէտք մը կար գալիք . . . ։ Նոյնպէս խնկին ծխոյն առաւել կամ նուազ սպիտակութենէն, գինւոյն, ջրոյն կամ ալիւրին այս կամ այն յատկութենէն, հաւահմայք ապառարական կամ ապաստարական դուշակութիւն կը հանէին. և այն մեծամեծ գործերն՝ որոց համար խորհուրդ կը հարցուէր իրենց, ըստ այնց գուշակութեանց անմիջապէս ձեռք կառնուէին, կամ թողուէին։

Հաւահմայական և լերդահմայական արարողութիւնքն՝ աստիրաբար պատերազմն սկսելէ յառաջ՝ մեծաւ հանդիսիւ և փառաւորութեամբ կը կատարուէին. ժողովրդեան անհուն բազմութիւն մը՝ ամենախորին երկիւղածութեամբ հանդիսատես կըլլար անոր։ Զոհերը ծաղիկներով պսակուած, և կարմիր ժապաւէններով ոսկեթել ծոպերով զարդարուած կը բերուէին, և զոհարարք փառահեղ զդեստներ հագած, այնպիսի լուրջ եղանակաւ մը կը գործէին՝ որ ակնածութիւն կ'ազդէր ամբոխին. և իրենց կանխասացութիւնքն իբր անսխալ հռչակուած էին։

Յունական և Հռովմէական բանականներն այն աստիճան հաստատած էին նախրահաւատութիւնը՝ որ մինչև անգամ յուսահատելով ղէնքերնին նետելու կըլլային, եթէ պատգամք կամ հաւահմայք բարեգուշակ չըլլային իրենց. վասն զի այնպէս համոզուած էին այն առեն թէ՝ աստուածոց կամացը դէմ պատերազմիլ ըսել էր այն։ Հետևաբար պատմական օրինականներն ցոյց կուտան, թէ ի՞նչ աստիճան վստահութիւն ունէին հիներն ախտարական դուշակութեանց վրայ։

Պատահիա՝ յունական բանակին սպարապետը՝ այն լինչ պարսից դէմ ճակատ վարելու վրայ էր, և ահա տեսաւ որ յուսահատութիւնը տիրել էր զօրքերուն վրայ. պատճառ որ հաւահմայք ձախող երևել էին։ Բայց այս զօրապետս՝ որ այսպիսի խաբեպատիր արարուածոց հաւատ ընծայելու չափ անմիտ և տգետ մէկը չէր, հը-

բաման ըրաւ զոհագործ ա, որ յաջող նշաններ դտնէն. թէ չէ՝ զաժնէն ալ կը մեռցնէ։ Զոհագործը առաջի հնազանդեցան, և ախտաբուկան երեւութից այս յանկարծական փոփոխութենէն զօրաց քաջութիւնն վերստին վառելով, Պատանիոս այնպիսի անհնարին ատաքութեամբ Մարդոնիոսի բանակին վրայ խոյացաւ, որ մէկ վայրկեանի մէջ սպառազուռ կատորեց զայն։

Կղոդիոս Պուլքեր՝ կարծատեւնացուց հետ մեծ կռուոյ մը բռնուելու վայրկենին՝ նաւերական հաւերուն խորհուրդ հարցնելու մարդ զրկեց. նայիս նկան լաւ տալին իրեն, որ հաւերը կեր չէին առներ, և թէ ամենուն դէմքին վրայ ահ ու սարսափ պատել էր։

— Քա՛չ է. թո՛ղ ծովը նետեն զանոնք, բսաւ Կղոդիոս խնդալով. վասն զի եթէ անօթի չեն, ըսել է որ ծարաւ են։»

Ս. յս ծաղրական պատասխանատուս յայտնի ցուցուց թէ ի՛նչ աստիճան արժէք կուտար հաւհմայից. անսարակոյս եթէ պատերազմը վատիկը, ազնաբեր հարուած տուած կըլլար անոնց. դժբաղդաբար պատերազմը կորսյս և աստր վրայ հաւահմայներն ալ իրենց յարդ ոտացան։

Ս.ննիբալ՝ իւր պատերազմի յաջողագործներն երկար բարակ բացատրելէ ետքը, կը ջանար որ Պրուսիաս թագաւորը սոսկալ, որ խակ և խակ այն օրը հռովմայեցւոց բանակին վրայ յարձակի. բայց արքան յամառութեամբ ետ կեցաւ անվից. պատճառ բերելով, որ ձախող հաւահմայք կ'ըսէին թէ՝ աստուածք այդ յարձակման դէմ էին։ Ս.յն ատեն Կարդագինեցի զօրապետը կարեկցութենէն ուսերը վեր վերցնելով՝ ըսաւ իրեն։

— Ի՞նչ պէտք աստուածներն միջամտել ընել այս դործոյս. աւելի պարզօրէն ըսէ որ՝ սըտոտիապաշտութիւնը, ոչխարի մը լերդին կարծիքը, ծերուկի զօրապետի մը իմաստուն խորհուրդներէն նախամեծար համարել կուտայ քեզ։

Զուր և սեխք նաև հմայութեանց կրնային գործածուիլ։

Օպոսաեայ դուստրը՝ քանի մը ամիսէ ի վեր յղի ըլլալով, ատաղիկ կը փափաքէր որ մանչ զաւակ մը ծնանի. հասկնալու համար թէ արդեօք իւր խղճն պիտի կատարուի, հաւու մը հաւկիթ առաւ, որ չարաճակ ծոցը կը պահէր. և թէ ըստ դիպաց բաժնուելու ոսկրուէր անկից, մանաւորապէս սպառազուռթեանը յատկացած ոտքն ոտի կը յանձնեէր հաւկիթը՝ որ չպատի։ «Հմայն յաջող եղաւ կըսէ Պլինիոս. վասն զի՝ Յուլիա իւր հաւկիթէն աքաղաղ մը, և իւր էրիկէն մանչ մը ունեցաւ։»

Պատուական և վստաւոր սեխ մը դրուած էր Լուկուլլոսի սեղանոյն վրայ. կոչնականներէն մին՝ որ երկու չերտ ուտելէ ետքը՝ երբորդ մ'ալ կուտէր, յանկարծ զարմանալ ազազակ մը արձակեց. ակռաներէն մէկը սեղանոյն վրայ ընկեցեր։ Ս.մեն մարդ սկսաւ խնդալ. բայց ներկայ եղող հմայեակ մը յօնքերը պռստեց, և սա տխուր դու-

չակութիւնն հանեց անկէ. թէ երեք օր չանցած մեծ տուն մը պիտի կործանէր։ Դուշակութիւնը ճիշդ եղաւ։

Հին ազգաց պատմութեան մէջ՝ աւոր նման դէպքերու եղելութիւններ կը տեսնուին. և մարդ կը չուարի կը մնայ, թէ ինչպէս այն ժամանակաց ամենէն զգեցիկ հանճարներն՝ կոյր զգուրայն դնացել այս չիմարական աւելորդապաշտութեանց մէջ ընկել են։ Հերոդոտոս, Պիւդագորաս, Պաւսանիաս, Վիրգիլիոս, Տակիտոս և Երէցն Պլինիոս՝ քանի՛ քանի՛ պարագայից մէջ պատգամաց և հաւահմայից վրայ մեծ յարգութիւն ունենալնին կը յայտնեն։

Հմայից կարծեցեալ գիտութիւնը՝ ինչպէս որ արդէն ըսինք, ամեն աստեն սրբազան աստիճան մը ունեցող անձանց ձեռօք մշակուեցաւ. մի քանի գիտուն՝ Քաղդէացւոց կը վերագրեն նորա ծագումը. ուրիշներ ալ՝ Փիւնիկեցւոց, որք Նղիպտոս տարին զայն. ուսկից ալ Յունաստան, Հռովմ, և մինչև Դրոյիդեան անտառաց խորերը անցաւ։

Ինչ և իցէ. մէն մի ժողովուրդ՝ մէն մի երկիր իրեն յատուկ ըղձութեան եղանակ մը ունեցած է. Ասորեստանեայք և Քաղդէացիք աստեղաց միջոցաւ գուշակութիւն կընէին. — Փռիւգացիք և Կիլիկեցիք՝ որ բազմաթիւ խաշանց հօտեր ունէին, ընդերաց քննութեամբը. — Ետրուրացիք՝ ոսկւոյ կամ արծաթոյ վրայ զարկած լուսյ ճառագայթի ցոլացմամբը (*). — Լիբեացիք՝ առիւծուց մռնչիւնէն և յովազաց ոռնալէն. — Դրոյիդք՝ հողմոց և սահանաց մրմունջէն և այլն. և այլն. գուշակութիւն կընէին. Ի մի բան՝ ըղձական արուեստն՝ միշտ կլիմային որպիսութեանը, հողոյն հարստութեանը կամ աղքատութեանը, երկրին բուսոցը և կենդանեաց վրայ կը հիմնուէր։

(*) Fulguration.

ԳԼՈՒԽ Զ.

ԸՂՁՈՒԹԵԱՆ ՎՐԱ

Ընդհանրապէս մտացածին եւ անգոյ, կրցած է սակայն այս ինչ կամ այն ինչ պարագայից մէջ հաւանականութեանց վրայ հիմնուիլ. եւ յիրաւի՝ բարոյական դիտութեանց ներհուն մէկը՝ կրնայ մինչեւ որոշեալ կէտ մը դուշակել այն փոփոխութիւնները, որք առաւել կամ նուազ հեռաւոր՝ այս կամ այն ժամանակին մէջ՝ ժողովրդոց բարուցն ու ընկերային կազմակերպութեանն մէջ տեղի պիտի ունենան։ Նոյնպէս՝ դիտուն Մէտեորագէտն կրնայ մթնոլորտին փոփոխութիւնները գուշակել. ինչպէս նաեւ վարպետ բժիշկ մ՚ալ կրնայ կանխաւ իմաց տալ այն ճգնաժամին, որ հիւանդը պիտի բժշկէ՝ կամ առնուտանի։

Թաղէս՝ դեռ ձիթենիները ծաղիկ չտուած՝ առաջուց հասկցաւ որ ձիթոց արտադրոյ կարգի առատութիւն մը պիտի ըլլայ այն տարին, եւ բոլոր երկրին հունձքը ծախու առաւ։ — Անաքսիմանդր՝ իմաց տուաւ Լակեդեմոնացւոց, որ քաղաքնին թողուն դուրս փախին. վասն զի սահմին երկրաշարժ մը կը ուշանէր, որուն որ յիրաւի այն դիշեր պատահեցաւ, եւ ատոնց մեծ մասը կործանեց։ — Փերեսիադէս ալ՝ ձեռօքը ջրհորոյ մը ջրոյն դպչելով, երկրաշարժ մը պատահելիքը գուշակեց։ — Մեր օրերն ալ՝ Ճերունի դիւղացիներն՝ որք արեւուն եւ լուսնին ծագումն, հողմոց ուղղութիւնն եւ ամպոց ընթացքը ուշադրութեամբ դիտած են՝ երկրորդ աւուրը գեղեցիկ կամ գէշ օդ ըլլալու մասին ըրած գուշակութեանց մէջ խիստ քիչ անգամ կը սխալին։ Ուստի՝ այսպիսի հիմանց վրայ հաստատուած արհեստի մը գոյութիւնն՝ խնդրի բոլորովին հակառակ չդարձ եւ այս կերպ նկատելով, ըղձութիւնը՝ ուրիշ բան եղած չըլլար, բայց եթէ միւնոյն նպատակին ծայրամէտ բաղմաթիւ հաւանականութեանց միաբանութեան արդիւնքը։

Բայց այս արհեստին մեր հասկցած կերպին եւ հնոց մէջ գործածուածին մէջ ահագին հեռաւորութիւն կայ։ Առաջինը՝ ուղիղ դատողութեան դէմ չ՚երթար, եւ կրնայ որոշաբանական մեկնութիւն մը վերցնել. մինչդեռ երկրորդը՝ հրաշալեօղն գեղատեսիլ փայլունքն զարդարուած, խիստ չատ անգամ ուրիշ բան չէ՝ բայց եթէ չարլատանութիւն։

Ընդհատատումը, հաւահմայք եւ գուշակք՝ աստուածային ոգիէ ներշնչեալ կը հաւատացընէին ինքզինքնին. ուստի հարկ էր կամ կուրօ-

բէն անոնց հաւատալ, կամ և բանդագուշդի տեղ դնել զանոնք. ճշդ որ՝ ուշադիր դիտողը կրնայ նշմարել, թէ կանխահասցութեանց մեծ մասը՝ խոթին, երկդիմի, խառնաչփոթ ոճով մը դրուած են. և կամ դէպքը պատահելէն ետքը նշանակուել են:

Ըղձութիւնն բացատրելու, և ըղձութեան կարողութիւնը փորձիւ ապացուցանելու համար, տե՛ս հիներն ի՞նչպէս կը պատճառաբանէին:

Եթէ աչքերն չըլլան՝ տեսութեան պաշտօնն ալ չ'կրնար ըլլալ. աչքերուն հետ այս պաշտօնն ալ կը դադրի. բայց և այնպէս իւր գործողութիւնը կրնայ երբեմն առժամանակեայ կերպիւ գադրիլ. արդ՝ այդ մարդը թէև առժամ մը կոյր, չէ՞ որ դարձեալ տեսութեան ղպայարանքէն դրկուած չէ: Նոյնպէս՝ թէ որ ըղձութեան կարողութիւնը չ'ըլլայ, ըղձական պաշտաման գործածութիւնն չ'կրնար տեղի ունենալ: Բայց որովհետև զայն ունեցողը սխալելու ենթակայ է, այս կարողութիւնս ի նա գտնուիլն հաստատելու համար՝ բաւական է որ անդամ մը գուշակութիւն մը ըրած ըլլայ. բայց անանկ որ՝ չ'կրնայ քսուիլթէ ըստ դիպաց պատահած է այն: Արդ՝ այս կերպ անթիւ եղելութիւնք կ'ապացուցանեն թէ՝ կը գտնուին այնպիսի անհատներ, որք ըղձութեան կարողութիւնն (*) ունին:

(*) Facultés.

Ներկայ աշխատասիրութեանս զանազան գլխոցը մէջ՝ որք ըղձից, հաւահմայից և քաւդէից վրայ կը խօսին, պատմութենէն մեզ աւանդուած երևելի ըղձութիւններն պատմած եմք. հիմա ալ՝ այս տեղ անոնցմէ ոչ նուազ արտաքոյ կարգի խել մը կանխահասցութիւններ պիտի յիշեմք: Երբ ոգեհատ ոամկին իրը ճշմարիտ ընդունուած այս տեսակ հրաշալի եղելութիւններն մանրազնին քննութեան ենթարկէ մարդ, շատ չ'անցնիր՝ կը տեսնէ, որ ատոնք երկու աղբիւրէ ծագումն առած են. մին՝ դիւրահաւան պատմագիրներէ՝ որք բերնէ բերան պատմուած տարաձայնութեանց արձագանք եղել են, առանց անգամ մը անոնց անկարելիութեանը վրայ մտածելու. մէկ մ'ալ՝ և որ ասի ամենէն յաճախագէպն է, այն մտաբեր դիրներէն՝ որք մեծ շահ ունէին իրը ճշմարտութիւն ընդունել տալու՝ ինչ որ կեղծիք էր միայն և խաբէութիւն: Ա.հա այսչափ ատոյգ է՝ որ ամեն ատեն ընկերութեանց մէջ գտնուեցան խորագէտ մարդիկ, որք պատիւ և հարստութիւն ստացան ի միտս անոնց՝ զորս իրենց խաբեբայութեանն որս ընելու վարպետութիւնն ունեցան: Դարձեալ սա ալ դիտել կուտամք՝ որ որքան ժողովուրդք յետադէմ ըլլան, այնքան աւելի հրաշալեայն կը սիրահարին. անանկ որ՝ հանճարեղ եղող մարդկանց շատ դիւրին կըլլայ հասարակաց դիւրահաւանութիւնը իրենց օգտին գործածելով՝ վառտակ ընել անկից: Նկատէ՛ անդամ մը Մխիթարը՝ դարը՝ խաւարելութեան այն ողբալի ժամանակը,

և դառե՛ տես թէ աւելորդապաշտութիւնը ինչ աստիճան անբանութեան մէջ ձգել էր զմարդիկ։

Բայց մարդկութիւնը օր մը պիտի թոթուէր վրայէն այն թանձր հողն ու փոշին՝ որով ծածկած էին զայն չարլաթանք։ Քանի ըսսը կը տարածուէր ժողովրդեան մեծագոյն մասին մէջ, ուղիղ դատողութիւնը երեն դէմ դրուած խչընդոտներն կը խորտակէր և բանականութիւնը կը զարգանայր։ Ա.յն ատեն պատգամներն փայլերնին կորսուսին. դէտք, հաւատմայք, աստղաբաշխք տակաւ առ տակաւ իրենց այնչափ ատենէ՝ ի վեր յանիրաւի ձեռք բերած համբաւն նուազիլը տեսան. այս բանիս՝ ընթերցողը ինքնին իսկ պիտի վերահաստ ըլլայ հետևեալ երեսներուն մէջ։

Գիւցազնական դարուց չրջանին մէջ՝ Յունաց պատգամներն ու իղձերն անսահման վստահութիւն և յարգ վայելեցին։ Տէրութեան գլուխներն, զօրապետներն, իրենց խորհուրդ չհարցուցած՝ հասարակաց գործոց ձեռնամուխ ըլլալ կամ ճակատամարտ տալու չէին բնաւ համարձակեր։ Ամեն անգամ որ կարևոր բան մը ըլլար, իրենց կը դիմէին։ Միւս կողմանէ պատգամաւոր և իղձք ալ՝ աքանչելի կերպիւ իրարու միտք կը հասկնային, և խորհուրդ հարցնողաց սահմանները իրենց քաշելով կը հարատևացնէին։ Իղձք՝ պատգամաց առջև կը ղրկէին զանոնք. և պատգամներն ալ՝ իղձերն մարդկանց իմաստնագոյնները կը հռչակէին։ Ա.յս կերպիւ իսկատ

յաջող կերթար գործերնին։ Ա.հաւասիկ մի քանի օրինակ մէջ բերելոք։

Եւտիքէս՝ ըղձի մը հարցնելու դնաց, թէ ոլիմպիական խաղերուն մէջ յաղթող պիտի ելնէ արդեօք. իղձը ընծայ մը ընդունելէն ետքը՝ երկդիմի պատասխան մը տուաւ անոր, և Դելփիսի պատգամին դրկեց զինքը։ Եւտիքէս՝ իր հարցմանը վերջնական լուծում մը առնելու համար, իր ընծայատուութիւնը կրկնելու ստիպուեցաւ։ Պատգամին պատասխանը միշտ հարցնողին առատաձեռնութեանը համեմատական էր. Եւտիքէս առատաձեռն եղաւ, պատգամն ալ յաղթութիւն խոստացաւ իրեն։

Գաղատիա դուշակը՝ զառամութեան վերջին ատիճանը հասած, և զանազան խօմութեամբ վարակեալ, փայտակոյտ մը չինել տալով վրան ելաւ, որպէս զի իր ցաւոցը և կենացը միանգամայն վախճան տայ։ Մեծն Ա.ղեքսանդր բաբելոն դանուելով նոյն միջոցին, իղձը պատուելու համար՝ փայտակոյտը կանգնուած հրապարակին վրայ պատերազմի կարգաւ չարել տուաւ զօրքերը։ Ա.պա հարցնել ուղելով Գաղատիոյ թէ վերջին կամք մ'ալ ունի՞ գործադրելու, սա պատասխանն առաւ։

— Որդի՛ Փիլիպպեայ. չնորհակալ եմ առաջարկութեանդ վրայ. բան մը չունիմ քեզմէ խնդրելիք. բայց՝ այն փառաց համար՝ որով կը ճաճանչես, և աշխարհի հանգստութեան համար՝ երբ օրէն դիս պիտի դաս դանես.....։

Գուշակը երեք օր սխալ գուրցեց. վասն զի Ա.ղեքսանդը հիւանդանալով, վեցերորդ օրը մեռաւ։

Պոսիդոնիոս՝ Հռոդացւոյ մը պատմութիւնը կ'ընէ, որ մահուան անկողնոյն մէջ դուշակեց՝ թէ իւր ընկերներէն վեցը ի՛նչ կարգաւ և ո՛ր ժամանակ պիտի մեռնէին. իւր կանխատեսութիւնն կէտ առ կէտ ստոյգ ելաւ։

Լաեմբոն անուն անուանի դուշակը՝ Ա.թենքի մէջ տէրութեան ծախքովը կ'ապրէր։ Օր մը Պերիկղէսի ազարակներէն մէկուն մէջ խոյ մը ծնաւ՝ որ մէկ եղջիւր մը միայն ունէր. Լաեմբոն՝ որուն խորհուրդ հարցնելու եկած էին այս բանիս համար, իմաց տուաւ, որ Ա.թենասայ քաղաքն պատակող երկու կուսակցութեանց միեն պիտի ընկնէր. և թէ իշխանութիւնը այն տանը տիրոջը ձեռքն պիտի անցնէր, ուր խոյն ծնած էր։ Թիչ ժամանակ ետքը Պերիկղէս իշխանութեան գլուխն անցաւ։

Մի և նոյն դուշակը՝ տեսնելով որ մանուկն Ա.ղկիպիադէս ուրիշ տղոց հետ հրապարակին վրայ կը խաղար, շուրջը դանուած մարդոց դառնալով՝ ծանր կերպիւ մը ըսաւ։

— Սա տղայն՝ օր մը կանանց յուսահատութիւն, և ամուսնոց անհնարին վիշտ պիտի առթէ. փառասիրութեամբ լկեալ՝ իւր համարձակութիւնը մինչև աներկիւղ յանդգնութեան պիտի երթայ. իւր երկրին միանգամայն փառքն ու աղէտքը պիտի դառնայ....։

Քանի և հինգ տարեկան եղած տեսնելով՝ դայեակ զալից արկածի մը վրայ՝ մայրը խորհրդաբար Ա.ղկիպիադայ յայտնեց Լաեմբոն դուշակին կանխատեսութիւնը։ Զայս որ լսեց Ա.ղկիպիադ, իւր ապագայն ինչ ըլլալիքը գիտնալու հետաքրքրութենէն վարեալ՝ յիշեալ դուշակը գտնելու գնաց։

— Մայրս այժմ իմացուց ինձ՝ ըսաւ անոր, որ դու ապառնի իրաց գիտութիւնն ունիս եղեր. և թէ իմ վրայօքս ճիշդ դուշակութիւն ըրեր ես առենօք. արդ՝ կրնաս այժմ յայտնել, թէ վաղը ի՞նչ պիտի պատահի ինձ։

Ծերուկը անխռով կերպիւ մը պատասխան տուաւ իրեն։

— Հանդարտ թո՛ղ զապագայն. պատանի՝ Ձդայ լե՛ր. չը լսեյ որ նորա քօղը վեր վերցնես. վասն զի՝ այս աշխարհիս մէջ երջանիկ ապրելու համար՝ բան կայ, որ մարդ գիտնալու չէ։

— « Բայց ես՝ քու սկզբունքիդ հակառակ՝ գիտնալ կուզեմ »

— « Շատ անգամ հետաքրքրութիւնը տուդի կը նստի։ »

— « Ձե՞ս գիտեր դու՝ որ քեզ բան հարցնողը Ֆղինիասայ որդին է։ »

— « Գիտեմ .... և ահա ճիշդ քու հօրդ բարեկամին ըլլալուս համար է՝ որ չեմ համարձակիր զարհուրելի ճշմարտութիւններ իմացնել քեզ։ »

— « Համարձակէ՞ Ծերունի՛. բան մը մի՛ պահեր լինէ։ »

— « Որդի՛դ Գլինիասայ՝ յետոյ անխոհեմութեանդ վրայ կը զղջաս։ »

— « Գիտցի՛ր՝ որ Աղկիպիադէս իւր երեսէ թօզած սիրուհիներուն թափել տուած արտասուացը վրայ զղջացած է միայն։ »

— « Առանց երկիւղի պիտի կրնա՞ս ուրիշն դնել ինձ։ »

— « Աղկիպիադայ հոգին երբեք վախն ի՛նչ է գիտցած չէ. կրնա՛ս խօսիլ։ »

— Դու ուղեցիր... Ցո՛ւր ինձ ձեռքդ, որ հեռաքրքրութիւնդ գոհացնեմ։ »

Աղկիպիադայ ձեռացդ Ծերն ուշի ուշով քննելէ ետքը՝ դուշակը յօնքերը պռասեց, և կերկերնալ ձայնիւ մը սա խօսքերն արտասանեց։

— « Պատանի՛՝ բաղդին նման յոգդոգդամիտ բան չ'կայ. այսօր գքեզ իւր բարեբաստիկ կը լիացնէ, վաղը անխնայ կերթայ կառնու ետեւդ քեզի։ »

— « Ի՞նչ ըսել կուզես։ »

— Այսօր ամեն մարդ գքեզ կը սիրէ. Ալքիբիադէս ալ. նայուածդ կուռքն ես. հառքը նպատակ պիտի արձակուի քեզ դէմ. պիտի անիծեն գքեզ... պիտի տարագրուիս.... պիտի մեռնիս.... »

— « Վա՛յ կատակիս. և ո՛վ է որ չպիտի մեռնի։ »

— « Պիտի մեռնիս.... »

— « Պատերազմի մը խառն մէջ՝ հայրենիքս պաշտպանելու համար։ »

— « Ո՛չ.... մանկի մը սրտով՝ տարապրութեան հովտայդ մէջ։ »

— « Եր զառանցես դո՛ւ՝ Ծերունի. քու դիտութեանդ ունայնութիւնը՝ անոր հաւատք ընծայողներուն դիւրահաւանութեանը կը հաւասարի։ »

— « Դադրէ՛ ծաղր ընելէ՝ պատանի՛. թէ որ իմ խօսքերուս չես հաւատար, դնա Գելղիսի պատգամին հարցուր. դեռ այնպիսի մանրամասն պարագայներ պիտի իմացնէ քեզ, որ ես չեմ կրնար պրպտել։ »

— Ուրեմն դատաճանութեանդ պիտի սպանեմ։ »

— Սպանեմ՛ս.... պատասխան տուաւ իղձը, դլուխը կանգարհելով։

— « Մ'նա՛ս բարեաւ, Ծերունի՛. դուշդ Աղկիպիադէս ծիծաղելով. ապագայն փորձիւ պիտի հաստատէ թէ ըսածդ սուտ է։ »

— Երթա՛ս բարեաւ, որդի՛դ Գլինիասայ. պատասխան տուաւ Լսեմրան. ապագայն պիտի հաստատէ թէ ըսածս ճշմարիտ է (*)։ »

Սոկրատ՝ Կղէոն անուն մէկու մը կանխատեսած էր, որ երթէ դիշերները այն ինչ տեղը

(*) Տե՛ս հետեւեալին «ԿՈՐՆԹԱԿԱՆ ԴԻՇԵՐՔ» ա-նուն երկասիրութիւնը, ուր կը գտնուի Աղկիպիադայ կենաց մանրամասն պատմութիւնը։

երթալ անցնելէն ետք չ'կենար, սրախողխող պիտի սպաննուէր։

Պղտոէն՝ իր ընտանի ոգւոյն ձեռօքը իմացաւ, որ Պօրիխիւր անձնասպան ըլլալ կուզէր։ Անմիջապէս իր աչակերտին քով վազեց, և այդ ոճիրը դործելէ արդիլեց զայն։

Ավերհոէս՝ Կորտովայի առումը, Սրբասցւոյ թագաւորութեան կործանումը, և անոնց Սպանիոյ հողէն արտաքսուիլը դուշակեց։

Հռովմայեցւոց մէջ՝ որք Յունաց ըրածներէն ընդօրինակեցին, և խենդութեան մասին զանոնք ալ անցան, ըղձութիւնը հաւահմայիչ և լերդահմայիչ ձեռօք կը դործադրուէր։ Հաւահմայք՝ միայն աչխարհավարական դործոց առեն ախտաբանական արհեստն՝ ի կիր կառնուին. իսկ Հմբաշխնբնն, կամ մանաւանդ ըղձութիւնն, խել մը հիւսից և վհուկաց ձեռօք կը կատարուէր, որք իրենց վստահութիւն ընող տխմարաց դրամներն կը քաշէին կառնուին։

Պատմութիւնը հետևեալ կանխատեսութիւնը պահած, և մինչև մեզ հասուցած է։

Յուլիոս Կեսար՝ իր բարեկամաց ընկերակցութեամբ և հետևեն ալ խուռն բազմութիւն՝ Հրապարակը (*) կերթար, երբ յանկարծ Սուրինա աստղաբաշխը ամբոխը կը ճեղքէ, և շիտակ դէպ՝ ի իրեն գալով կը դոչէ.

(*) Forum.

— «Կե՜ս. զե՜ղ ևեղէ Մ՜ուէ Իդ՜ուէն։»

Կեսար խենդի տեղ դրաւ այդ մարդը և խնդալով ըսաւ իր բարեկամաց։

— Երազատես մ'է, հոգ մի՛ ընէք։

Երազատեսին գուշակութիւնն կատարեցաւ. Կեսար Մարտի Իդոսին սպաննուեցաւ։

Թրասիղէ դուշակը Տիբերէն ստիպուելով՝ որ պատր էր այն առեն՝ որ նորա ապագայ բաղդը երևան հանէ, պատասխանեց։

— «Եթէ արհեստս խաբէական չ'է, Տիբե՛ր, դու կեսարու պիտի յաջորդես, և կայսր պիտի հրատարակուիս։»

— Եթէ դու այդչափ վարպետ ես զապագայն կարդալու, աւելցուց Տիբեր, ըսէ տեսնեմ ո՞րչափ պիտի ապրիս դու տակաւին։»

— Գէտը՝ որ իշխանին ի՛նչ արիւնռուչ բընաւորութիւն ունենալը գիտէր, հասկցաւ որ կեանքը վտանգի մէջ է. ուստի աստղերը քննել ձևացնելով՝ յանկարծ զարմանաց և երկիւղի կերպարանք մը կուտայ դիմացը, և գոդդոջուն ձայնիւ մը կըսէ.

— Նոյն իսկ այս ժամուս ամենամեծ վտանգ մը կ'սպառնայ ինձ։»

— «Լաւ դուշակեցիր, Թրասիղէ. վասն զի միտքս դլուխդ կտրել տալ էր. տուած պատասխանդ դքեղ ազատեց. ալ այսուհետև արհեստիդ կը հաւատամ, և դքեղ իմ անձիս ծառայութեանը վար կը դնեմ։»

Նոյնպէս՝ Բրենոսի ձեռօք Հռովմայ առնը-

վիլը հաւանմայէ մը գուշակուեցաւ : Ա.յս գուշակութեանս մէջ ամենևին գերբնական բան չկայ. քաղաքական դիտութեան ներհուն ո և իցէ անձ՝ մի և նոյն բանը կրնար ընել :

Նախնի Դաղղիացւոց մէջ՝ Դրոյիդք և Դրոյիդուհիք միայն կրնային ախտաբոյժ արհեստը բանեցնել. ասոր համար նմանը չտեսնուած կերպիւ աղդեցութիւն և ակնածութիւն կը վայելէին : Ասոնք արդէն իրենց իշխանութիւնը աւելցնելու ծառայող որ և իցէ պարագայ իրենց չհոսն գործածելու վարպետ ըլլալնուն, ըղձական արհեստը՝ ժողովրդոց վրայ տիրապետելու համար՝ ի գործ դրած գլխաւոր հնարքներնէն մին եղաւ :

Հնդկաստան, Եա և Ա.բեվելյուց մէջ դիտութեան ալուհետն ամէն աստէն պատիւ ունէցաւ : Եգիպտացւոց մէջ խել մը վարպետ կիւսահմայք և գէշք կը դտնուէին. բայց ամենէն աւելի՝ Հբրէից փոքրիկ ժողովրդեան մէջ խոտա շատ կը դտնուէին աստղմէ : Որ և իցէ ծոյլ մարդ մը՝ որ աշխատիլ չ'ելը ուզեր, մուրացկան կըլլար, և ինքզինքը մարդարէ կանուանէր. ուստի աստղը իրարմէ որոշելու համար՝ ամենց ճշմարիտ մարդարէ, և այլոց սուտ մարդարէ անունը տուին :

Ա.բհեսոսին աչերը այն աստիճան մարութեան հասած էր հնոց մէջ, որ ապագայն հասկնալու համար ամեն տեսակ բան ալ կը քննէին. իբաքանչիւր իզէ, իւրաքանչիւր կիւս իրեն սիրած յատուկ հմայութեան կերպն ունէր : Ա.յսպէս

չորս տարերքն, ամպերն, հողմերն, աղբիւրներն ևյլն. ևյլն. կը քննէին խորհուրդ առնելու համար. ուսկից յառաջ եկաւ հմայութեանց այն անթիւ անհամար զանազանութիւնը, որոց մի քանին հետևեալքն են.

Ա.լիւրահմայութիւն . .	Ա.լիւրի	միջոցաւ
Ա.մպահմայութիւն . . .	Ա.մպոց	»
Բանալիհմայութիւն . . .	Բանալեաց	»
Դնդերահմայութիւն . .	Դնդերաց	»
Երազահմայութիւն . . .	Երազոց	»
Երկրահմայութիւն . . .	Հողոյն	»
Թուահմայութիւն . . .	Թուոց	»
Լերդադիտութիւն . . .	Լերդին	»
Խախողահմայութիւն . .	Խաղողի	»
Ծխահմայութիւն	Ծխոյն	»
Կոնքահմայութիւն . . .	Կոնքերու	»
Հայելահմայութիւն . . .	Հայելիներու	»
Հրահմայութիւն	Կրակին	»
Չուատեսութիւն	Հաւկթոց	»
Ձամբարահմայութիւն .	Կանթեղոյ	»
Մաղիհմայութիւն	Մաղերու	»
Մատնահմայութիւն . . .	Ձեռաց մատներու	
Մեռելակոչութիւն . . .	Դիակաց	»
Մոմահմայութիւն	Մեղրամոմէ փոքրիկ արձաններու	միջոցաւ
Ջրահմայութիւն	Ջրոյ	»
Սլաքահմայութիւն . . .	Նետերու	»
Տապարահմայութիւն . .	Կացիններու	»

Ցպահմայութիւն . . . . Մեծ ու պզտիկ գաւազաններու միջոցաւ
Փայտահմայութիւն . . . Փայտերու »
Օդահմայութիւն . . . . Օդոյն »

Վերջապէս խելայեղութիւնը մինչև այն աստիճան հասուցին, որ սկսան իշոյ մը դլխոյն, չանմը պոչին վրայ անգամ դուշակութիւններ ընել. նոյնպէս պանրոյ, միդի, կղկղանոց և այլն. վրայ: Ա.յս հմայական մոլեդնութիւնս երկու հազար տարիէ աւելի տևեց:

Ա.յս դլուխս կը վերջացնեմք, հետևեալ խորհրդածութիւններն ընելով ի նպաստ կանխադիտութեան:

Փորձը կը ցուցնէ՝ որ մարդոյ մը ունեցած որևէ կարողութիւնն կատարելագործուելու ենթակայ ըլլալուն, վաղ կամ անագան կրնայ ուրիշ մարդոց ձեռամբ աւելի բարձր աստիճանի մը հասնիլ: Օրինակի համար. այն մարդն՝ որ բոլոր իւր կեանքը՝ զանցեալ իրողութիւնքն ներկայ իրողութեանց լծորդող չղթայն դիտելով, և իւր հետազօտութեան նիւթ ընելով կանցնէ, կըբնայ այս կամ այն պարագային մէջ՝ մէկ կամ բազմաթիւ ապագայ դիպաց նախատեսութիւնն ունենալ: Ա.րդ՝ եթէ այն մարդոյն ըրած հետազննութիւնքն՝ մեծաւոր կարողութիւններն աւելի զարգացած ուրիշ անձանց ձեռօք նորէն շարունակուին, բնականաբար պիտի պատահի՝ որ այս անձինքն կանխատեսելու արհեստն

աւելի յառաջադէմ աստիճանի մը պիտի հասցընեն:

Մարդկային մտաց Լաբիւրինթոսին մէջ՝ յաճախ մութ կէտերու, անյաղթելի արգելքներու կը պատահի մարդ, որք զխորհուրդն յետս դառնալու և այլևս ուրիշ երբ մը դանելու կ'ստիպեն, բայց կըլլայ ալ, որ այնպիսի նեղ անցքի մը պատահի մարդ, որոյ մէջ տեղէն կ'երևին ի հեռուստ ընդարձակածաւալ հորիզոններ, անհուն անսահման տեսիլները, որք իւր առաջադրած նպատակին կը յանդին:

ԳԼՈՒԽ Է·

ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԻԲՐ ԸՂՋՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ

Ա.ստեղաղարդ երկնքի մը մարդոյս աչաց առջև պարզած սքանչելի տեսարանը՝ խիստ հին ժամանակէ ի վեր մարդկանց հիացմանն առիթ եղած է։ Հիացմանէ եւս եկաւ աստեղաց ընթացքին, լուսաւորաց ծագմանն ու մարը մրա-նեղնուն վրայ դիտողութիւն ընելը. անկից ծա-դում առաւ աստղաբաշխութիւնը. այս այնքան ընդարձակ ո՛րքան վեհ դիտութիւնը՝ որ մարդ-կային իմացականութիւնը կը մեծցնէ, և անվախ-ճանին վրայ դաղափար մը կուտայ։ Կ՚ըսեն թէ՝ աստղերուն վրայ առաջին անդամ դիտողու-թիւն ընողներն Հնդկաստանէն և Պաղդէացւոց երկրէն հովիւներ և ձկնորսներ էին։ Պաղդէ-ացւոց երկրէն աստղաբաշխութիւնը Եգիպտոս անցաւ. և մանաւորապէս Սաիսի, Թէփէի և Մեմֆիսի քրմաց ձեռօք մշակուեցաւ։

Ա.ւելի հեռու երթալէ յառաջ՝ պատշաճ է որ սա ալ դիտել տամք թէ, աստղագիտութիւն ը-սա ալ դիտել տամք թէ, աստղագիտութիւն ը-սելով՝ ի սկզբան երկնային մարմնոց մեքենակա-նութեան ուսումն կը հասկցուէր. բայց երբ ե-ռանդուն երեւակայութիւնք այս դիտութիւնս ըղձութեան գործածեցին, լուրջ մարդիկ աս-

տղաբաշխութեան անունը տուին անոր։ Ա.յն վայրկենէն՝ ի վեր աստղագիտութիւնը կամ քաւդէութիւնը մտայածին արհեստ մը եղաւ, որոյ նպատակն էր աստեղայց դիրքն, երեւոյթն ու աղդեցութիւնն քննելով՝ ապագայն դիտնալ. ալ այնուհետեւ ուրիշ բանի չծառայեց, բայց եթէ մարդ խաբելու, և ժողովուրդը աւելորդա-պաշտութեան չաւղին մէջ խորամուխ ընելու։

Պաղդէացիք ա՛յնքան հռչակաւոր եղան այս արհեստիս մէջ, որ քաւդէայ և քաղդէացի բա-ռերը համանուն կը համարուին։ Եգիպտացիք և Յոյնք նոյնպէս աստղագիտութիւնը ի կիր առին, որուն վրայ Կէթլէ (*) մակդիրն ալ եւս ցին, նախնական աստղագիտութենէն որոշելու համար զանի։

Ա.ստեղայց հրաշալի կանոնաւորութեան մը ենթակայ շարժումներն, նոցա բնութեան մի քանի երեւութից վրայ ունեցած դդալի աղդե-ցութիւնն, կարծել տուին թէ մարդս աստեղա-յին աղդեցութեան ներքեւ է, և թէ որոնելով ո-րոնելով կարելի էր նորա ճակատագիրը կառա-վարող աստեղաբաշխական օրէնքներն դանել։ Երեւակայութիւնն ալ աշխատեցաւ այս բնաբա-նիս վրայ, և այսպէսով աւելի կամ նուազ հան-ճարեղ, աւելի կամ նուազ անհեթեթ վարդա-պետութեանց ծնունդ տուաւ։ Ա.հա՛ւասիկ համառօտիւ նկարագրեմք այն հիմունքն՝ որոյ վրայ հաստատուած էր աստեղագիտութիւնն։

(*) Judiciaire·

Ա.ԺԱՆՔԷՆ անուանի աստեղագիտաց ըրած զննութեանց նայելով, աստղերուն և մահացուաց կազմակերպութեան, և կենաց տևողութեանը մէջ տեղ սերտ յարաբերութիւն մը կայ։

Մոլորակք՝ թուով եօթն, և Զոդիակոսի աստուածութիւնք կամ նշանք՝ թուով տասն երկու ծննդոց կը նախագահեն, և անհատից արտին մէջ իրենց մասնաւոր ազդեցութեանցն համեմատ որակութիւններ կը տպաւորեն։

Մէն մի մոլորակ՝ իրեն սիրած բնակարանն ունի Զոդիակոսի տասներկու աստեղատանց մէջ. և այս աստեղատանց իւրաքանչիւրոյն մէջ կը կազմուի բարին ու չարը, գեղեցիկն ու տգեղը, ուրախութիւնն ու տրտմութիւնը, յաջողութիւնն ու ձախողութիւնը և այլն. և այլն։

Ա.ԲԵՒՆԸ՝ բարերար է և նպաստամատոյց. — ԵՐԿՈՒԸ՝ պաղ, տխուր և վէս. — Լ.ՈՒՆԸ՝ անոյշ ազդեցութիւն ունի. — Ա.ՐԵՍ՝ չոր, երանդուն, կորովի և քաջառողջ է. — Ա.ՐՈՒԵՒԸ կամ Գ.ԷՐԵՒԸ՝ քաղցրաբարոյ է և բազմածին. — ՓԱՅՇԱՆ՝ անհաստատ է և խիստ տեղափոխիկ. — Լ.ՈՒՆԸ՝ ցուրտ, խոնաւ և մելամաղձոտ է։

Ով կենդանակերպին ներքև ծնած անձինքն՝ խիստ մաղուտ պիտի ըլլան, և Լ.ԸԲԵՆԻ հայեցուածք պիտի ունենան։

Ցաւ կենդանակերպին ներքև ծնող անձինք՝ դաժան բնաւորութիւն, կռիւ ընելու բնազդումն, և վերջապէս եղկերաւոր կենդանեաց ամեն համակրութիւնքն պիտի ունենան։

Ա.ՒՒԾ կենդանակերպին ներքև ծնողներն՝ սաստիկ չափակերպին ախորժակներ կունենան և բնութեամբ ալ սեղ, դուռզ կըլլան։ — Ա.ՒՒԾ ու Ա.ԲԵՍ աստեղատան հետ միացած միջոցին ծնած աղայն՝ կամ դիւցազն մը կ'ըլլայ, կամ աւազակ մը։

Կոյս կենդանակերպին ներքև պատահած ծնունդներէն՝ իդասէրներ, պչրող կանայք, և վատասիրտներ յառաջ կուգան։

Կշիռ կենդանակերպը՝ վաճառականներ, վաչխառուներ, լումայափոխներ կը հայթայթէ։

Ա.ՅԵՆՂԻԾ կենդանակերպը՝ երդիմաղանցներ, պոռնիկներ, թշուառ ամուսիններ կը ծնուցանէ։

Ա.ՐԻՒՆ և Ա.ՐՈՒԵՒՆ, Լ.ՈՒՆՁԻՆ և Ա.ՐՈՒԵՒՆ զուգաւորութիւնքն՝ տղայոց համար ամենէն երջանկաւիճակքն են։

ԵՐԿՒՆՆ և Ա.ԲԵՒՆ զուգաւորութիւնքն՝ ընդհակառակն ամենէն աղետաբերքն են։

Մանիլիոս բանաստեղծն՝ իւր աստեղաբաշխութեան վրայ դրած դրքին մէջ կանխաւ իմաց կուտայ մեզ, որ եթէ արեգական Ջ.ՐՈՒ աստեղատան մէջ եղած միջոցին տղայ ծնանիմք, այն տղային առուակներու, աղբիւրներու, շատրուաններու վրայ սաստիկ սէր պիտի ձգէ։ — Իսկ եթէ Զ.ՆՈՑ կենդանակերպին ներքև ծնանի, ձկնորսութիւնը, նաւային խաղերը պիտի սիրէ, և իւր բնազդումը միշտ ղինքը դէպ՛ի գետերն ու ծովերը պիտի վարէ։

Բարեկամ մոլորակները, թշնամի մոլորակ-

ներ ալ կան. օրինակի համար. Աբեւ-ելը՝ Աբելի քարեկամն է, իսկ Եւ-ելն ոխերիմ թշնամին։ Սակայն և այնպէս իրարու թշնամի եղող աստղերն՝ կրնան իրարու հետ հաշտուիլ այս կամ այն տեսլեանց համեմատ. ինչպէս նաև բարեկամ աստղերն՝ կրնան իրարու հետ աւրուիլ։

Մոլորակային տեսիլներն վեց հատ են։

Զուգաւորութիւն. երբ երկու մոլորակ մի և նոյն կենդանակերպին մէջ միատեղ դտնուին։

Ծալապկռութիւն. երբ իրարու հակառակ երկու ծայրերը դտնուին։

Եռից. երբ չորեանակի մէկ երրորդ մասամբն իրարմէ հեռու կը դտնուին։

Քառակ. մէկ քառորդի անջրպետ մը կը նշանակէ։

Վեցորդ. մէկ վեցերրորդի հեռաւորութիւն մը։

Եւ վերջապէս Հակադրեալ. որ կը պատահի, երբ երկու աստղեր հասարակածէն հաւասարապէս հեռու երկու զուգահեռական գծերու վրայ կը դտնուին։

Հակադրութիւնն և Հակադրեալ միշտ չարագուշակ են։ — Քառակը նուազ վատթար է, բայց պէտք չէ վստահիլ վրան։ Եռից միշտ բարի է. — Վեցորդը բաւական բարի է, բայց Եռիէն արժէքն ունենալէ շատ հեռու է։

Ի՞նչ ըսելու է այս աղճատաբանութեանս վրայ . . . . ։ Բայց կարծե՛ս թէ աստղաբաշխին դիտութիւնը մինչև հոդ կը հասնի՞, ո՛չ. Աստուածմ իմ, ո՛չ. այդ Զոդիակոսը և իր տասն

երկու տուները՝ որոց վրայ խօսեցանք, դեռ իւր երևակայութիւնը աշխատցնելու նիւթ կուտան իրեն։ Այսպէս, առաջին աստեղատունը՝ կենաց և կենդանի արարածոց կազմակերպութեան քիմիական դործարանն է։ Հոն է, որ կը բաղադրուին սևերն ու ճերմակները, հակայներն ու գաճաճները, խելացի մարդիկն ու տխմարները և այլն. և այլն։

Երկրորդ աստեղատունը յատկացած է ընկերական չահերու, առաջնորդութեանց, ժառանգութեանց, վիճի ներքև ընկնող գործերու, և այլն։

Երրորդը՝ ընտանեկան յարաբերութեանց, եղբարց և քերց, հօրեղբարց կամ մօրեղբարց, հօրաքերց կամ մօրաքերց, հօրեղբօրորդւոց, մօրեղբօրորդւոց և այլն. և այլն։

Չորրորդը՝ կատակց և անչարժ ստացուածոց։

Հինգերորդը՝ հաճոյից, խրախուսութեանց, մանկական զբօսանաց։

Վեցերրորդը՝ սննդի սպասաւորաց և սպասուհեաց, հիւանդոտ և ախտաժէտ անձանց, խելագարաց և այլն. ասի Զոդիակոսին հիւանդանոցն է։

Եօթներրորդը՝ դեղանի կանանց, նախանձութեանց, ոխակալութեանց, յողդողդամտութեանց և երդմնազանցից։

Ութերրորդը՝ մեռելոց, յուղարկաւորութեանց, յաղորդութեանց։

Իններրորդը՝ թափորաց, ուղևորութեանց։

Տաներրորդը՝ պետական աւագութեանց։

Ասի դքսերու, մարդէղներու, կոմսերու, սե-
պուհներու և ասպետներու, ի մի բան՝ թէ արա-
կան և թէ իգական աղնուականութեան համա-
տեղութիւնն է։

Մեռտասաներորդը՝ բազդաւորութեանց, նիւ-
թական հարստութեանց և բարոյական վայելից։

Վերջապէս Երկոտասաներորդը՝ կենաց դը-
ժոխքն է. ուրիշ բան չ'դուժեր, բայց եթէ թըշ-
ուառութիւն, բանտ, դաւաճանութիւն, նա-
խատինք և ձախողութիւն։

Քաղդէացւոց մէջ աստղաբաշխութեան ա-
ռաջին հաստատողն Զրադաշտ եղաւ, կըսէ Սուի-
տաս։ — Ոստանէս անոնցմէ Եգիպտացւոց հա-
ղորդեց զայն. անոնք ալ Յունաց հաղորդեցին։
— Պերոզ՝ որոյ գուշակութիւններն գրեթէ միշտ
կը կատարուէին, քաղդէութիւն կը դործածէը։
— Դիոդորոս Սիկիլիացին և Պորփիւր՝ քաղդէ-
ութեան կը հաւատային. ասոնք կը պատմեն թէ
եգիպտացի քրմերն, աստեղաց՝ մարդկային սե-
րընդոց և կենաց մէջ պատահած որ և է բարի
կամ վատ դիպուածոց վրայ ըրած աղդեցու-
թիւնը գտած էին. ուսկից սա հետևութիւնը կը
հանէին, թէ ամեն ինչ՝ որ մեզ մեր կամքէն կամ
որոշմանէն կախեալ կը համարիմք, բոլորն ալ
աստեղաց չարժմանցը հետ կապուած են, և թէ
հո՛ն է մեր ճակատագիրը։

Լիգուրիոս և Քանոփոն՝ աստղերը չքննած
բնաւ բանի մը ձեռք չէին զարներ։ Ասոնց առա-
ջինը խոտիւ արգիլեց Սպարտացւոց, որ Լուսնին

վերջին քառորդին մէջ ճակատամարտ չ'տան։

Օդոատոս՝ միտալ մը կոխել տուաւ ի պատիւ
Ս. յակեղիւր կենդանակերպին, որոյ աղդեցու-
թեանը ներքև ծնած էր ինքն։

Պտղոմէոս աստղաբաշխը և Պօղոս Ա.ղէք-
սանդրացին՝ քաղդէութիւնը իրը մեծամեծ ար-
դիւնքներ յառաջ բերող հանք մը նկատելու
տկարամտութիւնն ունեցան։ Բայց ամենէն ա-
ւելի Ս.րաբացւոց մէջ աստղագիտական տեսիլ-
ներն խիստ մեծ պատիւ տուած։ Ս.յս ազդին
պատմութիւնը լի է անթիւ անհամար իրողու-
թեամբք, որք հրաշալւոյն համար նորա ունեցած
դաղտնի յօժարամտութեանը ապացոյցն են։

Եւրոպիոյ մէջ ալ աստղագիտութիւնը իսկա-
տուն մեկնիչներ ունեցաւ. ասոնցմէ մի քանին
միայն յիշեմք. Ռէճիո-Մոնդանոս. — Պոնաթոս
որ Ֆորլի. — Ֆուլա. — Նիկողոս Ջլամէլ. —
Մեծն Ալբերդոս. — Ս.պրիբա. — Մելանք-
թոն և Գամերարիոս՝ Գերմանիոյ երկու երե-
ւելի անձինքներն. — Կարդան. — Կաւրիբոս.
— Ժանքթինոս. — Թիքո-Պրահէի բարեկամը՝
Բաճան. — Միքայէլ-Մայէր. — Վան Հելմոն.
— Պէ՛քը. — Մոնլիւսոնցի Անդուան Մէղան.
— Մոնդոպանցի Յովհաննէս Կարվինոս. — Գի-
տունն Ս.՛րկոլի. — Յակոբ Բոնս. — Հայր Քիր-
շէր և այլք։ Ասոնցմէ շատերն անկեղծութեամբ
քաղդէութեան պարապեցան, և այս երևակայա-
կան արհեստիս վրայ հատո՛րներով դրքեր շա-
րադրեցին։ Ս.յս պատմական իրողութեանցս

առջև ի՞նչ ըսելու է, ի՞նչ մտածելու է։ Ո՛չ այլ ի՛նչ, բայց եթէ սա, թէ դիտունք՝ ինչպէս նաև ազէտք՝ իրենց դարուն նախապաշարմանցը կամայ ակամայ կը մասնակցին։

Միջին դարուն մէջ աստղագիտութիւնը պարզապէս արհեստ մը եղաւ, բաւին ճիշդ իմաստովը։ Երկու սեռէ խել մը անձինք՝ ընդհանրապէս ստորին կարգէ՝ սկսան ապագայն պատմել ամեն անոնց, որ իրենց առակ տալ կուզէին։ Ա.յն ժամանակի ընկերութիւնը ուրիշ բան չէր ներկայացներ, բայց եթէ կեղծաւորութիւն և խաբեբայութիւն մէկ կողմէն, տգիտութիւն, գիւրահաւանութիւն, աւելորդապաշտութիւն միւս կողմէն։ Երբ մարդ այդ ախտը դարուն տարեդիրներն աչքէ անցնէ, բազմաթիւ կանխասացութիւններ կը տեսնէ, որք բոլ հաւատացելոյ՝ ճիշդ կատարուեր են, կամ անպատճառ պիտի կատարուին։ Ա.ոնցմէ՝ Գաղղիոյ վերաբերողներէն մի քանին դնեմք հոս, որք արդարև իրականացել են։

Վիեննայի Ա.րքեպիսկոպոսը պատարագէն ելնելուն, Գաղղիոյ Լուի ԺԱ. թագաւորին լուր տուաւ, որ իւր մահացու թշնամին՝ Կարոլոս Յանդուսն, նոյն վայրկենին Ջուիցերացւոց ձեռաք սպանուել էր Կրանսոնի մէջ։ Ըսածը ճիշդ էր։

Գաղղիոյ Հանրի Գ. թագաւորին յառաջուց լսաց տուին, որ դաւաճանութեամբ պիտի սպանուէր. չառղուշութիւն ըրաւ, օգուտ չըրաւ։

ոճրագործին մէկը մահացու հարուածը տուաւ իրեն։

Վիլլանտրի անուն դրանիկ մը, և Ռիչաքազա անուն աստղագէտ մաթեմաթիքոսը նախ դուշակել էին այն երկու սպանութեան փորձը՝ որ Հանրի Դ.ի վրայ պիտի ըլլար։ Դժբաղդաբար Պէարնէզին չուզից հաւատք ընծայել այս ազդարարութեանս, և անօրէն Ռավայեաքի դաշոյնը Գաղղիան իր լաւագոյն թագաւորէն զրկեց։

Կատարինէ Մէտիչի թագուհւոյն ծառայութեանն յատկացած աստղագէտներէն մին՝ առաջուց դուշակեց Պիրոնի Դ.քսին, որ Էբէրնէի պաշարման առեն պիտի սպանուէր։ Իրաւցնէ ալ ռումբ մը նախասացութիւնը իրագործ։

Դ.քսին եղբայրը մի և նոյն աստղագիտին խորհուրդ հարցնել ուզելով, հետևեալ պատասխանը առաջ. — «Տապալի տակ պիտի մեռնիս»։

— «Ի՞նչ ըսել կուզես. հարցուց իրեն Պիրոն.

— «Տէ՛ր իմ. եթէ աւելի ճիշդը կուզես ըսեմ, պիտի գլխատուիս»։

Պիրոն զայս լսելուն՝ այնքան սաստիկ զայրացաւ, որ ձեռքի գաւազանը քաշելով խեղճ աստղագիտին վրայ վազեց, և այնպիսի ծեծ մը քաշեց անոր, որ մարդը գետինը տապալեցաւ. բայց այս բռնութիւնս արդեօք չ'եղաւ որ վեց ամսէն եաքը իր դուշակութիւնը չկատարուի։

Ղուկա Կաւրիքոս՝ Յովհաննէս Պանդիվոկիւսի կանխաւ իմաց տուաւ, որ Պօլոնիայի վեհապետութիւնը ձեռքէն պիտի երթար. — Նոյն-

պէս ծանոյց, որ Հանրի Բ. թագաւորը աչքին մէջ եղած վերքէ մը պիտի մեռնէր։

Նկնահատակ սպասաւոր մը՝ որ խիստ ճարտար քաւգեայ էր, երիտասարդ Ֆրանսուա Հանրին որ Մոնմորանսիին՝ որ յետոյ Լուքսէմպուրգի մարշալախտ ըսուեցաւ, գուշակեց՝ որ իւր պինդ ոտքերուն քաջագործութիւնքն՝ մեծ իշխանի մը ախոյեանը պիտի ընէին պինդը. թէ տարօրինակ բաղդիւ մը ամբաստանական գատի մը մէջ իր անունն ալ պիտի խառնուէր, և բանտ պիտի երթար. բայց հուսկ ապա՝ իր հօրմէն աւելի բաղդաւոր դանուելով՝ որն որ գլխատուելով մեռած էր, այն ձախող կացութենէն ինքզինքը պիտի ազատէր, և իւր տարած չարաչարութեանց փառքն՝ բարձր համբաւոյն պիտի պատասխաններ։

Յետագայ դէպքոյն մէջ ջարդն և հրդեհմահուներէ, և հռչակաւոր Նօսդրադամոսի Հրեշաբնեռն վրայ պիտի խօսիմք, որոյ ահագին համբաւն երեք դարէ անյեղլով՝ մինչև մեզ հասած է, առանց ժողովրդեան իւր վրայ ունեցած հմարուէն բնաւ մաս մը կորուսանելու։

ԳԼՈՒԽ Ը.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՆՕՍԴՐԱԴԱՄՈՍ ԱՍՏՂԱԳԻՏ ԵՒ ԻՒՐ ՀԱՐԻՒՐԱՆՆԵՐՆ

Բ-ղ-ցոյց էրեան. — Մ-րէ-բէ-լ էրեան.

Միքայէլ Նօթր-Տամ՝ անուանեալն Նօսդրադամոս, ծնաւ 1503 ի Դեկ. 14 ին Բրովանսայի Սէն-Բըմի գիւղին մէջ։ Իւր Հայրը նօտար էր, իսկ Պապը բժիշկ։ Նօսդրադամոս պատանին՝ բաւական յաջողութեամբ ուսմունքն աւարտեց Աւենեւոնի մէջ. յետոյ Մոնբէլիէ գնաց բժշկութիւն ուսանելու, և հոն տօքդորութեան գլխարկն ստացաւ։

Նօսդրադամոս միտքը դրել էր, որ Հիբոկրատայ հաւատարմի, և Գալիէնը գերազանցէ։ Չկրնալով իւր այս յոյսը իրականացնել, յանկարծ բժշկութիւնը թողուց, և աստղագիտութեան պարապեցաւ։

1553 ին իւր առաջին գրուածքներն հրատարակեց Հրեշաբեռ անուամբ, որք չափազանց մեծ ընդունելութիւն գտան. Հանրի Բ. Թագաւորը այս գրուածքս կարդալով. հետևնակը Բարիզ կանչել տուաւ, և առաւ պարգևօք վարձատրեց զայն։

Ս.յսքան պատիւները տեսնելուն վրայ հպարտացած Թերալարժ դուշակը՝ ժողովրդոց, արքայից և աշխարհի մեծամեծաց աչքին ապագային քօղն պատռելու յանդուգն դաղափարը յղացաւ։ Նօսդրատամոս Սալոն անուն փոքրիկ աւանը վերադառնալուն՝ ուր տեղ հաստատել էր իւր բնակութիւնը, գործի սկսաւ. հոն իւր մարգարէական ոգին Սավոյայի դքսին և անոր կնոջը Մարգարիտէ Ֆրանսացւոյն առջև փայլեցնելու առիթն ունեցաւ։ Ս.յս երկու հոյակապ անձինքս նկել էին իրեն հարցնելու, թէ արդեօք դքսուհւոյն բերելիք զաւակը (վան ղի յղի էր) մանչ պիտի ըլլար թէ աղջիկ։ Նօսդրատամոս՝ ըղձից մէջ սովորական եղած դռեհիկ հարցումներէն և նախանքներէն յետոյ որոշից, որ մանչ պիտի ըլլար այն, և այդ տղայն յարից, իւր դարուն առաջին զօրավարներէն մին պիտի ըլլայ։ Իրաւցընէ ալ դուշակութիւնը կատարուեցաւ. այն տղայն վերջը դարձաւ եղաւ Կարոլոս-Էմմանուէլ՝ անուանեալն Մեծ։

Ս.յն լինն տարուան միջոցին՝ որ իւր երկասիրութիւնը յօրինելու գործածեց, Սալոնի մարգարէն իւր ապագանդն բանեցնելու բազմաթիւ առիթներ ունեցաւ, և դեշ աղեկ գործը յարմարցուց։ Բարեբաղդ եղաւ ըստ օրինակի պատգամաց. այսինքն իւր կանխատեսութիւններէն ճիշդ չէնողներն կամ չկատարուածներն մոռցուեցան, մինչդեռ որոնք որ իրականացան՝ բովանդակ Գաղղիոյ մէջ հռչակ հանեցին։ Նօսդ-

րատամոս իւր դուշակութիւններն ոչ այնչափ աստղերուն, որչափ անհատից դիմաց գծագրութեանը համեմատ կը կանոնաւորէր։ Ներքաղնին և կօրովի մոտաց տէր՝ չատ անգամ իւր գիտական զննութեանց առարկայ եղող անձանց դրուագը ճշմարիտ կ'ելնէր։ Մինչև այդ տեղ խիստ լաւ, իւր ախտաբական կարողութիւնը մաքի դէմ չէր ելներ։ Բայց խիստ մեծ պակասութեան մէջ դանուեցաւ իւր Հոէ-բէ-ինեն հրատարակելով. տեղ դրուած մը՝ ոճը խուժդուժ, իմաստը խեցբեկ, ընդհատեալ և բոլորովին անհասկանալի։ Սոյդը խօսելով այս մասին խեղաթիւրութիւն ըրաւ. վան ղի եթէ պարզ և յստակ ոճով մը դրած ըլլար, եթէ ասացուածոց իմաստը դիւրըմբռնելի ըլլար, իւր մարգարէութեանց չատերն սուտ պիտի ելնէին. մինչդեռ ընթերցողայ երկդիմի և երեքդիմի իմաստիս հանելուկներ ներկայացնելովն՝ բնական էր որ, ոմանց համար բոլորովին անհասկնալի պիտի մնար, այլոց ալ հետաքրքրութիւնը չարժէր։ Եւ իրօք այսպէս ալ եղաւ. մեծագոյն մասը Նօսդրատամոսի գիրքը ծաղր ըրաւ. ոմանք ալ ընդհակառակն սկսան մաքերնին տանջել, որ իւրաքանչիւր հարիւրեակէն մէկ մէկ իմաստ հնարեն, և անոր՝ կատարուած իրողութեան մը կամ դէպքի մը հետ զուգադիպած ըլլալը հաստատեն։

Հաւատալո՞ւ բան է որ, ուսեալ անձինք Սալոնի դուշակին գիրքը մեկնելու համար ժամանակներն վատնել սպառեալ են։ Ս.յս մտքին կը

յիշուին Պելլը բժիշկը, Կինո ասպետը, Պուի փաստաբանը, Շավինեի քարտուղէրը եւայլն։ Աստնք իրենց երեակայութեամբը Նօսդրատամոսի մարգարէական կարողութիւն ունեցած ըլլալուն վրայ համոզուած էին։ Պելլը բժիշկը՝ Հրէ-բէկոյ ամենէն անուանի մեկնիչներէն մին, բաւական խեղճուկ դրուածք մը երկնած է, յորում կըսէ թէ, իր նպատակն է դարուն անհատութիւնն նկուն ընել, և ամենուն աչքն ճշմարիտ լուսոյն բանալ. ըստ այմ՝ 9ըդ հարիւրեակին 4ըդ քառատողին հետեւեալ մեկնութիւնը կուտայ

Մասը . . . . ամուսին պիտի խոյրապատակ
Վերադարձ . . . . և պիտի անցնին կղմնտրին վրայէն
Հինգ հարիւրով մտանելուն պիտի չքաւորի
Նարբոն և Սոս Քանթոյով ունինք իւղ։

Ա.յս քառատողը՝ ըստ ասից Պելլոյի, մարգարէական հանճարոյ ամենէն դիւրաղանց ծնունդն է եղեր։ Տե՛ս այս մասին իւր դրուածքը։

Պուի փաստաբանը՝ որ բնապրեցոն Հրէ-բէկոյ վրայ դրեց, նոյնպէս հրէ-բէկոյ վրայ սքանչացողներէն մին եղաւ։ Սա՝ Պելլոի ոճովը և բայարած կերպիւը չ'բացատրեր զանոնք, և կը պնդէ թէ իւր տուած մեկնութիւնն է միակ ճշմարիտը։ Օրինակի համար. Պուի՝ 9ըդ հարիւրեակին հետեւեալ քառատողին մէջ, Լուի ԺԴ. ի ձերբակալութիւնը, բանտարկութիւնն ու ազատնութիւնը տեսնել կը կարծէ.

Գիշերանց պիտի գայ Ռէյնի անտառէն
Երկու մասեր . . . . . ճերմակ քարը.
Սև աբեղայն գորշագոյն հագուստ վարձելի առջև
Ընտրեալ Գաբ, կը պատճառէ վոթորիկ, կրակ, արիւն, կարուտ։

«Ա.յսքան գովելի չանգերէ եռքը՝ կըսէ Սալկ՝ իւր Յաղթ- Նախապաշարմանց անուն աշխատասիրութեանը մէջ, այսքան լուսաւոր մեկնաբանութիւններէ եռքը՝ ամօթ է որ դեռ ևս հրէ-բէկներուն և անոնց մեկնչացը վրայ ծիծաղելու, եւ Նօսդրատամոսի նախատեցութիւնքն անիմանալի առեղծուածներու և անդաղափար և անիմաստ բառերու՝ անձև, անճոռնի և ծաղրելի կոյտ մը համարելու չափ քարացեալ մտքեր և չարամէտ հոգիներ դանուին։ Ինձ այնպէս կը թուի, որ եթէ մարգարէ լինելու բաղդն ունենայի, աւելի լաւ պիտի համարէի, որ յօտակ խօսիմ, և երկնից տուած շնորհքը իմ նմանեացս պիտոյիցը գործածեմ։»

Ամենէն աւելի Բրովանսացի աստղագիտին բաղդը չինողը՝ իւր արբանեկաց եռանդն, և մեկ քանի կրակոտ աշակերտներուն խարեբայութիւնն եղած է. որք կանխագուշակութիւններ դարբներ են ամեն բան ըլլալէ եռքը, և զանոնք իւր գործոցը մէջ են անցուցել. դէպքը պատահելէն եռքը դուշակելը շատ դիւրին բան է։ Միւս կողմանէ ալ՝ անկարելի է, որ ցնորեալ երեակայութեան մը տուն տուածը գրի առ-

նողերազատեա մը՝ երբեմն ալ ճշդին չ'պատահի։ Ս. յսպէս, երբ Մաթէոս Լաենսպերկ իւր Օրացոյցին մէջ իւրաքանչիւր աւուր քով դեղնցիկ օդ կամ անձրև կը դնէ, անկարելի է որ տարւոյն մէջ չ'պատահին այնպիսի օրերը, որ իւր դուշակութիւնքն չ'կատարուին։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

Ս.պագայն 'ի վեր հանող դրքերն մինակ Նոպտոտոն հաբէ-բէոնները չ'են. դեռ ասոնցմէ 'ի զատ մարդաբէական և կախարդական ուրիշ բազմաթիւ դրքեր ալ կը գտնուին, որոց մէջ աշխարհի ապագայ բաղդն նշանակուած է։ Տգիտութեան դարերու մէջ յօրինուած այս դրքերուս մէջէն կը յիշուին Սիբիլլեան Մոթեանք, որոց վրայ արդէն խօսեցաք, և հրաշալի դիրքը Լէոյ Մէրոլիւս, որոյ հեղինակ կը կարծուի Սուրբն Աֆսեր Ս. ըլըլի արքեպիսկոպոսը. և որոյ մէջ դուշակուած է 1789 ի հռչակաւոր արկածը՝ 1809 թուականին համար։ Հրաշալեաց դէպն հեղինակը՝ Բրուտոսի որդւոց աղնուապետութեան և Եկեղեցւոյ դէմ յուզնելիք կատաղութիւններն կը նախատեսէր. բայց կաւելցնէր, թէ այս դարձեալ ալող բոլորովին քնայինչ ըլլալն 1810 ին տեղի պիտի ունենար։ Սրբոյն Աֆսերի մարգարէութիւնն յայտնի համարձակ սուտ ելաւ. վա-

սըն դի, Բրուտոսի որդիքն քսան և հինգ տարի չարունակ զաչխարհն համայն իրենց անուան համբաւեցուցին, և Գաղղիացի անունը ամեն ազգաստեր ժողովրդոց իսկ ահարկու ըրին։ Գալով Մարգարէութեան, այդ բանը ընելու համար մարգարէ ըլլալու հարկ չ'կար. վասն զի, քաջը ժամ մը յառաջ թոթռուելու ձկտող ժողովրդեան վիճակը, և ամբոխը յուզող ազատութեան փափաքներն դիտելով, դիւրին էր թագաւորութեան կազմակերպութեանը մէջ փոփոխութիւն մը դուշակել, կանխատեսել. և ահա զայս ըրաւ Ս. ըլըլի Ս. ըքնպիսկոպոսը իւր Հռաւէտ էրէն մէջ։

Ուրիշ դիրք մ'ալ՝ որ չատ հաղուագիւտ եղած է այժմ, և մէկ քանի թանգարանաց մէջ միայն կը գտնուի, Անէէրէա (մատենիկ) բսուածն է, հիւանդ ուղեղէ մը ելած տեսակ մը կախարդասար դիրք։ Պնդողներ եղան, թէ Ոնորիոս անուն պապի մը գրածն ըլլայ այն։ Լէոն Գ. Պապը՝ կըսեն, այս դիրքը իբր խոստ ծանրագին պարգև մը Մեծին Կարոլոսի ընծայ ղրկեց, նորա իրեն մատուցած ծառայութեանցը վարձատրութիւն։

Լ'Հա Պապէն Մոթէնկը (Enchyridion Leonis Pape) անարատ մադաղաթի վրայ գրուած է, և առեղծուածական սաղմոսներ և բանախօսութիւններ կը պարունակէ։ Խաչերը, կրկնախաչերը, և կախարդական նշանները լեցուն են իւրաքանչիւր երեսին մէջ. պարագայ մը՝ որ տպիտաց ե-

բնակայութիւնը վրայ տպաւորութիւն ընելու մեծապէս կը նպաստէ : Իմաստը միշտ գժուարհասկընալի է , և Սիբիլլական պատասխաններուն պէս բազմադիմի եղանակաւ կրնայ մեկնուիլ : Ասոնց վրայօք լաւ խելամուտ եղողներն կը պարծին, թէ Անէէիոնը ծածկեալ դիտութեանց բանալին է , և թէ ով որ զայն ձեռք անցնէ , ո՛չ միայն զապագայն կրնայ գիտնալ , հապա ամեն ոգիներուն ալ կրնայ նաև հրամայել :

Ա.յս դոյզն ասացուածէս կը հասկցուի , որ մարդ չափազանց պարզամիտ կամ հրաշալոյն սիրովն մղորեալ ըլլալու է , որ Անէէիոնի հեղինակին այլանդակ զառանցութեանցը հաւատք ընծայէ : Նոր ժամանակի Սիբիլլայք և մարգարէուհիք և քարտէսահմայք՝ իրենց շահուն համար մեծամեծ գովեստիւք կը խօսին սոյն դըրքին վրայ , ինչպէս որ հետևեալ տողերն կը վկայեն :

«Ա.յս գրուածքս այնպիսի արժանիք մը ունի կըսեր օրիորդ Լ.ընորման մեծանուն քարտէսահմայն , որ քանաւ չեմ զարմանար թէ մեծ իշխան մը իւր ծանրութեանը չափ ոսկի տալով գնել ուզած ըլլայ զայն : Ինձ գալով, կը խոստովանիմ, որ ամբողջ տասնևինն տարի զայն ձեռք ձգելու վախաք տածեցի , և դեռ երկու տարի է որ իմ ոգիս Աբրիել այս միանգամայն զարմանալի և հրաշալի դիրքս պարգև տուաւ ինձ :

Քարտան, Ադրիբբա , Մեծն Ալբերդ և այլք գաղտնի դիտութեանց վրայ զառանցութեամբ

և կրնամբ ըսել յիմարութեամբք լցած դրքեր յօրինած են : Ցուլիս ինն հատոր դիրք չարագրած է կախարդութեան վրայ , ատտանայական պատկերներով և երբայական նշանագրերով խճողեալ : Ջեմք յիշեր հոս Սղոմոնի բանալիները , Աստղագիտական ցանկ , Աւանդլահրաշ աշխարհի հատիկը , Երինէց և գժնոց բանալին , ատտանայական երջանիկացուցմունք կամ Ջեռոփէր Կախարդաց և ուրիշ անճառնի կախարդական դրքեր , (*) յորս համախմբած են այն ամեն այլանդակ և հրեշային բան , ինչ որ դանդաղող երևակայութիւնը և միտքական խելայեղութիւնն կրնան երևնել :

Ջեմք կրնար այս դրուխս վերջացնել առանց իմացնելու ընթերցողաց , որ հնոց մէջ Գալդէի դրքերն շատ աւելի բազմաթիւ էին , քան թէ նորոց մէջ : Վիտրուվ՝ որ Ցուլիոս Կեսարու օրով Հռովմայ մէջ կ'ապրէր , կը պատմէ թէ , Տէմոքրիդէս փիլիսոփայն՝ Քհռոքմի՛թա (Ջեռակերտ) անունով դրուածքի մը մէջ իւր ժամանակին և նախընթաց դարուց մոդութիւն գործելու վերաբերեալ գաղտնիքներն հաւաքեր էր : Կըսեն թէ , այս դրուածին շարադրելու առեն է եղել , որ յիշեալ իմաստասէրը անսպառելի ծիծաղի մը բռնուել է , որ իւր մահուան առեն միայն դադրեցաւ : Եթէ Ա.ղէքսանդրիոյ դրատան հրդեհը

(*) Վ.ից հազարեակն ալ ասոնց կարգն է .

Ծ . Թ .

կամ մանաւանդ գրայրեաց կրօնաւորներն յիշեալ երկասիրութիւնը ջնջած չըլլային, շատ հաւանական է, որ եթէ ոչ հեղինակին չափ երկար տաներ, գէթ անոր չափ սասալիկ կերպիւ լինդալու նիւթ պիտի մատակարէր նորոյ։

ԳԼՈՒԽ Թ.

ԸՆԹԱՑՔ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՒ ԱՆԿՄԱՆ ԱՍՏՂԱԴԻՏՈՒԹԵԱՆ

Տառնհինգերորդ դարին վրայ մեր օրերը. — Մէյ մէկ նոր Աստղաբաշխէ և Մարգարէ վերյ։

Անտիապաշան Կատարինէ Մէտիչի ամեն երկրի աստղագէտներն առինքն հրաւիրեց, և Գաղղիոյ արքունիքն անոնցմով լցուց. թագուհին ինքը այս նորելուկ սովորութեանս հեղինակ եղած ըլլալուն, աղնուականաց մէջ վայելուչ բան մը անպուճեայ աստղագէտ մը ունենալը, ինչպէս որ առքերն ալ ամեն մարդ իւր աբբան ունեցաւ։ Իւրաքանչիւր մեծատուն տիկին դոնէ մէկ աստղագէտ մը պիտի ունենար, զոր իւր սեղանը կանուանէր, և ամենափոքր գործոյ մը համար անդամ խորհուրդ պիտի հարցնէր անոր։ Կարդինալներ, և մինչև իսկ Պապեր կը յիշուին, որ աստղագիտութեան խիստ կարևոր և պիտանի բան ըլլալը հաստատելու աշխատեցան։ Պօղոս Գ. պապը Ջիվիթա–Տիւքալէի Եպիսկոպոսութիւնը աստղագիտի մը տուաւ։ Ռիչըլիէօ եւ Մազարէն կարդինալներն քանի քանի անդամ աստղագիտաց դիմեցին, ինչպէս որ վարը պիտի

տեսնեմք : Այս յիմարութիւնն՝ որ երեք հազար տարիէ հետէ ազգերն կը տանջէր , մինչև իննամակաբեթեան օրերը տևեց (*) : Վոլտէռ կը յայտնէ թէ , իւր երիտասարդութեան տեռնը երկու մեծահռչակ աստղագէտներ՝ Պուլէն Վ.իլիէ կոմսը և Բոլոննա Իգալացին դուշակեցին երեն թէ , երեսուն երկու տարեկան հասակին պիտի մեռնէր : « Ա.րդէն երեսուն տարի, կը գրէր ինքը 1757 ին , ղերեզմ սուտ հանելու չարամտութիւնն ունեցայ . խոնարհաբար ներում կը խնդրեմ իրենցմէ : » Երդիճախօսը անկից եռքը տակաւին քսա՛ն տարի ևս սուտ հանեց ղանոնք :

Սպոճիէր շատ տարի չարունակ աստղագիտական դուշակութեամբ փքուն օրացոյց(**) տախտակներ կը հրատարակէր . սա կանխաւ ծանոյց, որ 1514 թուին սոսկալի ողղում մը պիտի կրէր երկրագունդը . վասն զի Ջնոյ կենդանակերպին մէջ բարձրագոյն աստիճանի բազմութիւն մոլորակք միատեղ պիտի գային : Այս դուշակութիւնն՝ որ բոլոր ըներոպա ահ ու դողի մէջ ձգեց, Վ.իրտանկոս Մաթեմատիկոսի ձեռօք դարձեալ երևան ելաւ 1521 ին համար : Ամեն մարդ երկիւղիւ ակնկալեալ կ'սպասէր . . . . բայց ո՛չ միայն գուշակեալ ջրհեղեղը չ'պատահեցաւ ,

(*) Régence . Լսի ԺԸ . ի անչափահասութեան տեռնը :

(**) Ephemerides .

այլ ընդհակառակն վերոյիշեալ տարին մեծ երաշտութեամբ մ'ալ նշանաւոր եղաւ : Եաս զուարճալի բան է նաև Սթիֆել գուշակութիւնն, ո՛ր քարոզիչ էր Վ.իթթեմպերկի մէջ, և որ ծանոյց, թէ աշխարհի վերջը 1533 ին Հոկտեմբերի երեքին առաւօտեան ժամը ութին (Ըստ Եւրոպացւոց) պիտի պատահէր : Այս գուշակութիւնն՝ որոյ չարագրութեան եղանակէն մոլորեալ ուղղի մը արդիւնք ըլլալը կը հասկցուի , Մուդ ֆայն յիմարութեանց պատմութեանը մէջ կը գտնուի :

Մեր օրերը աշխարհի վերջը դարձեալ դուշակուեցաւ 1836 ին համար . բայց աշխարհս կայուն կը մնայ այնքան անխռով խաղաղութեամբ, որքան յառաջն(*). Ա՛վ աստղագիտութիւն. քնութիւնն ամեն վայրկեան քու ըսածներդ բացատկապէս կը ջրէ , և քու սուտերդ այսօրուան օրս լուսաւորեալ ժողովրդոց ծիծաղը կը շարժեն :

Վ.երջատան և հօթեւտասաներրորդ դարերուն մէջ ևս աստղագիտութիւնը նմանապէս յարգի էր . իրենց աշխատութեամբն դեղեցիկ համբաւ մը ձեռք ձգող աստղաբաշխք անդամ չ'վախցան և չ'ամչցան մանաւանդ դանուելու այն ողբալի նախապաշարման : Անոնց որներն՝ թէ այր եթէ կին , բայց մանաւանդ այս վերջիններս՝ իբր զուարճութիւն մը գրօսանք մը քաւդէից խորհուրդ հարցնել կերթային . այդ ժամանակուան

(*) Անցեալ տարուան համար ծանուցուածն ալ տուիր :

Ծ . Թ .

նորելուկն էր, որ ամեն մարդ կ'երդար իւր ծնընդաբաշխը հանել կուտար։ Ռիշըլիէօ՝ իր կենացը եաքի օրերը ծածկապէս աստղագէտ մը բերել տալով, իւր հիւանդութեան միջոցին խորհուրդ կը հարցնէր անոր։ Մազարէն Կարդինալն ալ՝ Ժան-Պաթիսթ-Մօրէն անուն նենգաւոր մարդոյ մը՝ իւր արուեստին համար ոսճիկ կապելու ակարութիւնն ունեցաւ. այս մարդը այնպիսի անամօթ լրբութեամբ մը աստղաբաշխութիւն կընէր, որ նմանը չ'կայ։ Քանի քանի անգամ այս շաբլաթանը անուանի Կասանոսի մահը գուժեց, բայց նա կարծես թէ այս նոր մարգարէից գուշակութիւնքն սուտ հանելու համար ամեն անգամ իւր յաճախագէպ հիւանդութիւնները կ'առողջանար։ Յովհ. Մկրտիչ՝ Մօրէն Լուսի ԺԴ.ի մահն ալ կանխագուշակեց, բայց իւր գուշակած աղիտաբեր ժամուն՝ թագաւորը ամեն առենէ աւելի քաջառողջ վիճակի մէջ գտնուեցաւ։

Ուրիշ աստղագէտ մարգարէ մ'ալ՝ Ս.վընար անուն՝ երկնային նշանաց նայելով աւետեց Հռիբէից, որ ճշմարիտ Մեսիան 1644 ին ինն երրորդ ամայ յայտնուիլ պիտի գար. և այս բանիս յայտնի ապացոյցը այն էր, որ Եբրայեցը, Լուսնթագը Ս.բէօին և Զուինեըն այն օրը իրարու պիտի պատահէին։ Համօրէն հրեայ ժողովուրդն Ս.վընարի մարգարէութեան ստոյգ ըլլալուն համոզուելով պատուհանները բոլոր բաց թողուց, որ այնքան երկար առենէ՝ ի վեր ակնկալեալ

աստուծոյ առաքեալն ընդունի։ Բայց առաքեալը չեկաւ. և խեղճ Իսրայելացիք ոտիպատեցան ապականեզրկերն պոռնկով վերստին մեծ օրուանը սպասել։

Ս.ըէն տեսանք որ Ս.ըլըի Ս.ըքեպիսկոպոսը կեսէր՝ շատ առեն յառաջ ընկերական սասանութիւն մը դուշակել էր իւր Հռոշտ էրէն մէջ։ Իրեն ժամանակակից բաղում աստղագէտք ևս իւր կանխատեսութիւնն հաստատեցին։ —1736ին Պօրկաս անուն ճիզվիթ մը՝ հոդեշունչ անձի մը չարժման ձևերովն ու ձայնիւը այս բնաբանիս վրայ քարոզ խօսեցաւ Բարիզու Մայր եկեղեցւոյն մէջ, յորում՝ դարուն խմաստասիրայ դէմ կը չարձակէր ըսելով թէ, կղերին դէմ գործադրուելիք անլուր եղեռանց սկզբնապատճառ պիտի ըլլային։ — Նոյնպէս Սէնէզ եպիսկոպոսը Լուի Ժ.Ե.ին գուշակեց, որ ընկերական կարգին մէջ վերանորոգութիւն մը տեղի պիտի ունենար։

Բայց այն անձկալից ժամանակները աղէտք մը պատահելիքը գուշակելու համար մարգարէ ըլլալու հարկ չկար. ամեն մարդ կը նախատեսէր զայդ։ Ինչ և իցէ. Դարուիոյ մեծ յեղափոխութեան նկատմամբ եղած ամեն մարգարէութիւնները՝ Բաղդինը անժխտելի կերպիւ ամենէն աւելի ճշդիւնն, ու մանրամասն պարագայիքն ամենէն աւելի տարօրինակն է։ Լա Հարբ ականատեսն ալ՝ որ զայդ աւանդած է, ամբաստանողներ կան իրը թէ ինքը զայն խմբագրած ըլլայ դէպքերն պատահելէ առև։ Ամեն մարդ

դիտէ, որ Լա Հարբ երկչոտ բնաւորութեան տէր, վարանամիտ, ապիկար և տղայամիտ մէկն էր. այնպէս որ՝ բաւական էր ազդել իրեն, որպէս զի ուղածդ կատարէ։ Կարդա՛ յիշեալ մարդարէութիւնը Գաղտնի Մբնիւանուին դրքին մէջ, ուր այնպիսի պարագայիւք պատմուած է, որք մարդս ափշութեամբ կը պաշարեն։

1757 ին Տիկին Բոմբատուր՝ քարտէզահմայ աստղագէտ մը բերել տուաւ դղեակը։ Լուի ԺԵ. անոր իւր թագաւորութեան վրայօք խնդիր մը հարցուփորձ ընելէն ետքը, սա պատասխանը ընդունեց անկից։

«Տէր արքայ. քու թագաւորութեանդ ժամանակը անուանի է դաղափարաց չարժման և յամենայնի յառաջադիմութեան մասին. բայց յաջորդիդ թագաւորութիւնը մեծամեծ աղետներով պիտի ընդմիջի, որոց բան մը չպիտի կրնայ առաջքն առնուլ։»

Ա.րդարև Լուի ԺԶ.ի թագաւորութիւնը դէպ ուի սաստիկ հանեց այն սոսկալի կանխատեսութիւնը. կրսեն թէ այս իշխանս կիսութիւն ընդոդ անծանօթ մարդոյ մը միջոցաւ իմացաւ այն դառնաղետ ապագայն, որ վերապահուած էր իրեն։

Աստղագիտութեան տարեգրոց մէջ յիշատակուած այս իրողութիւնքս, և ուրիշ այսպէս աղարաւորներ, ստոյգ են թէ սուտ։ Այս հարցմանս առ հարկի տրուելիք պատասխանն տարակոյս է։ Ապաքէն ինչ որ ալ ըսեն այս բանիս համատարած, իրենց առաւել կամ նուազ հաւանեցուցիչ առարկութեանց հակառակ՝ մարդոյս վրայ ըղձական կարողութիւն ըսուած բանը չկայ։ Անդամալնութիւնն ու կազմակերպութիւնը կուսուցանեն մեզ թէ ուղեղին մէջ հեռատեսութեան գործարան մը կայ. բայց այս գործարանս կամ կարողութիւնս մինակ չնիոձնոչ իրաց վրայ կրնայ գործածուիլ. իսկ ոչնոչին վրայ իւր ազդեցութիւնն բոլորովին ոչինչ է։

Ապագային ճշմարիտ ծանօթութիւնը՝ անցեալն ծանօթութիւնն ունենալու ու ներկային վրայ ուշադիր դիտողութիւն ընելու վրայ կը կայանայ։ Ան որ այս կրկին միջոցներս ունի, կրնայ մինչև որոշակի կէտ մը մարդկանց և իրաց մէջ ըլլալիք փոփոխութիւններն առաջուց դուշակել։ (Տ'Էս Գաղտնիք քնոյ և մագնիսական-նութեան անուն դրքը, յորում այս խնդրոյս վրայ՝ իւր լուծմանն համար հարկ եղածին չափ ընդարձակօրէն խօսուած է։)

Գիտուն Սբինոզա՝ անշուշտ իւր ժամանակին ընդունուած գաղափարաց հաճոյանալու համար՝ կընդունէր թէ մարդս իւր կազմութենէն մարդարէանալու տրամադիր է. բայց այս մարդարէութիւնքս կը զանազանին ըստ իւրաքանչիւր խառնուածոց. այսինքն՝ մարդկային կամ մեքամաղձոտ մարդը տխուր բաներ կրնայ միայն դուշակել. իսկ արիւնային մարդը՝ թեթև, զուարճալի բաներ, երջանիկ և խաղաղ օրեր։ Սբինոզայի այս կարծիքը խիստ ճշմարիտ է իւրաքանչ-

իւր խառնուածոյ յօժարութեանցը մասին. բայց բնաւ չ'ապացուցաներ որ ըղձական կարողութիւնն մարդկային բարոյական կարողութեանց մին եղած ըլլայ:

Մեծանուն Պաքոն կըսէր թէ ըղձութիւնն տարապայման ղմայլմանց, երազոց և մոհուան մեծցած առեններն տեղի կունենայ, եթէ մարդոյ մը առջի եղած առենը հաղիւ հաղ կը պատահի: Ա.յս պատճառաւ էր ծոմապահութիւնքն, խստամբերութիւնքն, միայնութիւնն և բոլոր ինչ որ մարդոյն բնական զօրութիւնքն կը սակաւացնէ, յօդուտ բարոյականին ըղձական կարողութիւնն կը զարգացնեն:

Ցանեւօթեբորդ դարուն աւարան նախապատրաստ կուտար այն վերանորոգութիւնքն՝ որք առանութերբորդին մէջ պիտի գործադրուէին: Ա.յս իմաստասիրական դարս ժողովրդոց մեծադոյն մասն լուսաւորելով, ընդհանուր դիւրահաւանութիւնն չնչեց և աւելորդապաշտութենանց հիդրան չախչախեց: Երկար առեն հաւատացել էին մարդիկ վարդապետութենց. այժմ ուղղին բանաւարութիւնը՝ ի կիր առնուլ. ուղղին ամեն առարկուսական երևցած բաներն առնոր քննելն անցնել, և ահա ճշմարտութիւնը եւս անկից դուրս՝ պարզ և անխառն. և ահա հնօրեայ հաւատալիքք և նախապաշարմունք իրենց անսահ պաճուճանքներովն միասին խափան չնչուեցան անհետ եղան անոր մէջ:

Անցեալ դարուն վերջերն ծագու նիւթ կը-

նէին աստղագէտներն, որոնք արդէն խիստ հաղուագիւտ եղած էին. իսկ մեր դարուն սկիզբն բոլորովին մեռցուած էին անոնք: Գազիլէա ոչ յայլ ինչ կը խորհեր այն առեն, բայց միայն այն փառաւոր վրայ՝ որով իւր ամենուրեք յաղթական ղէնքերն կը շրշյոլէին: Ա.յս յիշատակաց արժանի դարագլխոյս մէջ էր որ բազմահմուտն Լապլաս հետևեալ առղերն կը դրեր իւր աստղաբաշխութեան դրքին մէջ:

«Թերևս պարտէի դուրս ձգել ամեն ինչ՝ որ աստեղագիտութեան կը վերաբերի, և մինչև այս սին վարդապետութենս անունն խոկ. բայց և այնպէս ասի պատեհ առիթ մ'է ռամկին տգիտութենն ու կարողութենը վրայ ողբալու, որ այնքան երկար առեն թոյլ տուել է որ անհեթեթ կանխադուշակութեամբ խաբեն զինքը. և դիտել տալու թէ քանի՞ օր օգտաւէտ էր մարդկային ազգին քաջ ըմբռնել և լաւ խորը թափանցել աստղաբաշխութեան՝ որ զմարդիկ այնպիսի ողբմալի տխմարութենէ և այնքան անուանարկիչ ապշութենէ մը պիտի ազատէր:»

Չկրնալով այս տեղ քարաէսահմանութեան պատմութիւնն ընել, բաւական պիտի համարիմք ըսել թէ խաղի թղթերուն հնարուելէն քիչ ժամանակ ետքը՝ խորամանկ մարդիկ խելքերնին մտքերնին տուին այնպիսի թղթերու զուգադրութիւններ գտնելու, որոց միջոցաւ իրը թէ ապագային քօղն կարող եղան ի բաց բառնալ: Ահա այս եղանակաւ սկիզբն առաւ Քոբբէա-

հայ-ին կամ խաղալու թղթոց միջոցաւ բարի կամ դէշ բաղդ դուշակելու արհեստը : Ս.յս տեղս չենք կարող լռութեամբ անցնիլ և չը-յիշել այն երևելի քարտէսահմային, որ Եւրոպիոյ մէջ անհուն անսահման հռչակ հանեց իւր խիստ ճարտարօրէն յիւրուրուած կանխատես-թեամբքն՝ որոց չատերն իրօք կատարուած են . այն է Օրիորդ Լ.ընորման, որում բազմաթիւ բարձրաստիճան մարդիկ խորհուրդ հարցնելու հետաքրքրութիւնն կամ տկարամտութիւնն ու-նեցան : Որովհետև այս կնոջս վրայօք խել մը կենսագրութիւններ և պատմական յիշատա-կագրեր կան , մեք մէկ քանի տող միայն պիտի նուիրեմք անոր ,

Ս.յն մեծահռչակ համբաւն՝ զոր ստացաւ Օ-րիորդ Լ.ընորման քարտէսահմայութեան և ձեռ-նահմայութեան մէջ , իրօք իւր արժանեացը չը-նորհի՞ն ձեռք բերած էր թէ չէ : Որոց որ այն-պիսի դուշակութիւններ ըրաւ, որք առաւել կամ նուազ ճշդութեամբ ի կատար ելան , անոնք ստորագրեր կը պատասխանեն այս հարցմանս . — ընդհակառակն անոնք՝ որոց համար իւր ըրած կանխատեսութիւնքն ոչ ինչ կամ դժուարին անը-տոյդ ելան , բացատական պատասխան կուտան : Ինչ որ ալ ըլլայ՝ այս նոր Սիբիլլային խիստ մեծ անուն հանելը անժխտելի է . թէպէտ ժխտելի բան մը կայ , այն ալ այն կարողութիւնն է՝ զոր կըսէին թէ ունէր թղթին խաղալ մէջ կամ ձեռքի գծերն քննելով ապագայ իրերը երևան հանե-

լու : Ս.յս մասին մեր անհատատութիւնը կը խոս-տովանիմք :

Բայց պարագայ մը կայ , որում Օրիորդ Լ.ը-նորմանի գովաբաններն ուշադրութիւն չ'են ը-րած . այն է իւր վճիտ և խորաղնին հայեացքը , դիմագիտութեան մէջ ըրած հետազօտութիւն-ներն ու ստացած ծանօթութիւնները : Ս.յսպիսի միջոցներով կատարեալ կերպիւ կրնայ մարդ իւր ընտած անձին համամիտութիւնքն ու բնազ-դումներն դուշակել : Երբ Օրիորդ Լ.ընորման թուղթ կը բանար կամ ձեռքի մը դծերն կը դիտէր , իւր հետախոյզ աչքերն մէկ մը անոնց , մէկ մ'ալ խորհուրդ հարցնողին դէմքին վրայ կը յառէին , և հոն իւր տալիք պատասխանը կը կարդային : Ա.սկէց ի զատ իւր ըրած հարցա-փորձերն և ստէպ իւր կանխաւ ձեռք բերած տե-ղեկութիւններն , իւր խորհուրդատուութեանց յաջողութեանն կը նպաստէին : Ս.յս եղանակա-մատածելով՝ բնաւ դժպհի չ'դար հաւատալ այն մի քանի կանխատեսութեանց , որք մանաւորա-պէս իրենց առարկայ եղող մարդիկն անհնարին զարմանաց մէջ ձգած են ,

Ս.յլևայլ մեծամեծ անձինք իրեն երթալ խոր-հուրդ հարցնելու հետաքրքրութիւնն ունեցան . ոմանք իր ըրած յայտնութեանցը վրայ ափ ի բե-րան մնացած դուրս ելան քովէն . մեծագոյն մասն ընդհակառակն իւր արուեստին սխալը բռնեց : Կըսեն թէ Ս.ոալիին Չիւլատոսին Նա-բոլէոնի միմիայն ձեռքը քննելովը՝ բոլոր անոր

դլխոյն գալիքները դուշակեց. այսինքն բարձրանալն, յաղթութիւններն, իւր փառաց վերջին աստիճանը և իւր ձախողութիւններն. բայց այս բանս պատմողներն՝ ըսածնին որևէ պատմական վաւերական գրուածով մը չ'հաստատելնուն, ներելի է այդ մասին տարակուսիլ։ Եթէ ատոր բան մը կայ՝ սա է որ Բարիզի Սրբիլլայն Ժողէֆին Կայսրուհւոյն վստահութիւնն դիտցաւ գրաւել իւր վրան, և թէ յիշեալ իշխանուհին քարէսահմային կանխատեսութեանցը կը հաւատար։

Մենք երկարօրէն չ'պիտի բացատրենք այս տեղ թուղթի բանալու կերպը և իւրաքանչիւր թղթոյն նշանակութիւնը. այս մասին խել մը փոքրիկ տետրակներ կան, որոց տիպարն կրնանս համարուիլ Մեծ և Փոքր Էթեյլան։ Մեր լուրջ ընթերցողաց համար՝ որք քարէսահմայութեան չ'են հաւատար, այս խնդրոյս վրայ աւելի խօսիլը աւելորդ է. բայց դիւրահաւան ընթերցողաց և մանաւանդ կանանց համար՝ այս գլուխս վերջացնելէ առաջ հետևեալ խորհրդածութիւններն պիտի ընեմք։

Ի՞նչ վերաբերութիւն կրնայ ըլլալ էութեան (*) և գաղափարի մը վաստկուելուն մէջ. — գիրքին պէտքը (**) և աղէկ բազդի մը մէջ. — տեսիլ ապրուստին (***) և ձախողութեան մը մէջ. Մեծ

(*) Ըսպաննի՛ պէտ չի։
(**) Գուշա գըզը։
(***) Մաչա պաճաղը։

մարդկանց կեանքն ու ընկերական դանազան վիճակներն թղթի խաղէ մը կախեալ են։ Ս.յս տղայական անհեթեթութիւնս հերքման անգամ արժանի չ'է։ Եւ սակայն երկու տեսիլ անձինք՝ նոյն իսկ խելացի կանայք այս մասին դոյզն ուղիղ գաղափարութիւն ունենալնին կը յայտնեն։ Ս.րդարև նախ այս բաներուս հաւատք չընծայելնին կ'ակսին հրապարակաւ քաքոզել, յետոյ խնդալով թղթերնին նայել տալու կերթան. իրրև զուարճութիւն մ'է կըսեն, իբր պարզ ըրօսանք մը՝ և ոչ այլ ինչ։ Սակայն այս պարզ ըրօսանքս չատ չանցնիր հետաքրքրութեան դոյն կառնու. ուստի կերթան քարէսահմային խորհուրդ հարցնելու թէ արդիւնքը բարի՞ պիտի պատահի եթէ չար։ Եթէ այսպէս խորհուրդ հարցնողն քիչ մը խորհրդածելու ձանձրութիւնը յանձն առնուր, թուղթի բացողին տուած պատասխաններուն մէջ շուտ պիտի նշմարեր երկդիմի նշանակութեամբ վանկեր ու խօսքեր՝ որք մինչև մէկ կէտ մը անցեալ կամ ներկայ վիճակին հետ կրնան համաձայնիլ։ Գալով ապագայ դուշակութեան՝ այն ուրիշ բան է. վասն զի կը բնայ ատոյգ եղնել կամ չ'եղնել։ Դիտցած թէ բարեպատեհ բանի մը համար ատոյգ եղած ըլլայ. անհաւատութիւնը թէև չ'զգաստարիր յանկարծ, բայց և այնպէս քիչ շատ կը խախտի։ Եթէ այս միջոցիս ուրիշ մ'ալ գայ դուշակութիւն մը պատմէ՝ որ իրեն պատահել է և բոլորովին ատոյգ եղել, կը զարմանայ մարդ և չ'համարձակիր

հաւատալ, բայց վերջապէս դոյզն ինչ վարանումէ եւ քրէական հայութեան հաւատ կ'ընծայէ : Ան ատեն ոչ միայն կը հաւատայ մարդ, այլև այլոց ալ հաւատացնել տալ կը ջանայ. — և ահա այն վայրկենին քրէական հայական աւերդապաշտութիւնը խորհուրդ հարցնողին սրտին մէջ խորունկ արմատ ձգած է : Այս մեր նկարագրած իրողութիւնն ամեն օր կը կրկնուի աշխարհիկ կանանց մէջ : Առնցմէ չատերը կը ճանաչեմ, որոց գլխաւոր զբօսանքն՝ ընտանեկան երեկոյթի մը մէջ ուրիշներուն բաղդը նայիլ է թղթով : Իրաց այս վիճակն այնքան աւելի աւազելի է, որ այն երիտասարդաց մէջ՝ որոց բաղդը կը բանան, տկարամիտներ ալ կը գտնուին, որք ընականաբար հրաշալեաց հաւատալու համամէտ ըլլալով, ա՛լ այնուհետև քրէական հայութեան պատրանքներուն միաքերնին տոդորեալ տուն կը դառնան :

ԳԼՈՒԽ Ժ.

ԱՆՐՋԱՀՄԱՅՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԵՐԱԶՈՑ ՄԻՋՈՑԱԻ ԱՊԱԳԱՅՆ ԳՈՒՇԱԿԵԼՈՒԻ ԱՐՀԵՍՏԸ

Անրջահմայութիւնը՝ հնոց մէջ ընդհանուր համար խիստ արդիւնաբեր հանք մը եղաւ : Դիոսկորիտ, Դէմոկրիտէս, Ապողոնիոս, Անդիփան, Անտիպատէր, Խրիսիպպոս և այլ բազմաթիւ հեղինակք՝ ամենէն աւելի արտաքոյ կարգի երեւոյթներն հաւաքել, և անրջահմայութեան վրայ այլևայլ ճառեր յօրինել էին. բայց դժբաղդաբար այս ճառերուս մինչև մեզ հասած չ'են : Մեր Գաղղիոյ ժամանակակից երկասիրութեանը մէջ այս հետաքրքրաշարժ խնդիրս լուսաբանած ըլլալով, այս տեղ բաւական պիտի համարիմք ժամանակին ալեկոծութենէն ազատած մէկ քանի եղելութիւնք միայն պատմել :

Հիկաբէ երազը տեսաւ որ չահ մը կը ծնանէր. պատգամին խորհուրդ հարցուելով այս երազիս վրայ պատասխան եղաւ թէ տղայ մը պիտի ծնանէր ինքն՝ որ Տրովատայ այրմանը պատճառ պիտի ըլլար :

Ըմբիշ մը՝ որ ոլիմպիական խաղուց մէջ կա-

ռարշաւի մրցանակը վաստակելու համար շահատակելու կը պատրաստուէր՝ երազը տեսաւ, որ դեռինը իւր կառքին անուացը ներքև հուր կը բորբոքէր. ուստի իւր երազոյն արժէքն հասկնալու համար անծանօթի մը դիմելով սա պատասխանն առաւ «դու պիտի յաղթուիս. վասն զի քու կառքիդ ձիերն կը նշանակեն թէ քեզնէ աւելի ճարտար ընթացողներ պիտի գտնուին։»

Փաղարիս բռնաւորին մայրը յիշեալ հրէշոյին յղի ըլլալով՝ երազոյն մէջ տեսաւ որ իւր սեռնեակին գարգն եղող Հերմէսի արձանին ձեռքի գաւազէն արիւն կը թափէր, և այն արիւնը գետինը ծծելուն պէս առուի նման կ'ընթանար։ Գէտ մը՝ որուն պատմեց իւր երազը, գուշակեց իրեն որ ծոցը կրած տղային Ս.կրիկանդայ քաղաքը արեամբ պիտի ողողէր։

Կեսարու մահուան նախընթաց գիշերը՝ իւր կինը Կալպուրնիա՝ երազոյն մէջ տեսաւ որ իւր էրիկը կ'սպաննէին։

Սիզդա՝ երազոյն մէջ տեսած բլլալով որ Պարկայն գինքը կը կոչէր, իւր ըղձին հարցուց թէ ի՞նչ կը նշանակէր այն. — Ս.ճապարէ՛. կտակդրէ՛. պատասխան տուաւ իրեն դուշակը։ Իրաւցնէ ալ երկրորդ օրը Սիզդա հոգին փչեց։

Բրուտոսի երազը. այն Սրքատացւոյն երազը՝ որ երազեց թէ իւր ուղեկիցը կ'սպաննէին. Լըբիսիպպոսի երազը Կասարինէի երազը՝ որ Հանրի Բ. ին սպաննուիլը կը տեսնէր. Մարիամ Մեհուչնի երազը՝ որով Հանրի Դ. ի բռնամահ ըլլալն

յառաջուց ղպայ, և ուրիշ խել մը խիստ նշանաւոր ինչպէս նաև յոյժ տարօրինակ երազներ Քնոյ Բաղնիսոյ մէջ նշանակուած են. ուստի ընթերցողն հոն կը ղրկեմք։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՁԵՌՆԱՀՄԱՅՈՒԹԻՒՆ ՎՐԱՅ

Ձեռնահմայութիւնն՝ կամ աւելի լաւ է ըսել ապագայ ըլլալիքներն և իւրաքանչիւր անհատի ճակատագիրն ձեռաց գծերը քննելով գուշակելու արհեստը՝ հնութեան ամենէն նախկին ժողովրդոց և մանաւորապէս Քաղդէացւոց, Ասորեստանցւոց և Եգիպտացւոց մէջ գործածական եղած էր։ Կըսեն թէ հրեայ ըսուած թափառական ժողովուրդն միանակ ինքնին հաղաբաւոր ձեռնահմայներ ունեցաւ. մինչև անգամ Յոբ և Սողոմոն այս արհեստին վրայօք այնպէս մը կը խօսին, իբր թէ Եփրայեցւոց մէջ կատարելագործուած ըլլայ այն։ Յոյնք և Հռովմայեցիք մեծ կարևորութիւն տուին անոր, և Օգոստոս Կայսրը խիստ վարպետ ձեռնահմայի անուն հանած էր։

Խել մը հեղինակներ ձեռնահմայութեան վրայօք այնքան այլանդակ՝ որքան աղայական բաները գրեցին. ասոնց ամենքն ալ այս ըղձական հնարքիս կը հաւատային, կամ հաւատալ կը ձևացնէին։ Ասոնցմէ մի քանին յիշեմք. Գեմոկրիտէս. Ս. բիատուէլ. Ս. բոեմիտոր Եփեսացին. Կազքինդոս. Մեծն Ալբէրտ. Ս.քօթ. Տ'Էվի Կարդինալը. Սավենարօլէ. Քորնէյլ. Ս.գրիպպա. Կարդան. Ա.տամանդիոս. Յ. Մ. Բորդա. Ս.վիկենոս. Հայր Նիքէ. և այլ բազում անձինք, զորս քիչ մը ետքը պիտի յիշեմք։

Ձեռնահմայութիւնը Աստղագիտութեան հետ խիստ սերտ առընչութիւն ունի, Զոր օրինակ. ձեռքը չատ մը մասերու բաժնուած է, և ամեն մէկ մասն մոլորակի մը ազդեցութեանը ներքև է։

Բոլր մատը Ս.բոեթէն ազդեցութիւնը կընդունի։
Յոպիտը Լուսնին է։
Մէջինը Երկրին է։
Մատանոյ մատը Ս.բեթհոկն է։
Ծկնիկը Փայլածուին է։

Թենար և Իբրենար ըսուած բարձր մասերը Լուսին, և Ձեռքին գլխավորը Ս.բեթն։

Ձեռաց ափին մէջ դէպ նշանին մը կայ կենաց, ձևացեալ միջակ և լերդական գծերէն. այս երեք գծերուն վրայ կանոնաւորուած են ըստ ճակատագրին հրամանաց անհատին կազմական և մտաւորական կարողութիւնքն։

Երբ կենաց գիծը՝ որ Բոլրին և Յուպիտերին մէջ տեղ կիյնայ, խորունկ կերպիւ գծուած է և մինչև նախադասական յօդուածը կերթայ, անընդհատ երկարակեցութեան նշան է։ Բայց եթէ ընդհակառակն յիշեալ գծին խոռոչն լաւ մը նշանակուած չէ, եթէ իւր ընթացքին մէջ կ'ընդմիջի, աւա՛ղ՝ առօրեայ ծագկին բազդը պիտի ունենաս, որ միայն մի քանի անգամ արեգը տեսանելու չափ կ'ապրի։ Բայց մխիթարուէ՛. քանի մը հինգ տարի ըսել է այն։

Էջերուն դիծը՝ որ եռանկեան մեծ կողմերէն մին կը ձեւացնէ, իւր խորունկութեանն ու կանոնաւորութեանը համեմատ ազնիւ հոգւոյ մը, անկեղծ և վեհանձն բնաւորութեան մը նշան է։ — Բայց իւր ընթացքին մէջ եթէ ընդմիջում մը պատահի՝ զայրացկոտ, անզուսպ բնաւորութիւն մը կը ցուցնէ։ — Եթէ նուազ խորաձիգ ըլլայ՝ տխրութեան, մելամաղձոտ խառնուածքի յայտարար է։

Մկնին դիծը՝ որ եռանկեան խարիսխը կը կազմէ, եթէ աղեկ մը օրոշուելու կերպիւ գծուած ըլլայ՝ զուարթ, բարեմիտ, բայց զգայական հեշտութեանց համամիտ բնաւորութեան մը նշան է։

Բոլթ մատը՝ ամենէն ճարտար ձեռահմայիչ խօսքին նայելով Ս. բուսանկին կամ Սատղիան ամենէն աւելի սիրած մատն է։ Բայց արդեօք ինչո՞ւ համար. զայդ չ'են գրուցեր . . . . բայց գոնէ կապահովցնեն՝ որ եթէ գծերը բաղմաթիւ են այն մատին վրայ, եթէ ճուաձիններ, կիսաշրջանակներ ձեւացնեն՝ կանանցմէ պիտի պաշտուիս. — իսկ եթէ այդ գծերն բոլորաձեւ են, եթէ ամբողջ բոլթ մատին վրայ կը տարածուին՝ խնդճ սիրահարներ, տարաբաղդ ամուսիններ, զգոյշ կացէք. մատնութեան մը, անհաւատարմութեան մը նշան է այդ։ Ակնարկը այն բոլորչի գծերուն ծիլիեւթ օղակ անունը կուտան։

Ձեռնահմայութիւնն՝ իւր վարդապետներն, իւր մեծանուն մարդիկն ունեցած է. Պաղդե-

այսօրմէ սկսեալ՝ որոշմէ կըսեն այս արհեստս ծագումն առաւ, մինչև մեր օրերը յողնահոլով անձինք ապագայն իրենց նմանակաց ափին մէջ կարդալու դուն գործած են. բայց զարմանալի չէ՞ որ բանական թռուլ լուսաւորեալ անձինք ևս իրենց գրիչն այս եղկերուաքաղներս ուսուցանելու նուիրել են։ Ա.յս վերլիններէս ամենէն նշանաւորներն հետևեալքն են։

Երկայնաբանն Բոլվէոս՝ հեղինակ գրուածքի մը՝ յորում կապացուցանէ թէ հարիւր եօթանասուն տեսակ ձեռք կըլլայ։

Պաթրէն Թրէյսոս՝ որ ութսուն տեսակ ձեռք կը ճանչնայ։

Իսահակ Բէնէթ՝ որ եօթանասուն հատ գտած է։

Թրէթոս՝ քառասուն հատ։

Էնոպիոս՝ երեսուն եօթը հատ։

Գիտունն Յովհաննէս Կէյս՝ քսան հատ։

Իմաստունն Կոպոռոս՝ ութը։

Բէրտոլէյ՝ եօթը։

Փամիլիլիոս՝ վեց, և Յովհաննէս Պըլ՝ միայն չորս հատ։

Ա.յս ամենուն դէմառը կընէ չորս հարիւր քառասուն երկու ձեռք. արդ՝ եթէ այս թուոյս վրայ աւելցնենք

Ինն գլխաւոր գծեր.

Քսան և եօթն երկրորդական գծեր.

և Եօթանասուն և մէկ երրորդական գծեր.

Ըսել է ընդ ամենը հինգ հարիւր քառասուն և ինը՝ ձեռք. և քանի ձեռնահմայ մը լաւ մը ու-

սած ըլլալու էր այս ամեն տեսակներ։

Երբ ըսեն քեզ. այս ինչ ձեռնահմայն բազմաթիւ դուշակութիւններ ըրեր է՝ որք իրօք կատարուել և պատմական եղելութիւն մը դարձել են, համարձակութեամբ պատասխան տուր. — Ձեռաց գծերուն վրայ չէ որ հիմնել են դուշակութիւնին, հապա անցելոյն և ներկային վրայ։ Զատնք դիտնալովը՝ մարդ կրնայ մինչև աստիճան մը ապագայն ճանչնալու յաջողիլ։ Տես այս մասին մեր Մաքնիսականութեան գործնէն, ուր տեղ այս խնդիրս լրջօրէն բացատրուած և լուծուած է։

Ա.րդ՝ ցուցնեմք հոս թէ ի՛նչ իրական բան կրնայ ըլլալ ձեռնահմայութեան մէջ։ Մարդկանց համամիտութիւնքն դուշակելու ճշմարիտ արհեստը դիմագիտութեան վրայ կը կայանայ. ճշմարտութիւնը ձևոյն, ծաւալին ուղղութեանը և գունոյն մէջ պահուած է։

Ձեռաց ձևն ու մեծութիւնը, հատակի, սեռի, իառնուածքի, արհեստի և առողջութեան վիճակի համեմատ յանհուն իրարմէ կը տարբերի։ Յայտնի է որ ձեռքը քննելով երիկ մարդու դիւրաց հարած կին մը կը ճանչցուի. նոյնպէս մեծատուն տիկնոջ մը դիւրաւին ներքև դեղջուհի մը, և արհեստաւորին թիկնոցին տակ կնամարդի քաղաքացին դիւրին է այդ եղանակաւ որոշել։ — Մաղձային իառնուածքի տէր մէկու մը ձեռքը՝ աւշային իառնուածքի տիրոջ ձեռքէն կը տարբերի. առաջնոյն ձեռացը վրայ երակներն

խիստ զարդացած են, մինչդեռ երկրորդինին վրայ դրեթէ աննշմարելի կը թուին։ — Ձեռքին դուրս ցցուած ներքաւոր մասերը, հաստատութիւնը, այժը, փափկութիւնը, մարմնոյն արտաքսութիւնքն ու խորտութիւնը ճանչցնել կուտան թէ մարդը ձեռագործ աշխատասէր մ'է՝ թէ չէ դրամեներկի մարդ մը։ Ասոր համար ըսուած է որ, մարդս իւր ձեռացը մէջ կը կրէ իւր ունեցած ընկերական վիճակին դրոշմը։ Ա.յսպէս թանձր, աճառուտ, ոսկրուտ, պինդ և բրտացեալ ձեռքերն՝ նիւթական աշխատութիւն կը յայտնեն. իսկ քնքոյշ, բարակ, փափկամարմ ձեռքերը՝ այս գործարաններուս անդորձութեանը նշան են։ Ճիրանաձև մատերով զինեալ խաշոր ձեռքերը՝ մերթ անոր անվայել զգացումները կը յայտնեն, մերթ կծծի խնայողութիւն մը, կաշառութիւն, տմարդութիւն։ — Բարեձև մատներով երկայն ձեռքեր՝ սովորաբար հեզահամբոյր և դիւրամատոյց բնաւորութեան տէր մուսոյի անձանց մէջ կը պատահին։ Քնքոյշ ձեռք մը, բարակ մատներ, խնամով մաքրուած ըղունգներ բարեկիրթ մարդը կորոշեն, և իւր մարմնոյն ընդհանուր մաքրութեանը վրայ գաղափար մը կուտան։ Ա.զատ ձեռքեր, անխնամ թողուած ըղունգներ, հակառակ գաղափարաց ծնունդ կուտան։

Ձեռքը՝ թէ իւր չարժմանցը ժամանակ և թէ հանդստեանն ատեն՝ կրնայ խել մը իրարմէ տարբեր բաներ բացատրել. իւր հանդարտ կեցուածքը անդորրութիւն կարտայայտէ. իւր թըը-

թուններն ու ձգտումներն կրկին նշան են. իսկ այլևայլ չարժուններն՝ հոգւոյն մղմանցը կը հետեւին. մէկ խօսքով՝ ձայնէն առաքը ձեռաց չարժմունքն մեր ներքին յուզմանց ամենէն բնական և ամենէն հասարակ նշանն է։

Ձեռնահմայութիւնը՝ այս կերպիւ դիմագիտական սահմանի վերածուելով, ուշադիր դիտողութեան արհեստ մը կը դառնայ, որ վստահութիւն կը վերջնէ, ուսկից պի մտքի հակառակ չէնէրը։ Հոս իրողութիւնք կրնան կազմապիտութեամբ բացատրուիլ, մինչդեռ անդին քեզ կրանեն. այսպէս է, ուսկից պի այսպէս է։ Բայց որովհետեւ այսօրուան օրս բանի հետաքրքիր առաջ տանիլ կուզեմ մարդիկ, անհնարին երեւցած բաները կը մերժեն, և միայն կարելի համարուած բաները կընդունին։ Անհետաքրքրութիւնը գարուս հիւանդութիւնն է կըսեն հրաշալեաց ջատագովները. թո՛ղ այդպէս ըլլայ. բայց դուք ալ խոստովանեցէք, որ այդ հիւանդութիւնը՝ մարդկութիւնը աւելի ծանր, աւելի անարիւս հիւանդութիւններէ ազատ կ՚պահէ. կազմ ըսել այն հիւանդութիւններէն՝ զորս դիւրահաւան պարզամտութիւնն իր ետեւէն կը ձգէ, առնըդապաշտութի՛ւն։

ԳԼՈՒԽ ԺԲ

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՈԳԵԿՈՉՈՒԹԻՒՆ

Ոգեկոչութիւնը՝ ի սկզբան մանաւանդ դարձդարմանց միջոցաւ մեռելոց ստուերներն կամ ուրուականներն դիրենք կոչողաց երեւիլ ստիպելու արհեստն էր։ Այս գնացական արհեստս խիստ հին ժամանակէ ի վեր կար. Կիրկէ, Մէոէա, Թէօրիտէ, Թիմոթէ, Թեսալա և այլք մեռեալներն վերակոչելու և կենդանիներն ամեն տեսակ անասնոյ փոխակերպելու անվրէպ դաղանիքը պետէին։ Եարերը ոգեկոչութիւնն ստուծոյ, դիցուհեաց և կիսաստուածոց ալ դրծամտեցաւ։ Նախ և առաջ ինամիւ էին յոգնատիքն կը կարդային մեհենից մէջ. զոհ կը մատուցանէին անոնց, դահանէնք կը նախրէին, յետոյ կը վերակոչէին զանոնք։ Այս պաշտամունքս մեհենին պաշտօնակալացը յատկացեալ ըլլալով, ուրիշ ոչ ոք կրնար վարել զանոնք։ Կիւսանմայք և վհուկք գրեթէ միշտ Դէմոնին Աստուածուհեաց և մանաւորապէս երեակին հետ կապայ կուղղէին աղօթքնին։

Հոգւոյ կոչումը եղերական և ահռելի հանդերձանօք կը կատարուէր. կիւսը դիշեր առեն

լու համար. Լուկրետիոս կը պատմէ, թէ հռչակաւոր Դեմոկրիտ վհուկը՝ ոգեկոչութիւնն սկսելու առեն բազկերակը կը ծակէր և իր արիւնը ծեր բուի մը արեանը հետ կը խառնէր։ Յետոյ ձեռքի ցուլը կը շրջշրջէր, և ասով զանազան բոլորակներ գծելէ ետքը՝ կսկորդէն խժդժալուր խօսքեր կ'արտասանէր։ Ս.յս յառաջաբանութիւնս աւարտելէ վերջը՝ արիւնը չոքեցի և նոճիէ շինուած փայտակուտի մը վրայ կը թաթխէր, որոյ վրայ արդէն սեաւ ոչխար մը յարած էր։ Եթէ ոգեկոչութիւնը չ'յաջողէր, սոսկալի հայհոյութիւններ կը ժայթքէր բերնէն, և իրեն խորհուրդ հարցնելու եկողն յետագայ դիշերուան կը հրաւիրէր։

Ներկայ գտնուող անձը՝ որոյ համար կը դրծէր կեսօր, ոգեկոչման տխուր հանդերձանքներէն արդէն զգածուած լուռ ու մունջ կ'նայէր, և շատ անգամ իր երևակայութիւնը՝ փափաքած տեսիլքը կը ներկայացնէր իրեն. ուրիշ խօսքով՝ յարթնեռաղղ (*) մը ապրեցութեան ներքև կը գտնուէր։ Եթէ դիպուածով ոգեկոչութիւնն արդիւնք մը չունենար, ուրիշ աւուր կը յետաձգէին գայն։ Ս.յն միջոցին յիշեալ մարդոյն բնաւորութեանը, խառնուածքին և սովորութեանցը վրայօք տեղեկութիւնները կը

(*) Hallucination. այս բառիս միտքը բացատրող ուրիշ բառ չ'կրցինք գտնել. տեսակ մը պատրանք զգայարանաց։

խորափոր քարանձաւի մը մէջ չիկազոյն բոցով ռնտինէ ջահերու ներքեւ կը գործէր։ Սոլիը շրէպնեռով (1) շրջապատեալ բազին մը կար, որոյ վրայ դրուած էր Հնկազայ դրոչեալը եռագոյն մեղրամոմէ շինուած՝ կարմիր, սպիտակ և սեաւ. մերթ բուեր, հոլամկներ, և մերթ սև ուլ մը կամ ոչխարուկ մը կը յաղէր. երբեմն ալ սոքն դեռայ երախայ մը կը զոհէին . . . . Կիսոր բազնոյն վրայ զոհին լերդը և անդժատ (2) ծխելէ ետքը, ձեռքի ցոլոցը բազնոյն շուրջը բոլորակ մը կը գծէր և արիւն կը սրսկէր վրան. յետոյ ցուլը վեր վերցնելով երեք անգամ միևնոյն շրջանակը կը գծէր օդոյն մէջ, և սա խօսքերը կարտասանէր.

«Ցանուն Սաթուքի և Փղիկեդոնի (3), յանուն արեանն՝ որով բազինդ կը ճննճերի, հզօրդ Եկադէ, կ'երդուընցնեմ զքեզ, շղթայէ զկերբեր և նահատուներ թափառութեան գուռը բա՛ց ուրուացն առաջ, որոց անուանքն են ահաւասիկ, որպէս զի հա՛ս, մեր աչաց առջև երևին։ Յանուն հզօրին Եկադայ, ուրուականք, երևեցէ՛ք։

Մէկ քանի վհուկներ՝ այլանդակ միջոցներ, յիմարական և ահռելի արարողութիւններ 'ի կիր կառնուին իրենց ոգեկոչութիւնն յաջողել առ-

(1) Asphodèle տեսակ մը տունկ։

(2) Assa-foëtida տեսակ մը խէժ. Տե՛ս չ'լման պօղու։

(3) Գետք դժոխոց։

հաւաքէին՝ արդեօք քիչ թէ չէ սաստիկ զգայուն էր. արդեօք Կիւսին զօրութեանը կը հաւատար թէ չէ վստահութիւն չ'ունէր անոր վրայ. եթէ այս վերջինս պատահէր, արհեստին ամեն թելերը այն առեն ձեռք կառնուին, Հապա հապ կը պատահէր որ երկրորդ կոչման առեն առուերը երեան չ'գար, Կիւսը կըսէր, թէ ուրուականներն և մինչև անգամ դժոխոց աստուածներն իւր կամքը կատարել սոխելու համար ուրիչ հնարքներ ալ ունէր. բայց ճիշդը սա էր, որ իւր արհեստակիցները՝ նշան մը ընելուն, քարանձաւին մէկ եզերքը՝ շոգեպատ, անորոշ մարգկային կերպարանք մը, 'ի մի բան՝ չինական առուեր մը կերևցնէին: Ամեն զատ եթէ Կիւսը դոյզն ինչ որովայնախօս ալ ըլլար, առուերին բան կը հարցնէր և ինքը դարձեալ պատասխանն ալ կուտար. այնպէս որ խորհուրդ հարցնելու եկողն Կիւսին վարձքը կը վճարէր, և դոհ և գմայլած տուն կը դառնար:

Թեսաղիոյ մէջ հոգեկերներ(1) կային, որք քաւութեանց(2) և թիւթեղեանց միջոցաւ մեռելոց առուերներն իրենց կը քաշէին կամ կը վանէին. Լակեդիմոնացիք այս հոգեկերներուս կամ կիւսահմայներուս երկուքն Սպարտա բերել տուին Պաւսանիասայ առուերն վանել տալու համար, որ ամեն դիշեր Ամենասայ մեհենին մէջ կ'երևէր

(1) Psychagogae.
(2) Incantations.

և բոլոր հոն մօտեցողներուն սի ու սարսափ կ'ազդէր:

Ամբռասանցւոց, Եգիպտացւոց, Յունաց եւ Հռովմայեցւոց մէջ կիւսահմայք խիստ բազմաթիւ էին. և այս բանս կը ցուցնէ թէ ոգեկոչութեան հաւատալն ոչ միայն ժողովրդեան ռամիկ մասին մէջ տարածուած էր, հապա չատ մը լուսաւորեալ մարդիկ ևս ազատ չէին անկից:

Վերոյիշեալ ազգաց մէջ ոգեկոչութիւնն արդիւնաշատ արուեստագիտութիւն մը դարձած էր, ինչպէս այսօր մեր մէջ քնաշրջական խորհրդաւորութիւնն. ամեն մարդ ոգեհոչին կը վաղեր կերթար, ինչպէս մադնիսացնողին քով կը վազեն կերթան այժմ: Ամպագային դաղանիքն գիտնալու ծարաւէն պապակեալ էին մեծ և պզտիկ. այդ ծարաւը հարկ էր դոհ ընել. մեծամեծներն ու հարուստներն պատգամաց խորհուրդ հարցնել կերթային, որ աւելի սուղ էր. իսկ պզտիկներն կամ աղքատներն իրենց լսումայն կերթային Կիւսին կուտային: Ամբռասանցիք իւր աճման, ծայրագոյն սաստկութեան և նուազման ժամանակներն ունէր: Եւ ահա այս յիմարութեանն սաստիկ աճման մեկ միջոցին էր՝ որ Մովսէս մահուան պատիժ սահմանեց մոգութեան հետևողաց կամ Պիւթեանոգեայն խորհուրդ հարցնելու գնացողաց դէմ:

Մեր ընթերցողներն գիտեն երևի մեզ այս առեղ Անդրէաս հռչակաւոր Պիւթոնուհւոյն վրայօք զարտուղութիւն մը ընել, որ այնքան

հակառակ ենթադրութեանց տեղի տուած է։

Անտառապահ Պիլթանուհին կամ վհուկը կարեւոր տեղ մը բռնած է սրբազան բնագրին մէջ. հոն ըսուած է թէ Սաուղ թագաւորը ծըպտեալ յիշեալ կաուկը տեսնելու գնաց, բայց նա դիմքը ճանչնալով այսպէս պատասխանեց։

— «Ես քու աղախինդ եմ. ի՞նչ կուզես ինէ։

— «Ցանուն Ըհոյ, անունս դուշակէ, և աչացս առջեւ բե՛ր սա մեռեալները, զոր քեզ պիտի նշանակեմ։»

Սոյնհետայն վհուկը Պիլթոնը յօդնութիւն կարդայ . . . . տեսիլ մը կերեւայ. Սամուէլի դայրացեալ ստուերն է, զոր տեսնել կը կարծէ... ջղասարսուռ յերկիւղ կը դողդղի. Սաուղ սարսափահար լուռ կեցած է . . . Ան ատեն Պիլթոնուհին կը դոչէ։

— «Սաու՛ղ. ինչո՞ւ խաբեցիր զիս. վասն զի դու Սաուղ թագաւորն ես։»

Թագաւորը՝ որոյ չփոթութիւնը եւս քան զեւս կաւելնայ, կը հարցնէ վհուկին թէ ի՞նչ կը տեսնէ։

— Յարգելի Ծերունի մը կը տեսնեմ, որ դէպ երկրանէն դուրս կելնէ. ճակատը կիտակէ. բերանն ու աչքունքերը խիստ դառնաւոր մը ըլլալը դուշակել կուտան։

Սաուղ այս նկարագրութիւնս լսելով կը հասկնայ թէ Սամուէլ ինքն է. ուստի դողալով կը գրուցէ։

— Կին դու. հարցուր իրեն թէ դիմոյս ի՛նչ պիտի դայ. խօսեցնել տուր զինքը։

Մի եւնոյն վայրկենին ձայն մը՝ որ դեռնին տակէն ելնել կը թուէր, սա խօսքերն արտասանեց։

— Սաուղ ու Իսրայէլի բանակը Փղշտացւոց ձեռքը պիտի ընկնին։

Վայրկեան մը լռելէ յետոյ ձայնը յարեց։

— Դու. Սաուղ և քու որդիդդ վաղը իմ հետս պիտի ըլլաք . . . ։»

Այս ոգեկոչութիւնս՝ որ ընդդէմ և ինպատա այնքան վիճաբանութեանց առիթ տուած է, ո՛վ չը հասկնար այսօր՝ որ որովայնախօսութեան զարմանալի արդիւնքներէն մին է։ Ուր դնենք, որ չատ մը հեթանոս և սրբազան ականատես անձինք կարծիք յայտնած են թէ Անտառապահ Պիլթանուհին որովայնախօսութեան կամ որովայնակոչութեան արհեստին մէջ խիստ յաջողակ էր։

Միւս կողմանէ յիրաւի տարօրինակ բան է՝ որ այս ի բնէ յանդարէն Պիլթոնն բառը Եբրայական լեզուին մէջ ներմուծեալ ըլլայ ճիշդ Սաուղայ ժամանակ։ Մի քանի հնադէտք այս իրողութենէս հետեւցուցած են թէ՝ Անտառապահ Պիլթանուհւոյն պատմութիւնը չ՛րէից՝ Յունաց հետ հաղորդակցութեան սկսած առեններն միայն դրուած ըլլալու է, որն որ Պաղամէոսեանց օրով կ՛ընկնի։

Սամոթրակեցի վհուկ մը՝ իւր ամուսնոյն թաղման ճանապարհը վրայ Պրոտեսիլասայ ստուերը կո-

չեց, որ Տրոյիոյ ափանց վրայ մեռած էր։ Իրաւ. ցընէ առաւերը երեցաւ, և իր հաւատարիմ ա. մուսինը վէրկին վառած կրակին մէջ նետեց ինք. ղինքը՝ որպէս զի իր պաշտելոյն հետ երթայ միանայ։

Վ.ասիլ կայսրը անուանի հրաշագործի մը դիմեց՝ իր որդին տեսնելու համար, որ վեց ամիս 'ի վեր մեռած էր։ Իր աղօթքը ընդունելի ե. ղաւ. տեսաւ իր սիրասուն որդեակը՝ որ ճիշդ մը վրայ հնծած դէպ 'ի իրեն կը վազէր. բայց երբ Վ.ասիլ թեւերը բացաւ որ զայն գրկէ, առաւերը անհետացեր եղել էր։

Հռովմայի մէջ ազնուութիւնը, դիւթութիւնը և մտքական ուրիշ արարողութիւնը այնքան ընդ. հանրացան, որ հարկ եղաւ օրինաց սուրը քաշել Կիւսից և Յատուկ կանանց դէմ։ Համօրէն կայս. րութեան մէջ մահուան վճիռ եղաւ անոնց դէմ, և դրեթէ ամենքն ալ առ հասարակ յարդուեցան։ Այս կատարածս Վ.ազէսի օրովը եղաւ, ինչպէս որ Աթէոդոս վրայ գրուած դլխոյն մէջ պիտի տես. նեմք։

Հռովմէական կայսրութեան անկման առին՝ կիւսութիւնը որ ժամանակ մը ճնշուել էր, վե. րըսաին սկսաւ առաջինէն աւելի զարդանալ. մանաւորապէս միջին դարու մէջ այն սատա. ծաբանական բանդագուշանաց, սնոտիապաշտու. թեանց և մարդկային բանականութեան դէմ դործուած եղերանց դարուն մէջ սև մոգու. թիւնը կամ կիւսահմայութիւնը անհուն յառա.

ջադիմութիւն ըրաւ։ Ոգեկոչութիւնք և երեւ. մունք ամեն դիտց տեղի կունենային. ոչխս առ. անձին կիւսահմայները էին որ մութ տեղուանք կը գործէին, հապա կիւսահմայից ամբողջ խումբեր՝ պոհեմիացի, դնչու, հայլն ան. ուամբ բոլոր երկիրը կը պատէին։ Անամթու. թիւնը մեկ կողմէն, դիւրահաւանութիւնը միւս կողմէն վերջին աստիճանի հասած էին։ Նշա. նակութեան արժանի է՝ որ անհատ մը, ժողո. վուրդ մը որքան աւելի հետաքրքիր, այնքան աւելի դիւրահաւան է. կարծես թէ դիւրահա. ւանութիւնն ու նախրահաւատութիւնը հետա. քրքրութեան հետ ուղիղ համեմատական են. ասոր համար է որ կանայք աւելի դիւրահաւան են քան թէ արք։ Հրովարտակ մը վճռեց Բա. բիղէն այն դնչուներուս խումբերն՝ որք ախտաբ բանալէ, մեռելներն կոչելէ և պիրկնք վարձատ. րել ուղղին արհեստին սորվեցնելէ զատ ապ. րուստի միջոց չունէին. անոնք ալ դաւառաց քաղաքներուն մէջ ապաստանեցան։ Վեցտա. սանհրրորդ դարուն մէջերը դնչուներուս խում. բերն այնքան չատցած էին Գաղղիոյ մէջ, որ սկսան մուտանդութիւն պատճառել։ Օրլէանի խորհրդանոցն իրեն պարտք համարեց պետու. թիւնը մաքրել սոսկումէ։ Հետեւաբար մշտըն. ջենաւոր տարապրութեան դատապարտեց զա. նոնք՝ թիարգելութիւն կամ խեղդումն սպառ. նալով անոնց, որք երկրորդ անգամ նոյն յան. ցանքին մէջ դտնուին։ Ս.յսպէս Գաղղիայէն հե.

ռանալու ստիպուելով՝ գնացին Իզմիոյ, Գերմանիոյ և Հունգարիոյ մէջ գոնուած հատատակիցներուն հետ միացան։ Բայց այս գնչուները՝ իրենց բնական Գաղղիոյ զանազան քաղաքներուն մէջ ալ կերպարանքը թողած էին, և այս պատկերքս իրենց վարժապետներուն արհեստը շատ նպաստեցին։ Պէտք է ըսել այս տեղ՝ որ գովելու միջին դարու ժողովրդոց, որ կախարդ ըսուած ատորին ատելի անձանց կիւսահմանները խաժամուժին մէջէն ելան, և անոնց խորհուրդ հարցնելու գնացողն ալ դարձեալ խաժամուժն էր. ազգին լուսաւորեալ մասը այս անհեթեթութեանցս մէջ չէը ընկնէր։ Դատարաններն մի քանի կախարդներ գիւղաքաղաքեան յանցանօք խարուկի դատապարտելնուն վրայ կախարդներն յանկարծ զգուշանալի կերպիւ բազմացան. այնպէս որ կախարդութիւնն համաճարակ ախտ մը դարձաւ ոգոյս։

Իրաց այս վիճակին տեւեց, մինչև որ մարդասէր փիլիսոփայք ժողովրդեան վրայ լոյս սփռեցին. այն ատեն կիւսահմանութեան ցնորական հատատքն տակաւ առ տակաւ չնչուեցաւ, և նոր աերունդը սկսաւ խնդալ այն բանին վրայ՝ որ իր պապերուն սոսկումի պատճառ էր։

Տանեւտեղերըրդ դարուն վերջերը Գաղղիոյ մէջ Քակիոդրոյ անուն վարպետորդի շարլաթան մը երեւան եկաւ։ Սոխ հատատակ մարդ մը չէր. մշակեալ միտք մը և շատ ճարտարախոհութիւն ունէր։ Սյնպէս անուն հանել

տուաւ իրեն համար, որ երբ թէ ուրիշ բժշկաց անբուժելի համարած ախտերն ապաքինելու անվրէպ դաղանիքներ գիտցող քիմիագէտ բժիշկ մ'է։ Իւր հարիւր դալը մեծ իրարանցումի պատճառ եղաւ։ Տըլմնի մարդիկին ապարանքը իջևանեցաւ, ուրտեղ Յօհան կարդինալն ու պարոն որ Ֆլամարիոնա գինքը տեսնելու կերթային. վասն զի այս երկու ականաւոր անձինքս իւր չերմ պաշտպաններն եղան։ Քակիոդրոյի կենսագրութիւնն ծանօթ ըլլալուն, միայն մեր նիւթոյն վերաբերեալ մասը պիտի քաղեմք անկից։

Քակիոդրոյ նախնի կիւսից նման ազնիւներն կը կոչէր, և որոց որ այս չնորհս ընել կուզէր՝ անոնց աչքին առջևէն անցուներ կուսաստ գանոնք։ Վարշաւիոյ մէջ, Բանինոքի իշխանին ազաչելովը՝ նորա վնց տարիէ ի վեր մեռած պաշտելի մեկ սիրուհւոյն Քերինոքայի տասեները կուչել էր։ Իշխանը առատապէս վարձատրել էր կիւսահմանն՝ այս քաղցրիկ հմայութիւնս իրեն հայթայթած ըլլալուն համար։ Յօհանի կարդինալն ևս իր սիրուհին վերաբերեալ ուզեց, որ գրեթէ տարիէ մը ի վեր մեռած էր։ Սակայն ինչ ընդհմանալի եղաւ՝ Քակիոդրոյ վերջապէս այս բանն ընելու հաճեցաւ, բայց չկրցաւ որբազանին ուզածին չափ չուտով յայտնել. այնպէս որ՝ մեկ քանի նիստեր հարկ եղաւ ընել։ Իսկ նոր Որլէոսը՝ իւր Եւրիտիսին տեսնել տեղնալով հազիւ չունչ կառնուր, և անձկանօք կ'սպասէր այն վաղանցուկ

վայրկեանին, յորում առաւերը պիտի տեսնէր... Քակլիատրոյ իւր մոգական գաւազանն ի ձեռին այն բերկրալի ցնորքն կը յետաձգէր ըսելով որ բնութեան մէջ այնպիսի բան մը տեղի կունենար, որ իւր արուեստին զօրութեանը դէմ կը դնէր։ Հուսկ ուրեմն ըր մը հրաշքը կատարուեցաւ։ Քակլիատրոյ կտաւ խմոց առաւ Կարդինալին որ նշաններն բերեցուշակ են, և կը յուսար թէ այս անգամ պիտի յաջողէր. խիստ երկիւղած լռութիւն մը պահել պատուիրեց իրեն, և մինչև անդամ արդիլեց՝ որ չ'ըլլայ թէ փռնչէ, քիթը սրբէ, և հաւանութեան կամ ոչհաճութեան նշան մը ցուցնէ։ Ցանկարծ հպիւ նշմարելի կերպարանք մը նկատուեցաւ պատին վրայ և չուտ մը անյայտ եղաւ։ Կարդինալին մոգեալ աչուընեն հպիւ զայն նկատելու ժամանակ ունեցան. տարփապին հառաչք մը արձակեց, և շնորհակալ եղաւ Կիւսին որ երջանկութեան այն ստղ վայրկեանն ճարել էր իրեն։ Կարդինալն բարեկամներէն մէկուն խօսքին նայելով՝ որ նեղկայ էր յիշեալ փորձին, սրբազանին առտիկ դրդռեալ երեւակայութիւնը մեծ մաս մը ունեցաւ այս երեւմնոյ մէջ, որ ուրիշ բան չէր, բայց եթէ չինական պատկերի ցոյց մը։

Այս պեսկուսութեանս համբաւը արագութեամբ տարածուեցաւ մայրաքաղաքին մէջ։ Երկու տեղ խել մը բարձրատիճան անձինք եկան պաղատելու կիւսահմային, որ իրենց սիրելի եղող աղուներնէն ցցնէ երեսից. բայց Քակլիատրոյ

ժլատ էր այդ մասին. խիստ քիչ մարդոց միայն հաճեցաւ ընել՝ ինչ որ մանաւանդ շնորհք մը կը համարէր. ասով հանդերձ չատ տղայ չահեցաւ այս արհեստէս։ Երբ իւր փափաքած հարբուսութիւնը ձեռք ձգեց, հոսվմ երթալու չարաղէզ դաղափարն ունեցաւ. հո՛ն ձերբակալ ըլլալով դատուեցաւ, և մշտնջենաւոր բանտարգելութեան դատապարտուեցաւ։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՈՒՐՈՒԱՏԵՍԻԼ

Տանեվիններորդ դարուն սկիզբն հանճարոյ ոեր մարդ մը՝ անուանին Բոպերթսըն նախ օդաչութեան տուաւ ինքզինք, և իւր օդապարիկէն թշնամեաց պատրաստութիւնները դիտելով Կայսրութեան բանակաց մեծամեծ ծառայութիւններ մատոյց։ Ետքը օդապնացն հանդեսաւ բնագիտութեան զուարճալի մասին տուաւ խելքը, և բազմաթիւ հետաքրքրական գիտութ ըրաւ. բայց ամենէն աւելի տեսագիտութեան վրայ ուղղեց իւր աշխատութիւնքը. այն բարեյաջող արդիւնքներն՝ զորս ձեռք բերաւ, իւր հնարագիտութեան տաղանդոյն կը վկայեն. մինչև իւր օրը ---ոխը (*) տեսակ մը

(*) Lhumbre noir.

զբօսանք էր միայն. Բոպերթսըն գիտութիւն մը զարձոյց զայն. հայելիներն, ասպաձև ուռուցիկ գոգաւոր և հաստատակոմեան ապակիներն նպյք իւր ձեռացը մէջ ամենէն զարմանալի գործածութեանց յատկացան. ամեն ձևերով ամեն ընդարձակութեամբ Մ-ա-ն-է-ր (*) չինեց և զանոնք դոպցնս ճշմարիտ հրաշքները գործելու գործածեց: Երբը անուանի բնագէտը և բազմահմուտ Լալանա շատ անգամ իւր փորձերուն ներկայ կը դտնուէին, և յետոյ կուգային առանձինն կը չնորհաւորէին զինքը՝ իւր նշանաւոր գիւտերուն և զանոնք գործածելու մասին ցուցուցած ճարտարութեանը համար:

Բոպերթսընի տաղանդն ու վարպետութիւնը մեծ հանդէս վաստկացուցին երեն. Եւրոպիոյ զանազան մայրաքաղաքներն պարտեցաւ, և ամեն տեղ զամենքը իւր ուրուատեսլական ներկայացումներովն յափշտակ կրնձեց: Ուղածին պես երկնքին հրեշտակները իջեցնել և Տարտարոսին դժոխոց ատուածներն վեր ելնել կուտար: Վայելչագեմ պատկերներու, խօլական երեւոյթից, ձառագեմ ուրուաց՝ հանդիսատեսից աչացն առջև պարզած հաճոյական կամ զարհուրելի տեսարանացը համեմատ ուրախութիւն կամ արհաւիրք, երկիւղ կամ յոյս կ'պղդեր: Ըստ օրինակի նախնի կիւսահմայից՝ մեռելոց ատուերներն կը կոչէր, և այս տեսակ ե-

(*) Fantasmagori.

լևմանց մասին դրեթէ միշտ կը յայտնէր. նախ՝ վասն զի առաջին կարգի դիմագէտ էր, և կը նայէր որ միշտ միայն խիստ դէպքերն բնաւորութեան տէր անձանց առջև դործէ. երկրորդ որ՝ այս պայմաններս չ'ունեցողներն ետ կը դարձընէր, «Կուչական զօրութիւնս կորուսել եմ այսօր, կըսէր անոնց. երբ դարձեալ վրաս դայ, լսաց կուտամ ձեզ»: Յաճախ իւր բարեկամաց կը պատմէր, որ եթէ մանաւանդապես ատուերներն կոչելու արհեստին հետէ եղած ըլլար, քիչ ժամանակուան մէջ մեծ հարստութիւն կրնար դիղել. վասն զի զօրհանապազ պաշարուած էր երկու սեռէ խել մը անձինքներէ, որոց ոմանք իրենց մեռած սիրուհիներն, իրենց կիներն, և ոմանք ալ իրենց տարփածուներն, իրենց այրերն վերստին տեսնել կ'ուղէին:

Բոպերթսըն երկու հատոր չէշոփէրէ չարադրած է, որոց մէջ իւր ուրուատեսլական հնարքներուն շատին նկարագրութիւնն կընէ: Յիշեալ յիշատակագրաց մէջ կը դտնուին նաև բազմաթիւ զարմանատեսիլ առ աչօք պատկերներու և յոյժ հետաքրքրական տեսարանաց կազմութիւնը, որոց վերնագրերն ահատասիկ:

Անուրջն կամ Մղձաւանջ (*): — Հանդերձանք և երթ ի դիւաժողովս. — Մաքսեթ. — Փորձութիւն որբոյն Անտոնի. — Փեդրարկա

(*) Աղբերական քեռպուս:

և Լաւրէ. — Դրոյիդաց յաշտ առնելը. — Սաուերն Սամուէլի և Սաուղայ. — Իրիկեի միւսանգամ կօրուանելն ղԵրուսաղէմ. — Գար համբարուաց. — Գար վհկաց. — Երեք Ենորհք փախակերպելուք յանկարծ ի կմախս. — Ա.սա-ղիկ մի՝ որ չանայ յաղթել ճգնաւորի ուժին. — Գլուխն Միդուսայ և ազդեցութիւն նորա. — Ա.բիւնախանձ մայրապետաց. — Եւմենեայ. — Ճաւերժահարսանեաց Մարգարէին կյլն. կյլն:

Հասարակ ուրուսաեսլեանց մէջ առարկայք անչարժ կը կենան, կամ միայն տեղերնին կը փո-խեն: Բոպերթսըն միտքը դրաւ որ չարժել, քալել, սահուլ, պարել սպ անոնց, և ամենա-կատարեալ կերպիւ յաջողեցաւ: Ե-ՆՆԵ-Չ հա-ձելէ ետ-ոտքն ալ, պրն Խուդոց, այր և կին յի-սուն պարոդէ բազկացեալ պատկեր մը հան-դիսատեսներն լուն զարմացման մը մէջ ընկղ-մեցին: Գաղղիացի կիւսը՝ ուրուականներ, խու-ճապներ, կմախքներ պատրաստել կուտար սրահին մէջ. բուերը, չղջիկները և ուրիշ խաւարի թռըչուններ թռչիլ կուտար: Ետսերը ետևնին գա-նալուն յանկարծ կմախքի մը կամ ճիւաղի մը դէմ առ դէմ կը գտնէին ինքզինքին և սոս-կումէ գալկահար յետս յետս կընկրկէին: Ա.-մենէն աւելի կանայքն էին որ գիսաւնուն վրայ թռչուլ չեղող մը, թևաւոր դորատ մը սոսկալով՝ սաստիկ ճիչեր կ'արձակէին, և տեղերնուն կընել երթալ կուզէին: Ա.յս ամենը շատ զուարճալի էին: Բոպերթսընի չարժել տուած կերպարանք-

ներն իսկականէն ամենևին տարբերութիւն չու-նէին. ասկից զատ տեսարանք, առարկայք բաղ-մադիմի և այնպիսի կերպիւ յօրինուած էին՝ որ ականատեսից հիացումն աստիճանաբար կը գըր-գըռէին: Բոպերթսըն՝ ինչպէս որ ճարտար մարդ-մը պէտք էր ընէր, ամեն անդամ իւր նիստերն ոտնէն յառաջ իւր ունկնդիրներուն սիրտը յու-զելու յարմար փոքրիկ բանախօսութիւն մը կընէր:

«Պարոնայք և Տիկնայք. կըսէր անոնց, ինչ որ այժմ ձեր աչաց առջևէն պիտի անցնի՝ խա-բուսիկ տեսարան մը չէ. լուրջ մարդիկ մեծ իրաւանցը պիտի դանեն անոնց մէջ: Սաուերայ խաւճապից, և կիւսահմայութեան թափուն գոր-ծողութեանց ազդած սարսափը դրեթէ ամեն մարդոց միտքը կը պաշարէ տղայութեան տեսիլ-ներն, և չատերն խոհականութեան տարիքնուն մէջ իսկ դեռ կ'ըզդան զայն: Հրաշալեաց սէրը բա-ւական է մարդկային պարզամտութիւնն բացատ-րելու: Կիւսին խորհուրդ կերթան հարցնել, պատճառ՝ որ կենայ արտաւարտ յօրճանքէն քշուելով՝ իւրաքանչիւր ոք թէ գինքը վարող ալիքներն և թէ արդէն առած ճամբան անհան-դիսատ աչքով մը կը դիտէ. իւրաքանչիւր ոք ա-պագային հայելին քննել կուզէ, որպէս զի մէկ նայելով մը իւր գոյութեան ամբողջ շարունա-կութիւնն տեսնէ հան: Հիմա մեծ մարդկանց սուտերներուն, Ենորհաց, Համբարուաց կյլն անց-նիլը պիտի տեսնէք. յետոյ՝ բայց մի՛ զարհուրիք. Եւմենեայ և Ա.ետուսայի գլխոյն անցնիլը պիտի

տեսնէք, որ ղէպղ չ'պիտի քար դարձնէ: Հուսկ ապա պիտի տեսնէք ծամածռուռ դէմքեր, ուրուականներ, կմախքներ, առլեղիներ (1) և յայտնի դաբար բոլոր արարածներն՝ որ դերեզմանին մէջ և նահատուներ եղերոց վրայ կը բնակին . . . »:

Երևակայութիւններն նախապատրաստելու համար հարկ եղած այս յառաջաբանէս ետքը Բոպերթոնը իր փորձերը կ'սկսէր, որում ներկայ գտնուելու կ'երթար, ինչպէս ըսինք արդէն, Բարիզի ժողովրդեան ամենէն ընտիր մասը. գիտուն, արհեստագէտ, և մինչև անգամ չափաբերակա՛ն . . . Առաջայ ըսել, որ այս ներկայացմանց մէջ երբ պարագայն պահանջէր՝ կայծակը, հողմը, փոթորիկն ամեն սաստկագոչ ձայներն այնպէս ճիշդ նմանցուած էին, որ կարծես թէ առյդ էին: Մեմֆիսի և Եղեսիոի քաղաքներն մի և նոյն հնարքներն ունէին, և նորընծայութեան փորձերուն մէջ կը բանեցնէին զանոնք: Տես այս մասին մեր Կոքթոն Գնչէր անուն երկասիրութիւնը, որոց մէջ Եղեռան Խորհրդոց ճիշդ նկարագրութիւնն եղած է:

Բոպերթոնի բանեցուցած ամեն հնարքներուն վրայօք տեղեկութիւն առնալ ուզող ընթերցողն իր Ցնդռոխոչրոց թող դիմէ. իսկ մեք բաւական կը համարիմք այս տեղ միայն ուրուն (2) անուն գործիքին նկարագրութիւնն

(1) Խորքան տես:

(2) Fantoscope.

ընել, որոյ միջոցաւ կը գործուին այլևայլ ուրուանեսիները:

Գործողութիւնը յաջողելու համար խիստ ընդարձակ սրահ մը պէտք է, որոյ մէկ կողմը միւսէն վարագուրով մը անջատուած՝ գործիքներն տեղաւորելու կը ծառայէ. իսկ միւս կողմը հանդիսատեսից յատկացեալ մասն է: Նուրբ բեհեզեայ վարագոյրը՝ որոյ վրայ պիտի ցոլանան ամեն ուրուանեսիլ պատկերներն, լաւ մը ձգտեալ, և որպէս զի թեթև թափանցկութիւն մը ունենայ՝ նաչիհէ և արաբական խեժէ բաղադրած վերնիճով մը օծուած ըլլալու է:

Ուրուանեսիլեան դլխաւոր գործիքը ուրուէոն ըսուածն է, որ փայտէ անտուկ մ'է երկու քառակուսի ոանաչափ տարածութեամբ. այս անտուկին ներքի դին սպիտակ, իսկ դուրսը սև ներկուած ըլլալու է: Ներսիդիսն հետ հաղորդակցելու համար երկու դուռ կայ սև կերպասներով ծածկուած՝ որպէս զի այն դուռներուն բացուած ժամանակը լոյսը դուրսէն չ'նշմարուի: Աջկողին յատակակոդմը չորս մատնաչափ մեծութեամբ ծակ մը բացուած է, որում հինգ մատ տրամագծով և ինն մատ երկայնութեամբ փայտէ դլան մը կ'ադուցուի: Այս դլանն անտուկին հետ բոլորովին չ'կցիր, հապա քանի մը դծաչափ բաց է անկից. և ահա այս միջոցիս մէջտեղը կը մտածանին այն թափանցիկ առարկայներն՝ որ վերը յիշած սպիտակ վարագուրին վրայ պիտի ցոլանան:

Զորս մատ կիզակէտ և չորս մատ տրամագիծ ունեցող ապակի սկաւառակ մը անցուած է գլանին որոյ դիտակի կողմը գտնուած ապակին(1) ալ երեք մատ կիզակէտ և տասնեհինգ դծաչափ տրամագիծ ունենալու է։ Ա.յս ապակիս երկաթաժանի(2) մը վրայ հաստատուած է, զոր կրնաս շարժական ընել կոպտաւոր չղթայի մը կոճակը դարձնելով։ Ուրուադիտակին ներսի կողմը սահիկ լոյս մը կը վառեն հատեալ կոնի ձևով ցուլացուցչի (3) մը առջև։ Ուրուադիտակին ծրլիննելլոյզը արմկի ձևով ծուռ շինուած է, որպէս զի լոյսը դուրսէն տեսնուելուն արգելք ըլլայ։ Երկու շարժական թիթեղէ կազմուած և խողովակի մը ծայրին յարմարող փոքրիկ պղնձէ գործիք մը՝ դիտական ապակւոյն լոյսը կանոնաւորելու համար անհրաժեշտ է։ Երկու թիթեղներն իրենց առանձքին վրայ իրարու միացած ըլլալով՝ մկրատի մը սայրերուն պէս իրարմէ կը հեռանան և պատկերին պէտք եղածին համեմատ առնուազն կամ նուազ լոյս անցնել թոյլ կուտան։ Ուրուադիտակը սեղանի մը վրայ դրուած ըլլալու է՝ որոյ ոտքերը երկու երկաթէ գծերու ականջաձև ճեղքուածքին մէջ մտնեն, որպէս զի ըստ կամաց կարենայ մարդ յառաջ վարել կամ

(1) Objectif.
(2) Diaphragme.
(3) Reflecteur parabolique.

ետ մղել զայն։ Դործողութիւնը կատարողը մեծ ուշադրութիւն պէտք է ընէ, որ դիտական ապակւոյն յառաջ խաղացումը երկու թիթեղներուն չարժմանցը համեմատ կանոնաւորէ։

Ա.հա այսպէս է թափանցիկ առարկայից համար գործածուած ուրուադիտակ գործիքն. բայց երբ հանդիսականաց թափանցիկ չեղող առարկայներ ներկայացնել ուզուի, օրինակի աղագաւ կիսարձան մը, անդրի մը, ողջ մարդ մը ևն. այն ատեն պէտք է ուրուադիտակին խողովակին տեղ՝ վեց մատ տրամագիծ ունեցող ուրիշ գլանափող մը անցնել, որոց մէջ երկու անդոյն ապակիներ ըլլան. որոց երկուքին միատեղ կիզակէտը ութնէն ինն մատ ըլլայ, և հինգ մատ ալ տրամագիծ ունենան։ Նոյնպէս անհրաժեշտ հարկ է որ արկղին յատակը սև թաւիշով պատած ըլլայ, Որչափ լոյսը աւելի սրատիպ ըլլայ, ցոլացումն ալ այնչափ աւելի կատարեալ կ'ըլլայ։

Ուրուադիտակին ներքև գտնուած սեղանը երեք ոտք բարձրութիւն ունենալու է։ Ա.յս սեղանոյն՝ հայելւոյն մերձենալը կամ անկից հեռանալը՝ դիտական ապակւոյն չարժմանը հետ միանալով, պատկերաց մեծ կամ պղտիկ երեւելուն պատճառ կ'ըլլան։ Ա.յսպէս եթէ ուրուադիտակը բեհեղեայ վարագուրէն ինը կամ տասը մատ հեռու է, պատկերները խիստ փոքրիկ կերեւին. բայց երբ տասնեհինգ կամ տասնվեց ոտք հեռուն տանիս զայն, ութէն մինչև ինն ոտք բարձրութեան կրնան հասնիլ անոնք։

Բոպերթսըն՝ ուրուագիտակին հետ միատեղ խիստ ճարտարարուեստ փոքրիկ գործիք մ՚ալ կը գործածէր, որ պատկերներուն հսկայաձեւ մեծութիւն մը կուտար. ասոր պատճառած արդիւնքն խիստ զարմանալի էին, և դրեթէ միշտ հիացման մրմունջ մը կը դրգռէին. ինքն այս գործիքին անունը դրել էր Կինոսկոպ (*):

Կարի երկար կըլլայ նկարագրել հոս բոլոր այն տեսաբանական, լսաբանական և մեքենական գործիքները՝ որոնցմէ բաղկացած էր Բոպերթսընի գործարանը, մոգական տուփերն, կենճախոզ ապակիները, ճշմարիտ տանայեան տախտակները, գլաններն և անձրևոյն, փոթորկին և կայծակին նմանելու համար հնարած գործիքները՝ որոց միջոցաւ հին ազանչելագործներն չատ դերազանց հրաշքներ կը գործէր: Ս.յս տեղս իբր օրինակ իւր ըրած փորձերէն միայն երկուքը պիտի յիշեմք, գաղափար մը տալու համար ընթերցողին այն յարակից արարուածոց վրայ՝ որով.ք կ'ընկերէր իւր ուրուատեսլական ներկայացումներն:

— Ս.րիւնաշաղախ Մայրապետն. — Հեռատես կոչնակի մը ձայնը կը լսուի.... լուսնին աղօտ նշուլիւքն դոյզն ինչ լուսաւորեալ մենաստանի մը խորն արիւնլուայ կին մի երեսն կուդայ՝ մէկ ձեռքը կանթեղ մը և միւս ձեռքը դաշոյն մը բռնած. յամրաքայլ յառաջ կ'իջնայ՝

(*) Megascope animé.

անհանգիստ աչքով մը իւր տեղւոյն առարկայն որոնելով: Շարունակ յառաջ կուգայ և այնքան կը մօտենայ հանդիսականաց, որ սոքա տեսլեան սոյդ ըլլալուն վրայ խաբուելով՝ անոր ճամբայ բանալու համար նստած տեղերէն մէկդի կը քաշուին:

Եունկի իւր դուստրը թագելը. — Գուժատու զանգակի մը եղերական թնդիւնն կը լսուի.... լուսնի լուսով լուսաւորեալ դերեզմանատան մը տեսիլն: — Եունկ իւր պաշտելի աղջկան դիակը գրկեր կը տանի... գետնափորի մը մէջ կը մտնէ, ուրտեղ շատ մը շիրիմներ կանգնուած են: Եունկ ձեռօքը առաջին տապանաքարին կը զարնէ. կմախ մը երեան կելնէ... Եունկ յետս կ'ընկրկի. — դարձեալ յառաջ կուգայ և երկրորդ տապանաքարին կը զարնէ. յանկարծ սուր մը դուրս կուգայ անկից՝ և կրսե իրեն. — ա՛ն, նոր էր: «Աղջիկս համար ջերեզման մը» պատասխան կուտայ Եունկ: — Սուրը իւր գերեզմանը անոր կը թողու, և տարաբաղդ հայրն իւր բեռը հոն կը տեղաւորէ: Ս.յն ինչ գերեզմանը նորէն կը գոցուի և ահա իւր աղջկան հոգին դուրս կ'ելնէ անկից և երկինք կը թռչի, Եունկ ծունր կը դնէ և ձեռնամած աչքերն երկինք յառած կը մնայ:

Ուրուատեսլական հնարիւ այս սուղ քաղուածէս կրնայ երևակայուիլ թէ հանդիսատեսին վրայ որքան սաստիկ ներգործութիւն կրնէր այն:

Իւր նորահնար դիւտիւ մասին ունեցած հան-

ճարտին անուանի մարդ մը՝ Բոպերթ Հուտէն՝ մեր արդի ձեռնածուներուն ամենէն ճարտարը զուարճալի բնագիտութեան (*) այնպիսի խաղեր, կընէ որ հին ատեն կրնային հրաշքի տեղ անցնիլ. իր արուեստակցացը պէս քարտիզի, ակահակի և ձեռնածուական խաղերով չ'բաւականանալով՝ Հուտէն՝ ելեքտրականութիւնն ու ելեքտրամագնէսներն ալ կրցեր է՝ ի կիր դնել. ասոնց ճարտարութեամբ կիրառութիւնն իր փորձերէն չատին հրաշալի դրուագ մը կուտայ։ — Իր ֆոսֆորեսցեոները՝ գլուխ գործոց մեքենագիտութեան. — իր տրոմբոնը՝ առանց որ և իցէ կապի մը դեռևին գամուած. — իր եղջեռնը՝ որուզած երգերը կը նուագէ, առանց հիացումը կը գրաւեն։ Բայց հանգիստանալու վրայ ամենէն աւելի ազդեցութիւն ընողն և զանազան լուսաւորութեան մը մէջ ձգողն իր անոպտելէ ղէշ է, որով մէջէն Հուտէն ուզողին առնեսակ և ամեն գոյն գինի կը մատուցանէ։ Այս նշանաւոր փորձս հրաշանման բան մըն է։ Ե՛լ լուսութեամբ կանցնիմք այն միւս հազարաւոր խաղերուն վրայէն, որ այս ճարտար ձեռնածուին մոգական ներկայացումներն կը կազմեն։

Բոպերթ Հուտէնի փորձերուն չատերը՝ որք ռամիկը յաղուշ կը կրթեն, գիտնոց խիստ մեծ հետաքրքրութեան նիւթ կընծայեն. վասն զի այս վերջինս արուեստին ճգանցը մեքենական

(*) Physique amusante.

խորին հմտութեանց հետ միանալը կը տեսնէ յայնմ։ Հուտէն միմիայն ճարտարաձեռն մէկը չէ, այլ հետազնին խորամուխ մտքի տէր անձ մը՝ որ գիտութեանց հրաշալի մասերն կը գտնէ, կը հնարէ և իր արուեստին չահ հանել կը ջանայ անկից։ Ի մի բան՝ բնագիտութեան զուարճացուցիչ մասին ոգին է այդ մարդը։

Կատարեմք հոս խօսքերնիս՝ եզրակացնելով, թէ նախնի հրաշագործութեան ի կիր առած հնարքներուն չատերն դրեթէ ուրուանէալեան և զուարճալի-բնագիտութեան հնարքներուն նոյն և նմանն էին։ Պարտախաղութիւնը կամ որովայնախաղութիւնն ալ որ մեծ դեր մը կը խաղար հոն. (Տես այս մասին մեր Ա-ն և Ինոչ պոմպոնեան մէջ այն գլուխը, ուր այս որովայնախաղութեան և ամենէն անուանի որովայնախաղիչ վրայօք մանրամասնաբար ճառուած է) ուրիշ բանով չէ, բայց եթէ մարդկանց երևակայութիւնը բորբոքելով էր որ նախնի հրաշագործք իրենց արհեստին աստուածայնութեանն հաւատացնել տալու և ժողովրդոց յարգն ու պատկառանքը գրաւելու չահոզած էին։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԵՐԵՄՈՒՆՔ

Խիստ հին ժամանակներէ հետէ աստուածոց, աստուածուհեաց և կիսաստուածոց՝ մարդկային կերպարանաւ, նոյնպէս բարի և չար ոգւոց և քիչ կամ շատ երկար առեղծ՝ ի վեր մեռած մարդկանց աստուերաց կամ ուրուաց երևմանը կը հաւատային։ Ա.յս աստուերները յաչխարհ կը վերադառնային կամ կարևոր բան մը խնդրելու կամ տռանալու, և կամ եթէ իրենց խնդիրքն չկատարուէր՝ անհանդիստ ընելու կամ տոկոսմ աղդելու համար։ Ա.յս անտեղի հաւատքս՝ ուսկից հանճարեղ անձինք իսկ խուսափելու չէին զօրեր, աստուածպետական դատն ձեռօք ընդարձակօրէն բանեցուելով՝ մեծ շահուց աղբիւր դարձած էր անոնց։

Հեթանոսաց մէջ աստուածոց երևմանէն աւելի յաճախադէպ բան չկար։ Չ'էր ըլլար օր մը՝ որ մէկ քանի դիք Ողիմպոսէն չիջնային սէր երդելու մի քանի գեղանի օրիորդաց, կամ մէկ քանի դիցուհիք մի քանի վայելչադէմ պատանեաց այցելութիւն չընէին։

Ամեն անգամ որ հրաշագործ մը ձեռք բերել ուզէը այն բանն՝ որ կը մերժէին իրեն, իսկոյն աստուածուհիները միջամուխ կընէը խնդրոյն.

եթէ մերժումը չարունակէին՝ այն առեն զարհուրելի երևումներ կը դործածէը, որովք գրեթէ միշտ հպատակնուն կը հասնէին։ Սակայն այս տեղ հարկ է ըսել՝ որ հաճոյական, բարերշանիկ երևումներն՝ ահռելի, սարսափելի երևումներէն աւելի սաէպ տեղի կունենային։ Ա.յս մասին հին հրաշագործներն նուազ մազձոտ, կրնամ ըսել նուազ դաժան էին քան թէ միջին դարու հրաշագործներն՝ որ ամեն ուրէք ուրիշ բան չէիր տեսներ բայց միայն դևեր, ուղտաքաղներ, վարդապետի քաչեր, (1) յարալէզներ, և այլ խել մը զազրելի ահռելի կերպիւ տղեղ երևակայական առեղծուածներ։

Աստուերաց, ուրուականաց, դամիայից (2), դորդոնեայց, յափշտակիչ կանադէմ անդեղց (3) և այլն երևումներն՝ առանք յառաջ բերողներուն բառական մեծ կամ շահ կը հայթայթէին։ Ա.րդ՝ ոլիմպիական աստուածոց պաշտօնեաներն մարդոյս աչքը մոգելու, երևակայութիւնը բորբոքելու և թալուկ, զառանցանք, մէկ խօսքով բոլոր ինչ որ բանավարութիւնը փճացնող բան կայ՝ գայն յառաջ բերելու դաղտնիքը գիտէին։ Երբ մարդը լաւ մը ուղեղային բորբոքման և ֆիզիքական չլսաման վիճակի մէջ դնէին, այն առեն անոնց փափաքին գեղատեսիլ առարկայքն

(1) Ֆարա գոնհոզ։
(2) Մանկակիր կանայք · չեմ գիտեր գարը։
(3) Harpies.

անոնց առջևէն կանցնէին, և կամ ահագին ձևերու, ծամածուռ դէմքերու, հրեշագէմ խուճապներու, վիթխարի և ահարկու էակներու եւ բնոյթներով անոնց աչքառիւթիւն։ Սակայն անդին պիտի տեսնեմք՝ որ նախնի հրաշագործաց դործածած մի և նոյն հնարքներովն այսօր ալ մի և նոյն արդիւնքն կրնան յառաջ բերել։ Այս տեղ այդ աղդաց պատմութեան մէջ չիշատակել դիտաւոր երևոյթներէն մի քանին պիտի չիչեմք մէք. սակայն յառաջուց ընթերցողին ծանուցանելով, որ այս երևոյթներս ընդհանրապէս որ և է կրքի մը բուռն սաստկութեան առեն բորբոքեալ երևակայութիւններէ, զարհուրելի աչքեր, վշտաբեկ սրտեր տեսնուել են միայն։

Կրանն թէ Պիւթագորաս և Թալէս երբեմն ինքզինքնին խորին մտածմանց տալու համար անմարդ տեղւանք կ'առանձնանային, ուրտեղ դև մը կ'երևնէր իրենց։

Բոլոր աշխարհ դիտէ թէ Սոկրատ յաճախ տեսակ մը ներքին հիացման ենթակայ կըլլար, որք արտաքին աշխարհէն կըմեկուսացնէին զինքն. և թէ այս տարօրինակ վիճակիս մէջ դիւի մը կամ ընտանի ոգւոյ մը հետ կը խօսակցէր։ Սա ալ ըսեմք որ դիւերու առաջին դաղափարն Քաղդէացւոց մէջ ծնունդ առած, և անկից աշխարհի զանազան ազգաց մէջ տարածուած է։

Կրանն թէ Յուլիոս Կեսար Բիւպիքոն դետն անցած տեն ուրուական մը տեսաւ, ինքն իսկ կ'խոստովանի որ այն միջոցին անպատմելի երևա-

կայական դրդռման վիճակի մը մէջ կը դտնուէր։

Եթէ Բրուտոսը յապուշ կրթող տեսիլքն առասպել մը չէ, ինչպէս որ միամիտն Պլուտարքոս ակնարկութիւն ունի այնպիսի առասպելներ պատմելու, մտային սաստիկ յառման (1) մը արդիւնքն պէտք է համարել, որ ուղեղային համակրութիւն (2) մը սկսած է արդէն պատճառել։ Անհատական եղելութիւնն՝ ինչպէս Պլուտարքոս կը պատմէ զայն։

Բրուտոս՝ Հռովմայ առաջին բռնապետն վռնտողն, իր բանակին հետ չուելուն առաջին գիշերը անքուն մնացած կը հսկէր իր վրանին մէջ, որ մէկ կանթեղով մը միայն լուսաւորուած էր. գիշերը նեմմաստաւեր էր և իր զօրքերն ի խոր քուն ընկղմած էին։ Խորին մտածութեան մը մէջ ընկղմած՝ մերձաւոր ճակատամարտի մը ինչ ելք ունենալիքին վրայօք հաշտարար երկիւղներ միտքը պաշարած էին, երբ յանկարծ իր քովը մէկու մը չնչառութեան ձայնն առնուլ կը կարծէ. ակնարկը վրանին մուտքին կողմը կը նետէ, և ի՛նչ տեսնէ աղէկ. ահռելի կերպարանք մը, ճիւաղակերպ իրան մը որ իրեն կը մօտենայ և դիմացը կը կանգնի։

— Ո՛վ ես դու, կը հարցնէ Բրուտոն. ասուած ես թէ մարդ. ի՛նչ ընելու եկել ես հոս և ի՛նչ կուզես ինէ։

---

(1) Contention.

(2) Congestion.

— Քաւ չար ոգիդ եմ ես, պատասխան տուաւ ուրուականը. քիչ առեղէն, Փիլիպպէ, դաշտերուն մէջ վերսաին պիտի տեսնես դու զիս։

— Լաւ. ըսաւ Բրուտոս անխռով կերպիւ. կը տեսնեմք զքեզ հոն։

Խուճապն անբևեռյի եղաւ. Բրուտոս իր մարդիկները կաչելով հարցուց թէ մէկու մը վրանը մնալէն կամ անկից դուրս ելնելէն տեսած չէին արդեօք։ Ոչ պատասխան տուին ամէնքն ալ։

Փիլիպպէի ճակատամարտին նախընթաց երեկոյին՝ յորում հատարակապետութեան բազդը պիտի որոշուէր, մի և նոյն խուճապն ներկայացաւ իրեն առջև. ժամանակ մը աչքերն իւր վրայ յառեց և անբևեռյի եղաւ՝ առանց բառ մ'անդամ արտասանելու։

Երբ Բրուտոս այս տեսիլքս իւր Կասիոս բարեկամին պատմեց, սա գինքը ծաղր ընելով պատասխան տուաւ.

— Խե՛ղճ Բրուտոս, առոնք քու այս վայրկենիս միտքդ պաշարող մտմտուքներն են. ուղղիդ տենդը յառաջ բերել է այդ ուրուականը։

Գալիկուլային խռովազմանէն մի քանի օր յառաջ՝ պալատին պահակապանքն դիշերը բոցեղէն սրով գինեալ ուրուական մը տեսել էին։

Յուլիանոս կայսրը իւր մտերմաց կը պատմէր թէ՝ այն ժամանակն որ իւր զօրքերն կ'ատիպէին գինքն կայսրութիւնը յանձն առնուլ, ոգի մը երևցաւ գիշերը, իրեն նշան ըրաւ որ իւր բանակին փափաքանացը հետևի, և անմիջապէս ճամբայ ելնէ Հռովմ երթալու համար։

Կը հաւատան թէ բարի ոգի մը այդ ըրաւ Տրայլեանոսի, որ Անտիոք քաղաքը անմիջապէս թողու ելնէ, որպէս զի երկրաշարժին զոհ չ'ըլլայ. որ արդարև պատահեցաւ՝ արքայն քաղաքէն դուրս ելնելուն պէս։

Պատանիութեան մէջ հետևեալ եղելութիւնը կը կարդամք։

Լիբատայ (*) ուրուականքն ամեն տարի կուսի մը արիւնռուշտ զոհն կը պահանջէին. Եւթիմիոս ըմբիշը այս բարբարոսական սովորութեանս վերջ տալու համար ապարէզ կը կարդայ Լիբատայ ուրուականաց, որք անհեթեթ գայլու մը կերպարանքով իւր վրայ կը խոյանան. քաջասիրտ ըմբիշը՝ ճիւաղը իւր կօրովի բազկացը մէջ կը սեղմէ և գետինը կը տապալէ զայն։ Յաղթեալը խայտ կուտայ և կերթայ ծովուն մէջ կը խորասուզի. բայց ուրուականին դասընկերներն՝ այսինքն քուրմերն չատ չ'անցաւ Եւթիմիոսի վրայ թափեցին վրէժխնդիր. վասն զի այն օրէն 'ի վեր քաջասիրտ ըմբիշը մէկ մ'ալ երևան չ'եկաւ։

Փութամբ ըսել, որ մանկամարդ աղջիկը հա-

(*) Այս Լիբատայ Ոդիսէի ընկերներէն մին էր։ Թէմեսի մօտ ցամաք ելած ըլլալով՝ մանկամարդ կոյս մը սկած ըլլալուն համար քարկոծուեցաւ այն տեղ։ Ասոր համար երկիրնուն մէջ ժանտախտ պատահելով՝ խարեբայ մարդիկ այնպէս հաւատացուցին թէ Լիբատայ վրէժխընդրութեան արդինքն էր այն. ուստի զանի ամոքելու համար տաճար մը կանգնեցին անոր։

ման կ'առանամ. հրեշտակ մըն է ինձ այդ պատուէրն հաղորդողը։ Նախ կարծեցի որ դպրատան մէկ պատրաստքն, կամ երաշխ մը արդիւնքն էր այդ. բայց այս ժամուս առաջ Տիրոջը կամքն ըլլալուն վրայ ոչ ևս կրնամ տարակուսիլ։»

Ս. յայտնութենէս առաջինակ կերպիւ յապուշ կրճած՝ պատասխան տուի իրեն. — Թո՛ղ Տիրոջը կամքը ըլլայ, եթէ արդարև այդպէս է իւր կամքն. բայց ոյպէս կի մնաք զմեզ մեզագրելու բան մը չունենանք, թոյլ տուր ինձ որ առաջնութեամբ վերահասու ըլլամ թէ իրօք Տէրն է խօսողը, և այս առիթ հրեշտակին այցելութեանն սպասեմ։ Ս. շխիդուքը հաւանեցաւ առաջ. ուստի դիշեր ըլլալուն պէս հրեշտակին սպասեցինք, որ իրօք նկաւ և երկնից հրամանն կրկնեց։ Աքսոնիոյ իշխանը իսկոյն երկնաւոր պատգամաբերին վրայ կը խոյանայ, հուժկու ձեռքով մը զայն կ'ըմբռնէ, և դէպ ի բաց պատուհան մը մղելով զանի կը գոչէ. — Եթէ թե ունիս՝ ծն ուրիմն թռէ։

Հետևեալ առաւօտուն պատուհանին ներքեւ բակին մէջ ձիշտ ևիմի մը քարտուղարդ եղած դիակը գտնուեցաւ։

Պղատոն տեղ մը ըսած է թէ, երբոս անուն մէկը՝ մեռնելէն առաջ իւր բարեկամացը երևցաւ և շատ ճարտար կերպիւ բարիներուն և չարեաց վրայ ճառախօսեց։ Պղատոն շատ երևակայական էր։

փափելով տեղը ուլ մը կը յաղէին, իսկ աղջիկը հեռու տեղւանք խրկելով իբր աղախին կը վաճառէին։ Ինչպէս որ կը տեսնուի՝ Լիբասայ տարիին պաշտօնեայներն տարեկան եկամուտի մը աղբիւր ըրած էին այդ բանը մինչև այն օրն, որ քաջն Եւթիմոս Թէմեսեայ քաղաքը անկից ազատեց։

Երեսուն տարու միջոցի մը ևոքը՝ ուրիշ դէպք մը, որ վերոյդրեալ դէպքին հետ շատ յարմարութիւն ունի, Վիէննա տեղի կ'ունենար արքիդքոին պալատին մէջ, որ յետոյ կայսր եղաւ Յովսէփ Ա. անուամբ։ Ս.հաւասիկ այն հղելութիւնն կ'պատմեմ այնպէս, ինչպէս որ կը պատմէր զայն Օգոստոս Բ. Սաքսոնիոյ իշխանը։

Ս. շխիդուքը և ևս սրտղղութեան և զանազան մարմնամարզութիւններն շատ կը սիրէինք. ճաշակի այս համաձայնութիւնս զմեզ անբաժանելի ըրած էր իրարմէ։ Երկար ժամանակէ հետէ սերտ մտերմութեամբ կապրէինք իրարու հետ. երբ յանկարծ արքիդքոին վարմանց կերպերուն մէջ զգալի ցրտութիւն մը նշմարեցի, սկսայ զինքը նեղը դնել որ այս բանիս պատճառն ըսուցէ ինձ. նախ դոյզն ինչ ընդդիմացաւ, բայց վերջապէս զիշաւ խոհանձանացս։

— Տէրը այնպէս կուզէ, ըսաւ ինձ օր մը, որ մեք իրարմէ բաժնուինք. քու գաւանած կրօնդ է անշուշտ այդ բանին պատճառը (իշխանը բողոքական էր)։ Ս.հա քանի գիշեր է, բանկանմ, որ չարաշնակ քնեք բաժնուելու հրա-

Պլինիոս կը պատմէ թէ, Կապինիոս անդիի աշխարհ.քէն եկաւ, որ Պոմպէոսի ծանուցանէ թէ դժոխային դիք գոհ էին իրմէ և թէ իւր ձեռնարկը յաջող պիտի ելնէր։ Պլինիոս կարի դիւրահաւան էր։

Ենարքոս չատ օրեր նախմասուեր թագաւորութեան մէջ կենալէ յետոյ յերկիր վերադարձաւ և բարեմիտ Պլուտարքոսին՝ Ս. բադամանդի, Նակէի և Մենոսի վրայօք խիստ հետաքրքրական չատ մը բաներ պատմեց։ Պլուտարքոս ամենէն անհերթեթ առասպելաց իրականութեանն կը հաւատար։

Փղիդոն ամենայն լրջութեամբ կը հաստատէր, թէ Բիւպլիոս բանաստեղծը դայլէ մը դիչատուած ըլլալով՝ չատ տարիներ եռքը Հռովմայ մէջ երևցաւ, և Հռովմէական կայսրութեան կործանումը դուշակեց։

Զ՚է՞ որ նոյն ինքն Ս. ըիստոտէլ տկարամտութիւն ունեցած է վկայելու, թէ Ս. բամպղայ քրմերքէն մէկը՝ որոյ դլուխը կարել էին, մեռնելէն երկու օր եռքը երևնալով ինքն սպանողին անունը տուաւ, որ ձեռբակալ ըլլալով դատուեցաւ՝ կախուե՛ցաւ։

Ս. Ս. բողոտորի Ս. Թինայի մէջ տեսած ճիւաղը (*) լուսթեամբ կանցնիմք. վասն զի աւոր չ՚հաւատալու բաւական ղօրաւոր պատճառներ կան։ Պլինիոս Կրտսերն չափազանց դիւրահաւան էր։

(*) Խօրթլագ։

ան ըլլալնէն հանդերձ՝ իւր հօրեղբօր պատմած Ս. բողոտորի արկածն երաշխաւորելու չ՚է համարձակած. ուսկից հետևցնելու համք թէ Ս. Թինայի ճիւաղն՝ ամեն ճիւաղաց նման սոսկ եղջերուաքաղ մ՚է։

Հին աղգաց պատմութեան մէջ այսպիսի սղելութիւնք կը վխդան. իսկ միջին դարը ա՛լ աւելի բազմաթելուն է այս մասին։ — Տգիտութիւնն այնքան սաստիկ էր, անապաշտութիւնն այնքան խորունկ քանդակեալ էր աղգաց սրտին վրայ, մինչ բաւական էր որ մարդ ըսէր թէ դիշերը դերեզմաններուն չուրջը խուճապի մը թափառելը տեսել էր, և ահա դիւղերն և մինչև իսկ ամբողջ քաղաքներ ահուդողի մէջ կընկնէին։ Ամեն մարդ իւր դուռը կը դոցէր. դիշեր ըլլալուն պէս ալ մարդ չ՚էր համարձակեր անէն դուրս ելնել՝ որ չըլլայ թէ ուրուականին, ճիւաղին և կամ հանդիպի։ Եւ այդ ժամանակի խմաստուն քահանայ մարդկային բանաւարութեան այս աստիճան նուաստացմանս դարմանն տանելու, զայն մշտաւոր ընելու կը ջանային. պապերն, համբարուներն(1), հմայիչներն(2), կախարդներն, առլէղներն(3), սադայել և իւր լեգէոններն, այս ամենը կըսէին, չղթայազերծ ոտք եղած են որ մարդիկը անհանդիստ ընեն, ահուդողի մէջ ձգեն.

(1) Ռմկ. մեղմէ աղեկները։
(2) Պ իչիճի։
(3) Խօրթլագ. բերի։

և որ վաթսարադոյնն է, անոնց հոգւոյն կորըստեանը պատճառ ըլլա՛ն . . . . Եւ ասոր հետևանքն էր տեսակ տեսակ յուզումներ(*) դրծածել, իրարու վրայ երես նշանադրել, և ուրիշ հազարու մէկ անօթեւանական արարմունք: Ա.ա՛ղ. այս տխրամած դարս կրնայ անուանուիլ մարդկութեան ոգոյ ժամանակն:

Որո՞ւն հաւատալը կուգայ թէ անցեալ դարուն մէջ՝ հակառակ այն լուսաւորութեան հեղղեղին, զորս Հանրագիտական բառգրքին հեղինակներն Գաղղիոյ վրայ սփռեցին, ժողովրդեան մեծագոյն մասին միտքն տակաւին տգիտութեամբ էր այս անտեղի գաղափարներովս, և թէ այսօրուան օրս անդամ գիւղացւոց մէջ անոր ծիլը բոլորովին չնչուած չէ:

Ա.յս տեղ դեռ մէկ քանի օրինակներ ալ յիշեմք, որպէս զի ընթերցողն կարող ըլլայ ինքն իրեն դատումն ընել այս մասին:

Սբ. Դոմինիկոյ ժամանակագրութեան մէջ կը կարդամք, որ երեկոյ մը վանականներն ընթրելու երթալնուն՝ տեսան որ ժամանակաւ մեռած աբեղաներ եկել սեղանատան մէջ լեցուել էին, որք կըսէին թէ դժոխքի դատապարտուած էին: Անտարակոյս Ա.ատուած խրկել էր այս մեռեալ վանականներս, որպէս զի ողջ մնացող վանականներն ապաշխարանքի բերէ:

Քամերարիոս՝ անշուշտ զուարճանալու հա-

(*) Նուսխա:

մար գրել է, թէ իւր ժամանակը յաճախ եկեղեցեաց մէջ աբեղայի և մայրապետի զգեստ հագած անգլուխ ուրուականներ կը տեսնուէին, որք ալ-ալին դէպ դէպ կը բռնային. ասոնք այն կրօնաւորաց և կրօնաւորուհեաց նստարանացը և կամ ամռոնեներուն վրայ նստած կը տեսնուէին, որոնք քիչ առենէն պիտի մեռնէին:

Լուսէր չատ անգամ ատատնայն կը տեսնէր, հետը կը վիճաբանէր, անոր փաստերը իրեն դէմ կը դարձնէր, և մինչև անգամ անոր հետ ծեծկուելու չափ կը բարկանար՝ երբ ատատնայն անոր իրաւունք չտալու համար անոր միտքը չհասկնալ կը ձևացնէր:

Ա.յս տեսակ անտեղի առասպելներն ժողովրդեան մէջ առատութեամբ կը սերմանուէին միսթիքներու, երազատեսներու, կամ դիւրահաւատ և աւելորդապաշտութեան տարածուելուն մէջ շահ ունեցող անձանց ձեռօք: Անոր համար հրեշտակներու, դևերու, քաւարանի, հոգիներու, ուրուականներու, խաւճապներու, ամենէն ահաւոր գաղաններու կերպարանօք երևմունքներն այնքան բազմացան, որ օր չկար որ մարդ մէկ քանի տեսիլքներ մէկէն չտեսնար: Բարե՛. չատ խղճալի բան էր այս հաւատացողներուն համար, և չատ ամօթալի՝ այս առասպելացս հեղինակներուն համար:

Բուսական թագով զրպտեաներ մեծահատոր գրուածքներ շարադրած են, ուր ամենէն այլանդակ բանդագուշանքներն, ամենէն անհեթեթ

արտակերդրոնութիւնքն ու անաչդութիւնքն նը-
չանակուած են : Հետեւեալ տողերն յիշեալ դըր-
քերուն տարօրինակ խառնափնթորութեանց վը-
րայօք դոյզն գաղափար մը կրնան տալ ընթեր-
ցողաց :

«Բէէմովթի անունց՝ որք մեղապարտ անհատատու-
թիւն ցոյց տալ կուզեն : Երբ որ հրեշտակ տեա-
ուրն աղօթքին (անճելիւս) կոչնակը զարնուած
տեսն գժբաղդաբար փոխնկնդ գայ, չո՛ւտ և-
րեսըդ խաչ մը հանէ . վասն զի չար ոգին գա-
րանակալ կեցած կ'սպասէ . և երկրորդ անգամ
փոխնչելու համար ուժով մը օդ ծծած տեսնդ
կրնայ մարմնոյդ մէջ մտնել : Եթէ այս աղգա-
րարութիւնս բանի տեղ չ'ես դներ, գդո՛յշ կե-
ցիր . . . : Բէէմովթէն ըմբռնուելը սովորաբար
յայտնի կըլլայ բուռն փքերով՝ որք փորին մէջ
կը յուզին ուժգին բոմբիւններով անտանելի
փորի խթիթ կը պատճառեն : Մարդը այն տեսն
կը դառնայ կըլլայ տխուր, վէս, ընկերութենէ
կը փախի, և ալ ուրիշ մտածմունք չ'ունի՝ բայց
եթէ ի՞նչպէս կրնայ թշնամին վանել. բայց չ'կայ
բժիշկ մը որ կարող ըլլայ զայն վանել . . . .
Բէէմովթի միշտ կ'ուռնայ . . . մինակ եկեղեցին
մամ վառելը, իննօրեայ պաղատանքն և մէկ մ'ալ
երդմնեցուցումն (*) կրնան գիւաց այս իշխանս
մարդոյն մարմնէն դուրս հանել :»

Վերապատուելի Հայրն Տօն Քալմէ իր կե-

(*) Էքսուն . ձին չըգարմա :

նացը տասը տարին վատնած է երևմանց և մարդս
ի կորուստ մատնելու համար այսոց ի գործ
դրած խորամանկութեանն ու վերջին հնարքներուն վը-
րայօք չորս տուող հատոր գիրք չարադրելու
համար, որոց մէջ կը հաստատէ թէ ինքը տե-
սած է դիւահարներ՝ որք գիշեր ցերեկ տատա-
նայէն կը տանջուէին : Պիղծ այսը մերթ անունց
քիթը, թևը, սրունքը արիւն հանելու չափ կը
կճէը, մերթ ականջնին կը քաշէը այնպիսի կեր-
պիւ՝ որ ցաւուն չդիմանալով կը պոռային : Ու-
րիշ անգամներ ալ այն մարդոց չուրջը այնպիսի
զարիր և գարշելի հոտ մը կը բուրէը, որ հին գրա-
նուողներուն դրեթէ թալուկ կը պատճառէը :
Վերապատուելի Հայրը կը կարծէ թէ մեր չուրջը
տուք եղած դիւաց դնգերն անթիւ անհամար են :
Օրին մէկը մինչև երեսուն հազար փոքրիկ տա-
տանայներ համրեց, որք անճոռնի ձևեր ու կեր-
պարանքներ ունէին : Ս. յս լեգէոնացս դիւաուր-
ներուն անուններըը իրեն ըսածին նայելով հե-
տևեալներն են :

— Աբոռեակ կամ Լոռքբե . պետ կամ թա-
գաւոր :

Բեելզեբուղ . երկրորդ պետ . իւր նախարարը :
Ասպարովը . իշխան աթոռոց :
Բեհեմովը . առաջին զօրապետ :
Բեղբէթովէ . երկրորդ զօրապետ :
Աբխան . հազարապետ :
Ասթոքը . հարիւրապետ :
Գեզարոսդ . թիկնապահ :

Եւ այլ խել մը անհամար լէգէոնաց սպայներ՝ զրս ձանձրալի կըլլայ հոս մի առ մի թուել։ Ուրիկ՝ ալ դաժէ է, Տէր Ս.ստուած, Հայր կալմէ այս ամենայիմարական առասպելներու։ – Պարզապէս միսիքական հիացականութեամբ կարի դրգռեալ հիւանդ ուղեղի մը մէջէ։

Հայր Կալմէի հաղարաւոր վէպերէն միայն մին յիշեմ հոս։

«1706 ին՝ Մայիս 22 ին, կը դրէ, Բարիզու մօտ Սէն-Մօրի մէջ տարօրինակ դէպք մը պատահեցաւ, որ մեծ տարաձայնութեանց պատճառ եղաւ։ Ոգի մը՝ դև մը անշուշտ, ամէն դիշեր տուն մը մտնելով քանևչորս քանևհինգ տարեկան պատանի մը կը չարչարէր։ Օր մը այս հատակաւոր պատանին կը տեսնէ որ դուռը կրկին փականքով ինքնիրեն կը դոցուի, և մի ևնոյն վայրկենին մեծ դարակի մը երկու փեղկերն ալ բացուին ուժգին ձայն մը կելնէ անկից, որ կը հրամայէ իրեն ինչ ինչ բաներ ընել՝ Ոչ-ո՛չ էին որոնք բսան տարի ժամանակի մէջ, և մանաւանդ այդ դատաստիքը մեկուն չէ յայտնել։

Ի՞նչ բաներ էին արդեօք իրեն հրամայուածները, զոր վերապատուելի Հայրն չէ ուզած ըսել. բայց իւրաքանչիւր օր կրնայ խորհիլ թէ սատանայ բսած դ յոռի, անպատեհ բաներ միայն կրնայ հրամայել։ Խելքը գլուխը մարդ մը բնաւ կարելի՞ է որ այսպիսի բան մը դրէ . . .

Յովհաննէս Ուիէրը՝ երազատես բժիշկ, իր կենաց մեկ մասը անկարելին վճռաբանելով անցուց.

իւր չար ոգիներուն և այսական դևդերուն վերայօք ըրած հաշիւներուն նայելով՝ Տօն Բօմիէի ըրածները բան մը չ'են։ Երեսուն տարուան մանրամասն հետախուզութիւններէ յետոյ՝ Յովհաննէս Ուիէրը վերջապէս հաշուեց դատ այն պիղծ այսոց թիւն՝ որ ևօթն միլիոն չորս հարիւր հինգ հազար լինն հարիւր քսան ևօթնի՛ կը հասնէր։ Իր Ֆարֆարէթներուն (1) վերայօք դրած դրքին մէջ՝ յորում այլանդակ անճոռնի տղայաբանութեանց կոյտ մը դիտցած է, այս ևօթանասունևհինն իշխանաց անուներն, մականուններն ու պատուանուններն կուտայ, և երկար բարակ անոնց ներքին բարուցը վերայ կը ճառէ։

Յովհաննէս Ուիէրը չ'կրնար ուրիշի հետ բազդատուիլ՝ բայց եթէ Պերպիկիէի հետ, որ մեր դարուն սկիզբն երեք հատ ստուարահատոր մատեան հրատարակեց նկնահատակ չնչին վրայ (2)։ Ա.յս մենամարտ այնպէս կերևակայեր թէ այդ գաճաճ ոգիներն իր անկոչնոյն մէջ կուդային ղինքը կը պաշարէին, ինչպէս որ թըզուկներն Հերակլէսի կրնէին։ Ուստի ատոնց դիմացուելութենէն ինքզինքն ազատելու համար խոշոր դնդասեղներ ճարեց և ամեն անդամ որ այդ ճիւաղիկներէն մին ձեռք անցուներ, իր վերմակին վրայ կը բեւեռեր զանի, ինչպէս որ միջատաբան մը միջատներն խուցաքարտի մը վրայ կը

(1) Farfadet.
(2) Prestigès.

փակցնէ։ Ա.յս օրինակ խենթութեանց առջև որ և է մեկնութիւն ընել աւելորդ է։ Ա.յսօրուան օրս այն չինականն՝ որ ՝ի տղայ տիոց երկիւղնեբով միտքը պաշարուած չ'է, և իւր ուղիղ դատողութիւնն պահպանած է՝ այս տեսակ աղճատաբանութեանց վրայ բարձրաձայն կը ծիծաղի։

Երեմանց և տեսլեանց վրայ դրող և իրօք այս բանիս համոզեալ հեղինակներն յոգնաթիւ են. ասոնք կրնան մենամարները համարուիլ, ոբոց չաղփաղփուն երևակայութիւնն ամեն ուրէք ոգիներ, դևեր տեսնել կուտար իրենց. ինչպէս տերևոց սոսաւիւնին մէջ, հողմադրօշի մը, դրան մը ճռնչելուն, կարասւոյ մը չառաչիւնին մէջ կ'լսէ։ Ա.յս մարդիկս թէև ուրիշ ամեն պարագայից մէջ խելքերնին գլուխնին մարդիկ, բայց իրենց մենամոլութեան ազդեցութիւնն կրելնուն պէս՝ խելքերնին կը կորսնցնեն։

Եւ հիմա՝ որ ընթերցողն այս կարծեցեալ երևմանց անկարելութեանն խելամուտ եղաւ, մեք պիտի ցուցնեմք կաղմաբանօրէն՝ թէ երեւմունք ըսելով ի՞նչ հասկնալու ենք, և թէ ինչ կերպիւ կրնան առօնք տեղի ունենալ։

Ա.մեն անգամ որ մչտայեռ գաղափար մը, բուռն կերք մը՝ ինչպէս են օրինակի համար սէրը, երկիւղը, յոյսը կ'լսէ մէկու մը վրայ կուգայ, նախ ուղեղի դրգռութիւն կը պատճառի. այս չարժառիթս չարունակաբար գործելով՝ այդ դրդռութիւնն որ յառաջ սովորական, կանոնաւոր բան մ'էր, մանաւոր ժամանակէ մը ետքը ախ-

տային վիճակի կը դառնայ. և երթէ պարագայներն բերեն՝ կրնայ զգայնական (*) անկարգութիւնք յառաջ բերել։ Ա.յս անկարգութեանցն հետևանքը կըլլայ զգայարանաց գործողութեանը մէջ աւելի կամ նուազ աստիճ չխոթութիւն, խառնակութիւն մը։ Ա.յն ատեն ալ մարդ չ'ըմբռներ ինչպէս որ պարտ էր ըմբռնել, չ'զգար ինչպէս որ պարտ էր զգալ։ Օրինակի համար. դիցուք թէ սերտհար մը իւր կրից ուժգնութեան միջոցին իւր տարիքանաց առարկայն կորսընդունէ. վտտց անհնարին սաստկութեան առնը՝ կրնայ ըլլալ որ աչքին հանդիպ երևնալը տեսնէ անոր, որ ո՛չ ևս է. կը տեսնէ ղայն.... քուն չ'է. լաւ մը արթնցած է.... դէպ ՝ի անոր կը վազէ, և դատարկութիւնը միայն կը գրկէ... Սակայն իրաւցնէ տեսա՞ծ է ղայն.... Ա.յո՛. բայց ինչպէս որ երազին մէջ տեսած ըլլար. ուսկից կը հետևի որ այս երևումս դրսականապէս անուրջ մըն է արթուն վիճակի մէջ պատահած։ Ուրիշ օրինակ մ'ալ։

Ա.յն ձմեռային երկար երեկոյթներէն միոյն մէջ՝ յորում գիւղացիք իւրաքանչիւրն իւր կարգին խուճապներու, խաղերու, վարդապային քաջերու, ուղտաքաղերու պատմութիւնն կընեն, ղրս կըսեն մեծ ճանապար-

---

(*) Sensoriaux. զգայուն. ըստ կազմաբանիչ ուղեղին այն մասն՝ ուր կուգան յանդիլ զգայողութիւնք։

հին կամ անտաւին այսինչ տէրն տեսել են. ենթադրել որ ունկնդրաց մէջէն վատասիրտ ազգայ մը, երկչոտ օրիորդ մը կ'զանուին՝ որ այդ պատմութիւնն լսելով սարսռան . . . : Դարձեալ ենթադրել որ երեկոյթն վերջանալէ ետքը այդ պատանին կամ մանկամարդ աղջիկը՝ իրեն տունն երթալու համար այն պատմուած տեղէն մինակ անցնելու ստիպուած ըլլայ. տարակոյս չկայ որ դլուխը դեռ խուճապին առասպելն ի՝ այն պատանին սիրտը ահաւոդոզով պիտի անցնի այն տեղէն, ամենափոքր չշուներն սարսուռ պիտի ազդէ իրեն . . . : Հին պատէ մը, ժայռէ մը քարի մը կատր ենկա՞ւ մի՝ իսկոյն արհաւիրքն զինքը կը պաշարէ և կ'սկսի քայլերն արագացնել : Բայց եթէ այն միջոցին չուն մը, պուհ մը, գայլ մը անցնի աղջամղջին մէջէն . . . . առանց երկբայութեան պիտի կարծէ թէ տեսածը խուճապն (*) է, և պիտի սկսի ամենայն արագութեամբ վազել փախել : Եթէ նորատի աղջկանն պատահի այդ բանը, օդնութիւն պիտի աղաղակէ, վրան մարելիք պիտի դայ, մէկ մ'ալ նայիս երկրորդ օրը պատմող պատմողն թէ խուճապը տեսել են, և քիչ ձնայել է որ զոհ ըլլան անոր : Մէնմի պարագայներն պիտի մեծցնեն. այդ խուճապը դլուխը վարագի տակով քաղաքավարի հակայ մ'է նզել. աչքերէն կրակ կը ցայտէ նզել. բերանը հնոցի մը չափ լայն, վազերը մի ակռայ-

(*) Խրթխթա :

ներուն նման ակռայներով պինեալ է եղեր ևյլն ևյլն : Լսողներն սարսափ պիտի զդան այդ պատմութեան վրայ, որն որ բերնէ բերան տամօրէն դիւղին մէջ պիտի տարաձայնուի, և մէկ քանի տղիդ դատաղութեան աեր մարդոյմէ ի զատ մնացած ամէնքն ալ առ հասարակ իրողութեան ճշմարիտ ըլլալուն պիտի հաւատան : Երևմանց բառնած ընթացքն այս է ահա. առանք ճշմարիտ դէպքերու պատրանքներ են, որոց միջոցին մարդս մտացածին և անդոյ պատկերներ կը նշմարէ. ի մի բան յորմէ մեկ տեսնուած երևոյթներ են առանք : Ահա այն կարծեցեալ ճշմարտութեանն իրը վատա երկու երևմունք պիտի յիշեմք. մին մինչ իսկ անձնատէս պատահած է. միւսը մեր բարեկամներէն միուն կը պատկանի :

Հելլադայ կապուտակ երկինքն ներքև այնքան հեշտագին, այնքան տարփագին կերպիւ բանաստեղծական երեկոյներէն մին Լիկէա լերին կանաչազեա մարդոյ վրայ ընկողմանած էր. ամպատողոց դադաթներն՝ կապուտակ կոզովոց նման հեռաւորը դոլորշեալ մէջէն կը բարձրանային, և Արկադիոյ ծոցոյն արծաթափայլ ալիքն կը ցոլանայր ի հեռուստ : Շուրջն կը տարածուէին կարմիր պուտերու (*) և դեղին ոսկեծաղիկոց անհուն օվիտոցներ. թուէր թե ոսկիե լեռներ կը տեսնէիր ծիրանի վերարկու մը ծածկեալ իր բլուրներուն հանդերձ : Թռչուններն կը

(*) Ծաղիկ. տճկ. Շապպիզ իւն նիւման :

ճառողէին նորաբուսիկ տերևոց ներքև. խոլ քա-
միք դէպ ի հովիտը կառնէին կը տանէին հա-
զարաւոր բուրմունքներ, և օրհասական արեգա-
կան մը վերջին ճառագայթներն՝ իրենց խորհըր-
դաւոր երանգներն կը նշուլէին այս դեղամթ-
ծաղ բնութեանս վրայ : Ա.ոյևէն կը վաղէր Լա-
դոն գետը իր փառաւոր շամբուտներովն համա-
դեղաղարդեալ. սկայ Սիբէնքս յաւերժահար-
սին արկածին վրայ մտածել : Երիտասարդ,
դիւրագգայ, եռանդուն և յիշատակաց մասին
հարուստ էր. տակաւ առ տակաւ միտքս դարուց
անդրպեան կարեց անցաւ, և զիս հնոյն Յունաս-
տանի դիւցազնական դարերն տարաւ : Ա. չքերս
անշարժ գետոյն ափանցը վրայ յառեալ էին.
մարմնոյս կեանքը դադրած էր գոգցես, և երե-
ւակայութիւնս դիցաբանութեան գեղաղուարճ
հովտաց մէջ կը գեգերէր : Ա.յս համր հոգեկան
զմայլմանս միջոցին ինչ քանի մը քայլ հեռու ո-
րոշել կարծեցի յաւերժահարսից պարմը, որ
Պանայ սրնդին ձայնիւը կը կաքաւէր : Տեսայ
անոնց գիրգ բակակայ իրար վաթթուիլը, ոտ-
քերնուն ներդաշնակ չափով գետինը թռուիելն,
և ամեն անգամ որ սիւքն անոնց թեթև պարե-
գօտիներն վեր կառնոյր՝ աչուընիս ամենէն հե-
տաքի ձևերու, ամենէն քնքոյշ ծիրերու կը ձգ-
ուէին . . . .

Բաբէ՛. քանի՛ քաղցր էր այն զգայապատ-
րանքն. որքա՛ն կուզէի որ երկար տևէր այն . .
բայց աւա՛ղ . արտևանանց սոսկ քթիքթ մը բա-

ւական եղաւ ամեն բան չնչելու, ամեն բան ցըր-
ուելու : Տեսութեան մասին զգացած երևոյթս
կրցայ մեկնել, բայց լսածս անհասկնալի կը մնար :
Ելայ Լատոնի եղերքն իջայ՝ որպէս զի այս մի-
ակայն նուագներս հոգւոյն ձգող երաժիշտը
դանեմ. խել մը վինտուտուքներէ հարքը՝ նշմարեցի
որ գետակերքին ինչ ինչ տեղուանքն եղեգ-
ներն անհատասար բարձրութեամբ կտրտուած
էին, այնպէս՝ որ օդոյն հոսանքներն անոնց բե-
րանաբաց ծղօտներուն վրայէն անցնելով զա-
նազան ձայներ կը հանէին անկէց, որք տերևոց
սոսափիւնին հետ խառնուելով՝ այն տարօրինակ
ներդաշնակութիւնն յառաջ կը բերէին, զորս
լսած էի : Ա.հա այսպէս ամեն բան մեկնուեցաւ,

Բարեկամներէս մին՝ որ խիստ սաստիկ կը
սիրէր իւր կինը (որն որ՝ ըսել չէրլայ, բաւական
դժուարագէպ է հիմակուան ատենս) կուրծքի
հիւանդութեան մը երեսէն զայն կորուսանելու
դժբաղդութիւնն ունեցաւ : Ա.յս դէպքէս զգա-
ցած խորին վիշտն սև մելամաղձոտութեան մը
մէջ ձգեց զինքը : Բարեկամայ մատուցած մխի-
թարութիւններն կամակորութեամբ կը մերժէր,
և այնպիսի չզային դրդռեալ վիճակի մը մէջ
կապրէր, զոր ոչինչ չէր կարող ամոքել : Մ իշտ
միայնակ՝ իւր ցաւոյը ձեռք մատնուած, աշ-
խարհի մէջ այլ ինչ չէր տեսնէր՝ բայց միայն
պատկեր մը, իւր ամենասիրելի ամուսնոյն պատ-
կերը. այլ ինչ փափաք չունէր՝ բայց եթէ զանի եր-
թալ դանել և այսէր իւր սրտի անձկանքն ու զո-

ըտվը. իւր համայն խորհուրդքն անդադար անոր վրայ կը յառէին։ Քանի դիշեր չարունակ երազին մէջ անոր յամր հոգեվարքով մը նուաղիլ, մեռնիլն տեսաւ. նորա յետին հեկեկանօք խորդալն կը լսէր, և նորա չրթանց սառուցիչ պաղութիւնն կզգար, ղրա կը համբուրէր։ Ստացուածքն ամփոփանէն առնլի ժամանակ անկողնոյն մէջ պատկած մնացած էր. քուն չէր. աչուըներն լաւ մը բաց էին. յանկարծ անկողնոյն ոտքին կողմը կնչմարէ իւր կամոզին անհանգստ առարկայն. դլուխը թռչկապին ափին վրայ յենած էր. դալկադէմ և անբարբառ ապակենման բիրերն իւր վրայ սեւեռած էր անթարթ. իր դիմաց անշարժ դծագրութիւնն թաղծութիւն և սէր կ'արտայայտէր։ Բարեկամն անճառելի հեշտութիւն մը կ'զգայր պաշտելի կնոջ մը այս չքնաղագնդ պատկերն դիտելով։ Սոյն միջոցիս նորա դէմքը չարժուած մը ընդուն տնտնալ կարծելով՝ անոր հասնելու, անոր փարելու համար թևերն կարկառել ուզեց . . . . . բայց տեսիլն հեռացաւ իբր թէ չուզելով մը . . . . ընդոստ անկողնէն դուրս ցատքեց որ հասնի նուէն . . . սրահակաց ծալքերուն մէջ անհետացած անձրնոյթ եղած էր նա . . . . Ստ յանկարծ երեք վայրկեան տևեց։

Ստ վերջին երկու դիտողութիւնքս նախապէս քառծնիս կը հատատանեն. այն է թէ միևնոյն առարկային վրայ մտոց խորին և միատեղ ազդեցութիւն, թէ ուղղայեղ միտս ամեն կատղութիւնը

ներն յինքն ամփոփող հատատուն դաղափար մը, կրնայ անհատին բնական և բարոյական կազմութեանն համեմատ՝ երևոյթն, ուրիշ կերպ ըսելով յուզեցուածքն (*) յառաջ բերել. բայց այդ երևման վերաբերեալ էակներն ու առարկայք իսկապէս գոյութիւն չունին։

Երբ երևոյթն իրական է՝ միշտ մեկ կամ մէկէն աւելի անձինք են, որ՝ որևէ շահու մը ակընկալութեամբ ուրիշներն զարհուրեցնելու համար այլ ընդ այլոյ կերպարանքներ առնուն։ Ստ. ըբռւնի որսորդապետին դէպքը այս բանիս կրնայ իբր փաստ ծառայել։

1599 տարւոյն Հոկտեմբեր ամսոյն Ուրբաթ երեկոյ մը՝ քաղն Հենրիկոս Դ. բազմաթիւ ասպետներ ընկերացեալ որսէն եւ դառնալուն, քիչ մը հեռուն՝ Ֆոնդէնէպլոյի անտառին մէջ եղջերաձողերու, շուներու և ձիերու մեծ աղմուկ մը լսեց։ Թագաւորը ինչ ըլլալը չդիտնալով Սուասոնի կոմսը խրկեց՝ որ երթայ այդ աղմուկին պատճառն հասկնայ։ Սուասոնի կոմսը թաւուտի մը մէջէն յառաջ երթալու վրայ էր երբ մեծահասակ սև մարդ մը նշմարեց, որ երեսն ի վեր պառաց. «Ըոռծո էը ըն՞», հեբեպհոռնէբ. ընդհնդնէբ ոռղեյե։ . . . . և յանկարծ աներևոյթ եղաւ իբր պառակտուած վհմակոծի և ձիասոխի միատեղ։ Ստ. երևոյթս և այս խօսքերս՝ լսող-

(*) Hallucination. յուրմնորոշ կամ զգայապատրանք։

ները զարհուրեցուցին։ Տեղւոյն գեղացիները հարցաքննուելնուն՝ ըսին, որ շատ անգամ գիշեր առեն մեծահասակ ահ մարդ մը կը տեսնէին, որուն Ուրբաթայ անունը տուած էին։ Հանրի Գ. և իր մտերիմներն դուշակեցին, որ այն որսորդապետը քաթոլիկաց կողմէն հնարուած մէկն էր։

Ատենով դրամանենդներն՝ որ աւերակ դարձած հին գղեակներու տորբերնկայ նկուղաց մէջ բնակութիւն կը հաստատէին, գիշերները այլանդակ գլեաններ հագած և ոռնացպերու (1) վրայ եղած, բերնեբնուն կրակ ժայթքելով և եռևնուն չղթայներ քարշելով սոսր անոր կ'երեւնէին, որպէս զի երկրին բնակչաց ահ ազդեն, և հետաքրքիրներն աւերակներէն հեռացուննեն, որ չ'ըլլայ թէ գիրենք գտնեն։ Անցեալ դարուն վէպերն լի են այս տեսակ պատմութիւններով։

Խօլական ցնորքներն (2) կամ մեռելոց հոգիներն որ գիշերները շուկաներու, նկուղներու և ախոռներու մէջ կուգան՝ պարզապէս գողեր են, որ կը ջանան վախ ազդելով ձեռք ձգել այն բանն՝ զոր չ'են ուզեր կամաւ տալ իրենց։ Վարդապետն ըսաւ՝ որ կէս գիշերոյն դուրս կելնեն որ մարդիկը անկրնկին մոցնեն, աւազակներ և գողակիցներ են՝ անասնոյ մը գլխատ առած վրայնին։ —Վերջապէս երեւութներ ալ կան, որք տեսարանական ազդեցութեան մը, կրկնե-

(1) Echasses.
(1) Խօրթլաս։

րևութի մը (1) արդիւնքն են. ինչպէս Մինէի խաչը՝ որ ամպոյ մը մէջէն տեսնուեցաւ։

Ուսոի մեր եղրակացութիւնն սա՛ է։

— Երևմանց հետաքրքրաշարժ երևոյթն՝ դարձեալ կը կրկնեմք, նախ և առաջ անհատին տարապայման կերպիւ գրգռեալ ուղեղէն ծընանիլ կառնու. և յիրաւի երևակայութիւնը զօրաւոր շարժառիթով մը բուռն կերպիւ դրդռուելով, խիստ նշանաւոր խել մը երևութից պատճառ կուտայ։ Ռորբռքեալ երևակայութիւն մը հրաշքներ կըստեղծէ, շատ անգամ ալ եղջերուաքաղները։ Այս բորբռքումս, այս աւիւնս քաղաքակրթեան զօրութիւնը կը կրկնապատկէ, ինչպէս նաև վտանգն կը մեծցնէ, տղայական երևակիւղներ, յանկարծական սարսափներ կը ծնուցանէ։ Երևակայութիւնը՝ որ հրաշալոյ վերաբերեալ բաներէն շատ կ'ախորժի, որ անդադար մտացածին իրերով կը սնանի, խել մը մոլորութեանց և աւելորդապաշտութեանց աղբիւր կը գտնայ. վասն զի այն ատեն երևակայութիւնը միւս մտաւորական կարօղութեանց վրայ գերադոյն կերպիւ կիշխէ, և զանոնք յինքն կընկզմէ։ Ոգիներն, հոգեդարձներն, ուրուականներն,

(1) Mirage. կրկներևոյթ կըսուի այն երևոյթը՝ որ ընդհանրապէս տաք անապատաց մէջ շատ կը պատահի, և խիստ հեռաւոր առարկաները խիստ մօտ կը ցուցնէ։ Նոյնպէս ղէնքերն, ծառերն և այլ առարկայք յօդս դըլխիվայր կը ցոլանան։

խուճապները, այսերն և իրենց լեգէոններն, զա-
նազան այլափոխութիւնքն, դիշերային ճի-
ւաղները, վարդապետն, յարալէզները և մնա-
ցածին աչխարհի մը ամեն անճոռնի էակ-
ները՝ զառանցող երեւակայութենէ մը ծնունդ
կառնուն: Ասոր համար է որ բանաստեղծք
դիւրահաւան կըլլան, մինչդեռ քանակագէտք՝
ասոր հակառակ չափազանցութեամբն կը մե-
ղանչեն: Կան ազգեր, որոց մէջ երեւակայութիւնն
չոյժ զարգացած է. ուրիշներ ալ կան, որք ընդ-
հակառակն շատ դոյզն ինչ ունին անկից: Հա-
րաստ երեւակայութեան տէր ազգերն յոգնա-
թիւ քերթողներ և ամեն տեսակ ճարտարար-
ուեստներ յառաջ կը բերեն. յիշեմք օրինակի
համար Նահնի յոյներն: Սպանիացիք, Իդալա-
գիք աւելի երեւակայութիւն ունին՝ քան թէ Գաղ-
ղիացիք. այս վերջիններս ալ Անգլիացւոցմէ
աւելի երեւակայութիւն ունին: Ասոր համար
խաբեբայ մը մեռելոց կոչումն աւելի դիւրաւ
պիտի հաւատացնէ Իդալացւոյ մը՝ քան թէ Անգ-
ղիացւոյ մը: Աւելորդ է ըսել, որ երեւակայու-
թեան տէր ազգաց մէջ է՝ որ ամեն տեսակ
չարչարանքներն ամեն տեղէ աւելի բաղմութեամբ
կը գտնուին:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԿԱՆԽԱՁԿՈՑ ՆՇԱՆՔ

Նախնիք մենէ չատ աւելի աւելորդապաշտ
էին. ամենուրէք, ամենամանր իրաց մէջ, իրենց
շուրջը անցած ամենափոքր չարժմանց մէջ ազ-
դարարութիւններ տեսնել կը կարծէին: Թէև
արդի քաղաքակրթութիւն խել մը ծագրելի
անտիապաշտութեանց պատճառ դառաքինի-
տուած է, բայց և այնպէս ուրիշ բան ըրած չէ,
սանկ ըսեմ, բայց եթէ աւելորդապաշտու-
թեանց էիդրային մէկ գլուխը միայն ճղմած. և
մեր օրերը կը տեսնեմք, որ ժողովուրդը վատա-
հութիւն կընէ այն նշանաց չատերուն՝ որոց նախ-
նիք կը հաւատային:

Պատահած էուրէք խիստ մեծ խնամք կը հա-
ւաքուէին Յոյներէն և Հռովմայեցիներէն, որք
զանոնք իբր բազդին մէկ ազդարարութիւնն կը
համարէին: Ասոնք ասոնցմէ յոյժ կանուխ
ուէին՝ երբ անոնց հեղինակին ո՛վ ըլլալն չ'էը գիտ-
ցուէը. զոր օրինակ, այն ձայնն՝ որ հին Գաղղի-
ացւոց մերձենալն խմայ տուաւ Հռովմայեցւոց,
և որուն տաճար մը կանգնեցին Ա.յ.ս Լ.ո.ք.ո.ս
(Սուրբ ձայն) անուամբ:

Պատահական խօսքերն էրդէոյէն յոյժ կըսուէին,
երբ զանոնք արտասանող անձինք ծանօթ ըլլային:

Գործոյ մը ձեռք զարնելէ յառաջ՝ աւելորդապաշտ մարդիկ աներևնէն դուրս կելնէին, որպէս զի ամենէն յառաջ դիմացնին երևնալ մարդոյն խօսքերն հաւաքեն, և այս բառերուս՝ պատրաստային առաւել կամ նուազ նպաստաւոր ըլլալուն նայելով, գործը կախ կը թողուին կամ ձեռք կառնուին։

Դուկիոս Պաւղոս՝ Պարսից դէմ ընելիք պատերազմին վրայ մտախորհ՝ տուն մտած միջոցին դիպուածով իւր Վերդիա աղջկանը պատահեցաւ, որ տխուր և վշտաբեկ կերեւէր. ուստի իւր արտասուքեան պատճառն հարցնելուն, այսպէս պատասխանեց աղջիկը «Խե՛ղճ պարսկաստան . . . . երո՛ւկ հայր իմ. ալ անոր գործը լմնցաւ»։ Պաւղոս զայս լսելուն գոչեց. — «Կընդունիմ այդ դուշակութիւնն»։ Վերդիայ բառածը Պաբախոպան անունով փոքրիկ չան մը վրայ էր՝ որն որ մեռել էր։

Տիբերիոս Կրաքխոս՝ իւր միտքը դրած վերանորոգութեանց մտմտուքովն զբաղած՝ առաւօտեան արշալուսոյն հաւահմայից խորհուրդ հարցընելու գնաց, որք ամենքն ապահատարական դուշակութիւններ ըրին իրեն։ Նախ անէն դուրս ելնելուն՝ ոտքը սահեցաւ. — յետոյ երեք ագռաւներ՝ որք իրեն նայելով կը կռչէին, կղմինդրի կտոր մը վար ձգեցին իւր առջևը. — երրորդ նշան, մարդոյն մէկը որ անկից կանցնէր՝ իւր ձախ կողմը փռնչեց։ Տիբերիոս այս նշաններս բանի տեղ չդնելովը՝ Սկիպիոն Նազիքայի հրամանաւ Կապիտոլիոնէն վար գահավիժուեցաւ և ոտքերուս հարուածով թոպատմահ ոպանուեցաւ։

Մեսեղղոս քրմապետն՝ իւր Տուսկղոնի տունն դնացած միջոցին երկու ագռաւ առջևը ելան, որք իրեն ճամբան արգելուլ կը թուէին, և զինքը հոսումի վերադառնալու սոխպեցին։ Հետևեալ դիչերը վնասայ աստուածուհւոյն մեհեանը հրդեհպատահելով՝ Մեսեղղոս բոցերուն մէջ նետուեցաւ և Պալլատիոնը ազատելու բարեբաղդութիւնն ունեցաւ։

Նոյնպէս Կիկերոն ագռաւի մը միջոցաւ իւր վերահաս մահն լմնցաւ։ Գիւղը տան մը մէջ առանձնացած ըլլալով՝ օր մը ագռաւուն մէկը կտուցովն արեգակնային ժամացուցի մը սլաքն այնպէս մը երերցուց, որ վար ձգեց զայն։ Ցետոյ մի և նոյն ագռաւն դէպի իրեն եկաւ, իւր վերարկուին քղանցքը բռնեց և այնպէս հոն կառչած մնաց, մինչև որ դերի մը նկաւ լուր տալու իրեն թէ դինուորներ եկել էին զինքը սպաննելու համար։

Բրուտոս՝ այն ինչ Ոկտաւիանոսի և Անտոնիոսի բանակացը դիմաց իւր բանակին հատակոտոր մնացորդներն ի ճակատ յարդարել էր, և ահա երկու բանակէն ալ մէկ մէկ արծիւ ելնելով իրարու վրայ յարձակեցան, և կատաղի կռուէ մը ետքը Բրուտոսի բանակէն ելնող արծիւն ի փախուստ դարձաւ։ Ա. յս նշանս Բրուտոսի զօրաց քաջասրտութիւնն մարեց, որ ձգեցին փախան և

Ակաւեւանոսի զօրքերէն յաղթուեցան։

Նոյնպէս՝ մարդոյ մը որ և է կենդանւոյ մը պատահելն ալ չար կամ բարի նշանակութիւն մը կ'ընէր. այսպէս՝ անձրեւոտ եղանակի մը առեն մկան մը տեսնուելն, դորշուկին (*) աճապարանօք և գաղան ի գաղան անցնիլն ամենևին աղէկ բանի մը նշան չ'էր։ — Նապաստակի մը կամ աքիսի մը դիպուածով երեւիլն՝ զուարճութեան մը, զբօսանքի մը կատարուելուն արգելք կ'ըլլար։ — Թակարդը ընկած աղուէս մը՝ որ շատ աչխատելով վերջապէս թակարդը մէկ տեղ տանելով փախչելու կը յաջողէր, նշան էր թէ Հանրապետութեան բաղդը փոփոխութիւն մը պիտի կրէ։ Կենդանւոյ մը ագին ալ ոչ նուազ ծանր նշանակութիւններ ունէր. — մէջէ մէջ գարձած ագի մը խիստ խառնաշփոթ դործի մը նշան էր. — կէս մը ծռած ագին՝ խիստ մեծ դժբաղդութիւն մը կը ցուցնէր. բայց եթէ շիտակ մնար՝ փառաւոր յաղողութիւն մը կը դուշակէր։ — Այն որ անօթի փորուն՝ կառուի մը մուկ մը դիշատելը տեսնէր՝ մեծ ագէտ մը պիտի դար գըլխոյն։ — Մկան մը յանկարծակի երեւիլն սուպեց գՓաւլիոս Մաքսիմոս, որ դիկտատորութենէ հրաժարի. և մի և նոյն պատճառաւ Փլամինիոս հիւպատոսը այրուձիոյն հրամանատարութենէն ետ կեցաւ։ — Երբ կոյնակ մը զարնուած առեն էշ մը զռայ՝ մերձաւոր հիւանդութեան մը նշան է։

(*) Փորսուք։

— Գայլոյն առնալն՝ սովու դուշակ է. — երբ գորտերն կը կարկաչեն, երբ եղը բոլոր թոքերնին օդը կը ծծէ և ուժով մը դարձեալ դուրս կրվանէ զայն՝ անձրեւի նշան են. — նոյն նշանը կատայ ծիծեռնիկը՝ երբ թառած առեն դետնին և ծովուն մօտէն քերելով անցնի. — էշը՝ երբ խոտորնակ քալէ և ականջներն տնկէ՝ մեծ փոթորիկ մը պիտի պատահի. իսկ եթէ վիշտոյն մէջ թաւալի՝ եղանակը փոխուելու նշան է։ — Օդոյն մէջ ճախրող արուսեակն ուրախ զուարթ երգերն, սարդին իր ստայնը հիւսելն՝ նշան են թէ օդը պիտի բացուի։ — Երբոր արագիլը իր բոյնն թողու հեռանայ՝ այն տեղը պիտի վըլի։ Տէ յոսար թագաւորը՝ որ քանի մը օր դիւղի տուն մը երթալ անցնել կուզէր, ճամբէն ետ դարձաւ տեսնելով որ արագիլ մը այն տանը երդիքէն ձգեց հեռացաւ։ Երկրորդ օրը լուր տուին իրեն, որ պատշգամն ուր արագիլն բոյնը կը դնուէր, անոր հեռանալէն ժամ մը ետքը փլել և շատ մը մարդիկ ալ ներքևը չախչախել էր։ — Սգաւան կամ որիւն կոչուն երբ ձախ կողմէն լսուէր, նոյնպէս տան մը բարձր տեղը թառած բուոյն ձայնն, չան ողբագին ձայնիւ առնալն՝ հիւանդութեան և երբեմն ալ մահուան նշան էին։ — Երբ աքաղաղ մը բոլոր գիշերը համր կը կենայ՝ գէշ նշան է. եթէ առաւօտեան դէմ երգէ՝ պէտք է յուսալ։ — Մարդ մը՝ որ ճանապարհին վրայ գալարաձև ոլորած և գլուխը սպառնալից կերպիւ վեր անկած օձի մը կը պատահէր, վրդովմունք

եւ կը դառնար, վախնալով՝ որ չըլլայ թէ իւր թշնամեաց երեսէն դաւի մը բռնուի. իսկ եթէ ընդհակառակն օձը փախչէր՝ մարդը վստահ սրտիւ իւր ճանապարհը կը շարունակէր։ — Այն մարդն՝ որ կարծելին վրայ էգ որիի (*) մը սիրտը կը կրէր, և այն կինն՝ որ ծոցին վրայ արու որիի մը սիրտը կը կրէր, ամենայն միաբանութեամբ և սիրով իրարու հետ կապրէին։

Սեղանի վրայ գինւոյն և ապուրի թափելը դըժբաղդութիւն մը կը դուշակէին. փոքր մսոին թմրելը՝ արտ յանկարծական բալախտ մը, երդմնազանցութիւն մը կամ մահուան մը կը դուժէր։ — Աբեւանանց ղպային թրքընչուն, յօնից թեթեւ խաղաւար մը՝ դրեթէ միշտ բարի նշան կը համարուէին։ — Աբճանի մը, ծառոյ մը, ճիւղոյ մը կոյն անկումն, ատոր դրան մը սեմոյն զարնելը, մուճակին կապը փրցնելն՝ կարի սպասարական նշաններ էին։ — Փռնչելը՝ անհաւին ֆիզիքական վիճակին համեմատ առողջութեան կամ հիւանդութեան նշան մը կը համարուէր։ Եդիպտացիք փռնչելը (փռգտալ) ընտանի պատգամ մը կը սեպէին. ասոնց բացին նայելով՝ երբ Լուսինը Ցուլն, Առիւծն, Կշռոյն, Աղեղնաւորն և կամ Ջրհոսի աստեղատանց մէջ կը գտնուէր՝ փռնչող մարդոյն խիստ բարեբաստիկ բան մը պիտի պատահէր. ուստի կը բարեւէին զինքը. իսկ եթէ Լուսինն Ձուկերուն

(*) Գարա դաբղա։

միւս կենդանակերպից մէջ գտնուէր՝ դէշ նշան էր։ Երբ մէկը անկողնէն կամ սեղանէն ելնելուն փռնչէր՝ իրեն իմաց արուած վտանգին առաջքն առնելու համար անմիջապէս նորէն տեղը կը նստէր։ Այժմ փռնչողներուն «Էէր ըւշ» (*) կըսեն, հաւանականաբար անակնունելի փորձանք մը անոնց գլխէն հեռացնելու մտօք։ — Երբ խանձած մը կրակարանէն մխրճոյն վրայ գլորի՝ այցելութիւն մը կամ նամակ մը պիտի ընդունիս։ — Երբ խարուկի կտոր մը մարելէ յառաջ յանկարծ փայլի՝ աղեկ լուր մը պիտի առնուս։ — Նմանպէս կրակին կայծերն, ծխոյն չարժումներն՝ բարի կամ դէշ նշաններ ցոյց կուտային։ Դից մտուցուած ողջակիզոյ ժամանակ եթէ կրակը առանց հողմէն արդիլուելու վառէր, եթէ բոցը պայծառ, ճարճատուն վեր բարձրանար ապիտակ և թմրեւախաղաց ծխոյ մը հետ միատեղ՝ նշան էր թէ՝ զոհը հաճոյ եղել է դից. դժուարաւ արծարծուղ կրակը, թանձր ծուխ մը՝ որ սղղաձիգ դեպ՝ վեր բարձրանալու տեղ դեռևին երեսէն քաշուելով կանցնէր՝ աստուածոց ցասմանն ու ողջակիզի անօգուտ լինելուն ապացոյց էր։ — Զոհ ըլլալու կենդանին ազատ համարձակ կերպիւ մը գնա՝ մի զոհուելու տեղը՝ բարի նշան էր։ Եթէ յառելու միջոցին գլուխը ստորաստական կերպիւ մ՚երերցնելով իւր այս մասին հաճ և հաւան ըլլըն հասկցնելու պէս ընէր՝ ա՛լ պա-

(*) Գղ. Աստուած օրհնէ՛։

տարագին յաջող լինելը սոսկ էր։ Ախիկարն այս մասին դիտել կուտար, որ զոհագործներն ինչպէս որ ուզէին՝ այնպէս անանց հաւանութեան և տհաճութեան չարժումն ընել տալու եղանակը գիտէին։ — Երբ սենեկի մը մէջ երեք կանթեղ կամ երեք ճրագ վառուած գտնուէր՝ կը վախցուէր որ այն տարւոյն մէջ մարդ մը պիտի մեռնի։ Այս երեք լոյսերուս մէջ երեք Պարկայքն կամ Կերբերեակայ երեք երախաներն կամ վերջապէս երեք Կառապիներն տեսնել կը կարծէին։ Այդ այսպիսի նախնեաց համար։

Իսկ մեր Պապերուն գալով՝ այն գուշակական նշաններէն չատերն՝ որոց կոյր զկուբային հաւատք կ'ընծայէին, ոչ նուազ ծաղրելի էին։ Այսպէս չատ պարզամիտ մարդոց համար Սրբոյն Մարտինոսի օրը բարեկեանիկ օր մ'էր. իսկ Բեթղեհէմի մանկանց օրն չարաբաստիկ օր մը։

— Մեծապէս կ'զգուշանային որ տարին Անդրէասի տօնին օրն բաղնիք չերթան. վասնզի այն օրն բաղնիք դացողն անպատճառ տենդի կը հանդիպէր։ — Սրբոյն Յովհաննու Մկրտչի օրը ոչխարներն, եշերն ու երախայքն կը ուսային, իբր թորէ և ուրիշ ամեն տեսակ մորճի հիւանդութիւններէ պահպանարար կամ պաքինիչ միջոց։ — Այն որ Սրբոյն Յովհաննու եւթը կրակներուն չուրջը դառնար՝ գլխաւ կամ բրկամանց ցաւէ կը բժշկուէր։ — Ծննդեան գիշերն տեղացող ձոյն վրայ հացի մը կտոր թողուելէ՝ բոլոր տանը

բարեբաղդութիւն կը պատճառէր։ — Հովիւներն կ'զգուշանային որ Սրբոյն Ստեփաննոսի օրը չխընդան կամ չերգեն, որպէս զի գառներնին վզերնին խոտորնակ դիրքով չձնեն։ — Բարեմիտ կանայք չաբաթի օրերը ցերեկուընէ հագը բան չէին ուտեր՝ վախնալով որ բարի-կուսին (Ստուածածնայ) տհաճութիւն չպատճառեն այդ բանը։ Պրետայնի և Օվերնեի գաւառաց մէջ սրդիլեալ էր նոյն իսկ հարրխէ բռնուող անձանց ալ Աւագ Ուրբաթի օրը թ.քնել. թէ չէ մեծ ամբարշտութիւն մը գործած կը համարուէին։ Եթէ մեկը Յովհաննու տապաքերչին տօնին օրը վարսակի, արտի մը մէջ եղման վրայ գլտորեր, չերմէ և փորի ցաւէ կը բժշկուեր։ — Եթէ մեկը՝ Սրբոյն Հռոմեկոնտոսի կապիճ մը վարսակ նուէր ընէր իր տօնին օրը՝ լուսնոտութիւնը վրայէն կանցնէր. և եթէ նիհար մարդ մըն էր նուէրը ընողն՝ կ'սկսէր գիրնալ։ — Սուրբ Եղիայի օրը եղնեղն ու ձիերը աշխատցնելու անխոհեմութիւնը գործողն՝ մեծամեծ դժբաղդութեանց գլխուն գալիքը աչք առնելու էր։ — Վարուցանը անօգուտ կըլլար՝ եթէ Սրբոյն Վեդերեայ տօնին օրը կատարուէր։ — Մուկերն ու խլուրտներն՝ որք չուերնատան մէջ մեծամեծ աւերմունք կը գործեն, փախցնելու համար անօթի վարանց հովէն քաշուած և մէջնուալ գաւառի մը խաչմանդաստի չուր խառնուած գոյլ մը չուր կը տրսկէին ցորենոց կոյտերուն վրայ։ — Եթէ մեկը ձեռքը վառած մոմ մը բռնած Տեառնընդառաջի օրն վրան և՝ րնք խաչ նշան գրուած ափոռակի մը չուրջն և՝ րնք անգամ դառնալու ըլլար՝ տունը կայծակէն

ազատ կրնար, և դևերը կը հալածէին անկից, թէ որ վխտալու չափ լեցուած ալ էին հոն ալլն. ալլն. ալլն։ Եթէ մեր նախահարց մտքին մէջ տոգորուած բոլոր նախապաշարմունքներն միատեղ մի թուելու ըլլամք՝ վերջը չ'գար։ Մէջ բերած օրինակներնիս բաւական են ընթերցողին։

Ա. յայէս ահա առնօք՝ և բաւական երկար ժամանակ հաւատացին մարդիկ առաւել կամ նուազ տղայական գուշակաց և նշանաց։ Դէշ նշան մը՝ թէ ամենակարևոր և թէ ամենաթեթև գործերն առկախել կուտար. ուստի անոնց վերբառին ձեռք զարնելու համար լաւագոյն օրերու կ'սպասէին։ Շատ անգամ ալ կը պատահէր՝ որ չարագուշակ նշան մը այս կամ այն անձին խօրին թաղծութիւն մը և երբեմն ալ հիւանդութիւն կը պատճառէր։ Ա. յս նախապաշարմունքս ժողովրդեան մէջ տգիտութիւնը կը մշտնջենաւորէր, և զայն պանդոյր և բարբարոս կը դարձնէր։ Ներկայ սերունդն աւելի լուսաւորեալ, աւելի իմաստուն ըլլալուն՝ կը ծիծաղի այն բանին վրայ, որ նախնեաց սոսկումն կը պատճառէր։ Սակայն և այնպէս կան այնպիսի անղուանք (*) և նոյն իսկ Դաղղիոյ մէջ ալ՝ ուր տխմար և դիւրահաւան չինականն տակաւին կարևորութիւն կուտայ այն նշաններուն՝ զորս քաղաքաց բնակիչք կատակի կ'առնուն։ Յուսամք որ լուսաւորութեան աւելի ընդարձակ տարածումն չատ չ'անցած նորա աչքն ալ կերթայ կը բանայ։

(*) Մեր արևելքն ալ մէջն է։ Ծ. Թ.

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ՎԻՃԱԿԸ Ի ՀՆՈՒՄՆ

Նախնեաց մէջ բնագիտութիւնն չ'հասաւ այն բարձր աստիճանին՝ ուր հասուցին արդի փիլիսոփաները։ Սակայն և այնպէս Բաղդեացւոց, Եգիպտացւոց և Յունաց մէջ բազմաթիւ հանճարոյ տէր անձինք իրենց երկերովին ու ըրած գիւտերովին մեր զարմանալեացնու երախտապիտութեանն արժանի են։ Ա. ստղաբաշխութեան և Մ. եքենագիտութեան վրայ ամենէն աւելի հանդէսամբ զբաղեցան. ուսկից հարկ է հետևցընել, թէ քանակագիտութեան մասին բարձր աստիճանի ծանօթութիւններ ունէին։

Ա. յն դարերու ուսումնականաց կրնան օրինակ ընծայուիլ Պիւթագորաս և Ա. րքիմէդես երկու ամենէն նշանաւոր անձինք։ Ա. յս վերջինս Մեքենագիտութեան մասին գրեթէ հրաշքներ գործեց, որոց վրայ քիչ մը հետը պիտի խօսիմք. բայց այն գիտութիւնք՝ որք այսօր հասարակաց եղած են, առնօք մէկ քանիներու սեփհականութիւն էին. և շատ հաւանական է որ այդ գիտութեանց նմանները ալ այդ պատճառաւ է. մինչդեռ անդին արհեստներն այնպիսի կատարելագործութեան մը հասան, որուն նոր աղերն չ'են կրցած հաւասարիլ։ Ա. յս տեղս

պիսի բացատրելով մեզ համառօտաբար դիտուելիանոց այն այլ եւ այլ ճիւղերն՝ զորս նախնիք ամենէն աւելի յաջողութեամբ մշակեցին։

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՏԵՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տնաբանութիւնն շատ յառաջ գնացած էր Եգիպտացւոց և Յունաց մէջ. Աւգուս-Գեզդոս կը պատմէ թէ, տեսակ տեսակ հայելիները չինեցին ասոնք՝ որոց ամենք առարկայներն կը բազմապատկէին, այլք զանոնք դիտիվայր կը ցցնէին. և այս մի եւնոյն հայելիներն ուրիշ մանաւոր դիրքով մը գրուելնուն՝ բնաւ բան մ՚ալ չէին ցոլացներ։ Կոնաձև, կորնդաթիթ գոգաւոր, մոդական եւլն հայելիներն ծանօթ էին իրենց, Լոյսը տարբաղադրելու համար հատուածակօղմն կը գործածէին. նոյնպէս խոշորասեռներուն, մոդական լապտերը և հայելագիտութեան առերեսոյթ տեսիլքներ դոյացնելու յարմար ուրիշ զանազան հնարքներ կը գործածէին, զորս ամիկը հրաշքի տեղ կը դնէր։ Սուիդաս կըսէ, թէ իւր ժամանակի օգտնչելագործներն շատ վարպետ էին այդ պատրելու, ինչպէս նաև ամենէն յանկուցիչ և ամենէն տպաւոր երեւոյթ մը տալու արհեստին մէջ։ Գոմպրիւս Մեղա Ակնպլի Գրոյիպ ուհաց հետեւ կըսէր, թէ ինքզինքն և մարդիկներն անհասունի փոխելու արհեստը գիտէին։ Այս ամենս ուրիշ եղանակաւ չէը կըրնար պատահիլ՝ բայց եթէ տեսաբանական առաջօք երեւոյթներով։ Միևնոյն բանը տեղի կունենար նաև Մեմֆիսի, Սաիսի, Եղեսիսի և այլ անուանի քաղաքաց մէջ, ուր խորհրդաղդեցութիւնք ի գործ կը դրուէին։ Հրապիտութիւնն, ուրուատեսիլն և օրավայնախօսութիւնն նորընծայներուն կրնայ փոքրերուն մէջ մեծ դեր մը կը խաղային։ Կիկերոն, Սենեկա, Յամպղիկ, Աւգուս-Գեզդոս և այլ բազմաթիւ հեղինակք՝ առարկայներն ստուարացնելու և մեծ հետաքրքրութիւնէ զանոնք տեսանելի ընելու համար այն առեն գործածուած միջոցներն նշանակած են իրենց գրուածոցը մէջ։ Հուսկ ապա մեր ամենէն ներհուն հնագիտաց հետազօտութիւնքն ոչ ևս կասկած կը թողուն նախնեաց մէջ գործածուած այլ և այլ տեսաբանական գործեաց վրայ, ինչպէս են Կորնթարդ գոգաձև ապակիներն և ամեն տեսակ մեծութեամբ ոսպնաձևերն, ջրաբաշխական մանրացոյցերն, ինչպէս նաև ակնոցներու և հետազիտականերու մասնաւոր տեսակ մը՝ նմանապէս ի կիր կառնուէին առարկայներն մեծցնելու և հետաւորութիւններն մօտեցնելու համար։ Այս տեղ մի քանի տող պիտի նուիրեմ Ա. Բքիմէդեսի հռչակաւոր կիղիչ հայելւոյն, զորս բազմաթիւ գիտունք առասպելեալ բան մը համարած են։ Ցիշեալ համառօտ նկարագրութիւնն թերևս ապացոյց մը ըլլայ սա բանին, թէ

նորերուն ընծայուած դիւտերէն չատերն՝ ամենակատարեալ կերպիւ ծանօթ էին հնոց։

Ս. Բքիմիդէսի կիզիչ հայելին՝ որով Սիրակուսան պաշարող հռովմէական նաւատորմին այրեց, չատ պատմագիրներէ յիշուած է իբր ամենափրական դիւտ մը։ Տես ինչ կըսէ այս մասին Յեղէս։

«Ս. Բքիմէդէս Մարկելղոսի նաւերն այրելու փոքրիկ հայելիներէ կազմուած կիզիչ հայելւոյ մը միջոցաւ, որք ամէն կողմ կը դառնային ծրելու նիներու միջոցաւ, և որք արեգակեան չառաւիղներուն առջև դրուելով և նաւերուն վրայ ուղղուելով՝ նեռաձիգ հնոցներ մը աճիւն կը դարձնէին զանոնք։»

Անթեմիոս Թրալացի (որ Ի Լիւդիա) մեծանուն ճարտարապետն և բազմահմուտ մեքենագէտն՝ իր Մեքենականութիւն անուն ճառին մէջ երկարօրէն կը խօսի այն հռչակաւոր հայելւոյն վրայ. և ո՛չ միայն անոր գոյութիւնն կընդունի, հապա ինքնալ հայելւոյ մը օրինակը կուտայ՝ որ մանաւոր հնոցներ մը միայն կրնայ բռնկցնել։

Լիւսիէն, Զոնար և Վ. Հռետղղոն դրապէս կըսեն թէ Սիրակուսայի պաշարմանն առեն Հռովմէական նաւատորմին Ս. Բքիմէդեսի հայելիէն այրեցաւ։ Եւթերը Պրոկղոս դրեթէ նմանօրինակ հայելի մը չինեց և նոյնպէս Վ. Իտալիանոսի տորմիղն այրեց Կ. Պօլսոյ պաշարմանն առեն։ Եւտղամիոս իր Լիւսականեն մեկնութեանը մէջ կըսէ,

որ Ս. Բքիմէդէս հայելագիտութեան նորահնար միջոցաւ մը հռովմէացւոց նաւատորմիղն այրեց Բալիատրի նեռաին ընթացածին չափ հեռաւորութենէ։ Ս. Հաւասիկ ասկէ աւելի ստոյգ կերպիւ հաստատուած պատմական եղելութիւն չկրնար ըլլալ։ Հուսկ ուրեմն՝ մեր (Դաղղիացւոց) անուանի բնագէտն Պուֆֆոն՝ իրողութիւնը ստուգել ուղելով կարի մեծութեամբ հայելի մը չինել տուաւ երեսուն և վեց փոքրիկ հայելիներէ կազմուած, որոց կիզակէտքն (կեդրոն) լոյսը միևնոյն կէտի մը վրայ կ'անդրադարձնէին։ Ս. յս հրաշակերտ հայելւոյս ցոլացական զօրութիւնն կրցաւ քսան և հինգ ոտք հեռաւորութենէ եղևեայ տախտակ մը բռնկցընել։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՄԵՔԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ցոյն — Հռովմէական նախնի քաղաքակրթութեան մէջ մեքենագիտութիւնն կատարելագործութեան բարձր աստիճանի մը հասած էր կրնամք ըսել, եթէ դատաստան ընելու ըլլամք այն նկարագրութեանց համեմատ՝ զորս պատմութիւնն աւանդած է մեզ։ Պատերազմական մեքենայներն՝ հսկայական մեծութեամբ և երեք չորս յարկով ամենէն բարձր պարիսպներէն ալ աւելի բարձր էին։ Ս. յս չարժական աշտարա-

հայս ծայրն չարժուն կամուրջ մը կար, զոր պաշարելու քաղաքին պարսպին վրայ կիջեցնէին՝ որպէս զի պաշարողք դիւրաւ բերդին մէջ իջնեն։ Ձիչեալ մեքենայներուն ներքև տարածայնուն մեծութեամբ բաւան մը կախուած էր, որ ամենաթանձր պատուարներն իսկ ծեծելով կը խորտակէր։ Դեմետրիոսի ճարտարապետին չինած ահագին մանդղիններն՝ Բօլիորկէտ (քաղաքեաւ) մականունը տալ տուին այս իշխանին։

Աղեքսանդրիա քաղաքին մեքենագէտ մը՝ երբ Յ. Կեսար պաշարած էր այս քաղաքս, միանգամայն ընդարձակ և խառնաշէն (*) մեքենայ մը հնարեց, որ ահագին քանակութեամբ ծովու ջուր կը ծծէր և ապա ուժգնութեամբ մը պաշարողաց վրայ կը ժայթքէր զայն։ Ս. յս արուեստական ողողմունքս այնքան անհանդիստ կընէին հռովմէական գնդերն, որ եթէ Յ. Կեսարու քաջագործիկ կամակորութիւնն չըլլար, պաշարումը մինչև անգամ կը վերցնէին։

Սակայն մանաւորապէս Եգիպտոսի և Յունաստանի մեհենից մէջ էր՝ որ կը դտնուէին ամենէն բազմահմուտ մեքենագէտներն։ Ան հուն հանդերձանքն՝ զոր նորընծայութեան արարողութեան մէջ կը պարզէին, տեսակ տեսակ ուրուատեսլական դործիքներն՝ որք կչռագիտութեան, չրաբաչխութեան տեսաբանութեան

(*) Complique.

և լաբաստութեան ամեն նորատաքանչ արդիւնքներն իրար կը միացնէին՝ անտարակոյս յոյժ ճարտարարուեստ և իրենց ի կիր արկած գիտութեանց ներկուստ մարդոց ձեռօք կերատուած ըլլալու և գործածուելու էին (*)։

Բայց Մեքենական արհեստից մէջ հանճարեաւոր հանդիսացող ամեն մարդոց մէջէն ոչ ոք կարող է Ա.ՐՔԻՄԷԴԷՍի հետ բաղդատուիլ։ Ս.յս արտաքոյ կարգի հանճարոյ սէր անձս բազմաթիւ հատորներու նիւթ կրնայ մատակարարել, եթէ իւր ստեղծիչ ուղեղէն ծնած ամեն հրաշալից հնարումներն մի առ մի պատմել ուզուի։ Գիտուն անդղիացի մը սապէս կըսէր իրեն համար։ «Ս.յս մեծ մարդս առաջին հիմունքն դրած է դրեթէ այն ամեն գիտութեանց և նորագիւտ հնարից՝ զորս մեր դարն կատարելագործելն վաստ կը համարի իրեն։»

Չկայ դպրոցի աշակերտ մը՝ որ չգիտնայ թէ Ս.ըքիմէդէս Հռովմէացւոցմէ պաշարեալ Սիրակուսա քաղաքը ինչպէս իր գլխոյն պաշտպանեց։ Ս.յս հռչակաւոր պաշարմանս միջոցին անհատական զօրութիւն ունեցող բազմաթիւ մեքենայներ շինեց։ Երբ թշնամւոյն նաւերն քիչ մը աւելի կը մօտենային Սիրակուսայի պարսպացը՝ ահագին երկթէ ձեռք մը աշտարակէ մը դուրս

(*) Տես Եղեսիոի փորձերուն նկարագրութիւնն կոնքիլիական բիլիէր կամ Եբենեզր Լայէի անուն գրքին մէջ։

պէլնեը և յառաջակողմէն ըմբռնելով՝ զանոնք օդոյն մէջ կը բարձրացնեը, սաստիկ կը ցնցէր, յետոյ կը ջախջախէր և կամ կընկզմէր։ Թշնամիք յապուշ կրթած՝ կը կարծէին թէ դէք միայն կրնային այսօրինակ զօրութիւն մը դործածել։ Իսկ եթէ իրենց նաւերն այս երկաթէ ճիրաններէն զերծ պահելու համար զանոնք նաւահանգստէն հեռացնէին՝ Ա.ըքիմիդէս այն առեն ալ իւր կիսիչ հայելւոյն զօրութեամբ կ'այրէր զանոնք։

Ա.ըքիմէդէս հսկայական յուկանաւ մը չինեց Հերոն թագաւորին համար՝ որ իւր պղպատկանն էր և իւր հանճարոյն վրայ ամենէն աւելի ապանչացաղնեըէն մին։ Ա.յս յուկանաւուս մէջ միանդամայն ընդարձակ և դեղազարդ սենեակներ, պարտէղներ, ծաղկաւետ մարդադեսիններ, հովասուն ծառաստաններ, վտակներ, ձկնալից լճակներ, մեկ խօսքով այն ամեն ճոխութիւնն ու հանդստեան համար պէտք եղած բաներն՝ որոց որ Հերոն արքային կրնար փափաքիլ։ Ա.ըքիմէդէս այնքան հրաշալի բաներ սաեղծեց, այնքան հսկայական ձեռնարկութիւններ՝ի դլուխ հանեց, որ մարդոյս հաւատալը չ'դար։ Իւր դիտութեանց մասին ստացած ընդարձակ ծանօթութիւնները և մեքենայից զօրութեանը վրայ ունեցած վստահութիւնն էր՝ որ ըսել տուաւ իրեն. «Տուէ՛ ինձ տեղ մը և երկրագունդը տեղէն շարժեմ։»

Ա.ըքիմէդէսէն հաև կը յիշուի Կտեսիպիոս՝ որ ամենայն ճշդութեամբ բանող ջրային ժա-

մացոյցները, տարապայման զօրութեամբ բեռնաբարձ դործիքներ և հողմամեքենայներ չինեց։ — Ա.ըքիմէդես մեծ համբաւ ստացաւ իւր արուեստական աղաւնեաւն՝ որ կենդանի աղաւնոյ մը պէս կը թռչէր, վու վու կընէր, և եթէ մատդ ցոյց տայիր՝ վրան կուդար կը թառէր։ — Ուրիշ խել մը ճարտար մեքենադէաններ ևս՝ իրենց նորահնար դործիքներովը, երկերովին անուանի հանդիսացան։

Բայց այս մեր վերը ըսածներէն կը հետևի, որ նախնիք անհուն յառաջադիմութիւն ըրած էին Մեքենադիտութեան մէջ։ Պատմական դրեանքն, ժամանակին աւերիչ ակռաներէն աղատ մնացած հոյակապ չինուածներն համոզիչ փաստ մ'են մեր այս ըսածին։

Չ'եմք ուղեր նեբկայ յօդուածս վերջացնել՝ առանց անցեալ դարուն մէկ անուանի մեքենադէտին վրայ խօսելու, որոյ ձեռակերտներէն դէթ Ա.ըքիմէդսի ձեռակերտաց հաւատարիցան. մեծանուն Գողանսոնը ըսել կուդեմ, որ բազմաթիւ մարդամեքենայներ չինեց ամենակատարեալ ճարտարութեամբ. չատերուն մէջէն յիշեմք միայն իւր սրընդահարն ու բադը։

Բադին նեբսիդին անդառութեան և մարսողութեան պաշտամանց յատկացեալ ամեն դործարաններն իրենց յարակից պարագայներովին կը պարունակէր. այս պաշտամանցս հարկաւոր եղած մասերուն դործելու եղանակին ճիշդ նմանը կը դործէր. վիզը երկինցնելով ձեռքիդ մէջէն հատիկը կառնուր՝ կը կլնէր կը մարսէր և սով-

ջական միջոցաւ կարասաքսէր ղայն։ Բաղխ մը ամէն չարժուձներն՝ որ աճապարանօք կը կընէ, և որ կերածը մինչև ստամոքսը վարելու համար իւր ստորին չարժմունքն կարագացնէ՝ շատ ղարմանալի և ամենաճիշդ կերպիւ կարդադրուէր անդ։ Անդամ մը կերակուրն ստամոքսը մտնելուն պէս՝ կատարեալ մարսողութեան մը ենթակայ կըլլայ հոն, ինչպէս անասնոց ստամոքսին մէջ. յետոյ խախաշախառն հիւթը փորոտեաց նման նոզ խողովակներու մէջէն մինչև երաստանը կը հասնի, ուրտեղ գանուած փակիչ գնդերը (*) անոր արտասքուին կը յայտարեն կամ թոյլ կուտան։ Վ.ոքանսն այս մեքենական մարսողութիւնս իրը արիւն կազմելու կարող կատարեալ մարսողութիւն մը չէր ցոյց տար. այլ միմիայն մարսողութեան երեք սարբեր վիճակներուն դործողութեանց նմանն ընել ուղել էր. Ս. հատիկը կընելը։ Բ. զայն թ.քով շաղախել, ծամել և լուծելն։ Գ. զգալի կերպիւ ապականեալ զայն դուրս հանելը։

Մեծամեծ դժուարութեանց հարկ եղած է յաղթել այս զարմանալի արգիւնքս ձեռք բերելու համար. անցուկ միջոցի մը մէջ բնալուծական դործարան մը հարկ եղած է չինել հատիկը սարբազադրելու և զանազան խողովակաց չըջանններէ անցնելով՝ մտած ծայրին հակառակ ծայրէն զայն դուրս հանելու համար։

(*) Sphynltes.

Ցիչեալ բաղը չուր կ'խմէ, չրոյն մէջ կը խաղայ, թևերն կը շարժէ, ոտքերուն վրայ կը կանգնի, կը քալէ, կը պոռայ և վերջապէս ողջ բաղի մը ամեն չարժուձներն կը կատարէ։

Վ.ոքանսնի երկրորդ դլուխ գործոյը Սրընդնաը կանուանուէր. պարող հովուի դիմաց հագած՝ քսանի չափ այլ և այլ եղանակներ, հնդոտեան և ալ ուրիշ նուագներ ու հակապարեր կընուագէր. մէկ ձեռքովն սրինդը կը հընչէր, և միւսովն թմբուկ կը զարնէր։

Գաղղիացի հնարագէտ մեքենագործին բաղը Ս.րքիդասոյ աղաւնին չէ՞ր արժեր։

ՀԱՏՈՒԱԾ Գ.

Լ.ՍԱ.ԳԻՏՈՒԹԻՒՆ

Զայներն մեծցնելու, նուազեցնելու և ետ խրկելու, մարդոյս ականջն զմայլեցնելու կամ զարհուրեցնելու արհեստն կատարելագոյն ծանօթ էր նախնի հրաշագործաց։ Գիտէին նոքա որ որ և է ձայն մը ծայրը խորանաձև լայնացած փողոյ մը մէջէն յառաջ մղուելով՝ աւելի մեծ ծաւալ մը և մշման ուժոյն համեմատ տատանութիւն մը կ'ստանայ։ Գիտէին որ ձայնը լսոյն նման կ'անդրադառնայ և արձագանգ ըսուած սքանչանոյ պատճառ կուտայ։ Գիտէին վերջապէս որ ձայն մը անգամ մը անդրադառ-

նալէ յետոյ՝ կրնայ նորէն անդրադառնալ, եթէ այնպիսի մակերևոյթներու պատահի՝ որ զինքը ետ դարձնեն. և այսպէս բազմակրկնակ արձագանքներ յառաջ բերել: Տաճարաց սպասարկութեան յատկացեալ հրաշագործք և խորհրդադպագութեան սեղեակք՝ բլուրները կը կարըտէին, քարայրները կը պեղէին, կամարները կը դարձնէին՝ որք երենց անդրադարձուցիչ յատկութեամբքն ձայներն կը յաւելուին կամ կը նուազեցնէին՝ որպէս դի զարմանք, ուրախութիւն կամ երկիւղ ազդեն: Յատկութեան այն յոգնաթիւ դաղանեաց առջև՝ զորս ի կիր կ'արկանէին հրաշագործք, և զորս պատմութիւնն անկրուստ պահած է՝ մարդ կ'ստիպուի խոստովանելու որ յիրաւի երկար ժամանակեայ հետազօտութեանց ետևէ եղած և կիրառութեան մէջ խիստ մեծ ճարտարութիւն մը ի հանդէս ածած ըլլալու էին նոքա:

Թեսաղիոյ, Թրակիոյ, Եղևսիսի, և մանաւանդ Դեղփիսի արձագանդներն ձայնիդ աճելուն և երեքկին ու չորեքկին կրկնութեանդ մասին հռչակաւոր էին: Պարսից արշաւանացը ժամանակ Դեղբեայ տաճարը աւարառութենէ ղերծ ձնաց և քաղաքն ալ մասամբ մը ազատեցաւ ի չնորհս այն արձագանդաց՝ զորս քուրմք կերտած էին Պառնասոսի մէջ: Լերին մէջ ցրուած քանի մը հարիւր հոգի ամենայն ուժգնութեամբ կ'աղաղակէին. երենց ձայնն մեծնալով և բազմապատկուելով և մէկ արձագանդէն միւսն անդրադառնալով՝ այնպիսի ահեղաբոմբիւն մը պատճառելին, որ թշնամիք զարհուրած չ'համարձակեցան յառաջ երթալ և յետ քաշուեցան:

Մեհենից և դետնափորաց մէջ՝ ուր տեղի կունենային խորհուրդք, միշտ սրահ մը պիտի դտնուէր այնպիսի ձևով չինուած՝ որ լսողիս ամենազարմանալի արդիւնքներ յառաջ բերէ: Ամենէն տկար չշուկներն՝ ամենէն զօրաւոր աղմուկներու սաստկութիւնն կառնուին. երբեմն բարբառներն յոյժ զարմանալի դանազանութեամբ կը կրկնուէին, նուաղելով մը կը հեռանային, յետոյ յանկարծ նախկին սաստկութեամբն կը վերադառնային, և վերջապէս բոլորովին կը մարէին. ուրիշ անդամներ ալ քաղցր, թաւչնաման, դողարիկ կը դառնային և մարդոյս ականջներն կղմայլեցնէին: Ա'երթ չեփորայից ահեղաբարբառ հնչիւնն մարդս սարսռեցնելու եղանակաւ արձագանդէ արձագանդ կոտորտէր, մերթ սրնգին դեղգեղին չափ ազուշ կը դառնար: Ամ.յս այլ և այլ արձագանդներս հիանալի վարպետութեամբ մը չինուած ըլլալու էին. նախնիք՝ հարկ է որ խոստովանիմք զայդ, մենք աւելի յառաջացած էին այդ արհեստին մէջ:

Սաիսի Լարիւրինթոսին մէջ՝ որ յեղիպտոս, դրան մը դոցուելուն ձայնն մօտը դտնուած մարդը չ'էր լսեր, մինչդեռ քանի մը հարիւր քայլ անդին դտնուողը որոտման բոմբիւնն լսել կը թուէր: Եղևսիսի սաորերկրեայ վայրերն նոյնպէս հռչակ հանած էին բազմաթիւ հաւաքալ

կոնի ձեւով չինուած կամարաձ ձայնից վրայ ըրած աղբեցութեամբն. անհուն ընդարձակ սրահի մը մէջ՝ վարագուրին եռւրը պահուած քրմապետին ձայնն մերթ զօրաւոր և ահագին, մերթ քաղցր և սիրալիր կուգար դեռնափորին ծայրն խմբուած նորընծայից ականջին։ Լսողիտական այս խաբէական երեւոյթս մտածուր դործիքնեբու միջոցաւ կը կատարուէր՝ զորս ըստ կամաց հան կը պտեղծին կամ կը վերցնէին անկից։

Կրատոս իւր Մեսեղղա ամուսնոյն չիրիմ մը կանդնել տուաւ բլրոյ մը գոլ, ուր տեղ յոյն ճարտարապետ մը այնպիսի արձագանգ մը յարմարցուցած էր՝ որ մէկ անգամ մը ելած ձայնը հինգ անգամ կը կրկնէր։ — Եւրոտասայ հովտին մէջ մեր օրերը դեռ կայ արձագանգ մը՝ որ վեց վանկ կը կրկնէ ամենօրոշ կերպիւ։ Ս. յարձագանգս կը պատճառին մարդոց ձեռօք պեղուած բաղմաթիւ խուզնեբէն, որոց ի՞նչ նպատակաւ պատրաստուիլը չդիտցուիր։

Ս.մենէն հռչակաւոր բնական արձագանգաց մէջէն կը յիշուին Կիւղիկեի քաղաքին արձագանգը՝ որ իրեն զարնուած ձայնն սրոշակի չորս անգամ կը կրկնէ։ — Դիոնեսիոս Սիրակուսացւոյն բանտը ըսուած սոսրերկրեայ սրահն՝ ամենափոքր չչունչի մը մեծագնիւն սաստկութիւն մը կուտայ, որն որ պայթմամբ մը կը վերջանայ։ — Կղոդիոսի Լրմուղը՝ ձայնին բարբառն կամ ինչ որ ալ ըլլայ բազում մղոն հեռաւորութեան կը տանի։ — Ժաննեակաւ Վ.երտիւնի մօտ

երկու աշտարակ կար, որ կըսեն թէ տասնչորս անգամ կրկնող արձագանգ մը կը պատճառէին։ — Պարթիոս արձագանգի մը վրայ կը խօսի՝ որ Բոպլենցի չրջակայներն կը դանուի, և տասն և եօթն անգամ կ'անդրադառնայ եղել։ — Փիրչեր և Ս.քօմբ՝ Սիմանէթթայի դղեկին արձագանգին վրայ ըրած հետաքրքրաշարժ նկարագրութեանց մէջ կըսեն որ, եթէ մէկը յիշեալ դղեկին մէկ քանի մասնաւոր պատուհանաց մէջ կենալով ճիչ մը արձակեն, այն ճիչն քառասուն անգամ կը կրկնուի։ — Ս.տաիսըն՝ այս ամենէն աւելին խօսել է. կը հաստատէ թէ Ս.բինեան լերանց մէկ կրճին մէջ իւր հանած ազազակն առանց ընդմիջման չարունակաբար յիսուն անգամ կրկնուել է։ Ս.յս հետաքրքրութիւնս փիչ չատ կատարեալ գաղափար մը է. և մեր այն մտածողներս յիշատակին համար ունեցած ամեն յարգանացն հակառակ ստիպուած եմք խոստովանելու, որ Կարտանի(*) եղերքն ալ տակից աւելի չափազանցութիւն ընդ չկրնար դանուիլ։

1692 ի Գլոսթըշեռց Ընտրանի Յիշատակարանց մէջ տեսակ մը արձագանգ կը յիշուի, որ սա եզակեան յատկութիւնն ունի, որ խօսող մարդը ամենևին բան մը չլսեր, մինչդեռ մարդ ընծան նոյն ձայնին տարբեր տարբեր եղանակի փոխուիլը կը լսէ.

(*) Գետ ի Գասղիա, որ Գասքոնիոյ մէջէն կանցնի. Գասքոնիացի բառը գաղղիացւոց մէջ պարծակ, չարլատան կը նշանակէ։

ձայնը նախ և առաջ կարծեսթէ կը հնչանայ, մէկ մ՚ալ յանկարծ ետ կը դառնայ՝ առաջինին ուժգին զօրաւոր։

Սպանիոյ մէջ շատ մը եկեղեցիներ կան՝ որոց մէջ ձուաձև կամարներով սրահներ կը գտնուին, որք ձայնատու փողոյ գործ կը կատարեն. կամարին կողմերէն միևոյն զարնուած ձայները միւս կողման վրայ կերթան կ՚անդրադառնան այնպէս՝ որ երկու իրարու հակառակ ծայրերը գտնուող անձինքն թէև կարի ցած ձայնիւ ալ խօսին, իրարու խօսածը կը լսեն, մինչդեռ իրենց խօսակցութիւնն սրահին մէջ տեղը գտնուող մարդոյմէ չկրնար լսուիլ։

Լ՚ըրանդ՝ որ խիստ հետաքրքրաշարժ գրքի մը մէջ Սպանիոյ հաւատաքննական ատեանին սոսկալի գաղանիքներն ի վեր հանած է, որոյ քարտուղարն եր՝ կը պատմէ որ Հաւատաքննութեան դեռնափոր սրահից մէջ խիստ մեծ ճշդութիւն պահող արձագանգներ չինուած էին. ներդաւոր արձագանգներ, որք ցած ձայնիւ ևս. զած անխոհեմ խօսակցութիւնն հաւատաքննչաց ականջն կը հասնէին, և այս կերպիւ յոշնութիւն զոհերու մատնուած կըլլային։

Տակաւին լսել մը առաւել կամ նուազ հետաքրքրական պարագայներ կրնային գտնուիլ հնոց լսագիտութեանն վրայ պատմուելիք, բայց սոյն երկասիրութեանս տրուած սահմանն չներեր մեզ որ աւելի երկար խօսիմք այս նիւթոյս վրայ։

ՀԱՏՈՒԱԾ Դ.

ԲՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆՆ ՆԱԽՆԵԱՑ ՄԷՋ

Բնալուծութիւնը այն գիտութիւնն է՝ որ տարերց բաղադրութիւնն, և զանոնք ինչպէս տարբաղադրելու եղանակն կը սովրեցնէ։ Ա.յս արհեստս՝ մանաւորապէս մետաղալուծութիւնն՝ յաջող կերպիւ ի գործ ածէին նախնիք։ Կրսեն թէ Հերմէս կամ Թիւպալքայէն առաջինն եղաւ որ երկրիս խորերէն հանքերն դուրս հանեց, հալեցուց և այսպէս առաւել կամ նուազ զուտ մետաղներ կրցաւ յառաջ բերել։ Դրական բացորոշ իրազութիւն մը, զոր հնութեան պատմագիրներէն չատերն աւանդած են մեզ՝ սա է որ, արդէն խիստ վաղեմի ժամանակներէ հետէ մարդիկ մետաղայ գետնէն գիտէին. և որ աւելին է, նմանը չգտնուած ճարտարութեամբ մը կը բանէին զանոնք։

Բրուտութիւնը, (1) ակնադործութիւնն (2) կամ ծանրագին գոհարներն բաղադրելու և կտրելու արհեստը, ամեն տեսակ կերպասներն ներկելու արհեստը, բիւրեղ շինելու և անոր զանազան գոյներ տալու, նոյնպէս գոյն կռանել՝ առաձգական ընելու արհեստը, հրարուեստն և այլն. և այլն.

---

(1) Leramique · Չէօմլկհիւնք ։

(2) Glyptique · Չաբեաքլըզ ։

դիտութեան բոլոր այս ճիւղերն կը մշակուէին ճշմարիտ արհեստագէտներու ձեռօք՝ որք իրենց ձեռակերտօքն ու ըրած նորանոր գիւտերովը կը հետաքրքրէին։ Ս.յդ դարերուն բնալուծութիւնն անշուշտ հասած չէր կատարելութեան այն բարձր աստիճանին՝ ուր հասուցած են զնա մեր արդի գիտնականք. բայց և այնպէս հնոց գիտուղ միաքն, հետախուզութեանց մասին ի գործ դրած յարատեւութիւններն, անյաղողութեան մէջ ցոյց տուած հաստատամտութիւններն, երբեմն ալ գիպուածը ճոխացուցած էին զանազան խել մը հնարքներով՝ որոց շատն չ'են գիտցուիր այժմ։ Ս.յսպէս՝ օրինակի ազատաւ Եղիպտացւոց պատահի և բանալեկին տուած գոյներին մերինները չատ աւելի հաստատուն էին. այնպէս որ՝ եթէ կերպասը լուացուելը ալ գոյը ամենևին չէր նետեր։ Իրենց արհեստական գոհարներու կազմութիւնն, երանգին ու կարծրութեանն մասին այնպէս ամենայատուկ կերպիւ կը նայէր բնական գոհարայ՝ որ ամենէն քաջ ճանչողն անդամ կը խաբուէր (*)։

Ս.հատուկ Պլինիոսն պարբերութիւն մը ետիպատացւոց կատու նկարելու եղանակին վրայ։

«Սպիտակ կատու մը վրայ նկարողներին դժուարացրել չ'ատոյ՝ այն նկարին իւրաքանչիւր մասն

(*) Տես այս նիւթոյս վրայ հետաքրքրական դրուատքն անուանի «Նկարչուկ հանգերձք և զարդք աւ նախնեան։»

զանազան գոյներ ծծելու յարմար խեժային բաղադրութեամբք կը լեցնեն։ Ս.պա այսպէս պատրաստուած կատուն՝ եռացող հեղուկ մը պատրաստող կաթսայի մը մէջ կ'ընկղմեն, և անկէց դուրս հանելնուն կը տեսնես որ կատուն ստացել է այն ամեն գոյներն՝ զորս անոր տալու միտք ունէին։ Բայց ամենէն աւելի նշանաւոր կէտն սա է որ՝ երանգներն ժամանակ անցնելով չ'են տրտմիր. ամենէն զբաւոր լուացումն իսկ ամենևին ազդեցութիւն չ'ըներ անոր վրայ։»

Գալով բիւրեղագործութեան, Փլուտոս Պլուտարքոս հետևեալ եղելութիւնն կը պատմէ։

«Անդրիանոս կայսրը իւր հիւպատոսներէն միուն երեք բաժակ գրկեց յոյժ զարմանալի բիւրեղէ մը չինուած, որ ազատնոյ մը վրին նման զանազան գոյներ ցոլացնելու յատկութիւնն ունէր. իսկ եթէ մէկ ուրիշ կողմէն նկատեիր զանազան, վանակաս (*) բառած պատուական ական նման կը փայլէին։

Պլինիոս և Պետրոն իրենց գրուածոց մէջ սա մեծ իրողութիւնն ալ նշանակած են։

«Տիբերիոսի կայսրութեան օրով՝ արհեստագէտին մեկը դիւրակոր բիւրեղէ դաւաթներ կը չինէր, որք բնաւ չէին կոտրեր. Կայսեր առաջն հանուելով՝ յիշեալ անօթներէն մին նուիրեց

(*) Obsidiane.

անոր՝ իբր կայսեր արժանի ընծայ մը։ Իւր նորահնար դիւտին համար ոչ վայել եղած դավեսաններն ընդունելէ ետքը՝ արհեստապէտն հանդիսականաց զարմանքն յաւելուլ ուզելով՝ անօթը նորէն ձեռքն առաւ և այնպէս սաստիկ կերպիւ դեահինը զարկաւ զայն, որ պղնձէ անօթ մ'անգամ ջնասուելու էր անկից. ապա անօթը դեռ նէն վերցնելով կայսեր ցոյց զայն, որ բոլորովին անձև բան մը դարձեալ էր։ Ս.յն առեն ծոյէն մուրճ մը հանելով ծուռումուռ տեղուանքն շտկեց և բոլորովին առջի վիճակին մէջ դրաւ զայն։ Երբ դժբաղդ մարդը կը յուսար որ նորանոր դավեսաններ լսէ այս բանիս վրայ և արժանաւոր վարձք մ'ալ առնու, Տիբեր հարցուց իրեն որ արդեօք իւրմէ զատ բնիւրեղն այս կերպ յօրինելու արհեստին դիտցող կա՞ր. արհեստապէտը դինքը վստահայնելուն վրայ թէ միմիայն ինքը դիտէր այդ գաղտնիքն, կայսրը հրաման ըրաւ որ գլխատեն զանի, որպէս զի չըլլայ թէ բաւականին ու արծաթն տղմէն առնելի անարգ համարուին։»

Մի և նոյն իրողութիւնն կը պատմէ նաև Տիոն Կասիոս՝ գրեթէ նմանօրինակ պարագայիւք. ուրիշ մի քանի հեղինակք ալ նոյնպէս կը յիշեն զայն։

Դիմնկրիտէս վարձառական փիլիսոփայութեան հայրն՝ թագուն դիտութիւններէն ուսանելու համար երկար աեն Եգիպտոս կենալէ ետքը Յունաստան վերադառնալով՝ բնալուծա-

կան աշխատութեանց տուաւ ինքզինքն։ Ա.մի սովորութիւն ըրած էր՝ որ յայղող երթող վարձերն իւր մատանեաւը կ'գմռէր, որ զանոնք իբր ստոյգ ներկայացնէ աշակերտացը։ Պետրոն կը հաւատայ թէ սոյն իմաստասէրս իւր կենաց վերջին էջն էսն բնագիտական և բնալուծական վարձերու պարապելով անցուց. ամեն տեսակ բուսոց զօրութիւններն և խել մը հանքային նիւթոց յատկութիւնքն կը ճանաչէր։ Նա ինքն է՝ որ առաջին անգամ ցոլացական հայելւոք վառարան մը շինեց. նա ինքն է դարձեալ՝ որ փղոսկրն կակղցնելու և զայն կռանելի ընելու հնարքը դտաւ։ Վերջապէս արուեստական պատուական ակունք և մանաւորապէս տպաղիոններ և զմրուխտները յօրինելու արհեստին մէջ քան զամենն դերազանցեց։ Դէմոկրիտոսյ ընծայեալ բաղմաթիւ դիւտից մէջ կայ նաև թնդանօթի վառոդին նման քիմիական բաղադրութիւն մը։ Ս.յս պիշին՝ որ Եւրոպիոյ մէջ միայն ասան և հինդերորդ դարուն աեններէն ճանչցուեցաւ, շատ հին ժամանակէ հետէ կը շինուէր Հնդկաստան և Եգիպտոս։ Բնալուծութիւնն երեք հազար տարիէն աելի է որ այդ գաղտնիքին ծանօթ եղած է։ Սոյն բաղադրութեանս նախնեաց մէջ գործածութեանն վրայ գրուած բաղմաթիւ պատմական գրուածքներ յայտնապէս նորա ծագման հնութիւնն կ'ապացուցանեն։ (Տես այս մասին ներկայ աշխատասիրութեանս Հրաւոեսո անուանեալ դլուխը։)

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՇԱՐԺԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — ՄԵՏԷՈՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

Երկրաշարժներ ա՛ն ընդհատ ուրիշ ալ երևոյթներ ցոյց կու տան։

Երկրաշարժները, վոլքանները, աղբղուռ նեըն, սոճի կ՚ելլեն, դուշակելու արհեստը կ՚երեւայ թէ նախնեաց մէջ գիտնոց կամ քրմաց դասուն յատուկ էր։ Բնագիտութեան և բնապատմութեան վրայօք այն դասուն ըրած անընդհատ հետազոտութիւնքն՝ և յորս կը մղէր նաև իւր ամենէն հանճարեղ ձեռնասուններն, այս մասին բնաւ տարակուսի տեղի չեն թողուր։ Պրահմից, մոգուց, մարգարէից, գիտաց, և իմաստասիրաց պատմութեան մէջ տեղ տեղ կը գտնուին այս տեսակ կանխատեսկոյց նշաններ՝ որք խիստ շատ անգամ իրօք կը պատահէին։ Ս. յոպէս՝ Փերեսիտէս Պիւթագորայ առաջին վարդապետն ուշի ուշով լրհորոյ մը լուրն քննելէ և համբ նայելէ յետոյ՝ Սամոսացւոց ըսաւ որ դեռ օրը երեկոյ չեղած երկրաշարժ մը պիտի պատահէր. և արդարև մի և նոյն դիշերն շատ մը ցնցումներ զգացուեցան և կղզւոյն գետինն շատ տեղէն ճեղքուեցաւ, ուսկից ծծմբային գոլորշիները դուրս կ՚ելլէին. այսպէս միշտ պաղ ու պայծառ եղող լրհորոյ մը լրոյն պղտորիլ ու տաք լրոյ փոխուիլն և անոր միայն համբ նայիլն բաւական եղան դուշակել տալու այն ցնցումն՝ որ պիտի պատահէր։

Լակեդեմոնի մէջ Ս. Նաքսիմանդր վիլիսոփայն երկրաշարժ մը դուշակեց, որ Թայդէա լեռնէն շատ մը ժայռերու անկմանը պատճառ եղաւ։ Ս. յս դուշակութիւնս այն խոսք և ահագին դղրդիւնին վրայ հիմնուած էր, որ միշտ սաստիկ ցնցումներէն և խառնարանի մը բորբոքմանէն մէկ քանի ժամ յառաջ կը պատահի։ Անոնք՝ որ այս բոլորովին բնական պարագայներէն օգուտ քաղել ուզել են, իրենց նմաններուն սարսափ ազդելու համար ըսել են, թէ ցասուցեալ աստուծոյ մը ձայնն էր այն՝ որ վրէժ պիտի խնդրէր ևթէ իւր սրամտութիւնը ցածուցանելու միջոց մը չգտանէին։ Ս. հա սակից՝ մեհեաններ և նուէրներ։

1693 թուականին Պօլոնիոյ մէջ սուդուեցաւ որ ճիշդ երկրաշարժի մը նախընթաց երեկոյն լրհորներուն և ապերոյ լուրը պղտորեցաւ և դաղջ դարձաւ։ Մի և նոյն երևոյթն տեղի ունեցաւ Սիկիլիոյ մէջ 1818 ին Փետրուարին. նմանապէս Եանայի մէկ սոսկալի բորբոքմանն նախընթաց օրը։

Նմանօրինակ երևոյթներ առիթ տուած են անցեալ դարուն բաղմաթիւ գիտնոց՝ շատ մը երկրաշարժից պատահելի օրն և մինչև իսկ ժամն ճշդիւ դուշակելու։ Պարտն Քաոէ Միցցին

տան և հինդ օր յառաջ հրապարակաւ կանխա-
ղեկոյց այն երկրաշարժն՝ որ Լիման տակնու-
վրայ ըրաւ և իւր աւերքն մինչև Մարդինիկէ
հասուց։

Օդերևութական փոփոխութիւնքն աւելի յա-
ճախ պատահելուն համար՝ վրայնին զննութիւն
ընելն աւելի դիւրին ըլլալուն, ամեն ժամանակ
առաւաւտուղիս աղբիւր մը եղան, ուր հրաշա-
դործն կը դիմէր անդադար։ Զրադաշտ, Մով-
սէս, և հնութեան քահանայական դասուն գլխա-
ւոր անձինքն՝ դիտութեան այս կարևոր ճիւղս
առաւել կամ նուազ յաջողութեամբ մշակեցին,
և գոյն ժողովրդոց իրենց առաքելութեան պաշ-
տօնին վրայօք բարձր դաղափար մը տալու կը
դործածէին։ Սակայն՝ ի դովեստ Յունաց ըսեմք,
որ իրենց իմաստասէրներն՝ ի բաց մերժեցին ի-
րենցմէ այդ հպարտ և յիմարական պահանջ-
մունքս, և իրենց մետէորադիտական ծանօթու-
թիւններն միայն դովելի նպատակաւ մը՝ ի կիր
արկին. այն է՝ ամբոխն լուսաւորելու, ամեն
խելքը գլուխը անձի ուսուցանելու թէ տիե-
զերաց մէջ ամենայն ինչ նախասահմանական ըն-
թացքի մը կը հետևի, և թէ բնաւ որևէ էակի
մը սրտաճմ չէ իրաց ընթացքն շրջելու կարո-
ղութիւնն։ Թաղէս, Պիւթագորաս, Դեմոկրի-
տէս և այն վարդեմի ժամանակաց այլ բազմաթիւ
դիտուն՝ ճշմարիտ փիլիսոփային յատուկ եղող
անշահասիրութեամբն իրենց հայրենակցաց կը
ղեկուցանէին, որ սովու տարւոյ մը դէմ ինք-

զինքնին պատսպարեն, կամ առատ հունձք մը
ստանալու համար մառաններնին կամ չոեմարան-
նին պատրաստեն։

Ընթերցողն՝ դիտ պաշտօնեայներուն և իմաս-
տասիրաց մէջ եղած տարբերութիւնն նշմարեց
արդէն անշուշտ. սոսկայմէ առաջիններն դիտու-
թիւնը իրենց անձնական շահուն և բարեկեցու-
թեանը կը ծառայեցնէին, մինչդեռ վերջիններն
ժողովրդոց ուսմանն ու բարօրութեանը կը ծա-
ծէին զայն։

Մետէորական նախադուշակութեանց ար-
հեստն՝ բնականապէս երկնային այլ և այլ երե-
ւութից զննութենէն կը բղխէր։ Այս զննու-
թիւնս ինչպէս որ ըսինք՝ յարատևութեամբ շա-
րունակուելով, մետէորադիտական արհեստին
մեծ կարևորութիւն մը և քիչ շատ ճշդութիւն
մը տուաւ։ Գէտք, հաւահմայք, լերդահմայք
և իմաստասէրք՝ երկինքը դիտելով շատ անդամ
ճիշդ կը գուշակէին։ Անբէտոկղ՝ իւր խորհրդ-
դոց դիտութեանն ընդունելէն առքը ծածկա-
բար հոդմերն չղթայելու, փոթորիկներն ցածու-
ցանելու կամ դրդռելու դաղանի միջոցներն կը
սովրեցնէր։ — Բրիտանական Կղզեաց Դրոյիդ-
ներն մրրիկներն յարուցանելու, ալեկոծեալ
ծովուն վրայ հանդարտութիւն իջեցնելու զօրու-
թիւնն կը վերադրէին ինքզինքնուն։ Եգիպտացի
քրմերն շատ վարպետ էին այս տեսակ դուշա-
կութեանց մասին. այնպէս որ՝ նաւաստիք ծովը
ելնելէ յառաջ անոնց խորհուրդ հարցնելու կու-

դային։ Թաղէս՝ որ իր ստացած ճանօթութիւնքն Եգիպտացւոցմէ առած էր, մինոլորտին փոփոխութիւններն դիտցանող նշաններուն վրայ փոքրիկ մատեան մը յօրինել էր։ Օրինակի աղաղաւ. հորիզոնին վրայ փոքրիկ սպիտակ ամպոյ մը երեւիլն՝ երբ երկինքն պայծառ է, մօտաւոր անձրեւի մը կամ փոթորկի մը նշան է։ Պրար ճանապարհորդը՝ որ երկար ժամանակ Եգիպտոս կեցած է, իր անձնական դիտողութեամբն կը հաստատէ թէ այս նշանս գրեթէ միշտ ճիշդ կելնէ։ Բարեբաղդաբար գլուխն փոթորիկէն չառաջ նմանապէս հորիզոնին վրայ փոքրիկ ամպ մը երեւան կուգայ, որուն նաւաստիք Հ-ը-ռ կըսեն։ Նոյնպէս նաև Կիւինեէի ծովափանց վրայ բիծերու նման ապիս անդին ցանուած փոքրիկ դորշագոյն ամպերն՝ փոթորիկ մը դուժեն, որ շատ չ'անցնիր կը պայթի։ Սաստիկ տաքերն ու մեծ ցուրտերն, հողմերն և օդոյն խաղաղական հանդարտութիւնն՝ նոյնպէս ղիրենք կարապետող նշաններն ունին։ — Դիտակորիտէս երկրորդ օրն անձրեւ գալիքը կը դուշակէր, երբ երեկոյին ղեմ թանձր և սեւագոյն ամպի մը հորիզոնին վրայ վարագուրի ձեւով պարզելն կը տեսնէր. իր դուշակութիւնն գրեթէ բնաւ սուտ չէր ելներ։ — Նմանապէս առաւել կամ նուազ բուռն հողմ մը պիտի ելնէ կըսէր, երբ սաստիկ տաքերէ ետքը երկինքն վրայ կարմրագոյն երիզներ կազմուէին։ — Պատանիտս պատմագիրը՝ մեծ խորհրդով դիտակ եղողներէն չատերուն կարկին ակռգին

ամպ մը՝ ի բաց վարելնին տեսած է, որ խիստ հատանգանաւար մեծ աւերը ու ապականութիւն պիտի պատճառէր՝ որ երկրի վրայ որ պայթէր։ Ատոնց՝ ի գործ դրած միջոցն էր ծայրերնին դրապանակներ կամ հմայեակներ անցուցած երկար ձողեր երկնցնել դէպ՝ ի ամպն։ Մի և նոյն միջոցն ութերորդ դարուն նորէն գործածուեցաւ սկսաւ. և անցեալ դարուն վերջերն ալ Պերթոլըն բնագէտը հնոց գործածածին գրեթէ նման կարկատարգելներու գործածութիւնն առաջարկեց։ Վերջապէս քանի մը տարի կայ՝ նորահնար կարկատարգելից վրայօք յիշատակագիր մը կարդացուեցաւ Գաղղիոյ կացրդին (*) առջև։ Ցեռս այս մասին յիշեալ գիտնական կաճառին աւետագրութիւնքն։

Ատենօք ժողովրդական մէտէորագիտութիւն մը կար, ինչպէս նաև մինչև յայսօր կայ գիւղացւոց ձեռօք ամեն օր գործածուած. այդ մէտէորագիտութիւնը՝ բաղմաթիւ սերնդոց փորձառութեանն արդիւնք, խիստ քիչ անգամ կը խաբէ դիտող չինականն։ Սակայն և այնպէս կրնայ պատահիլ՝ որ գիւղացւոյն դուշակութիւնն կէտ առ կէտ ճիշդ չ'ելլէ. և փոխանակ անձրեւին հողմն ելնէ փոխադարձաբար. բայց սա ստոյգ է որ եղանակը անպատճառ պիտի փոխուի։ — Ես շատ անգամ խօսակցութիւն ըրած եմ ծերունի ագարակապետի մը հետ՝ որ օդոյ փոփո-

(*) Institut de France.

խուճեան մասին դիւղին պատգամն համարուած էր։ — «Կը տեսնե՞ս, ըսաւ ինձ օր մը, սա արժդոյն կապոյտ երկինքն, և սա անկանան, փոքրիկ, սպիտակ և իբր փետուկեալ ամպերն՝ որք կարծես թէ անշարժ կեցած են. ահա հողմն է այդ. մեծ հողմն մը՝ զոր այս դիշեր կամ շատ շատ վաղն առաւօտ պիտի ունենանք։» Ըսածը հաստատուեցաւ. նոյն իսկ այն երեկոյին։ Սոյն հողմն երեք օր չարունակ փչեց։ Չորրորդ առաւօտն՝ չինականն մեծակակ սեագոյն մի ամպ ցոյց տուաւ ինձ մատնանիշ, որ տակաւ առ տակաւ հորիզոնն՝ ի վեր կելնէր և հետզհետէ կ'ստուարանար։ «Փոքրիկ անձրևը մեծ հողմն կ'իջեցնէ, կըսէ առաջն, ըսաւ ինձ. քանի մը ժամէն անձրև պիտի գայ։» Եւ յիրաւի՝ նախ թեթեւ՝ ապա աւելի առատահոս անձրև մը սկսաւ տեղալ ջերեկուան մօտ և հողմը ցածուց։ Ցիշեալ ծերուկ գիւղացին չոր և խնկաւ օգերն, մշուշներն, սառնամանեներն, հողմերու հանդարտութիւնքն, և ընդհանրապէս մթնոլորտին մէջն մի փոփոխութիւնքն կը կանխատեսէր. և իբ այս մտային կարողութիւնն ստացած էր յարատև դիտողութեամբ և երկարժամանակեայ փորձառութեամբ։

Վերոյդրեալ իրողութիւններէն կեզրակացընեմք, որ մթնոլորտին և երկրին փոփոխութիւնքն յառաջուց դուշակելու արհեստն՝ հին ժողովրդոցմէ իբրև աստուածոց մէկ տրիտուրն համարուած էր. և անոնք՝ որ այս արհեստիս խելամուտ եղած էին՝ այս հաւատքս հաստատել կը ջանային, որ առատ պատիւ և շահ կը բերէր իրենց։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՀՐԱՇՔ։ — ՀՐԱՇԱԼԻ ԵՂԵԼՈՒԹԻՒՆՔ ԱՌ ՆԱԽՆԻՍ

Տգէտ և դիւրահաւան մարդոյն համար արտաքուստ անբացատրելի երեւոյթ որ և է իրողութիւն հրաշք մ'է, սքանչելիք մ'է. իսկ ուսեալ և ուղիղ դատողութեան ու առողջ մտաց տէր անձի մը համար ընդհակառակն հրաշք ըսուած բան չ'կայ։ Ամէնէս հրեշային էակ մը, օգոյն մէջէն և երկրին խորէն լսուած ձայն մը, երկինքը անսովոր նշաններու երեւիլն, արձանի մը քալելն ու խօսիլը, և վոհմորկի մը առնուած վիճակաւոր խուճապներ և այլն. և այլն. կը զարհուրեցնեն ոամիկն՝ որ ամենայն ինչ միայն աչօք և ոչ մտօք կը տեսնէ։ Իսկ խմաստասէրն այս հրաշալեաց իրողութիւնքս ուրիշ կերպ չ'նկատեր՝ բայց իբր արդիւնք մը պատճառի, որոյ ինչ ըլլալն արդէն դիտէ, կամ զոր գիտառելու առաջ կըլլայ եթէ չ'գիտնայ ալ։

Ամէնարհի ամեն ազգերն ալ հրաշքներ, սքանչելիքներ, հրաշալի և գերբնական եղելութիւնները մէջ կը բերեն, որ իրենց հաւատալեացը ի փաստ ամէնքն ալ իրենց առաւել կամ նուազ անհեթեթ առասպելներն ունին. և վայ անոր՝

որ զայնս ծաղրելու համարձակի։ Բայց ինչո՞ւ համար սոսկասելիութիւնն ըլլայ միշտ ճշմարտութեան տեղ։ Աւա՛ղ. անոր համար՝ որ ամեն տեղ և ամեն առեն գանուած են չարլաթաններ և դիւրահաւատ մարդիկ. անոր համար՝ որ առաջինքն երկրորդաց տգիտութեանն ու դիւրահաւանութեանը պէտք ունին իրենց համբաւն ու հարստութիւնն կազմելու համար։ Թէև այսօրուան օրս չարլաթանաց թիւն յոյժ նուազած չէ, բայց և այնպէս բոլորովին այլ օրինակ ընթացքներ բռնելու և իրենց առաստելացն հաւատալնելու համար՝ զանոնք աւելի խնամօք զարդարելու սակսուած են, ասով հանդերձ իրենց ճշմարիտ հաւատացելոց թիւն դարձեալ օրըստօրէ կը նուազի։

Մի միայն դիտութեանց և արհեստից միջոցը էր (որոց միացնակ աւանդապահն էր) որ քրմական դասն ու իւր համախոհքն նախնեաց մէջ հրաշքներ կը գործէին, որք սոսկալիկ տպաւորութիւն կրնէին ռամկին վրայ։ Այս արարմանցս հետեւութիւնը սա կըլլար որ՝ ժողովրդոց սրտին մէջ աստուածոց պաշտօնէից նկատմամբ միշտ երկիւղն ու պատկառանքն վառ կը մնար։ Աստեղաբաշխութեան, բնագիտութեան և տարրալուծութեան, մեքենագիտութեան, բժշկականութեան և դեղագիտութեան ծանօթութիւնքն՝ ղրս ձեռք բերած էին քրմերն, կարող կընէին գիրենք աստուածութեան հետ հաղորդակցող առանձնաշնորհեալ անձանց տեղ անցընելու։

ուսկից ծագումն առաւ այն հաւատքն թէ, անոնք աստուածոց և մարդկանց միջնորդներն էին։

Արդէն այն աչխատասիրութեանս ընթացքին մէջ խնդիր մը հրաշքներու յիշատակութիւնն ըրած եմք. և որովհետև չատերկար կրլլայ պատմութեան այս մասին մեզ աւանդածներն միաւորի թուել, ասոնցմէ միայն գլխաւորներն յիշելով պիտի բաւականանամք։

Քաղդէացիք՝ որք կրակապաշտութիւնը աւանդաբար տարածեցին միայն կրակը պաշտելու համար սեղաններ կը կանգնէին. ասոնց մեղքն՝ ժողովուրդն իրենց կենդանին աւետեաց ընծան ըլլալուն համոզելու համար օտար աստուածոց կուռքերն բոցավառ խարուկի մը մէջ տեղ կը նետէին, որք անմիջապէս կերթային կը մրկէին. այս բանս այն աստուածոց կրակէն ինքզինքնին պաշտպանելու անկարող ըլլալնուն իրր ապացոյց ցոյց կուտային։ Քանդերէն քրմերէն մին մատնեց, որ մէկը դատարկ արձան մը շինել տայ՝ իբր երկնից օրինակ. այդ արձանը առնելով մէկը չուր լցուց և բերանն ալ մեղրամոմէ խցով մը փակեց. յետոյ մտաց ներկայացոյց զայն, որք անմիջապէս բոցակէզ խարուկով փորձել ուզեցին։ Բայց մոմն հալելուն պէս չուրը առատութեամբ դուրս հոսեցաւ ու նուիրական կրակն մարեց։ Այսր վրայ քաղդէացիք այս նենգութենէ խաբուելով Եգիպտացւոց աստուածոյն դեսպանութեանն վրայ համոզուած մնացին և աչ

անկից եաքը հաւրն՝ որ իբր սկզբնական տարը, երկրորդ կարդի աստուած մը համարեցան։

Պորփիւր և Յամպղիկ կը ծանուցանեն մեզ թէ, չատ հին առենէ՝ ի վեր եգիպտացի քրմերն խոտացեալ շոգիներու միջոցաւ օդոյն մէջ աստուծոց պատկերներն երևցնելու գաղանիքը գիտէին։ Ուրեմն Մենէ Թութ հրաշալի երևոյթն ուրիշ բան չէ եղել, բայց եթէ հնոց ըրածին կրկնութիւնն։ Ինչպէս որ գիտեն ընթերցողք՝ յիշեալ խաչը երկինքին երեսը երևցաւ. սա ալ Կոստանդիանոսի երևցած խաչանշան դրօշին նման եկեղեցւոյն գմբեթին վրայի կանգնուած խաչն էր թանձր ամպոյ մը վրայ ցոլացած։ Մեր օրը բնագիտութեան զբօսեցուցիչ մասը այս տեսակ հրաշքներ յառաջ կը բերէ։

Պեռլինոսի թագաւորութեան օրովը օդոյն մէջ մարդկային կերպարանքով արարածներ տեսնուեցան կըսէ Վ. իլլարի աբբան, որք մերթ պատերազմի կարգաւ կը քալէին, մերթ օդաչուստերու վրայ կը նաւարկէին։ Մինչև անգամ իրեն հաւատացող եղել էր որ, այս արարածներէն չորս հոգի՝ երեքն այր և մէկը կին, իրենց նաւէն վար իջնելով Լիոն քաղաքին մէջ չըրջագայած էին։ — Ա՜հ՝ պարոն աբբա Վ. իլլար. արդեօք մուսուրաման կարողութիւնդ կանոնաւոր վիճակի մէջ էին երբ այս առասպելաց առասպելն կը գրէիր։

Նանրահաւատան Մէղըրէ ևս կը պատմէ թէ, 1192 ին Նօժան-լը-Րոթրուի քով օդաչու բա-

նակները տեսնուեցան, որք յերկիր իջնելով ճանաչայ յարդարեցին և սաստիկ կատաղութեամբ պատերազմեցան ի մեծ սոսկումն բնակչաց երկրին։

Կարդան հետևեալ նկատութիւնը կը պատմէ. — Միլանի մէջ վրայց մը տարածուել էր՝ որ օդոյն մէջ սաւառնող հրեշտակ մը կար. Կարդան հասարակաց հրապարակը վազելով՝ որ այս հրաշքս պիտի լսելու եկած ամբոխին համակ լցուած էր, իրեք նշմարեց զայն խիստ որոշ կերպիւ, և երկու հաղար հոգի ալ մի և նոյն բանը տեսան իրեն հետ՝ չ'ըսս հաղար աչօք. ալ խաբուելու բան չէր . . . . զարմանք պատած էր համօրէն բազմութեանն վրայ՝ երբ բազմահմուտ իրաւաբէտ մը հոն հասնելով, շրջիլը պատող խմբերուն դիտել տուաւ՝ որ այն հրեշտակը ուրիշ բան չէր, բայց եթէ Սրբոյն-Ասթարի զանգակատան վրայ կանգնուած քարէ հրեշտակ մը՝ որոյ պատկերն թանձր ամպոյ մը վրայ տպաւորուելով հանդիսականաց աչացը կանդրադառնայր։

Հայր Տէշալ՝ իր պիտութիւն լուսաբեկբեկման (*) անուն դրքին մէջ նմանօրինակ պէտք մը կը պատմէ, որուն ինքն ականատես վկայ եղաւ։ Վ. եզըլէի մէջ ցերեկ ատեն օդոյն մէջ հսկայ մը երևցաւ, որ ձեռքն երկայն թուր մը շլացնելով՝ քաղաքին սպառնալ կը թուէր։ Գիւղացիները զայդ տեսնելնուն սարսափահար եղած ձգելին

(*) Dioptrique.

վախան. բայց մի քանի խելքերնին գլուխնին անճինք՝ այս հրաշքը պատ. արեամբ քննելով, հասկցան որ ահկղեցւոյն զանգակատուններէն միայն վրայ կանգնած սրբոյն Միքայէլի արձանն էր այն, մեծկակ ամպոյ մը վրայ ցոլացած։

Ս. Ղ՝ դիցաբ թէ որպէսզի նոյնիսկ չարչարանքին մէկը արդէն վախկոտ դիւրացնէ ան ու սարսափի մէկը ձգել ուզէր, անշուշտ պիտի հասներ իր նպատակին՝ ձայնը բարձրէն բերել սկսավ և մի քանի խօսքեր արձակելով. սարսափելի չ'կայ որ համարէն դիւրն պ'ասի հասատաներ թէ երկինքէն հսկայ մը երևցել էր, և թէ իր սոսկալի խօսքերն լսած էին։ Ուրանից՝ ահռելիկ դրեթէ ամեն հրաշքներն, ամեն այս սեսակ դերբնական եղելութիւնքն զրոս կը պատմեն՝ սասր կը նմանեին, և մի և նոյն չարքին մէջ կրնան դասուիլ։

Հրաշագործ՝ ի գործ դրած մեքենական հնարքներն միանգամայն յոյնսթիւ և բազմապիմի էին, և ժողովրդեան հետաքրքրութիւնն սես՝ որ դերասան էակի մը միջամտութիւնն սեսնել կը թուէին յայնս։ — Մեմֆիսի և Եղեսիսի սաճարաց չարժական սախսակամուճներն, — Մեմնոնի ձայնասոր արձաններն, — Ս. Բրիդոսի թռչուն սղաւնին, — պղնձէ օձերն՝ որ խոտոր վրայ կը սահէին և լեզուներնին երկնցնելով կը շչէին, — սակի թռչուններն՝ որ թռչուններն կը խժռսէին և կերդէին, — պղնձէ ցուլն՝ որ կը բառաչէր, — խել մը կասց դրոշներն՝ որ դրեթէ ամեն հնոցի մէջ կը չարժէին կամ անդամ

ներնին կերերցնէին նյնն. նյնն. բոլոր այս դլուխ դարձուցներն կ'սպացուցանեն թէ մարդամեքենայներ չհնելու արհեսն խիսս յառաջացած կասարելսթեան վիճակի մը հասուցուած էր։

Ս. պողոսիոս Տիանացին՝ Հնդկասանի եմասնոց մէջ դանուած միջոցին եռսասանիներ սեսաւ, որք սառնց սեսանելի չարժիչի մը ինքնիրեննուն կուդային սեղանոյ մը փով կը չարսուէին։

Մաքրոպէ կը պասմէ թէ Հիերապօլսոյ մեհենին մէջ արձաններուն սեղերնուն եղնէն, քայլէն, յետոյ դարձնալ իրենց առջի սեղերնին դառնալնին սեսել է։

Եղեսիսի մեհենին սեերակաց մէջ մինչև յայսօր կը սեսնուին դեռ չարժական սախսակամուճի մը ահագին սեղերն, մէջը մտնելու համար կռփուած ճեղքուածներն և լայն ծակերն։

Դեպֆիսի մեհենին մէջ՝ նմանապէս առակին մարքին մէջ իր պաշսօնէից հետ սմսմելով երկիւղ և պասկառանք սպասուրելու յորմար ուրսասեսլական խել մը հնարքներ՝ ի կիր կառնուէին։

Մեմնոնի արձաններն՝ արևդական ճառադայթներն վրան զարնուելուն պես ոդբագին ձայներ կհնէր։ Ս. յէ և այլ ենթադրութիւնք եղած են յիշեալ արձանին ձայնասորութեան վրայ։ Յոր. նաղ՝ որ Անդրիանոս կայսեր օրով կապրէր, և Փիղոսորասես այս հրաշքի իբրև վրայօք խօսելով կըսեն թէ, իրենց ժամանակն ալ սակաւին

կեցած էր այն։ Լանկլէս խիստ հմտալից բանա-խօսութիւն մը չարադրած է այն նիւթոյս վրայ։

Երբ Սիպեղեայ արձանն Սատալայ պալա-տին Հռոմի կը փոխադրէին, սա գեղեցիկ խօս-քերն լսելի եղան անկից։

— Շուտ վերցուցէք դիս ասկից և փութով ի Հռոմ՝ ատոնց բնակութեանն մի միայն արժանի քաղաքն տարէք։

Եփեսոսի Անահիտ երբեմն երբեմն կը խօ-սէր, թեւերն վեր կը վերցներ, ինքնիւր վրայ կը դառնար և ուրիշ խել մը հրաշքներ կը գործէր, որք բարեպաշտից երկրպագութիւնն ու նուէրն առնա կը ձգէին։

Սրամտագոյ Սմռնի արձանն յօրքերն կը պատառէր ի նշան գժգոհութեան։

Փիկաղէի մէջ՝ Կոթիկի լերին վրայ հոյաշէն մեհեան մը կար, ուր Սպողնի արձանն կը պաշ-տէր։ Սոյն արձանս նստած էր. բայց երբ նու էր մը մատուցանէին իրեն, ի նշան գոհութեան ոտք կելնէր։

Սիկիլիա՝ Սատիկան բադնոյն վրայ անչինա-նելի բոյ մը կերևէր, որ դիչերը ցերեկ կը վառէր և մարդ չէր գիտեր թէ ուսկից ճարակ կը գըտ-նէր։ — Վիշնուի բազինն Բարագայի մօտ՝ որ ի Հնդկաստան, մի և նոյն երևոյթն կընկերկայա-ցընէր։ Հրաշագործք՝ որ այդ բանին պատճառն ինչ ըլլալը գիտէին, շատ կ'զգուշանային զայն տարաձայնելէ. վասն զի մեծ վատակ ունէին անկից։ Սակ պարզապէս քարաժայռին ճեղքը-

ուածներուն մէջէն երևող ջրածին կազի հոսանք մ'էր, զորս քուրմք դաղտնի խողովակի մը մէ-ջէն կանցընէին։ Սյսօր քաղաքայ մէջ լուսա-վառութիւնն ընդհանրապէս այս կերպիւ կըլլայ։

Սյն բոցերն՝ որք Վրաստանի մէջ դանուած աստուածանուէրն (Սէջ-կեահ) կելնեն, նաւթին բորբոքմանէն յառաջ կուգան՝ որ այն հողերուն մէջ շատ կը դտնուի հեղուկ վիճակաւ։

Սդոնիս գեղն իւրաքանչիւր տարի մի և նոյն եղանակին արիւներանգ դոյն մը կառնուր։ Սդո-նիսի արիւնն է այն, կըսէին, ի պատիւ Սդո-նոպիտանայ սիրելւոյն կառուցեալ տաճարին սպա-սաւորուղ հրաշագործներն։ Սյս հրաշքս յայ-տարար նշան մ'էր այն եղերական արարողու-թեանց, որք անմիջապէս պէտք էր կատարուէին ի պատիւ յիշեալ կիսաստուածոյն։

Տը Քանտոլ բնաբանն ապացուցանելով հաս-տատեց, որ այս երևութիս պատճառն ըստ բնաբանից «ֆէլբէր էյ-պէրեն» (ծխուն կարմրորակ) ըսուած բուսոյն տարապայման աճումն եղած է։ Էրիմպելէկ բնաբանն վերլուծութիւնն նմանա-պէս հաստատեց՝ որ կարմիր ծովուն երբեմն ըղ-ձեցած դոյնն մի և նոյն պատճառին վերագ-րելի է։

Սյնքան հաղուագէպ, որքան զարհուրելի ե-ղող մարդոյ մսի անձրևներն՝ հին ազգայ համար սարսափելի առիթ մ'էին. վասն զի այնպէս կը հաւատայնէին անոնց՝ որ աստուածային բարկու-թեան ակն յայտնի նշան մ'էր այն։ Կիմպերնա

բնապատում մը Նէկրէբոնի և Սինիկակիւսի հովատայ մէջ ժայռեր տեսաւ, որք մարդոյ մըն նման նիւթով մը ծածկուած էին համակ, և զորս Հեռոդոնեան (*) անուանեց։ Յիշեալ նիւթը քիմիական վերլուծութեան ենթարկուելով՝ կենդանական մսի համանման արդիւնք մը արտադրեց։ Կենդանաբանը՝ ինչպէս նաև դորան հաւկիթն կրնայ սաստիկ ջերմութեամբ մը չոգիանալ և ապա խոնաւանալով վերստին դէտինն ընկնիլ, ուսկից ծնած է մարդոյ մսէ անձրևի հաւատացեր։

Քարէ անձրևներն կամ չանթաքարի անկումներն բաւական յաճախ կը պատահին։ Սոսեռնեօք սոյն երևոյթս մերթ իբր տաուծոց մէկ վրէժխնդրութիւնն կը համարուէր, մերթ ալ իբր մէկ չնորհքն. զորօրինակ. երբ տաուած մը բանակի մը նպաստամատոյց ըլլալ ուզելով թշնամւոյն վրայ քարէ կարկուտ տեղալու ըլլար։

Սուրբն Եիփիան կըսէ թէ, Կարիոյ քաղաքներէն միոյն՝ Սիպիրի մէջ աղբիւր մը կայ, որոյ ջուրն որոշեալ ժամերու մէջ դինւոյ կը փոխուի։ Կը հաւատայ թէ ինքն անձամբ խմել է այն հրաշալի դինիէն. և կը պնդէ թէ սոյն հրաշքս ուրիշ շատ տեղուանք ալ կը պատահի։ Սրբոյն Եփիփանի վրայօք՝ աւելի իրեն նպաստաւոր կերպիւ խօսելով սա կրնայ ըսուիլ, որ չարաճճի խեղկատակի մը խաբեութեանն զոհ եղելէ, որ իրեն դինի հրամցնելով՝ այնպէս հաւատացուցել թէ

(*) Zoogène.

հրաշալի աղբերէ մը եկած էր ան։

Ա.ղեքսանդրիոյ մօտ Քաստըլպաղէ դղեկին մէջ մկրատութեան ատաղձներ կային միակտուր քարէ շինուած, որք Զատկին օրն ինքնիրեննուն կը լեցուէին։ Ա.յս հրաշալի ջուրս մինչև հոգեզատութա կը մնար հոն. նոյն հրաշիք անկից եաքը աներեւոյթ կըլլար։ «Թէ որ այս երկու հրաշքներուս վրայ կասկածող մը կը դանուի՝ կըսէ հռչեկոն Ա.ջոյէն հեղինակն, թող անձամբ երթայ ճշմարիտ ըլլալն տեսնէ։»

Վերոյիշեալ երկու հրաշքներն՝ Սրբոյն Ժանվիէի արեան հրաշքին կարգը կրնան դասուիլ։

Եգիպտոս՝ հին Գահիրէի մօտ դերեզմանատուն մը կայ, որոյ համար քաղաքին և մերձակայից բնակիչներն՝ Իսլամ ըլլան թէ յոյն, Տաճիկ թէ Մաւրիտանացի՝ կը հաւատան թէ տարին օր մը մեռելներն յարութիւն կառնուն և յետոյ երկոյին դարձեալ դերեզման կը մտնեն։ Թէվնօ ճանապարհորդը հետաքրքրութենէ չարժեալ յիշեալ դերեզմանատունը դնաց, և հրաշքին վրայ հաստատ համոզուած ժողովրդեան խուռն բազմութիւն մը գտաւ հոն։ «Ա.յս մարդիկ՝ կը յաւելու, վայրկենական յիմարութեան բռնուած, կամ այնպիսի դիւայապատրանքի մը ենթարկեալ երևցան ինձ, որ իրենց կը ներկայացնէր այն պատկերներն՝ զորս ի մոռ երևակայած էին, բայց որ իրօք չկային։»

Ա.յլազգիք, Հնդիկք և Ա.սիոյ այլ ժողովուրդք՝ բացարձակ անկարելի եղող իրողու-

թիւններ մէջ կը բերեն. մէկ վայրկեանի մէջ ուղղուած սպասաւորները, որուն քանակութիւն գտած . . . նեը, գլխովին բըժշկուած կոյրերը և համր ու խուլերը և մինչև իսկ հարիւրներով յարութիւն առած մեռեալներ ....

Ի մի բան, ամեն կրօնք ալ ուրիշ կրօնքներու դէմ հանելու համար իր հրաշքներն ունի. և ահա հոս՝ տեղն է դրուցելու, որ եթէ մեկը այս նիւթոյս վրայ հաշակուած ամեն առասպելներն, ամեն պատմութիւններն՝ ի մի հաւաքելու ըլլայ, խիստ բազմահատոր թանգարան մը կրնայ կազմել:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՀԻՍԵՍԴՈՐԾԱԿԱՆ ԿԱՄ ՍՐԲԱԶԱՆ ԲԺԵՇԿՈՒԹԻՒՆ

Բժշկութեան ծագումն՝ մինչև մարդկային նախնի ընկերութեանց կը հասնի. վասն զի յաւադնեալ մարդոյն բնական է որ ինքզինքն ապաքինելու ջանայ: Ս.յն զանազան ախտաժէտութիւնքն՝ որովք վարակեցաւ նա, առաւել կամ նուազ աղտու այլ և այլ պիսաւորուժական մրջոյններու դիմելու ստիպեցին զայն. այս մրջոյնները մերթ փորձառութեամբ և մերթ բազդովն առացուելով, ի սկզբան՝ աւանդութեամբ բերէ բերան հաղորդուեցան: Ա.ևնչ եղերքը՝ խելացի և հետաքննին մարդիկ աւանդական գաղտնիքներն՝ ի մի հաւաքելով գիրք մը յօրինեցին, որ թէ և խիստ անկատար՝ բայց և այնպէս յառաջընթաց ժամանակաց ամեն գիտերուն ալ համառօտ քաղուածքն կը պարունակէր մէջը. և որ իւրաքանչիւր օր նորանոր գիւտերով պիտի ճոխանար, և վերջապէս օր մը արհեստ մը, գիտութիւն մը պիտի կազմէր: Ս.յս առաջին հաւաքիչներս Հնդկական վաղնմի քաղաքակրթութեան մէջ մոգերն, իսկ Եգիպտացւոց ևՅունաց մէջ խորհրդապետացներն եղան:

Պրահմանական այն գիրքն՝ ուր բուժական դե-

զապիրներն հաւաքուած էին՝ վ.ոաւոաոդէր կը կոչուէր. — իսկ եգիպտական մատեանն՝ իր հեղինակին, այն է Թաաւդի կամ Յունաց Հերմէս Եռամեծին անունը կը կրէր և քառասուն երկու դրքէ բաղկացած էր, որոց երեսուն և վեցին մէջ մարդկային ամեն ծանօթութեանց պատմութիւնն բովանդակուած էր, և վեցն ալ անդամազննութեան, հիւանդութեանց և անոնց բուժման և ղանակին վրայ կը ծաւէին։

Բժշկութիւնն այն աստեն քահանայական դասուն սահմանեալ պաշտօն մը ըլլալուն՝ դիւրին է մակաբերելն, թէ ատոնք ինչ կերպիւ գործածեցին զայն քան հրաշագործ բժշկայ. հիւանդութեանց յատերն աստուածոց սրտմտութեան իբր մէկ յայտարարութիւնն պէտք էր համարուէին, և մինչև որ այն սրտմտութիւնն նուիրօք և աղօթիւք չը ցածուցուէր, ապաքինութիւն մարթ չէր յուսալ։ Ս.րդ՝ որովհետև անոսրրք կամ աշխարհականք չէին կրնար ձայներնին լսել տալ աստուածութեան, քահանայք իբր միջնորդ կընդունէին և աստուածային բարկութեան ու հիւանդութեան ծանրութեանն համեմատաբար վարձատրութիւն մը ստանալու պայմանաւ՝ իրենք յանձն կառնուին թօղութիւն հայցելն և ընդունելն իսկ։ Ս.ոնք մեծ դգուշութեամբ նայեցան որ գործածած բժշկական նիւթերնին մէկու մը չ'յայտնեն. իրենց դեղագրերն այլաբանական լեզուաւ մը գրուած էին, զորս իրենք միայն կը հասկանային, և այս կերպիւ բժշկութիւնն աստ-

ուածային կամ դիւցական արհեստ մը համարուեցաւ, որոյ ծանօթութիւնն դիք միայն իրենց սիրելեացը ի վեր կը հանէին։

Բժշկութիւնը երկու մասի կը բաժնուէր. բարձր բժշկութիւն և փոքր բժշկութիւն։ Բուժիչ բժշկութիւնն մասամբ իւիք մոգական նախաձեռք կը բաղկանար և մի միայն Հերմեսեանց կամ ծայրագոյն քրմաց ձեռօք կը գործադրուէր, որք կը պարծէին թէ ըստ կամաց հրաշքներ և դեղբնական արդիւնքներ կրնային յառաջ բերել։ Հերմեսեանք հիւանդութեան տեսակը կընդունակէին, նորա տեսղութեան միջոցին պատահելիք փոփոխութիւնքն կը դուշակէին, և անոր լաւ կամ դէշ վախճան ունենալիքը կանխաւ կը պատմէին։ Գործնական բժշկութիւնը կամ ինչ բժշկութիւնը հիւանդութեան դարմանատուութիւնն և անոր զանազան յարակից պարագայներն կը պարունակէր, և ստորին կարգ քրմաց կամ Պաստոֆորաց (*) ձեռք թողուած էր։ Ս.ոնք գարմանատուութեան մասին Հերմէսի գրոց մէջ նշանակեալ կանոնաց պարտէին ճշդիւ համաձայնիլ. թէ որ այն կանոնաց հակառակ բան մը գործէին՝ և հիւանդը դերագոյն քրմին դուշակածին հակառակ առողջանայր կամ մեռնէր, քաղակիրք մշանջենաւոր բանտարգելութեամբ և երբեմն ալ մահուամբ կը պատժուէին։

Եփրայեցւոց փոքրիկ աղգին մէջ՝ որոց վայ-

(*) Pastophores.

բենաբարքն իրենց տեսրերը՝ Եգիպտացւոց վարուցն ու բարուցը համեմատ կազապարեալ էին, հիւանդութիւնք նմանապէս Եհովայէ բարկութեան իբր մեկ արդիւնքն կը համարուէր, և քահանայական դասն մի միայն իրեն անձնական դամայն դաստաւորն ու բժիշկն ըլլան: Ասոնցմէ դուրս ոչ ոք կրնայ հիւանդները դարմանելու պըզտիլ:

Բորոտութիւնն՝ Իսրայելացւոց մէջ այնքան հասարակ եղող այս ախտը, որ ահաւորին Աստուծոյ իբր մեկ պատուհասն կը համարուէր, ծանապահութիւնք, աղօթք և նուէրք կը պահանջէր, և զայն բժշկելու հոգն Ղեւտացւոց յանձնուցաւ: Մարդարէք ալ նմանապէս բժշկութեան խառնուեցան. Եղիա, Եղիսէ, Եսայի և այլ բազումք առաւել կամ նուազ հաւատալի բժշկութիւնք դործեցին:

Բժշկական արհեստն Եգիպտական դպրութեանց ձեռք Յունաստան բերուելով, մի և նոյն ընթացքին հետևեցաւ. իր դործադրութեան վայրերն մեհեաններն եղան, և ախտաժէտութեանց ապաքինութեան համար հոն ալ աղօթք և նուէրք պէտք եղան: Որփէոս, Միսէոս, Մելամբէ, Պաքիս, Եակիւղապ. Մաքաւոն, Պոտալիր և այլ բազումք խորհրդաղդեցիկ դասէն՝ ախտաբուժութեան արհեստին մէջ

մեծ անուն հանեցին: Յիսուներրորդ Ողիմպիականին առեններբը բժշկութիւնն գինքն մեհենից խորն պարապանդող կապերն խորտակելով առնոյց անձին դուրս ելաւ, և հրապարակաւ սկսաւ բանեցուիլ. և այն առեն ճարտարապետ մարդիկ իրենց զբաղման նիւթ չունենալով զայն՝ անոր վրայ որճացին, և վերջապէս գոնէ իրենց կարեաց չափ գանի ամեն աւելորդապաշտական արարմունքներէն զատելու յաջողեցան: Հռոմկ ուրեմն երեւեցաւ Հիպոկրատ, իբր ընդհանուր տաղանդաւոն և հետաղնին ու կարդապահ (1) մտօքն բժշկութիւնն դուրս հանեց այն քառսէն՝ յորում կը հիմէր այնքան առենէ ի վեր, և դեղերիկ ու ապնիւ արհեստը դարձուց զայն: Ան՝ առենները չմարեցին, որ ժողովրդային դասէն ելած բժիշկներն՝ աւելի գիտուն և աւելի վստահութեան արժանի էին, քան թէ քրմական դասուն որակական (2) բժիշկներն:

Մոդական կամ սրբազան դեղագիտութիւնն մտամբ մը հրաշագործից ամենէն աւելի ի կիր արկած նիւթերն կը բովանդակէր: Մեք բաւական պիտի համարիմք այս տեղ այն դարերուն պատմութեան մէջէն ասդիէն անդիէն քաղել ամենէն աւելի նշանաւոր իրողութիւնքն՝ որոց չատն առասպելայ կերպը պետք է դասուին:

---

(1) Méttodique.
(2) Routiniers.

Եգիպտոսի դիցաբուժութեան նայելով երեսուն և վեց «էն կային, որք մարմնոյ երեսուն և վեց մասերուն կը հրամայէին. քրմերն այս օդինեբուն իւրաքանչիւրն ի մասնաւորի կոչելու համար դեղագրեր չարադրած էին. և երեսուն և վեց տեսակ խոտերու միջոցաւ՝ զոր Թաւտա կամ Հերմէս գտած էր, մարմնոյն ախտացեալ մասը կը բժշկէին. Հնգամիւք՝ որք միանգամայն քաւիր, բժիշկ և կիւսահմայ էին, կը պարծէին թէ պիղծ այտերը դիւահարաց մարմնէն կրնան վանել, և մեռելներն յարուցանելու իշխանութիւն ունենալնին կը հաւակէին. . . . — Եփրայիմիք իրենց տարբր ըրածներն ընդ օրինակեցին, և զանոնք դերազանցել իսկ կարծեցին այն մեռելոց թուելն՝ զոր համար կը պարծէին թէ յարուցած են. — Յոյնք՝ որ իրենց դիտութիւնն Եգիպտացւոցմէ առած էին, իրենց ուսուցչացը բրածներուն վրայ մէկ մ՚ալ իրենք աւելցուցին: Հերքիւլէս, Քիրոն, Ամֆիտռիտ, Եակիւզապ, Ասպղնիոս և այլն. և այլն. ոչ միայն անբուժելի հիւանդութիւնք կը բժշկէին, ժանդամահաւն և այլ հարաճարակ ախտից առաջքը կառնուին, հապա՝ երբ հարկը պահանջէր, մեռեալքն յարուցանելու կերպն ալ գիտէին: Եակիւզապ մանաւանդ այնքան հրաշալի բժշկութիւններ դործած, որ ամեն կողմէ տաճարներ կանդնեցին իրեն բժշկութեան չատատած անուանը նուիրեալ, բժիշկ քրմերուն սպաս մատուցած: Այս տաճարներէս ամենէն հռչակաւորն Եփեսոսի

մեհեանն էր. և այն քաղաքն իսկ շրջակայիւքը սրբազան երկիր կը կոչուէր:

Սխտաբուժական(1) հատատութիւններն՝ ուր տեղ մարդ աղօթիւք և նուիրօք առողջութիւնը կը գտնէր, միշտ օդը առողջ տեղուանք չինուած կըլլային, և շրջապատեալ գեղապատարճ վայրերով և այն ամեն բանով՝ որ մարդոյս միտքն կրնար զբօսանքնել, և հոն գացողներուն կաղմուած բին վրայ առողջապահօրէն ազդել: Ուղևորութեան զբօսանքներն, օդոյն և ամենօրեայ կեցցաղավարութեան սովորութեանց փոփոխութիւն, չերմկային բաղանիքներն ու լուացումներն, (վասն զի մեհեանն միշտ չերմկի կամ հանքային ջրոյ աղբեր մը մօտ կանդնեալ կըլլար) փորձուած մի քանի դեղօրայք և վերջապէս պահեցողութեան կերպառութիւնն (2), այս ամենքն ի միասին հիւանդին բժշկութեանն կ՚ոգնակցէին. բայց գարմանալիութիւնն միայն յոյսի չէր կայանար: Քրմերն կը նայէին որ մարդոյն բարոյականին վրայ ալ ազդու կերպիւ ներգործեն. ուստի իրենց գործած հրաշալի բժշկութիւններն կը պատմէին անոնց, ապաքինեալ հիւանդաց ուխտից արձանագրութիւնքն և բրած նուէրներն կը ցուցնէին, մանաւանդ զանոնք տաճարին այն ամենկողմն՝ ուր ախտաժէտք ողջացել և նուէր

(1) Iatrique.
(2) Regime diététique.

ներ ձօնել էին. յետոյ մեծ չքով Եսկիւ-
դպեցոյ յաշտ կընէին, և այլ ահաւոր և հիւան-
դին երևակայութեանը վրայ ներգործելու յար-
մար արարողութիւններէ վերջը՝ խօսք կուտա-
յին անոր, որ քիչ առնէն պիտի բժշկուի։
Դիւրին է երևակայել՝ որ բոլոր այս հնարքներս
՝ի մի գալով խիստ չատ անդամ փափաքեալ
յաջողութիւնն ձեռք կը բերէին։

Ա. յս կերպիկային բաղխիքներուն մէջ այնպիսի
աղբիւրներ կային՝ որք խորշամերժ կանանց թա-
մուխիւն, կուսութիւններին կորուսող կանանց
կուսութիւն, և ամուլ ամուսնոց բազմածնութիւն
կը շնորհէին։ Ա. րգոլիդի մէջ Քանադոսի աղ-
բիւրը՝ այս վերջին յատկութեանս համին ամե-
նէն գերազանցն էր, վասն որոյ բոլոր տարին լե
էր պառաւ կանանց բազմութեամբ, որք վերստին
կայս ըլլալ կուզէին։ Ա. յս հատարքս այն արկա-
ծին վրայ հիմնեալ էր՝ որ Հերայի պատահեալ.
իւր ամուսնոյն զրկին երկնքան յիշեալ աղ-
բեր մէջ ընկղմեալ և առաջքէն աւելի կայս
գեղս եղաւ անկից։ Կըսեն թէ մեծ դիցուհին
ամեն տարի հոն կերթար և անկից Ողիմպոս
կերկեր։

Սա կէտս ալ դիտողութեան արժանի է, որ ա-
ռողջանալու համար մեհեաններն դիմող հիւան-
դաց բազմութեան մէջէն միմիայն հարուստ-
ներն կընդունուէին ու կը դարմանուէին. իսկ
աղքատ եղողներուն քովքը դարմանատուու-
թեան եղանակը միայն ապրեցնելով կը բա-

կանային։ Եթէ անդարմանելի, անբուժելի ախ-
տիւ մը վարակեալ հարուստ մէկը նուէրներ ընէր
չարունակէր, մերձաւոր ապաքինութեան յուսով
կ'ըրաղեցընէին զայն, և այս յոյսն նորանոր արա-
րողութեամբ, նորանոր սուտերով վառ կը պա-
հէին. բայց եթէ նորա դրամական միջոցներն
սպառելու ըլլային, եթէ նուէրներն դադարէին,
այլ ոչ ևս կը ծածկէին իրմէ հիւանդութեանը
անբուժելի լինելն, որոյ պատճառն աստուածային
բարկութիւնն կը համարէին. ուստի ձեռքէն
ազատելու համար ուրիշ մեհեան մը կը դրկէին
զանի. և եթէ մեռնելու ըլլար, դարձեալ պատ-
ճառը աստուծոյ սրամտութիւնն էր։ Կը նայէին
որ այն մահն հաշակուէր, և ոամիկն՝ որ միշտ
դիւրահաւան, միշտ ուրիշին խաբեբայութեանն
որս կըլլայ, դլուխ կը ծռեր մեհենին պաշտօնէից
առաջ, որոց վարկն իրենց խաբեբայութեանց
թուոյն համեմատ կաւելնար։

Ձեռագրայ խիստ նշանաւոր վիշապակարան՝
յունական արձանագրութիւն մ'է Հռոմմայ մէջ
գտնուած Եսկիւլապեայ տաճարէն քաղուած, և
որոյ մէջ այլ և այլ հրաշալի բժշկութիւնք պատ-
մուած են։

«Ա. յս օրերս պատգամը Կայիոս անուն կուրի
մը հրամայեց որ նուիրական սեղանն գայ և
ծունր դնէ. յետոյ աջէն դէպ ՚ի ձախը երթայ,
հինգ մատը բաղնոյն վրայ դնէ, ձեռքը վեր
վերցնէ և աչացը վրայ դնէ։ Կայիոս իրեն հրա-
մայուածներն ըրած ըլլալով՝ մինչդեռ քուրմն

աղօթքներ կընթեռնուր, վերստին սաստկաց ա-չայ տեսութիւնը ժողովրդեան խուռն բազմութեան ներկայութեանը՝ որ զմեհեանն այսպիսի մեծ հրաշքի մը՝ ի պատիւ հիացման աղաղակներով գոռացուց։

«Ղուկիոս քանի մը տաճնէ՝ ի վեր կողին վրայ այնպիսի սաստիկ ցաւ մը կ'զգար, որ ալ չդիմանալով մեռնելու կը ցանկար։ Եսկիւզապէսյ պատգամն՝ որոյ խորհուրդ հարցունելու եկել էր, հրաման ըրաւ իրեն որ բադնոյն վրայէն քիչ մը մսեսիր առնու՝ պինդոյ հետ խառնէ զայն և այս սպեղանիս ցաւած կողման վրայ դնէ։ Ղուկիոս փութացաւ պատուէրն կատարել և անմիջապէս բժշկուեցաւ։ Ասոնք հրապարակաւ չնորհակալութիւն մատոյց Եսկիւզապիոյ, նուէրներ ձօնեց անոր, և ժողովուրդն ալ բժիշկ աստուածն փառաւորեց։

«Յուլիոսի բերնէն յորդաւոր արիւն կը հոսէր. այնպէս որ, ողջ ճնալուն դրեթէ ալ յոյս չկար. իրրև յեաին միջոց պատգամին առջև ատրուեցաւ, չաստուածն հրամայեց իրեն որ չճշտոյ ընկոյզ առնու և մեղր հետ խառնելով երիք օր ուտէ անկից։ Երրորդ օրն տակաւին չէր երեկոյացած՝ որ Յուլիոս կատարեալապէս բժշկուած էր. ուստի եկաւ չնորհակալ եղաւ Եսկիւզապիոյ՝ ժողովրդեան առջև, որ անոր հետ միանալով զանի փառաբանեց։»

Բարեհաճ՝ սոյն յիշատակագիրս իւր Տօնէդրաց մէջ նշանակած, և անոր վրայօք մեկնութիւն մը ալ գրած է։

Հրաշեկ երկաթով խարուելն խիստ հինաժամանակէ՝ ի վեր գործածուած է թունաւոր կամ կատաղած կենդանեաց խածուածքին դէմ. բայց այս խիստ միջոցս չ'յաջողիր միշտ. այս ինչ մարդը կը բժշկուի, մինչդեռ այն ինչ մարդը ամենաթոյրին խարման մը ենթարկուելովիս հանդերձ՝ դարձեալ չ'ապրիր, կը մեռնի։ Բժշկութեան մասին եղած այս անստուգութիւնս չ'էր կրնար աննչմարելի անցնիլ այն մարդոց աչքէն՝ որք իրենց ս երապետութիւնն յաւելցնելու համար բան մը զանց չ'էին ըներ։ Ասոնք անուն հանեցին, թէ Թոռքանայի մէջ կատաղածներն ճշմարիտ խաչափայտին բեւեռներովին խարուելով՝ շատ մը և արմատաքի կը բժշկուէին։

Մի և նոյն ժամանակ, մի և նոյն միաբանութենէն բայց ուրիշ երկրէ եղող այլ մարդիկ հրապարակեցին, որ բժշկութիւն ընդրելու համար Ս. պետան լեռներէն անդին երթալու հարկ չ'կար, և թէ Սրբոյն Հոպերթեայ բանալին կատաղութիւնը կը բժշկէր այնքան լաւ և այնքան հաստատ կերպիւ, որքան իսկական բեւեռներն, և թէ մարդ իւր վրայ յիշեալ հրաշալի բանալւոյն դրոշմը կրող հմայական մը կրելով՝ կատաղութենէ և որևէ թոյներու ազդեցութիւններէ կրնար ղերծ մնալ։ Սակայն սա ալ վրայ կը բերէին թէ՝ այս դեղս միայն այն ատեն ազդեցութիւն կընէր, երբ սրբոյն Հիւպերթեայ տոհմական չաւաւիղէն եղող մէկու մը ձեռօք դործադրուէր. լաւ ուշ դի՛ր որ այդ չաւաւիղներն անհուն,

անհամար էին։ Ս. յս երկու հնարքներս հա-
ւատքի եռանդեան ակակցութեամբն չատ մը
կատաձներ բժշկեցին, և՛ի գործ ածողաց հա-
մար մեծամեծ շահուց աղբիւր եղան։

«Վեցերորդ դարէն՛ի վեր՝ կըսէ դիտումն
Սբրէնկէլ, վանականք՝ Եսէենանց և Սխտարու-
ժից օրինակին հետևելով, գրեթէ բացարձակ
կերպիւ իրենք բժշկութեան արհեստը կը գոր-
ծածէին. բայց մտքերնին ապիտութեամբ և նա-
խապաշարմամբ խճողեալ ըլլալուն՝ վախճանակ
բժշկութիւնն ուշի ուշով ուսանելու, աղօթքի և
մաստնքներու օգնութեան դիմեցին։»

Անկից ետքն ևս աստղագիտական և կա-
խարդական բժշկականութեան դարն. ալ ամեն
մարդ՝ մինչև որ աստղերուն և տարրական ոգի-
ներուն խորհուրդ չ'հարցներ բան մը չ'էր ըներ։
— Լուսնին մոլորակաց հետ միաւորութիւնն՝ յա-
ղող օրերն (1) կը ցուցնէր. իսկ իրենց հակադի-
պութիւն՝ անվնաս աւուրց (2) նշան էր։ Ս. րեգական՝
Զոդիակոսին և այլ այլ կենդանակերպից մէջէն
անցնիլն անհրաժեշտ հարկաւոր էր այս կամ այն
դարմանատուութեան ձեռնարկելու կամ ետ
կենալու, սկսելու և վերջացնելու համար։ Կաղ-
դուրիչ աւշարակ մը՝ երբ Սրեգական Սէ-ն ա-
տեղատան մէջ կանդ առած միջոցին առնուելու
ըլլար, սաստիկ թոյն մը կը դառնար. իսկ ընդ-
հակառակն սրտի զօրացուցիչ ըմպելի մը կը դա-

(1) Jours critiques. (2) Jours neutres.

նար՝ երբ օրուան աստղն Զբհոյին մէջ մտնէր։
Սրսին և Սրեգական, լուսնին և ուղղին մէջ
ներքին կապակցութիւն մը կար։ Լոանդոփէ իւր
աղդեցութիւնը լճարգին վրայ կը ներգործէր,
Եբևէ փայծաղին վրայ, Փայշաձոն թռչնին վրայ.
Սէ՝ մաղձին և Սթոսեթին ալ ծննդական դործա-
բանաց կը հրամայէր։

Պարեկաց, հրոյ ճիւաղաց (1), և ջրոյ ոգ-
ւոց (2) խորհուրդ կը հարցուէր ծանրակէկ հիւան-
դութեանց առեն. վասն զի օդոյ, հրոյ և ջրոյ
այս տարրական ոգիներս՝ ախտերն ու անոնց դէմ
հանուելիք տեղերն խիստ քաջ կը ճանաչէին։
Ուսոյ խնդիրը զանոնք սոխակելու վրայ էր, որ ի-
րենց դիտցած գաղտնիքներին մարդոց՝ ի վեր հա-
նեն. և ահա այս բանս ընելու եղանակը կախարդք
դիտէին։ Ախտաժետութեանց դարմանատու-
թիւնն՝ այսպէս այլ և այլ արարմանց կամ ասաց-
ուածոց, ձևերու տարբերութեանց, աւելի կամ
նուազ խորհրդաւորութեան կոյտ մ'էր, որ
երևակայութեան վրայ ներգործութիւն ընելէ
զատ ուրիշ արդիւնք չ'ունէին։ Բժշկութիւնն՝ որ
արժանի չ'էր այս անուան, անճառ ճառիւք (3),
ամենաքուժ դեղովք, դեղագնական և երկարա-
կեցութեան օշարակօք կլլեն. կլլեն. խճողեալ էր
համակ։ Ներկայ աշխատասիրութեանս Բժիժանք
անուն դլուխը՝ չարլաթանից յանչափս դովա-
բանած անթիւ անհամար ձևերուն, նշաններուն,

(1) Salamandres. (2) Ondines. (3) Arcanes.

դեղագրերուն և գանոնք դործածողաց անհատական միամտութեանն դաղափար մը կունայ տալ :

Ա.պաքէն չատ հեռի չ'է մնեք այն ժամանակն՝ որ յուռութիւ և իննօրեայ աղօթիւ բժշկականութիւնն դեռ արժէք ունէր ժողովրդեան մէջ : Տանեւութերըորդ դարուն ընդհանուր լուսաւորութիւնն պէտք եղաւ այս մնոտիապաշտութիւնս արմատաքի խլելու . և տակաւին դաւառներն ու դեղերն կան այնպիսի մարդիկ՝ որք բժշկութեան այս եղանակս ընտրելագոյն կը հռչակեն :

Նոր առեններս՝ անբուժելի համարուած հիւանդութիւններն բժշկելու կարող եմք ըսող բազմաթիւ հրաշագործք ալ երևցան հետ գհետէ : Ուսո՞ւ առած էին սոքա այս առանձնաշնորհութիւնս : Ա.ատուծմէ՛. այդ յայտնի բան է : Ա.սոնք այս մասին ուրիշ բան չ'են ըներ, բայց եթէ իրենց նախորդաց՝ այն է նախնի հրաշագործաց հետևիլ, որք կը պարծէին թէ աստուածոց հետ հաղորդակցութեան մէջ են : Մ'եր դարուն բժշկիչ հրաշագործներն կարծուածէն չատ աւելի յոգնաթիւ են . այնպէս որ՝ ասոնց ցանկը չատ երկար պիտի ըլլար սոյն գրուածքիս համար . ուստի ասոնցմէ մի քանին միայն յիշելով բաւականանամք :

Փոքս՝ Գուաքերաց աղանդոյն հիմնադիրն , այնքան զարմանալի բժշկութիւններ գործած է կըսեն , մինչ դի բոլոր ականատեսք հրաշք է այս կը դոչէին , և հրաշագործին նկատմամբ ոքանչացմամբ և ակնածութեամբ պաշարուած կը մնային . . . . ահա անոր ուղածն ալ ճիշդ այս

բանս էր : Երբ բժիշկք հիւանդի մը ապաքինութենէն յոյսերնին կտրած կը թողուին կը հեռանային , Փոքս գանոնք տեսնելու կերթար և չատ չ'անցած կը բժշկէր մի քանի միստիքական խօսքեր արտասանելով , և թևերն երկինք վերցնելով :

Կրէատուրիկոս Իրլանտացին ամենայն համարձակութեամբ ինքզինքն ներկայացուց իբր ամենուրեակ հիւանդութիւնքն պարզ ձեռաց հրպմամբ (*) բուժելու ձիրքն ունեցող մէկը : Տե՛ս ինչպէս կը դործէր սա : Նախ՝ ախտին դէմ՝ անոր դանուած կեդրոնին մէջ կսկսէր մաքառիլ ճրնշմամբք և չոչափմամբք . յետոյ՝ տակաւ առ տակաւ զանի դէպ ի ձեռաց և ոտից մատանց ծայրերն կը վարէր . ապա յանկարծական շարժմամբ մը բուռն կերպիւ զայն դուրս կը վանէր : Ա.յս հրաշագործիս անունն այնքան հռչակաւոր եղաւ , որ հիւանդք և ախտաժէտք ամեն դիտայ կը վազէին կուզային բժշկութիւն լանդրելու իրմէ . և չատերը՝ կըսեն , դոհ սրտիւ ետ կը դառնային : Մինչև անդամ կըսեն , թէ մի քանի բժիշկք ի'նըպատա իրեն դրեցին և իւր ձեռնահպմամբքն դործած բժշկութեանց ստոյդ ըլլալն վաւերացուցին :

Քան և հինդ տարի չ'կայ՝ որ հանդիպեցաւ Գերմանիա և Գաղղիոյ մէկ մասն հոհենլոհէ իշխանին գործած հրաշալի բժշկութեանց համբաւն կը թնդային . իբր վրայ հիացողներն կամ մանաւանդ հակառակորդներն այնպէս տարաձայնու-

(*) Attouchement .

թիւն մը հանեցին, թէ կաղ մը բժշկել էր, որոյ ձախ սրունքն աջէն երկք մատ կարճ էր . . . : Տակաւին այսօրուան օրս դիւղերուն մէջ, փոքրիկ գրքոյկներ կը վաճառուին, ուր բժշկին թողուլ դնալէն ետքը՝ ալ առողջանալու յոյս չ'մնացած հիւանդաց այս տեսակ բժշկութեանց պատմութիւններ կան : Այս փոքրիկ գրքոյկներուն պատմած իրողութիւնքն ո՞ւտ են թէ ճշմարիտ : Այսոր պատասխան կուտամք թէ, կան հիւանդներ՝ որոց եռանդուն երեւակայութիւնն և առ հրաշագործին զօրութիւն դերագոյն վստահութիւններին՝ անակընկալ ապաքինութիւնք կրնան գործել : Տես Եբհայոլինեան դլուխը, ուր այս խնդրոյս նկատմամբ ամենէն հաղուագիպ դէպքերն նշանակուած են :

Բժշկութիւնն՝ այն դեղեցիկ և ազնիւ գիտութիւնն, որ մասամբ իւրք միւս ամեն գիտութիւններն յինքն կընկղմէ, երկար դարեր այսպէս ծիւրեցաւ, և ամեն ստիճանէ չարլաթանոց ձեռքը շահու աղբիւր մը եղաւ : Միայն տասնեւութերորդ դարուն պիտի երթեր սա այն պատանքէն, յոր թաղած պահել էին զանի : Ընդիւտութեան, տարրալուծութեան և մանաւանդ ախտաբանական անդամալնութեան բրած նորանոր յառաջադիմութիւնքն՝ տարօրինակ թռիչ մը տուին անոր, և արդի գիտուններն անդուլ անդադար ջոյն կատարելագործելու կաշխատին : Պատի՛ւ և փա՛ռք անոնց . վասն զի մարդկութեան բարերարաց կարգը պիտի դասուին սոքա :

ԳԼՈՒԽ ԺԹ .

ՀՐԱՇԱԳՈՐԾԱՑ ԳՈՐԾԱԾԱԾ ԱՅԼ ԵԻ ԱՅԼ ԴԵՂՈՐԷԻՑ ԵԻ ՆԻՒԹՈՑ ՎՐԱՑ

Ա.րդէն տեսաք, որ քրմաց ակումբներն ամեն ազգաց մէջ՝ երկար փորձառութեամբ մը ստացեալ հանրապետական ծանօթութեանց մի միայն աւանդապահներն եղան : Հնդկաստան՝ իւր բնապատմութեան և բժշկականութեան մէջ ներհուն եղող մոգերն կը ներկայացնէ մեզ : — Եդիպտոս՝ ախտաբուժական դեղագրերն մեծ զգուշութեամբ մեհենից խորերն պահպանող քուրմերն : — Իսկ Յունաստանի դիւցազնական նախնի ժամանակներն՝ կրօնի պաշտօնեայներն կամ խորհրդադրեայք եղան, որք հիւանդ առողջացնելու և հրաշք գործելու արհեստն իրենց տոհմին մէջ մշանջենաւորեցին : Սկիւթացիք ևս իրենց հրաշագործներն ունեցան, որք էին Զոմոլքսիս և Աբարիս : — Կելտաց մէջ ալ գարեհալ քուրմերն, դրոյիդներն եղան, որք գաղտնի գիտութեանց մէջ խիստ մեծ անուն հանեցին :

Բնապիտութիւնն ու տարրալուծութիւնն հնոց մէջ փորձառական (*) վիճակի մը մէջ միայն կը գտնուէին . այսինքն , առանց տեսական

(*) Empirisme .

մասին դիտութեան՝ դիպուածով պատահած կամ հետազօտութեամբ ստացեալ իրողութիւն մը խորհրդաղդեցից կը հաղորդուէր, որք իրենք ալ ուրիշներուն կը հաղորդէին։ Հնոց մէջէն միայն Դիմոկրիտէս եղաւ՝ որ փորձիւ ստուգելու և իրողութիւնքն դասակարգելու հարկն զգաց. և ահա մեթոտ չունենալնուն համար է՝ որ նախնի հրաշագործաց բնագիտական տարրալուծութեան ծանօթութիւնք չ'են կրցած զարգանալ, և մեծ մասամբ ապագայ դարուց համար կորսուել են։

Սակայն խիստ նշանաւոր պարագայ մը կայ՝ որոյ վրայէն պէտք չէ առանց դիտողութեան անցնիլ, և սա է թէ, քրմաց ակումբներն՝ ժողովրդեան քաղաքակրթիչն փութացնելու համար իրենց ստացած դիտութեանց ու ծանօթութեանց լոյսը ոչ միայն չէին ուզեր անոր վրայ տարածել, այլ և ընդհակառակն իրենց գործողութիւնքն խորհրդական ստուերօք կը շրջապատէին, որպէս զի աստուածութեան հետ հաղորդակցութեան մէջ ըլլալնուն հաւատալ տան. ահա յայդմ էր իրենց զօրութեան մեծ զսպանակը։ Ասոնք դիտութեանց տարեդիրներն չարադրելու համար ծիծաղելի լեզու մը ունէին, զոր ոմի միայն իրենք կը հասկանային. և այս լեզուին նշանագրերն կը գործածէին այն դեղագրերն յօրինելու ատեն, յորս մարդկային կազմութեան վրայ առաւել կամ նուազ աստիճ ազդեցութիւն ունեցող այլևայլ դեղերն ու նիւթերն պատրաստելու եղանակը գրուած էր։ Ա.հա ասոնկէն

անխմանալի եղող այս տեսակ մը մոգական դեղամատեանին (1) մէջէն էր, որ այս կամ այն արդիւնքն ստանալու յարմար դեղագրերն կը քաղէին։

Հին ազգաց պատմութեան մեզ հայթհայթած գրաւոր վկայութեանց նայելով, հրաշագործք՝ արհեստին այս ճիւղին մէջ խիստ յառաջդնացած, և իրենց 'ի գործ դրած հնարքներնին ալ՝ միայնդամայն բազմաթիւ և յոդնատեսակ ըլլալու էին։ Փիչ մը եռքն առնէ պիտի ունենաք դիտել տալու թէ, ո՛չ միայն խել մը բուսային և բաղադրեալ դեղեր 'ի կիր կառնուին, այլ և չղային դրութիւնն ստանալու և մարդկային մարմնոյն համարէն ներքին կազմութիւնն խառնուելու համար անոյշ հոտերու, բուրմանց, երաժշտութեան և բարոյական զօրաւոր տպաւորութեանց ազդեցութեանն ալ կը դիմէին։

Եթէ մարդ կարենայ Միսիդրայի, Խսիսի, Սամոդրակէի և Եղևսիսի գաղտնեաց վերահասու ըլլալ, հնութեան առասպելախառն նկարագրութեանց մէջ հրաշագործաց ձեռամբ խորհրդաղդածներն խելայեղելու համար գործածուած այլ և այլ գաղտնիքներ կը տեսնէ աստ և անդ։ Հոս Ալեքսան (2) որ միտքը կը վառէ կը բորբոքէ. հոն Լէթէ ջուրն՝ որ յիշողութիւնը կորուսանել կուտայ. անդին Նէփանթէն (3) որ ամենէն սուր ցաւերն կ'ամոքէ և

(1) Pharmacopie. (2) Népenthès. Թէսթի չիչեկի։
(3) Cicéion. Խոտ մը է։

ղմարդ անճառելի հեշտութեան մը մէջ կ'ընկղմէ. ամէն կողմ ըմպելիքներ, օծուխներ, և լոգանքներ կը տեսնուին՝ որոց ներքև ուշադիր ընթերցողն դիւրաւ կրնայ զօրացուցիչ կամ թմբրեցուցիչ նիւթոց աղդեցութիւնն նշմարել: Դարձեալ բնականին և բարոյականին մէջ եղած կապակցութիւնն այնքան սերտ է, որ միոյն վրայ սաստիկ ներգործութիւն ընող նիւթերն՝ անպատճառ միւսոյն ալ պիտի ներգործեն:

Կիրկէի գաւաթը՝ կըսէ Հոմերոս, այնպիսի ըմպելի մը կը պարունակէր, որ մարդս յանառնուն կը փոխէր: Վ.Հուկն՝ դաւեհաց արքային Կաղքոսի տուփական թախանձանքներէն պարտաւեալ, դանի խնջոյքի մը կը հրաւիրէ. բայց այն ինչ վէրկին իրեն ներկայացուցած գաւաթն կը պարպէ՝ յանկարծ սիմար, ապուշ կը դառնայ, և Կիրկէ զանի ախոռի մը մէջ կը փակէ: Ս.յս պատմութիւնս ընթերցողին չատ դիւրին է՝ ասոր տարբապայման արբեցութեան մը արդիւնքն ըլլալն որոշել: Կաղքոս ինքզինքն եղերու, խոզերու, այծերու և ոչխարներու մէջ տեղը տեսնելով, և իւր անճառութեան զդացումն կորսուած ըլլալով՝ ինքզինքն անասուն դարձած կարծեց: Երբ ուշադիրն Կիրկէ կը նշմարէ որ դինեմոլութեան շղթաներն կ'ակսին ցրուիլ, և շատ չանցած Կաղքոսի խելքը դլուխը պիտի դայ, ախոռէն կը հանէ և իւր թագաւորութեան երկիրը կը դարձնէ զանի: — Ոդիսէոսի ընկերաց կերպարանափոխութիւնն ալ մի և նոյն կերպիւ կը մեկ-

նուի: Մէյ մանուկ խոտորը՝ զոր յիշեալ իշխանն առնուլ տուաւ իրենց, կը նշանակէ բազադրութիւն մը՝ որ զանոնք հանելոյ այն զդայարկ դիւնոլութեան վիճակէն՝ յոր ընկղմած էին:

Ոդիսէոս՝ մոգական ըմպելեաց միջոցաւ դոյծուած խել մը այլակերպութենէ յիշատակն թաղած է մէջ իւր զրուածոց մէջ, և որոց վերաբերական իմաստն՝ նմանապէս խորին թերութիւն մը, մտայեղութեան մօտ վիճակ մը կը նշանակէ:

Եթէ Նարուդոդոնոսոր խնջոյքէ մը ելնելուն ինքզինքն եղան փոխուած կարծեց, շատ հասկնալի է՝ որ Կիրկէեան հեղուկ մը խմցուցել էին իրեն:

Սուրբն Օդոստինոս քահանայի մը խօսքն կրնէ, որն որ կատր մը պանիր ուտելուն վրայ ինքզինքն իշոյ փոխակերպուած, և իրեն ուտն դրած բեռներն կրելու սահպուած կարծեց: Տարակոյս չկայ որ թմբրեցուցիչ և թալիացուցիչ դեղ մը կար այն պանրին մէջ:

Հնդկաստանի բարեպաշտներն ըմպելիք մը կը խմեն, որոյ բազադրութիւնն իրենք միայն դիտեն. և այն մտայն բորբոքման աստիճանին կը հասնին, որ վտանդներն արհամարհել և ամենեն զարհուրելի ցաւերն առ ոչինչ դրել կուտայ: Ռւստի մոլեդին՝ նիզակներու, մերկ սրերու վրայ կը նետուին, ունչերնին և ականջներնին կը փրցնեն, միսերնին կը կտրատեն, կը պատառեն և խորունկ վէրքեր կը բանան ինքնիրենց վրայ՝ առանց քնաք

յաւակրութեան նշան մը յուշնելու : — Մալապարի այրիներն դեռ փայտակուտին քով չը տարուած ըմպելիք մը կը խմեն, զոր քրմերն կուտան, որոյ ազդեցութեամբ ինքնիրենց կերևնին հրաբորբոք խարուկին վրայ կը նետին և բոցերուն ճարակ կըլլան առանց ամենափոքր հեծկլտանք մը անդամ հանելու : 1822 ին այս զոհադործութեանց մէկուն ականատես վկայ անդղիացի ճանապարհորդ մը տեսաւ, որ այս խժդժական սովորութեանս զոհն հոն բերուած միջոցին՝ ամենափարեալ ֆիզիքական անզգայութեան վիճակի մէջ կը գտնուէր այն դէպքերուն բուռն ազդեցութեան պատճառաւ, զոր իրեն կրանել տուած էին . աչքերն ապուշ ապուշ բացուած էին . մեքենապէս պատասխան տուաւ նա այն օրինական հարցմանց՝ զոր կընէին իրեն՝ ի զոհ մատչելի իր ազատ կամօքն ըլլալուն կամ չըլլալուն վրայօք . և երբ փայտակոյտին վրայ եղնելու կօդնէին իրեն, կատարեալ թմբրութեան մը նշաններն կը տեսնուէին վրան :

Երբայական ժամանակագրութիւնք ըմպելի մը կը յիշեն, որոյ բաղադրութեանն մէջ գմուռս ալ կը խառնուէր , և որ զղայարանքներն թմրեցընելու զօրութիւն ունէր , զոր խաչի տանջանաց դատապարտեալ պատժապարտից կը խմցնէին : — Ս. պաղեստս մատենի մը խօսքը կընէ, որ ցաւ զգալէ ինքզինքն պահպանելու համար կանխաւ թմրեցուցիչ օշարակ մը խմած ըլլալով՝ կենդանւոյն մորթեզերծ եղաւ առանց ամենափոքր ճիչ մ'անդամ արձակելու :

Ս.նշուշա նմանօրինակ դեղերու միջոցաւ էր որ միջին դարու կախարդներն ինքզինքնին տանջանաց անզգայ կընէին : Մինչև անդամ ըսող կայ թէ՝ բանդապահներն այս դեղապրեալ դիւաէին որ և տուրևառւի նիւթ ըրած էին իրենց : Վ.Լերիոս և Թապուբօ խիստ հետաքրքրաշարժ պարագայիւք նկարագրած են մեզ այն քնացուս (*) վիճակն, որ կախարդներն անուշ տանջանաց ցաւէն զերծ կը պահէր . և կը հաւատան թէ՝ ֆիզիքական անզգայութիւնն այնչափ կատարեալ էր այս չուառականներուս վրայ, մինչ զի հարցաքննութեան խոշտանգանքներն անօգուտ կըլլային :

Դիոդորոս Սիկիլիացին և Պլինիոս իրենց ժամանակը ճանչցած զանազան հրաշալի դեղապիրներ կը յիշեն, որոց ոմանք զմարդ Պիւթագորեան զառանցանաց մէջ կընկղմէին, և այս վիճակիս մէջ գտնուողն ապագայն դուշակելու կարող կըլլար . այլք՝ խռովայոյզ քուն մը կը պատճառէին, որոց միջոցին պատժապարտք սաստիկ խղճի խայթէ տանջուելով՝ գործած ոճիրներնին կը խոստովանէին : Գարձեալ տեսակ մը ըմպելիք կար, որ միանգամայն զօրաւոր և տարօրինակ աղդեցութիւն մը ունէր . բոլոր անոնք՝ որոց այս ըմպելիս խմցնել կը տրուէր , ինքզինքնին Եւմինեաններէն , Գորգոնեաններէն և այլ հազարաւոր ահռելի խուճապներէ պաշարուած կը

(*) Soporeux .

կարծէին, և այս տեսլեանցս իրենց ներշնչած. սոսկումն այնքան մեծ էր, որ յանկարծահաս մահուամբ կը մեռնէին անկից, կամ ինքնիրենց դեմ կը դարձնէին մարդասպան երկաթը։ Բուրմերն միայն դիտէին այս սոսկալի ըմպելիքիս բաղադրութեան կերպը և սրբապիղծ խորհրդապետից դեմ կը գործածէին զայն։

Գալով ուրիշ տեսակ մը բաղադրութեանց, կը տեսնենք որ մարդիկ ամեն տեսն ցաւերնին և վշտերնին քաղցր դիմովութեամբ մը թմրեցնելու միջոցներ գտնելու աշխատել են։

Հռոմերական գարուց հռչակաւոր Նէփանդէսը (ախտահալած) ամենէն սուր ցաւերն մոռնալու և յուզեալ սրտերն հանդարտեցնելու անգին զօրութիւնը ունէր։

Հնդկաստանցիք ամեն տեսն հարբուցիչ ըմպելիքներ գործածած են, որոց գլխաւորն բանգէ (տեսակ մը կանեփ) և ափիոնէ բաղադրուած է։

Սկիւթացիք գուարթ զառանցանքի մէջ կ'ընկնէին, տարաշէկ քարի մը վրայ խորովեալ՝ կանեփի հատներուն շոգին ծծելով։

Ս. յորդ և Զինացիք գեղատեսարթ զառանցանքներ և երազներ վայելելու համար ափիոն կը ծամեն կամ կը ծխեն։

Ս. մերիկացիք tabac անուն խոտ մը կը ծամեն և յանկուցիչ երազներով զարդարուն քնոյ մը մէջ կ'ընկնին։

Թեհայիտացի Ս. րաբներն անհուն ժամանակաց հետէ հեղուկի մը բաղադրութեան կերպը

գիտեն, որ քաղցր դիմովութիւն մը կը պատճառէ հեշտաղուարճ անուրջներով խառն։

Լեռն ծերը՝ երեքտասանեերորդ դարուն հռչակաւոր այնքան հռչակաւոր և զարհուրելի գլխաւորը՝ իր շուրջը ժողոված երիտասարդ կրօնամոլներուն երկու տեսակ ըմպելի կը խմցնէր. մին՝ չքնաղագեղ հուրիներով լի՝ Մարգարէին երկինքն իրենց առջև բանալու, իսկ միւսն՝ կատաղի յանդգնութիւն մը ներշնչելու, և նշանակեալ զոհն երթալ զարնելու համար։

Թոյլ և յոյլ կենցաղ մը վարող պարսիկ իշխաններն՝ յաճախ տեսակ մը ըմպելի կը գործածեն, որ դիրենք հեշտաղուարճ քնոյ մը մէջ կ'ընկղմէ. երբ այս քունը չափէն աւելի երկար տեւէ, յատուկ գերի մը կայ՝ որ կերթայ զանոնք կարթնցնէ, այս գործողութեանս համար յատկապէս պատրաստուած հոտաւետ ոգի մը ներշնչել տալով անոնց։ — Տաթուրա մերմանիկոյի (*) (վշանճորոյ) պատճառած թմբրութիւնն կը փարատի՝ քնացողին ոտանները տաք ջրոյ մէջ դնելով. այս գեղս կը գործածեն Զինացիք, որք յիշեալ թմբրեցուցիչ անկովս չինուած հնդուկ մը կըծամեն։

Քարվէր ճանապարհորդը՝ Ս. մերիկացի ժողովրդեան մը՝ Նագաչոսաց մէջ, քրմաց խորհրդին մէջ նոր անդամի մը ընդունելութեանն ականատես եղած է։ Քրմերն նորընծային բերանը տեսակ մը բակլայ դրին, և անմիջապէս ջրզաւթութենէ մը բռնուելով՝ շատ չանցած մե-

(*) Datura stramonium. թաթուխ։

ածի պէս գետինն ընկաւ։ Ա.ին աւեն կռնակին բաւական սաստիկ հարուածներ իջեցուցին, բայց ամենևին կենդանութեան նշան ցոյց չտուաւ։ Քանի մը վայրկենէ ետքը ուրիշ գեղ մը խըմ-ցուցին իրեն՝ որ թալուկ պատճառէց, որով բակ-ղային փսխեց և առողջացած՝ բայց սաստիկ յոգ-նած ոտք ելաւ դարձեալ։

Կօսի բորդուկէզ կանայք՝ իրենց ամուսնոց դործածած ըմպելեացը մէջ միշտ խարշա-ջար մը կը խառնեն, որ քսան և չորս ժամ շա-բունակ զանազ այնպիսի ապշութեան վիճակի մը մէջ կը ձգէ, որ աչու ընտէ առջև ինչ որ ալ անցնի դառնայ՝ վրայնին աղդեցութիւն չընէր։ Երբ ուշաբերելու կըլլան՝ անցած դարձածին յի-շատակը բոլորովին կը կորսուսանեն. — երևի մարդիկ մի և նոյն հնարքը՝ ի կիր կ'արկանեն ի-րենց ըղձիցը անասատող կանանց յամառութեանն յաղթելու համար։

Ա.ին բազմաթիւ հրաշալի դեղապրիչն՝ ի զատ՝ դորս պատմութիւնն աւանդած է մեզ, խել մը նմանօրինակ դեղոց պատրաստութեան եղանակ-ներ ալ կան, զորս աւանդութիւնն պահպանած է ժողովրդոց մէջ, և որոց ամենքն ալ առաւել կամ նուազ վտանգաւոր նիւթեր կը բովանդա-կեն։ Ա.յս առիթ պիտի բացատրեմք թէ որո՞նք են այն մոգական դեղապատրաստութեանց մէջ դործածուած դիւաւոր նիւթերն։

Ա.ՓԻՈՆ։ Հնարքը խաչխաչին թանձրացած ջուրը։ — Ա.փիանին դործածութիւնը իսիա հի-

ժանականերէ սկսեալ է։ Հոմերոս, Հերոդո-տոս, Հիպոկրատէս անոր վրայ կը խօսին՝ իբր Ա.-սիացւոց խիստ ծանօթ նիւթ մը։ Ռեաբէր դիտէր ընծայեալ մեծամեծ յատկութիւնքն՝ երկնային ծագում մը ներծածրել տուին անոր։ Կըսեն թէ Մորիէոս՝ Դեմոկրեայ դիցուհւոյն դառնակակիծ վշտին վրայ սիրտը շարժած, որ իւր դաստը մահուան վրայ կողբար, մեկներ բուսոյց, և ա-նոյշ սիրարծած ընակելի մը չիններ, որոյ հրաշալից աղդեցութիւնն այս առաւպեալ մօրս սիրտն հանդարտեցուց։

Երբ նիւթ մը իրական զօրութիւն մը ունի, անոր դործածութիւնն ընտանիքէ ընտանիք, դարէ դար կը փոխանցի. և ահա այս բանս պա-տահեցաւ քնարեր մեկնին, որոյ կիրառութիւնն համայն Ա.րևելից մէջ ընդհանրացաւ։ Տակաւին այսօր Ա.րևելցիք մեծ քանակութեամբ ափիոն կ'ապառնեն։ Ընդ առեալ խիստ (*), փոչւոյ և ըմպելեաց կառնուն զայն կը ծամեն, կը ծխեն, իրենց կերակրոցը և ըմպելեացը մէջ կը խառ-նեն, այնպէս որ՝ իրենց դոյութեանն, ասնկ ըսենք, անհրաժեշտ դարձած է։

Ա.փիոնը՝ թէ բնական վիճակաւը և թէ այլ և այլ համեմատ հետ քաղաղրեալ կը դործածուի. այս քաղաղրութեանցս խըտքանչիւրն մեկ մեկ յատուկ յատկութիւն կունենայ. նոյնպէս ա-ռանձ կամ նուազ քանակութեամբ առնուած-

(*) Մաճուն։

լուն համեմատ՝ տարբեր տարբեր արդիւնք կ'արտադրէ։ Չորօրինակ, դոյզն քանակութեամբ առնուած ափիոնը՝ քաղցրիկ երազներ յառաջ կը բերէ, մինչդեռ մեծ քանակութեամբ առնուելովը՝ զլխոյ պտոյտ և կատաղութիւն կըպատճառէ։

Բանճի (1) (հնդիկ կանեփ) հետ՝ իմիասիններուն դործածուած կամ ծխուած ափիոնը արտեւանունքը կը ծանրացնէ, երկանիկ նինջ մը և հեշտական երազներ յառաջ կը բերէ։

Ափիոնի և մշկահոտ ամպարի (2) խառնուրդ մը՝ հեշտաղուարճ հիացման մը մէջ կընկղմէ դիմարդ, որոյ բոլոր տևողութեանը միջոցին ամենայն ինչ հաճոյք է։

Ափիոնը երբ խառնուի հետ առնուի՝ ուրախութիւն, զուարթութիւն կուտայ մարդոյն. մեծամաղձոտ ճակատէն խորչոմք անյայտ կըլլան վայրկեան մը, և սովորաբար լուռ ու մունջ կեցող բերաններն խօսքերու հեղեղ մը դուրս կուտան. ասի ճշմարիտ զուարթացուցիչ ըմպելի մ'է։

Ափիոնը՝ հնդկընկուզի (3), ասորեկի (4), դարիճենիկի (5), հաշիշի (6), ամպարի և մշկոյ հետ խառնուելով՝ նմանապէս ուրախութեան և սիրոյ դաղափարներ կը զարթուցանէ։ Կըսեն թէ այս վեց տեսակ նիւթերէն բաղադրեալ օշարակ մը զօրաւոր աֆրոդիտեան մ'է, և խիստ մեծ ազդե-

(1) Bangue. պէնկիլիք։
( ) Մխակի ամպէր։ (3) Հինախթեան ճէվիզի։
(4) Գադուէ։ (5) Դարչին։ (6) Բէսրաեէ Macis։

ցութիւն կընէ կանանց ծննդականութեան վրայ։ Ճէյմս բժիշկը՝ Չմիւռնիայի տաճիկ մը ճանչած է, որ տասն և հինդ տարիէ՝ ի վեր յիշեալ բազդրութիւնը կը դործածէ, և շատ օդուտ կը տեսնէ եղել անկից։ Ս.յս տաճիկը յիշեալ ժամանակաշրջանին մէջ երեսուն և հինդ տղայ ունեցել է իւր հպատակներէն (1)։

Մինակ, կամ վրացի կոճի (2) հետ խառնուած ափիոնը՝ երբ աւելի քարձր քանակութեամբ առնուի՝ մարդոյն քաջասրտութիւնը կ'աւելցնէ, և վտանգն արհամարհել կուտայ անոր։ Ս.յլազդք սովորութիւն ունէին՝ որ պատերազմէն քանի մը ժամ յառաջ ափիոնով կը դինուէին, և ռազմասէր եռանդեամբ մը վառեալ՝ առիւծու պէս թշնամւոյն դումարտակացը վրայ կը յարձակէին։

Ափիոնի՝ Մաչտըլ հետ (տեսակ մը թունաւոր սունկ) պատրաստուած ըմպելիք մը՝ այնպիսի մարդասպանական բուռն կատաղութեան մը մէջ կը ձգեն Մալայեցիքն, որ դաշոյնը ձեռքերնին դուրս կը խոյանան, և փողոցներուն մէջ վազելով՝ բոլոր դիմացնին եղողը անխնայ կը վիրաւորեն. ուստի հարկ կըլլայ վայրի գազաններու նման հրացանի հարուածներով զանոնք սպաննել. դարձեալ և այնպէս՝ շատ անդամ կը

(1) Տես այս մասին Ա.ոդջապահութեան ամառնայրնեանը. երկ մը, որոյ բազմակրկնակ տպագրութիւնը որքան կարեւոր հրատարակութիւն մը ըլլալը կ'ապացուցանէ։
(2) Ellebore. պոյնուզ օթու։

պատահի որ այս կաթսաղիներս մինչև որ սպան-
նելին, բազմաթիւ անձինք զոհ դացած կըլլան
իրենց դաշունին ներքև։

Ա.փիոնը՝ դրեթէ մասնաւորապէս մի միայն
ուղեղին վրայ կը ներդործէ, զոր կ'ընդարմացնէ
և ապուշ կը դարձնէ։ Ա.յն զանազան երևոյթ-
ներն՝ որք ափիոն դործածողաց վրայ կը տես-
նուին՝ սրտի խառնուիլ, չլացուիլ, առ աչօք
տեսիլներն, զառանցանքներն, մոլեդնութիւնն,
կաթուածային վիճակն, բոլոր ասոնք արեան՝ ու-
ղեղը սեղմելուն առտիճանէն կախեալ են։ Երբ
այս սեղմումս երկար տևէ, ընդհանուր դադա-
կանութիւնն տակաւ առ տակաւ կը նուազի, և
հուսկ ուրեմն առաւել կամ նուազ կատարե-
լապէս կը չիջանի. սա պատճառաւ որ՝ ուղեղը
մեռս դործարանաց կեանք և ղօրութիւն բաշ-
խող կեդրոնական դործարանն է։ Սաստիկ կեր-
պիւ թմրեցուցիչ դեղոց ենթակայ եղողը՝ ալ
կարծես անդործարան մարմին մը կը դառնայ. և
եթէ արհեստն վաղընդվղի օդնութեան չ'հաս-
նի՝ մահը անխուսափելի է։ Սակայն և այնպէս
պէտք է յաւելցնել, որ այս օդնութեան հակա-
ռակ՝ մարմնոյն կազմուածքն անպատճառ ընդու-
նած հարուածոյն ազդեցութիւնը կը կրէ, և կեն-
սական դործողութիւնքն բնաւ երբէք իրենց ա-
ռաջին լրութեան վիճակին չ'են կրնալ հասնիլ։

ԹՈՋՈՂՈՆ(*)։ Կծու և թմրեցուցիչ տունկ

(*) Jusquiame. Պան օթու։

մը՝ որուն նախնիք Ա.ղջնի խոտ կըսէին։ — Ց-
տադայ դիտողութիւններն՝ ասանկոյս ուղեղին
վրայ լինչ սաստիկ ազդեցութիւն ունենալուն
վրայօք դաղափար մը կրնան տալ։

Ինն հոդի վայրի սահպղինի տեղ՝ արդանակի
մէջ խաշուած խողոլոռան արմատ կերած ըլլա-
լով, սաստիկ չղաձդութենէ մը բռնուեցան՝ բե-
րանով և անդամով դալարմամբ հանդերձ. չատ
չ'անցաւ սարդոնական ծիծաղ մը իրենց չըր-
թունքը եկաւ դրաւեց. աչուընին խաւարե-
ցաւ. դլուխնին խանդարեցաւ. սրտնքնուն վրայ
այնպիսի թմրութիւն մը դդացին, որ հաղիւ հաղ
կրնային սոխ վրայ կանդնիլ. վերջապէս տախ-
տակամածին վրայ ընկան՝ սպառնալից մոլեդնու-
թեան մը ամեն նշաններն ցոյց տալով. և եթէ
դնդեղական ուժերնին դլխովին չլատած չըլլար՝
իրարու դլուխ պիտի պատռէին, դիրար պիտի
վոդոտէին այն տեղ։

Ժան-Պաթիսթ Բօրդա՝ խողոլոռան արմատէ
երաստամուխ (*) մը դործածելով՝ զոր վհուկէ
մը առած էր, դիշերը սատանայական երաշներ
տեսաւ, և այնպէս թուեցաւ իրեն թէ դիւական
դիշերաժողովոյ մը ներկայ կը դտնուէր։

Մեծին Ա.լբէրդի աշակերտներէն մին՝ օր մը
զբօսնելու միտք խողոլոռան փուշի սխտեց այն
տեղ՝ ուր դիւղական հարսանեաց մը տեղերն

(*) Suppositore. Ֆիթիլ։

պար բոլորել կը խաղային։ Օդոյն յուզմամբն փոշին պարոդայ քիմը գնացած ըլլալով՝ մեծ կռիւ մ'է ելաւ։ Հայհոյութիւն ընելէն՝ սպառնալիք ընելու, անկից ձիրար ծեծելու սկսան. շատ չ'անցաւ վէճն այն աստիճան աստակուելով բորբոքեցաւ, որ քիչ մնաց արիւնհեղութիւն պիտի պատահէր. բայց այս չարաւիտ կատակս հեղինակը քացախուտ ջուր սրսկեց գետինն՝ որով դրեթէ անմիջապէս կռիւը դադրեցաւ և պարը վերսկսեց։

Հետևեալ անգ՝ որ մեր դարուն սկիզբն պատահած է Տրեզոայի մէջ, ալ աւելի նշանաւոր է։

Պառաւ սեպուհուհի մը տան մը առաջին դրսի կոնը կը բնակէր, որոյ գնանայարկն դեղարան մը բացած էր մէկը։ Սեպուհուհին քանի մը աթենէ՝ ի վեր ջղային խիթեր կ'ղդար, որոյ դէմ ինչ դեղ առնուր՝ օգուտ չ'էր ըներ. ուստի բժիշկը պատուիրեց որ փորոյն վրայ կանխապէս չեռուցեալ խողովրեան փոքրիկ պարկեր կապէ։ Այս հնարքս ցաւը թմրեցուց. սեպուհուհին խռովայոյզ քնէութեան մը մէջ ինկաւ, մինչդեռ փոքրիկ պարկերն տաքցնող երկու սպասուհիներն դինով դարձան, և սրտերնին ետ եկաւ։ Խողովրեան ազդեցութիւնը հետզհետէ աւելնալով՝ սպասուհիք իրարու հետ կռւոյ բռնուեցան, ղիրար թշնամանեցին, ղիրար ծեծեցին, և կատաղի ճիչեր արձակելով իրարու գլխարկ յափրշտակեցին։ Դրացիներն վազեցին եկան զանոնք իրարմէ բաժնեցին. ասոր վրայ իրենց կատաղու-

թիւնն վայրկեան մը հանդարտածի պէս երևցաւ. բայց քանի անդամ որ փոքրիկ պարկերն նորէն տաքցնելու որ ըլլային, կռիւն ու ծեծկըռտուքը դարձեալ կ'սկսէր։

Մինչդեռ այս տեսարանս տեղի կունենար սեպուհուհուոյն սենեակն, ուրիշ մ'ալ՝ ոչ նուազ տարօրինակ, դեղարանին մէջ կը պատահէր։ Դեղարանի մանչերէն մին՝ տաք ջրոյ կաթսային մէջ փոշի դարձած խողովրեան աման մը դրած ըլլալով, շատ չ'անցաւ դործարանն սոյն անկոյս բուրմամբն լցուեցաւ. տեսակ մը թթվկային գինովութիւն եկաւ մանչուն վրայ, և անկից ալ ծրարներն պատրաստող աշակերտին անցաւ։ Նախ՝ մի քանի ծանր խօսքեր տուին առին իրարու հետ. անկից իրարու դէմ հայհոյել ու մէկ մէկու սպառնալիք ընել սկսան. հուսկ ապա կռիւն այն աստիճան աստակացաւ, որ մեր այս երկու պարոնները իրարու վրայ յարձակելով՝ հարուածի վրայ կիջեցնէին իրարու։

Շատ մը մարդիկ այս աղմուկս լսելով վազեցին եկան, բայց խողովրեան սոսկալի զօրութիւնն իրենք ալ զգացին. և ահա անոնք՝ որ կռուողները բաժնելու եկած էին, սկսան զիրար նախատել ու ծեծկռտիլ։ Սրուակներն, խիւսի դորակներն, սպեղանիներն չորս կողմ կը թռչէին դեղարանին մէջ. ձեռնոցնուն հանդիպածը կը կոտրէին, որչափ ձայն ունէին կը պոռային. ի մի բան ամբողջ թաղը զարհուրեցնելու ժխոր մ'էր։ Ոստիկանութեան գործակալն

եկաւ որ բարեկարգութիւնը վերահաստատէ, բայց ետևէն եկող պահապան զօրքերն քիչ մնաց իրարու մաղերը պիտի քաշէին. հուսկ ուրեմն դեղարանին տէրն խելք ըրաւ՝ դռներն ու պատուհանները բանալ տուաւ. խոզոլոռան բուրմն ցրուեցաւ, և քիչ քիչ հանդարտութիւնն վերահաստատուեցաւ այս յուղեալ և դրդռեալ ամբոխիս մէջ։ Ա.յս եղելութիւնս՝ թէև չափազանցութեամբ նկարագրած է անշուշտ պատմիչը, սակայն և այնպէս խոզոլոռան՝ կենդանական կազմութեան վրայ ինչ ասիճան զօրաւոր ազդեցութիւն ընելը կ'ապացուցանէ։ Մեր Գաղղիոյ մէջ ալ նոյն դրքին մէջ դրեթէ ասոր չափ տարօրինակ դէպք մ'ալ պատմած եմք։ Տես յիշեալ դիրքը։ ԵՊԱՐԱՏՈՒՆԿ (*)։ — Թմրեցուցիչ տունկ մըմաղդի։ Եպարատնկոյ յատկութիւնն սա է որ, արեան շրջանին երագութիւնը մեծապէս կը նուազեցնէ, և երբեմն ալ բազկերակին զարնուածքը անզգալի կը դարձնէ։ Գոյղն քանակութեամբ առնուելով՝ զուարթ զառանցութիւն մը կը պատճառէ, շաղիակոփութեամբ և անդամոց կարի լիմն և առէպ շարժմամբք հանդերձ. անկից ետքը կուգայ քնէութիւնն, որում ինչ ինչ

(*) Bella donna (գեղեցիկ տիկին)։ Ա.յս բուսոյս տերևներէն իտալացի կանայք իրենց մարմինը գեղեցկացընելու սպեղանի մը կ'կապմէին, ուրկէ առած է իր անունը. մեք ալ չպարատունկ բառը յարմարցուցինք ասոր։

Ե. Թ.

պարագայից մէջ անզգայական թմրութիւն կը յաջորդէ։ Իսկ երբ մեծ քանակութեամբ առնելու բլլայ՝ բազկերակաց երագութիւն, երեսի այտուցմն, զառանցութիւն, ջղաձգային տագնապ, և հուսկ ուրեմն մահ կը պատճառէ։ Եպարատունկն վերջի մը վրայ դրուելով՝ խոլական տեսլեամբք յուզեալ զառանցական քուն մը կուտայ. իսկ եթէ աչաց մէջ ներմուծուելու բլլայ՝ էրիթոփսիքն կը պատճառէ. այսինքն, մարդ ամեն իրերն երկու երկու կը տեսնէ։

Պուքան՝ հետևեալ դէպքը կը պատմէ։ Սկովտիացիք Տանիմարգացւոց հետ պատերազմի մէջ էին. չկրնալով ուժով յաղթել անոնց, խորամանկութեան դիմեցին. մեծ քանակութեամբ դարեջուր շինեցին չպարատնկով, և տակառներն դիւղի մը մէջ թողուլ այնպէս ձևացուցին, որ երբ թէ կը մեկնին կերթան անկից։ Տանիմարգացիք մտան դիւղը, և յիշեալ դարեջուրն ըմպելով այնպիսի խոլ զուարթութեամբ մը բռնուեցան՝ որ զէնքերնին դեռևս նետելին և սկսան պարել. այն առեն Սկովտիացիք վրայ հասան, և առանց դժուարութեան տանիմարգացւոց բանակին յաղթելով ցիրուցան ըրին զայն։

ԲԱՆԳ (*). ՀԱՇԻՇ (Էսբար)։ Տեսակ մը կանեփ՝ որ Հնդկաստան կը մշակուի, և մի միայն կը գործածուի ծամելու, ծխելու կամ տեսակ մը ըմպելիք շինելու՝ որոյ ազդեցութիւնն դրեթէ ափիոնին ազդեցութեանն համանման է։

(*) Bangue. պէնկիւկ։

Երբ Հնդկաստանցիք վշտերնին թմրեցնել, ցաւերնին ամոքել, և անհանգստութիւններէ ղերծ քուն մը քնանալ ուղեն՝ բանգով, ափիոնով, արեքայով (*) և փոչի դարձած չաքարով չինուած բաղադրութիւն մը կը կլլեն, այն է Սրեւելցւոց Հաշիշ ըսածը։

Եթէ ինքզինքին սեռական հաճոյից զրկուիլ ուզելու ըլլան՝ բաղադրութիւնը բանգով, մշկով և ամպարով կը չինեն, և վրան ալ կաթիլ մը յատկիկ իւղ կ'աւելցնեն, հատնականաբար՝ այս ափրոդիտեան գեղոյս կիրառութիւնն աւելի ախորժելի ընելու համար։

Սրեւելից մէջ ամենէն աւելի գործածական եղող թմրեցուցիչ բաղադրութիւնքն անոնք են, որք մարմինը այն սեռակ քնէութեան մը մէջ կը ձգեն, յորում մտաւորական կարողութիւնքն կիսովին արթուն կը մնան։ Սհա այս սեռակ մը զգայազրկութեան նմանող նիրհմանս մէջողին է որ Սրեւելցիք կը սեռնեն այն գեղազուարճ անուրջներն՝ որք գրեթէ միշտ հեշտական հիացմամբ կ'ը խաւնուին։

Քէօմիւէր ճանապարհորդը կը պատմէ թէ, օր մը պարսիկ պայազատի մը սեղանը ճաշի հրաւիրուած ըլլալով՝ իրեն ըմպելիք մը խմցնել տուին, որ զարմանալի զուարթութիւն մը պատճառեց. որով կը խնդար, կերգէր, կը պարէր և յանչափս կը զուարճանայր։ Խնդոյքէն եղնելուն գե-

(Arec). սեռակ մը հնդիկ արմաւ։

ղեցիկ երիվարի մը վրայ նստուցին զինքն՝ որ չըքնաղայելու զբօսանքն ալ վայելէ. այն առեն իրեն այնպէս եկաւ որ նոր Պեգասոսի մը վրայ հեծած՝ օդոյն անհուն անսահման ասպարէզներն կը կարբէր կ'անցնէր։

Տաճկաց Մոլլա ըսածն ալ, ինչպէս նաև հաշէշը՝ բանգի և ափիոնի խառնուրդ մ'է, որ նուիրեալ կամ ընդունող միջոցաւ կը խմուի, և ծխողաց կը պարգեւէ այն լուիկ մտային յափշտակութիւնքն, որոց միջոցին երեւակայութիւնն երկնային ահմաններն կը կարէ կ'անցնի, և գնարդ աստուածոց օթեւանը կը փոխադրէ։

Սէռնէվուէն (1) փոչին գինւոյ հետ խառնուած առնուելով միայն կը բանայ, գեղամիծաղ գաղափարներ կը ծնուցանէ, և երեւակայութեան ամեն ղօրութիւններն միահաղոյն գործելու կը դրդռէ։

ՓԵՍԼԻՆԶՈՐ (2)։ — Սյս անկոյս հունաերն՝ գինւոյ մէջ եփուած, ըմպողին գինովութիւն մը կ'պատճառեն, որ ափիոնէ պատճառեալ գինովութեան հետ կրնայ բաղդատուիլ։ Սրեւելցիք սեռակ մը մեղրաջուր կը չինեն, որոյ մէջ վշտաճնարի մզկոյր ալ խառնուած է։ Սյս օշարակս հեշտաղուարճ անուրջներ կը հայթայթէ իրենց. բայց բաղադրութեան չափը գիտնալու է. վասն զի եթէ այն չափէն աւելի դրուած ըլլայ՝ ըմ-

(1) Aconit-napel. Ասոիգուն նէմը։
(2) Stromoine. Թաթուլէ։

պողն վնասած մսային յափշտակութիւնն դադարելու տեղ, մսեղին ցնորման մը անձնատուր կըլլայ։

Կըսեն թէ հին ժամանակի հռովմէացի տիկնայք՝ իրենց արանց ձանձրացուցիչ հակողութիւնները լռեցնելու համար՝ անոնց խմած ըմպելեաց մէջ վիշապնձորոյ փոշի կը խառնէին, և այսպէս ծիծաղ ի չարմն քուն կընէին զանոնք։

Հնդիկներն վիշապնձորէն ըմպելի մը կը շինեն, որ զմարդ անզգայական քնոյ մը մէջ կը ձգէ։ — Պարսիկներն նոյնպէս կը գործածեն զայն՝ քնացնելու և կողոպտելու համար այն անխոհեմ սարսափածուներն, որք իրենց դգուանաց անձնատուր կըլլան։

Համպուրկցի բժիշկ մը՝ երկու ամուսնոց հետաքրքրական օրինակն յիշած է, որք վիշապնձորոյ և վրացի կոճի (1) հունտերու մղաւշարակ մը խմած ըլլալով՝ դուրս ելան անկողնոյն, ուր չկրնար քնանալ, և սկսան խաղալ ու խնդալ՝ մինչև որ վատակաբեկ եղած դեռին ընկան։

ՄԱՆՐԱԳՈՐ (2)։ — Մանրագօրն այն տունկերէն մին է, որոց վրայ ամենէն աւելի առասպելանման պատմութիւններ եղած են. այն մարդկային նմանութիւնն՝ զոր տեսնել կարծեցին այս բուսոյս արմատին վրայ, ախտոգիտական

(1) Ellebore. Պոյնուղ սեւ. (2) Mandragore. Աչքի սէյտան սեւ. Ատամ քէօքիւ։

հրաշալի յատկութիւնք ընծայել առաւ անոր, և որք իսկապէս բոլորովին երեւակայական են։ Մեք չ'պիտի խօսիմք այն աւելորդապաշտական արարողութեանց վրայ, զորս անոր արմատը խըլելու առեն կը կատարէին. Թէոփրաստէս և Պլինիոս՝ ամեն ազգային մանրամասն պարագայներն պատմած են զայն. մի միայն պիտի ըսեմք թէ մանրագօրին իրական յատկութիւնքն դըրեթէ ճիշդ մի և նոյնն է, ինչ որ է չպարտաբընկոյնն։ Ցոյնք ասոր քնածոյ զօրութիւն ունենալը դիտէին, և ժողովրդեան դասուն մէջ երբ յոյլ և թոյլ մէկը տեսնէին՝ կըսէին թէ մանրագօր կերած է։ — Մանրագօրին հոտն նաև անհանգստութիւն, դլխու պտոյտ և բանդագուչանք կը պատճառէ։

Տես այս մասին Աւոլշոռոմէնց և Ծոպկանց պատմաբնեան (1) մէջ յիշուած օրինակները։

ՄՈԼԵԻՆԴ (2)։ Ա. յս բոյսս՝ որ Սոկրատայ մահուամբն հռչակաւոր եղած է, թմրեցուցիչ և ընդարմացուցիչ թոյն մըն է։ Ասի ալ այնտեղ կերէն մին էր, որով կը կատմուէին այն մահապարտ ըմպելիներն՝ զորս նախնիք ի մահ դատապարտելոց կ'արբուցանէին։ Թրասիաս Ադդինեցին և Ա. Լիքսիաս այս ըմպելիներս պատրաս-

(1) Աւոլշոռոմէնց և Ծոպկնց։ Երկասիրութիւն մը՝ յորում բովանդակ նշանակուած են Ցորպայի պետութեանց ամեն հրաշալիքն։ Ա. յս գիրքս ամեն տաքիքէ եղող մարդկանց ալ յարմար կուգայ։ (2) Պալտըրտան։

տեղու մասին մեծ անուն հանեցին. ասոնք յա-
ջողած էին այնպիսի դեղ մը չինելու, որով թու-
նաւորեալ մարդն առանց ամենաթոյնը յաւ մը
դադրու կը մեռնէր. — Մոլեխինդը՝ առփական
կրնայ դեմ ալ կը գործածուէր. վասն զի ծնըն-
դական գործարանաց դրդռումթիւնն կանցընէր և
անդդալի կերպիւ զուգաւորութեան անկարող
լինելու վիճակի կը հասցնէր զմարդ։

ԲՈՒԼՈՒՊՐԴ (1)։ — Ա. յս ծառոյս համար կը-
սէին, թէ մարդաբէական խանդն բորբոքելու
յատկութիւնն ունի. ասոր համար ապագայն
դուշակողներն պէտք կանուանէին. — Եթէ
քնացած ժամանակդ դլուխդ դասնուոյ տերև-
ներէ չինուած պատկ մը դնես, կըսեն թէ խիստ
տարօրինակ երազներ կը պատճառէ։ Ցիշեալ
ծառոյն մրգիկներէն մզուած հիւթն՝ հին առնը
օձերու թունին դեմ դեղթափ կը համարուէր։
— Բալասարդի ղառաջ ջուրն՝ ուղեղին և սրտին
վրայ խիստ դդալի ազդեցութիւն մը ունի. ար-
եան չրջանը մեծապէս կը յառջացնէ, չլացու-
թիւնք, գլխոյ պտոյտք կը պատճառէ, և տես-
բանական այլ և այլ առաչօք երևոյթներ յա-
ռաջ կը բերէ։ Հետևեալ եղելութիւնն այդքան
նչանաւոր է, որ արժան է այստեղ յիշել զայն։

Թուլուզցիք սովորութիւն ունին որ կերակ-
րոյ առնն տեսակ մը արդանակ կը հրամցնեն՝
որուն էյ-շոտ կըսեն, և տեսակ մը կորեկի (2)

(1) Laurier cerise.
(2) Panis.

ալիւրով, շաքարաւ, նարնջաձաղկի ջրով և կաթով
չինուած է, և որոյ մէջ տեսակ կամ նուագ երկար
տանեն բալասարդի ծղօտներ թրջոց դրած են,
որպէս զի բուսական ախորժելի դառն համ մը տայ
անոր։ Թուլուզցի պարկեշտ քաղաքացի մը՝ որ ա-
մենայն հանդարտութեամբ իւր էյ-շոտը կը ճաշա-
կէր կնոջը հետ միատեղ, տեսաւ որ չափէն ա-
ւելի լեղի էր այն. ուստի քիչ մը շաքար աւել-
ցընել տուաւ վրան. իսկ շաքարը ուրիշ բանի
չծառայեց, բայց եթէ այն նենգաւոր դառնու-
թիւնը սթօղելու։ Ընթրիքէն կէս ժամ վերջը
երկու ամուրն անկողին մտան, և՝ ի լուր քնոյ
պաշտն կ'ոտպատէին. անսովոր տաղնապ մը, ստ-
պողին արտաշնչութեամբք հանդերձ, թոյլ
չէր տար իրենց որ անոր քաղցրութիւնն ճա-
շակեն։ Ստամոքս մարմնջուիներ կ'պղտոյին բա-
վանդակ մարմինն ուրոյ և մանաւանդ քիմքե-
նան շրջանը։ Ա. յրը միջնլու համար անկողնէն
վար իջնելուն՝ ծանծուռ պէտքեր, հրալից
փսխումներ, լուսոյ չառած իրներ նշմարեց, որ
ամէն կողմ կ'արձակուէին. այնպէս որ՝ կաթիլ
մը անդամ մեղ չկրցաւ դուրս մղել։ Անմիջա-
պէս բժշկին մարդ դրկուեցաւ, որ հակաոսոդա-
յին դեղեր և Զօրոյի գինի առնել տուաւ իւ-
րենց մեծ քանակութեամբ։ Առաւօտյին ախ-
տանշաններն անհետացան եղան, բայց մեծ տկա-
րութիւն մը և անդամոց վրայ տաստիկ խանձու-
թիւն մը ձեաց։ Ա. յրը՝ որ կնոջմէն աւելի կերած
էր յիշեալ արդանակէն, դեռ քանի մը օր քնոյն

մէջ անհանդստութիւն և այլանդակ երազներ ունենայ։

ԲՐՔՈՒՄ (1)։ — Բրքումը՝ զոր Հարաւային Քանաքի մարմնոյն բոլոր ներքին դողդողութիւնները կը դիւրացնէ, և խիստ ախորժելի չողիներ կը հանէ մարդոյս գլուխն։ Նախնիք իրենց խնձոյից առնն թիթեղէ սկաւառակաձև վրայ քրքմոյ աերևներ կը խորովէին, և անոր հոտն սրահին մէջ տարածուելով՝ կոչնականներն հեշտագին դինովութեան մը մէջ կ'ընկղմէր։ Բրքումը երբ մեծ քանակութեամբ առնուելու ըլլայ, անժոյժ ծիծաղ մը և յետոյ խորին թմբրութիւն մը կը պատճառէ, որ երբեմն ապերա-սբեր կ'ըլլայ։ Անխոհեմութեամբ քրքմոյ հարբեր վրայ պատկող քնացողներու մեռնիլն իսկ ուեանուած է։

ՆԵՆՂԱՒՈՐ-ՀՐԱՆՈՒՆԿ (2)։ — Սոյս առնուն սրուած է իրեն անոր համար՝ որ բնազբօսիկ, սարգռնական ծիծաղ մը կը զգոյէ. ծիծաղ մը՝ որ զուարթութեան ծիծաղ չէ, հապա թուանաւորութեան մը կանխագոյց նշանն։

ՈՍԿԵԳՈՅՆ ՉԱՌԻԿ (3)։ — Նախնիք այս անկոփս չինուած բազադրութիւն մը դիտէին, որ

(1) Զաֆրան։ (2) Renoncule scélérate. Պր եւ տեղին չեմ գիտեր։ Արմատ լեռնէ։ (3) Sedon brulant. Սորը դրնեզ։

մարդոյն վրայ լուսնոտութեան ախտանշաններուն նման նշաններ յառաջ կը բերէր։

ՍԿԻԹԱԿԱՆ ԳԻ (1)։ — Ս.յս բուսոյս ծննդոցական զօրութիւնն խիստ հին առեներ ի վեր ծանօթ է։ Կալիէն կըսէ որ՝ հռովմէացի ախկնայք սկիւթական գիւղ բաղադրութեանց միջոցաւ սիրոյ պատուհանն չնչելու մեղապարտ հնարքներ կը գործածէին։ — Ովիդիոս իր բոլոր սրամտութիւնն կը հեղու այն հինաւուրց մոլորեցուցիչ պատանութեանց դէմ, որ անխոհեմ օրիորդաց՝ իրենց համբաւն անաղարտ պահելու աղետաբեր միջոցը կը յուշնէին։ — Ս.յսօր անգամ՝ կոշկաց մէջ սկիւթական գի կրնէն իբր խիստ ընտիր դաշտանաբեր մը կը համարեն։

ԿԱՂԱՆՁԱՆ (2)։ — Գրեթէ բոլոր կաղանչանի տեսակ տունկերն վտանգաւոր են. իրենց կաթնային յոյզն մարմաջմունք, մորթային բորբոքմունք կ'յղէ. կը պատճառէ. և եթէ մարդ անոնց չուքին ննջելու ըլլայ, սաստիկ գլխոյ ցաւ և խելքի պռոյտ կ'ղգայ. երբեմն մահ ալ կրնայ հետևիլ անկից։ (Տես Ժանթաքինոյ վրայ գրուած յօդուածն, Անաշխոտութեանց Եղանկանց պատմութեանմէջ

ԼՈՒՍԱՍԵՐՄ (3)։ — Ս.յս բոյսս գրեթէ ոգեւկից ըմպելեաց պատճառած թմբրութեան նման խորին թմբրութիւն մը կը պատճառէ։

(1) Sabine. Պիր սոյ արտըճ ագաճը։
(2) Euphorbes. Սիւտլիկէն։
(3) Betoine. Գէսթէրէ։

ԲՕԹԱՄԻՆՍԻՍ (1) և ԺԵԼԱՏՕՖԻԼԻՍ (2) բառած առնկերէն, որք Ինդոս գետին եզերքներն ու Բակարիոյ չրջակայքը կը բուսնին, երկու տեսակ բմպելիք կը շինուէր, որոց գործածութիւնն էր մոգական հաշակուած էր : Ասոնցմէ առաջինը՝ մարդոյն արիւնն առնը ուրուանալի երեւոյթներ յառաջ կբերէր, և երկրորդն բարձրաձայն ծիծաղ մը կը պատճառէր, որոյ առաջքը ուրիշ կերպիւ չէր կրնար առնուիլ, բայց եթէ խնդացողն պաղ ջրոյ մէջ ընկղմելով :

ՈՓԻՈՒԶԱՅԻՆ՝ որ բառն եթիոպիայի բայս մ'է՝ հին թին ծծելը այնպիսի խօլական ցնորք մը կը պատճառէր, որ այն միջոցին մարդ ինքզինքն օձերու բազմութենէ մը չրջապատուած կը կարծէր :

ԱՀՈՒԼԻՄԻՆԻՍ՝ արմատն չաքարահատ (3) չինուած՝ գինիով կլնուելով՝ մեզապարտներն կը տանջէր, որք այնպէս կերեւակայէին թէ վրէժխնդիր դիք իրենց հետէն ևն ընկել, և Տարտարոսին մէջ են պահավիժել :

ՄՈՒԶԱ-ՄՕՐԸ՝ որ տեսակ մը առնկէ, և որ Թարատան, Բահլաթքայ և՛ Ռուսիա կը դանուի, հում ուտուելով կամ մրգաջուրն առնուելով՝ մերթ զուարթ, մերթ տխուր, բայց առելի սաեպ մոլեգին զառանցանք մը կը պատճառէ, և մարդասպանութեան յօժարութիւն մը կուտայ մարդոյս : Քրահմինները՝ իրը Բահլաւեայ պատմութեանը մէջ կը պատմէ որ՝ ջրաքան մը տալ-

(1) Potamensis. (2) Gélatophyilis. (3) Pastille.

խմած ըլլալով, երեւակայեց թէ իր դնդապետն խեղդելու հրաման տուած էր իրեն, և իրօք պատրաստ էր այն բանը, եթէ իր ընկերներն դէմ կեցած չըլլային անոր : — Ուրիշ գինուոր մ'ալ որ մի ևնոյն ըմպելիքն գործածած էր, այնքան կատաղի դարձաւ, որ թրովը ինքն իր փորը ճեղքել կուզէր. չատ դժուարութեամբ կրցան արգիլել զայն որ այն բանը չընէ : — Վերջապէս երրորդ գինուոր մ'ալ կաթի մէջ խառնուած տալա-մօր կերած ըլլալով, ջրաձգային խնդումէ մը բռնուեցաւ՝ որ այնքան երկար տեւեց, մինչ գի երկու ժամէն մարդը դեռևին ընկաւ մեռաւ :

Բայ'ի այն անկերէն՝ որոց վրայ խօսեցանք, և այլ շատերէ՝ որոց վրայէն լռութեամբ կ'անցնինք, մոգական դեղագրերն մեր ներքին դրութեան վրայ առաւել կամ նուազ զօրաւոր ազդեցութիւն ընող խել մը հանքային և կենդանական նիւթեր ալ կը նշանակէին, որոց չատերն նկարագրած եմք ներկայ երկասիրութեանս Սէրաբէթէթ ըմպելիք անուն գլխոյն մէջ : Հրաշագործք անոյշ հոտերն ու բուրմունք ևս կը գործածէին մի ևնոյն նպատակաւ. ասոնց չգային դրութեան վրայ ունեցած տատիկ ազդեցութիւնն ամեն մարդ գիտէ : Անգամ մ'ալ չ'կրկնելու համար ինչ որ արդէն ըսած եմք մեր Անոպտահոպոսիկանց և Թաղիանց պատմութեան մէջ, հոս բանական (*) մանրամասն պարագայից հետաքրքիր

(*) Osphresiologique.

ընթերցողն կը հրաւիրեմք որ կարդան զայն, ուր պիտի դանեն նոքա թուումն այն ամեն գաղտնի, և շատ անգամ բռնական և անհեթեթ ազդեցութեանց՝ զորս բուրմունք մարդկային կազմութեան վրայ կը գործեն։

Սոյն գլուխս կ՚աւարտեմք ասա, դեղագործական ինչ ինչ նիւթոց յատկութեանցը վրայօք եղած մի քանի նոր ջննութիւններ յիշելով։

Կազմագէտք սա կէտին վրայ համաձայն են իրարու հետ, թէ համօրէն գրգռիչ նիւթերն ու հեղուկներն, ինչպէս գինւոյ ոգին, խահվէն, ափիոնը և այլն. արեան դէպ ի ուղեղն ընթանալն պատճառ կըլլան, և վայրկենական կերպիւ կը գրգռեն զայն, եթէ գրգռիչ նիւթոյն քանակութիւնն մանաւանդ սահմանէ մը անդին չ՚անցնիր։ Բայց ասոր, դիտուած է որ՝ իւրաքանչիւր գրգռիչ նիւթ իրեն յատուկ ազդեցութեան եղանակ մը ունի, և դոյցես իւր քիմացը համեմատ՝ մարդոյն ներքին գործարանները մին կ՚ընտրէ իրեն համար։ Ա. յսպէս՝ անուշադրը, և այն բաղադրութիւնքն որոց գլխաւոր տարրը կը կազմէ. այն է մուշկը, կղբուն, գինին, եթերը, խահուէն և այլն. երևակայութիւնը կը բանան և աւելի դիւրաւ ծնունդ կուտան գաղափարաց։ Հրածին (*) իւղերն՝ մեղմացուցիչ, սրտնեղութեան, և յորթիններաց հակառակ կընեն գործոց։ Խոզըրուն և իւր

(*) Pyrogénée.

համաղօրներն մի և նոյն արդիւնքը յառաջ կը բերեն։ Փոսփորն, և զայն պարունակող ըմպելիներն ու կերակուրներն ծննդական գործարանքն կը գրգռեն։ — Խոտն և իւր բաղադրութիւններն դեղձերուն անդրաժծումն (1) կը բազացնեն, և իմացականութեան մեծապէս նպաստաղելուն պատճառ կըլլան։ Մինդելը՝ երբ բժշկական չափով առնուելու ըլլայ, տխրութիւն կը պատճառէ. ոսկին ընդհակառակն զուարթութեան կը միտէ զմարդ։ — Սնդիկը հիւանդագին դիւրզգայութիւն մը և որ և է ըմբռնման կամ աշխատութեան դղրունք մը կուտայ մարդոյս։ — Բորաքէ Նատրոն (2) ներչընչելով հեշտութիւն մը կզգայ մարդ. անոր համար այս Նատրոնի՝ Մէնաղիցոյնէ կոչ անունը տուեր են. վասն զի զուարթութեան յօժարութիւն կ՚ազդէ, և ծիծաղը կը չարժէ մարդոյն։

Թմրեցուցչաց դասն ևս մարդկային կազմութեան վրայ իւր գործելու զանազան եղանակներն ունի։ — Ափիոնը մանաւանդ չափով մը առնուելով՝ տպաւորական բնազդութիւնքն ու երևակայութիւնը կը գրգռէ. առկից յառաջ կուգան զգայապատիր տեսիլքներն, այն հիացական յափշտակութիւնքն Ա. րևելցւոց մէջ, որք ափիոն կը ծխեն կամ կը խմեն։ — Մորֆին Քլորհիդրատ (3)

(1) Resorption. (2) Protoxyde.
(3) Chlorhydrate de Morphine.

չատախօսութիւն կը պատճառէ և արտասանու-
թիւնը կը դիւրացնէ : — Եպարատաւնին և մե-
լեխինգը դժալի կերպիւ մատուցական դերձու-
նէութիւնն կը նուազեցնեն : Խոշոլոքը դիւրացա-
սումն կընէ , բարեմաթեան և մինչև իսկ կաւոյ
կը վարէ զմարդ : — Ամանիքը կամ սուտ խաւա-
սունկը՝ Քամչաթքացիքն վայրենի կատաղութեան
մը կը մղէ : — Մատանեատունկը արեան շրջա-
նին անկարգութիւնքն կը հանդարտէ . — Հընդ-
դիկ կանեփը բերկրաւիթ երազներ , հմայական
ազ աչօք երևոյթներ կը ծնուցանէ ևլլն . ևլլն :

ԳԼՈՒԽ Ի .

ՆԱԽՆԵԱՅ ՄԻՋ ԵԻՍ ԵԻ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՍ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ԹՈՒՆԻՑ ՎՐԱՑ

Թուանաւոր նիւթոց ճանաչումն՝ հին աւեն մե-
գութեան և հրաշագործութեան ի կիր արկած
դիմաւոր հնարքներէն մին էր : Թոյներն պատ-
րաստելու արհեստն Հնդկաստանէն եկաւ , ինչ-
պէս ամեն ուրիշ դիւաերն , և ապա Եգիպտաց-
ոց և Յունաց ձեռօք կատարելագործուեցաւ .
նոքա ևս Եւրոպական ազգաց հաղորդեցին զայն :
Պատմագրաց դրուածոյը նայելով , մոգերն
քուրմերն և իրենց կատակիցներն մեհարեր ըմ-
պելեաց գեղագրերն իրարու կը հաղորդէին
ամենայն հաւատարմութեամբ . ըմպելիք՝ որոց
սոսկալի ազդեցութիւնն իրենց քէնն ու փառա-
սիրութիւնն յագեցնելու սքանչելի կերպիւ ձե-
ռընտու կըլլար : Ա.յնպէս թոյներ ունէին՝ որոց
ազդեցութիւնն անմիջական էր . և այնպիսիներ
ալ դիտէին՝ որք յամր յամր կը գամաքեցնէին
կենաց աղբիւրը . այնպիսիներ կը ճանաչէին՝ որ
դառնակակիծ ցաւերու մէջ ձգելով կը մեռցը-
նէին զմարդ . և ուրիշներ ալ՝ որք ընդհակառակն
մարդոյն վերջին շունչը փշած միջոցին տեսակ մը
ղդայական հեշտութիւն վայելել կուտայինանոր :

Թուրքին ներդործութեան զօրութիւնն՝ զայն գործածողներուն պիտոյից համեմատ աստիճան աստիճան կըլլար. այնպէս որ՝ կրնար մահ պատճառել նոյնհետայն, կամ քանի մը ժամէ, քանի մը օրէ, կամ վերջապէս ամիսներէ և տարիներէ ետքը։ Մեր դարուն սկիզբներն, երբ Անգլիացիք Մալապարցի որբևայրուց մը այրելուն դէմ կենալ ուզեցին, պրահմիներն բացարձակապէս յայտնեցին իրենց՝ որ եթէ այն կնոջ փայտակուտին վրայ ենթելը արդիլելու ըլլային, երէք ժամէն աւելի չ'ապրեր նա այս սովորութեանս բռնաբարութեանը վրայ. և իրօք այս բանս պատահեցաւ, որուած թոյնը այնչափ ժամանակի համար չափուած ըլլալուն։

Հերոդոտոսի պատմածին նայելով, Ասորեստանի թագաւորներն Բակտրիոյ քրմերէն թոյն մը սովրած էին, որ անմիջապէս կը մեռցնէր, և իրենց, և իրենց ընտանեացը գործածութեանը համար կը պահէին զայն. արքունեաց աւագանին չատ անգամ զոհ կըլլար անոր։

Ալեքսանդր՝ Հնդկաստանը աչխարհակալած միջոցին՝ Հնդկաց թուրնաւոր նետերէն բաւական նեղութիւն քաշեց։ Հարմադա քաղաքին բնակիչներն՝ զոր պաշարած էր, այն թունին ազատկութեանը վրայ ապաւինած, որոյ մէջ իրենց ղենքերն թաթաւած էին, համարձակեցան պարկեսպներնէն դուրս ելնելու։ Հալիւ Մակեդոնացին անոնց դէմ մէկ քանի թեթեւազէն զրնդեր արձակած էր, որ Հնդիկք իրենց թունաւոր նետերն սկսան տեղալ, և այնքան կոտորած պատճառեցին անոնց՝ որ վիրաւորեալ զինուորաց դրեթէ ամէնքն ալ սոսկալի մահուամբ մը մեռան։

Քրմաց զօրաւոր ակումբն, որ աստուածապետական կառավարութիւնն հաստատեց յԵգիպտոս, յաճախ 'ի կիր կ'արկանէր այս նենգաւոր արհեստս։ Քանի քանի ստամբակ իչխանք, քանի քանի թագաւորք յանկարծական մահուան հանդիպեցան, և այս մահս ժողովրդեան աչքին իբրև աստուածոց մէկ պատուհասն կը ներկայացնէին։

Եբրայական փոքրիկ ժողովրդեան մէջ՝ թոյներ կազմելու արհեստն մասնաւոր մի քանի ընտանեաց մենաշնորհն եղած էր. ասոնց իչխանութիւնը իրենց ազդած երկիւղին համեմատութեամբը աճելով՝ ստուերած պատճառեց Մովսէսի, որ մահուան պատժով արգիլեց որ՝ որ և իցէ մէկու քով ամենևին թունաւոր նիւթ չը գտնուի. այս վարպետ օրէնսդիրս իրեն վերապահեց անոր միայնակ գործածութիւնը, և իր յաջորդացը աւանդեց զայն։ Աւելի ետքերը կը տեսնեմք որ Եղիա մարգարէն Յովրամ արքային իմաց կուտայ որ պատրաստ ըլլայ մեռնելու. վասն զի Իսրայէլի Աստուածը՝ իր ամբարշտութեանցը վրայ բարկանալով, մահուան վճիռն արձակած էր։ Յովրամ երկրորդ օրը չունչը փչեց՝ այնպիսի նշաններ ցոյց տալով, որ եթէ մեր օրերը պատահելու ըլլար այն բանը, այսպիսի դուշակութեան մը հեղինակն եղեռնադատ ատեան հանուելու պատճառ կրնար ըլլալ։ Հրէական

պատմութիւնն լի է նմանօրինակ յանկարծական մահուամբք, զորս տպէտ ժողովուրդն ահաւորն Եհովայի պատիժն կը համարէը, և որք իրօք ուրիշ բան չ'էին, բայց եթէ գազանի կերպիւ մահակատարուած թուռնի մը արդիւնքն :

Յունաց մէջ, դիւցազնական գարերէն սկսեալ մինչև անկման գարն, թունագործական արհեստն ահագին յառաջադիմութիւն ըրաւ. մանաւանդ Թեսալիոյ և Կոդբիսի մէջ ահռելի վայր մը առացաւ. Մեդէաներն, Սիբիկներն, Հերոնեանք, Մեկապէներն, Լոքսագաներն և ուրիշ շատեր՝ որոց անուանքն աւանդած է մեզ պատմութիւնն, իրենց գարշելի հռչակաւն՝ արդէն ծանօթ եղող դեղատուաց համբաւն նախապատրաստեցին. և եթէ ներելի է գաղտնութիւն մը ընել անոնց վրայ՝ այն եղելութեանց յիշելով, որք այն հեռաւոր ժամանակաց այլաբանութեանց ներքև ծածկուած են, թոյներն բազադրելու արհեստն կատարելագործուելու զարհուրելի աստիճանի մը հասած էր :

Թէոփրաստէն կ'իմանանք թէ, Յունաստանի ինչ ինչ գաւառաց մէջ՝ իրենց նմանը չունեցող դեղատուներ կը գտնուէին. մանաւանդ Թրաքիասայ Մանդինիցւոյ, և իւր աշակերտին Սկիքսիասայ անուանքն կը յիշէ : Առանցմէ առաջինն կը պարծենար թէ՝ վայրկենի մէջ, կամ յուշ յուշ ցաւ պատճառելով կամ առանց ցաւոյ կրնար մարդ մահացընել. իսկ երկրորդը իւր վարդապետէն ուսեալ ճարտար գտնուելով՝

տեսակ տեսակ թոյներ բազադրած էր, որք մասնաւորապէս այս կամ այն գործարանին վրայ կը ներգործէին. զորօրինակ ուղեղին և ողնայարի ծուծին, թոքին, սրտին ու արեան վրայ և այլն . . . : Ա.յս թոյներս կրնային խառնուիլ թէ հնչեալ օդոյն մէջ, թէ բաղնիքի մը ջրոյն, և թէ կերակրոյ և ըմպելեաց մէջ. նոյնպէս դիակաց, դոհարելենք և մինչև իսկ սեռենակաց պատերն կարելի էր ատոնցմով թրչիլ : Ասանցմէ ոմանք տապալին ջերմեան վերջին աստիճանի տաքութիւն մը յառաջ կը բերէին, և անոր հետևակայ եղոյն մղելիին կառուցուածքն մի մէջ հոգին կը փչէր. և կամ խոլ զառիթափութեամբ մը կը բռնուէր մարդ. կը խնդար, կը պարէր, չարաչար կը տառանջէր, ապա ծնդերն կ'սկսէին կթոսիլ, մարմինը կը կքէր, և ահագին ծիծաղ մը արձակելով կը մեռնէր : Միւս թոյներն խորին թմբրութեան մը մէջ կ'ընկղմէին զմարդ՝ կատարեալ դադարկութեամբ հանդերձ. մարմինը շրջանակէն դեպ 'ի կեդրոնը կը սառէր, և կը ներհէրնար մեկ մ'ալ չ'զարթնելոյ պայմանաւ : Թեոփրաստ կը յաւելու թէ՝ այս թուռնիցս բազադրութեան մէջ զանազան համեմատութեամբ կը գտնուէին մանդխինդ, մեկոն, ակոնիտոսին, խողտրան, հնդիկ կանեփ, թունաւոր ազատր (*), բազմաթիւ օձերու թոյնն, և վատասկաբեկ եւ ած կենդանեաց լորձունքն :

(*) Toxicodendron . Ցնհրի սումագ :

Պարիսպագեայ՝ Ս. Բռաշէս Մնէմոնի մօր՝ իւր նուն դիղեալն եղանակը կը ցուցնէ թէ ո՛րքան սճրագործութիւնն հնարքներու մասին հարուստ էր։ Խնձոյքի մը մէջ, կաքաւ մը կարելու համար այնպիսի դանակ մը գործածեց, որոյ սայրին մէկ երեսն միայն թոյն քսուած էր. և իւր նուոյն այն կտորը հրամցուց՝ որ թունին դիպած էր և զոր ուտելուն վրայ երկու օրէն մեռաւ։

Բազմաթիւ մատենագիրք կը պնդեն թէ, Մնեմին Ս. դէպքանդրի մահն՝ ի Բաբիլոն՝ ոչ թէ կերակրոյ և արբեցութեան չափազանցութենէ յառաջ եկաւ, այլ թունի մը ազդեցութենէն՝ զոր իւր դաշնակ թշնամիներէն մին առնուլ տուաւ իրեն։ Ս. յս դէպս կըսեն թէ Հնդկաստանէն բերուած էր։

Ս. յն մահատուր ըմպելին՝ զոր Սթինայի Ս. Բիսպադոնն մահուան դատապարտելոց ըմպել կուտար, մի միայն մոլեխինդէ շինուած չ'էր, ինչպէս որ դրեթէ ամեն պատմագիրք կրկնած են Պլինիոսի հետևելով։ Փեռնէ մէջ, ուր Սոկրատայ մահն մանրամասն պարագայիւք պատմուած է, իւր աշակերտը Կռիթ (մոլեխինդ) բառը բնաւ երբէք չ'գործածէր։ Պղատոն կըսէ թէ՝ մարդոց իմաստնագոյնն թունալից բաժակն քամելէ ետքը ո՛չ ցաւ, ո՛չ խիթ, ո՛չ փսխուքն, և ո՛չ ջղաձգութիւն զգայ. իւր արուեստներն կը թոռանան, արեան շրջանն ծանրանայ, անդամներն սառեցան, պզտիկ քիչ քիչ դէպ ի սիրտն երթալ, բայց իմաստականութիւնն բնաւ չչփոթեցաւ. վերջապէս

երբ Սոկրատ զգայ որ արուեստներն կը ծանրանային, ժպիտ ի շուրթն պատուիրեց որ իրեն համար աքաղաղ մը զոհեն Եսկիւղապեայ, և ընդկնց այն քնութիւն, որ ալ զարթնում չունի։

Եթէ այս մահուանս հետ երևցող նշաններն բաղդատութեամբ այն նշանաց հետ՝ որք այսօր մոլեխինդէ թունաւորութեան առեն կը տեսնուին, պիտի ստիպուիմք ընդունելու որ դիսովին հակառակ են իրարու, և թէ Ս. Թենադուոց մահադուոյիչ ըմպելին՝ կեանքը առանց ցաւոց չիջուցանող այլ և այլ թմրեցուցիչ դեղերէ բաղադրեալ ըլլալու էր, որոց դեղագիրն մեր ձեռքն հասած չ'է։

Պլինիոս երկար բարակ սոսկալի թունի մը պատմութիւնն կընէ, զոր Սկիւթացիք կը դործածէին իրենց դէնքերն թունաւորելու համար։ Ասոնցմէ պատճառեալ վէրքերն այնքան ծանր էին, որ «ինքնին վերէն կանուանէ զանոնք, անբուժելի ըսելու տեղ. և հակառակ այն բաղմադիմի անդիղայից՝ որոց գործածութիւնը կը պատուիրէ, ստիպուած է խոստովանելու որ անոնց ազդեցութիւնն խիստ քիչ տասդ է։ Հերոդոտոսի բառերն նայելով, Պլինիոս և Գիմոկրիտէս կը կարծեն թէ այս թոյնս իժի թունի և մարդկային արեան խառնուրդ մ'էր։ Ս. յս առարկութիւնս ճշմարտանմանութենէ բոլորովին դուրկ չ'է. այսօր անդամ Թեմաթրատանի լինչ լինչ հրոսակներն արևնէ կարկանդակ մը կը դնեն յառաջացդ պրդռևալ իժի մը առջին՝ որ կը խածնէ,

և իւր թուռնոյն կը թանայ զայն : Ա.յս արիւնս , եառքը չրոյ հետ խառնուելով զինքերն թունաւորելու կը դործածուին , որոց պատճառած վէրքերն խիստ չար անպատմ մահացու են :

Կարթագինեցիք նոյնպէս խիստ զօրաւոր թոյներ կը չինէին՝ ասղնոց թուներովն և խոտի յօդերով : Ա.յս թունիս էր՝ որ Ա.միլքար՝ Լիբեացւոց , և Ա.ննիբաղ ալ Պերդամացւոց յաղթեց :

Ըստ Ց. Կեսարու , նախնի Գաղղիացիք ևս իրենց զինքերն կը թունաւորէին . նոյնպէս Պրոյիդք ալ թունից ծանօթութենանն կը պարտէին այն իշխանութիւնն , որ այնքան երկիւղալի կընէր զիրենք :

Վալերիս Ա.ռքսիմոս կը պատմէ թէ՝ Մարսելիայի Փոկեացիք իրենց մահապարտներուն յաւէտ չպատճառող թունաւոր բմպելի մը կը մատուցանէին . կեանքն այնքան քաղցր , անդգալի կերպիւ կը մարէր , որ պատժապարտք դատաւորներէն իրը չնորհք կը խնդրէին որ այն թունէն մեռնին :

Սարմատն՝ Փիոս կղզւոյն բնակչաց , Իբերացւոց և Ազգիւտացւոց համար կըսէ թէ՝ չատ վարպետ դեղատուներ էին :

Հռովմէական հասարակապետութիւնն՝ իր խիստ բարուցն ու վարչութենանն հակառակ՝ չկրցաւ արգելուլ որ այս չարագուշակ արհեստս մուտ չգործէ իր մէջ : Փղակիսի և Մարկելղոսի հիւպատոսութեան օրով՝ առանց ծանուցեալ պատճառի մը՝ ամէն ասոիճանէ խնչ մը անձ-

ձանց մեռնիլն կը տեսնուի : Քաղաքապետան կարծելով թէ համաճարակ ախտ մը կայ , հրամայեր որ հրապարակաւ աղօթք ըլլուին Ա.պոլլոնոյ . բայց աղախին մը եկաւ հարիւր եօթանասուն պատրիկուհի մատնեց , իրը իրենց բաշխած ըմպելիներովն ու փոչիներովն մի միայն պատճառաբ այս պատուհասիս : Ուստի ամբաստանեալներէն քանը հասարակաց հրապարակը բերուեցան , և տուներնուն մէջէն խուզարկուելով դրամներնուն թունաւոր նիւթերն ըմպելու դատապարտուեցան . բայց հարիւր ըմպած էին զայնս , և ահա դեռինը դլորեցան և սոսկալի տեղդանօք չնչերնին փչեցին : Միւս դեղատուհիք ևս իրենց արժան եղած պատիժն ընկալան :

Պոմպէոսի ժամանակն՝ ծերակոյտը լինչ լինչ պարագայից համար ազգային մեհադեղ մը կը պահէր : Ա.յն անձինքն՝ որք անդարմանելի ձախողութեանց կամ անպատուութեան հանդիպելով ալ այնուհետև ապրիլ չէին ուզեր , անկից խնդրելու համար՝ աստղագետաց դատաւորայ կը դիմէին . վասն զի մի միայն ատոնց կը պատկաներ դատելու իրաւունքը թէ՝ արդեօք այն աղէտքն , որոց համար կը տրտնջէին հետամուտք , այս դեղս պահանջելու չափ ծանր է՞ին : Բայց ամենէն աւելի Կեսարայ օրոնքը եր որ թոյներն ամեն դի իրենց աւերմանքն տարածեցին . այնպէս որ կայսրութեան առաջին կարգի դլուխներն իսկ չէին խնայուեր : Հռովմայ թաղերն տասանորդուեցան , և ամբողջ դերդաստաններ անհետ

եղան։ Տիբերի և Ներոնի թագաւորութեան օրով, գալըլին Լոկուստա այնքան լաւ կերպիւ ծառայեց այս թագակիր ճիւաղացը՝ բազմաթիւ բարձրաստիճան անձինք թունաւորելով, որ ասոնք (Ներոն և Տիբեր) հարստութեամբ և պատուով լեցուցին զինքն, և մինչև իսկ աշակերտները տուին իրեն որ դեղատուի արհեստն ուսուցնէ անոնց։ Սարսափն ամեն դի կը տիրէր. ո՛չ ոքի համար ապահովութիւն չկար, և իւր ընտանեացը մէջ տեղ անգամ՝ մարդ դաղտնի մահագեղ մը զոհ ըլլալէ կը վախնար։

Կայսրութեան երկուքի բաժնուելէն վերջը՝ թունաւորիչ Կայսերաց եռեակն Կոստանդնուպոլիս դնալով, յիշեալ մայրաքաղաքն իրենց դեղուանց թաւար դարձուցին։

Գործեալ՝ Մէյլին Գարու պատմութիւնն կը ներկայացնէ մեզ հանդերձն Եւրոպա դեղատուներով լցուած, և այս հրէշային արհեստս ոչ միայն անծանօթ ու աննշան եակաց ձեռք դործածուեցաւ, այլ և նշանաւոր դերդատոնները սերեալ մարդիկ նոդկալի հանրաւ մը առատան յայնմ։ Ա. յս մեծապէս ոճրադործութիւն մը քանին միայն պիտի յիշեմք մեք աստ. ոճրադործք, որոց անուանքն առանց զարհուրմէ և սոսկմանէ առնուելու չկրնար կարդալ մարդ, կամ նոցա արատաստանութիւնն լսել։

Անիծապարտ Պորճիայք բոլոր Իտալիան իրենց թոյներովքն սպծեցին. ասոնց համար բնաւ բան մը չկար որ հաւերական ըլլար, պղծական, բարեկամ, անձնանուէր մարդիկ, ծեր և տղայ, անխտիր կը դիղէին ով որ իրենց անհանդուրժութիւն պատճառէր։ Կըսեն թէ՝ Ալեքսանդր Զ. Պապ անուանեալ Պորճիան՝ ինքն անձամբ թոյն մը կը բաշխէր, մինչև այն աստիճան ճանչցուած թոյներէն աւելի սաստիկ և աւելի անվրէպ ազդեցութեամբ։ Ճիշ ինչպէս կը պատրաստէր զայն, խոզ մը կառնային, ոտքերէն դլխիվայր կը կախէին. ապա շատ օրեր չարչարանք կը ծեծէին, կը խայթէին, կը չարչարէին զայն, մինչև որ ախտային մահճակալ մը հասնելով, կատաղութեան նշանները ցոյց տար. այն ատեն անոր ըրձանքը կը ժողովէին, և ոսկիէ տփոյ մէջ պահուած ուրիշ բարկ թունի մը հետ կը խառնուին զայն։ Ա. յս մահագեղս, որ ծախիչ սպառիչ ազդեցութիւն մը կանենար, Քանթարելլա ըսուած էր. վասն զի անկից դեղուող եղկելիներն աղեխորով մանչիւններ արձակելով կը մեռնէին։ Սոյն դերդատանաս դեռ ուրիշ թոյներ ալ ունէր, որք կըսեն թէ որոշեալ ժամու մը, որոշեալ օրուան մը մէջ մահ կը պատճառէին. և այս բանս ընելու համար՝ բաւական էր թունին չափն աւելցընել կամ պակսեցնել։

Գրեթէ մի և նոյն ժամանակներն Թոֆֆա դեղատուհին սուդ և անմխիթար թաղծութիւն կը սփռէր Նափոլի քաղաքին մէջ. կը կարծուի թէ Ալեքսանդր Զ. խել մը թոյներու դեղապրերն այս կնոջմէս առած ըլլայ։

Գաղղիա ևս զերծ չմնաց այս մարդադէմ

հրէշներէս, և մեր պատմութեան այս չարաղէտ երեւներն չը թղթատելու համար՝ ոճրագործութեան տարեգրոց մէջ հռչակաւոր հանդիսացած երեք անուն միայն պիտի յիշեմք. Լավուազէն, Լա Վիկուռէս և Լա Պրինվիլլեռ։ Առնցմէ երկու առաջինքն այնքան ճարտարք որքան անամօթք, այնքան յոդնաթիւ դեղատուութեամբք նշանաւոր եղան, մինչդի՛ի Բարիզ նորոգեցին այն անհնարին աղետքն՝ որ Փլակկոսի և Վաղերիոսի հիւպատոսութեան օրով պատահած էր՛ի Հռոմ։ Այս ապերասթ թշուառականքս ամէն ձևով թոյն կը բաշխէին ամէն անոնց որ՝ շուտ մը կամ ծանր ծանր՝ հօր մը, ամուսնոյ մը, կամ սիրահարի մը ձեռքէն ինքզինքնին ազատել ուզէին այն կերպիւ՝ որ թունաւորուած ըլլալու ամենևին նշան մը չունար չ'ենէր։ Խել մը արք և կանայք գործածեցին զայն իրենց թշնամեաց և իրենց ուժոց դէմ։ Օր չ'էր անցնէր որ յանկարծական մահուան խօսք չըլլար։ Այն առենուան ժամանակագիրք կըսեն թէ՝ այս դեղատու կանանց ձեռքակալուելէն և դատապարտուելնէն ետքը, շատ մը նշանաւոր մարդկանց՝ նոցա ոճրաց մասնակից եղած ըլլալն հաստատուեցաւ, և բաղմաթիւ բարձրաստիճան անձանց պատիւն մեծապէս աղարտեցաւ։

Լա Պրինվիլլեռ, վերոյիշեալ երկուքէն ոչ նուազ անուանի, անոնցմէ աւելի հնարիմաց գտնուեցաւ։ Այս թշուառական կինս իւր տարփածուին՝ Սէն-Քրուա և Էքզիլի Իտալացւոյն,

իրեն արժանի արբանեկաց՝ ազակցութեանն չը նորհիւ, իւր հօրմէն սկսելով ամեն ոտիճանէ խել մը անձինք թունաւորեց։ Իւր գործածած մահադեղերն, որոց համար կըսեն թէ Պրէ-ֆնով (1), Ընդէֆնով (2), կամ Մորֆնով (3) չինուած էին, և զորս Էքզիլի ոսկերփոխութեան փորձերը ըրած միջոցին գտած էր, ամենևին հետք չէին թողուր թունաւորելոյն վրայ։ Այսպէս Լա Պրինվիլիեր երկար տաեն անպատուհաս իւր նողկալի արհեստն գործածեց. բայց վերջապէս մարդկային արդարութեան ժամն հնչեց, և Գաղղիա այս դարշելի հրէշիս ձեռքէն խոպատ ազատեցաւ։

Վերջապէս ճարտար դեղատուները, գիտնալով որ թոյնը կրնայ մարմոյն ծծիլ ծակոտեաց և շնչառութեան միջոցաւ մարմնոյն մէջ ներմուծիլ, մեծ անուն հանեցին այնպիսի թունաւոր հայտեր, փոշիներ, ջրեր և չոգիներ հնարելով, որոց ամենամանր մասնիկքն իսկ սոյն անցից միջոցաւ մարմինէն ներս կը թափանցէին։

Այսպէս՝ Տասնևվեցերորդ դարուն՝ իշխան մը քիչ մնաց նամակէ մը պիտի թունաւորուէր։ Կատարինէ Մէտիչիին համար կըսեն թէ ղոյգ մը ողորկ ձեռնոցով Ժովհաննա Տ'Ալպրէտը թունաւորեց։ — Վենետիկի ազնուազարմ տիկին մը մի և նոյն ոճրին գործեց դիմակի մը միջոցաւ, ղոր պարահանդիսի մը մէջ իւր տարփածուին մա-

---

(1) Brucine. (2) Գարկա պիւքէն խելասասը։ (3) Աֆիոն խելասասը։

տոյց։ Մեծանուն Զաքքիաս կը հաւատայ թէ Կղեմէս Ե. Պապը ճրագի մը ծխոյն թունաւորուեցաւ, և թէ հերձուածող աստուածաբանին մէկն ալ մի և նոյն բաղդին տիրացաւ՝ հոտառեա չաքարահատ մը հոտառելով։ Լա Պրէնվիլլիէր, ղորմէ գոյղն լինչ յառաջ խօսեցանք, չատ մը մարդիկ դեղից երեսի փոշիներով, հեռադէրն սպիտակացնելու գործածուած նշի օճառներով, անգուրով, գոհարեղէններով, զգեստներով և այլն. որոց ամենուն մէջն ալ թոյն խառնած էր։

Ս. կանգ առնումք այս օրինակաց վրայ, և ուրախամբ ըսել, ի գովեստ արդի ընկերութեանց, որ դեղատուութեան արհեստն գրեթէ մոռցուած է այժմ. թունաւորողք երթալով աւելի հազուագիպ կըլլան, և դատաւորական ատեանք, գիտութեան լուսոյն չնորհիւ՝ զոր իրենց աչակցութեանն կը կոչեն, անպատիժ մնալուն բնաւ որ և է յոյս չեն թողուր եղեռնագործին։

Ս. ՄԵՐԻԿԵԱՆ ՄԱՀՎԱԴԵՂՔ։ — Ս. Մերիկայի ընդարձակածաւալ ցամաքն վերջին ատիճանի աստիճ թունաւոր նիւթեր կը ներկայացնէ մեզ։ Հնդիկք իրենց զէնքերն անոնցմով կը թունաւորեն, որոց պատճառած վէրքերն գրեթէ միշտ մահացու են, եթէ անմիջապէս հակաթոյնն ճարելով մատակարարելու չըլլաս։ Ս. ին Եւրոպացին՝ որ ամենէն յառաջ ոսկի ժողովելու համար Ս. Մերիկայի հողոյն վրայ ծռեցաւ, կըսէ բազմագէտն Տը Բաւ, թունաւոր սլաքաւ մը սպաննուեցաւ։

Ս. յոսկալի թոյներուս մէջէն կը յիշուին Քիւրբուրէ (1), Ուուրարան (2), Մաւակուրը (3), ժանտախնձորին, թունին (4) և այլն. և բազմատեսակ սոցնոց՝ իժինեն աւելի վտանգաւոր եղող թոյներն։

Թիքիւնացիք՝ որք Հարաւային Ս. Մերիկայի վայրենի ժողովուրդ մ՚են, խիստ զարհուրելի թոյն մը կը չինեն Քիւրբուռ, որ ճահճաց մէջերն աճող տեսակ մը բաղեզ է, և զոր ուրիշ թունաւոր խոտերու հետ միատեղ կաթսայի մը մէջ կ՚եփեն, մինչև որ հիւթը թանձրանայ։

Լա Քոնտամին, և իւրմէ յետոյ այլ բազմաթիւ ճանապարհորդք կը հաւատան թէ՝ կաթսայէն եղնող շոգիներն մահ կը պատճառեն շնչողին. անոր համար Թիւքենացիք խնդճ զառամեալ պառաւներու պատրաստել կուտան սոյն քաղաքութիւնս։ Իսկ թոյնը փորձելու համար նետի մը ծայրն մէջը կը թաթաւեն, և ապա ջերմաջերմ արեան մէջ կը մխեն զայն։ Եթէ արիւնն իսկ և իսկ մածնու, ըսել է թէ թոյնը իւր բոլոր զօրութիւնը ստացել է. ուստի կրակէն եռ կը քաշեն զայն։ Իսկ եթէ հակառակը պատահի, եփը կը շարունակեն, և մեծ զգուշութիւն կընեն որ Քիւրբուէ վայրկ դրդալով մը անդադար խառնեն։ Երբ տեսնեն որ թանձրացեալ հիւթն իւր մահատու զօրութիւնն ստացել է, ամաններու մէջ կը լեցնեն զայն, որք մեծ

---

(1) Curare. (2) Woorara. (3) Mavacure. (4) Upas։

զգուշութեամբ չոր տեղը կը պահուին : Հընդիկը Քէ-ըւթըյին չունենալու եղանակին ա՛նքան խղճմտութեամբ իրարու կաւանդեն, որքան հին դեղագործք կընէին թիւրակէն պատրաստելու մասին : Ս.յս մահադեղոյս մէջ մտած նետերն բազում տարիներ իրենց աղետաբեր զօրութիւնն անկորուստ կը պահեն : Ս.յս մասին կը պատմեն թէ հետաքրքրին մէկը, Հոլանտայի քաղաքներէն միոյն գինարանն տեսնելու գնացած ըլլալով, մատը այն զէնքերէն միուն դըպցընելով խայթեց, և այն խայթուածքին երեսէն վերջապէս մեռաւ մարդը : Ս.յս զօրաւոր թոյնս ուղղակի արեան վրայ կըներգործէ, զոր նոյնհետայն կը թանձրացնէ՝ ճիշդ այն կերպիւ որով քացախի (1) կաթիլ մը՝ կաթը մածուն կը դարձնէ : Քէ-ըւթյով օծուած նետերով սպանուած անասնոց մսոյն վրայ՝ ամենևին վնասակար յատկութիւն մը չգիտեր. վասն զի արեան մածնելէն ետքը թոյնը կը չեզոքանայ :

Բայց մինչև ցարդ ծանօթ եղած թոյներուն ամենէն զարհուրելին՝ Մաքասարի կղզեբնակաց քով կը գտնուի. ասի ծառէ մը կը վազէ, մեղրը նման թանձր : Մաքասարցիք փոքրիկ սլաքներ կամ հերիւններ թունաւորելու կը դործածեն զայն, զորս փչափողներու(2) միջոցաւ կ'արձակեն: Թավէրնիէ ճանապարհորդը, սոյն մահադեղոյս սարսափելի երազազդեցութեանն վկայ, սա պէս

(1) Acide acetique. (2) Sarbacan.

կը պատմէ եղելութիւն մը՝ որ իւր աչաց առջև տեղի ունեցաւ :

«Սումպաբօ, Մաքասարի թագաւորը՝ իւր քովը գտնուած թունի մը ինչ զօրութիւն ունենալն ինձ ցուցանել ուզելով, որոյ դեղթափը ինքն միայն գիտէր, մարդասպանութեան յանցանօք դատապարտեալ անդղիացի մը բերել տուաւ առջևը. նոյնպէս երկու վիրաբոյժ ալ բերել տուաւ, մին անդղիացի և միւսը հոլանտացի, և իմաց տուաւ իրենց որ՝ եթէ կարենային ողջ պահել զանի, անոր կեանքը իրենց կը շնորհէր : Զայս լսելով, իւր՝ մէջը պարապ եղեգեայ դաւազանն առաւ, և թունաւոր նետ մը մէջը անցնելով ինձ հարցուց թէ՝ օ՞ր կոզմէն կ'ուզէի որ դատապարտեալը վիրաւորուէր. ես ալ ազատին բոլոր մասը ցոյց տուի իրեն. մի և նոյն վայրկենին նետը սուրաց և ուղղակի որոշեալ նպատակին դիպաւ : Երկու վիրաբոյժներն անմիջապէս վիրաւորեալ մասը կտրեցին, յուսալով որ այնու թունին մարմնոյն մէջ տարածուելուն առաջքն առնուն. բայց ընդունայն եւ լաւ իրենց չանքը. խեղճը՝ անդամահատութեան վրայ վայրկեան մը չ'անցած՝ մեռաւ» :

Կա՞ն արդեօք այնպիսի թոյներ՝ որ մեռնողորտին հետ կարենան խառնուիլ, ի միզանդուիլ, և ապականիչ ժանտամահից նման՝ զիրենք չընչղող ամեն էակաց մահ պատճառել : Բազմաթիւ պատմական իրողութիւնք այս խնդիրս ստորագաբար լուծել կը թուին : Հիբոկրատ, Ս.րիս-

տուել, Ա. բերթէոս և Կաիէն այնպիսի տունկեր յիշած են, որք օդն թունաւորելու, և զանի ճահճեվայրից գոլորշեացը չափ մահացուցիչ ընելու աղիտաբեր զօրութիւնն ունէին։ Սոյն բոյսերս՝ չարահնար անձանց ձեռօք աւանաց և դիւղից չուրջը կատակուելով՝ օդն իրենց ժահրագործ մանրիկներովն կապականէին, և առ հասարակ ամեն չնչաւոր արարածոց ճշմարիտ թունաւորութիւն մը կը պատճառէին։

Դարձեալ՝ Պարսից ծոցոյն եղերքն ժամանակաւ կաթնային թուփեր կը դանուէին այնքան բարկ, որ անոնց վրայէն քերելով անցնող հողմն մահաբոյր զօրութիւն մը կառնուր կը տանէր մինաւեղ։ Շարտէն կը հաւաստէ թէ՝ Պարսկաստանի ինչ ինչ կողմերը՝ Կէոպոփ-Մահոմէ ըսուած կաթնային ոզկոյզներ ունեցող թփանման տունկն մեծ տարածութեամբ մը տեղ՝ չուրջը դանուած օդը կը թունաւորէ. նոյնպէս Եւրոպիոյ մէջ չատ մը կոյիններ (1) և կատուագուոյ (2) փոխութիւնն նմանապէս մահացու հիւանդութիւններ կը ծընուցանեն։

Սարաբան դարչահոտ փոշի մը կը նշանակէ, զոր Կողքիսի Սան ըսուած ժողովուրդն իրենց թշնամեաց վրայ կ'արձակէին, և որ խեղդամահ կընէր բոլոր անոնք, զորս նետահար չէին կրցած ընել։

Վ. Հենեփիկեան հրարուեստի վրայ գրուած հին դրքի մը մէջ՝ ժահահոտ փոշւոյ մը բաղադ-

(1) Coufêrve. Ջրային խոտ մը։ (2) Hippuris։

րութեան եղանակը կը գտնուի, զոր հրալից դառնդելու, դնտակներու կամ յատկապէս այս բանիս համար չինուած տիերու մէջ կը ընեին. և այս հրադունքս պայթելու առեն այնքան դարշելի, այնքան սաստիկ թափանցող հոտ մը կը բուրէին, որ չորս դին անչնչութիւն և մահ կը պատճառէր։ Պարոն որ Հան կը պատմէ թէ՝ Լանտրայի բնակչացներէն մին, իր նոր չինած մահահոտ փոչին փորձել ուզելով, փողոցին մէջ ցանեց զայն, և չատ անցորդներ ընչահեղձ գետինն ընկան։ Ամեն մարդ գիտէ որ այս դարուս սկիզբն անդղիացի նաւաստիք՝ զաւիկն բորակածին ազովք (*) և հրալառ դարչահոտ փոչւով լցեալ տիերով Պրեդայնըի և Նորմանտիոյ ծովեզերքներն թունաւորելու փորձ փորձեցին։

Դեմոկրիտէս, իր գրուածոց մէկ գլխոյն մէջ կը պատմէ թէ՝ չարամիտ կիւտահմայներ խաչանց հոտերն ու հունձքերն կը թունաւորէին, և բոյսերն ու ծառերն առանց արտաքին պատճառի մը՝ բուսած տեղերնին չորցնել կուտային։ Մեր օրով փորձեցին տեսան որ ծծմբոյ և կրի խառնուրդ մը նթէ ծառոց ստորոտը լցուելու ըլլայ, կը գօսացնէ զանոնք. և թէ ապականիչ կաղերով խառնուած, կամ մէջերնին լուծեալ վիճակի մէջ ինչ ինչ մետաղային աղեր պարունակող ջուրք՝ կրնան մարդասպաններն և մինչև իսկ մեծամեծ բուսեղէններն չորացնել, երբ նոցա արմատը թանալու ըլլան։

Ս.պաքէն՝ թոյներու վրայ գրող թէ հին և թէ

(*) Nitrate d'arsenic.

նոր հեղինակը այնքան բաղմաթիւ են, որ ի-
րենց անուանց անհուն ցանկն մեծամեծ հատոր-
ներ կրնայ կազմել : Թունագիտութեան աւելի
կամ նուազ նշանաւոր եղող բոլոր այս դրուած-
ներէս կը հետևի որ՝ թոյներն երեք դասու բաժ-
նուելու են. այն է Մուենէ (1), Թմբեցուցէ (2) և
Նեխէ կամ Փոխեցուցէ (3) : Ասոնցմէ առաջին-
ներն կը բորբոքեն և կը մաշեն այն մասին հիւս-
կէններն՝ որոց կը դիպչին. երկրորդներն՝ մանա-
ւորապէս ուղեղին և ջղային դրութեան վրայ
ազդելով՝ թմբրութիւն, ընդարմացում և մահ
կը պատճառեն անոնց. — իսկ երրորդ՝ երակաց
սոսկալի ազդեցութիւնքն մարմնոյն որ մասին
վրայ որ նային, այն մասին վրայ կը ներգործեն.
մորթը կը պաղի, գոյնը կը փոխէ և խլերդ կը
դառնայ (4) :

Ասդարև բնութեան երէք հարստութիւնքն
ալ թոյն յառաջ կը բերեն. բայց բուսեղէնը
միւս երկուքէն աւելի թոյն կը գոյացնէ : Կեն-
դանական թոյներն երկու տեսակ են. մէկ մը
անոնք՝ որ գեղնոց կամ թունաւոր միջատաց մի-
ջոցաւ բնական կերպիւ կը կազմուին (5). և մէկ
մ'ալ անոնք՝ որ ախտէ մը յառաջ եկած են,
ինչպէս կատաղութիւն, ժանտամահն և այլն (6) :

Կենդանական ամենէն վտանգաւոր թոյներն
ժանեւոր օձերու (7) ցեղին մէջ կը գտնուին. այսպէս.

(1) Corrosifs . (2) Narcotiques . (3) Putréfiants ou septiques . (4) Քանկրենա օմմագ : (5) Venins . (6) Virus . (7) Serpent à crochet .

զանգակաւոր օձին թոյնը մի քանի վայրկենի մէջ
կ'սպաննէ . քարբին(1) թոյնը, անկից չատ նուազ
զօրաւոր ըլլալովը հանդերձ, ամեն տեսն բա-
ւական ծանր վտանգ կը պատճառէ՝ եթէ խած-
ուած տեղն անմիջապէս խարելու չըլլան :

Գալով բուսական ցեղին, ասոնցմէ սունկը,
մեկոնը (խաչխաչ), մելեխինդը, կաղանչանը,
հրանունկը, և խել մը այլ անհամար թունաւոր
տունկք՝ մահացու թունաւորութիւնք կը պատ-
ճառեն. դարձեալ չատ մը ծառեր և թուփեր
ինչպէս որ արդէն տեսանք, խիստ զօրաւոր թոյ-
ներ կը գոյացնեն, մանաւանդ յ'Ամերիկա :

Իսկ հանքային նիւթերէն առնուած ամե-
նէն սովորական թոյներն՝ զառիկի, պղնձի, ծար-
բաքարի (2), և կապարի դբսիաներն են :

Զառեկային թթուն (3) մեր օրերը թունաւո-
րողաց զործածած ամենէն սովորական թոյնն է,
որոց թիւն բարերաղդաբար քանի երթայ այն-
քան նուազելու վրայ է :

Ասդի Տարրալուծութիւնն մի քանի թոյներ
դատ է՝ նմանը չտեսնուած կերպիւ սաստիկ և
ազդու, և որոց համար կարի հատանական է
կարծել որ հիներն բնաւ չ'ճանչցան : Ասոնցմէ
ամենէն գլխաւորն կը համարուի Բրուսիական
կամ կապտաջրային թթուն (4) որ գրեթէ ակն-
թարթի մէջ մահ կը պատճառէ : Ասյս թոյնս ողջ-

(1) Էնկէրէկ երգանը : (2) Antimoin . (3) Acid arsénieux . (4) Cyanhydrique .

կուզաբեր վայրի կեռասենուց (1) կեղևին, դեղձենւոյ (2) ծաղկանց և կուտերուն կյլին. մէջ կը դանուի. իսկ արհեստագէտք երկաթի բրուսիաղէն (3) կը հանեն զայն։ Կապտաջրային թթուն ինչպես որ Կէյ-Լիւսաքի, Մաճէնդիի և այլ գիտնոց ըրած փորձերովն հաստատուած է, զարհուրելի արագութեամբ կը ներգործէ մարդկային կազմուածքեան վրայ. յիշեալ թթուէն բաւական է որ մի միայն մէկ կաթիլ մը՝ մեզաստաւոր թաղանթի մը, կամ մարմնոյն մերթենդծ մէկ կէտին վրայ գրուի, մի քանի երկվայրկենի մէջ չանթամահ կընէ զմարդ։ Մաճէնտի և Բուպերթ Տըրուան կաթիլ մը կապտաջրային թթուկաթեցուցել են շան մը լեզուին վրայ, և կենդանին երկու անգամ ուժով մը շնչառութիւն ընելէն ետքը, յանկարծ դադրին ընկել է, իբր թէ կայծակէ զարնուած ըլլար։ Դարձեալ այս թթուովս շաղուած հացի փորի դնափիներ իրենց քրայական գործարանին բակին մէջ նետել են, և զանոնք ուտելու համար եկող ձիաձռնիկներն՝ տակաւին դնափիկը կուշտնուանմէջ՝ ընկել մեռել են։

Ա. Ըդ՝ կա՞ն արդեօք յիրաւի դեղթափի բնական բաներ։ Անդրզայից, Թոռնեֆոր (4) Թոռնեպտան (5) դեղորէից վրայ գրուած հատորն յոյժ բազմաթիւ են. նախնիք կը պարծէին թէ իւրաքանչիւր թունի մէկ մէկ դեղթափ գտած են.

(1) Merisier à grappes. (2) Շեֆտալի։ (3) Prussiate de fer. (4) Alexipharmaque. (5) Alexitère.

բայց սակայն՝ այս ճարերս ուրիշ բան չեն, բայց եթէ հատաքածոյ մի առաւել կամ նուազ անմահասելի և անճառելի դեղապրոց, որոց ազդեցութիւնն երբէք կիրառութեամբ հաստատուած չէ։ Իսկ Պոնտոսի թագաւոր՝ անուանի Միհրդատայ վրայ գրուցուածին գալով, որ ի տղայութենէ թունից դեղմոփայ վարժուած ըլլալուն, մարմինը որ և է թունաւոր նիւթէ անվնասելի գարձուցել էր, այս բանս չատ տարակուսելի պէտք է համարիլ։ Կարելի է թէ Միհրդատայ մարմինն ընտանեցած ըլլար ինչ ինչ ժանգաբեր նիւթոց հետ, ինչպէս որ հիւանդի մը քիչ քիչ վարժեցնելով այնպիսի դեղեր կը խմցնեն, ոտոյմէ առաղջ մարդը անշուշտ պիտի թունաւորուէր. բայց ընդհանրապէս խօսելով, կարելի է վստահութեամբ պնդել որ՝ այնպիսի մաշիչ թոյներ կան, որոց դեմ սովորիլ չէ, ինչ ալ ըլլայ օգուտ չընէր, և որոց սոսկալի հետեւանքը անվրիպելի մահ մըն է։

Ա. պաթէն թունաւորութիւնն անխախտ հիմանց վրայ միայն այն օրն հաստատուեցաւ, երբ բժշկութիւնն կազմակերպական անդամալնութեամբ լուսաւորեալ, և բնալուծութեան օժանդակութեամբն զօտեպնդեալ, գինքը շուրջ պատող թանձր խաւարտուրքն ցնդեց վրայէն։ Մեր դարը, ի մասնաւորի, նշանաւոր եղաւ այս նիւթոյս վրայ եղած մանրազնին և լուրջ հետազօտութեամբք, և մեր (Գազդիոյ) բժշկական ճեմարանաց մէջ դասատուութեան պաշտօն վա-

բոլ բաղմաթիւ դիտունք՝ իրենց դիշերային ժամերն, իրենց ստացած ծանօթութիւնքն զոհել են Թունաւիտութեան վրայ դրուածներ յօրինելու, որք դիտութեան մէջ իբր մահարձանք, և մարդկութեան համար իբր բարեդործութիւն մը պիտի մնան։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՎՏԱՆԳԱԻՈՐ ԿԵՆԴԱՆԻՔՆ ՆՈՒԱՃԵԼՈՒ ԵՒ ՋԱՆՈՆՔ ԱՆՎՆԱՍ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԵԱՑ ԳԻՏՑԸ ԱՑԼ ԵՒ ԱՑԼ ԳԱՂՏՆԻ ՀՆԱՐՔՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ.

Ա.յն օրէն՝ որ մարդն նշմարեց թէ ինչ ինչ կենդանիներէն կրնար օգուտ քաղել, անմիջապէս ջանաց նուաճելու, ընտելացնելու և իր պատյոյ և մտահաճութեանցը գործածելու համար ամենէն յարմար միջոցներն փնտռելու եռեռ եղաւ։ Ա.յս միջոցներէն՝ թմբրեցուցիչ կերակուրք և ըմպելիք, քնէ զրկումն, երաժշտութիւնն, հոտերն և մանաւանդ աչաց մագնիսականութիւնը՝ որ երկիւղ և սոսկումն կ՚ազդէ, առաջին կարգը կը բռնեն։

Ա.պաքէն՝ այսհետէ այս վրայ հին ազգաց պատմութեանց մէջ նշանակեալ իրողութիւնքն՝ այնքան հրաշալեաց դրոշմն կը կրեն, որ այժմեանք չ՚են ուզած հաւատալ ընծայել անոնց և առասպելաց կարգը կը դասեն զայնս։ Ո.րփէոսի, Պանդիոնի, Լինոսի և այլ անուանի երաժըշտաց պատմութիւնն, որոց աստուածային նուագերգութիւնքն կէս վայրենի ժողովրդներն կը քաղաքակրթէին, և վայրի գազաններն կը հնազանդէին. — Բոլղայք կամ Թովիչք, Մարաք,

Ոչինչ կայ կամ հնձած ինչ, որ առանց վնասուելու ամենէն վտանգաւոր զեռուններուն ձեռուընդ մէջ կը խաղցնէին. — Մէնաք, որ վագրոց հետ կը խաղային. — Սպանդարամատական քրմանոյշք, որ Բաքոսի տօնին օրերը առիւծներ կը ծծէին երկնոց կաթով. բոլոր այս երեւութիւնքս, որոնք լի է հին ազգայ պատմութիւնն, ճարտար այլաբանութիւններ են արդեօք միայն: Արդարև սիրելի է մեզ սորա հակառակը կարծել, մեզ որ՝ այսօրուան օրս իսկ մարդոյս անասնոց վրայ յառաջ բերած հզօր ազդեցութիւնն մեր իսկ աչօքն կը տեսնեմք: Արդ, որպէս զի այս մասին որևէ անհատութիւն գաղբի, քննեմք թէ ինչ էին հնոց այս մասին ի դարձ դրած հնարքնին:

Առաքէն ոչ օք կը ժխտէ որ ինչ ինչ կենդանիք եկեսա զգայուն են երաժշտութեան. փորձն ամեն օր կը հաստատէ զայս. սրնդին քաղցրաձայն դեղդեղումն՝ մարդոյս ձեռքն նոր ընկած փիղը իր գերութիւնն կը մոռնայ, և զայն լսելովն զգացած հաճոյքը՝ ասրվագին ասիւնները կարտայայտէ: — Ծովահորթը, դրիւնը, նրա ժըշտութեան ձայն լսած նաւուն չուրջը կը ըզան, և ձայնին գագրելէն չատ ետքն ալ դեռ անոր եռևէն կերթան: — Անճառնի ձիագետին, ձառադեմ կոկորդիլոսը չէփորին ռազմական նշաձեռնն կը սիրեն, և գեռոյն ափունքը զարնուած թմբկաց եռևէն կերթան լողալով: —

Զին՝ ծնծղայից ձայնիւ կը գրգռի և յառաջ կը խոյանայ: — Եղկերուն՝ գալարափողոյն ձայնն ի հեռուստ առնելուն՝ յուզիալ կանգ կառնու և իրեն եռևէն պնդող բարակաց որս կըլլայ. — Սողեղը սրնդին ձայնը լաւ մը լսելու համար իւր նեղկուկ ծերպէն դուրս կելնէ: — Գրեթէ ամեն երգեցիկ թռչունք իրենց սովորեցուցած նուագներն կրկնելթելին կը ցուցանեն թէ ուրքան հաճոյք կը պատճառէ երենց երաժշտութիւնը: — Վերջապէս միջատներն իսկ անզգայ չեն այնմ. դաշնամուրին սրաձայն եղանակներն սորդնիւր ծակէն դուրս կը հանեն, և անշարժ կը կեցնեն զայն իւր ոտայնին վրայ: — Թիթեռի մը թըրթռումն, պղնձէ պուտնարաի մը ձայնը, գաղթական մեղուաց պարերն կը կասեցնեն և հոն տեղի առնելու կ'ստիպեն զանոնք: Լիսեգաս արկատացի հովուին համար կըսեն թէ՝ մերձավայրէն փախստական մեղուաց պարերն իւր երկնաւթեան չուրջը ժողովելու համար սոյն հնարքս կը գործածէր: — Սմեն անասնոց մէջէն չունը միայն նուագարանաց, մանաւանդ մեսաղեայ նուագարանաց հնչիւնէն ցաւագին զգացում մը կոնենայ. Սյս հնչիւնս այնքան սաստիկ կերպիւ ներգործութիւն կընէ իւր ղայց վրայ, որ ակամայ կամօք ողբագին ձայնիւ կ'սկսի ոռնալ: Ես պատեհութիւն ունեցայ չատ տարի չարունակ շուն մը դիտելու, որ երբ ժամացոյցը օրհասարակ կը զարնէր, իւր խշամէն դուրս կելնէր, և տարօրինակ կերպիւ մը կ'սկսէր ոռ-

նալ. մէն մի անգամ մարդը արուրին զարնելուն՝ այնպիսի ճիչ մը կարձակէր որ իրը թէ խաղաղանի ուժգին հարուած մը իջեցնէին իրեն։

Թմբրեցուցիչ դեղանիւթը խիստ յոդնաթիւն է, և իրենց ազդեցութիւնն ալ յոյժ բաղմազան է, ամենաթեթև քնէութենէ մը սկսեալ մինչև ամենախորին թմբրութիւնը։ Այս նիւթեր կենդանեաց կերակրոցն ու ըմպելեացը հետ խառնելով՝ դիւրին է ըմբռնել որ՝ անկից յառաջ գալիք թմբրութեան կամ ախչութեան վիճակէն օգտելով՝ պիտի կրնայ մարդ անվտանգ նոցա մօտենալ։

Նոյնպէս քաննէ կարելով է որ չատ ճիւղաւորմանք ամենէն խառնարան երիվարներն իսկ նուաճելու յաջողել են։ Նմանապէս հոտերը խիստ զգալի ազդեցութիւն մը ունին, որք իրենց տեսակին և տեղագանութեանն համեմատ աւելի կամ նուազ երկար ժամանակ հաստատ կը մընան։ — Շուներն ու կատուները՝ ոտիցը ներքև կամ մատանցը մէջ կատուախտոտ ճղնդղ մարդոյն հետէն կերթան, որոյ նողկացուցիչ հոտը իրենց հոտառելիքը կը գգուէ։ Ս. բառնադեայ մենեներն մօտ, յՕղիմպիա, պղնձէ զամբիւղ մը կայ՝ որ բոլոր մօտը եկող ձիերուն խիստ սաստիկ ցանկութիւն կ'ազդէր։ Եղիէն և Պատանիաս այս հրաշքին գաղանիքն ի վեր հանած են մեզ՝ պատմելով որ մենեներն քրմերն Հիպոմանէ (*) կ'ո-

(*) Hippomane.

ձէին պղինձը։ — Նմանօրինակ վարպետութեամբ մ'էր որ ցուլը՝ Մայրըն արձանագործին դլուխ գործոցը համարուած պղնձէ երինջին շուրջը կը համախմբէին։ — Գայլերն, աղուէսներն և այլ կենդանիներն դէպ ի իրենց ձգել ուզղորդը, շուներն դողնալու համար զանոնք մոլորեցնելը իրենց արհեստ մը ընող մարդիկ, մանաւոր հոտերով թաթաւեալ լաթ մը կը կրեն վրանին։ Հաւանականաբար այս եղանգաղանիքն ա՛յն ի դէպ նպատակաւորեալ մահացուաց, որք ամեհի առիւծներն և ամենէն ահռելի վագրերն իրենց եռանէն կը ձգէին։ — Քրիստոնէութեան առաջին դարուց նորահաւատներէն խիստ մեծ մաս մը կրկէսներուն մէջ ձգուելու դատապարտուեցաւ՝ վայրի գաղանաց կերը ըլլալու համար, և այս մարտիրոսացս չափերն հրաշիւք զերծ մնացին նոցա սովալուկ ժանիքէն. այլոց մէջէն ի մանաւորի Սբր. բուհին Դեկղի։ Ս. այս հրաշքիս բացատրութիւնը յոյժ նշանակուած է Թոդթ Դեկղեայ և Պօղոս Ո-ոթելոյ անուն գրքին մէջ։

«Եւ եղաւ որ երբ ամեն վանդաւոր գաղաններն Դեկղեայ վրայ արձակել էին, ներկայ դանուող կանայք՝ ոմանք նարդոս, ոմանք կակաւիրակ, այլք զանազան համեմներ, ուրիշներ ալ հոտաւետ իւղ նետեցին անոր վրայ, և գաղանները քնէ ծանրացածի պէս եղան, և Դեկղեայ ձեռս մը չը հասուցին»։

Գաղիէն կը հաւատայ թէ Կիւսահմայք քանի

քանի անգամ գիշակերը գաղաններէ պատռուելու դատապարտուիլ դժբաղդից կեանքն աղաւեցին։ Ասոր խօսքին նայելով, բաւական էր դատապարտելոյն մարմինը նեխելէ վերի ճարպով օծել. այս օծմանս գարշահոտութիւնն ամենեն սոսկալի գաղաններն իսկ հեռու կը վանէր անկից։ Նոյնպէս Տերտուղիանոս ձեռնածու մը կը յիշէ, որ մի ևնոյն հնարքով վայրի գաղանաց ատպարէզ կը կարդար, և առանց բնաւ անոնցմէ անհանգիստ ըլլալու մէջերնին կը պտտէր։ — Ֆերմոս Ասղեքսանդրացին Նեղոսի մէջ կը լողար՝ կոկորդիլոսաց խմբի մը մէջաեղ, որք իբր թէ ակնածելով իրեն մօտենալու չէին իշխեր և հեռուէն եռանէն կերթային։ Ասյս Ֆերմոսը Նեղոսին մէջ նետուելէ յառաջ՝ ժահրոյը խլդով մը ինքզինքը կ'օծէր, որոյ հոտէն կը փախչին կոկորդիլոսք։ — Մէքսիկացիք վրանին այնպիսի գարշահոտ ճարպ մը կը քսեն, որ գիշեր ատեն անտառաց մէջ արձակ համարձակ կրնան շրջիլ՝ առանց բնաւ գաղանաց և գեղնոց երեսէն վախ ունենալու, որք մօտենալնուն պէս կը ձգեն կը փախչին։ — Հերակլէսի լախտին հոտը՝ Ամիկղեի մէջ գիշեալ կիսատառածոյն նուիրեալ տաճարէն հեռու կը վանէր չունեցը։ Ասյս հրաշքս տան և չորս դար չաբաւնակ պատահելով՝ հաւանական է որ մեհենին սպասարկուներն ժամանակ ժամանակ արձանին վրայ քսած հոտերնին նորոգելու փոյթ կընէին, հոտ մը՝ որ մարդկանց հոտառութեանն անդգալի էր։

Դարձեալ՝ Թովիչք թունաւոր կենդանիներով ձեռնածութիւն կընէին, առանց բնաւ անոնցմէ խայթուելու։ Իգալիոյ Մարսք, Կիպրոսի Օձածինք որք յաւերժահարսե մը և վիշապէ մը սերեալ ըլլալ կը պարծէին, ամեն տեսակ օձից խածուածքէն անվնաս մնալու առանձնաշնորհն ունեցող տոհմեր կը կազմէին։ Ասրիստաւել և Պլինիոս խօսել մը ընդարմացուցիչ տունկեր նշանակած են, որք սաղանքն թմրեցնելու զօրութիւն ունէին, ինչպես օձասպան սպանդ (*), մեծ մոլեխինդ բոյսը, դաւինոյ խոզը կոչեն։ Ասյս առանձնաշնորհէս 'ի զատ՝ Թովիչք և Մարսք օձերու թագուն որջերն գտնելու, և անոնց խայթուածքը բժշկելու զօրութիւնն ալ ունէին։ Ասյսպիսի պարագայից մէջ խիստ հետաքրքիր ինքզինքնին նայել տալու կուգայինք իրենց, և խայթուած կամ խածուած անձանց չատերը բժշկուած ետ կը դառնային, միայն սա պայմանաւ որ այս դիպուածին վրայէն չատ ժամանակ անցած ըլլալու չ'էր։ Ասղեքսանդրի զօրավարներէն մին իժէ խածնուելով, Թովչի մը դիմաց և կատարեալապէս առողջացած ետ դարձաւ։ Անտոնինոս իմանալով որ Կղէոպատրա թագուհին քարրի մը խածնել տուել է ինքզինքն, զայն ազատելու համար փութոյ պնդութեամբ երեք Թովիչ յուզարկեց. բայց ատոնք բանը բանէն անցնելէն ետքը հասան. այն սեզ. և դուռղ թա-

(*) Aristoloche anguicide.

դուհին դոյզն ինչ յառաջ վերջին շունչը փչել էր։

Հօտառութեան միջոցաւ օձերը դանելու յատկութեան խիստ բարձր աստիճանը՝ Հնդկաց և Անդիլեան կղզեաց սեամորթից մէջ կը տեսնուի. բազմաթիւ ճանապարհորդք ականատես եղած են այս բանիս։ Ըստ սեամորթից, օձը՝ անախորժ, նողկալի, իրենց հօտառութեանն համար քաղցր ըզգալի, իսկ մերինին համար անըզգալի հոտ մը կը բուրէ։ Յեգիպտոս մարդիկ կան, որք մասնաւորապէս զեռուններն որսալը իրենց բան դործ ըրած են, և անոնց թաքչած տեղերին՝ չան՝ նապաստակին կամ կաքաւին հոտն առնելով նոցա թաքչած տեղը դանելէն ետքը յայտ կերպիւ կը դանեն, և այս արհեստս ժառանգական է իրենց տոհմին մէջ. իրենց աղայքն խիստ փոքր հասակնուն այս բանիս կը վարժուին, և ինչպէս առածը կըսէ, ցեղիւ որսորդ կը դառնան։ Ընդ այս ամենին զարմանալու չէ. վասն դի յայտնի է որ անդադար մարզեալ որ և է զգայարանք սարսափման զարդացում մը կ'առանայ։

Պրիւս և Մարշան ճանապարհորդները քննել հասկցել են որ՝ Հնդկաստանցիք և Եգիպտացիք օձից վնասուն դէմ ինքզինքին կը պահպանէին՝ տեսակ տեսակ խոտերու խարշաղոյ մը մէջ լողնալով, զորս ծածուկ կը պահեն, և որք հաւանականաբար թովչայ գործածածներուն մի և նոյնն կամ համանմանն են։

Դարձեալ՝ Սեամորթք և Ամերիկայի վայրենիք չատ առենէ՛ի վեր որ և է թունաւոր կեն-

դանիէ ինքզինքնին անխոցելի ընելու դաղտնիքն դիտեն։ Պ. Մաթիս անուանի պատկերահանը խոչիչիկ մը ծախու առաւ այս դաղտնիքս, և յանձն առաւ որ իւր վրայ կատարեն այն գործողութիւնը, որոյ համար ըսին թէ անհրաժեշտ հարկաւոր էր։ Տես ինչ ըրաւ խոչիչիկը. Պ. Մաթիսի մարմնոյն վրայ վեց տեղէ փոքրիկ դծեր ճեղքեց՝ երկուք ձեռքերէն, երկուք ոտքերէն և երկուք ալ կուրծքին երկու կողմէն. յետոյ Կոռաոյ ըսուած բուսոյ մը հիւթը ներմուծեց անոնց մէջ։ Նոյնպէս յիշեալ հիւթէն երկու դրդալ ալ կընել տուաւ իրեն, և խմացուաւ որ՝ եթէ իւր անվիրաւորելի ըլլալու յատկութիւնն միշտ պահել կուզէր, ամիսը հինդ վեց անդամ մի և նոյն քանակութեամբ առնելու էր յիշեալ հիւթէն. վերջապէս խոչիչիկը իւր գործողութիւնն լրացուց երկու Կոռաոյէ տերև տալով Պ. Մաթիսի, որ կուրծքին վրայ պահէ միշտ. վասն դի այս տունկս օձերը փախցնել կուտայ։ Այս այսպէս ըլլալէն վերջը՝ Պ. Մաթիս ինքզինքն բաւական ծանր կերպիւ թունաւոր օձի մը խածնել տուաւ, և բնաւ անհանդստութիւն մը չզգաց անկից։ Հետևեալ օրերն մի քանի անդամ սոյն փորձս կրկնեց, և հաստատ համոզուեցաւ որ իրօք անխոցելի դարձածէր։

Եթէ այս իրողութիւնս ստոյգ է, յիրաւի զարմանալի է որ բուսաբանութիւնն ու բժշկականութիւնն յիշեալ բուսոյն թունապահպան յատկութիւնն չեն նշանակած, և անոր գործածութիւնն չեն դուած ու տարածած։

Մնաց որ ամեն օձերն թունաւոր չ'են. ասոնցմէ կան այնպիսիք, որ չատ գիւրաւ կ'ընտելանան, և որք վերջապէս զմարդ սպրդակացընելու չափ ընտանի կը դառնան։ Գրեթէ բոլոր հեթանոսաց մեհենից մէջ քուրմք ահագին օձեր կը մեծցնէին, և տղէտ ժողովրդեան ահ ազդելու համար՝ նոցա մէջտեղ կը շրջապայէին։ Ի Թէբէ և ի Մեմփիս՝ օձերէն ի զատ, անհեթեթ մեծութեամբ կոկորդիլոսներ ալ կը դուցընէին, որք այնքան ընտանի եղած էին որ ըրբմաց ձեռաց մէջէն կերակուր կուտէին։ Ս.յս հսկայ կոկորդիլոսներն այլեայլ հնարքներով չլսաուելով, ամենևին անվնաս դարձած էին։ Ս.յսքա՝ Ոկղեայ որդին, երկար սաեն քովը պահեց վիթխարի օձ մը, որ չան մը պէս եռևէն կերթար։ Պաղամէոս Սրնգահարի (Aulètes) պահապան զօրքերն ահագին օձ մը բռնեցին, և բազմամ խնամքով ու յարատև աշխատութեամբ դառնկան մը նման հեզահամբոյր բրին զայն։ — Լ.էնկ հազարապետը կեդրոնական Ս.իրիկէի մէջ օձ մը տեսել է, որ իւր տիրոջը ձայնին հիանալի խաղեր կը խաղար. անոր բազկին, վզին չուրջը կը գալարեր. դնաի մը նման կը կծկէր. յետոյ սեղանատախտակի մը վրայ կը ցատքէր, կը կաքաւէր. ապա տիրոջը գլուխը կը նետուէր և զայն իւր քնքշանոցներովն շրջապատելով փաթթոց մը կը ձևացնէր։ — Հոլանտական Սիւյանայի մէջ սեամորթ կանայք կը գտնուին, որք ամենէն մեծ օձերն թուելու զօրութիւնն ունին.

և յիրաւի սոդուզը իրենց ձայնը լսելուն՝ պահուրտած ծառէն վար կիջնէ և կուգայ ոտքնուն առջև կը գալարի։ Բայց այս ամէնքս ալ հրաշալի բան մը չ'են երևիր այսօր. վասն զի գիտեմք մեք արդ որ օձերն կընտելանան, և կըրնան ծառայականութեան վարժուիլ։

Բայց իրօք գեղջուկ մը կա՞յ արդեօք խաբսանեաց թունին դէմ։ Ոմանք այո՛ կըսեն, ոմանք ոչ. իսկ աւելի խորհուն անձինքն չ'են համարձակիր վճիռ մը տալ, և կ'սպասեն որ գիտութիւնն և փորձառութիւնն օր մը այս կարևոր խնդրոյս լուծումն տան։ — Ս.ոսկիններն կըսեն թէ այս գեղջուկս Եգիպտոսի մեհենից մէջ պահուած գաղտնիքներէն մին էր. և սորա ապացոյց կը բերեն Ովիդիոս, որ խիստ վստահաւոր օձէ մը խայթուելով՝ գրեթէ հրաշիւք բժշկուեցաւ. և իւր սիրելի Եւթիդիկէին նման օրինակ խածուածքէ մը մեռնելուն պատճառը սա է որ՝ քերթողը այն միջոցին կնոջը քովը չ'էր որ գեղը անմիջապէս մատուցանէր իրեն։ Նոյնպէս Թովիչք, Օձածինք, և Մարսիկք առանց ամենափոքր վտանգի մը պատահելու՝ ամենէն թունաւոր սեռնոց խածնել կուտային ինքզինքնին, և Պլինիոսի, Ս.իլուտաւելայ և Սենեկայի բառածին նայելով, ինչպէս յառաջ ալ ըսինք, ամեն տեսակ թունաւոր խածուածքներ ու խայթուածքներ կատարելապէս կը բժշկէին։ — Նակ ոտքա ընդդիմախօսք պատասխան կուտան թէ՝ Թովիչք, Օձածինք, Մարսիկք, և այլ թունա-

ւոր վերայ բռաժիչք պարզապէս վարպետ ձեռնածուներ էին, որոց ի գործ դրած դաղտնի հնարքն էր՝ օձին թունաւոր փամփուշտը պարունակող խառոչաւոր ակռայն խլել, կամ հարկադրել զայն՝ որ կարծր մսոյ կտոր մը քանի մը անդամ խածնէ, որպէս զի այն փամփուշտը պարպուի։ Ա.յս այսպէս ըլլալով, սողունը վտանգաւոր ըլլալէ կը դադրէր, և ձեռնածուք կրնային ձեռքերնուն մէջ առնուլ զայն, և անպատուհաս ինքզինքնին խածնել տալ անոնց։

Սակայն հետագայ պատմական իրողութիւնն կը թուի հաստատել թէ՝ նախնիք վերոնոց թունին ընթացքն կանոնելու, և անոր ազդեցութիւնն չեզոքացնելու միջոց մը ունէին։ Հեղինակաշատ կայսրը ուղելով ստուգել թէ՝ Մարսիկք իրօ՞ք օձերն չմայելու և անոնց խածուածքն բժշկելու դաղտնիքը գիտէին, օր մը հրաման ըրաւ որ բոլոր այն սողուններն՝ որոց հետ ձեռնածուք կը խաղային՝ ժողովեն, և ապա կըրկէսին մէջ թող տալ առաւ զանոնք այն միջոցին՝ որ հաղարաւոր հանդիսատեսք խռնած էին անդ։ Բաղմաթիւ անձինք այս վերոնոց խածուածքէն մեռան, և մի միայն Մարսկաց ձեռօք դարմանուողք կրցին անխուսելի մահուանէ մը ազատիլ։

Հնդկաց և Զինացւոց մէջ կըսեն թէ՝ այս օրուան օրս իսկ մարդիկ կը դտնուին, որ ցուցնելու համար թէ իրենց դեղթափներն ունայնախօսութենէ անմտան են, ւժի մը խածնել կու-

տան զիրենք և ժամանակ մը կը թողուն որ թոյնը ներգործէ։ Երբ խածուած տեղը կ'ուռի և մանիշակագոյն կը դառնայ, այն ատեն դեղը վրան կը դնեն. անմիջապէս թունին արագընթաց ազդեցութիւնն կանգ կառնու, և քանի մը ժամ չանցած՝ կը տեսնես որ վէրքը իր նախնական վիճակին կը դառնայ։ Ա.յս իրողութեանս ականատես եղող պատմչաց և ճանապարհորդաց վկայութեանն հակառակ, չ'ենք համարձակիր կատարեալ վստահութիւն տալ այսմ. վասն զի սրդէն այնքան ազդեցութիւնը յառաջացած թունի մը դէմ մաքառելու դաղտնիքը՝ այնքան հրաշալի բանի մը կը նմանի, որ առանց քննութեան չէ մարթ ընդունել զայդ։ Սակայն և այնպէս կը խոստովանիմք որ այս բաժանմունքս անկարելի չ'են, և եթէ Աստուծոյ յաւակութիւնքն՝ որոց վրայ կանխաւ խօսեցանք, ստոյգ են, այս տունկս օձից խածուածքին դէմ ճշմարիտ դեղթափն ըլլալու է։

Կենդանիներն նուաճելու համար գործածուած հնարքներուն մէջէն՝ հայելւոյ գործութիւնն թերևս առաջին տեղը կը բռնէ։ Կարի հաւանական է որ այս միջոցս ծանօթ էր ի հնումն, և թէ քրմաց դասն այն դաղտնեաց կալը դրաւ զայն, որք իր իշխանութիւնն ամրացնելու կը ծառայէին։ Յաղթուած և մարդոյ կամացն հլու հնազանդ դարձած առիւծուց, վագրոց, և այլ մեծամեծ դաղանաց չատ մը օրինակներ նայուածքին ազդեցութիւնը կը

հաստատեն։ Մեծամերական փորձերէն՝ ի վեր է որ՝ Հայեցուածոյ Ֆիզիոլոգիական անունը առին այս հրաշալի զօրութեանս, և մեր դարը յաճախ առկանատես եղած է՝ իսկապէս գազան նուաճող ինչ ինչ անձանց գործած հրաշիցը, ինչպէս են Մոդրէնները, Վան Համպոլցիները, Ռոբէրները և այլք. մանաւանդ այս վերջինս, որ իւր կենդանեացը վրայ անհաւատալի կերպիւ ազդեցութիւն բանեցնելու յաջողեր էր. իւր մէկ ամենափոքր նշանին հնազանդիլ կ՚ստար գազանք, և մինչև իսկ կը զարնէր անոնց և չէին համարձակեր ընդվզիլ. այն քան մեծ էր իւր նոցա ազդած ահն ու երկիւղը։

Հայեցուածոյ այս մերթ անտանելի և ահաւոր, մերթ ալ և բարերար զօրութիւնն ալ ունէին և դանդի կախեալ է։ Այն լուսաւոր շառաւիղներն՝ (1) զորս առարկայ մը իւր վրայ յառեալ աչքին կը դրկէ, ամենքն ալ միանգամայն յիշելով գործարանին մէջ չեն մտներ. ցանցակերպը (2) մի միայն առարկային նկարմանն համար յարկ եղած շառաւիղներն կ՚ընդունի. իսկ մես շառաւիղներն ալ կարծրամաչկին վրայ չանդրադառնան՝ հատման անկեան (3) հատման անկեան մը ուղղութեամբ։ Այս անդրադարձութիւնէն յառաջ կուգայ լուսաւոր կամ մգնիսային շառաւիղն, որ կերպայ օտար աչքի մը դիմացի ազդեցութիւն մը կը պատճառէ։

(1) Faisceaux. (2) Sclerotique. (3) Angle d'incidence.

Կանաչորակ ցոլացմամբ կլորակ աչքերն՝ երկիւղ ու ահռելի ազդելու, և իրենց վրայ պչնուլ համարձակող աչքը խոնարհել տալու մասին ամենէն զօրաւորներն են։ Գաղիէրի աչքերն՝ երբ իւր վագրը դէմ զայրանար, թեթև վոսփորական լուսով մը կը վսպլեին, և վագրը անմիջապէս գետինը կը պառկէր իբրև թէ պատժէ մը վախնալու ըլլար։ Այս մասին ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրեմք մեր Գազանից և Մոգնիսականութեան անուն դրքին վրայ, ուր տեղ հայեցման մագնիսականութեան մեծ խնդրոյն վրայօք իւր ամեն արժան եղած մանրամասն պարագայիւքն ճառուած է։

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՐԱԲՈՒԽՍՏԻ Ի ՎԱՂՈՒՑ ԱՆՏԻ ՄԻՆՉԵՒ ՅԱՅՍՕՐ

ՀԱՏՈՒԱԾ Ա.

Զանազան դոյներով, այլ և այլ ձեւերով, պայթմամբ կամ առանց պայթման բորբոքող և ջրոյն մէջ վառող կրակները շինելու արհեստը ծանօթ էր նախնի ժողովրդոց։ Փոսփորը, զանազան հրակիրք (*), յունական հուրն, թնդանօթի վառօդոյն նման բազադրութիւն մը, և այլ բազմաթիւ հրային նիւթեր՝ Եգիպտական և Յունական խորհրդոց հաղորդութեան արարողութեանց մէջ կը գործածուէին, խորհրդապղեցից ևրևակայութիւնն յապաւշ կրթելու և քրմապետաց զօրութեան վրայօք մեծ գաղափար մը տալու համար անոնց։ Նաև պիտի տեսնեմք որ իբր յարձակման կամ պաշտպանութեան միջոց ալ գործածուեցան սոքա։

Փոսփոր մը՝ որ գիշերը կը փայլի. քար մը՝ որ բոցեր կարձակէ երբ ջուր սրսկես կամ թքես նէս վրան. կրակ մը՝ որ ջրոյն մէջ կը վառի.

(*) Pyrophores.

որոտման նման պայթուամ մը, և անկից յառաջ ալ լուսաւոր կայծակ մը. հրաբորբոք վիշապ մը, որ մեծ չափնգով օդոյն մէջէն կը ուրայ կանցնի, և իւր ճանապարհին վրայ հրեղէն անձրև մը կը թողու. այս ամէնս յապուշ պիտի կրթէր զանազանին, և երկիւղիւ կամ հիացմամբ պաշտելի զային։ Քրմայ կաճառքն, աստուածապահք այս զանազան գաղտնեաց, իրենց ահաւոր իշխանութիւնն հաստատելու և անոնք հիմանց վրայ խոնրհեցնելու կը գործածէին զայնս ճարտարութեամբ։

Ս. յայտէ՝ նախնին Զրադաշտ դիշերային հանդիսից մէջ՝ մէջքը բոցաճաճանչ գօտի մը բոլորած կը ներկայանար. և այս գօտւոյս բոցերն անոր դիպողին ձեռքին կը կառչէին, առանց այրելու զանոնք։ Եգիպտական հրաշագործք ևս իրենց մեհենից որմոցը վրայ տառեր կը գրէին, որք մթան մէջ կրակէ կը թուէին։ Հրէից գաղտնի աստուածութեան ծանօթ Բաբունեաց մէջ իբր սուրբ անուն հանած մարդիկ գլուխնին բոցեղէն նարօտ մը կապած՝ այնպէս կերևէին հրապարակի մէջ։ — Սիմոն մոգը դիշեր ատեն հրեղէն վերարկու մը հագած՝ աշտարակի մը ծայրը երևցաւ. օդոյն ամենափոքր մէկ շարժումն բոցերը կաւելցնէր ու կը սաստկացնէր. բայց ինքն ամենևին անհանգստութիւն մը չէր զգար, և ամբոխն ալ այս հրաշքէս վատահութիւն առած առտուած մը կը համարէր զինա։ Ս. յոբրուան օրս ո՞վ է որ այս օրինակներս տեսնելով՝ անոնց վոսփո-

բական հրոյ մը արդիւնքն ըլլալը չը հաւկընար։

Ս.պաքէն հաստատութեամբ ատուգուած է որ՝ նախնիք փոսփորը մարդոյ մէղքէն կը հանէին. և քիմիագէտն Պրանտ որ այս բանս ընելու հնարքը գտաւ, ո՛չ այլ ինչ ըրաւ, բայց եթէ հնոյ գործածած նշանակն, որ՝ ի բաղմից հետե գործած էր, վերահին երևան հանեց։ — Մեր օրը փոսփորը ասկից կը հանեն. բայց կրնայ նաև փոսփոր շինուիլ լուծեալ սոսայի վոսփորատան (1) լուծեալ կապարի քացախատի (2) հետ խառնելով, առաջինէն չորս մաս և երկրորդէն մէկ մաս համեմատութեամբ. ասկից նախ կապարի փոսփորատի մրուր (3) մը կը կազմուի, որ ըզտանան եռեքարկուելով մաքուր փոսփոր յառաջ կը բերէ։

Հնդկաստանի հրաշագործք քար մը կը շինէին, որ ձեռաց մէջ չփուելով կամ ոտքով կոտորուելով կրակ կառնուր։ Պատմիչաս տեսաւ որ մոգերն դեղնորակ մխիթով մը ծածկուած սեղանոյ մը վրայ փայտեր դրին, և իրենց աստուածներն յօդնութիւն կարդալնուն վրայ՝ փայտը հուր առաւ և խիստ պայծառ լոյս մը արձակելով վառեցաւ։ Ս.յս դեղնորակ մխիթս ատրակոյս չկոյրծծմրոյն փոսփորի խառնուրդ մ՚էր։

Վաղերսս Մաքսիմոս՝ վեհասեան կուսակրէն մեզի ըրածը կը պատմէ, որ նոսիրական հուրն

(1) Phosphate de soude. (2) Acétate de plomb. (3) Précipité.

թողած ըլլալով որ մարի, երբ այս բանիս համար մահուան դատապարտուելու վրայ էր, իր գօղն սեղանոյն վրայ տարածեց և կրակը յանկարծ նորէն արծարծեցաւ։ Կարի հաւանական է որ՝ տաք աճիւնին վրայ փոսփորի մը հատիկ նետուելն էր՝ մահուան պատժէն ինքզինքն ազատելու համար գործածած հնարքը,

Մաքսիմոս հրաշագործն ամբոխէն չըլլապատեալ ջէհկապէ յօդնութիւն կը կոչէր, և դիւցուհւոյն երկու ձեռացը մէջ դանուած չահերն յանկարծ կը վառէին։

Սկրիկանդայ քրմերն Սրամազդայ բադնոյն վրայ բարուենակներ կը դնէին, որք հրաման ըրածնուն պէս ինքնիրենց կը բռնկէին։ Եթէ պատմութեան մէջ նշանակեալ ամեն նմանօրինակ դէպքերն պատմել ուզելու ըլլամք, վերջը չ՚գար. բաւական է մեզ ըսել որ՝ առնօք այս հրաշք կարծուած բաներս այսօր բնագիտութեան զբօսեցուցիչ մասին խաղերն են։

ՀՐԱԿԸՆ ՎՐՈՅԹՔ։ — Հրակիրն՝ խոնաւօդ տեղեր երթալուն կամ ջրոյ մէջ մտնելուն ինքնիրեն բռնկելու յատկութիւն ունեցող բազադրութիւն մ՚էր, և անգամ մը բռնկելէ վերջը ալ չ՚էր մարեր. այլ մինչև որ բոլորովին ապառաժը, կը վառէր։ Շատ տեսակ հրակիրք կային, որոց գլխաւոր կազմիչ տարրերքն էին նաւթ, ռետին և կուպր, որք ճարպային իւղոյ հետ խառնուելով խմոր մը շինուած էին։ Ս.յս բազադրութիւնս՝ որուամ մինչև զարը Յունական Հռոմանուեան

տուել է, անոնց գաղտնիքն ուսեցողներուն նպատակին՝ ի գլուխ հանելու մասին լաւ նպատակ ունին։

Ա.յսպէս՝ Ասորեստանեայց կայսրութեան հիմնադիր Նինոսէն շատ յառաջ՝ Հնդիկք կրակ մը կը գործածէին որ ջուր չէ եւ կը ծարճատ, և Պաքոս անունը կուտային անոր։ «Հիմատիսի եղերքներն, կըսէ Մեհսիաս, հրաշալի լուղ մը կը ծնին, որ փայտակ կերտուածոց կամ պատշարեալ գրանց վրայ նետուելով՝ յանկարծ անշիջանելի հրով մը կը բորբոքէր զանոնք։ Ա.յս վերանգաւոր լուղէս որքան որ ծնին, պէտք եր թագաւորին յանձնէին. վասն զի անկէ՝ ի զատ և ոչ ոք իրաւունք ունէր անկից կաթիլ մը անդամ իւր քով պահելու։»

Դրապէս գիտցուած է արդէն որ Թեսաղիոյ քրմերն՝ Տրովադայ պաշարմանէն շատ ժամանակ յառաջ՝ գաղտնի դիտութիւններն յայդ կերպիւ կը մշակէին. վանորոյ դիւցազնական դարուց ամէն արտաքոյ կարգի և հրաշալի իրողութիւնք պէտք չէ առ հասարակ առասպել համարուին։ Կենդանոյս ըսուած անձանց մէջէն շատերը դիտութեանց և արուեստից ներհուն էին։ Քիրոն բժշկութեամբ կ'զբաղէր, Նեսոս բնաբանութեամբ, Հիպոլիտոս բնագիտութեամբ և այլն. — Հերակլէսի եղերական մահն, զոր բազում նոր հեղինակք առասպելական կը համարին, շատ կարելի է որ իրօք պատահած ըլլայ՝ ճիշդ այն հետեւող դարուց պատմութեան աւանդած կերպիւ։

պիսն։ Նեսոս, հակառակորդէ մը վրէժն առնելու համար, իւր պարեգօտն՝ օդոց քիչ բարձր ջերմութեան աստիճանաւ մը բռնկելու յատկութիւն ունեցող հրակրի մը մէջ թաթաւած կըլլայ. Դեյանիր ալ կը բերէ Հերակղեսի կ'զգեցնէ զայն, և այն վայրկենին՝ որ սա աստուածոյ յաշտ առնելու համար բազնոյն կը մտնայ, փայտակուտին տաքութենէն աղետաբեր պատմուճանը կը բռնկի։ Ա.յս լսելիչ, սպառիչ կերակը չիջուցանելու համար եղած ամէն ջանքերն, իրեն մատուցուած ամէն խնամքներն անօգուտ կըլլան. զգացած ցաւերն անտանելի են. զանոնք կարճելու համար՝ դիւցազնը ինքզինքն խարուկին մէջ կը նետէ, և բոցակէզ կը մեռնի։ Մեդէա զրեթէ նմանօրինակ հրակիր մը գործածեց՝ Կրէուսէի յղած հրաշեղջ զգեստն պատրաստելու առեն։ Ա.յն ինչ այն տարաբաղդ իշխանուհին բազնոյն մտնելէ էր, և ահա յանկարծ զգեստը կրակ առաւ, և բոցերն չիջուցանելու մտօք առաւօրէն վրան թափուած ջրերը բոցերն աւելի արծարծեցին,

Եղիա. իւր Բաաղու քրմաց հետ ըրած վիճին առեն՝ սեղան մը կանգնելով ոդյակէզը վրան դրաւ, և հրամայն ըրաւ որ ջուր թափեն փայտակուտին վրայ որ բռնկի։ Ջուրը դիպելուն պէս՝ ճարճատուածն մը լսուեցաւ. բոցերն եկան. փայտն ու ոդյակէզը այրեցան. և սուտ մարգարէներն, կըսեն, ամբիծահար մնացին։ Ցիշեալ փայտակուտին մէջ շատ հաւանական

է որ քոփափոճ կամ ոսկիոճ նման նիւթ մը պահուած էր, որք լուր տեսնելով կը բռնկին (1)։ — Սրդի բնալուծութիւնն այնպիսի փոսփորաղնդ նիւթեր (2) կը ճանչնայ, որք մի և նոյն բանը մի և նոյն կերպիւ կրնան ընել. անդամ մը որ բռնկին, ալ բան մը կարող չէ բնաւ անոնց դործած զարհուրելի աւերմանց դէմ դնել։ Քառէ-Կասկիւռ՝ վերոյդրեալ հրաշքին կարելի ըլլալն ապացուցութեամբ հաստատած է սա կերպիւ. սկզբանէն ներքև չմարած կիր տարածուած էր. վրան մղկաշոդի ծծմբոյ (3), կամ ծծմբոյ և մնկաղի քլորուաի (4) խառնրդոյ խառնը, և կամ վերջապէս այս ինչ քանակութեամբ փոսփոր դրուած էր։ Զը մարած կիրը՝ ջրով ողողուելով՝ փայտից ներքև պահուած հրային նիւթին բորբոքելու բաւական աստիճանի ջերմութիւն մը պատճառեց. յետոյ հուրը փայտերուն հաղորդեցաւ, որք ողջակիզին հետ միատեղ այրեցան։

Երբ Սղեքսանդր խորամանկ եղաւ այն երկիրներն, զրպս Գանդէս կ'ոռոգէ, իւր բանակին Հնդկաց արճակած հրաբորբոք նետերէն չատ նեղութիւն քաշեց։ Սյս կրակս ջրով չէր կարելի մարել. իւղը ընդ հակառակն կարծես առաջքը կառնուր անոր։

(1) Սյս բացատրութեանս հատանականութիւնն տարակուսելի կերևի մեզ։ Ծ. Թ.

(2) Phosphures. (3) Soufre sublimé. (4) Chlorate de potasse.

Նաբուրեան քրմերն ևս բազում տեսակ հրակիր չինել դիտէին, որոյ դէմ ջուրն ամենևին օգուտ չէր ըներ, և ամենայն յաջողութեամբ գործածեցին զայն՝ Նաբնիտ քաղաքը ազատելու համար, որ բարբարոսաց ձեռքն ընկնելու վրայ էր։ Պաշարողք այնքան զարհուրեցան այն կրակներէն՝ զրպս չէլին կրնար մարել, որ պաշարումն վերացին ու նա քաշուեցան։

Մեր թուականութեան 186 թուին առնեղը կը տեսնենք որ, ի Հռոմ, նոր խորհրդազղեաց կամ նորընծայ իրենց արարողութեանց և հանդիսից մէջ՝ ջրով անշիջանելի հրեղէն բազադրութիւն մը կը գործածեն։ Սոքա՝ ժողովրդեան հիացումը դրդռելու համար՝ յանհերին Տիբեր գետոյն մէջ կը մխէին առանց մարելու։ Բորգա քիմիափոխը (*) կը կարծէր թէ այն չանհերը՝ մեղրամոմի, քափուրի, նաւթի, ծծմբոյ և չմարած կրի խառնուրդէ չինուած բաղկացութիւն մ'էին։

Յետագայ երեք դարուց մէջ այլ ևս այս կրակներուս գործածութեան խօսքը չլսուեր. միայն եօթներորդ դարուն է որ՝ Հերուպօլոյ Կալինիկոս երկրաչափը հրանիւթ մը գտաւ՝ թերևս նախնի հրակրերէն ղերազոյն։ Սյս հրանիւթս՝ մեծ մաս անկապի հետ դոյզն ինչ պազնդի խառնուրդ մը՝ գործարանաւոր մարմնոյ մը հետ միատեղ այրելով կ'ստացուէր։ Բոլոնդ կամ Թատեղ այրելով կ'ստացուէր։

(*) Alchimiste.

տահերն Կոստանդիանոս այս հրակրեաս Սարա-
կինոսաց դէմ վարած մէկ նաւական պատե-
րազմին մէջ գործածեց. երեսուն հազար հոգի
մեռան անդ, և թշնամեաց ոտքին դրեթէ բո-
լորովին այրեցաւ: Կոստանդին Պորփիրոգենէդ
(ծիրանածին) կոչեր է իւր ձեռօք կը շիներ իւր
պատերազմական հրակրեն, և խոստիւ կը պա-
տուիրեր իւր որդւոյն որ լաւ զգոյշ կենայ, չըլլայ
թէ անոր բաղադրութեան եղանակն բարբարո-
սաց յայտնէ. վասն զի կայսրութեան փրկութիւնը
այն գաղտնիքին կախեալ էր:

Ալեքսիս և Մանուէլ Կոմնենոս Կոստանդնու-
պօլսոյ կայսրերն մեծ յաջողութեամբ այս կրակս
գործածեցին, առաջինը Բիզացւոց նաւատորմղին
դէմ, զոր հրդեհեց. իսկ երկրորդը Սիկիլիոյ
Ռոճէր թագաւորին դէմ, որ նմանապէս յաղ-
թուեցաւ:

Ա. հա միջին դարու այն ժամանակէն սկսելով
է որ՝ Իտալիոյ և Սիկիլիոյ ժողովուրդք, որք այս
կրակին ոսկալի զօրութիւնն փորձով տեսած էին,
Ջահնակ հուր (fuoco Greco) անունն սկսան տալ
անոր վտանգաւոր հրակիր ըսելու, և ա՛լ այս ան-
ուանակոչութիւնս տրուեցաւ որ և է բոցավառ
նիւթոց, զոր չուրը չէր կրնար մարել:

Ա. յաղդ. Կ. Պոլսեցւոյմէ տովրեցան յու-
նական հրոյն գաղտնիքն, և իրենք ալ գործա-
ձեցին զայն խաչակիրներուն ջնջելու, որոց անթիւ
անհամար զունդերն Սուլթանաց պետութիւնը
քանի քանի անգամ քիչ մնաց կործանէին:

Սրբոյն Լուդովիկոսի դժբաղդ խաչակրութեան
միջոցին, յունական հուրն քրիստոնէից մէջ մե-
ծամեծ աւերմունք գործեց: Ժոէնվիլի սենեշալը
կը պատմէ որ՝ բոլոր անկից այրողներն անգա-
մանելի կերպիւ կը մեռնէին:

Ա.յնուհետև Յունական հրոյն բաղադրու-
թիւնը անգամ մ՛ալ կորսուեցաւ, և շատ գա-
րեր շարունակ այնպէս մնաց մոռցուած՝ մինչև
մեր օրերը, որ Բիւճինէրի մեծանուն հրաշէնն (*)
վերստին գտաւ զայն և բաղադրութեան կերպն
ալ հրատարակեց որ է այս.

Ջորս մաս ազրորակ
Երկու մաս ծծումբ
Մէկ մաս նաւթ:

ամենքը լաւ մը միրար տոգորուած:

Բայց հրակրեռն ամենէն գերագոյնն տա-
րակոյս չկայ որ Բոքոխոն է, զոր Տէ՛վի Անգղ-
ացի բնաբոյծը գտաւ 1807 ին: Ա.յս մետաղիս
թթուածնին համար ունեցած տենչն այնքան տա-
ռափակ է, որ ջրոյ մէջ նետուած փոքրիկ կտոր մը՝
անմիջապէս կը տարբաղադրէ զայն և բորբոքելով
պայծառ լուսով մը կը վառի: Երբ բոյն սպա-
ռելու ըլլայ, փոքրիկ թթուածնի գնդակ մը կը
ձգեն որ շատ չանցնիր ճարճատելով անհետ կըլ-
լայ: Ա.յս գնդակս հալած անկազ (բոդաս) է:

Բոքոխոյ ծծմբոյ և ածխոյ հետ այլ և այլ

(*) Artificier.

բաղադրութիւններէն նաև խիստ լաւ հրակրեր կը չինուին, որք խոնաւ օդոյն կրակ կառնուն. որքան ևս առաւել երբ ջրոյ մէջ նետելու ըլլաս զանոնք։

Բաղմաթիւ պատմադիրք, ինչպէս Պլինիոս, Թէոփրաստ, Եղիշէն և Դիոսկորիդ մոգական արուեստաւ չինուած տեսակ մը քարերու խօսքն կընեն, որք վրանին ջուր սրսկուելովն կայծ արձակելու յատկութիւնն ունէին. ուրիշ քարեր ալ կային, որք ջուր տեսնելով կրակ կառնուին, և իւղոյ մէջ մխուելով կը մարէին։

Հին դարուց բաղմատեսակ հրանիւթ բաղադրութիւններէն հետևեալ երկուքն մինչև մեզ հասած են։

Պտուի իւղ	3	լիտրա
Հաւկթի իւղ	3	»
Ջ'մարած կիր թարմ	8	»

Այս նիւթերս լաւ մը իրարու հետ խառնելով չաւելչ, և երբ ղանդուած մը դառնալու ըլլան՝ հնոցի մը մէջ չորցնել տուր։ Արևն թէ այս չորցած ղանդուածը բռնկցնելու համար բաւական է միայն վրան ջուր թափիլ։

Ա. ԾԱԼ.

Ծծումբ և բորակ, չափով հաւասար.
Քարիւր և չմարած կիր, չափով հաւասար.
Աչելցուր քիչ մ'ալ փոշի դարձած բևեռքի խիժ *։

(*) Colophane.

Այն նիւթոցս վրայ եռացեալ ջուր սրսկելով մանրէ. յետոյ դիր այս խառնուրդս հալոցի մը մէջ, զոր լաւ մը մնձով պէտք է ծեփես։ Ջայս ընելէդ ետքը՝ հալոցը հնոցի մը մէջ մխէ, ուր ժամ մը թողլէդ վերջը հետ առ, ու բայց օդոյն թող որ պաղի. մէջը դանուած նիւթերն այրած և սև քար մը դարձած են, որոյ վրայ երբ ջուր սրսկելու ըլլաս՝ կայծեր կ'ելնեն։

Այս երկու օրինակներս մեզ այնպէս կը թուի թէ՝ մեծ համանմանութիւն մ'ունին այն դեղագրաց հետ, զորս բազմաթիւ անուանի քիմիագէտք, ինչպէս Վիէրիուս, Սպրիպպա, Բոդլեոս, Սլբերդ, Բորգա, Ռեյմոն-Լիւլ և Յալոպիոս թողած են։ Ըսալ կայ թէ ասոնք գաւազաններ ունէին, որոց ծայրի գունտը՝ որ իրենց բաղադրած մէկ քարէն չինուած էր՝ կապուտագոյն գոցեր կ'արձակէր, երբ թքնելու ըլլայիր վրան։ Մնաք այս վերջին պատմութեանս ճշմարտութեանը չեմք կընար երաշխաւորել։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ԹՆԴԱՆՕԹԻ ՎԱՌՕՂ։ — Մոդերն ոչ միայն փոսփորով և այլ պէսպէս հրանիւթներով կը դործէին իրենց հրաչքներն, ինչպէս որ քիչ մը յառաջ ըսինք, հապա նաև մեր թնդանօթի վառօդոյն նման հրային բաղադրութիւն մ'ալ ունէին, և Հերոդոտեայ ըսածին նայելով, ինչ ինչ

զոհագործութեանց մէջ՝ ողջակիզաց վրան դըրուած մանտրուք փայտերն բորբոքելու կը գործածէին զայն։ Ս. յս բաղադրութիւնս Զրադաշտէն յառաջ իսկ ծանօթ էր Հնդկաց։ Կաղբոյտ Օրինադիրքն՝ Հնդկաց երկրին բոլոր սահմանին մէջ՝ բացարձակապէս կարգելու վառոդից և հրթռիչնուց գործածութիւնը, և միայն բարբարոս թշնամեաց դէմ թոյլ կուտայ գործածել զայնս։ Ս. յս օրինադրքիս մէջ ձեզ ոչ ոք չդառնող հրաձիգնք՝ հոէ՞ր հոէի դառնող հրաձիգներէն ոչ ոքշուած են. որ ըսել է թէ մեր թնդանօթներուն և հրացաններուն համապատասխանող բաներ էին։ Վերջապէս Վնդայից (արբազան գիրք Հնդկաց) մեկնութեան մը մէջ՝ թնդանօթի վառոդին գիւտը Ներուատարմայի կամ արհեստագէտ-չաստուածն վերընծայուած է։

Փիլոսոփրատ՝ Հնդկաստանի Մոդուց վրայօք խօսելով կըսէ. «Երբ տեսանեն որ թշնամիք վրանին կը յարձակին, նոցա դէմ պատերազմելու համար իրենց պատանիներէն գուրս չ'ելնեը. հապա շանթ կարձակեն անոնց վրայ, և չուտ մը ի փախուստ կը դարձնեն զանոնք։ Բադոս և Հերակլէս, կը յաւելու, փոքրիկ միջնաբերդի մը վրայ յարձակելու փորձած ըլլալով, ուրտեղ ամրացել էին մոգերն, այնպէս չփոթեցան և վտանգեցան սոցա՝ իրենց վրայ արձակած կայծակներէն, որ եւս քաշուելու ստիպուեցան։»

Բաղմաթիւ ճանապարհորդք, որք Հնդկաստանի ամեն կողմն պտըտած ու քննած են, միա-

ձայն կը հաստատեն թէ՝ այն ընդարձակածաւալ երկրին ինչ ինչ կողմերն բորակը (*) և ծծումբը այնքան պուտ վիճակի մէջ կը գտնուին, որ թնդանօթի վառօդ կազմելու համար զանազան քիմիական այլ գործողութեան ենթարկելու հարկ չկայ։ Ս. ակից կրնամք մակաբերել որ Հնդկաստանի դիտունք դիւրաւ կրցել են աղբորակը, ծծումբը և ածխոյը յիրեար խառնուլ, և առաւել կամ նուազ ընտիր վառօդ մը կազմել։

Եղիպտացիք, որք երբեմն դիտութիւններն Մոդերէն առած էին, խորհրդադիտութեան դաղտնի խորհրդոց ժամանակ՝ հրանիւթ բաղադրութեանց միջոցաւ ճաճանչումն և տեսակ տեսակ պայթմամբք ընկերացնել ինքնաբեր բորբոքմունք յառաջ կը բերէին։ Յոյն խորհրդապետք այս դաղտնիքներս իրենց հայրենիքն առին տարբերն, և Գեղփեայ քահանաներն կը տեսնեմք որ անհուն օգուտ քաղեցին անկից՝ անոնցմով երկու արշաւանաց դէմ երկիրը պաշտպանելով. այն է Պարսից արշաւանքն և նախնի Գաղղիացւոց արշաւանքը։ Ըստ Պաւսանիասայ պատմութեան, զարհուրելի պայթմունք Գեղփեան լեռը դղրդեցուին. գետինն վհեր բացուեցան, ուսկից ծխոյ և բոցոյ մրրիկներ կ'ելնէին. պարեխքն արմատախիլ եղան, օդոյն մէջ նետուեցան, և քարէ կարկուտ դառնալով յարձակողաց վրայ տեղացին, որոց ամենքն դրեթէ առ հասարակ

(*) Nitrate de potasse.

ջանքերն ալ ապարդիւն եղան, խեղդուելու կամ այրելու։ Ա.պաքէն բաղում իմաստասէրք առարկած են թէ՝ Մովսէս թնդանօթի վառօդին բազադրութեանն ամպերէն էլեքտրականութիւնը քաշելու գաղտնիքն ունէր։ Սոքա իրենց կարծեաց՝ի հաստատութիւն՝ մէջ կը բերեն Ա.Հարանի որդւոյ յանկարծական մահը։ Ա.յս անխոհեմ երիտասարդ՝ չդիտնալով որ ժողովուրդն իրը սրբազան հաւր մը համարուած հրեղէն բազադրութիւնն Մովսէս միայն կրնար անպատուհաս կերպիւ գործածել, ուղեցին որ բուրվառին արծարծելու համար իրենք իրենց գլխոյն բորբոքին գային. բայց յանկարծ լուսավառ փոյլակ մը դայթեց անդանէն, և քահանայապետին որդիքն նոյնհետայն մեռեալ գետնին ընկան (*)։

Սամուէլ մի ևնոյն հնարքն գործածեց իւր վրայ յարձակելու եկող փղշտացիքն պայթմամբ կեցնելով. երկիրը նոյա տակից ներքև փեռեկեցաւ, բայց արձակեց, և դիրենք կլնեց։

Դաւթի և Սողոմոնի չիրմին պահապան քահանայք՝ յառաջուց պատրաստուած հրավառ բազադրութեան մը կրակ տուին, երբ Հերովդէս այն տեղ թագուն կարծուած դանձերն կողոպտելու մտաք հան իչնել ուղեց։ Կատարի բոց մը դուրս ժայթքեց անկից, և թագաւորին պահապան զօրքերէն երկուքն այրեցան։

(*) Ա.յս կէտերուս վրայ ևս չեմք կրնար հերինակին հաւանիլ գտնուիլ։ Ե. Թ.

Փլատիոս Յովնփոս պատմագրէն կ'լսանամք որ՝ Յուդայի թագաւորներէն մին՝ Ա.զարիա մեծ քահանայապետին աղտարարութեանցը հակառակ՝ քահանայական պաշտամունքին ստանձնել ուզելուն համար մահուամբ պատժուեցաւ։ Հապիւ յանդուգնը ձեռքը բուրվառին տարած էր, և ահա պռոտնան բուռն հարուած մը ճակտին կամարներն դղրդեց և ալեղանին վրայէն բոց մը ելնելով դինքը լափեց։

Երբ Յուլիանոս կայսրն՝ հրեական մարգարէութեանց հակառակ՝ Երուսաղիմայ տաճարն վերականգնել ուզեց, սաստիկ ճայթումներ տեղի ունեցան. գետինը տեղ տեղ ճեղքուեցաւ, նոր սկսած շինուածք կործանեցան, և վերատակաց մէջ տեղէն կրակ մը ելաւ, որ աշխատողներն այրելց կամ՝ի փախուստ դարձուց։

Վերոյիշեալ եղելութիւնքն կարգացողը դիւրաւ կրնայ մտաբերել որ ականատ պայթումներ էին անոնք, ճիշդ այն կերպիւ ինչպէս որ այսօր ալ կրնան թնդանօթի վառոդով։

Զինատանի մէջ նմանապէս վառօդի գործածութիւնը շատ հին է։ Ա.յս ընդարձակածաւալ կայսրութիւնս գնացող տեսնող քարողիչը ամէնքն միաբան կը հաստատեն թէ՝ Զինացիք անյիշատակ դարերէ՝ի վեր թնդանօթի վառօդ կը գործածեն հոյակապ արուեստական հուրերը (*) չինելու։ Երկրին դիտնոց պատմածին

(*) Feu d'artifice.

նայելով, վառօդը մագաղան արուեստիւ խիստ հմուտ եղող իրենց առաջին թագաւորներէն մին հնարած է։ Ամեն առեն Չինաց կայսերք ցոյց տալ ուզել ործածել են, որք տեսակ մը թնդանօթներ էին, և որոց ամեն մէկ կտորը՝ որ կառած էր երկաթէ էր, մի և նոյն մետալէն չինուած չըլլալնակօք իրարու յարմարցուած էին և կրնային քակտուիլ և վերստին կազմուիլ։ Ա.յս չանթաճիք կառքերս վառօդով և զանազան տեսակ ռմբերով լցուելով, խիստ մեծ հեռաւորութեամբ մահ կը ժայթքէին. և շատ հաւանական է որ ասոնք նախատիպար եղած ըլլան մեր արդի թնդանօթաց։ Չինական տարեգիրք կը պատմեն թէ՝ 3600 տարուան առեններէն, որ ըսել է մեր թուականէն հազարաւոր դարեր յառաջ, Ուիթ-Հէյ կայսրը չանթաճիք կառքեր վարեց Թաթարաց դէմ՝ որք պատերազմ բացած էին այն առեններէն իրեն դէմ, և այս թնդանօթացս չնորհիւ կատարեալ յաղթութիւն մը տարաւ։ Չինաց Բեկուի անունն ալ նմանօրինակ հնարքով մը եղաւ։

Պարձեալ՝ բազում պատմագիրք, յորոց շատերն արդէն յիշեցինք, թէ՝ մեր թուականէն յառաջ և թէ՝ մեր թուականին առաջին դարերուն մէջ՝ մեր թնդանօթի վառօդոյն այնքան նման հրավառ նիւթոյ մը վրայ խօսած են, որ անկարելի է չճանաչել զայն։ Ներվիոս և Վաղերիոս Փլաքկոս փաչոյ մը զարմանալի զօրութիւնն կը նկարագրեն, որ իւր յանկարծական

բորբոքմամբ զայծակ կը դողդոջ, և որոյ բուռն պայթումն որոտման ձայնին կը նմանէր։ Յուլիոս Ափրիկանոս, որ յերրորդ դարուն, իւր ժամանակը և իրմէ յառաջ յիշեալ չանթաճիք բազադրութիւնը ինչ եղանակաւ կազմելնին կը ներշանակէ։ Հինգերորդ դարուն՝ Պղոդիանոս բահատեղծական նկարագրութիւն մը կը յօրինէր այն հրաձագից և մանաւանդ այն դոշխոջ օբեհոնոյ վրայ, որով Ժողովուրդը կ'զբօսնէին մեծ ամեներու առեն։ Ակաթիասէն կ'իմանամք որ վեցերորդ դարուն՝ Կ. Պօլսոյ Սրբոյն Սոփիայ եկեղեցւոյն ճարտարապետը՝ Անթեմիոս Թրալղացին՝ Զենոն հռետորէն վրէժ հանելու համար, որոյ դէմ դանդատի պատճառներ ունէր, նորա տունն հրդեհով՝ կայծական նման արուեստագ և սոսկալի բոմբիւններ հանող կրակներով։ Իններորդ դարուն՝ Մարկոս Կրէօքոս իւր Հռոմ՝ ի այրել ընծայն անուն դրքին մէջ՝ վառօդին բազադրութեան կերպը կը նշանակէ, այսօրուան դործածուածին դրեթէ նմանօրինակ համեմատութեամբ։ Դարձեալ մետասաներորդ դարուն Սարակինոս և Ասորիք դործածեցին զայն խաչակրաց դէմ, ինչպէս որ յայտնի կ'երևի այն դարուց Արաբացի պատմագրաց գրածներէն, որք վառօդի հետքերու, ականներու, պայթուցիկ փամփուշտներու և օդաչու հրաձողերու (*) յիշատակութիւնն կընեն։

(*) Fusées.

Մրդ՝ այս ամենէն յայտնապէս կը հասկըցուի թէ՝ թնդանօթի վառօդին ծանօթութիւնն երկրագնդիս վրայ խիստ հին է, և թէ անոր գործածութիւնն Հնդկաստանէն կամ Չինաստանէն միւս ազգաց մէջ տարածուած ըլլալու է, կա՛մ Թաթարստանի միջոցաւ, և կամ Արաբացւոց ձեռօք, որք Հնդկաց, Ծովերուն վրայ վաճառականութիւն կընէին։ Հետաքրքիր վառօդի գիւտն, որ Ելարդ անուն գերմանացի վանականին կ'ընծայուի, ատոր իրաւութիւն մը չէ։ Յիշեալ ուղեգնաց վանականն՝ շատ հաւանական է որ Տաճկընկերէն և Արաբացւոցմէ ուսած ըլլայ այն բաղադրութիւնն. ուստի զանի վառօդին գործածութիւնն յետոյ նոյնմանծողն համարելու է միայն։

Վառօդին սկզբնական նիւթերն և կազմութեան եղանակը, ածխոյն և հատիկներուն պատրաստութեան մասին մի քանի բարւոքմունքն՝ի բաց առեալ, միշտ մի և նոյնն մնացած են։ Դաշտիոյ Ադդային ժողովոյն (1) ժամանակ փորձեցին որ ազբոթակի տեղ անկապի քլորատ (2) դործածեն. բայց Լաւուազիէի վառօդի չափագրին, ուր այս փորձս ընել ուզեցին, պայթմամբ օդը ելնելուն վրայ՝ այս եղանակս ետ ձգուեցաւ իբր կարի վտանգաւոր։ Ասկից զատ ուսումնասիրուեցաւ որ անկապի քլորատով կազմեալ վառօդն՝ շատ շուտով զէնքերն կ'ապականէր, և թէ այն պատ-

(1) Convention. (2) Chlorate de potasse.

ճառաւ ազեատաբեր դիպուածոց աղբիւր մը պիտի ըլլար։

Որակութեան և ուժոյն աստիճանին նայելով երեք տեսակ վառօդ կըլլայ. հետևեալ ցուցակը երեք նիւթոց համեմատական չափերն կը ցուցընէ։

Վ Ա Ռ Օ Դ Ք

	Պատերազմի	որսոյ	ականի
Ներքոյ ազոտաթթուի	75	78	65
Ծծումբ	12,5	10	20
Ածուխ	12,5	12	15

Վերոյդրեալ նիւթերն որ և է օտար նիւթերէ մաքրուած ըլլալու են։ Գարձեալ՝ ամեն ածուխ միօրինակ յարմար չէ այս բանիս. այլ որքան աւելի թեթև և դիւրաբաժան ըլլան, այնքան աւելի լաւ են։ Գաղղիոյ մէջ առաւելապէս գործածեալ ածուխքն կաղնւոյ, կաղամախի, իլենւոյ, և թուխ լաստենւոյ փայտէն եղածներն են։ Ածխոյն՝ բոզատի բորակութիւն և ծծմբոյ հետ խառնուիլն վառօդագործին արհեստին համեմատ ըլլալու է։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՊԱՅԹՈՒՑԻԿ ՎԱՌՕԴՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՄՊԱԿԱՎԱՌՕԴԻ ՎՐԱՅ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՊԱՅԹՈՒՑԻԿ (*)

Եթէ այն յառաջադիմութիւնն, զոր բնաւորութեան ընել կուգան մեր դարուն գիւտունք, մի և նոյն երագութեամբ շարունակելու ըլլայ, ներելի է դուշակել որ օր մը բնութեան ամենէն խորին գաղանիքներն ալ երևան պիտի գնեն։ Անհակառակելի է որ այս դիտութիւնս՝ հնոց թոզած վիճակէն յանկուն բարձր աստիճանի մը հասուցած է զերբարուեսան, և մէն մի օր այս տեսակ առաւել կամ նուազ վտանգաւոր նորանոր գիւտերով նշանաւոր կըլլայ։ Երբէք՝ սեղմեալ օդն, շոգին, քլորաւանդրն, պայթուցիկներն էին. այսօր բամպակի աղօդուան (բամպակավառօդ) է. վաղը թերևս երևքարանութիւնը ձեռօք գործածելի ընեն։

(*) Fulminates.

Ընդհանրապես պայթուցիկ վառօդ (1) անունը կուտան որևէ ալի, որ ընդհարմամբ, չբխմամբ կամ ջերմութեամբ կը պայթի։ Այս պայթուցիկ ազերս բաւական յոդնաթիւ են. մերթ մետալի մը՝ բորակային թթուտուի և դինուոյ հետ բաղադրութենէն յառաջ եկած են, ինչպես արծաթոյ, անդկի նյլն. պայթուցիկքն. և մերթ քլորային թթուտուին՝ այլ տարրեր մը հետ բաղադրութենէն յառաջ եկած կըլլան, ինչպես են բոզասի, անուշադրի նյլն. քլորուտներն . . . ։ Ուրիշ անդամ ալ հեղուկ անուշադրին՝ մետալի մը հետ բաղադրութեանն արդիւնքն են. ինչպես ոսկւոյ, արծաթոյ, լսանոսկւոյ նյլն. անուշադրուկներն (2)։ Վերջապես բնալուծութիւնն խել մը նմանօրինակ բաղադրութիւնք գիտէ, զոր յոյժ երկար կըլլայ մի առ մի թուել ասա. ուստի մի միայն ամենէն աւելի գործածականն եղող պայթուցիկներուն վրայ պիտի խօսիմք մեք։

ԱՐԾԱԹՈՑ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՇԻՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Այս պայթուցիկս չինելու համար երկայնաձիգ սրուակի մը մէջ 250 կրամ բորակային թթու և 30 աստիճանոց արծաթի դրամ մը կը դընեն։ Երբ արծաթն հալելու ըլլայ, յիշեալ հեղուկը 60 կրամ խիստ բարկ գինուոյ ոգիի մէջ

(1) Poudre fulminante. (2) Ammoniures.

կը ընուն, և այս խառնուրդս մաղմաղ կրակի վրայ կ'եռացնեն։ Քիչ մը առեն ետքը երևելէն չեռաց՝ հեղուկը կը պղտորի, և արծաթոյ պայթուցիկն կ'սկսի առ առակաւ յատակը նստիլ։ Ս.յն առեն ամանը կրակէն կը հանեն, և քիչ քիչ 60 կրամ պաղ ջինուոյ ոգի ևս կը յաւելուն վրան, մինչև որ երթալով եփը կորի։ Ս.յս խառնուրդս լաւ մը պաղելէն վերջը՝ թղթէ քամոցի մը վրայ կը ընուն ղայն, և արծաթոյ պայթուցիկը սպիտակ փոշւոյ ձևով մրուրի պէս անոր վրայ կը նստի։ Ս.հա այս փոշին է որ մեծ զգուշութեամբ կը չորցնեն, և բեռաններին լաւ մը դոցուած ապակեայ անօթոց մէջ կը ընուն, որպէս զի խոնաւութիւն չդիպի։

ՍՆԴԿԻ ՊԱՑԹՈՒՑԻԿԻՆ ԲԱՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ

Կարճավիզ ապակեայ դնոցոյ մը մէջ ներմուծէ՛

Սնդիկ	60 կրամ
Բորակային թթու (*) . .	36⁰ի 378 »

Յուշ յուշ տաքցու, մինչև որ հեղուկը ալ ոսկեփայլ գոլորշիները չ'արձակէ, և նարնջագոյն երանգ մը առնայ։ Տան և հինգ վայրկեան յետոյ

Գինեոյ ոգի 36⁰ի . . . . . 725 կրամ

պարունակող ուրիշ դնոցոյ մը մէջ լի՛ց ղայն։ Ս.պա անկէ խիցով մը լաւ մը փակէ՛ դնոցոյն

(*) Acide nitrique .

բերանը, և երեք ժամ չարունակ 30 աստիճանի ջերմութեամբ մը տաքցու։

Գործողութիւնը այն առեն կը վերջանայ, երբ ապակի դնոցոյն յատակն ա՛յլևս անդիի պայթուցիկ չ'նստիր։ Ս.յն ժամանակ քամոցի մը (¹) վրայ կը ընուն ղայն, և արծաթոյ պայթուցիկը ինչ կերպիւ որ չորցուցին, մի և նոյն կերպիւ կը չորցընեն ղայն։

Բաղխմամբ պայթող (²) վինուց խանձը արծաթոյ կամ անդիի պայթուցիկութիւնը կը չինուի։ Ս.յս մասին քաչ ձեռնհասութիւն ունեցող մարդոյ մը հաշուոյն համեմատ՝ Գաղղիոյ մէջ տարին եօթն հարիւր չիսուն միլիոն խանձ կը չինուի եղեր առանց այս հաշուոյն մէջ ըլլալու բանակին գործածած խանձից անհուն քանակութիւնն, որ մանաւանդ չահընկալութեան նիւթ է։ Պայթուցիկներու և խանձերու պատրաստութեանն գործածած բաղմաթիւ աշխատաւորաց մէջէն՝ առնուազն երկու երրորդին, չնչած ապականիչ կաղերնուն պատճառաւ, առողջութիւնն խանգարուած է։ Իրաց այս տխուր վիճակէս յուզեալ, Պ. Բերտոլ անոնք չինելու ուրիշ եղանակ մը գտաւ, որ այս ծանր անպատեհութիւնքս չ'ունի։ Իւր խօսքին նայելով՝ անդիի պայթուցիկին տեղ դոյղն ինչ բամպակի ազդուտ դնելու է, որ քանի մը հատիկ վառօդի հետ միա-

(¹) Filtre . (²) A percussion .

նալով գինքին կրակ կուտայ՝ ճիշդ ինչպէս սովորական խանձը։

Նոյնպէս արծաթոյ կամ մեդկի պայթուցիկումը է որ կը չինուին պղտիկ դուռնաերը, թըղթէ եղջիւրներն, և պայթուցիկ ըսուած շաքարեղէնները. բազադրութիւնք՝ որք միշտ վտանգաւոր են տղայոց ձեռքը։

ՊԱՅԹՈՒՑԻԿ ԱՐԾԱԹ

Պայթուցիկ արծաթն՝ արծաթոյ պայթուցիկի հետ, որոյ վրայ վերը խօսեցանք, չփոթելու չէ. զի ասոնք իրարմէ բոլորովին տարբեր աղերն են, Պայթուցիկ արծաթը շատ աւելի պայթունէ, ամենափոքր հպմամբ և երբեմն ալ ինքնիրեն կը պայթի. ուստի ասոր պատրաստութիւնն ալ շատ աւելի վտանգաւոր է քան թէ միւս պայթուցիկ նիւթոցն՝ որոց վրայ մինչև յարդ խօսեցանք։

Պայթուցիկ արծաթը հետեւեալ եղանակաւ կ'ստացուի։ — Նախ և յառաջ լուծեալ արծաթոյ բուլակաւոր մէջ լուծեալ անկաղ կամ աստոյ և կամ կիր լեցնելով արծաթոյ ոքսիդ կ'ստանայ. յետոյ հեղուկը մեղմով մէկ ամանէ միւսը կը պարպես մի քանի անգամ, և ինչ որ քամոցին վրայ նստի՝ արծաթոյ ոքսիդ է այն։ Զայս ընելէ վերջը՝ յիշեալ ոքսիտէն երկու կամ երեք հատիկ առնելով սկահակի մը կամ ժամացուցի ապակւոյ մը մէջ կը դնես. յետոյ կեղտոնացեալ

հեղուկ անուշադրով կը թրջես զայնս, մինչև որ հալելով խիւս դառնան, և ապա այս խառնուրդս կը թողուս որ բնական չոգիացմամբն ինքնիրեն ցամաքի։ Ա. յն ատեն երկար ճոպի մը ծայրը փետուր մը կը կապես, և այս փետրոյս մազմզուկներովն բաւական է որ ժամացուցի ապակւոյն յատակը նստած սևիակ փոշւոյն դիպչես, և ահա թնդանօթի արձակման նման սաստիկ բոմբիւն մ'արձակելով կը պայթի։ Ապակին չարդ ու բուրդ կըլլայ, և բեկորքն մինչև հեռուները կը ժայթքեն։

Ա.րդ, ինչպէս որ կը տեսնուի, պայթուցիկ արծաթը մինչդեռ տակաւին թաց է, այն ատեն կրնայ գործածուիլ. իսկ երբ անգամ մը չորնայ՝ ամենափոքր հպմամբ մը բուռն կերպիւ կը պայթի։ Եթէ պայթուցիկ արծաթն սրուակի մը մէջ պահելու ջանայ մեկը, կեանքն վտանգի մէջ կը դնէ։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՎԱՌՕԴԱԲԱՄՊԱԿ, ԿԱՄ ՊԱՑԹԱԲԱՄՊԱԿ ԿԱՄ ԱԶՈՏՈՒՏ ԲԱՄՊԱԿԻ (*)

Հաղիւ Եօհաննէս բժիշկը վառօդաբամպակ մը հնարած լլլալն կը հրատարակէր, որոյ գաղտնիքն ինքն իրեն կը վերապահէր, և ահա մեր

(*) Azotate de Coton.

(Գաղղիոյ) գիտնոց չատերն ղայն չինելու կերպը կը բացատրէին մեզ. վասն զի արդի ընալուծութեան օրով գաղտնիք ըսուած բան կարելի չէ որ ըլլայ. զի լուսն ինչ խարխափմունք բաւական կըլլան ի վեր հանել ղայն։ Ա.հատասիկ մէջ բերեմք ատ վառօդաբանական պատմութիւնն, որ եթէ Վերմանացի բժշկին այս նորահնար գիւտոյս մասին ունենալ պարծենցած առաջնութեանն միտս ալ չբերէ, դէթ նորա արժէքն տարօրինակ կերպիւ կը նուազեցնէ։

1833 ին, Պ. Պրագոննօ՝ Նանսիի բնալոյծն՝ բորակային թթուուտի մէջ նաչիհ և այլ դորձարանաւոր նիւթեր հալեցնելու միջոցին՝ խիտ սաստիկ այրուն նիւթ մը գտաւ, զոր «նիտրէն» (ազոտակերպ) անուանեց։

Անկից քանի մը տարի առեղի՝ նոյն գաղղիացի բազմագէտ բնալոյծ մը, Բըլուզ, Պ. Պրաքոննոյի փորձերն վերսկսին ձեռք առաւ, և թղթոյ թերթ մը՝ կեդրոնացեալ բորակային թթուի լուծման մը մէջ ընկղմելով՝ պայթական թուղթ մը յառաջ բերաւ, որ շուտ մը կը բորբոքէր և դիւրաւ ալ չէր թողուր։

«1838 ին հրաւառ թուղթ մը չինեցին, ըսաւ Պ. Բըլուզ վերջին Հոկտեմբեր 17 ին նստին մէջ, կեդրոնացեալ բորակային թթուուտի մէջ թաթաւելով վաճառականութեան մէջ պաղտնական (Բարիէ մինիսթըը) ըսուածէն թերթ մը. այս թուղթս խիտ դիւրաբորբոք նիւթոյ մը կազմութեանն ամենէն աւելի յարմար երևցած

ինձ։ Քանի վայրկեան ետքը այն թուղթը հանեցի բորակային թթուուտին մէջէն, և ջրով լաւ մը լուացէ յետոյ՝ մեղմ ջերմութեան մը դնելով չորցուցի ղայն։ Ա.ակից մէկ տասնորդական մը՝ տակէն լցուող բռնագնտակ (*) ատրճանակի մը մէջ մուծի, և քսան մեթր հեռաւորութեամբ՝ երկու տասանորդամեդր հաստութիւն ունեցող տախտակ մը ծակեց և գնտակը պատին ղարնելով տափակցաւ։

«Ետ առեն չկայ, Պ. Բըլեզի ազաչեցի որ այս աղոդային թուղթս այլ և այլ տեսակ պինուց միջոցաւ ալ փորձել տայ։ Ա.յս ճարտար գինագործիս կարծիքն այն է թէ՝ ատրճանակայ մէջ, որովք միայն մինչև ցարդ փորձ բրած է, աղոդային թուղթը հասարակ վառօդին տեղը կրնայ բռնել. այնպէս որ նետուածին ուղղութեան ամենևին վնաս մը չդայ այս փոփոխութենէս։

«Երբ մարդ միտքը բերէ թէ ինչ դիւրութեամբ ու արագութեամբ բնալուծութիւն ամենևին չդիտցող անձինք ալ կրնան թուղթը, բամպակը, կանեփը այլն. զերաւոր վառօդի մը փոխել, չկրնար չճանչնալ թէ Պ. Շոէնպէյնի գիւտն պատճառաւ երևան եկած խնդիրը քանի՛ ծանր է։»

Ա.յս յայտարարութիւնս բացայայտ է, և ընթերցողին մտքին մէջ գիւտին առաջնութեան

(*) A balle forcée.

խնդրոյն վրայ քնաւ տարակոյս չ'թողուր. սա-
կայն և այնպէս՝ մեր մեծանուն քիմիագէտը՝
Բըլուզ, լի այն համեստութեամբ որ ճշմարիտ
տաղանդոյն նշանագիրն է, քնաւ չ'ժխտեր թէ՝
Շօֆնպէֆյն ուսուցիչը վառօդաբամպակը գործա-
ծական ըրած ըլլալուն արժանիքը չ'ունենայ:

Պ. Օթթօ, ուսուցիչ տարրալուծութեան ի Պրունսվիք, Գաղղիոյ Կաճառին թուղթ գրելով իմաց տուաւ որ՝ Պ. Բըլուզի ըրած փորձերէն առաջնորդեալ՝ պայթուցիկ բամպակ մը գտած էր, որոյ արձակման զօրութիւնն ամենաընտիր թնդանօթի վառօդոյն արձակման զօրութենէն քնաւ վար չ'էր ըսար:

Վեց ցորենահատ վառօդաբամպակաւ լցեալ հրացանի գնտակները՝ յիսուն ոտք հեռու գըտնուած կաղնւոյ փայտը ծակելով երկու մատնաչափ մէջը մխեցան:

Քնօր ուսուցիչը, Լայբցիկի համալսարանին քնաւրուծական գործանոցին(*) պատրաստիչ, կը գրէ որ վառօդաբամպակի տասներկու ցորենահատով՝ իննսուն ոտք հեռուէն արձակուած հրացանի մը գնտակն՝ մին եղևնափայտէ և միւսը կաղնեփայտէ երկու հատ իրարու վրայ դրուած տախտակ ծակել անցել է, որոց իւրաքանչիւրն երկու մատ հաստութիւն ունի եղել:

Պարոնայք Մարթէն, Լուղէր, և Մորել ճարտարապետը նմանապէս յայտնել են վառօդա-

(*) Laborato're.

բամպակ չբռնելու, հաւանականապար Պ. Բըլուզի փորձերէն առաջնորդեալ: Պ. Մորել ճարտարապետը՝ Շօֆնպէֆյն ուսուցչէն դիւան առաջին անգամ հրատարակուածին պէս՝ պայթաբամպակի կազմութեանն համար իւր գտած կերպը դրավ պատերազմական պաշտօնէին ղրկեց, և նա ալ անմիջապէս հրաման ըրաւ որ՝ այս նորահնար վառօդիս գործածութեանը վրայօք փորձեր ըլլուին Նէկը զօրապետին վերատեսչութեանն ներքև, որպէս զի ստուգուի հասկցուի թէ՝ հրազինուց արձակողական զօրութեանը մասին իրօք առաւելութիւն մը կա՞յ վոխանակ սովորական վառօդի՝ բամպակավառօդ գործածելուն մէջ:

Հետևեալը համառօտ քաղուածն է այն փորձերուն, որք Բարիզու Վառօդից և Բորակաց կեդրոնական գործատան մէջ եղած են՝ վառօդաբամպակի կազմութեան լաւագոյն եղանակին, և անոր հրազինուց մէջ գործածուելուն վրայօք:

ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒՆ ԿԵՐՊԸ: — Առ գղուած բամպակ, բայց նայէ՛ որ իւր այրմանը արգելք եղող որևէ անմաքրութենէ աղատ ըլլայ, և հատասար չափով կեդրոնացեալ բորակային թթուտէ և ծծմբային թթուտէ կազմուած խառնրդոյ մը մէջ ընկղմէ զայն: Բամպակը լաւ մը ամեն կողմ դարձո՛ւ, այնպէս որ լաւ թրջուի: Երբ կատարելապէս թրջուել է, այսինքն տասը վայրկեան վերջը՝ բամպակը հա՛ռ, և անմիջապէս պաղ ջրով լուա՛. այս լուա-

ցումս անհրաժեշտ է բանպակին վրայէն աւելորդ թմրուտն առնել տանելու համար։ Յետոյ՝ եթէ անմիջապէս գործածել կուզես զայն, թեթեւ մը տաքցած երկաթէ թիթեղի վրայ, կամ եթէ կրնաս սպասել, խոնաւութիւն չդիպած տեղ մը սեղանոյ մը վրայ տիեզերով չորցնել տուր զայն, բայց զգուշանալու է որ թիթեղին ջերմութիւնն 30 աստիճանէն աւելի չըլլայ. վասն զի 30 էն 60 աստիճան ջերմութեամբ վառօդաբանպակը կրակ կառնու։

Իսկ հասկնալու համար թէ՝ արդեօ՞ք այս գործողութիւնս լաւ կերպիւ կատարուեր է բանպակն իւր ամեն պայթուցիկ զօրութիւնն սառցեր է, կաթ մը բանպակ կլորցնելով դընտակ մը չինէ, և պնակի մը վրայ դիր. ապա խարոյկ մը մօտեցուր անոր. եթէ հասարակ վառօդի նման չառաչմամբ պայթի, բայց առանց բնաւ օ՛չ ծուխ, օ՛չ մոխիր թողու՝ լաւ. իսկ եթէ ընդհակառակն ուշ բռնկելու ըլլայ, և մրուր թողու, նշան է թէ բօրակային և ծծմբային թթուտաց խառնուրդն բաւական զօրաւոր չէ, և կամ թէ լուացումին ատեկ եղած չէ. ուստի այս պարագային մէջ բանպակավառօդը հրացնուց համար անգործածելի է։ Հուսկ ուրեմն՝ եթէ մերկ ձեռացդ մէջ լաւ պատրաստուած վառօդաբանպակ բռնկցնելու ըլլաս, չուտ մը կը բորբոքի և անհետ կըլլայ, և ամենափոքր կիզում մը անդամ չես զգար։ Եթէ թնդանօթի վառօդի վրայ վառօդաբանպակ տարածելով կը-

րակ տալու ըլլան, առանց կրակը վառօդին հաղորդուելու՝ մի միայն վառօդաբանպակը կը բռնկի։

Բայց բօրակային թթուի մէջ թաթաւելով պայթուցիկ գարձած նիւթ՝ մի միայն բանպակը չէ։ Պարոնայք Բըլուզ, Ֆլանարէն, Պլէյ, Պօմպըրկ և այլ բազմաթիւ բնալոյծք կրկին և կրկին փորձով ստուգել են որ՝ լոթի կաուրանք, կանեփ, թուղթ, տաշիղ, փայտի սղոցածք և այլն. մի և նոյն կերպիւ բազադրուելով՝ բանպակին ստացած մի և նոյն պայթիչ զօրութիւնն կ՛ստանային. և թէ՝ հրաղինաց մէջ և թէ՝ հանքաց ու ականաց մէջ չահաւետ կերպիւ կրնային սովրական վառօդի տեղ գործածուիլ։

Ս.յս տեղ համառօտակի նշանակեմք բանպակավառօդի պատրաստութեան այլ և այլ ձևանակները։ — Ըստ Պ. Օթթոյի, բանպակը մի քանի անգամ բօրակային և ծծմբային թթուներու խառնուրդին մէջ ընկղմելու է։ — Պ. Քնօք կը պնդէ թէ՝ բանպակն տասն և հինգ կամ քսան վայրկեան յիշեալ թթուին մէջ թողելու է որ ինայ։ — Պ. Լուդէր՝ ընդհակառակն՝ կը պահանջէ որ միայն թաթաւելու չափ ժամանակ թթուին մէջ մնայ բանպակը, վախնալով որ չըլլայ թէ այրի և տարբաղադրի։ — Պ. Մորէլ, ինչպէս նաև Պ. Շոէնպէյն, իրենց գաղտնիքն պարաձայնած չ՛են։ Բայց Պ. Ֆլորէս-Տօմինք և Մընաը նշանաւոր երիտասարդ քիմիագիտաց ըրած փորձերն ապացուցինուր՝ ընկղման տեւո-

զութիւնն մեծ կարևորութիւն չ'ունէր, և բամպակի ապրդուտին զօրաւոր կամ տկար ըլլալու աստիճանին վրայ ազդեցութիւն մը չ'էր ըներ. այսու ամենայնիւ ամենէն լաւ կերպիւ պատրաստուած բամպակը՝ տառներկուքէն մինչև տառնեհինդ վայրկեան թթխուտին մէջ մնացած բամպակն է ևղել։

— Վ. Թուշոթեմպակա ոչնակեալ հրաշինոց և մբաց զբաղնեան ու ալեփոխնեանը վրայօ եղած փորձեր։ Թնդազնօթեաձիզ զօրաց հարիւրապետ Պ. Սիւզանի և Բարիզու Ա.զբորակաց զառարանին (1) մէջ դարձակալ Պ. Մէզիէռի ճօճանակաւոր հրացանաւ (2) ըրած փորձերն հետևեալքն են։

ՀՐԱՑԱՆԻՆ ՄԷՋ ԴՐՈՒԱԾ ԲԱՄՊԱԿԻՆ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

		Արագութիւն	
1	Կրամ քանակութեամբ	180 մէթ.	960
2	» »	213	970
3	» »	383	831
4	» »	463	304
5	» »	518	393

Ա.ակեց 'ի զատ, պատերազմական վառօդի և պայթաբամպակի արձակման զօրութեանց բաղդատութենէն հաստատուած է որ՝ այս վերջինէս հինգ կրամով հրացանին դնտակը այնքան ու-

(1) Raffinerie. (2) Fusil-Peudule.

ժով կընետուի, որքան ուժով որ կը նետուի տասն և չորս կրամ հասարակ վառօդով նետուած դնտակը։

Պայթաբամպակաւ լեցուալ հրացինոց պայթումն կարի սասփիկ է. բայց հանած ձայնը՝ պատերազմական վառօդին հանած ձայնէն բոլորովին տարբեր, և ականջաց համար անկէ չատ նուազ հոգնեցնող չոր հարուած մըն է։ Բոլոր բամպակը կը վառի հրացանափողին մէջ, և բնաւ ծխոյ կամ աղտի հետք չ'թողուր։ Ձէնքին ծայրը միայն խիստ կարճ բոց մը կընշմարուի, և դնտաձգական զօրութիւնն ալ սովորական վառօդինէն չատ աւելի մեծ է։ Պայթմանէն ետքն ալ այրած փետրոյ հոտի նման հոտ մը կուգայ։ Դարձեալ թէև բամպակին այրումն ղէնքը չ'աղտոտեր, սակայն անոր փոխարէն՝ բաւական մեծ քանակութեամբ խտացեալ ջրոյ շոգի կը թողուի. ուստի հարկ կըլլայ որ ամեն մէկ հարուածէ վերջը՝ հրացանին փողոյն մէջ լաթ մը ներմուծելով չորցնեն զայն։ Ա.յս զգուշութիւնս եթէ զանց առնուի, երբեք չորս հարուածէ ետքը բամպակը խոնաւութենէ կը թրչի, և հինգերորդ հարուածոյն խիստ անկատար կերպիւ կրակ կառնուի. այն ատեն իւր դնտաձգական զօրութիւնն ալ գրեթէ ոչինչ կըլլայ։

Ա.յսպէս՝ եթէ մէկ կողմանէ վառօդաբամպակն՝ խիստ արագ, առանց մրուրի, առանց ծխոյ, և առանց որ և է դարշահոտութեան այրման առաւելութիւնն ունի, եթէ թեթև-

ւսթեան, և փոխադրութեան մասին դիւրութեան, և արձակողական զօրութեան կոչմանէ իրական առաւելութիւններ ունի, միւս կողմանէ ալ ամենափոքր խոնաւութենէ ապականելու, և հրացանափողին մէջ աւելի քան չափ չորի դոյացնելու անպատեհութիւն ունի, մինչ մի քանի հարուածներէ վերջը այլեւս արձակումն անկարելի կըլլայ:

Սպաքէն անտարակուսելի է որ՝ շատ չ'անցած այս անպատեհութիւնս բառնալու միջոցներն պիտի գտնուին. և եթէ այս մասին եղած առաջին փորձերէն տեղուած յաջողութեանն վրայ դառնալու ըլլամք, դիւրին է դուշակել այն խիստ մեծաւոր ժամանակակէտն, ուր վառօդաբաւ պակը կատարելագործուելով՝ առաւել արդիւնաւոր կերպիւ պատերազմի վառօդին տեղ պիտի անցնի:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԵԼԵՒՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԱԽՆԵԱՑ ՄԷՋ

Պղէմոնի դիւթական պատգամներն, և Պրաեղօսի Քաղդէական պատգամներն ամպերէն ելեւմտականութիւնը գաղելու արհեստին վրայօք այնպէս մը կը խօսին, որ երբեմն Հնդկաստանի և Քաղդէացոց մէջ անյիշատակ ժամանակայ հետէ զործածուած արհեստ մը եղած ըլլայ այն:

Ելեւմտականութիւնն այն հնարքներէն մին էր, զորս Ի զործ դրաւ Զրադաշտ՝ իւր աստուածային առաքելութիւնը ապացուցանելու համար: Այս հնարքս անշուշտ Հնդկաստանի դիտուն, ներէն ուսած էր, որք այնքան ներհուն էին թագուն դիտութեանց: Այս իմաստուն օրէնսդրիս ընծայեալ քերմուածոց մէջէն՝ զորս Պղէմոն պահպանելով մեզ աւանդած է, հետեւեալ պարբերութիւնը կը գտնուի, յորում Աստուած խորհրդապիտին կը խօսի:

«Եթէ դիս բազում անգամ յօդնութիւն կարդալս ըլլաս, ամենուրեք չսերմդ պիտի տեսանես դիս. վան դի այլ ինչ չ'պիտի տեսնես, բայց եթէ համօրէն կայծակին, այսինքն է հուրն թռուցիկ, որ ամեն տեղ կը տարածէ, և երկնից անհունութիւնն կը բորբոքէ:»

Այս հատուածս ընաւ տարակոյս չ'թողուր թէ ինչ տեսակ հրոյ վրայ է խօսքն. յայտնի է թէ ելեւմտականութիւնն է այն:

Սուիտաս և Աղեքսանդրիոյ ժամանակագիրք բացորոշապէս կըսեն թէ՝ Զրադաշտ, Նինոսէն դերի բռնուելու կէտին, աղաչեց աստուծոյ որ ինքն չանթահար ընէն. և թէ՝ ինքնակալութեան իր բարեկամաց, կայծակ ընկաւ ամպէ մը, և ինքն յաճիւն դարձուց: Իր աշակերտքն երկիւղածութեամբ ամփոփեցին այս աճիւններս, և Պարսկաստան փոխադրեցին, որպէս զի իրը մարգարէին իրը աստուածոյ ընտրեալ անձին աճիւնները պաշտուին: Այն ժամանակէն հետէ մնդերն, կըսէ Ամմիանոս Մարկելինոս, միշտ իրենց սեղանոյն վրայ կը պահեն՝ իրենց վարդապետին ձայնիւն երկնքէն իջած կրակը:»

ՍԱՂՄՈՆԷ, Եղիսէոյ Թագաւորը, արդիւնաւէտ կերպիւ քնական մտքութեամբ զբաղեցաւ: Եւսեբիոս յայտնապէս կըզրուցէ որ՝ այս իշխանս՝ կայծակը ուզածին պէս գործածելու, զայն ուղղելու, և որոմանն դառնանն նման դառնալ բերելու գաղտնիքն գտել էր: Ողիմպիոյ մէջ Շանթառաքն Զևսոպոյ նուիրեալ բագին մը կանգնած էր, և այն բաղնոյն վրայ դրուած կրակը՝ ամպերէն քաշած կայծակովը կը բռնկցնէր: Բայց անխոհեմութիւն մը Սաղմոնէի հրաշից վերջ առաւ. օր մը սովորաբար՝ ի գործ դրած գործուածքներէն մին զանց ըրած ըլլալով, այս գործքաղդ իշխանս իր արուեստին զոհ եղաւ, և չանթահար մեռաւ:

Սպաքէն՝ կարի հաւանական է որ այն վաղեմի առասպելն թէ՝ Պրոմէթէս կրակ գողցել է երկնքէն, կը նշանակէ թէ՝ այս անուանի մարդոյն մին կայծակը ի կիր արկանելու գաղտնիքը գիտցեր է: Վերգիլիոս կը պատմէ թէ՝ Պրոմէթէս երկնից կրակը յերկիր իջուցանելու արհեստն գտաւ, և մարդկանց ուսոյց զայն:

Աղգաոս, առաջին Լատին թագաւորներէն մին, զինքն աստուծոյ տեղ դնել կուտար. վասն զի իր չորս կողմն չանթք և որոտմունք յառաջ բերելու արհեստը գիտէր: Բայց օր մը, որ ամպէ մը ելեքտրականութիւն ձգելու միջոցին միտքն այլուր զբաղած էր, յանկարծ մեռաւ գետինն ընկաւ: Իր թշնամիքն անմիջապէս հրատարակեցին թէ՝ դիք Աղգանտոսի ամբարշտութեանն վրայ սրտմտած՝ կայծակնահար ըրել էին զայն:

Մի քանի պատմաբանից խօսքին նայելով, Նումա՝ կայծական ճեաստուց առաջքն առնելու համար, որ յաճախ կ'ընկնէր Հռովմայ շէնքերուն վրայ, չանթարգելն հնարեց: Այժմէն յառաջ Ս. Բամազդայ մեհենին վրայ հատ մը կանգնեցին անկից. ասկէց ելած է Ս. Բոմպէ Եղիսանունը, որ ըսել է ելեքտրականութիւնը ամպերէն քարշող և վար իջուցանող:

ՏՈՒԼՂՈՍ ՈՍՏԻԼԻՈՍ՝ Նումայի թողուցած յիշատակարբերն աչքէ անցնելով՝ իր նախորդին՝ կայծակն ուղղելու մասին գործածած միջոցներուն վրայօք կարևոր տեղեկութիւններ գտաւ հոն, և ի գործ դրաւ զայնս. բայց Տուլղոս նուազքան զՆումա վորձառու ըլլալուն՝ այսպիսի պա-

բազայի մէջ անհրաժեշտ եղող ինչ ինչ զգուշութիւնները ընելն մոռցաւ, և Սաղմոնեայ հանդոյն, կայծակնահար մեռաւ։ (Անցեալ դարուն՝ Բէյլման բնագիտութեան դասատուն մի և նոյն բազդին մահնակից եղաւ։)

Տիոն Կասիոսի բսածին նայելով, Կալիգուլա՝ Բազդեացի կիւսահմայէ մը ելեքտրականութեան հրամայելու դաղանիքը գնեց։ Բնական վայելքաց դէմ արուեստական վայելկներ կը հանէը, և այնպէս որոտման ձայնին ճիշդ նմանն կընէը՝ որ մարդ կը խաբուէը։

Պ. Լապօֆսիէը, 1822 ին հրատարակեալ համալից Յիշատակարդի մը մէջ, համոզիչ կերպիւ կ'ապացուցանէ որ՝ ամպերէն կայծակը քաշելու և զայն ուղղելու դաղանիքն ծանօթ էր հնոց։

Տակն և հինգ դար շարունակ պատմութիւնը լուռ կը կենայ այս խնդրոյն վրայ. բայց ժէ. դարուն չ. Խմբէրտի կը գրէ որ՝ Տուինոյի դղեկին մէջ վոլթօրկի ժամանակ կայծակը բռնելու հին սովորոյթ մը կար։ Պարեկապանը իւր դեղարդին սայրը պահի մը վրայ կանգնեալ երկաթէ ձողի մը կը հպէը, և այն հպման միջոցին կայծ մը ցայտելն տեսնելուն պէս՝ վտանգի զանգակը կը զարնէը, որպէս զի հովիւներն ու գործաւորք իմանան, և դղեկին զառիվայրերէն ձգուն հեռանան։

Սյն երկաթէ ձողը ուրիշ բան չէր, բայց եթէ չանթարդել մը. իսկ չանթարդել մը կատուցանելու համար՝ ելեքտրական հեղանիթին վրայ տեղեկութիւնք ունեցած ըլլալու էր։

Սրդ՝ վերը յիշած բացայայտ իրողութիւններէս սա եղրակացութիւնը կ'ելնէ.

Հիներն ելեքտրականութիւնն ի՞նչ է, և զայն ուղղելու միջոցներն օ՞րք են, պիտցան. բայց այս գիտութիւնս տեսութեան մը (*) ձև առած չէր, և այսօրուան պէս բնագիտութեան մէկ կարևոր մասը չէր կազմեր. այլ՝ այնքան ուրիշ դաղտնեաց նման՝ դաղտնիք մ'էր այս ալ քրմաց մէջ թաղուն ճեացած, որք պէտք եղած առեն կը գործածէին զայն։

(*) Théorie.

ԳԼՈՒԽ ԻԵ·

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՐՄՊԵԼԻՔ, ՍԻՐԱՐԾԱՐԾ ՕՇԱՐԱԿՔ, ՋԻՍՄՈԼՔ (1), ԲԺԺԱՆՔ(2), ՅՈՒՈՒԹՔ (3)։

ՀԱՏՈՒԱԾ Ա·

ՍԻՐԱՐԾԱՐԾ ՕՇԱՐԱԿՔ (1)

Սիրարծարծ օշարակ՝ սեռակ մը բաղադրութեանց կըսուէը, զորս հին ատենը յաճախ կը գործածէին մարդիկ՝ անտարբեր անձի մը սէրն առ ինքեանս ձգելու, և կամ իսկ և իսկ ինքզինքին սիրոյ գրգռելու նպատակաւ։ Ա.յս գըրգռիչ, և բաղմիցս իսկ թունաւորիչ բաղադրութիւնքս՝ որք մարմնոյ գործարաններն կը բորբոքէին, և մարդկային կազմութեան մէջ մեծամեծ յուզմունք կը պատճառէին, այլանդակ խառնուրդ մ'էին առաւել կամ նուազ պըճ-

(1) Ջիամալ (Hippomane) կըսէին հին ատենը այն հիւթին՝ որ գամբկին ծննդական գործարանէն կը վազէ երբ գրգռեալ վիճակի մէջ գտնուելու ըլլայ· ասի խնամ զօրաւոր սիրոգիտեան դեղ համարուած էր· նաև տեսակ մը թունաւոր տունկ ալ կը նշանակէ։ Ծ. Թ.

(2) Թըլըսըմ։ (3) Համայիլ· Նիւսխ։ (4) Philtre.

պալինելթոց, ինչպէս են վավաշոտ կենդանեաց կղկղանքն ու մէզը, նոխազին մանրեալ ղղիւրը և ազատնոյ ծիրտը, արջնագորտին սերմը, զեռնոց և ինչ ինչ ձկանց լեղին, ըղընգայ, ձարխոյ կտրատուքներ և այլն։ Սիրարծարծ օշարակն աւելի ազդու ընելու համար մանրագործ, կաղանձանան, անդժատի (1), և այլ պժգալի տունկերու հիւթեր ալ կաւելցնէին վրան։ Մուշկը, յամպարը, կղբուն, ոսկեբորակը ևս այս բաղադրութեան կազմիչ մասունքներէն էին. վերջապէս վոսուսայից կամ լուսատատանց, սեաւ բոստատոյ՝ (2) որք վոսիոր կը պարունակեն, և կոյադնդռի (3) փոչին, զոր առնուշն անպատիժ չ'ՃՃար, գործածէցին։

Ա.պաքէն՝ հին ազգայ պատմութիւնն լի է այս ափրոդիտեան բաղադրութեանց պատճառած աղետաբեր հետևանաց բազմաթիւ օրինակօք։ Հեշտասէրն Լուկուլլոս, որ իւր յափրացեալ ղղայարանքներն գրգռելու համար ամեն միջոց կը գործածէր, իւր աղախնոյն՝ Լեսպիենայի մատուցած սիրարծարծ օշարակին մէջ ցաւալից մահ մը միայն գտաւ։ — Լուբրեցիա բանտարկեալն ճիշդ ու ճիշդ թունաւորեցաւ այն սիրոյ օշարակներէն, զորս յանդէաս՝ ըմպել կուտար իրեն իւր Լուգիլիա անուն սիրուհին։ — Կալիգուլային ամօթալից կաղուցքին և արիւ-

(1) Շէյթան պօղու։ (2) Scarabée. (3) Գանտազ պէօճէյի.

նարբոս մըրդնութեանցը պատճառ՝ կոչտութիւնն իրեն մատուցած չերմաչերմ ըմպելիքներն կը համարուին։

Ֆոսդին, Մարկոս-Աւրելիոս կայսեր կինը, սուսերամարտի մը այնքան բուռն տարփանօք սիրահարեցաւ, մինչ որ չէր կրնար այն դերին հրաժարիլ, և երբ իրմէ հեռացնելու ըլլային զայն՝ երկիւղալի թագուհութեան մը մէջ կ'ընկնէր։ Կայսրը այս ամբիծ առփանացս իրաւունք ըլլալ՝ շատ մը աստեղագէտներ և բժիշկներ ժողովեց, որպէս զի կայսրուհւոյն կրից մեղապարտ հուրն չիջուցանելու ճար մը գտնեն։ Գիտուններ բազում օրեր երկար բարակ խորհրդակցելէ յետոյ, անվրէպ դեղ մը գտան այս բանիս, որ էր սուսերամարտին նախկին արուամին ու ըղընդայ կտրտուքներուն սիրային գեղջուկ մը չինել։ Բժիշկք յիշեալ պատուէրն գործադրուեցաւ. Ֆոսդին դեղջուկն ըմպեց, և նոյնհետայն իր տարփանքէն բժշկեցաւ։ Բայց խնդրահաս մարդիկ, որ սիրային ըմպելեաց ղօրութեանն չէն հաւատար, այս բժշկութիւնս կը մեկնեն սուսերամարտին մտհուամբն՝ որ կայսերական արժանապատուութեան զոհուեցաւ։

Եւսեպիոս Եգիպտոսի կառավարիչ մը կը յիշէ, որ ծերութեանն չնայելով՝ սիրահարութիւն ընել ուզելու յիմարութիւնն գործեց, և սիրարծարծ ըմպելոյ մը զոհ ըլլալով մեռաւ։

Փերդինանտոս Ուղղափառն ափրոդիսեան ըմպելի մը խմելէն յետոյ՝ ընդերայ աղեխարշ

ցաւեր զգայ, և իբր կինն՝ ժերմէն որ Ֆուա, որ նորա այժը տեղը բերելու համար առնուլ տուել էր զայն իրեն, նորա ծիւրական ախտէ մեռնիլն տեսնելու դժբաղդութիւնն ունեցաւ։

Տարփամոլ թագուհին Պրիւնհոյ անվրէպ սիրաշարականեր չինել գիտէր, կըսեն, զորս կը խմցնէր այն մարդոյ՝ որոց աչերն վայելել կը ցանկար։

Լանկիոս բժիշկը կը պատմէ որ՝ երիտասարդին մէկը լեմնի մը կէսը, զոր կին մը սրուած էր իրեն, կերած ըլլալով՝ յանկարծ անոր նկատմամբ անզուսպ առիւծ մը զգայ։ Այս տարափապին տենդս իրաքանչիւր օր՝ ժամ մը կը տեւէր, և այն ժամուն մէջ՝ տարաբաղդ երիտասարդը այնպիսի դանդաչոտ մըրդնութեան մէջ կ'ընկնէր, որ կեանքն անգամ 'ի վտանգ կը դնէր։ Ասոնց օր ըստ օրէ զայրանալու վրայ էր, երբ Լանկիոս բժիշկը զայն, կըսէ, այնպիսի հնարիւք մը զոր մեզ չ'յայտներ։

Գերմանիոյ մի քանի դաւառաց մէջ՝ կանայք իրենց տղայոց պորտին լարը կառնուն, և խնամք կը պահեն որ՝ երբ առիթն պահանջելու ըլլայ՝ ամենևս փոչի մը չինեն անկից։ Յիշեալ բարեմիտ կանայք կը պնդեն թէ՝ ասոնց փոչին դաւաթի մը գինւոյ մէջ լցուելով՝ զայն խմողին սիրտը սիրով կը վառէ, և այս հնարիւքս իրենց տղայոց խիստ ընտիր բաղդեր ճարել կը յուսան։

Վանհէլմոն խմաստասէրը կըսէր թէ խոտ մը կը ճանչէ, որ նախ ափի մէջ չեռուցուելով,

և ապա տարբեր սեռէ մէկու մը ձեռացը մէջ դրուելով՝ սիրոյ հուր կը բորբոքեր յիշեալ անձին սրտին մէջ։ Մի և նոյն խմաստասէրը չուներն, թռչուններն ալլն. և մինչև իսկ կանայք.. իր հաւէն ձգելու համար անվրէպ դեղերը գիտէր. բայց այս վերջնոցս մասին բնաւ երբէք ի գործ դնել չ'ուզեց զայնս։ Ես՛ ինչ կերպիւ կը բացատրէ սիրատու ըմպելեաց ազդեցութիւնն. «Վասն զի, կըսէ, ինքզինքն սիրել տալ ուզող անձին մագնիսական խմորմամբն թմրեալ ըմպելիքն՝ միւս անձին ջղաց վրայ մագնիսական զօրութեամբ կը ներգործէ, և սիրոյ կ'սաիպէ զայն։» Բայց և այնպէս սա ալ կըսէ որ՝ շարլաթանները ձեռամբ վաճառեալ չատ մը սիրային ըմպելիք՝ սակս մտաւորական պաշտամանց մէջ ծանր խանգարում մը, և երբեմն ալ յիմարութիւն և մահ կը պատճառեն։

Դարձեալ՝ սիրոյ դեղերն օծանելոյ, սանդանոյ, փոշւոյ և անուշահոտ բաղադրութեանց տեսակաւ ալ կը մատակարարուէին. այս վերջին միջոցս խիստ հին ժամանակներէ 'ի վեր մասնաւորապէս կանայք շատ գործածէցին՝ մարդոց սէրը առ ինքեանս յանկուցանելու նպատակաւ։ Պրոսպէր Ալպէն, իւր Եգիպտոսոյ բժշկութեան մէջ շատ մը բուրմունքներ կը նշանակէ, որոց ախրոդիտեան զօրութիւնն վկայեալ էր։ Աստաքեան Պօղոս՝ Եփեսացւոց և Կորնթացւոց կաղնայքը կը յանդիմանէ, այս բուրմունքս գործածելնուն համար։ Սենեկա խմաստասէրն, և

սուրբն Հերոնիմոս հեռվմայեցի տիկնայքն նախատակոծ կընէին՝ իրենց պչրանաց ու զարդարանացը մէջ յամպար, մուշկ և այլ յանկուծէ հոտեր յանչափս գործածելնուն համար։ Ես այս մասին Ա.էրոդիեան՝ զլուխն յԱ.ոդնքնաբանութենն Ա.հռոմանութեան, և Ա.Նոնոսեոյ քաղաքագրութեան՝ զլուխն՝ Պատմութենն Ա.Նոնոսհոտոսութեանց և ծաղկանց, որոց մէջ այս նիւթոց վրայ ճառուած են՝ հարկ եղած ամեն մանրամասն պարագայիւք հանդերձ։

Հին դեղակազմական գրուածքներն լի են այս սիրարծարծ ըմպելիքներով, կամ ախրոդիտեան բաղադրութեամբք, որոց մեծագոյն մասն անազդ, այլանդակ կամ վտանգաւոր բաներ են։ Սիրային ըմպելիներն նմանապէս առատութեամբ կը դանուին այն հինօրեայ գրոց մէջ, յորս կուտակեալ կը տեսնուին անճառելի դաղտնիքներ և արտառոց ձևագրեր, որք այսօրուան օրս իրաւամբ մոռացութեան մէջ ընկած են։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՀԱԿԱՓՐՈՏԻԴԵԱՆՔ

Քանի որ սէրն արծարծելու համար դեղադրեր կային, զայն չիչուցանելու համար ալ դեղադրեր ըլլալու էին։ Եւ յիրաւի մի և նոյն գրուածոյ մէջ խել մը հակափրոդիտեան բաղադրութիւնք ալ կը դանուին, որք խիստ գործածական

էին ժամանակ մը, և որոյ կիրառութիւնն մինչև մեր օրերը չարունակուած է: Ա. յապէս՝ սուրգուած է որ թմբրեցուցիչ խոտերով, մոլեխընդով, պտով (1), հարանեմաւոյ կլլն. կազմըւած բուսակերէն, մի միայն բանջարակերներէ և զովացուցիչ ունդերով կամ թթու պտուղներով չինուած ըմպելիքներէ բաղկացեալ սննդառութիւն մը՝ կրից բուռն բորբոքն մարելու, և մարմինն այն թմբրական վիճակին մէջ ձգելու զորութիւնն ունէին՝ որուն անդամբեբոնիան կամ հոիոբոդիոսիս անունն կըսեն: Եթէ առնուք Ա.թինայի մէջ Ա. նահատակ և Ա.թինասայ նուիրեալ կուսանաց Հիփոլոյ (2) տերևներէ չինուած անկողնոյ մը վրայ պղպեղանոյ հանգարտութիւն կը դանէին, եթէ Հռովմայ մէջ Վեստեան կուսանաց այդիսկեւով (3) լցուած բարձի մը վրայ անդորր կը ննջէին, մեր նոր դարուն մէնաստանոյ մէջ՝ քանի՛ քանի՛ մանկամարդ մխանձնուհիք կոկոսի (4) բուսալրոց, և մանաւանդ երակահատութեան սառեցուցիչ ազդեցութեանն ներքև՝ սիրոյ նորածին կայծից սրտերնուն մէջ մարիլը զգացած են(5):

Բայց բոլոր այս դեղերս բան մը ըսել չէին այն պաղատնեաց հետ բաղդատմամբ, զոր Կապոչ(6)

(1) Ջելինդիկ չէ՛ էի: (2) Խմիչք. առնիկ: (3) Բէչի եարբաղը: (4) Նիլոփէր. կէօլ սուսկին:

(5) Տես դարձեալ այս մասին Առողջաբանութիւնն ամուսնութեան:

(6) Noueurs d'aiguillette.

անուանեալ մանուածոր անձինք դիտէին: Ա.յս անձինքս՝ ուսկից սաստիկ կը վախցուէր հին ազգաց մէջ կիւսից մէջ կը գանուէին: Նոր ազգաց մէջ ալ՝ կախարդաց դասուն մէջ դարձեալ կը գանուին ասոնք: Սերնդական գործարանները անկարգութեան դատապարտելու տարօրինակ իշխանութիւնն, որ ասոնց կ'ընծայէին, իրենց աղջամ երկիւղէն ծագումն կառնուր. վասն զի դրեթէ ամեն անգամ սպառնալիօք, խորհրդաւոր ասացուածովք, կամ աւելորդապաշտական արարողութեամբ էր որ սիրահարները ուամուխներն էը պէ-ՌԷին, էը խոՏէին, էը ջոՏէին: Եւ որովհետև սխալ մը սաստիկ վախնալն՝ զոյն վատակելու կը նախապատրաստէ զմարդ, շատ անգամ կը պատահէր որ այս դրախտներս կը յաջողէին:

Կապոչ իրենց ահաւոր արհեստն մի միայն ռամիկն վրայ չէին բանեցներ. այլ մեծամեծաց, իշխանաց և մինչև իսկ թագաւորաց ալ կը ձեռնէին:

Ա.մասիս, Ներոն և Ռնորիոս չարաչար կապուեցան. Թէոտորիկոս, Մեծն Կարոլոս, Պետրոս Քասթիլիացին, և Մինին Գարու այլ թագաւորք եւս մի և նոյն բաղդն ունեցան: Իգալիոյ, Գազղիոյ և Սպանիոյ արքունեաց մէջ այս սոսկալի կապուածներս յաճախ ասպետաց և տիկնանց յուսահատութիւն պատճառեցին:

Նախնի խորհրդարաններն այս նիւթոյս վրայ ծաղր չէին վերցներ. իրենց դիմաբեռնեամբն

ամուսնութեան քաղցրիկ խորհուրդներն խոտոված կամ արգիլած ըլլալու ամբաստանութեան ներքև ընկած թշուառներն անխնայ կախաղանի կը դատապարտէին։

1582 թուին Բարիզու խորհրդարանն՝ Սբէլ ալ լա Բիւ հնակարկատը ողջ ողջ այրուելու դատապարտեց՝ բազմաթիւ նորապսակ ամուսիններ, և մանաւորապէս Քուլոմմիէրի սեպհ Յովհաննէս Մօրոյն կապած ըլլալուն համար։ Դժբաղդ հնակարկատը Ռուէնի խորհրդարանին բողոքեց, որ մի և նոյն պատճառաւ, բայց արդահատելով անոր վրայ, մի միայն նախ կախուելու և յետոյ այրուելու դատապարտեց զայն։ Ս. յս դատավճիռս մի և նոյն տարւոյն Յունիսի 23 ին գործադրուեցաւ Քուլոմմիէրի հրապարակին մէջ։

Նմանօրինակ դատավճիռ տրուեցաւ Բիոմի առենէն՝ վիտալ ալ լա Ռօրդի դէմ, որ իր դիմութեամբքն, թովչութեամբն, և այլ սատանայական արարմամբքն ո՛չ միայն իւր թաղին շատ մը պատանիներն կապել էր, այլ և բազմաթիւ չուներ, կատուներ և այլ ընտանի կեներ։ մինչ զի վայրկեան մը վախցուեցաւ որ՝ չըլլայ թէ յիշեալ անասնոց աճումն ու բազմանալն դադարի. և ահա այս պատճառաւ ամբողջ գաւառն վիտալի դէմ ոտք ելած էր։

Պարոյ քաղաքին մէջն ալ կապոզի մը այրին սեռնուեցաւ 1818 ին։

Պօաէն, Տէլ Բիոյ, Սվրէնճէր, Բրէսբէ և

այս նիւթոյս ամենակատարեալ հմտութիւն ունեցող այլ դիւագէտք՝ ամենայն լրջութեամբ երկար բարակ կը պատմեն այն զանազան դպրոցների հնարքներն, զորս այս չարագործքս ի կիր կ՚արկանէին այս ու այն կապելու համար։ Առանցմէ հետևեալ երկու կերպը մանաւորապէս կը ներշանակեն՝ իբր ամենէն վտանգաւորներն։

Կապոզը հարսանեաց արարողութեան միջոցին նկեղեցւոյն դուռը կը կենար, բամպակեայ կամ մետաքսեայ պզտիկ չուան մը ի ձեռին։ Քահանային ըրած զանազան շարժմանցը ուշ դնելով՝ կ՚սկսէր ձեռքի չուանին վրայ կապ մը կապել, և ձախ ձեռամբն երեսը խաչակնքելով կըսէր. Ընդ — յետոյ կապ մ՚ալ կը կապէր, և դարձեալ երեսը խաչակնքելով կըսէր. Նոցա։ Վերջապէս այն վայրկենին՝ որ քահանան հարսանեկան նաւօար կը բալորէր նորապսակ ամուսնացելոց գլուխն, երրորդ կապ մ՚ալ կը կապէր, անդամ մ՚ալ երեսը կը խաչակնքէր, և ակռայները կըճրտնելով վ՚անոլոք բառը կ՚արտասանէր. այն առեն ալ հմայն կատարեալ կըլլար։

Միւս հնարից դործադրութիւնն աւելի դըժուար էր։ Նախ հարկ էր գայլոյ մը վրայ յարձակիլ, բռնել զայն. յետոյ երիզանման երկար կտոր մը կարելու էր անկից, և կապարէ թելով մը զայն կապկպով՝ նորապսակ ամոլից յետկեղեցւոյ վերադառնալուն՝ անոնց ճանապարհին վրայ նետելու էր։ Ս. յս հնարքս, որ անվրիպելի կը համարուէր, միայն բարէբաստիճան անձինք կապելու կը դործածուէր։

Բազում հետաքրքրութիւններէ վերջը՝ ինքնին հնարաւոր մարդիկ ոչն հմայիցս դէմ դիմելը դանելու յաջողեցան. և պերճիմաստն Թիէր՝ որ այս նիւթոյս վրայ բազմաթիւ հատորներ գրած է՝ անհնարին քան երկու հատոր կը համրէ, իբր առաւել կամ նուազ ազդու։ Մեք անհնարին ինչ քանին առա յիշելով բաւականանամք։

Գրպանին կամ կոչկաց մէջ ազդել. կանաչ վայտիորդ (*) մը չաքարով եփած լիարդն կրել վրան. ձախ ձեռքը երեք անգամ իշոյ մը փորին առակէն անցնել։

Հարսանեաց օրը՝ երկու շաբաթ հագնիլ հագուստը, և ալոակի խորհրդոյն ժամանակ՝ շաբաթնակ ձախ բոլի մատը ափին մէջ ծռած պահել։

Հարսանեկան առագաստի անկողնոյն ոտքերը ձեր գայլոյ ճարպով չփիլ նյլն. նյլն։

Թերևս այնպէս կարծեն ընթերցողք թէ՝ այս օրինակ փծուն ազդայամտութիւնք ընկերութեան մի միայն տգէտ և խաժամուժ մասին, և բարբարոսութեան գարուց մէջ միայն վարկ ունենալ են. բայց ա՛յ. ամենէն նշանաւոր մարդիկ ալ դիւրահաւանութեամբ հաւատացել են այնց։ Թեսկրիտէս և Վիրգիլիոս կիմանանք որ՝ Սիկիլիոյ ծերուն հովիւներն հրիտասարդներն կապելը գլուխնք մը ըրած էին իրենց։ Հերոդոտոս, Սրնովպ, Սինեսիոս և խել մը հռչա-

(*) Աղամ գազան գոչու։

կաւոր պատմագիրք, որոց վրայ կրնամք աւելցընել նաև բազում Եկեղեցւոյ Հայրապետներ, այս սոսկալի կապմանս, և զայն քակելու միջոցներուն վրայօք ամենամանր պարագայից քրկար բարակ ճառել են։

»Եկեղեցին ամեն ատեն ճանչցել է կապողներուն զօրութիւնը, կըսէ Մոլբրանշէնց և Նիկոպոլսոյ բազմահմուտ հեղինակն. Միլանի, Թուրի պատառական եկեղեցական ժողովներն, Բասէն լերին և Ֆերրարայի Սինոդներն, և 1579ին՝ ի Մելիւն ժողովեալ Գագղիկան կըղերն, անսթեմացեալ բանադրել են զանոնք, Եւտա մը մաչուոյներու մէջ՝ կապողներուն դիւթութիւններէն զմարդ ազատ պահելու, կամ անոնցմէ բժշկուելու համար՝ ինչ միջոց գործածելու է, նշանակուած են. նաև Տիւբերրան կարդինալը, քաղահմուտ և բարեխրատ մարդ մը, Եվբեցւոյն ծխատանին մէջ՝ իր լսեալին բնակիչներն այս բանէս ազատելու համար՝ խիստ խնամատուն խրատներ աւելցուց։ Ուրախ եմք որ մեւ նոյն հետաքրքրութիւնն կը տեսնենք նաև Լիսնի, Թուրի, Սանի, Նարպոնի, Պուրժի, Թրուայի, Օրլէանի և այլ բազմաթիւ հռչակաւոր եկեղեցւոյ սինոդական կանոնացը մէջ. յուսկ ուրեմն Սուրբն Օգոստինոս, Սուրբ Թովմաս և վճռաց տէրը, Պետրոս Լոմպար, բացարձակապէս կընդունին որ ամուսիններն կապել, և նոցա ամենէն սիրական հաճոյից մէջ զանոնք խըռովել կրնայ ըլլալ։»

ՀԱՏՈՒԱԾ Գ·

ԲԺԺԱՆՔ (*)

Բժժանք բառը, իւր ամենէն ընդարձակ առումին, ամեն ազէտներէ պահպանելու, մարդոյս ամեն փափագածը ձեռք բերել տալու, և մինչև իսկ ինչ որ ուզես, բարի կամ չար, դարձադրելու մտացածին զօրութիւնն ունեցող որ և է նիւթ, գրուած կամ խօսք կը նշանակէ։

Բժժանաց ծագումը մարդկային ընկերութեան մինչև սկզբնական վիճակը կ'երթնէ· չգիտութիւնն, աւելորդապաշտութիւնն, ու չարլատանութիւնն նորա հեղինակներն եղան։ Բժժանք ի սկզբան այնպիսի առարկայներ էին, որոց վրայ կը կարծուէր թէ աստուածոց մասնաւոր մէկ շնորհքն կը հանդչէր։ Աւոլլոն Դէլֆ, Թերափ, Տրովադայ Պալլոտինը, Սթէֆնըի Սբենեդը, Հռովմայ Ասպրնեն, ևլլն. յիշեալ քաղաքաց բարօրութեանն ու փառացն անհրաժեշտ միջոցներ համարուած էին։

Ոդիմպիոդոր կը հաւաստէ թէ՝ Թրակիոյ մէջ արծաթեայ հանքատեղական արձաններ կային, որք շատ տարի չարունակ Հռոմայ, Գոթացոց, Վանտալաց և այլոց արշաւանքներն արդիլեցին· դժբաղդաբար Կոստանդ կայսրը բառնալ տը-

(*) Թլսմսմ։

ւաւ այն արձաններն, և նոյն հետայն բարբարոսք երկիրն ողողեցին։ — Եղիպտոսի մէջ՝ Թեբէ քաղաքին հարիւր դռներէն իւրաքանչիւրոյն վրայ դրուած պղնձէ մէկ մէկ մարախներ՝ քաղաքն կը պահպանէին՝ այն մարախաց ամպանման անհամար բազմութենէն, որք աւեր և ապականութիւն կը պատճառէին չրջակայ դաշտերէից մէջ։ — Կորնթոս, իւր աշագեղ պռոնիկներէն ի զատ՝ ուրիշ բժժանք մ'ալ ունէր, խիստ զարմանալի, որ էր պղնձէ Կապիճ մը՝ մէջը հմայեալ գարեղ հատիկներ լցուած, որք իւր դաշտորէից վրայ կը բերէին կը ձգէին Պեղոպոնեսի բոլոր լորամարդիներն, և որոցմէ իւր հեչտաեր բնակիչք համագամ խորտիկներ չինելով կը վայելէին։ — Մեսինայի ապահովութիւնն ալուէսէ մը, և Եղեսինը նապաստակէ մը կախեալ էր։ — Աեռւ մարմարիոնէ կերտեալ Հերմէսի արձան մը՝ Նէապօլիս քաղաքը Վեսուվի բորբոքման դէմ կը պաշտպանէր· ի մի բան ամեն քաղաք իրեն պաշտպան բժժանքն ունէր։

Եաւ չանցաւ, հասարակաց ապահովութեանն համար գտնուած բժժանքներն բաւական չէղան· մէն մի քաղաքացի իւր մանաւոր բժժանքն ուզեց ունենալ։ Ուստի շատ մը բժժանքներ սկսան տեսնուիլ ապիս անդին· մետաղեայ տախտակ մը, միտալի մը, փայտի, կաւոյ, կամ ոսկեր կտոր մը, որոց վրայ այլաբանական պատկեր մը, նուիրական պարբերութիւն մը կամ խորհրդաւոր տառ մը գրուած էր, բժժանք կը

համարուէին, բաւական է որ հրաշագործի մը, կիւսահմայի մը կամ աստղագէտի մը ձեռքէ եւ-լած ըլլային։ Ով որ այս նիւթերէս միոյն տէրն ըլլար, անվիրաւորելի, հիւանդութիւններէ ա-զատ, և ա՛լ այնուհետեւ որ և է դժբաղդութենէ ղերծ կը համարէր ինքզինքն. և որ առաւելն է, հարստութեան ճանապարհը անխափան առջևը կը բացուէր, և իւր ամեն իղձերն անպատճառ կը կատարուէին։

Բժժանաց ղօրութեանն հաւատալը այնքան ընդհանուր բան մը դարձաւ, որ ամեն մարդ հարուստ ու աղքատ, մեծ ու պզտիկ այդ բա-նին հաւէն կը վազէին. ուստի սատկութիւն ան-հաւատալի կերպիւ բազմացաւ։ Երեղներն ա՛լ չէին բաւեր, և շարլաթանք ահագին չահ բրին այս առուծախէս, որ ազգերն մեօտիապաշտու-թեան մէջ ընկղմելով՝ իրենց պէս պրախօսից ամենամեծ չահ և անհուն յարգ ու պատկառանք կը հայթհայթէր։

Ասորեստանեայք և Եգիպտացիք բժժանք չինելու մասին խիստ նշանաւոր հանդիսացան. բայց ամենէն աւելի յարգի համարուածներն Բաբելոնէն եղածներն էին. վասն զի աստե-ղագիտական արուեստին ամեն կանոնացը հա-մաձայն չինուած էին։ Օրինակի աղագաւ. բըժ-ժանք մը վայրկ և թուենաւոր դազաններէ պահ-պանելու ղօրութիւնն ունենալու համար՝ Հիդ-րայի և Կարճի համաստեղութեանց պատկերը դանուելու էր վրան. ամուսնութիւն մը բազմա-

ձին, և կնոջ կաթը առատ ընելու համար՝ վրան Ասրահկի և Ասիսի համաստեղութիւնները դը-ծագրելու էր՝ անանց իրարու հանդիպած վայր-կենին ունեցած դիրքը, եւլն. եւլն։

Յունաց և Հռովմայեցւոց մէջ մանաւոր բժժանքներն խիստ մեծ վարկ ունեցան, և ֆրա-պանէ (1), — Վալպար (2), — պոլեբէ (3), — Գոռ-գոնէոն (4) եւլն. անուններն առին։ Ողիմպոսի դիք և չաստուածուհիք ևս տիպարուեցան բժժա-նաց կազմութեան մատակարիլ։ Ասրամազդայ և Հերակլէսի պատկերներն ոյժ և զօրութիւն կու-տային. — Ասպոնի և Մուսայից պատկերներն երևակայութիւնը կը ճոխացնէին ու միտքը կը բորբոքէին։ — Աստղկան կերպարանքն գե-ղեցկութիւնը ընդ միշտ կը պահէր, և սէր ու ցնծութիւն յառաջ կը բերէր. — Պղնձէ տախ-տակի մը վրայ փորագրեալ Ասրէսի դէմքն՝ քա-ջասրտութիւն և վտանգներն արհամարհելու զօ-րութիւն կուտար. — Ասրժաթոյ վրայ դրուա-գեալ Հերմէսի պատկերը վաճառականութեան մէջ յաջողութիւն կը բերէր. — Ասրդական սկա-ւառակը՝ ոսկիէ միտալի մը վրայ նկարուած՝ թա-գաւորաց հաճելի կընէր զմարդ, եւլն. եւլն...։

Ասյսէս՝ վերհագուեաւն սկսեալ մինչև իւր ամենայետին հպատակը, ամենքն ալ իրենց ծոցն կամ գդեստուց մէջ բժժանք կը պահէին։ —

---

(1) Phylactère. (2) Periapte. (3) Stoechies. (4) Apotropée.

Եպիպտոսի թագաւորք վէրինին բժժանքներ կը կապէին, որ որ և է անիրաւութիւն դրժելէ կ'արգիլուին զանոնք։ — Մովսէս անապատին մէջ պղնձէ օձ մը կանգնել տուաւ՝ Եվրայեցիքն չարչարող զեռուններն սատկեցնելու համար։ — Սեսոստրի բանակին մէջ չ'կար զօրական մը՝ որ իւր քաջութիւնն աւելցնելու, և իւր կեանքն ապահովելու համար՝ վէրէն կախուած սև բուռս մը չ'ունենար։ — Յոյն կանայք՝ վրան Լատոնի կամ Լուկինեան Հերայի պատկերն փորագրուած միսաղ մը կը կրէին վրանին։ — Սոլիոնի քնարն նախնի դարուց ամենէն զօրաւոր բժժանքներէն մին կրնայ համարուիլ, եթէ իրաւ է որ իւր զմայլեցուցիչ ներդաշնակութիւնն զմարդիկ կը քաղաքակրթէը, վայրի գազաններն կ'ամոքէր, և քաղաքներ կը կերտէր։ — Մի և նոյն բանը կրնայ ըսուիլ նաև Սրիոնի դիւթական վիհին համար. ամենեցուն ծանօթ է որ՝ ծովահէնք այս ճարտար նուագածուս ծովը նետած ըլլալով, դրինք՝ զանի վրանին առած կորնթոս տանելու պատուիրեր իրարմէ յափշտակել ուզեցին։ — Երկրի վրայ կամ Երկնից մէջ ո՛ր էակ կրնար դիմադրել Սատկան գօտւոյն. թանկագին բըժժանք մը, զոր Հերայ փոխառաւ՝ իւր յաղթողդամիտ ամուսնոյն սիրտը՝ մի միայն գինքը սիրելու սիրելու համար։ — Գեղանին Սգիմէն Սրամադրէն բժժանք մը ընդունեցաւ, զոր իւր որդւոյն տուաւ, և կըսեն թէ՝ այս բժժանքիս զօրութեամբն էր որ Հերակլէս իւր տաններկու

չահատակութիւններէն յաղթող ելնելու փառքն ունեցաւ։ — Սմէն մարդ գիտէ թէ՝ Սամփսոնի բժժանքն, Եվրայեցի Հերակլէսին պժժն, իւր մազերուն վրայ էր։ — Պրոտոնոյի Միլոնն ալ բժժանք մը ունէր, որոյ շնորհիւն վաստկեցաւ Ողիմպիական խաղուց մէջ բոլոր պսակները։ — — Պերիկլէսի և Սգիպիադայ համար կըսեն թէ՝ վարսերնուն մէջ պահուած գրապանակ մը կը կրէին, որ տեսակ մը մոգական բանալի էր, և ամեն կանանց սիրտը կը բանար իրենց առջև։ — Սբարիս անուն կիւսին նետը բժժանք մ'էր, որոյ միջոցաւն շատ հաճոյական կերպիւ օգոյն մէջէն կը ճանապարհորդուէր — Կը պատմեն որ Կեսար բնաւ երբէք առանց վզնապատ մը վրան ունենալու չ'էր քալեր, զոր եգիպտացի գուրմ մը տուել էր իրեն. այն օրն որ զայն վիզը անցնել մոռցաւ, սպաննուեցաւ։ — Օգոստոս կայսրը կայծակէն ինքզինքն պահպանելու համար՝ մեծ խնամօք ծովային հորթուս մորթի մը վրան կը պահէր։ — Տիբեր ամեն անգամ որ որոտման ձայնը կը լսէր, սարսռելէ չինուած գըլխարկ մը գլուխը կանցնէր։ — Վիրգիլիոս բանաստեղծն անգամ իւր բժժանքն ունէր, որ էր ձեռքը փող մը բռնած արձան մը, որ պարապին որմնյն վրայ գրուած ըլլալով փոշին հեռու կը պահէր անկից։

Եթէ հարկ ըլլար պատմել մի առ մի այն ամեն բժժանքներն ու գրապանակները, որոց հրաշալիքներն կը հռչակէ պատմութիւնը, վերջը չ'էր

դար : Ա.յժմ անդնինք այն զանազան գրոց, խօսից և ձեւագրոց, որք կիւսից և կախարդաց արձակած կամ տուած հմայից, բաղդաքուէից, դիւթուքեանց, և այլևայլ հիւանդութեանց դէմ կը գործածուէին :

Ա.յն ձեւագրոց մէջէն՝ զորս Եգիպտացիք և Ա.րաբք կը գործածէին իբր բժժանք կամ գրաւականակք ինչ ինչ հիւանդութեանց դէմ, սա հետեւեալը միայն մինչև մեզ հասած է, որ հիւանդին ականջն ի վար կը զրուցուեր յետագայ կարգաւ :

Ա.Լ.ՏՍ.ՊԱ.ՐԱ.Ն
Ա.Լ.Տ Ս.ՊԱ.ՐԱ.
Ա.Լ.ՏԱ.ՊԱ.Ր
Ա.Լ.ՏԱ.ՊԱ.
Ա.Լ.Տ Ա.Պ
Ա.Լ.Տ Ա.
Ա.Լ.Տ
Ա.Լ.
Ա.
Ա.Լ.
Ա.Լ.Տ
Ա.Լ.Տ Ա.
Ա.Լ.Տ Ա.Պ
Ա.Լ.Տ Ա.ՊԱ.
Ա.Լ.Տ Ա.ՊԱ.Ր
Ա.Լ.Տ Ա.ՊԱ.Ր Ա.
Ա.Լ.Տ Ա.ՊԱ.Ր Ա.Ն

Նախ ամուր հնչմամբ սկսելու էր, և հետզհետէ ձայնը նուազեցնելու էր մինչև դրապանա-

կին մէջ տեղը գտնուած Ա. տառը. յետոյ հընչումը վերստին կը բարձրանար աստիճանաբար, այնպէս որ ամենէն վերջը ի սկզբան գործածուած ձայնին ղօրութեանն հասնէր :

ԻՈՀԱ. (Եհովայ) և ԹԼՈՍ (Ա.տուած) քառագրերն նաև խիստ հռչակաւոր բժժանքներ էին։

Ա.րաբական Ա.Լ.ՏՍ.ՊԱ.Ր Ա.Ն բժժանքին հետեւելով՝ Բասիլիդես հերետիկոսապետը ամեն տեսակ ցաւոց դէմ անվրէպ դեղ համարուած անունն Ա.ՊՐՍ.ՔԱ.ՏԱ.ՊՐԱ. գրապատկերն կամ յուռուքն հնարեց : Ա.յս տեսակ մը համադեղս կազմելու համար՝ մագաղաթի, փայտի, կամ փողոսկրի կտորի մը վրայ գրելու էր Ա.պրա-ֆագ բառը, և հետզհետէ կրկնելու էր զայն՝ իւրաքանչիւր գծին վերջին տառը վերցնելով. այնպէս որ գլխիվայր բրգի մը ձևն առնուր՝ որոյ գագաթը Ա. գրովը վերջանար այսպէս.

Ա.ՊՐԱ.ՔԱ.ՏԱ.ՊՐԱ.
Ա.ՊՐԱ.ՔԱ.ՏԱ.ՊՐ
Ա.ՊՐԱ.ՔԱ.ՏԱ.Պ
Ա.ՊՐԱ.ՔԱ.ՏԱ.
Ա.ՊՐԱ.ՔԱ.Տ
Ա.ՊՐԱ.ՔԱ.
Ա.ՊՐԱ.Ք
Ա.ՊՐԱ.
Ա.ՊՐ
Ա.Պ
Ա.

Պերճիմաստան Բասիլիդես կրկնաւոն անօգուտ համարեցաւ. ամենէն էական կէտը՝ մեզանին

բաղաղրութեանը, դրչին տեսակին, և այն կախարդական արարողութեանց վրայ կը կայանար, զոր այս զօրաւոր դրապանակս չինողք կը կատարէին: Անուրբ մարդոյ մը չինած Սպրտոպոպրան քնաւ զօրութիւն չէր ունենար. այլ անպատճառ պէտք էր այն բանին մեհենաշնորհն ունեցող առանձնաշնորհեալ լինչ լինչ մարգոց ձեռօք կազմուած ըլլար. և այս մարդիկս ալ խիստ սուղ կը վաճառէին զայն:

Բժժանաց ախտը համաճարակ հիւանդութեան մը արագութեամբն տարածուեցաւ քրիստոնէից մէջ. Քրիստոնեայ քաղաքներն ալ հեթանոս քաղաքաց նման իրենց բժժանքն ունենալ ուզեցին: Կ. Պոլիս, նախ քան զամեն, մժղուկներէն և սղոյններէն զերծ մնալու համար՝ ինքնիրեն պղնձէ օձ մը չինեց, յակինթէ աչքերով: Ս. յս մասին կը պատմեն թէ՝ Մէհմէտ Բ. յիշեալ քաղաքն առած առեն՝ այս բժժական օձին ակռայներն կոտրելու անխոհեմութիւնն ղործած ըլլալով, անմիջապէս վողոյններն ղեռնով լցան. բայց բնակչաց կրած երկիւղն իրենց քով մնաց. զի բոլոր օձերն անատամն էին: — Սպանիոյ մէջ՝ Թոլետոյ քաղաքը՝ զանգակատան մը ծայրը դրուած յուռութք մը՝ քաղաքը մուներէն կը պահպանէր: — Պարձեալ՝ անդամանդեայ թևերով ոսկի ճանճ մը մի և նոյն ծառայութիւնը կը մատուցանէր Նէապոլիս քաղաքին: — Բարի քաղաքն Բարիզ խիստ երկար առեն հրդեհէ, օձերէ և մկներէ աղատ մնալու

չնորհն վայելեց. և այս չնորհս առացած էր երկու պղնձէ բժժանաց ղօրութեամբ, որոց մին սողնոյ և միւսն մկան ձև ունէր: Կիլտերիկոս Բ. ի օրով, չար բաղդն այնպէս ուղեց որ՝ կամրջոյ մը կամարը՝ որոյ մէջ պահուած էին ասոնք՝ փլի, և դողերն այն բժժանքներն առնլով հալեցնեն. այն վայրկենէն սոյն առանձնաշնորհս բոլորովին դադրեցաւ. հրդեհն ահագին աւերմունք դործեց, և մկներն բարեմիտ բարիզցւոց աներն ապատակեցին: Թուրի եպիսկոպոս՝ Սուրբն Գրիդոր է որ՝ ամենայն լրջութեամբ սոյն առասպելս կը պատմէ:

ՀԱՏՈՒԱԾ Դ:

ՅՈՒՈՒԹ (1)

Բայց բժժանք, ջրաղանակ և այլ ասոնց նման բառերը երկար առեն չէին կրնար մնալ նորակրօնից մէջ. ամեն ինչ որ հեթանոսներէն առնուած էր, պիղծ էր. ուստի Յուռութ, Սքնա, (մամէ դառն աստուծոյ) (2) և այլն. բառերն անդորոյին նոցա տեղ:

Յուռութից կամ հմայեկաց մոլութիւնն մինչեւ յիմարական զառանցութեան աստիճան հասաւ. աղնուականաց, հասարակ ժողովրդեան,

(1) Նուսխայ: (2) Համէ իլլահ:

ի մի բան տակաւին դէմ ելլելի ոգիտութեան մէջ խորասուզեալ ընկերութեան մէջ ճարակեցաւ։ Ս.յն առեն ամեն տեսակ երջանկութիւն պատճառելու, և ամեն դժբաղդ արկածներէ պահելու, Երկնից դռներն բանալու, և մանաւանդ դիւաց երեսէն զմարդ անվնաս պահելու զօրութիւն ունեցող յուռութներ ծախուեցան. դիւաց՝ որք տան և հինգ դարէ ասկի ժամանակ այնքան մեծ դեր խաղացին աշխարհի վրայ։ Չ'կար բան մը որ այս նորահնար բժժանաց զօրութեան կարող ըլլար դիմադրել. փոխորիկներն կը հեռացնէին կամ երաշտութեան առեն անձրև դալ կուտային. ժանտախտն ու ոլորձ այսերն ի բաց կը վանէին. լուսնոտութիւնն, խոյլերն (*), քոսը, պալարը, և այլ սոցա նման ախտերն կը բժշկէին. ամուլ կանայքն որդեծին կընէին. հոգեվարքին սառուցեալ սրտին մէջ չնքմաղին արիւն մը կը հոսեցնէին, և գերեզմանին մէջ ընկղմելու վրայ եղող դիականման անձն՝ յապուշ կրթեալ բաղմութեան աչացն առջև՝ ոտք կ'ելնէր, և իր կենաց ընթացքը կը վերսկսէր. վերջապէս մի քանի խիստ հազուագիւտ յուռութներ ալ կը յիշուին, որոց զօրութիւնը մեռեալներն իսկ յարուցանելու աստիճան հասաւ։

Գուռն Ս.տուածոյներըը ընդհանրապէս իւղով, մեղրամոմով և փոշի դարձած սրբոց մասունք

(*) Սըրտնաց։

կը չինէին, և ուզած ձևերնին կուտային անոր։ Սա ալ չ'մոռնամք ըսել ասա. թէ մը մարդոց՝ Գուռն Ս.տուածոյի մը զօրութեան վրայ ունեցած հաւատքն՝ ձեռնարկութեանց մէջ այնպիսի քաջասրտութիւն մը, յաջողութեան վրայ այնպիսի վստահութիւն մը կուտար իրենց, որ դրեթէ միշտ նպատակնուն կը հասնէին։

Ս.յսպէս՝ ինչ ինչ Հնդկական, Պաղդէական փիւնիկեան, Եվրոպական, և այլն. բառերու՝ դներն նուաճելու, հիւանդութիւնքն բուժելու, զմարդ ամեն վտանգէ աղատ կացուցանելու, և ամեն բանի մէջ յաջողութիւն առթելու զօրութիւն կ'ընծայէին։ Ի մասնաւորի՝ ՍՍ.ՓՍ.ԻՈՓ և Ս.ԴՈՆՍ.ՑԻ բառերը ասոնցմէ ամենէն զօրաւորներն կը համարուէին։ — Ս.բրահամ, Իսահակ և Յակովբայ անուանքն կըսեն, իրենց նախնական լեզուաւն արտասանուելով, հրաշալի արդիւնքներ յառաջ կը բերէին։

Եկեղեցւոյ առաջին դարուց մէջ՝ թէ մը ինքզինքին առանձնաշնորհեալ անուանող մարդիկ խորհրդաւոր խօսքերով, ձեռաց հպմամբ, և նշանացի շարժուածովք ամեն տեսակ հիւանդութիւնք կը բժշկէին։

Օրինակի աղագաւ. ժանտամահէն աղատ կը մնայիր, եթէ վրադ թուղթ մը կրէիր՝ խաչանշաններով իրարմէ զատուած՝ սա խորհրդանշական անուններն վրան գրուած Մ՝ալքիրդ + Բալտազդ + Կոլոպան + Սափաօք + Վերդուրք +։

Լուսնոտութեան ախտը՝ եթէ մեզ թագա-

ւորաց անուանքն լուանոաին կուրծքին վրայ դնելով կը բժշկուէր։

Երեք օրն անգամ մը բանող աւետը՝ մի և նոյն կիրակին երեք այլ և այլ եկեղեցեաց մէջ մատուցուած պատարագի խորհրդոց ներկայ դտնուելով կանցնէր։

Օրհնեալ պատանքի կտորի մը վրայ մըխեալ դնգասեղ մը՝ վախէ ազատ կը պահէր, և դիշերային խուճապներն փախցնել կուտար։

Սրբոյն Լուբի և Սրբոյն Հուպերդոսի միաւորներն չրաւախութենէ ազատ կը պահէին, և ջան կը բուժէին։ Եաքերը սակերպիւ չինուած ուրիշ հմայեակ մը գործածել սկսան։ Անդանոյ մը շուրջը բոլորաձև չարուած լինն հատ փոքրիկ քառակուսի թղթերու վրայ՝ կարմիր մելանաւ սա լինն բառերը կը գրէին. Իպնէ, Քէլէէ, Էզղէզ, Ցեղղէ, Քէօփէր, Հ…, Բ…, Մ…, Ս.ոէ…։ Ս.յս թղթերս, վիճակահանութեան թղթերու նման բոլորուած՝ փոքրիկ դգումէ ամանի մը մէջ կը դրուէին, և վրանին կը կրէին ջան։ Ս.յս հմայեակս ունենալէ եաքը՝ ա՛լ արձակ համարձակ կրնային կատղած շանց և մարդոց մէջտեղ քալել։

Ցետագայ բառերը՝ կրակէ, հրացանէ, և մինչև իսկ թնդանօթէ անվնաս կը կացուցանէին զնարդ. այն է Իբէլ + Քաբէլ + Հաբէլ + Բաբէլ +։ — Սա հետևեալ հատուածը արտասանելով՝ վերջերն ինչպէս նաև այրուածքներն կը բժշկէին, և հրդեհն կը կեցնէին.

Հո՛ւր, կորանցո՛ւ Ջերմութիւնդ,
Ինչպէս Ցուդա կորոյս իւր գոյնն,
ՋՏէրն—Մեր մատնելովն։

Երկուքէ բառուած կնոջ բարերջանիկ և արագ ազատումն չնորհելու համար՝ այն կնոջ դռան եկեղեցւոյ կոչնակին ուռան կապելու, և Հրեշտակ պեռան աղօթքին ժամանակ զարնելու էր։

Ս.յն գարշատեսիլ ելուզդներն կամ կոծիծներն անյայտ ընելու համար, որք երբեմն դիպուածով փափկիկ ձեռաց վրայ կը գոյանան, պարզապէս որքան որ ելուզդ կար՝ այնքան փոքրիկ ոլոռներ լաթի կտորի մը մէջ դնելով կապելու, և այնպէս հասարակաց ճանապարհին վրայ նետելու էր։ Հետաքրքրին մէկը այն փոքրիկ ծրարը գտանէն վերցնել ու քակելուն պէս՝ ելուզդներդ ձեռացդ վրայէն անցնելով նոյնհետայն այն անձին ձեռաց վրայ երևան կ'ելնէին,

Ոչխիներէն զերծ մնալու համար սա երեք բառերն արտասանելու էր. Օ…, Ս.ոէ…, Ռէչ…, և եթէ վրադ գլուխդ չատ կար անոնցմէ, այն տաղտկալի միջատներն ամենէն մօտդ գոնուող անձին վրայ կը ցատքէին։

Սա միւս երեք բառերն ալ եթէ ափիդ կապած ըլլալու ըլլայիր, խաղի մէջ կը վաստակէիր. այն է. Ա.էա, Ս.ըհոէ, Ա.բաֆրօհ։

Ծծումբը, նաւթը, կուպրը և ծովու չուրը սատանայն հալածելու համար իրը ծխանելիք (*) կը գործածուէին։

(*) Թիւթսիւ։

Ծաղկազարդի օրն օրհնուած տուտախի ոտո մը, որոյ վրայ չարչարանաց ծաղիկները (1) կը փակցնէին, բարի հրեշտակներն քովէդ չ'հեռանալու կ'սպիտէր։

Սուգ Ուրբաթ օրն կտրուած միան մը պոչը՝ աղայոց անկողնոյ մէջ միղելը արգիլելու ղօրութիւնն ունէր։

Գևերն երդմնցնելու համար՝ վզերնուն մատուտակի (2) արմատ մը կը կախէին, և սրտերնուն վրայ չափիւղայ քար մը կը փակցնէին։

Նոխազի արիւնը միղամանին մէջ խցուած քարը կը փշրէր։

Սպրխան չորցուցած թոքը՝ չնջարգելու թևան և թոքախտի դէմ անվրէպ դեղ մ'էր։

Կայրերը կը բժշկէին անդեղ ծիրտով շաղախուած սպիզանաւ մը։ Ձանձի գլուխներու և խեցդեանկի աչքերու վառած ջուրը խլութիւնը կը բժշկէր։

Թուչոյ մինուկանչ ըսուած խտոը՝ կախարդայ չինած սպիզանոյն մէջ խառնուելով կատաղութիւնը կը հանդարտեցնէր։

Խարտեաշ սարեկի (3) քակորը դալուկը (4) չատ մը կ'անցնէր։

Ջ'մկրտուած տղու մը փոշի դարձած լեարդը ակռայի ցաւերը կ'մոռցնէր։

Կախաղանի վրայ մնացած մարդոյ մը ուղեղը սիրոյ յաժարութիւն կ'տղդէր։

(1) Ձիւղի արուս։ (2) Այբ դալաղը։ (3) Ֆիլրիս։ (4) Սարսուռ։

Լուանոտութիւնը խաչի մը վրայէ առնուած դամով մը կը բժշկուէր։

Հովուի մը ցպէն կախուած Սրբոյն Բարսղի պատկերը՝ իր հօտերն գայլոց ժանիքէն կը պահպանէր։

Սուգ Ուրբաթ օրն սև հաւու մը ածած հաւկիթը հրդեհը մարելու անդին ղօրութիւնն ունէր. մի ևնոյն հաւկիթն ջրոց ողողմանէ ալ կը պահպանէր։

Սրբոյն Պիյնեօլէի արձանին վրայէն առնուած փոշին խիստ ղօրաւոր ծնօտցիչ դեղ մը համարուած էր. վասն որոյ Պրբրդայնի կանայք խառնէ խառն բազմածնութիւն հայցելու կ'երթային անկից։ Մծդրէօյի մէջ Սրբոյն Պիյնեօլէի արձանը մի ևնոյն հրաշքները կը դործէր, ինչպէս Պրէսթ։

Պէրրի գաւառին մէջ Ս. Պերլիչոն մի ևնոյն ծառայութիւնը կը մատուցանէր ամուլ կանանց, և անկարող կանամարեայ։ — Նորմանտիոյ մէջ Սրբոյն Ժիլի արձանն մի ևնոյն պաշտօնը կը կատարէր։ — Սուրբ Ուրնէ Անժու նահանգին մէջ, Սուրբ Ուրնոյ Պուրկոյնեըի մէջ, Սուրբն Առնոյ Պուրպոնէի մէջ ևլլն. ևլլն։

Գաղղիական Ֆլանտրիոյ վանքերէն միոյն կրօնաւորք՝ բաւական կլորիկ վարձատրութիւն մը ընդունելով՝ միսալ մը կը բաժնէին, որ անմարսութենէ ազատ կը պահէր զմարդ, և նիհար անձինքն կը դիրացնէր։ Այս փոքրիկ տուրեառիս զբաղող վանականաց տարապայմանդի-

բութիւնն միտալիոնին զօրութեանը վկայ էր. ուսկից եւս սա առածը. — Վանական մը նման ֆէր։

Բայց բաւ համարիմք այսչափ օրինակ, դուցէ ընթերցողին համբերութիւնը չարաչար դործածած ըլլամք. սակայն և այնպէս պարտիմք սա դիտողութիւնն ալ ընել թէ՝ բազմաթիւ դիտունք և նշանաւոր մարդիկ բժժանաց և յուռութից զօրութիւնը հաստատած են, ինչպէս Ա. ղէքսանդր Ա. վերոտիսեցին, Պօրվիւր, Յամպղիկ, Մարկիզոս Ֆիսէն, Մեծն Ա. լբերտ, Բորդա, Քարտան, Բիք տը լա Միրանտոլ և այլք։

Մինչեւ դարու առասպելական պատմութիւնք և ժամանակագրութիւնք այս տեսակ խիստ հետաքրքրաշարժ եղելութեամբք լի են. մերթ զմարդ անտեսանելի ընելու և սատանային կամ մարդկանց որոգայթներէն ազատ պահելու զօրութիւն ունեցող մատանի մը, մերթ վարդ մը թոթռուելով ոսկի դրամներ կը թափին վրայէն. աստ ոսկեր մը կտոր, որ ամեն տեսակ երջանկութեան անկասկած յոյս կուտայ. անդ կէս գլխոյ ցաւոյ, ատամնային չղացաւի, կատաղութեան, գեղնոյ խածուածքին, և այլն դէմ փորձուած մասունք մը. այլուր ապարանջան մը, որ անհատատարիմ կնոջ բազուկը այնքան ուժգնութեամբ կը սեղմէ՝ որ ցաւէն աղաղակելու կ'ստիպուի. և կամ միտալ մը, ի՛նչ հաղուագիւտ դանձ, որ ամենէն փոփոխամիտ էակն իսկ հաստատամտութեան կ'ստիպէ. 'ի մի բան բնաւ անհնարին բան չ'կար յուռութի մը համար այն երջանիկ

օրերն, յորում դիւաց, պարկաց, յուշկապարկաց, դիակերաց և այլ այս տեսակ մտացածին էակաց զօրութեան կը հաւատային մարդիկ։

Կայր վստահութիւն մը վայելող անթիւ անհամար հմայեկաց մէջէն՝ այնպիսիները կային որք տարօրինակ անուններ ունէին. ինչպէս Սողոմոնի անբակը, Սրբոյն Ժընուի կողփոցը (*), Սրբոյն Ֆրանչիսկոսի պորտը, Սրբոյն Կինեօլէի առնի անդամը, և այլ այսպիսի խել մը անուանք, զորս մեր ամօթխածութիւնը չընդերեր մի առ մի յիշել։ Երբ լսատուն Պ. տը Նօայլ Սուբզ Պորտի նչխարն բառնալ ու կրակը նետել տուաւ, ճշմարիտ ապստամբական խռովութիւն մը եղաւ Շալոն քաղաքին մէջ. բայց բազմահմուտ եպիսկոպոսն չուտ մը հանդարտեցուց զայն՝ Շալոնցւոց հասկցնելով թէ ո՛րչափ ծաղրելի բան էր այսպիսի անուանակոչութիւն մը։

Կը մնայ արդ մեզ Լամոթ լը Վայէրի հետ եղրակացնել. «Թէ մարդս այնքան դիւրահաւան կենդանի մ'է, որ ամենամեծ սուտերնէն իսկ հաւատացնելու համար՝ բաւական է միայն զանոնք ըսելու կամ գրելու յանդգնութիւնն ունենալ։» Եւ դարձեալ խորհելու աբսեթոպէն հեղինակին հետ. «Թէ չ'կայ վարդապետութիւն մը, որքան անհեթեթ ալ ըլլայ, որ իրեն յարողներ չունենայ. թէ չ'կայ ժողովուրդն խաբել ուզող պռոտոտաօս մը, որ անպատճառ չ'գտնայ այնպիսի

(*) Տիզ գափաղը։

անձինք, որք խաբեբայութեան առարկայ ըլ-
լալնուն վրայ խիստ դոհ ըլլան. ամենէն ծաղ-
րելի յիմարաբանութիւնք ալ ամեն առեն կը
դանեն այնպիսի մարդեր՝ որոց կարողութեանը
կատարեալապես կը յարմարին։»

Ս.յս առղ ընթերցողին քիչ մը զուարճու-
թիւն պատճառելու համար՝ որ անշուշտ այս եր-
կար թուարկութենէս ձանձրացած է, յիտապայ
դեպքը յիշեմք, զոր ուղիղ դատողութեան տէր
հետեւաբար անճոռնի արարողութեանց թշնամի
մէկը, Հայր Թիէր, կը պատմէ։

«Լուվէնայի պառաւ կին մը կար՝ որոյ աչ-
քերն միշտ կարմիր և բժժալից էին. ասոր հա-
ւատացին որ՝ եթէ վրան կրնալու ըլլար երեք
խորհրդաւոր խօսքեր, որ բժժոտ աչքերն մա-
քուր և փայլուն դարձնելու զօրութիւնն ունէին,
այն ախտէն դիւրաւ կ'ազատէր։ Կինը զայս լը-
սելուն՝ անմիջապէս դնաց իւր մէկ ճանչցած ե-
րիտասարդ դպրոցականն դտաւ, և վարձատրու-
թիւն մը խոստացաւ անոր՝ եթէ իւր գրուցելիք
երեք բառերն թղթոյ մը վրայ գրել յանձն
առնուր։ Ջարտճճի պատանին հաւանեցաւ, պա-
ռաւին տուն տալովը գրեց, և թուղթը կնքած
անոր յանձնեց, բայց ապսպրելով իրեն որ մինչև
որ չբժշկուի չբանայ զայն։ Բժանի պառաւը
խոստացած վարձքը տուաւ ու գնաց։

Քիչ մը առեն վերջը իւր բժալից և չառա-
դուն աչքերն կը բժշկուին։ Իւր այսպէս բժըշ-
կուելուն վրայ ուրախութենէն ինքնիւրմէ դուրս

ելած՝ իւր դրացուհւոյն պատմեց այս բանս, ո-
րոյ աչքերն իրենին վիճակին մէջ կը դտնուէին։
Դրացուհին փութաց թուղթը վիզը կապեց, և
քանի մը ամիս փորձելէ ետքը նմանապէս բը-
ժշկութիւնը դտաւ։ Ս.յս յաջողութեանս վրայ
խնդութեամբ լցուած՝ երկու պառաւներն դաղա-
նիքն լինչ ըլլալը հասկնալ ուզելով թուղթը բա-
ցին. բայց ի՛նչ տեսանեն ալեկ հոն . . . Սա հե-
տեւեալ պարբերութիւնն, զոր չարաճճի պատ-
կերաքարը իրմէն խնդրուած երեք բառին տեղ
գրել էր. «Ստամնայն երկու աչքերդ հանէ՛»,
դարշելի վհուկ, և երկու քակորն կատղած լսէ՛
զանանք։»

Ս.յս դլուխս կ'աւարտեմք խիստ փոքրիկ հա-
տուած մը մէջ բնթերցով այն սրտոց կարդն ան-
ցած մարդկանց ցանկէն՝ որոց հոգևնաւորու-
թիւնն ու օգնութիւնը կը հայցէին առեն մը մար-
դիկ՝ կենցաղավարութեան դանազան պարադա-
յից մէջ։ Վասն զի ո՛չ միայն մեն մի միաբանու-
թիւն, մեն մի արհեստաւորաց ընկերութիւն,
մեն մի ժողովրդոց դաս իւր պաշտպան սուրբն
ունենալ կուզեր, այլ և իւրաքանչիւր մարդ,
իւրաքանչիւր կին, իւրաքանչիւր տաւադար ի-
րեն պաշտպանն ունենալ կը ցանկար։ Վերջա-
պէս այս յիմարութիւնս այն առեմնան հասաւ,
որ ամենէն անառուրը կենդանեաց ալ մէկ մէկ
պաշտպան սուրբեր հնարեցին։ Հարցո՛ւ բարե-
միտ կնոջ մը թէ խոզերը պաշտպանողը ո՛ր
սուրբն է. առանց վարանելու պիտի պատասխան
տայ քեզ. Սուրբն Անտոն։

Սուրբ Իվ պաշտպան փաստաբանից։

Ս. Եւստաքէոս, պաշտպան Դատաստանական դործակալաց (*)։

Ս. Բենեդիկտոս, պաշտպան Նօտարաց։

Ս. Բասիանոս. պաշտպան Ս.տեֆնադպրաց։

Ս. Թոմաս, պաշտպան Քարտուղարաց։

Ս. Ղուկաս, պաշտպան Նկարչաց։

Ս. Լէոնարդոս, պաշտպան Փորագրաց։

Ս. Սեբաստիանոս, պաշտպան Փերեղակաց։

Ս. Պանդալէոն, պաշտպան անդրավարտիք և ձեռնոց չինողաց։

Ս. Շէֆ, պաշտպան Խոյրադործաց։

Ս. Պնէ, պաշտպան Գլխարկավաճառաց։

Ս. Քրէբէն և Ս. Քրէբինան, պաշտպան Մուճակադործաց։

Ս. Եղովա, պաշտպան բոլոր մետաղային նիւթերու վրայ բան բանողաց։

Ս. Ֆիլաքը, պաշտպան Պարտիզպանաց։

Սրբուհին Լիւչիա, պաշտպանուհի Կառավարաց։

Ս. Վիչենցիոս, պաշտպան Ս.յդեսպանաց։

Ս. Բարթուղիմէոս, պաշտպան Խաղախորդաց։

Ս. Ս.թանաս, պաշտպան Սուրհանդակաց։

Ս. Եւստաքէոս, պաշտպան Պանդոկապետաց։

Ս. Սեդբեստրոս, պաշտպան Գինեվաճառաց։

Ս. Յովսէփ, պաշտպան Ս.տաղձադործաց։

Ս. Դրիդոր, պաշտպան Որմաշինաց։

(*) Procureurs.

Ս. Միքայէլ, պաշտպան Հացադործաց։

Ս. Պլանշար, պաշտպան Լուացարար կանանց։

Ս. Լիէնարդոս, պաշտպան Բանտարկելոց։

Սրբուհին Պարպէ, պաշտպանուհի Չինադործաց։

Ս. Կիւբ, պաշտպան Մոմավաճառաց։

Ս. Յուդ, պաշտպան Խոհակերաց։

Ս. Վիքթոր, պաշտպան Ջաղացպանաց։

Ախտաժէտք նաև այլևայլ պաշտպան սուրբեր յօդնուվիւն կը կարդային իրենց ախտերէն ազատելու համար։

Գոնչերն սուրբ Էյնեանը յօդնուվիւն կը կարդային։

Բորտոներն՝ Սուրբ Ղազար։

Ծիւրական ախտիւ վարակեալները Ս. Պօնիֆաչիոյ։

Սաստիկ դեր եղողներն, Սուրբ Լեգեր։

Կոյրերն, Սուրբն Տովբիտ։

Միականիներն, Ս. Բէբր։

Կաղերն, Ս, Կղոդիոս.

Ջրդողեալներն, Սրբուհին Եւտրոպէ։

Լուանոաններն, Ս. Յովհաննէս։

Նեխեալ մարդիկ, Սուրբ Յովբ։

Յոդացաւ ունեցողներն, Սուրբ Ժընու։

Խուլերն, Սուրբ Ուան։

Ժանտախտիւ վարակեալներն Ս. Րոք։

Սպասաւորներն, Սուրբ Բլա։

Ս. Քլու արիւնալից պալարները կը բժշկէր։

Ս. Մէտար, ակռայի ցաւերը կը բժշկէր։

Սրբուհին Ս.վոյէ աչքի ցաւերը կը բժշկէր։

Ս. Ֆիաքր տեռատեսութիւնը կը բժշկէր։

Ս. Ֆոր ակարութիւններըը կանցնէր։

Ս. Մատուրինոս յիմարութիւնը կը բժշկէր։

Ս. Կալ մորթոյն վրայ եղած խաղաւարտներն կը բժշկէր։

Ս. Մամաը ստեանց ցաւերը կը բժշկէր։

Ս. Մարքու կոկորդի ցաւերն կը բժշկէր։

Ս. Ուէն, ականջի եռևը եղած ուռեցքներըը կը բժշկէր։

Ս. Յերոնիմոս անմարսողութիւնը կ'անցնէր։

Եւ բարեմիտ սուրբն Ս.կաբէ, Հռովմայեցւոց Բռնէ՞ն ասատուծոյն պէս, փքաբեր վորի խիթերն շառաչմամբ դուրս կը վանէր։

Ս.յս ժողովրդական հաւատալիքներս, որքան ալ տարօրինակ էին, դարերով դիմացան՝ զանոնք իբր իրաւ կրնեցուներլու մէջ չահ ունեցողաց զօրաւոր օգնութեան շնորհիւ։ Վա՛յ անոր որ ծաղրելու համարձակէր այս բանս։ Բայց յուսկ ուրեմն եկաւ այն օրն՝ որ հաւատք ցըրտացան. բժժանք, յուռութք եղլք՝ ամէն մարդկային ձեռագործ իրաց բաղդն ունեցան, այսինքն հինցան. մինչև այն ատեն չարաչար գործածուած ըլլալնուն համար բոլորովին յարդերնին կորուսին, և ժողովուրդք, բանաւորութեան լուսովն լուսաւորուելով, վերջապէս ծիծաղիլ սկսան անոնց վրայ։ Իրաւ է որ տակաւին կը գտնուին չարլաթաններ, որք ժամանակ ժամանակ՝ հրաշալի կերպիւ վերագտնուած բըժ-

ժանքի մը գործութիւնն պատմելով՝ տակաւ երեւակայութիւններն ու դիւրահաւան մտքերն պաշարել կըջանան. բայց ժամանակս գնչ ժամանակ է. ամենուրեք յուսահատեցուցիչ անհաւատութիւն մը կը տիրէ։ Ս.յս օրուան օրս միայն մի քանի բարեմիտ պառաւ կանայք, և թանձրամիտ մի քանի չինականք թերևս հաւատան այնպիսի չնչին նիւթոց մոգական ազդեցութեանց։

ԳԼՈՒԽ ԻԶ.

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Երեւակայութիւնը, այն կարողութիւնն զոր ունի մարդ զգալի առարկայներն մտօք աչացն առջեւ բերելու, եւ նոցա պատկերքն ըստ հաճոյս փոփոխելու, անժխտելի է որ իւր բարոյական կարողութեանց ամենէն ճոխն եւ ամենէն ընդարձակն է։ Ճիշդը խօսելով, երեւակայութիւնը բան մը չ'ստեղծեր. վասն զի ինքն միայն զգացմանց արձագանգն է. բայց այնքան զանազան եղանակներով ընդունած տպաւորութիւնքն յիրար կը խառնէ, եւ երբեմն ալ իւր աստանդական արշաւանացը մէջ՝ մեր մեկնած կէտէն այնքան հեռու կը վարէ զմեզ, որ կրնամք զինքն մտացածին ստեղծմանց մայրն համարիլ։ Ա.րդարեւ երեւակայութիւնը առարկայից այնպիսի երանգներ եւ մեծութիւններ կուտայ, որք իսկապէս այն առարկային վրայ չ'կան. զանոնք կը մեծցնէ կամ կը փոքրացնէ. հաղարաւոր լուրջ, ծիծաղական, ճչմարիտ, սուտ, կանոնաւոր կամ այլանդակ ձեւերով կը զարդարէ զայն. բանաւարութիւնը կը խեղդէ, բնութեան օրէնքներն ամենեւին առոչինչ կը դրէ. կարելոյն սահ-

մաններէն անդին կ'անցնի, եւ շատ անգամ սըտութեանց օթեւանն կ'երթայ կը մոլորի։

Սովորաբար մանկութեան առենն է որ արտաքին տպաւորութիւնք աւելի սաստիկ, աւելի ազդու կըլլան, եւ երեւակայութիւնը ամեն առենէ աւելի զարգացեալ վիճակ մը կ'ստանայ։ Ա.յն հասակին մէջ բանաւարութեան ջահն չ'վառիր տակաւին, մինչդեռ երեւակայութեանը, ընդհակառակն, իւր ամենէն փայլուն լուսոյն կը փողփողէ։ Մանուկը ամենայն ինչ իբր ստոյգ կ'ընդունի, իրաւը, սուտը, կարելին, ինչպէս նաեւ անկարելին. ձեռք կուտայ որ իւր զարմանքը դրաւէ։ Բոլոր այն պարեկաց, ոգւոց, ճեւէղկաց, ճիւաղաց կ'լսէ. առասպելները իւր հետաքրքրութիւնը կը գրգռեն, իւր հրաշալեղէն մասին ունեցած սէրը կ'արծարծեն, եւ դիւրահաւանութեան յօժար կընեն զայն։ Նա հաճոյք կ'զգայ այդ առասպելաց պատմութիւնքն լսելով, մեծաւ փափագանօք զայնս 'ի միտ կառնու, իւր բնաւորութեանն կը յարմարէ, կ'ընդլայնէ, եւ իւր երեւակայութեանն համաձայն ձեւեր եւ դոյներ կուտայ անոնց։ Ֆիզիքական աշխարհն իրեն համար բան մը լսել չ'ըլլար, վասն զի ամենայն ինչ բնական կերպիւ տեղի կ'ունենայ անդ. մինչդեռ առասպելաց աշխարհին մէջ ամենայն ինչ հրաշալի է։ Նոյնպէս քանի երեւակայութիւնը գօրութիւն ստանայ՝ իւր բանաւարութիւնը կը ծիւրի, կը դանդաղէ, եւ անկման վիճակին հասնելուն՝ վերջապէս կը հաւատայ այն՝ամեն այլանդակու-

թեանց, որով մանկութեան առեն իր միտքը անած է։

Ասպաքէն ընթերցողն դիւրաւ կրնայ ըմբռնել որ՝ երբ անդամին՝ի մանկութենէ այս օրինակ ուղղութիւն մը առնու դաստիարակութիւնն, բուռն սէր մը կ՝ապդէ մարդոյն առ հրաշալին և գիւրահանութեան և մելամաղձութեան կը վարէ զնա։ Եւ արդարև հրաշագործք, որ այս ակզբամբ ճանապարհ կ՝ելլնէին, կըսէ Պ. Սալվէրդ, բնաւ զերևակայութիւնն անդորձ չէին Թողուր. ամէն դրեթէ ամբողջ դաստիարակութիւնը իրենց ձեռք առած էին, և այս կերպիւ աչքերն ինչ որ ալ ըլլայ՝ տեսնելու, ականջներն ինչ որ ալ ըլլայ՝ լսելու, և միտքերն ինչ բանի որ ալ ըլլայ՝ հաւատալու կանխաւ պատմադիր կընէին։

Մարդոյն խառնուածքին և ազդող պատճառաց համեմատ՝ երևակայութիւնը կը բարձրանայ և զանազան աստիճաններէ կանցնի. պարզ զրգռութենէն սկսեալ մինչև զառանցանքն, և անկից ալ մինչև յիմարութիւնը։ Իսկ սոցա մէջ սեղ գտնուած աստիճաններն են հայեցողութիւն (1), բորբոքումն երևակայութեան կամ անչափ եռանդն (2), հիացումն կամ մտաց յափշտակութիւնն (3) և յարթիւնեղութեան ուսկից անդին խելայեղութիւնն է։

(1)Contemplation. (2)Exaltation ou enthousiasme. (3) Extase.

կան անշարժութեան վիճակ մ՝է, որոյ միջոցին դուրսէն եկած որևէ զգայողութիւն կը դադարի։ Հայեցողին այս վիճակն կ՝առանձին կամաց զօրութեամբն, և որ և է արտաքին խթանէ զգուշանալով. ասոնց պատմութիւնն միանգամայն տարօրինակ և անհետաքրքիր վարուց նկարագրութեամբ լի է։ Այս հայեցողականաց շատերն տան մը մէջ բաղմաթիւ տարիներ անցուցած են, առանց չորս կողմերնին գտնուած անձինքն ո՞վ են՝ ճանչնալու. ոմանք ճահիճ մը, վտակ մը կ՝անցնէին, առանց դիտնալու թէ ուսկից կ՝անցնին. ուրիշներ ալ քաղաքի մը փողոցներուն մէջ կը մոլորէին, առանց կասկած անդամ ունենալու թէ քաղաքի մէջ են մտել։

Մտաց ամփոփման և հայեցողութեան իբր խիստ զարմանալի օրինակ՝ երիտասարդ արհեստագիտի մը պատմութիւնը կը յիշեն, որոյ միտքն դիւցաբանական առասպելք ա՛յն աստիճան զբաղեցուցել էին, որ ինչ բանի որ երևակայութիւնը ըստ հաճոյս ցանկանալու ըլլար, իբր աչաց առջև կը տեսնէր զայն։ Ամբողջ ժամեր դաշտօրէից մէջ նստած՝ անշարժ կը կենար, աչերն երկնապիշ և ալևս հոգւոյ կենօք միայն ապրելով։ Անճառելի պանչայում մը կ՝զգար ամպոց անցնիլը տեսնելով, որոց մէջ հաղարաւոր հրապուրիչ բաներ կը նշմարէր։ Մերթ հոյաչէն պալատներ արծաթեայ և ոսկեզօծ չքնաղակերտ սիւներով. մերթ տաճարներ, յաղթական կամարներ, և ճարտարապետական ամէն պերճու-

թեամբ զարդարեալ փառայեղ չէնքեր։ Ուրիշ անդամներ՝ ամպերն աչացը կը ներկայացնէին լուռումունջ ծով մը, որոյ երեսէն կը սահէին կ'անցնէին այլեւայլ մեծութեամբ, այլեւայլ ձեւերով նաւեր ու դեղատեսիլ նաւակներ, և սոցա կը հետեւէին կարապք ձիւնաթոյրք և աղկիոնք թեթեւասլացք, որք թեւերնուն ծայրին ծովուն անշարժ մկանունքը կը ծեծէին։ Ա.սա Սիկղոպք անդադար կռանի հարուածներ կ'իջնէին Հեփեստեայ սալին վրայ. անդ յաղթամարմին, քաջաբաղուկ Տիտանեանք լեռներն տեղերնուն կը խլէին, և զանոնք իրարու վրայ կը դնէին մինչև երկինքն հասնելու համար. բայց Ս.րամադդայ չանթիքն նոյն պահուն եթերական կամարն կ'ակօսէին. լեռներն դարձեալ իրենց վրայ կ'ընկնէին, և 'ի պատիժ իրենց սրբապիղծ յանդգնութեան՝ կը ջախջախէին զանոնք։ — Դոյզն ինչ աւելի հեռուն կը տեսնուէին ակնազուարճ բլուրներ, որոց դեղափայլ եղերքն կապուտակ յատակի մը վրայ կը դծագրուէին, և զանոնք չորս կողմէն ողղոզ ոսկեճաճանչ ճառագայթք հմայական բնութիւն մը կը ներկայէին գոգցես մարդոյն աչաց։ — Դարձեալ տեսարանը կը փոխուէր. խաեալ գոլորշիք նահմանուեր դոյն մը կ'ստանային. ահագին ամպ մը հորիզոնէն յառաջ կուգար, և չուտ մը համօրէն հաստատութեան երեսը կը ծածկէր, չղթայաձեւ հողմուն կը սուլէին, փայլակը կը ցոլար, և որոտման ձայնն ղերկին ու ղերկիր իւր ահեղ

ղաղուցթ դանդիւքն կը թնդացնէր, կայծակը ամեն կողմէ կը զարնէր, մերթ կարմիր, մերթ կապոյտ. որոտմունք այնքան ուժգնութեամբ կը կրկնուէին որ երկիրս 'ի խորոց դոզցես կը սարսէր։ Ինչ մը վերջը փոթորիկը կը խաղաղէր, երկոյեան սիւքը ամպերն կ'առնուր կը տանէր. կապոյտ երեան կ'երեր անոնց մէջ տեղերն, և յուսկ ուրեմն հանդարտութիւնը կը վերադնէր երկնային դաշտին մէջ։ Ս.ր հեստապէտն դարձեալ յանկուցիչ պատկերներ, երջանկութեամբ և սիրով զառանցել տալու չափ դեղատեսիլ ձեւեր տեսնել կը կարծէր։ Նայիս Մուսայք իրենց միանգամայն աղնիւ և հմայիչ պարը կը բոլորէին. առ երի նստած էին Շնորհք՝ իրենց տարփատենչիկ դրիւքն։ Խուն ինչ հեռուն Ա.ստղիկ բազմած էր՝ իւր դեղեցկութեամբն զմարդ յափշտակող արքունեացը մէջ տեղ. համայն հեթանոս աստուածութիւնք իւր աչաց առջև կուգային, Ալիմպիական ոտնից առեներան պէս զարդարեալ։ Բայց բաբէ, արեգակը վաղ իսկ անհետ կըլլար, գիշերը կը հասնէր, և իւր վերարկուին մէջ կը փաթթէր այս ինքնիւրմէ դուրս եղած երեւակայութեան մը հաղարամիկ մտահաճութիւնքն։ Ա.ւե՜նայն ինչ կը չինջանէր . . . . և արհեստապէտն տունը կը դառնար սիրտը այս հրաշալեաց յիշատակօքն զեղուն, և հետևեալ աւուր կ'սպասէր որ դարձեալ վայելէ զայնս։

ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ(*)։ —

(*) Exhaltation.

Ամեն ինչ որ ջայլին դրութեան և մանաւորապէս ուղեղին գրգռութիւն կը պատճառէ, բոլոր ինչ որ արեան շրջանին տալի ստատիկ արագութիւն մը կուտայ, և ընդհակային արեան առաւել մեծ քանակութիւն մը դէպ՝ ի գլուխը կը վարէ, եթէ այդ քոքուռան կամ անջէ եռանդ ըսուած ջլային վիճակին յառաջ կը բերէ:

Հրաշագործ մարդոյս բնական կազմութիւնն յանչափս գրգռելու համար՝ հաղարաւոր միջոցներ դիտէին. Մոգական գեղեցկութեան մէջ նշանակուածներէն՝ ի զատ՝ բարոյական ազդեցութիւններն ալ՝ ի գործ կը դնէին. զոլորմնակ յոյսն, երկիւղն, սոսկումն, բարկութիւնը, եռանդն ալլն. զորս ի՛նճեցնէին հրաշալի պատմութեամբք, հմայական տեսարանօք և այլ նմանօրինակ խաբեբայութեամբք, և այս ջնջանքն հրաշից միշտ փափագեալ հետեանքն ձեռք կը բերէին:

Երևակայական բորբոքումն երկու տեսակ կըլլայ. մին՝ մխիթարական յուզմունք կոչուածն, հրաշալի պատմութիւններէն, ճշնաւորական ընթերցուածներէն և հայեցողութիւններէն, ուրիշ կեանքի մը գերազոյն վայելից բուռն ակնկիռն, ի մի բան կրօնական մոլեռանդութիւնէ կը պատճառի: Ա. յս երևակայական բորբոքումն տարտղնոխկ կը դառնայ, և բաղմից մեծամեծ աւերմունք գործած է ազգաց և ժողովրդոց մէջ: Նա՛ է որ Տեքվնեբն, Ցուէրնեբն (1), Սանիններն (2),

(1) Մուրատի ճշնաւորք հնդկաց: (2) Տեսակ մը աերվիչք:

Պանչեն (1), Թուլքեռնիներն (2) և այլ արևելեան մոլեռանդներն կը զօրացնէ՝ երևոյթ յիմարական արարմանց և միանգամայն տարօրինակ և բարբարոսական վարժից մէջ: Մերթ կը տեսնես այս ախմաբներս՝ որ ամենևին անկարեկիր՝ սոսկալի տանջանքներ, անլուր խաչատանգանք կը կրեն. թևերնին խաչաձև կամ միայն մէկ արուեստուն վրայ՝ ամիսներ, ամբողջ տարիներ կը կենան. մերթ ոտուընին կասկարայի վրայ այրել, ձեռուընին կուրծքերնին խորտվել կուտան, և ուրիշ անպատմելի ալ հանդերձեալ կենաց մէջ վարձք մը ստանալու ակնկալութեամբ՝ ինքզինքնին իրենց կուռքին կատարը անիւներուն ներքև չախչախել կուտան: Յունաց մէջ Կոդրոսի և Հռովմայեցւոց մէջ Դեկիոսի՝ հայրենեաց փրկութեանն համար վճիռ մը խորը գահավիժիլն, Միխթիոս Սկևվոլայի ձեռքը հրավառ վառարանի մը մէջ մխելն՝ սխալ հարուած տուած ըլլալուն համար պայն պատժելու միջոք, Ամպրակոյի Կղեոմբրոտայ ինքզինքն աշտարակի մը ծայրէն վար ձգելն, Եգեսիաս իմաստասիրին աշակերտայ՝ հոգին անմա՞հ է թէ չէ՝ չուտ հասկնալու համար ինքզինքնին ծովը նետելն, սոքա ամենքն ալ երևակայական բորբոքման կամ տարապայման եռանդեան օրինակներ են:

Բայց ամենէն աւելի, կրօնամոլ եռանդն է՝

(1) Կրօնաւորք չինաց կամ ճաբոնաց:
(2) Տեսակ մը մաբոյիկ կրօնաւորք ի Հնդկաստան:

որ գմարդ ամենաանհաւատալի և ամենաիմաստ-
ժային դործոց կը մղէ՝ թէ՛ իւր անձին և թէ՛
այլոց դէմ։ Ա՛յս եռանդս էր որ անցեալ դա-
րուն այնքան զոհ տարաւ, և թէև մեր դարուն
լուսաւորութեանն առջև իւր առաջին զօրութե-
նէն ընկած է, բայց և այնպէս ժամանակ ժա-
մանակ կը զարթնու, և ա՛յնպիսի դործոց պատ-
ճառ կըլլայ՝ որ մարդոյս սարսուռ կ՛ազդեն։
Չեւեհաւ եղելութիւնն, զոր Վենետկոյ Ռիւկ-
ճիերի բժիշկը հրատարակած է, սորա ապացոյցն
կրնայ տալ ընթերցողին։

«Մաթէոս Լովա, մուճակադործ ի Վենե-
տիկ, բնապէս տկարամիտ, տռակալի կերպիւ մը
ինքզինքն ծայրատեց և վերջն ալ ինքնիրեն
կապեց. աստղ վրայ առանց վտանգ մը պատա-
հելու, շատ չ՛անցաւ առողջացաւ։ Քանի մը ա-
միս անցնելէ վերջը, միշտ միտքերնուն վրայ
վարաց ազդեցութեան ներքև, միտքը դրաւ
թէ՝ Աստուած խաչի վրայ մեռնիլ հրամայել
էր իրեն. ուստի երկու տարի շարունակ իւր
մոքին դրածը միայնակ ի դլուխ հաներու մի-
ջոցներուն վրայ խորհեցաւ, և ինքն իւր ձեռօքը
կերտեց իւր չարչարանաց գործիքներն։ Օրը
հասնելուն՝ Լովա դլուխը փշէ պսակ մը կը
դնէ, զոր դանկին մաշկին մէջ կը մղէ. փորին
վրայ կարմիր թաշկինակ մը կը փաթթէ, մինչ-
դեռ մարմնոյն մէս ամեն կողմը մերկ է. այս-
պէս պատրաստուած՝ խաչափայտին մէջտեղը կը
նստի, ոտքերն իրարու վրայ խաչաձև կը դնէ,

և վեց մատ երկայնութեամբ բևեռ մը կ՛անցնէ
անոնց մէջէն, զոր մրճի հարուածներով ներս
կը մխէ։ Ա՛պա երկու ձեռքերուն մէջէն եռաէ
եռաև երկու ծայրատուր դամեր կանցնէ՝ դամե-
րուն դլուխներն դետնին զարնելով, և իւր այս-
պէս ծակուած ձեռքերն կը բարձրացնէ կը հաս-
ցընէ մինչև ա՛յն ծակերուն բերանը՝ զոր առա-
ջուց պատրաստել է խաչին կրկին թևոցն վրայ,
և որոց մէջ կանցնէ դամերն, որպէս զի ձեռ-
քերն հաստատ մնան։ Ա՛յ ձեռքն բևեռելէ յա-
ռաջ ալ զմեխով մը ձախ կողին վրայ վերք մը
կը բանայ։ Երբ իրեն այնպէս կը թուի որ իւր
խաչելութիւնն ա՛լ բոլորովին ճիշդ նմանն է
Քրիստոսի խաչելութեանը, կանխաւ պատրաս-
տեալ պարաններու և մարմնոյ չարժմանցն օգ-
նութեամբ խաչը պատուհանէն դուրս կը սահե-
ցընէ, և այսպէս տանը ճակատուն վրայ առ
կախեալ կը կենայ։ Լովա մինչև հետևեալ ա-
ռաւօտը՝ առանց բնաւ հաւաչանք մը արձակե-
լու, առանց ցաւակրութեան ամենափոքր նշան
մը ցոյց տալու, սոյն դրիցս մէջ մնաց։ Ա՛ռա-
ւօտուն լուանալու միջոցները մի քանի դործա-
ւորք տեսնելով՝ փութացին խաչէն վար առին
և հիւանդանոց տարին զայն։ Լովայի վերքերն
բժշկուեցան, բայց իւր ցնորումը վրան մնաց.
և իւր խոստովանահօր աղաչանացն ու սպառ-
նալեացը հակառակ՝ խիստ ծանրախոհութեամբ
ինքզինքը ծիւրեց, և վերջապէս անսուաղ մեռաւ։»

Երևակայական բորբոքման միւս տեսակին

մէջ՝ ուղեղն և համօրէն դղեակականութիւնը միանգամայն կը դործեն. և որովհետև այս տեսակ բորբոքումս իրմէ բխեցուղներն սոսկալի չափազանցութեանց կը մղէ, կրնամք զայն անուանել Մարդաեղաց բորբոքումն երևակայականի: Սրդարև այս դասէն եղողք ա՛յլ ևս սանձ ի՞նչ է՝ չ'են դիտեր. դէմքերնին կը բորբոքի, աչքերնին հուր կը ժայթքէ, մոլեգնութիւն ու կատաղութիւն կուդայ վրանին. և այս բանս դուրսէն ալ կը տեսնուի չլաճգական չարժուձևներնէն, ակռայներնին կճրաեղնէն, դազանի նման ձայները արձակելնէն և մոլեգին կաղուց քներնէն:

Թրակիոյ Ապանդարամեսական քրմանոյշք(*), որք Որփէոսն սպաննելնուն վրայ դոհ չըլլալով՝ նորա մարմինը բզքտեցին, և անոր վերմաչիրմ անդամներն Հրոտոսի լերին վրայ ցրուեցին, այս մարդախոշոշ երևակայական բորբոքմանս են թակայ էին: — Պրոէտոսի դստերքն՝ որոց հանականաբար լինչ լինչ դեղեր խմցուցել էին՝ այնքան մոլեգին երևակայական բորբոքմանէ մը բռնուեցան, որ ամեն պարկեշտութիւն մոռնալով՝ բոլորովին մերկանդամ և ղօրէն վազելով՝ սկսան երկրին ամեն կողմը վազել. ուր ուրեմն տեղացիք յայղողեցան, բայց ոչ առանց դժուարութեան, զանոնք նուաճել, և հրաշագործաց տուած մէկ ըմպելիքն բոլորովին առոզջացոյց զանոնք: — Հին Ականտինաւեանք

(*) Bacchantes ou Menades.

բարկ դարձղոյ մը միջոցաւ երևնց առաջային եռանգն կը բորբոքէին՝ մինչև ցնորական կատաղութեան հասնելու աստիճան. կինդանի էակք, անզգայ նիւթք, լինչ որ դիմացնին եղնէր՝ զինուք կը հարուածէին. կատաղութենէն սրերնին կը բաղխէին կը կոտրէին այն պատուարաց դէմ, ուսկից չէին կրնար վեր եղնել. խարոյկները կը կընէին, և ինքզինքնին բոցերուն մէջ կը նետէին. բայց այս մոլեգնական թափս անյանելուն պէս՝ ինքնիրենց վրայ կը կքէին, և որքան աւելի երկարատև և բուռն եղել էր զրգռութիւննին, այնքան ալ ակարութիւնն ու ջլատութիւնն՝ որ այնմ կը յաջորդէր՝ աւելի ծանր կըլլար: — Նմանապէս Հոնք պատերազմական երգերով, զինուց չառաջմամբ և զոհից ճենճերոյն հոտովն ինքզինքնին կը զրգռէին. ա՛լ մարդոյ չէին նմաներ, այլ արեան և նախճիրի ծարաւի վագրեր ու մոլեգին գազաններ կը դառնային՝ որ ամենայն լինչ որ դէմերնին եղներ, տղայ, կին, ծեր կը խողխողէին: — Դարձեալ՝ վայրենի ազգերն ընդհանրապէս երբ զերար մարդասպանութեան ու մարդակերութեան զրգռուին, արբ և կանայք բոլոր ուժովնին կ'ուռնան՝ նախճիր գործելու զրգռութեան համար. տեսակ մը կատաղութիւն կուդայ համօրէն ցեղին վրայ, որ սոսկալի հոգւոյով մը սպանմանց նշանը կուտայ: — Ովկիանիոյ վայրենին՝ պատերազմի մէջ գերի բռնուելուն՝ զինքը մաղմաղ կրակի վրայ խորովելու հետ եղող յաղթողն՝ անլուր անագորոյնութեամբ մը կը թշ-

նամանէ. «Ես քու հայրդ կերել եմ, կը պոռայ անոր, ես քու որդւոյդ արիւնը խմել եմ իրենց մօրը դանկին մէջէն, և դեռ ալ կը լափէի եթէ բադը քաջութիւնս չ'մատնէր։ Ես քու տուած չարչարանացդ վրայ կը խնդամ, և քեզ կըսեմ որ՝ եթէ կարող ես՝ ցաւոյ հատուցանք մը արձակել տուր ինձ. դիս լափող բոցերուն մէջ տեղէն մահուան երգս լսէ. ես յաղթող կը մեռնիմ, վասն զի քու կանգնած փայտակուտիդ վրայ խնդացի»։ Ս. յս ցաւոց արհամարհանքս կամ մանաւանդ այս ֆիզիքական անզգայութիւնս, խիստ զարմանալի և նշանակութեան արժանի իրողութիւն մը չէ՞։ — Սա մոյէանները, Զուչինները, և այլ բևեռական ժողովուրդք ամենափոքր սրտայուզութենէ մը մղեցին երևակայական բորբոքումն մը կ'ղդան։ Ոգելից ըմպելեաց և ինչ ինչ բաղադրեալ օշաբակաց չափազանց կիրառութիւնն՝ բանաւարութիւնին կորսնանել կուտայ անոնց, և այս վճակին մէջ սոսկալի կատաղութեամբ մը կը յուղին. զէնքերնին առնելով՝ ժամանակաւ ոխ պահած անձերնուն վրայ կը խոյանան, և եթէ չկրնան անոնց հասնիլ կամ զարնել զանոնք, դեռին կը զլորին և կատաղեաց նման կ'որոնան։ — Սովորաբար երևակայական բորբոքման մէջ է որ՝ վայրենի ազգերն քաջասրտութիւն և մահուընէ չվախնալ կը փնտռեն։ — Վերջապէս բոլոր այս տեսակ եղելութիւնք կ'ապացուցանեն որ՝ մոլեռանդից դասուն մէջէն, որոց ե-

բևակայութիւնը պաշարեալ է կանխաւ, կ'ենեն մեծ սճրագործք ու սրբապասպանք։

ՀԻՍՅՈՒՄՆ ԿԱՄ ՅՕԹՏՍԿՈՒԹԻՒՆ, ՄՏՍՅ(1)։ — Հիացումը կամ երևակայական բորբոքման երրորդ աստիճանը՝ կը պատճառի դադարի մը սաստկութենէն, որ այնպէս ուշադրութիւնը բոլորովին յինքն կը դրաւէ՝ որ դժբայարանք վայրկենական անգործութեան մը կը հանդիպին. կամայական շարժուձեերն առ վայր մը կը դադրին, և նոյն իսկ կենսական գործողութիւնն կը յամրանայ. կամ աննկ ըսեմք. հիացումն հոգւոյն մեկ յափշտակութիւնն, անճառելի երանութիւն մ'է՝ խորին խորհրդածութենէ մը, կամ սրտին անդադար դէպ 'ի գմայլական կամ աստուածային նիւթ մը զդացած սաստիկ եռանդէն յառաջ եկած։ Զ'է եղած թերևս հեղինակ մը՝ որ աւելի լաւ կերպիւ նկարագրած ըլլայ հիացումն քան զՎրքուհին Թերեզա. «Հոգին ցանգ մտրմիէն անկաստելու, և դէպ 'ի Աստուածութիւնն բարձրանալու վրայ խորհրդածելով՝ մտաւորական կարողութիւնք տարապայման զարդացումն մը կ'ստանան, և այնպէս կը հասնի մարդ այն երկնային հոգևոր խաղաղութեան (2), այն դաց յափշտակութեան վիճակին՝ որ սովորական կենօք կենցաղավարողաց անծանօթ է։ Հիացման միջոցին՝ հոգւոյն զօրութեանց, այսինքն ըմբռնման, յիշողութեան և կամաց տեսակ մը քունը կ'ղդա,

(1) Extase. (2) Quietude celeste.

որ բաւական կը նմանի այն հեշտութեան՝ զոր Աստուծոյ ծոցը հոգիտուղ օրհասականք կ'զգան Հիացման մէջ գանուելն չը դիտեր թէ ի՞նչ կընէ, չ'դիտեր թէ կը խօսի՞ եթէ լուռ է. կը ինդա՞յ թէ կուլայ. երջանկաւետ, երկնային յիմարութիւն մ'է, որոյ միջոցին ճշմարիտ իմաստութիւնը կ'ուսանի նա, և անպատմելի անխմանալի մխիթարութեամբ մը կ'օգտի: Ինչ կը մնայ որ՝ այն աստեն երջանկութենէն բոլորովին ինքզինքն կտրտնջնել չ'զգայ. գրեթէ նուաղածի պէս է. հազիւ կրնայ շունչ առնուլ. իր բովանդակ մարմնական զօրութիւնքն այնքան տկարացեալ են, որ եթէ միայն ձեռքերն չարժել ուզէ, մեծ ջանք մը ընելու է ինքնիւր վրայ: Աչքերը ինքնին կը գոցուին. և եթէ բաց ալ մնան, բան մը չ'են տեսներ. ականջները բան մը չ'են լսեր. համօրէն արտաքին զօրութիւնք գինքը կը լքանեն. իսկ հոգւոյն զօրութիւնքն կ'աւելնան, որպէս զի առաւել ևս վայելէ այն վառաց լիութիւնն, որով կը ցնծայ:»

Ժամանակակից տիկին մը չատ տարի չարունակ ամենօրեայ հիացումն ունեցած է, յորոց չատ հաճոյք կ'զգար: Իր ըսածին նայելով՝ աստուածային սիրոյ գնդմունքներ, անբացատրելի երանութիւն մ'էր երբ այն սէրը գինքը կը վառէր, հեշտաղուարճ բերկրութիւն մը կ'զգար՝ որ արտէն բոլոր մարմնոյն մէջ կը ճառագայթէր: Սէրնէրի դրուածոյ մէջ առաւել կամ նուազ հետաքրքրական խել մը համանման օրինակք կը

գտնուին՝ կրօնական այլևայլ աղանդաց յատեալ կանանց վրայ տեսնուած:

Երիտասարդ քանաստեղծ մը դիտեմ, զոր Հոլբոմեի էէեբոց և այլ դիւցապատում գրոց ընթերցումն հեշտագին հիացման մը մէջ կը ձգէր. իր բովանդակ մտածութիւնն յաւերժահարսից, հուրհներու, և օդային ոգւոց վրայ էր: Իր եսականութիւնն զայնս իրեն կը ներկայացնէր՝ իրենց համբէն մտացածին գեղեցկութեան, իրենց համայն աստուածային նազանաց վիճակին մէջ. կը տեսնէր զանոնք, բազուկները առ նոսա կարկառէր. քաղցրիկ խօսքեր, գողարիկ հառաչքներ կ'ուղղէր նոցա, և իր զուարթ դէմքն աստուածային արբեցութիւն մը կ'արտայայտէր: Իր անբիծ երկրպագութեանց մէջ այնքան զգացմանց սրբութիւն, իր սիրոյն մէջ այնքան բանաստեղծութիւն կար, որ զինքն տեսնելու և իրեն ունկնդիր լինելու համար եկած շատ մը կանանց՝ փափաքելի կը թուէր որ իրենց սիրականաց չրթանց վրայ ևս այնքան ներդաշնակաւոր լեզու մը գտնէին: Հիացումը վերջանալուն՝ մեր երիտասարդը վերստին կենաց անչքութեան* մէջ կ'ընկնէր. ամենայն ինչ միակերպ, անհամ կը գտնար. տխրութեան և տագնապութեան մէջ կը ծնդար կը ծխբեր, մինչև որ հիացման նոր կրկնութիւն մ'ալ միւսանգամ բանար իր առջև դյցազնական երկնից դրունքն:

(*) Prosaïsme.

Անուանի Տիկին Կիւյօն կըսէր թէ՝ այնպիսի հիացումներ կ'զգայ, որոց միջոցին կուրծքը այնքան կ'ուռէր չնորհօք՝ մինչ դի իւր զգեստներն և մինչև իսկ մարմին չ'կրնալով բաւական լայննալ, կը փեռեկէ'ին. ուստի հարկ կըլլար որ անմիջապէս զգեստներուն կապերը քակեն. վասն դի այս յղիական վիճակս ամեն կողմէն անպատճառ կընայ ճաթել տալ զինքն: «Բայց եթէ այնպիսի անձինք գտնուէին քովը՝ որ արժանի ըլլային այնմ, իւր չնորհաց աւելորդն նոցա կը հաղորդէր, և անմիջապէս կ'զգար որ ուռեցուածքը կ'իջնէր:» Ա.սոնք բուն իսկ իւր խօսքերն են:

ՆԵՐՇՆՉՈՒԹԻՒՆ. — Ներշնչութիւնն տեսակ մը հիացումն էր, որոյ միջոցին մարդոյն հոգին մարմնէն կը զատուէր, և կ'երթար երկնային հոգւոց հետ հաղորդակից: Ներշնչելոց մէջէն այնպիսիք կային, որ թմրելական վիճակի մը մէջ կ'ընկնէին՝ կատարեալ անզգայութեամբ հանդերձ. և ահա այն վիճակին մէջ եղած միջոցին էր որ՝ հոգինին մարմնական կապերը թօթափելով երթևեկական սահմաններէն անդին կ'անցնէր, և երկինքը կը մտնէր:

Հէդն Հերմոգորաս իւր ներշնչմանց ղօհ գնացվան դի՝ մինչդեռ իւր հոգին այն երկնային ճանապարհորդութեանց միջոն մէջ էր, իւր անզգայ մարմինը թշնամւոյ մը ձեռքն ընկաւ, որ այնքան սոսկալի կերպիւ ծայրատաց զայն, մինչ դի հոգին ուղևորութենէն վերադարձին ա'լ տեղ չգտաւ որ մէջը բնակի:

Բոլոր այն անձինքն՝ զորս վերը յիշեցինք՝ խիստ չատ անգամ միստիքական ներշնչմանց ենթակայ էին, որ ուղեղին պաշտամանց կատարման մասին տեղի ունեցած չրջանաւոր այլայլութենէ մը յառաջ եկած էր: Ա.յս հիւանդութեանն պայծացման միջոցները՝ ներշնչեալ գլխոց մէջ մերթ յիմարական, մերթ վսեմ գաղափարներ կը ծընանէին, և ոամիկը՝ որ նոցա ըսածին ունկն կը դնէ, այս բանգագուշանքներս պատգամի տեղ կառնու:

ՅԱՐԹՄՆԵՐԱՁ. — Յարթմնեռաձն տեսակ մը զգացողութիւն է, որ արտաքին խթանէ մը, իրական առարկայէ մը ծագումն չառնուր, այլ մի կամ բազմաթիւ զգայարանաց զառանցելն է, ջղային դրութեան դրգռման ամենաբարձր աստիճանը կը համարուի, և բազմիցս խելայեղութեան կը կարապետէ: Յարթմնեռաձը երկու տեսակի կը բաժնեն. մէկ մը զգ-յոլչան (1) յարթմնեռաձ՝ որ զգայարանաց վրայ կ'ազդեն, և մէկ մ'ալ հոգեկան (2) յարթմնեռաձ, որք ուղղակի ուղեղէն յառաջ կուգան: Յարթմնեռաձէ բռնուողք ընդհանրապէս խիստ զգայուն և ապաուորելի կազմուածք մը կունենան, և ուղեղին յարաւեւ զրգռութեան վիճակի մէջ կը գտնուին: Գէաք, բոլոր այն դաս մը մարդիկ որ ինքզինքնին տեսանող կամ ներշնչեալ կ'անուանէին, իսկը խօսելով յարթմնեռաձէ էին իրենց տես-

(1) Sensorielle. (2) Psychique.

նել կարճած իրաց էութեանն վրայ այնքան կատարեալ համոզուած, մինչ ղէ իրենց յարմաձեռքային համեմատ կը դատէին, ի՛նմատասիրէին և կը դործէին։ Հրաշագործք տեսակ տեսակ զուարթ, տխուր, քաղցր, հաճոյական, քինախնդիր, սարսափելի կերպ յարմաձեռքային պատճառելու համար շատ մը միջոցներ և նիւթեր կը ճանաչէին։

Մահճենից խորը քուրմք ղպայական և հոգեկան խաբեպատիր երևոյթներ յառաջ բերելու կը դործածէին այս նիւթերս, որոց միջոցաւ խոր հրդպղեցիկ՝ դէպ պաշտօնէից զօրութեանն վրայօք բարձր դաղափար մը կը ներշնչէին։ Սոյն նիւթոց ու միջոցներուս մէջ, ինչպէս արդէն տեսաք, կը դանեսին չոլարատունկն, խոզկոնն, վշախնձորը, տիխոնը, արևելեան կանեփը կամ հաշիշը, որձընկոյզն (1), ակոնիտոնը (2), քափուրը, բալասարդի ջուրն, ազօդային բաւրուժ ներն ևլլն։ Մարմնոյն մասնաւոր մէկ կողմին վրայ ըլլաձ ճնշումը, լուսոյն աւելնալն կամ նուազիլը, օդոյն բարեխառնութեան կարի վար իջնելն, կամ վերջին աստիճան բարձրանալն, բնական այլևայլ հնարքներ, առանձնացումն, արհաւիրքն, տխուր կերպերն ևլլ զյարմաձեռքային կամ ղպայապատարանաց հակամէտ կընեն զմարդ։

Դիմակրեաց իմաստասէրն քառորդ ժամ մը առաջէկ երկիթ թիթեղի մը վրայ այրած վշախնձորոյ ծուխը ծծած ըլլալով՝ նախ և յառաջ ոստիկ դլխոյ ցաւ մը ղդայ. աչքերն ամբոխ լցան և քաղցր չորս կողմը եղածներն առանձագոյն թուեցան իրեն. ականջներն մշտատև չռուկ մը կղդային, որ փոխարկի առեն չղմայոզներ հոգմոյ չչմանց կընմանէր. ատկաւ առատկաւ այն ձայները աւելի ուժդին սկսան դուրալ և պատման ճայլմանցն նմանիլ։ Ջեռաւ որ անձրևը հեղեղանման չորս կողմէն կը հասէր, և մինչեւ ոսկորները թրջիլը ղդայ. վայրկեան մը եաքը իւր սենեկին խորն մուկ մը նշմարեց, որ իւր հաճի թաթիերուն վրայ կանգնած կը կենար. այն մուկը քիչ քիչ մեծնալով նախ ոտքաչափ մը, վերջն ալ արջու մը կերպարանքն առաւ, և սկսաւ դանդաղ դանդաղ ոտոստել։ Եաւ չանցաւ արջն աներևոյթ եղաւ, և աչքն անցաւ յաւերժահարս մը. յետոյ գեանէն երկուորիչ յաւերժահարսունք ալ ելան, յետոյ երեք ալ, և հուսկ ապա երեք եաւ Ս. յիննյաւերժահարսունքս ժպտելով բազուկնին իրար խառնեցին, և ուշն ուրուշը մոգեալ խմասատիրին առջև Մուսային տղնիս պարը պարեցին։ Նայիս այս չնորհապեղ դեմքերս ալ լիան. լոյսն մխնցաւ. խաւար մեայլ մը պատեց աչքն առարկայներն, և մերթ ընդ մերթ գեանէն կրակի բոցեր կը ժայթքէին, եաւնէն ալ ծխոյ մրրիկներ, ինչպէս հրաբխի մը բորբոքման առեն կը պատահի, Ս.յն առեն Տարտարոսին ճիւաղներն սենեկին մէջ լցուեցան. նախ դժոխային

(1) Քարկա պիւքէն։ (2) Հանիքան նէմ։

պար մը սկսան՝ այնքան ահռելի ծամածռու շարժուածքներ ընելով և երեսնին ծռմռկելով, որ իմաստասէրը դուրսն անդին դարձուց. բայց պղուտոնեան օթևանին տեսու ոգիներն իրեն մոտեցան, մռնչելով չորս կողմը պատեցին, և դէմքերնին ծամածռելն կրկնապատկեցին։ Հուսկ ուրեմն ծխոյ մըրիկն այնքան թանձրացան, և ոգիներն բուրած հոտն այնքան դարշելի եղաւ, որ խեղճ Դիմակրիտէս յետին ճիգ մը ընելով պատուհան մը բացաւ, որ պարտիզին վրայ կը նայէր, և այս զարհուրելի դպայապատրանաց օգականերն խորտակելու մտօք՝ ինքզինքն ի վայր նետեց անկից։ Բայց օդն և իր աշակերտաց իրեն մատուցած խնամքներն սթափեցին զինքն այն տեսակ մը դիւռվութենէն, յորում ընկղմել էր զնա վիշտն ծռւխն։ Այն վայրկենէն իմաստասէրը խելամուտ եղաւ այն տարօրինակ տեսլեանց պատճառին, զորս Թրոփոնիոսի քարանձաւը մտնողք կը պատմէին թէ տեսած էին։

Անուանին Վան Հելմոն սա պէս կը պատմէ. փորձոյ համար խիստ դոյզն չափով ակոնիտոնէ կընելուն վրայ իրեն պատահածն։

«Նախ ինձ այնպէս թուեցաւ թէ՝ գանկս երկթէ կապով մը կը սեղմէին. բան մը որ առաջուց բնաւ պատահած չունէի։ Գլխոյս մէջ ո՛չինչ չէի ըմբռներ, ո՛չինչ չէի որոշեր, ո՛չինչ չէի հասկնար տովորական կերպիւ. հապա բացորոշապէս և գրական կերպիւ զգացի որ՝ բոլոր այս գործողութիւնքս սրտապրոյ շուրջը գըտ-

նուած միջոցներուն (*) մէջ կը կատարուէին և ստամոքսի անցից շուրջը տեղի կ'ունենային։ Ա՛յսպէս՝ խորհելու կարողութիւնն գլխէն արտաքսուած էր, և պահ մը սրտապրոյ սահմանին մէջ կը գործադրուէր՝ իբր թէ հոգին հանեկած ապաստանած ըլլար։ Քանի կը հասկնայի որ մտաւորական զօրութիւնս այս նոր պաշտօնատեղւոյս մէջ տովորականէն աւելի չըլլահայեցութեամբ գործ կը տեսնէր. խիստ մեծ ուրախութիւն կ'զգայի այս մտաւորական պայծառատեսութենէս, վասն զի քուն չէի, չերազի չէի, և ողջ առողջ էի։ Ուստի կրնայի բոլոր զգացածներուս վերահասու ըլլալ, և կարի որոշապէս կ'զգայի որ գլուխս դատարկ էր. թէ երևակայութիւնն բոլորովին ձգել հեռացել էր անկից՝ սրտապրոյ շուրջը դանուած միջոցներու մէջ դադարելու և իր պաշտամունքն անդ կատարելու. և սակայն ուրախութեանս մէջտեղ վախցայ որ՝ այս պատահարս թուննէ մը պատճառել ըլլալուն՝ չըլլայ թէ գլուխս յիմարութեան տանի. բայց առած ակոնիտոնիս խիստ դոյզն քանակութիւնը սիրտս կը հանդարտեցնէր։ Հուսկ ուրեմն շուրջ երկու ժամէ վերջը, երկու անգամ թևերս գլխոյ դառնալ մը զգացի. առաջնոյն ինձ այնպէս թուեցաւ թէ՝ գլխովս խորհելու կարողութիւնս դարձեալ վրաս կուգար. երկրորդին զգացի որ տովորական կերպիւս կ'ըմբռնէի։ Ա՛յն օրէն հետէ,

(*) Region précordiale.

այսպիսի բան մը բնաւ անգամ մ'ալ պատահած չէ ինձ։»

Կարդան խմաստասէրն, որ իւր արտակեդրոնութեամբքն ամենուն ծանօթ է, կրնար ըստ հաճոյս տեղագրին կամ զուարթական յարմարեցնել բաղնիք պատճառել ինքն իրեն՝ ափիոնի և կանեփի դալար ծիլերու խառնրդոյ մը միջոցաւ։ Երբ ափիոնին չափը կանեփին չափէն աւելի ըլլար, յարմարեցնելն քաղցր, հաճոյական կըլլար. իսկ ընդհակառակն՝ ահեղ, սոսկալի կը ներկայանար, եթէ կանեփն ափիոնէն աւելի ըլլար։ «Կրնամ ես, կըսէ, երկինքը առչես բանալ, և իրենց վտառաց մէջ՝ անդ բնակող երանելիքն դիտել. կը լսեմ այն վսեմ ներդաշնակութիւնն՝ որով կը գոռայ այն. կ'զգամ այն աղեռանուշահոտութիւնքն, զորս հրեշտակք Յաւիտենականին շուրջը կը ծխեն, և հոն ծծուած խնկաբոյր օդովն կ'արբենամ. . . . կրնամ նաև դժոխքին անդնդոց յատակն իջնել, ուր կը նշմարեմ անդ բնակողաց զարհուրելի դէմքերն, ականատես եմ չարերուն տրուած սոսկալի խոշտանգանաց. ականջներս կը խլնան դևոցաց, սղոցաց, կռանաց և անուց չաւիղէն, որոց կը յաջորդեն ճիչերն ու սոսկալի կրճտմունք, որք այն ահռելի անդունդը կը լնուն. բոցերուն ջերմութիւնը կ'զգամ, և ծծմբէ վառարանաց հոտէն հեղձամղձուկ կ'ըլլամ գոգցես . . . . »

Եւ գալով այն զգայապատրանաց որք հրաշալի պատմութեանց, բուռն տպաւորութեան մը

կամ մտքին սաստիկ մեկ ուշադրութեանն արդիւնք են, ընթերցողը մեր Քնոյ Գաղանաց վրայ գրած երկասիրութեանն կը յուղարկեմք, ուր տեղ յարմարեցուցած կազմաբանական բացատրութիւնն, և մարդկային կենաց այն նշանաւոր վիճակին վրայ խիստ հետաքրքրաշարժ խել մը դիտողութիւնք և օրինակք նշանակուած են։

ԳԼՈՒԽ ԻԷ·

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ Ա·

ԿԱԽԱՐԴՔ — ՎՀՈՒԿ ԿԱՆԱՑՔ ԿԱՄ ՋԱՏՈՒԿՔ

Կախարդ, Վհուկ, Ջադուկ կըլլէ անուամբ կը կոչուին երկու սեռէ եղող այն խել մը անձինքն՝ որոց համար կը կարծուէր թէ դիւաց հետ դաշնի յարաբերութիւն ունէին։

Ս.յս տեղ հարկ անհրաժեշտ է մեզ որ դէ բառին ինչ ըսել ըլլալն հասկնանք։

Նախնիք յունարէն Տէմոն Δαίμων անունը տուին բարի և չար ոգւոց, որք իրենց ըստածին նայելով մահացուաց կ'երևէին՝ անոնց ծառայութիւն մը մատուցանելու կամ վնաս պատճառելու համար։ Մի քանի առանձնահանգամանք անձինք իրենց բուն տէրեր, իրենց ընդունէ տէրեր ունեցան. այս կարգէն են՝ Զրադաշտ, Սոկրատ, Պիւթագորաս, Նումա, Պլուտոքէն և այլն։ Ս.յս մեծ մարդիկս իրենց օգնութեան կը կոչէին զանոնք, և կարևոր կամ դժուար բին պարագայից մէջ՝ նոցա խորհուրդ հարցընել կը կեղծէին։

Չհեթանոսութեան անկմանէն ետև Նազովրեցիք դէ բառին նշանակութիւնը սեղմեցին, և միմիայն չարագործ ոգի մը, անկեալ հրեշտակ մը նշանակելու դործածեցին, որ անդընդոյն մէջ գահավիժած՝ միայն զմարդիկ չարչարելու կամ կորուսանելու համար դուրս կ'ելնէր անկից։ Ս.հա դիւաց աւասպելաբանութեան վրայ կը դառնայ կախարդաց բովանդակ մտացածին դիտութիւնն, որոյ պատմութիւնը համառօտիւ մէջ պիտի բերեմք աստանօր։

Փրկչական թուականին սկիզբները Սիմոն անուն մէկը, խիստ ճարտար կախարդ այնպէս որ անոր նմանը եղած չէ, հրաշքներ կը դործէր՝ որ սաստիկ մոտտանջութիւն սկսան պատճառել Պետրոս Առաքելոյն։ Ս.յս Սիմոնս ո՛չ միայն իւր չունքն, էշն և այծերն խօսեցնել կուտար, այլ նաև ի՛նչ լեզուաւ որ ուզուէր, այն լեզուաւ պատասխան տալ կուտար անոնց։ Գաւազանը օձի կամ ծառոյ վոխելը, որոյ վրայ նոյն վայրկենին ծաղիկներ կամ պտուղներ կը բուսանէին, իրեն համար ուրիշ բան չէր, բայց եթէ տղայական խաղալիք։ Ս.յս ձեռնախաղս այնքան ճարպկութեամբ կը դործէր, որ Փարաւոնի անուանի մոգերն իրենց վարժապետը անուանելու էին զայն։

Սուրբն Մարկեղոս և Սուրբ Կղեմէս Ս.ղեքսանդրացին չ'վախցան Պրոթէոսի առասպելը նոքոդելու այս Սիմոնին համար՝ ըսելով թէ ինքզինքն վայրի դաղանի կամ թռչնոյ վոխակերպելու

պելու, ժողովոյ մը մէջտեղ ինքզինքն անյայտ ընելու և յանկարծ նորէն երևան գալու, դարձեալ սեռ և ցեղ փոխելու, այսինքն ինքզինքն այր կամ կին ցուցանելու, և սպիտակ կամ սեաւ դառնալու զօրութիւնն ունէր։ Օր մը Ներոնի արքունիքն գտնուելով՝ այնպիսի հրաշքներ գործեց, որ ամենքն զարմացած մնացին. կայսեր դիմացը կեցած՝ եռաւէ եռաւ տարիքն ու գէմքը փոխեց. նախ տղու մը, յետոյ պատանւոյ մը կերպարանքն առաւ, յետոյ կատարեալ զօրութեան հասած մարդ մը դարձաւ, և հուսկ ապա կորաքամակ և զառամեալ ծերոյ մը փոխակերպեցաւ։ — Օրին մէկն ալ, մի և նոյն արքունեաց մէջ, յանկարծ պառակտանց վոհմակ մը երևան հանեց, որ քիչ մնաց իւր յայտնի հակառակորդն ու թշնամին՝ Պետրոս առաքեալը՝ բզիկ բզիկ պիտի ընէին։ — Անգամ մ'ալ կայսրն ու մեծամեծները զբօսեցնելու համար Սիմոն ինքն իւր վիզը կտրել տուաւ. արեան ցայտերն ամեն մարդ տեսաւ, և կտրուած գլուխը գետինն ընկնելով դնթաց. տեսնողներն զարհուրե՛ցան . . . վայրկեան մը չ'անցաւ՝ գլուխն ինքնիրեն իւր առաջին տեղն եկաւ, վերքը շուտ մը սպիացաւ, և այն ահագին ծայրատաման հետքն անգամ չ'մնաց։

Ինչպէս որ կ'երևի, խիստ ճարտար կխաղայ մեզի այս Սիմոնը, որ ըստ պատմութեան Աբդովբայ և Յուստինիոսի, իւր մանգաղը կը խրկէր որ ինքնիրեն հնձէ արտերուն մէջ, և այս

հրաշալի մանգաղը մէկ ժամուան մէջ աւելի գործ կը տեսնէր՝ քան թէ տասն կաշըմբուռն հընձողք մէկ օրուան մէջ . . . . . Բայց իւր ամենէն ճարտար խաղն աշտարակի մը ծայրէն օդոյն մէջ խոյանալն, և թռչնոյ պէս թռչիլն էրաւ, ժողովրդեան անթիւ բազմութեան աչքին առջև՝ որք այս հրաշից հանդիսատես ըլլալու համար ժողոված էին անդ։ Դժբաղդաբար՝ իւր օդաչու շարժմանց միջոցին թևերն յիրար խառնուելով դեռևին ընկաւ մէկ մ'ալ չվերնելու կերպիւ (*)։ Ասի իւր առաջին և վերջին ձեռնածութիւնն եղաւ. չուառականին երկու սրբութիւնքներն կտորել և կողերն խորտակուել էին։ Հռովմայեցիք այս անձին տարօրինակ հմտութեան վրայ հիացած, անդրի մը կանդնեցին իրեն՝ սա արձանագրութեամբ. Սիմոն Փե. Ս. տաւծոյն Սիմոնի։

Սկզբնէ, Սիմոնի կինը, իւր ամուսնոյն արհեստն ուսած ըլլալով, ինքն ալ բաւական ղուարճալի խաղեր կընէր։ Կը պատմեն թէ՝ առաւօտ մը քսան պատուհան ունեցող աշտարակի մը մէջ գտնուելով, գինքն տեսնելու համար հոն վազող եկող ժողովրդեան երեսաւ միևնոյն վայրկենին՝ ամեն պատուհանաց ալ մէջէն։ Բայց յոլովք ի ժամանակագրաց այս հրաշքս Սիմոնի կը վերընծայեն։

(*) Նմանօրինակ դէպք մ'ալ դեռ անցեալ օր պատահեցաւ տը Կրուֆ անդղիացւոյն։ Ս. Թ.

Հեթանոսք կը կարծէին թէ Սիմոն և իւր կինն աստուածային ըզօրութիւն մը ունէին. իսկ նորահաւատք կ'ամբաստանէին զանոնք թէ՝ ինքզինքնին սատանային ծախել են, և ըրած հրաշքնին ալ Սադայելի միջոցաւ կը գործեն։

Բայց նորածին Եկեղեցւոյն համար՝ ամենէն ահաւոր և անոր ամենէն աւելի թշնամի հրաշագործն, յաներկբայս, անուանի Ս.ՊՕՂՈՆԻՈՍ ՏԻՈՆՍԱՑԻՆ եղաւ, որոյ ամբողջ կեանքն հրաշէից և անհաւատալի նշանաց երկար շարք մի է։

Ս.յս արտաքոյ կարգի մարդոյս ծնած աւուն՝ երկինքն ու երկիրը իւր աստուածութեանն ակնյայտնի նշաններ ցոյց տուին։ Գիշեր ատեն յաշխարհ եկաւ, և այն յիշատակաց արժանի գիշերն՝ լուսինն արեգակէն աւելի փողփողուն ելեւեցաւ. անծանօթ ձայներ եղան Թեսալիոյ ժայռերէն, ամպոց մէջ ցնծութեան ձայներ դէնթացին, և համօրէն Յունաստան օդային նուագ դերդութիւններ լսեց. անտառաց ծառերն տատանեցան. ծաղկունք բաժակնին բացին, և իրենց ամենէն հեշտ բուրմունքն ծաւալեցին. Եգիպտոսի երկիրն՝ ի խորոց սատանեցաւ, և Ռվկիան՝ իւր մակընթացութիւնն ու տեղատուութիւնը առ ժամ մի դադրեցուց։

Հռոմայ մէջ ծերունին Կառնոս մարգագլուխ առիւծու մը կերպարանօք երեւցաւ, և լերդահմայից ոսկի դարուն վերադարձն աւետեց։

Ս.պողոնիոս մեծնալուն դիտութեանց ուսմանն տուաւ ինքզինք, և դրեթէ աշխարհի ամեն

ազգաց երկիրն ճանապարհորդեց։ Բրմաց հետ ըրած խօսակցութեանց միջոցին՝ ամեն ինչ որ սրբազան և անսուրբ բան կար՝ ուսաւ։ Իւր վարքն գրողները, Դամիս և Փիղոստրատէս, կը պատմեն թէ՝ իւր պրահմանաց հետ ըրած ուսումնական խօսակցութիւններէն մին՝ չորս ամիս տեւեց, և այս երկարատեւ առանձնացմանս միջոցին կռատուններն փոկեալ մնային, և պաշտամունք և ղոհք առ վայր մի դադրեցան։ Ս.մեն ուրէք փառահեղ պատիւ ու մեծարանք ընդունեց. իշխանք և թագաւորք կը խոնարհէին իւր առջև։ Վ.եսպասիանոս՝ Ս.ատուածոց վերապահեալ պատիւներն մատոյց անոր, և Դոմետիանոս՝ որոյ կենացը դէմ դաւաճանութիւն նիւթած էր՝ չ'համարձակեցաւ դիպատել ընա։

Իւր կենաց ընթացիքը մէջ, որ մինչև հարիւր տարի երկարեցաւ, օր չ'անցաւ որ Ս.պողոնիոս հրաշք մը չ'գործէ։ Մերթ ժանտախտն ու վոթաբրիկները կը վանէր, մերթ ճակատն լուսաշողյլ ճաճանչիւ մը պսակեալ կ'երեւէր, հիւանդները կը բժշկէր, մեռեալները կը յարուցանէր, և այսերն դիւահարաց մարմնին կը հալածէր։ Ուրիշ անպատիներ ալ ամենէն անհաւատ իմաստասիրաց մէջ տեղ մարգարէութիւն կը նէր, և իւր մարգարէութիւնքն քանի մը օրէ վերջը կ'իրականային։ Վերջապէս աշխարհի վրայ աստուածային պատիւ ընդունելէ ետև՝ Եփեսացւոց ծանոյց որ՝ այն օրն որ հարիւր և մէկ երրորդ տարին պիտի մտնէր՝ երկինք պիտի համ-

քառնար : Ա.րդարև այն օրը գալուն՝ Ա.պողոնիոս կենդանեաց աչխարհէն անհետ եղաւ , և իւր դիակն դանելու համար եղած համայն խուզարկութիւնք ապարդիւն ելան : Համբաւն ամեն կողմ հռչակեց թէ՝ Ա.պողոնիոս Ա.ստուածոց օթևանը եղած էր : Իսկ հրաչից մասին անհաւատ եղողք այնպէս դուշակեցին թէ՝ այս վարպետ հրաչագործն Եփեսոսի մեհենին դեռնամբարը խորը դանուած վէմին մէջ նետել էր ինքզինքն . համր վիհ մը , ղոր քանի քանի անգամ քուրմք՝ իրենց զոհերն անհետ ընելու , և խաբեբայութիւնն հաւատալի ընծայելու գործածեցին :

Ա.ղէս կայսեր օրով՝ Հռոտուլա Սորթիա-բրիա անուն պառաւ կին մը մեծ հռչակ կը հանէր Հռոմմայ մէջ իւր մոգական գործողութեամբքն : Ա.սի պեռնափոր գերեզմանի (*) մը մէջ պատասխան կուտար իրեն խորհուրդ հարցընելու եկողաց . միշտ կը նայէր որ ինքզինքն եղերական հանդերձանօք շրջապատէ , և հանդիսականաց երևակայութիւնը յապուշ կրթելու յարմար չղաչիդ դալարմամբք գործէ : Կը տեսնէիր՝ աստ և անդ ցրուեալ՝ գազրատեսիլ կենդանեաց դանկերը , մարդկային կմախներ՝ ղոր գարհուրելի դիրքերով կանգնեցուցած էր . չղջմղիկ հուրեր և մի քանի չղլիկք կը թռչտէին կամարաց ներքև խուլ ձայներ , սոսկալի դը-

(*) Crypte .

ղերդիւններ կը լսուէին ի հեռուստ , և ոսկրատկերա սեղանոյ մը վրայ դամբանական կանթեղ մը կը վառէր , որոյ շիջելավառ նշոյլն վհկին նըսեմասուեր դէմքը կը լուսաւորէր : Ա.ոնք էին ահա անուանի Հռոտուլայի ի կիր արկած միջոցներն :

Խել մը բարձրաստիճան անձինք ականատես եղած էին այս պառաւին գործած հրաչիցը , և մինչև իսկ չատերն իւր արուեստին դաղտնեացը հաղորդակցել և խելամուտ եղել էին այնմ : Ա.ոնցմէ մի քանին , Վ.աղէսի թագաւորութեան օրքան տևելիքն հասկնալու հետաքրքրութենէ չարժեալ՝ մթին դիշեր մը ելան չատուկին քարայրը գնացին , և կայսեր ճակատագիրն ինչ ըլլալը հարցին անոր : Հռոտուլա , որում առատ վարձք տուած էին , նախ ոսկրէ սեղանոյն վրայ տեսակ մը պղնձի հռատանի կանդնեց , և անոր վրայ դրաւ այբուբենի տառերն՝ հատատար չափով մեկզմեկէ հեռու . ապա փոքրիկ ակութներ վառեց , և տեսակ տեսակ փոշիներ ձգեց անոնց մէջ՝ որոց բոցը դիակատեսիլ երևոյթ մը կուտար ամենուն դիմաց : Զայս ընելէ վերջը՝ ահռելի մռնչիւններ արձակելով հռոտանուոյն չուրջն քանի մը անգամ դարձաւ , և յանկարծ թանձր ծխոյ մը մէջ անհետացաւ . վայրկենէ մը յետոյ նայիս վերատին երևան ելաւ , և պատանքի մը մէջ փաթթուած , ձախ ձեռքն

(*) Contorsion .

չռէղի ոստ մը, և ալ ձեռքն ալ թելէ մը առ կախեալ պղնձէ օղակ մը բռնած՝ սկսաւ յառաջ դալ։ Ս. Ինպէս եռոտանւոյն դիմաց ոտքի վրայ կեցած քանի մը անեծքներ արտաբերեց դժոխային ոգւոյն դէմ. յանկարծ եռոտանին սկսաւ շարժիլ. ալ ձեռքը բռնած օղակն սկսաւ ճօճիլ, և եւս եւս այբուբենին այլ և այլ գրերուն զարնել, որք ինքն իրենց իրարու եւս կերթային կը շարուէին՝ խնդրուած պատգամին պատասխան կազմելու համար։ Ս. յս կախարդական գործողութիւնս Վաղէս կայսրը լմնալով, և չուզելով որ իւր տպագային ինչ ըլլալը դժոխոց հարցնեն, անդ ներկայ գտնուող բարեպաշտեան անձինքն խստիւ պատժեց, և պատաւ Հռուտուլան ալ դվսաւել տուաւ։ Բայց ասոնք, դատապարտութեան վճիռն համրէն կախարդաց և վհկաց վրայ ալ տարածեց, և հրամայեց որ՝ բովանդակ կայսրութեան սահմանացը մէջ որքան որ կան՝ ամենքն ալ չարդուին։ Ս. Միխանու Մարկեղինոս պատմագիրը, որ այս եղելութիւնս կը պատմէ, կըսէ թէ՝ խիստ շատ կախարդ սպանուեցաւ այդ հրամանին վրայ։

Յուլիանոս կայսրն, Սաւուղ թագաւորին հետեւելով, Պիւթոնի ոգւոյն հարցում ընել ուղեց. և Հռովմէական ասպետի մը զգեստ հագած, ծածկեալ բաներն դուշակելու արհեստին մէջ խիստ վարպետ համարուած պառաւ վհուկ մը դնաց գտաւ։ Բայց կ'երևի թէ անկից ստացած պատասխանն իւր ճաշակին յարմար չ'եկաւ, վասն զի հետևեալ օրը կախել տուաւ զայն՝ իբր յանցաւոր իւր անձին ճնաս բերող ստախօսութեամբ։

Կոստանդին Քլորոս կայսրը կախարդութեամբ ամբաստանեալ մարդոց համար զանազան պատիժներ սահմանեց. բայց Կոստանդիանոս պատժոյն տեսակը աստիճանաւորեց այլևայլ գաւոս կախարդաց համեմատ։ Իւր հրամանագրաց մէջ ըսուած է որ՝ մահուան պատիժը միմիայն այն կախարդաց դէմ պիտի տնօրինուի որք արանց առողջութեանն կամ կանանց պարկեշտութեանը ճնաս բերելու համար դիւթութիւններ կընեն. մինչդեռ ամենևին ճնաս մը, հալածանք մը չպիտի ըլլայ այն կախարդաց՝ որք իրենց արհեստեան հիւանդութիւնքն բժշկելու, հրդեհներն կեցնելու, ու վտիտ բիլներն ի բաց վանելու կը գործածեն։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ԸՆԹԱՑՔ ԵՒ ՑՍՈՒԱՀԱԴԻՄՈՒԹԻՒՆ ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆ

Քանի բաղմաստուածութիւնն կ'երթար կը հեռանար, գեղաճիճաղ և զուարթ այլաբանութիւնքն ալ իրեն հետ միատեղ աներևոյթ կը լինէին. նոր կրօնք մը, աւելի մաքուր, աւելի լուրջ, դիցաբանական խօլ ցնորքներն կը չնչէր,

և Ողիմպոսի աստուածոց լուսափայլ չքնքը հիմ-
նիվեր կը տապալէը : Նոր պաշտօնը , որ աւելի
բանաւոր(*) էր , հոգւոյն կարողութիւնքը զար-
գացնելով ՝ի վեռս զգայարանաց կարողութեան,
զմարդիկ կ՝առաջնորդէր դէպ ՝ի այն եղրայրու-
թեան և հաւասարութեան նպատակն , նպա-
տակ մը՝ որուն երթէ կարելի ըլլայ օր մը հաս-
նիլ , մարդկութեան կատարելութիւնն պիտի
ըլլայ : Դժբաղդաբար մանաւոր փառասիրու-
թիւնք այն դաշափարներն կերպարանափոխ ը-
ներն , և թիւրեցին զայն այն չաղչն՝ զոր աստ-
ուածային օրէնսդիր մը դծած էր անոնց : Իմաս-
տուն հաւատալիք ապականեցան . փոխանակ
ճշմարտութեան նպատ մոլորութիւնք յաջորդե-
ցին , և նորածին ընկերութիւնն խել մը բար-
բարոսական նախապաշարմանց , տղայական եր-
կիւղներով վարակեալ՝ խորին կերպիւ մնապաշ-
տութեանց չաղին մէջ խրեցաւ : Ս.ն առեն
մտացածին արհաւիրք ամենուն երևակայու-
թիւնն պաշարեցին , ամենուն միտքերն չղթա-
յեցին . ամենէն անհեթեթ բաներու հաւատա-
ցին մարդիկ , և գժոխային կիւսահմայութիւնը
ամեն առենէ աւելի սաստկութեամբ ճարակեցաւ :

Կոստանդիանոսէն սկսեալ մինչև երկոտա-
սաներորդ դարը՝ կախարդաց և այսահարաց
թիւը երթալով աւելնալու վրայ է . այն դարե-

(*) Rationel .

րուն Սրբոց վարուց պատմութիւնքն , և այլ ժա-
մանակագիրք կը ներկայացնեն մեզ սատանայից
ամբողջ դունդեր , որք մարդին՝ քրիստոնեայ
ընկերութեանց մէջտեղ ընկած՝ զանոնք անհան-
գիստ ընելն կարծես բան գործ երեւ էին իրենց :
Բայց ամենէն աւելի՝ մեր թուականին մեսա-
սաներորդ դարէն մինչև ութերասաներորդին
մէջն է՝ որ կախարդութիւնն և դիւամոլութիւնն
սոսկալի յառաջադիմութիւն ըրին Եւրոպիոյ մէջ ,
և համաճարակ ժանտի մը նման իրենց աւերն
ու ապականութիւնն անասնացեալ ժողովրդոց
վրայ յածին : Երբէք Սատանէլ և իր սեռակեմ
լեգէոնք այնքան ազատութիւն չ՝ունեցան զմար-
դիկ խոչտանգելու և ՝ի կորուստ մատնելու հա-
մար՝ որքան յիշեալ ժամանակաշրջանին մէջ :
Սատանք ամբողջ կախարդաց դնդեր զինուոր կը
դրէին իրենց , և անոնց հետ օդոյն մէջ կը ճա-
կատարձորդէին : — Դիւղերն ու քաղաքները
մեն կուգային՝ ուղտաքաղաց , ճիւաղի , ճևւեղ-
կաց , մանկակերը կնոջ , պարիկի , վարդապետի
քաղի , և կատուի , արջնադորտի և այլն և այլն կեր-
պարանօք . լիսի պարերը կը պարէին . Խալնի , աս-
լիղաս , և առնադեմ ու կանադեմ ճնշական ճի-
ւաղներուս կերպարանօք տանց մէջ կը մտնէին ,
նորածնակ տղոցներն անկարող կընէին ,
հունձքերը կը ցամաքեցնէին , այդիներն կը գ-
ատնէին , մեկ աչոց հայեցուածով մը մահ կը
պատճառէին , տուարքն կը թունաւորէին և տը-
ղայքն՝ իրենց մարց տղդանդին մէջ կը մեռցնէին :

Ա՛լ ո՛չ ոքի համար ապահովութիւն չկար. այս ինչ անձը՝ որ հոգւով և մարմնով ողջ առողջ էր այսօր՝ կրնար վաղը դիւին ճարակ ըլլալ, կամ անօրէն դիւթութեան մը հանդիպիլ. այն ինչ մարդը կրնար կախարդ ըլլալ՝ առանց ինքը դիտալու, և դատաստանական ատենից մատնուիլ իբր այն. և այն ցաւալի ժամանակս ատեաններն ալ այս տեսակ ամբաստանութիւն մը՝ իբր իրական բան մը՝ նկատողութեան կ'առնուին: Իրաւագիտութիւն մը հաստատուել էր Եւրոպիոյ մէջ կախարդութեան դէմ, թէև դողութեան և սպանութեան դէմ հաստատուածն աւելի խիստ: Նախ կախարդը հաբոյած բառած տանջանաց կ'ենթարկէին, և սոսկալի չարչարանքներէ յետոյ ծծմբաթաթաւ շապիկը կը հագցնէին անոր, և խեղճը ողջ ողջ կ'այրէր . . : Սարսափը ամեն ուրեք կը տիրէր. անհնարին անձկութիւն ու սուդ պաշարած էր ամեն սրտերն. ի՞նչ ընեն որ Սադայէլի որոգայթներէն խուսափին: Դևերը երդմնցնելու (1) միջոցին դիմեցին. հրէական դրապանակներ (2) հնարեցին, որք ի դիւաց կը բժշկէին կամ առնոյմէ ղերծ կը պահէին զմարդ: Ան մարդիկն որ իրենց ատիճանաւն, իրենց ընկերական դրութիւնն ու հմտութեամբքը, տղիտութեան թանձր մառախուղքն փարատելու էին, հա՛րկ է ըսել, այս մարդիկս իրենք իսկ նախապաշարեալ էին

(1) Էֆուն : (2) Նուսխայ :

անոնցմով, կամ աւելի իրենց չահուն յարմար կը դանէին թողուլ ժողովրդեան՝ որ այս կոչտ աւելորդապաշտութեանց մէջ ընկղմի :

Ժօֆնվիլ միամտօրէն կը պատմէ այն հմայութեան և կախարդութեան հրաշքներն՝ որոց ականատես եղաւ իւր ուղևորութեանց միջոցին: Ա՛յն խիստ ղարմանահրաշ այլակերպութեանց մէջէն, ղորս մէջ կը բերէ, խեղճ Քաբուչին կրօնաւորի մը պատմութիւնը կը դանեմք, որ վհուկ յուշկապարիկ մը հրապուրուելով՝ անոր իրեն մատուցած նենգաւոր ըմպելին խմելու անխոհեմութիւնն ունեցաւ: Չաղիւ սիրաչարակն ըմպած էր, մէկ մ'ալ տեսաւ որ կնճիթը կերկրէնար, և երկու բաղուկներն սրունքի կը փոխուէին : Ա՛յն մխրճոյն մազերը տեսնելով՝ ոգով իւր մարթը ծածկուել էր, և այն երկար պոչը՝ որ կրունկները կը ծեծէր, քաբուչինը դլխոյն եկած դժբաղդութիւնը հասկցաւ. Էշ դարձել է՛ր՛ . . . . : Չատուկ կինը իւր մարթապատ անասուկը (*) իշոյն կրնակը տուաւ, և քայլելու սոիպեց դայն : Երբ այսպէս դերեզմանոցի մը քովէն կ'անցնէին, ուրտեղ խաչ մը անկուած էր, քաբուչինը ուրախութենէն երկար դընչիւն մը արձակեց, իւր բնական կերպարանքն առաւ, և բոլոր ուժովը փախաւ դնաց անկից՝ միտքը դնելով որ ապագային մէջ ղդայլ կենայ, մէկ մ'ալ համբարուի ձեռք չընկնի :

(*) Bahut .

Վէյինցիոս Պօվէցին՝ իւր Հայելի բանաստեղծութեան դրքին մէջ գրեթէ նմանօրինակ դէպք մը կը պատմէ։ Հռովմայ մօտերն պանդոկապանութիւն ընող երկու պառաւ կանայք՝ իրենց առպընչականներն հնդկահատու, հատու, բազէ, ճագարի և խոզի կը վարժակերպէին. յետոյ կ'երթային չուկան կը վաճառէին զանոնք, ուսկից բաւական աղուոր շահ մը կը դոյանար իրենց։

Տասնեչորսերորդ դարը Գաղղիոյ համար կախարդոյ, կախարդուհոյ, և ամեն տեսակ դիւամոլից մասին խիստ արդասաբեր տարի մը եղաւ. մէն մի օր բազմաթիւ անձինք զոհ կըլլային խարուկահանդիսից։ Ա.յս տեսակ եղելութեանց մէջէն հետեւեալը պիտի յիշեմք, զոր Տըսէսար վարսաբանը կը պատմէ։

Բաւական մեծակակ դումար մը գողցուելէր Սկեթոյի արքային գովչն, որ չկրնալով գողութեան հեղինակներն գտնել, կախարդոյ խորհուրդ հարցնելու գնաց. անոնք ալ խօսք տուին որ՝ եթէ այսքան վարձք տայ իրենց, ո՛չ միայն տուակը վերադարձն գտնեն, այլ նաև գողին ալ ըլլալն ալ իմաց տան իրեն, Սիդոյի արքան հաւանեցաւ այս առաջարկութեան, և Ժէհան Բրէվօսդ կախարդոյ դլխաւորը իւր կախարդական արարողութիւնքն սկսաւ հետեւեալ կերպիւ. — Սեաւ կատու մը առաւ, աչքերը փորձց, և պղպեկ արլեզ մը մէջ դրաւ փակեց զայն՝ հետն ալ երեք սեւ պարէն դնելով։ Ա.յս պարէնս օրհնեալ ջրոյ մէջ թաթաւեալ հացէ, և չղկան արեամբ ողողեալ մոյ մանր յօշուած է(*) կը բաղկանար։ Կէս գիշեր զարնելուն՝ մեծ ճանապարհին վրայ գնաց փոս մը փորեց, և արկղը անոր մէջ թաղեց. բայց նախ խաղովականեր յարմարցուց, այնպէս որ կատուին չունչ առնելու չափ օդ կրնար ներս մտնել։ Հետեւեալ օրը հովուի շուներ կատուին հոտն առնելով՝ եկան անոր թաղուած տեղը գտան, և թաթիկնոցին դեռ նոր ծածկուած փոսը քերելով սկսան ոռնալ։ Հովիւք գայս լսելով կը վազեն կուգան, հողը կը խառնեն, և արկղը գտնելով՝ անմիջապէս կ'երթան ոստիկանութեան կ'իմացնեն եղելութիւնը։ Ոստիկանութեան տեսուչը Բարիզու մէջ որքան հիւան կայ՝ ամենքն ալ կը ժողովէ, և անոնցմէ մին կը յայտնէ թէ՝ ինքն չինած ու ծախած է այն արկղը Ժէհան Բրէվօսդ վարպետին, որ Հրաշից ըսուած մեծ գաւթին մէջ կը բնակի։ Տեսուչը գայս լսելուն՝ անմիջապէս ձերբակալ ընել կուտայ գայն, և տանջանաց կը մատնէ։ Թշուառականը ամեն բան խոստովանեցաւ. ոստիկանութիւնն ընդհանուր խուզարկութիւն մը ըրաւ այս Հրաշից ըսուած անարդ բակին ամեն խորշերուն մէջ, և կախարդոյ հանդերձից խումբը ձերբակալեց, որոյ մէջ մի քանի կրօնաւորք ալ կային։ Սև կատուին սատանայական դործողութեան վրայ Ժէհան Բրէվօսդի հարցում ըլլալով՝ պատասխան տուաւ թէ՝ երբ

(*) Խրյա։

օրէն վերջը կատուն փոսէն հանելով պիտի մոռ-
թէր, և անոր կաշեաւը երկայն փոկ մը պիտի
չինէր, որ դիւահիշութեան համար անհրաժեշտ
հարկաւոր էր։ Ա.յս փոկս շրջանակ մը կազմե-
լու պիտի գործածուէր, որոյ մէջ տեղը պիտի
անցնէր ինքն, և բոլորտիքն ալ բոլոր միւս կա-
խարդներն պիտի շարուէին՝ ձախ ձեռքերնին
մէկ մէկ մարդոյ դանկ, և միւս ձեռքերնին ալ
մէկ մէկ մանուրագորի ծիլ բռնած։ Ա.յս ա-
մեն պատրաստութիւնքս լրանալէ վերջը՝ Բեե-
դևը պիտի կոչէր, որ հմայէն սատկեալ՝ գողին
անունն ու բնակած տեղը պիտի գար իմացնէր։
Ա.յս խոստովանութեանս վրայ, և առանց ուրիշ
որևէ քննութեան, Ժէհան Բրէվօսդ և իւր
խումբը ողջ ողջ այրուելու դատապարտուեցան.
կրօնաւորք միայն բանտարկութեամբ կրցան
մահուանէ ազատիլ։

1533ին, Կատարինէ Մէտիչի Գաղղիոյ գա-
հաժառանգ իշխանին հետ ամուսնանալով, որ
յետոյ Հենրիկոս Բ. եղաւ, բոլանդակ երկիրը
խռովական անապահովութեանէ լցուց։ Իւր հա-
րատարկակի չերմ երևակայութիւնն շատ կա-
նուխէն կիւսութեան անհեթեթ գաղափարայ
հաւատ ընծայել տուել էր իրեն. ուսոի բոլո-
րովին այդ արուեստին տուաւ ինքզինքն, և
կըսեն թէ խիստ հմուտ իսկ եղաւ այնմ։ Բայց
ո՛վ զարմանալեացս, փոխանակ կիւսերն ու կա-
տուկներն պաշտպանելու, ա՛լ անոնց պէտք չ'ու-
նենալուն պէս՝ չարաչար դատապարտել կ'ու-

տար զանոնք։ Կախարդութիւնը անհուն յառա-
ջադիմութիւն ըրաւ այն ատեն ի Գաղղիա, և
դատաստանական ատեանք անդադար կախար-
դաց դատերով զբաղեցան։

Միտալ մը կայ մինչև յարդ պահուած, ո-
րոյ վրայ յիշեալ թագուհին կը տեսնուի մերկ՝
Յուլ և Խոյ համաստեղութեանց մէջտեղ կանգ-
նած, գլխոյն վերև ալ Եբէ-ա-Ա.մ-ին երկբառը
գրուած. ձախ ձեռքին մէջ սիրտ մը կայ. իսկ
ձախոյն դաշոյն մը բռնած է՝ որոյ սայրը դէպ ի
սիրտը կը նայի. դրամին ստորին կողմն ալ գըր-
ուած է Ռաֆէլ։ Ա.յս թագուհիս չարաղէտ ազ-
դեցութիւն մը ունեցաւ երկրին վրայ։

Եթէ Բարթելոմէ և այլ կախարդաց հաւա-
տացողներու ըսածին պարտիմք հաւատալ, Կա-
տրէլ Հ-ոյ-ի Սբբոյ քաղաքին հին կամուրջը՝ Պէնէզէ
անուն փոքրիկ հովուի մը մոգական խօսքովն մէկ
ակնթարթի մէջ չինուեցաւ։ Ա.միլիոնէի առաս-
պելը, յորում նորա քնարին ձայնիւն Թէփէկ
պարապաց կանդնիլը կը պատմուի, ոսոկ այլա-
բանութիւն մ'է, մինչդեռ Հոգւոյն-Սրբոյ-Կա-
մըրջին չինութիւնը ճշմարիտ իրողութիւն մ'է.
և ասոր իբր փաստ՝ Բարթելեմոս Հինգ Պապերու
կոնդակները մէջ կը բերէ, որոց մէջ այս բանս
յիշուած է։

Ուղիղ դատողութեան տէր դիւղացի մը,
որուն սատանային այս հրաշքը կը պատմէին,
միամտօրէն պատասխան տուաւ, — ուրեմն ալ
ներելի չ'պիտի ըլլայ ըսել թէ՝ սատանայք մի-

միայն մարդոց վնաս տալէ զատ ուրիշ բան չէն կրնար ընել. վասն զի Հոգւոյն Սրբոյ հոյակապ կամուրջը մեծ օգուտ ունի իր բնակչացը։»

ՀԱՏՈՒԱԾ Գ.

ՆՇԱՆԱԻՈՐ ՄԱՐԴԻԿ, ՈՐՔ ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՑՆԵԼ ԵՆ.

Պաւղոս Յովհաննէս կը հաւատայ թէ՝ անուանի Ակրիբբա իմաստասէրը տղայ հասակէն սատանային ծախեր էր ինքզինքն, և թէ սատանայն սև չան մը կերպարանօք միշտ կ'ընկերակցէր իրեն։ Ա.յս իմաստուն չանս չնորհիւն սատանա իր անհուն հմտութիւնն, և գաղտնի գիտութեանց մէջ խորին ծանօթութիւնքն։ Ակրիբբա մեռնելուատեն՝ իր հոգւոյն ինչ վիճակ ունենալիքին վրայ վախէն դողալ սկսաւ, և իր անբաժանալի ընկերին դէմ սա անէծքս կարդաց։

— Կորի՛ր, թշուա՛ռ կենդանի, որ իմ յանիսենական կորստեանս պատճառ եղեր։»

Ա.յս խօսքիս վրայ՝ չունը ոստիւն մը ըրաւ, ուրախութեան սոսկալի ճիչ մը արձակեց, և վազեց դնաց ինքզինքն Սառնի մէջ նետեց։

Ա.լբէրտ, մականուանեալն Մեծ, մեծ իմաստասէր մը և ճարտար մեքենագործ մ'էր. ասի այնքան հրաշալի մարդամեքենայ մը չինեց, որ Սուրբն Թովմաս Ա.գուինացին անոր շարժիլը տեսնելով, և խօսիլը լսելով, վարանեցաւ թէ արդեօ՞ք մարդոյ մը թէ չէ դիւի մը չինածն էր այն, և ոտքի հարուածմը տալով ջախջախեց զայն։ Ա.լբերտի ժամանակակիցներէն ամենէն ուղղամիտներն կ'ենթադրէին թէ՝ աստուածային նեղչնչու թեան նեղքև կը գործէրնա. բայց մեծագոյն մասը ճարտար կախարդ մը կը համարէր զինքը։ Գիտնոց այնքան աղետաբեր և ղող այնպիսի մոլեռանդութեան և տգիտութեան ժամանակ մը, Ա.լբերտ մի միայն իր եպիսկոպոսական դասուընկեր չնորհիւ՝ վայրակուռ մը վրայ հանուելէն կրցաւ ազատիլ։ Ա.յսօրուան օրս իսկ, դիրք մը որ Գաղղիոյ Մեծն Ա.լբերտոյ անուամբ ժողովրդեան մէջ հռչակաւոր դարձած է, շարունակել կուտայ այն կարծիքն թէ՝ այն մատաղսերմ կախարդ մը եղած ըլլայ։

Բարդան, որ երբեմն կ'ախորժէր որ զինքը կախարդի տեղ դնեն, կը խոստովանէր թէ ընտանի ոգւոյ մը հետ յարաբերութիւն կընէ, օգտւմ կը պարտէր, կըսէր, իր խորհրդութիւնն։

Իր ժամանակակիցքն այլևայլ կերպիւ դատողութիւն ըրած են իր վրայ. ոմանք կը պնդեն որ՝ իր դիւայ հաւատալը կեղծ էր. այլք կը հաւատան թէ՝ չիրաւի անկեղծաբար կը հաւատար անոնց գոյութեանն. մինչև անգամ զինքը ամբաստանող եղաւ թէ կիւսահմայութիւն ուսած և գործած ըլլայ։ Ինչ որ ալ է, այս մարդոյս կեանքն այնքան անհետաքրքիր և արտա-

կեդրոն դործողութեամբք լի է, որ կարելի եղած է շրջանաւոր (*) խելայեղութեան հանդիպած համարիլ զինքը։

Փարէնօ հաւատաքննիչը, Աւելլանոս կամ Խոմիւ մականուանեալ, իրեն գլխաւոր մը համարեր է մանրամասն պարագայից պատաւ վճիռ մը պատմութիւնն ընել, որ երկար ատեն ոստիկանութեան դործակալաց խուզարկութիւնքն ի դերև հանեց։ Ա.յս չատուկս, որոյ համար ենթադրեցին թէ նոյն ինքն Սադայէլն ըլլալու էր, ամեն հետամտութիւններէն կը խուսափէր, և հաւատաքննութեան հզօր աոեանը կարծես թէ ծաղր ընել կուզէր։ Երբ գինքն բռնելու համար իւր խշտին կը հանեին, մերթ միայն խոշոր սև կատու մը կը դանէին անդ, որ տանեաց վրայէն կը վախէր կ'երթար. մերթ ալ մուկ մը, որ պատին ծակերուն մէջ անհետ կըլլար. երբեմն վհուկ կինը բու կը դառնար, երբեմն ալ հոլանուկ. այնպէս որ հաւատաքննական ոստիկանութեան մարդիկն յոյսերնին կտրած ինչ ընելին չէին դիտեր։ Հուսկ ուրեմն՝ եղաւ որ օր մը նոխազի կերպարանք առնելու անմտութիւնն դործեց. այս անգամ նուիրակներն ձերբակալ ըրին դարչելի կենդանին, և պոչէն քաշելով փայտակուտին վրայ բերին դրին զայն՝ որ խորովի. բայց ի՞նչ ըլլայ աղեկ. պոչը տապալման կերպիւ երկնցաւ. նոխազը սատա-

(*) Périodique.

նայական ոստում մը ըրաւ, և յապաւչ կրթեալ նուիրակաց աչքին առջև՝ անհետացաւ։ Պոչը միայն ձեռքերնին մնացել էր, և այն ալ ի՛նչ պոչ . . . . ։

Խիստ լրջաբնոյթն Կրիլանտոս ինքն է՝ որ այսպիսի առասպել մը պատմելու կը ժպտի, և Սպանիոյ ժողովուրդն ալ անոր հաւատ ընծայելու չափ դիւրահաւատ էր։

Տէլ Րիոյ ճիզուիթը, բազմահմուտ մարդ, բայց ա՛յնքան դոյզն դատողութեան տէր՝ որ կիւսից, կախարդաց, վարդապետի քաղից կըլլի. կը հաւատար, միամտօրէն ամենահեթեթ բաներ գրած է, յորոց ահաւասիկ օրինակ մը։

Երկու վհուկներու խումբ իրարու հանդիպել էին Գերմանիոյ մէջ՝ մեծ իշխանի մը հարսանեաց հանդէսը կատարելու համար։ Ա.յս երկու խմբից դլխաւորներն սաստիկ անհաշտ թշնամի էին իրարու դէմ։ Ա.ռանցմէ մին ի՞նչ ընէ աղեկ . . . . . հատագնդի մը պէս իւր արուեստակիցը կընեց, ժամանակ մը սառամանքին մէջ պահեց, և ապա բնական ճամբով դուրս վարեց զայն։ Ա.յս չարագիւտ հնարիւքս յաղթութիւնը վաստկեցաւ. իւր հակառակորդը, ամօթահար և չփոթած, իւր խմբովն միատեղ չուեց և հեռու տեղ մը դնաց որ լուացուի։

Ո՞նէյէ՞ժոյժ ՝է ժաղոե, պէբելէ . . . . Ներելի՞ է լուրջ և ուղիղ դատողութեան տէր մարդոյ մը այսպիսի բաներ դրել։ Ա.րդ՝ կախարդայրեցից, և ա՛յն տխուր ժամանակաց դատա-

ուրայ մեծ մասը՝ Տէլ Բիոյ ճիզուիթին նման կը խորհէր։ Պատմութիւնը Պոռէններու, Տըլանքըրու, Ֆիլաքներու, Նիկողայոս Բէմվիներու, Հանրի Պօկէներու, Վ. Երթերու, Պիւսաքներու անունները պահպանած է, սա ապացուցանելու համար թէ՝ աւելորդապաշտական յիմարութիւնն մինչև որ՞ ասոիճան կրնայ մոլորեցնել՝ մինչև իսկ իրենց տաղանդալի մարդիկները։

Վերապատուելի Հայրն Տօն Քալմէ՝ Կարոլոս Դ. ի սենեկի սպասաւորներէն մէյն, Տէպորտ անուն անձին, դէպքը և կրած դատապարտութիւնը կը պատմէ, որ ծխախոտի տփի մը մէջէն յիսուն հոգւոյ համար պատրաստուած երեք տեսակ կերակրով սեղան մը դուրս հանեց, որ երեք հոգի յարոյց՝ երեք օր կախաղանի վրայ մնալէն յետոյ, որ գալով մը վրայ նկարուած մարդոց հրաման ըրաւ որ կտաւին վրայէն եղնեն զան, սրահին մէջտեղ սպանիական պար մը (*) խաղան։ Ա. յս հաղուագիւտ սպասաւորիս տաղանդոյն վարձատրութիւն՝ փայտակոյտ եղաւ։

Հռչակաւոր Բիւք Տը Մերանտօլ կըսէ թէ՝ կախարդ մը կը ճանչէ եղել, որ սոյնպիսի հրաշքներ կը գործէր՝ մինչ դի իւր ժամանակին ամենէն մեծանուն բնագէտք չէին կրցեր մեկնութիւն մը տալ այնց։ Ա. յս կախարդս, որ տըխուր և լուակեաց մարդ մ'էր, քառասուն տարի շարունակ սատանային հետ պատկեցաւ, և մեռաց աւէն նայեցան որ՝ մարմնոյն բոլոր այն մասը, որ այս նորալուր անկողնակից դիպած էր, ածխոյ նման սև դարձել էր։

Մարլըպրանչ կը խոստովանի թէ՝ առաւելապէս երևակայութեամբ կախարդներ կան, քան թէ իրօք կախարդներ։ Սակայն և այնպէս կ'ընդունի թէ՝ այնպիսի մարդիկ կան, որ կրնան դիւաց հետ դաշնամուտ հաղորդակցութիւնք ունենալ.

Գիտուն Քիրխեր մի և նոյն կարծիքն ունէր, Իւր անսահման հմտութիւնն, փոխանակ զինքն այսպիսի նախապաշարմունքներէ զերծ պահելու, ընդունել տուաւ իրեն թէ՝ կենդանեաց և բուսոց վրայ ուղղակի ազդեցութիւն բանեցնելու կարող անտեսանելի էակներ կրնան գտնուիլ։ Երբ մէկը Քիրխերի գրուածներն կարդայ, զարմանալը կուգայ թէ՝ ի՞նչպէս այսպիսի ընդարձակ հանճար մը այնքան տղայական մոլորութեանց մէջ կրցել է ընկնիլ։

ՀԱՏՈՒԱԾ Դ.

ՊԱԼՍԱՄՕ, ՈՐԵՒ ՔԱԿԼԻՈՍՏՐՈՅ

Անցեալ դարուն գրեթէ կիսուն ատեններըը հռչակաւորն Պալսամօ, որ աւելի Քակլիոսթրոյ անուամբ ծանօթ է, և որոյ վրայ յառաջն ևս խօսեցանք, Ա. պողոնիոս Տիանացւոյն յորդած

(*) Sarabande.

հրաշաղարդ ուղեւոյն հետեւելու փորձ փորձեց. բայց ժամանակները մի եւ նոյնն չ'էին։ Այսու հանդերձ՝ բաւական քաղաքին իւր վրայ աքանչացողներ ունեցաւ, շատ ճանապարհորդութիւններ ըրաւ, եւ ամեն ուրեք գտաւ դիւրահաւան եւ պարզամիտ մարդիկ՝ որոց հաճոյ թուեցաւ զինքը տարօրինակ էակի մը տեղ դնել. այնքան ատոյգ է որ՝ ամեն դարու եւ ամեն ազգէ որեւէն շուտ մը հրաշալոյն կը սիրահարի, եւ ամենէն կաշտ խաբեբայութեանց արդիւնք եղող իրաց մէջ գերբնական բան մը դնելու կը ճգնի։

Քակլիոստրոյի կեանքն, իւր զանազան պատմագրաց խօսքին նայելով, խարդաւանաց, վըտանհուութեան չարաչար գործածման, եւ ձեռնածուութեան երկար շարունակութիւն մ'է, որոց մէջտեղ բաղում ատակ շահեցաւ եւ տխուր համբաւ մը հանեց։

Քակլիոստրոյի կախարդական, կամ այնպէս անուանեալ գործողութեանց պատմութեամբքն՝ հատորներ կրնան լցուիլ։ Այդէն ներկայ երկասիրութեանս Ոֆելոֆենոյ վրայ խօսող դլխոյն մէջ՝ մէկ քանի օրինակ մէջ բերինք անոնցմէ. ուստի ընթերցողն հոն կ'ուղարկեմք։

Այս վարպետութիւնս տեւեց մինչեւ Հռոմայ մէջ ձերբակալ ըլլալուն օրը, ուր տեղ Մասոնական կարգ մը հիմնել ուզելու անխոհեմութիւնն գործել էր։

Իւր գաւառը 1791 ին, Մարտի 21 ին, Սուրբ Ժողովոյն եւ հետեւեալ Ապրիլի 7 ին ալ Պապին

առջեւ բերուեցաւ։ Այս Պապս որ լուսաւորեալ, հեզահամբոյր, եւ մարդկային արեան հեղմանէն սոսկումն ղգացող մարդ մ'էր, յետագայ վճիռն արձակեց։

«Յովսէփ Պալսամօ, անուանեալն Քակլիոստրոյ, բաղմաթիւ յանցանքներ գործած, եւ բացարձակ հերետիկոսաց, խոտորուսոյց վարդապետաց, հերեսիոլոգաստեաց, եւ դժոխայինն վըհկութեան ուսողաց եւ աշակերտաց դէմ արձակեալ դատապարտութեանց եւ պատժոց հանդիպած ըլլալէն՝ի զատ, որ ատուգութեամբ հատատուեցաւ իւր վրայ, նաեւ մեր Քահանայապետական վիճակաց մէջ տիրող օրինօքն սահմանեալ պատժոց ներքեւ ալ ընկած է։ Սակայն եւ այնպէս, իբր մանաւոր շնորհք մը, Յովսէփ Պալսամոյի սահմանեալ մահուան պատիժը մըշտընջենաւոր բանտարգելութեան պիտի փոխուի, առանց բնաւ նեղութեան ատանալու յուսոյ։ Եւ իբր բացարձակ հերետիկոս մը՝ իւր աղանդէն հրաժարելէն յետոյ, պիտի սահմանեն իրեն այն փրկական ապաշխարութիւնքն, զորս պիտի ըսիպտի յանձն առնուլ իւր բանտին մէջ։»

Քակլիոստրոյէն եւս ինքզինքնին ներշնչեալ անուանող ուրիշ չարլաթանք ալ երեւցան. եւ անոնցմէ եւս ուրիշներ ալ։ Կիւսահմայութեան մասին տեւնուած այս հատատքս՝ մինչեւ անցեալ դարուն վերջին տարիները տեւեց։ Այսօրուան օրս անդամ, իւր լուսաւորութեամբք աշխարհս պանծացող մեր դեղեցիկ Գաղղիոյ մէջ, հե-

տաղնապին եղողը խել մը գիւրահաւան մարդիկ կը տեսնէ, մանաւանդ գեղջկաց մէջ, որք կախարդաց խօլերկիւղէն ազատ ըլլալէ շատ հեռի են։

Մեր դարուն սկիզբները, անատնոց համաճարակ հիւանդութեան մը միջոցին, որ Գաղղիոյ գաւառներէն մին աւերեց ու ապականեց, շատ մը թշուառականներ գիւղացւոց հաւատացուցին թէ՝ կախարդք դիւթած էին իրենց հօտերն։ Ա.յս շարլաթաններս հմայն բառնալու և հիւանդութիւնն դադրեցնելու իշխանութիւնն ունիմք կըսէին, և բռածներն իրօք ալ հաւատացուցին։ Բայց գիւղացւոց սուակը կորզելէ միայն զոհ չ'ըլլալով՝ մէկ քանի մարդկանց և կանանց համար դիւթողները սասնք են ըսելով միմեանց դէմ մեծամեծ թշնամութիւններ և արիւնահեղ վճեռը ալ յարուցին։

1810ին Հռովմայ մէջ լրջաբար կը միճաբանէին դիտնալու համար թէ՝ արդեօք ինքն գիրենք կախարդ անուանող անձինք խելքերնին կորսուած էին, թէ չէ իրօք սատանայէն ըմբռնեալ էին։ 1817ին Բարիզու մէջ կատակգութիւն մը՝ որ իր նախկին աղդեցութիւնը վերըսաին ձեռք բերել կը ցանկար, բայց մտքերուն արդի յօժարութեանց ինչ ըլլալն տեսնել չէր ուզեր, երկու խեղճուկ գիրք հրատարակեց. — Յոյսը-ընդդէմ-Նեխին և Կախարդանոցաբոյս անուամբք, որոց մէջ մոգութեան, կախարդաց, այսահարաց կլլն. գոյութիւնը բացարձակապէս հաստատել կուզուէր։ Ա.յս հրատարակութիւնս, որ միանգամայն անդէպ և յիշեալ

կատակգութեան չահուցն ձեռասարեալ էր, ամենուն կարեկցութեան ժպիտն միայն շարժեց, և առասպելաց բաղդն ունեցաւ։

Հուսկ ապա, ինչ ինչ անձանց ժողովրդոց դաղափարներն դէպ 'ի այս հինաւուրց աւելորդասպաշտութիւնքն վերադարձնելու մասին ցոյց տուած յօժարութեանն ու ճգանց իրր ժամանակակից վկաս՝ կրնայ մէջ բերուիլ հետեւեալ պատմութիւնն, զոր Պ. Տը Սակ կը պատմէ իր Յուշ-ն-Նորպալտոնեանց անուն գրքին մէջ։

Անցեալներէն մարդոյն մէկը երիտասարդի կնոջ մը առջև հաստատելու կը ջանար թէ՝ Սուրբ Մակարիոսի օրով, շատ մը կանայք խոստովանութեան երթալէ զանցառութիւն բրած ըլլալով, կախարդաց դիւթութեանցն ենթակայ եղան, և օրին մէկն ալ մատակ ձիոյ վերաուած դանուեցան։

— «Դուք ալ պէտք է ընդունիք որ, պատասխանեց Տիկինը հազիւ ձիծաղը կարենալով զսպել, եթէ այս տարօրինակ այլափոխութիւնս այժմ ևս տեղի ունենար մեր օրոյն պատճառաւ, բոլոր թաղերնիզ զամբիկներով և մարուկ ձիոց մատակներով պիտի լեցնար։»

ՀԱՏՈՒԱԾ Ե·

ԿԱԹՍՐՈՒԹԵԱՆ ՁՈՀ ԴՆԱՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Ա.յժմ բանամք այն արիւնաուչտ գիրքն, յորում դատական առենից գիւամոլութեանց

զոհ դնացողաց անուանքն ու ահագին թիւն ար-
ձանագրուած է ։

Անցեալ չորս դարուց մարդախոշոր յիմա-
րութիւնքն ու ողբալի մոլորութիւնքն ծածկող
քողն առանց կարի 'ի վեր բառնալու , միայն
խիստ նշանաւոր եղելութիւններէն մի քանի հատ
ասոի անոի պիտի քաղեմք , և ընթերցողն դա-
տաւորաց տարօրինակ կուրութեան վրայ յապուշ
կրթեալ՝ ուրախութեամբ պիտի ցնծայ որ այս-
պիսի բանավարութեան նուիրական չահիւն լու-
սաւորեալ դարու մը մէջ կ'ապրի ։

Հնդետասաներորդ դարուն բոլոր առաջին
կիսոյն՝ խարոյկներն հանապազ վառ մնացին բո-
վանդակ քրիստոնեայ երկրից մէջ , և կախար-
դութեան ամբաստանութեամբ անոնց վրայ այ-
րոզ տարաբաղդից թիւն գրեթէ անհատատալի է ։

1485 ին , Կումմոս հաւատաքննիչը իբր վե-
հուկ քառատուն և մէկ խեղճ կանայք այրել
տուաւ՝ Պուրկիայի փոքրիկ կոմսութեան մէջ ,
և հետեւեալ տարիներն ալ իւր դատապարտու-
թիւնքն չարունակեց ա՛նպիսի անխոնջ եռան-
դիւ մը , մինչ պի երկրին բնակիչքն , որոց տաս-
նէն մին միայն մնացել էր , Թողուցին երկրէն
դուրս ելան ։

Գրեթէ միևնոյն տեսիլներն Ա.գկիա հաւա-
տաքննիչը Բիէմոնտի մէջ 150 կախարդաց խա-
րուկահանդէս մը ընել հրամայեց ։ Յետագայ
տարին , երբ երկու հարիւր ալ ուրիշ կախարդ-
ներ իւր հրամանաւ հրոյ ճարակ պիտի ըլլային ,

ժողովուրդը ոտք ելաւ և վանեց հալածեց այս
մոլեռանդ մարդայրեացը , որ Հռովմ փախաւ
ապաստանեցաւ , և անդ 'ի վարձատրութիւն՝
վարդապետի (Docteur) աստիճան ստացաւ ։

Իննովկենտիոս Ը. ին քահանայապետութեան
օրով , պապական կոնդակաւ մը պատուէր եղաւ
հաւատաքննչաց՝ որ կախարդներն փնտռել դրա-
նելու ու պատուհասելու մասին փութաջանու-
թիւններն կրկնապատկեն ։

« Իմացանք որ , կըսէ այս կոնդակս , երկու
սեռէ յոյժ յոռետիւ անձինք չէն երկնչիր դի-
ժոխային դիւաց հետ հաղորդակցութեան մըտա-
նելու , և իրենց դիւթութեամբքն մարդիկն ու
անասունները միանդամայն կը հարուածեն ,
հարատևական առապատան անպատուղ կը դար-
ձընեն , կանանց ազայքն ու խաչանց ձագերն ,
երկրի պտուղներն , դալարավայրից խոտերն ,
ևլլն . ևլլն . կը կոտորեն ։

« Վերոյիշեալ պատճառաց համար՝ կը պատ-
ուիրեմք ամեն քրիստոնեայ երկրի հաւատա-
քննիչաց , որ դատապարտեն ևլլն ։ »

Այս կոնդակիս հետևանքներն սարսափելի
եղան . ահագին թուով մարդիկ զոհ դնացին
անոր , մանաւանդ Սպանիոյ , Գաղղիոյ , Իտա-
լիոյ և Գերմանիոյ մէջ ։ Վա՛յ անոնց որ կախար-
դութեամբ կ'ամբաստանուէին ։ Ատոնք չարա-
չար կայրուէին ողջ ողջ , և բազմիցս կը պատա-
հէր որ՝ միևնոյն փայտակոյտի բազմաթիւ ան-
ձինք միանդամայն կը լափէր ։

Տաճն վերջերուդ դարուն առաջին տարիները՝ ին հոր դատապարտել այսահարաց և կախարդաց թիւն չնուազիր : 1524 ին Իտալիոյ Կումա անուն փոքրիկ քաղաքին մէջ՝ կախարդութեամբ ամբաստանեալ հազար հարիւր տաններկու հոգուց այրուիլը տեսնուեցաւ . — 1570 ին , Պորտոյ իշխան Ֆերդինանտ որ Ռէմին՝ խել մը դժբաղդներ բոցերու ճարակ ընելէն վերջը , դրուագ մը չարագրեց Նէրոնելէն վերջը , որ այս տեսարժանակիս մէջ Գաղղիոյ ունեցած վիճակին ճշդիւնակարագրութիւնն է : Գրուածոյն ներմուծութիւնը արժան է որ մէջ բերենք այս տեղ :

«Բնաղդ անոնք՝ որ Նեռին մօտենալու նշանները վրայօք կը խօսին , համաձայնութեամբ կը հաստատեն թէ՝ մոգութեան և կախարդութեան աճումը՝ նորա գալստեան պատրաստութեան վերջին նշանը պիտի ըլլայ : Արդ չկայ դար մը , յորում այնքան շատ կախարդք և դիւթք դտնուած ըլլան՝ որքան մեր դարուն մէջ : Մեր դատաստանական առենից առջև պատժապարտից տահմանեալ նատարանք՝ այն յանցանօքս տաբաստանեալ մարդկամբ լցուած են : Դատաւորք տոչ գալ տեսնելու չեն բաւեր . բանտերնիս Սատանայի ծախսուած այրերով և կիներով լեցուն է : Օր մը չանցնիր , որ մեր տեսանողներն չարիւնեն մեր արձակած դատակնիքները , և շուարեալ ու զարհուրեալ տուն չդառնան՝ նամբ այն տսկալի խոստովանութեանց վրայ , որոց ունկնդիր ըլլալու պարտաւորութիւնն ունեցած նմք :»

1571 ին՝ Տէզէյէլ անուն մէկը , որ կախարդութեան յանցանօք Արէվի հրապարակին վրայ դլխատուեցաւ , Կարոլոս Թ . թագաւորին առջև բացարձակապէս յայտնեց թէ՝ Գաղղիոյ մէջ երեսուն հազարէն աւելի կախարդք կային , զորս տատանայն իւր դրոշմաւը կնքած էր :

Պօտէն , որ քաչ ծանօթ է ամենուն՝ իւր Դէ--էէ--Ըէ անուն դրուածոյն մէջ դտնուած անհեթեթութեամբքն , և ամեն ուրեք կախարդներ տեսնելու մոլեռանդութեամբն , կը հաստատէ թէ՝ Տէզէյէլի խոստովանած թիւն ո՛չ թէ երեսուն հազար , այլ երեք հարիւր հազար է . . : Բայց խոհականն Մէզըրէ , որ կը կարծէր թէ՝ բնակերութեան համար աւելի օգտակար էր Պոտէնի բանպագուշանաց անհամ հաւաքածոյքն այրել , քան թէ կախարդները , յիշեալ հեղինակին վրայօք խօսելով՝ կըսէ .

«Ան մարդիկ , որ թէև քիչ շատ արժանիք ալ ունենան , անդամ մը երևակայութիւնին այս դատարկ և նսեմ նպերութաքաղքս կը ընուն , վերջը վերջը յիմարաբար կը հաւատան թէ՝ աշխարհս տատանայներով , կախարդներով , և այսահարներով լի է , և իրենց այս անճառնի կարծիքն խիստ ընտասարեր է մարդկային ազգին :»

1583 ին Պերլին քաղաքը ահաւոր դատաստանի մը ականատես եղաւ , յորում երեք խեղճ պառաւ կանայք , մեծ իշխանի մը կալուածոց

վրայ կարկառ ամպ մը իջեցնել առաջ ըլլալու յանցանօք ամբաստանուելով, և յանցանքին վրայինն առաւգուելով, ողջ ողջ այրեցան՝ ի ձայն ցնծութեան համօրէն ժողովրդեան։

1589ին Բարիզու մէջ այր և կին քառասուն հոգւոյ վրայ ամբաստանութիւն եղաւ որ՝ իբր թէ այսոց հետ գարշելի յարաբերութիւնք կը ընէին, և իրենց մարմնոց վրայ Սադայէլի դրոշմը կը կբէին. բարեբաղդաբար այն առեն խորհրդարանին մէջ լուսաւորեալ անձինք կը գտնուէին, որք երկու առողջ մտաց աեր բժիշկ որոշեցին՝ որ երթան ամբաստանելոց վրայ առանձնական կարծեցեալ նշաններն քննեն ու տեսնեն։ Ա.հասիկ սոյն բժիշկաց այս մասին մատուցած տեղեկագիրն։

«Վերոյիշեալ անձանց քննութիւնն մեր ձեռք կատարեցաւ՝ ի ներկայութեան երկու արքունի խորհրդականաց՝ ամենայն ճարտարութեամբ, և առանց բնաւ բան մը մոռնալու ինչպէս որ պէտք էր, բոլորովին մերկացնելով զանոնք, ամեն կողմերնին խզճի մտօք քննելով, և զանազան տեղուանքներն՝ ուր իրենց զգայողութիւնն խիստ սուր էր՝ կճելով։ Նաև շատ կէտերու վրայ հարցաքննեցինք զիրենք, ինչպէս մենամուխ կընեն, և տեսանք որ՝ ոմանք խելագ մարդիկ էին ասոնք, որոց ոմանք մեռնելն մտքէ անդամ չէին անցներ. ոմանք ալ կը վախնային այնմ։ Մեր կարծիքը սա է որ՝ առջի պատուճառ է եղեր. րոս տալ անոնց իբր մաքրողական, քան թէ ուրիշ որ և է պատժական դեղ։

Գրեթէ միևնոյն տեսնեն այսահարաց և կախարդաց թիւն այնքան ահռելի կերպիւ աճեցաւ Ֆրիէսպէրկի և շրջակայից մէջ, որ բողոքականաց կրօնական ատեանը (*) հրաման ըրաւ որ՝ չար այսը վանելու համար հրապարակական աղօթքներ ըլլուին։

Միմիայն Թրէվի կայսրընտրութեան վիճակին մէջ, կըսեն թէ վեց հազար հինգ հարիւր հոգի դատապարտուեցան իբր կախարդ, և այս ալ մի քանի տարուան միջոցի մէջ։

Հակառակ բազմաթիւ խնամատարաց ճարտարախօս ձայնին, որք մարդկութեան դառը կը պաշտպանէին, հակառակ մի քանի եպիսկոպոսաց դէմերը երդմնցնելու վճռման դէմ ըրած բողոքաց, տանեւեօթնեորդ դարուն առաջին տարիներն կախարդաց, դիւահարաց, երդմնեցուցմանց և խարուկահանդիսից թիւը պարհուրելի կերպիւ բազմապատկեցաւ։ Հետն, վրէժխընդրութիւնն, և կուսակցական կամ անձնական շահադիտութիւն իրենց նպատակ ունեցող անձինք՝ իրենց թշնամիքն կորուսանելու համար կախարդութեան ամբաստանութիւնն կը դործածէին՝ իբր անվրէպ զէնք մը։ Բայց ամենէն յոռին սա է որ՝ ոգեհատ խաժամուժն ալ, դատաւորաց և եկեղեցւոյ՝ այս անհեթեթ կարծեացս հաւատալն տեսնելով, ինքն ևս յանխորհուրդս

(*) Consistoire.

և կոյր դկուբայն այս նախապաշարմանցս մէջ կը դլորէր։

Նիկողայոս Ռէմի, Լորէնի դքսին ներքին խորհրդականը կը պարծէր որ՝ մէկ տարուան կարճ միջոցին մէջ ինն հարիւր կախարդէն ազատել տուած էր։ — Կրիլանտոս կը խոստովանէր որ՝ ինքն ալ, իր մասին, հազար եօթն հարիւր եօթանասուն ատ խորոված էր անոնցմէ։ — Տէլ Րիոյ ինն հարիւր, Պոտէն վեց հարիւր, և համեստ Ռոկէ, մի միայն հինգ հարիւր։

1609 ին կախարդութեան ամբաստանութիւնք աւեր և ապականութիւն կը սփռէին Համբէն Գաղղիոյ մէջ։ Ո՛վ կրնայ հաւատալ որ լուսաւորեալ մարդիկ, Սորպոնի աստուածաբան նախան ճեմարանին ուսուցիչք, ինչպէս Տեմանէ, Փելըսաք, հայլք կը արտնչէին որ՝ անպատիժ մնալուն համար կախարդաց թիւը կը կրկնապատկէր։ Ա՛յլ ևս ո՛չ թէ հարիւր հազարներով, այլ միլիոններո՛վ կը համրուէին, կըսէին։ Այնպէս որ՝ եթէ երկիրը այսպիսի դիւամոլաց ձեռօք կառավարուելու ըլլար, Գաղղիոյ թագաւորն քիչ ժամանակէն իր հպատակաց ամենամեծ մասին խորովիլը պիտի տեսնէր։

Մեծանուն Յովհաննէս Ուիէրիոս իմաստասէրն ու բժիշկն՝ այս տեսակ նախապաշարմանց դէմ ամենէն աւելի ուժգնութեամբ յարձակող մարդասէրներէն մին եղաւ. և սատանայական ըմբռնմանց անճառելի և անհեթեթ կարծիք մը ըլլալն, և ամեն դիւադրաց տարօրինակ յիմարութիւնն ապացուցանելու քաջութիւնն ունեցաւ։ Սա որոշ և մեկին վրայտերով հաստատեց թէ՝ այսհոգւոյ ուրիշ բան չէն, բայց եթէ զառանցող երևակայութեան մը ազդեցութեամբն խելքերնին կորուսած ախտագանոտներ, կամ արդանդախտացեալ կանայք։ Ի մի բան՝ ատենակալաց դատն լուսաւորելու, և այս մարդազոհերը խափանելու համար, որ օրինօք թոյլատրուած էր, ինչ որ կրցաւ ընել ըրաւ։

1617 ին Լուի ԺԳ. ի արքունեաց աւագսրեարն՝ հռչակաւոր Կալիկային (Անդրի մարալխախտուհի), որ այն ատեն բանտարկեալ էր ի Պաստիլլ, մէջտեղէն վերցնելու համար ուրիշ ճար չգտնալով, մոգութեան ամբաստանութեամբ դատ բացաւ անոր դէմ։ Ամբաստանութեան դիսաւոր կէտերը հետևեալքն էին. սերտ յարաբերութեան մէջ է եղել հրեայ բժշկի մը հետ, որոյ կախարդ ըլլալը ստուգուած էր. խորհուրդ միս չուտեր եղել. շաբաթ օր պատարագ տեսնելու չէրթար եղել. միանգի կրօնաւորաց հետ դաղտնաբար չատ մը եկեղեցեաց մէջ կը սպրդի կը մտնէ եղել, որ սատանայական տարտմունք գործէն այն տեղ՝ թէ մէջը տարօրինակ ձևերով մոմէ պատկերներ դրուած՝ դագաղաձև տուփեր, անծանօթ տառերով գրուած գրքեր, և սատանին կինիքը ըլլալ ենթադրուած նշանաւ մը գրուիլ՝ երևք թաւիշի պատառ վրան կը պահէ եղել, և վերջապէս կէս դիշերոյն սեւ աքաղաղ մը մորթել է եղել։

Ա.յս պրպտուԹիւնքս այնքան արտառոց, այնքան տղայական երևցան Կալիկայիի, որ խընդալը չկրցաւ բռնել. բայց շատ չանցաւ, երբ տեսաւ որ դատաւորք ամենամեծ կարևորուԹիւն կուտային այնց, աչքերն արտասուօք լցան։

Երբ դատաւորներն հարցուցին իրեն Թէ՝ ի՞նչ հմայուԹիւն բանեցուցել էր Մարիամ Մէտիչիին մտացը վրայ իշխելու համար, սա պատասխանը տուաւ.

— Ես այն էլիքսիրէնը քանեցուցի, որ ջրաստր հրէիներն կ՚ուտէին պէս-պէս հոգս վրայ։»

Ա.յս պատասխանս, ախտանակ առեներակալներն լուսաւորելու, իւր մահապարտուԹեան վճիռը արագացնել տուաւ։

Զինքը խարուկի դատապարտող պժգալի դատակնիքը սա պէս կը վերջանար.

«Էլէոնորա Կալիկայի, աստուածային և մարդկային քրէական յանցանօք մեղապարտ, Կրէվի հրապարակին վրայ դլուխը մարմնէն զատուելու դատապարտուած է. դլուխն ու մարմինը յետոյ պիտի այրուին, և աճիւններն հողմոց պիտի ցրուին։»

1631 ին, Միշէլ Եոարոն անուն ձեռնհվրայի վիճակէն դիւղացի կին մը, ի դժբաղդուԹիւն իրեն, քաղաքին դրանց մօտ սատանայի մը հանդիպեցաւ. (պատմուԹեանս այս եղանակաւ սկսիլը տեսնողն Թերևս պատասական առասպել մը համարի զայն. դժբաղդաբար իրական եղելուԹիւն մը, սրտաճմլիկ պատմուԹիւն մ՚է)։ Ա.յս սա-

տանայն հաղար տեսակ քաղաքավարական խօսքերէ, հաղար տեսակ փաղաքուշ քծնուԹիներէ վերջը՝ մանկամարդ դեղչկուհին ընդդրկեց, և անոր չրԹանցն ու ծոցոյն վրայ Սադայէլի դըրոշմը ձգեց, որ ըստ դիւապրաց, մարդոյս որ կողմն որ դանուի, անդադար կընէ այն կողմը։

Ա.յն վայրկենէն սկսեալ՝ Միշէլ վհատ կանանց ընկերակցուԹեան մէջ մտաւ, և որչափ կին որ կըցաւ՝ անոր անդամ դրելու ջանաց։ Երկու ազգկանց ծնողք, որոց ազգիկներն հմայել էր, դատաստանական առենին մատնեցին զինքը, և Միշէլ անմիջապէս ձերբակալ եղաւ։ Բժիշկներ կամ մանաւանդ չարլաթաններ, որք այս ախտազօսը անարժանաբար կը դործածէին, քննեցին զնա, և յիրաւի անոր վրայ սատանայական նշաններն դտան։ Վ.րան երկայն ասեղներ միսած առեններն արիւն ցայտեց, և Թըշուառ կնոջ արձակած ճիչերէն հասկցուեցաւ որ անդդայ չէր նա։ Բայց դատաւորք կարծիք յայտնելով Թէ՝ այն ճիչերը կրնային կեղծ եղած ըլլալ, տանջանաց մատնեցին զայն, որ ամբաստանելոց բերնէն խոստովանուԹիւն առնելու սովորական միջոց մ՚էր։ Եւ արդարև՝ դահճաց ձեռօք Միշէլի մարմնոյն մորթը պատռտելով, երկաԹի ճանկերով միսերը քեծուելով, ոսկրները կատրտուելով, ինչ որ կուղէին խոստովանեցաւ։ Տանջանքն դադրելէ վերջը, բժիշկք վերստին փորձ ըրին իրենց ասեղներովն. բայց խեղճին տանջանաց մէջ կրած ցա-

աերը այնքան աղեխարշ, այնքան երկարատև եղել էին, որ այլևս առիղի խայթուածք մը չէր կրնար զգալի ըլլալ։ Այս կերպիւ կախարդութեան յանցանքն վրան առուգուեցաւ, և մի և նոյն երեկոյին ահագին փայտակուտի մը բոցերը տարաբաղդ Միշէլ Շատրոնի մարմինն լափեցին սպառեցին։

Դարձեալ՝ Յովհ. Մկրտիչ Կոճրեան, Մարսիլիոյ ժողովրդապետը, 1611 տարւոյն սկիզբները ամբաստանեցաւ թէ՝ Սադայելի հետ սերտ հաղորդակցութիւն կընէր, կանանց առտնեայական սիրալարերը կը մատուցանէր, և անոնց ամենէն անտարբերներուն իսկ պաշտելի կընէր ինքզինքն։ Բաւական էր որ դեռահասակ օրիորդի մը, կամ մանկամարդ կնոջ մը վրայ փչէր. (երբեք պառաւներու վրայ չէր փչեր), և ահա նոյնհետայն իւր սիրովը կը վառէր զայն։ Բայց ամենէն աւելի զարմանալի կէտը սա է որ՝ դատաքննութեան առեն բազմաթիւ դեղանի Մարսիլիուհիք հաստատեցին թէ՝ յիշեալ կախարդին այս ինչ կամ այն ինչ ժամանակ վրանին փչած ըլլալը մտքերնին կուգար . . . . ։ Այս տարօրինակ վկայութիւնս Ուրսիւլեան կուսանաց մենաստանի մը մէջ պատահած անկարգութեանց համադիպելով, զրպս դարձեալ իրեն կը վերբերէին, հետ ժողովրդապետը ի կորուստ մատնեցին, և ոչ ոչ այրուելու դատապարտուելն պատճառ եղան։ Ուստի տանջանաց մատնեցին զինքն, որպես զի իւր Սադայելի հետ ը-

րած դարշելի դործողութիւնքն խոստովանի, և իւր՝ երևակայական անդոյ մեղք մը խոստովանել չ'ուզելուն վրայ՝ տանջանքները ևս առաւել կրկնապատկեցին։ Չուսկ ուրեմն խեղճ մարդը, չ'կրնալով այս դառնակսկիծ ցաւոցս հանդուրժել, իրմէ պահանջուած խոստովանութիւնը բրաւ։

Ս.Հաւատիկ Կոճրէտիի խոստովանութեան համառօտութիւնն, որ Բրուքսէլի խորհրդարանին դիւանական արձանագրութեանց մէջ նշանակուած է։

«Կը խոստովանիմ որ՝ Դժոխոց Իշխանին հետ դաշնակցութիւն մը կռնել եմ, և անկից ինչ բանի որ կարելի է փոխաբերել, զայն դործելու կամ առնելու իշխանութիւնն առել եմ. իշխանութիւն մը՝ զոր ընդարձակօրէն դործածեցի . . .

Կը խոստովանիմ որ վկիայ ժողովը կը յաճախէի, և անդ տեղի ունեցած ամեն չուայտութեանց, ամեն պժպալի դործողութեանց հաղորդ և մասնակից եղեր եմ . . . . .

«Կը յայտնեմ որ՝ վկիայ ժողովրդատեղ հասնելուն՝ ամեն կախարդ Բէհէդզեբութի առջև կը ծնրադրեն, պաշտօն կը մատուցանեն անոր, յետոյքն կը համբուրեն, և այս պաշտամունէս յետոյ՝ բոլոր ներկայ դանուողք պարտին զՍատուած, Երկինքն ու Սուրբերն ուրանալ . . . .

«Կը յայտնեմ թէ՝ իմ հաճութեամբս սատանային նշանը կամ դրոշմը ընդունել եմ, և թէ այս նշանս՝ որ Սադայելի պզտի մատին ընդունդովը դծուած է, այն վայրկենին այրը-

ւածքի դիացում մը կը պատճառէ , և այն տեղի միտը այնուհետև ճմլեալ կը մնայ ։

«Վերջապէս կը խոստովանիմ որ՝ բաղում կանանց և մանաւորապէս Մագդաղինէ տը լա Բալիւտի վրայ փչել եմ . նոյնպէս կը խոստովանիմ որ Ուրսիլեանց մենաստանին մէջ անկարգութիւնք պատահելուն պատճառ եղած եմ՝ սատանայից Էջէնն մը խրկելով հոն, որք գիշեր ցերեկ զանոնք անհանգիստ ըրած ըլլալու են։»

Լուտոնի դիւահարութեան պատմութիւնն , Ուրբանոս Կրանտիէի տանջանքն , և այն մեծ և ահաւոր հանդերձանքն , որ այս առթիւ ի ցոյց տրուեցան , այնքան հռչակաւոր եղած են՝ որ չեմք կրնար լռութեամբ անցնիլ աստ անոնց վրայէն ։

Այս պատմաբանութեանս մէջ , քայլ առ քայլ Պայլի պատմաբանութեանն ալիտի հետեւիմք , միայն անոր խիստ տաղտուկ մասերն ու երկար բարակ աւելորդաբանութիւնքը կրճատելով ։

«Ուրբանոս Կրանտիէ՝ Լուդունի ժողովրդապետ և Կանոնիկոս՝ դիմաց դեղեցկութիւնն և մտաց հրապոյրքն միալոյծ կը բերէր յանձին . հագուստի ու կապուտի մասին բարեձև , տիկնանց հետ փաղաքուշ , ամուսնոց հետ քաղաքավար, և իմաստասիրաց հետ՝ի կրօնականս ներըզաւմիա կը դառնար . ի մի բան խիստ սիրուն ժողովրդապետ մ'էր սա՝ ի մարդկանէ դրուատեալ, ի կանանց սիրեցեալ, իւր յաջողութիւնքն իւր ընկերակցաց նախանձը դրգռեցին , որոց դէմ

խօսելու անխոհեմութիւնն ունեցաւ քարոզին մէջ, և որք այն վայրկենէն երդում ըրին որ՝ գինքը կորուսանեն ։

Ուսոյ ամբաստանութիւն եղաւ իւր վրայ թէ՝ Լուդունի Ուրսիլեանց կուսաստանին վանահայրութեան թէկին ածելը անբարոյական նպատակաւ էր ։ Իւր կանանց հետ ունեցած տարիական հաղորդակցութիւնքը Ռուադիէի եկեղեցական դատաւորին իմացուցին , որ գինքն իւր Թոշակէն զրկեց , և կղերանոցի մը մէջ ապաշխարանք քաշելու դատապարտեց ։ Կրբընաւիէ այս վճիռը չընդունելով՝ իբր զեղծում բողոքեց , և Ռուադիէի վերին Սաենէն անպարտ հռչակուեցաւ ։

«Իւր թշնամեաց վրէժխնդրութիւնն , զորս առ ոչինչ դրելու պակասութիւնն դործեց, խան ինչ ժամանակ թաղուն մնաց , որպէս զի աւելի ուժգնութեամբ երևան ելնէ ։ Երեք տարի յետոյ , ժողովրդեան մէջ համբաւ տարածեցին թէ՝ Լուտոնի Ուրսիլեան կուսանք դիւահարել էին , և այս դիւահարութիւնս յայտնապէս Կրանտիէ կախարդին դիւթութեանց արդիւնքն էր ։ Բազմաթիւ կուսանք ևս , որք յառաջուց այս մասին դաս առած էին, չամաչեցին խոստովանելու թէ՝ դիշերները զարհուրելի տեսիլքներ կը տեսնէին, թէ Կրանտիէ աչքերնուն առջև կուգար ժանտատեսիլ կերպարանօք , և թէ զայս տեսնելնուն՝ ջղաձգութեամբ կ'ըմբռնուէին ։ Լուտոնի ժողովրդապետն բողոքեց այս ստախօսութեանց դէմ

զինքը կորսնցնել ուղղներն ամբաստանելով, և ինքզինքն պաշտպանելու համար միջոցներ ձեռք առաւ։ Իւր թշնամիքն իւր ճարտարախօսութեան չէին երկնչելով, խոհեմութիւն համարեցին որ Ռիշելիէօ կարդինալը այս գործոյն մէջ միջամտելու յօժարեցնեն. ուստի Կրընատիէն ամբաստանելին թէ՝ ինքն հեղինակած ըլլայ Լ՚ոպէ Կոզիմօյին անուն պաղ երդիծաբանութիւնն որ նոր հրել էր այն աստն կարդինալին դէմ։ Ռիշելիէօ, որ աւելի զգայուն էր անուանարկիչ գրուածոց քան զոր չէր վայլեր մեծ մարդոյ մը, այս զրպարտութեանս հաւատաց, և Լօպարտը-մին խորհրդականին, որ իւր ձեռնասունն էր, հրամայեց որ մանրախոյզ քննութիւն ընէ և յանցաւորը գտնուպարտէ։

Կրընատիէ 1633 ին Դեկտեմբերի 4 ին ձերբակալ ըլլալով՝ Անժէր տարուեցաւ։ Պաշտօնեայն աքսորանի հրովարտակները խրկեց, յորս պատուէր կըլլար որ չուտ մը ամբաստանելոյն գատաստանը տեսնեն. ուստի Լուտունի մերձակայ տեսանողներէն տասն երկու դատաւոր, ամենքն ալ արդարև բարի, բայց մեղապարտ դիւրահաւատութեան տէր մարդիկ, կանչուեցան և այս գատս տեսնելը անոնց յանձնուեցաւ։

Մէկզմէկէ աւելի այլանդակ, մէկզմէկէ աւելի արատաւոր երկարատև հարցաքննութիւնները վերջը, խեղճ Կրընատիէն հարցման տասնեակ ենթարկեցնէն վերջը, որ նորա սրունքից ակրնները կոտրտեց, և արիւնաշաղախ խմոր մը դարձաւ ըլլան, հետևեալ վճիռը արձակուեցաւ իրեն դէմ, վճիռ մը՝ որոյ նմանը ամենէն խստաժպատիժ պատից մէջ անգամ տեսնուած չէ, և որ մեր տարեգրոց մէջ պիտի մնայ իբր ապացոյց մը այն մարդկանց պատճառած սոսկալի չարեաց, որք աւելորդապաշտութեան թոյնը կը փբչեն ժողովրդեան վրայ։

«Օգոստոս ամսոյն 13 ին, լսելով Լուտունի Ուրսիւլեան կուսանքն ըմբռնող դիւաց դուխ՝ Սերովբէից կարդէն Սոսբոլտոյ բռնած ներսը, տեսնելով Սիմոնոյ կարդէն Լոռոյ, Կեղտոյ, Սուվոյ, Գեղձի և Սոմպէի, և Իշխանութեանց կարդէն Սպէյի, Զաբուղնի, Նեբիոպոոյ, Քամոյ, Ռուէյի և Սուզա վկայութիւնքը, կը յայտարարեմք որ՝ Լուդունի Սէն Բիէռ որ Մարչէի ժողովրդապետ և Սուրբ Խաչ եկեղեցւոյ կանոնիկոս Տէր Ուրբանոս Կրընատիէ քահանայն մոգութիւնք և դիւթութիւնք դործած, և իր պատճառաւը Լուտունի Ուրսիւլեան կուսանաց, և գատաստանագրոյն մէջ նշանակեալ այլ անձանց անձին վրայ դիւահարութիւն պատահած ըլլալը որոշապէս և իրաւացի ստուգուած, և ինքն իսկ իր բերանովն հաստատած է. ուստի՝ ի հատուցումն և՝ քաւութիւն յիշեալ յանցանաց՝ կը դատապարտեմք զինքն որ՝ հրապարակաւ յանցանքն խոստովանելէ յետոյ ողջ ողջ այրուի՝ ամբաստանագրոյն մէջ գանուած դաշանց թղթերովն, մոգական տառերովն, և մանաւանդ հոհանայէց սմոլինեանն դէմ իւր ձեռագիրը չարադրեալ ձեռա-

գրոյն հետ միատեղ և իւր աճիւններն հողմոյն յուշին։»

Կրընաւոիէ պաղ արեամբ իւր դատակնիքը մուիկ ըրաւ, և դէպ 'ի տանջանաց տեղը քայլեց առանց բնաւ լքման նշան մը ցոյց տալու։ Երբ փայտակուտին վրայ կեցած էր, կըսէն թէ խոշոր ճանճ մը եկաւ գլխոյն շուրջը թռչտեցաւ. զայս տեսնելուն՝ կրօնաւորներէն մին սկսաւ պոռալ թէ՝ սատանայն էր այն, որ ճանճի կերպարանօք կախարդին հոգին գրաւելու կուզար՝ որպէս զի դժոխոց խորշը քարչէ տանի զայն։ Ս. Հրեշտակն այս խօսքերս լսելուն՝ երեսը խաչակնքեց, և սկսաւ կրակին արծարծել, որ մի քանի վայրկենի մէջ լափեց մեխիլ դարձոյց գլուխը։

Բայց Կրընաւոիէի մահը բոլորովին չէ հաղորդեցուց Ուրսիլեան կուսանաց մէջ պատահած վրդովը։ Իւր թշնամիք ուրիշ անձնական չահեր ունէին այս պիղծ խաբեբայութիւնն չարունակելնուն, տեսան, թէ՝ չատ մը կրօնաւորուհիք իսկ և իսկ այս սահարութեան վիճակի մէջ կը գտնուէին, և թէ՝ երդմնեցուցմունքն անհրաժեշտ հարկ էր արձնակել։ Ուստի Ռիշըլիէօ, որոյ բանին կուսնակել։ Ուստի Ռիշըլիէօ, որոյ բանին կուսդար որ ժողովուրդը դիւրահաւան ձեայ, պետութեան գանձէն յատուկ թռչակաւորեալ դեսերդմնեցուցիչներ խրկեց 'ի Լուտուն, որ անհնարին սատիկ մարտ յարուցանեն հետ սատանայից դէմ, մինչև որ Ուրսիլեանց մենաստանը գլխովին ազատեն անոնց ներկայութենէն։

Դիւաց քաշ երդմնեցուցիչ Սիւբէն ճիզվիթը կը պատմէ թէ՝ հոն մնացող սատանայք որչափ կրցան, քայլ առ քայլ պատերազմեցան իրեն հետ։ Լեվի-Բռն, որ աւագուհւոյն գլուխը ամրոց ընտրել էր իրեն, լաւ դիմադրեց մինչև 1635 ի Նոյեմբերի 5ն, որ ժամանակ անկից չուելու ստիպուեցաւ։ Բոլոր, որ կրօնաւորուհւոյ մը դոդը զեռեղուել էր, և կերևար թէ ախորժել էր այն տեղէն, նոյն ամսոյն 29ին միայն կրցաւ անկից հանուիլ։ — Իլուէթոն՝ ուրիշ քեռ մը անրակին եռանը պահելրատած՝ մինչև հետևեալ Յունուար 6ը կեցաւ այն տեղը։ — Բեհեհսէդ սատանայն ուրիշ քեռ մը ստորովայնին խորին կողմերն ամրացած ըլլալուն՝ ամենէն աւելի յամառութեամբ դիմակալողն այս եղաւ, և միայն 1637 տարւոյն Հոկտեմբերի 15ին կրցաւ իւր բերդէն արտաքսուիլ հայր Սիւբէնի զօրաւոր երդմնեցուցմանց հակառակ, որ երկու տարի չարունակ իւր խեղ ընկերուհւոյն եկամուտը ինքն առնուլը չ'մոռցաւ։

Ա. յս օրուան օրս ի՞նչ կրսէին այն դրագիտին, որ այսպիսի պատմութիւնները հրատարակելու ըլլար։ Անտարակոյս խելքը կորսուած, և կամ դիւամոլական մենամոլութեամբ ախտացեալ պիտի համարէին զայն (*)։

(*) Չատատալի՛ բան է որ 1858ին, մեր այս լուսաւորութեան դարուս մէջ, գիրք մը հրատարակուած ըլլայ Ոչխոց հատանող յայտնութեանցն ոս ղանդ ընդ բոմբ

Ա.յս և ասոր նման բաղմաթիւ դատապարտութիւնք ևս տեղի ունեցան տակաւին Գաղղիոյ մէջ, մինչև այն ատեն որ՝ Լուի ԺԴ.ի դարուն դիանականք այս մարդախաշոշ վերջմանց դէմ պերճախօս ձայնիւրնին բարձրացուցին, և փաստիւ հաստատեցին որ՝ բոլորը այն կախարդութեան և երդմնեցուցման իրողութիւնքն մարդկութեան դէմ քրէական յանցանք մը, կրօնի պղծութիւն մ'էին։ Ընդ այս թագաւորը խռովելով հրովարտակ մը հանեց, որով Գաղղիոյ ամեն դատաստանական ատեններից կը պատուիրէր որ՝ այնուհետև ամենևին պարզ կախարդութեան ամբաստանութիւն չընդունին։

Սակայն ամենակարող թագաւորին այս արգելին հակառակ, քանի մը տարի յետոյ դարձեալ Ժիրար ճիզվիթին վրայ ամբաստանութիւն եղաւ որ՝ իւր Մարիամ Քահանէր անուն պեղադէմ խոստովանողին հմայել, և այն հմայութիւնը՝ ի չարն գործածել է։ Ա.յս մանկամարդկինս կըսեն թէ՝ ճիզվիթին թշնամի կարմելեան կրօնաւորի մը դրդմամբ՝ գայթակղութիւնը աչքն առաւ. ամբաստանութիւնը առուգելու համար ատենին առջև եղաւ, և ամբաստանութիւնը զրկխովին՝ ի բաց թողլով՝ առաջարկեց որ հմայուած

աթելոս ջլոյնեբուան վրայ։ Ա.յս դիրքս, որ չատ անձանց սրհաւիրք աղդել է, բայց աւելի չատ անձանց ալ ծիծաղը չարժել է, յայտնապէս կ'երևի թէ տեսակ մը յարմնեբաղդ աղդեցութեան ներքև չարագրուած է։

ըլլալուն շոշափելի փաստեր ցոյց տայ։ Բայց այն ժամանակի լուսաւորեալ դատաւորք ո՛չ ևս Սադդուկեցի և կամ նորա զուգադաց կը հաւատային։ Հայր Ժիրար անպարտ արձակուեցաւ, և Մարիամ Քահանէր դատաստանին ծախքերն վճարելու դատապարտուելով ամենապարտ ետքաշուեցաւ։ Ա.սի Գաղղիոյ մէջ այս տեսակ դատերուն վերջինն եղաւ։

Անցեալ դարուն՝ Լուդերնայի նահանգին մէջ Միլլեր պատմագիրը և իւր բարեկամներէն մին ծառոյ մը տորոտն հանդարտ նստած, և Տակիտոսէն երես մը բարձրաձայն կարդացած ժամին, քիչ մնաց որ չարաչար պիտի սպաննուէին գիւղացւոյ խմբէ մը, որոց երկու աբեղայ հաւատացուցել էին թէ՝ այն երկու օտարականք կախարդներ էին։

Սրր Ո՛ալթըր Ա.բօթթ կը պատմէ թէ՝ 1750ին Յուլիանէ Քօքս անուամբ պառաւ կին մը խաբուկի դատապարտուեցաւ՝ լոկ որսորդի մը վկայութեամբն, որ սա եղանակաւ էր։

«Կը յայտարարեմ որ՝ չունեցոս նապաստակի մը եռանդն արձակած ըլլալով, երբ այն տեղն հասայ որ նապաստակը կանգ առնելու սովորել էր, մայրաքի մը եռև Յուլիանէ Քօքսը գըտայ գետինը պառկած, շնչահատ և ոդեսպառ, այնպէս որ համոզուեցայ թէ չունեցոս եռանդն ընկած նապաստակն էր այն։»

Սոյն վկայութիւնս բաւական եղաւ դատաւորաց, և Յուլիանէ Քօքս՝ իւր բողոքնացը

հակառակ թէ չ'էր կրնար նապաստակը եղած ըլլալ, անոր համար որ ինք կին մարդ էր, մինչդեռ օրն այրուեցաւ։

1751 ին երկու աղքատ կանայք, վրանին կախարդութեան կասկած ըլլալով, Լոնտրայի դրեթէ դռներուն մօտ խաժամուժին ձեռքը ծուխմայն եղան, և իշխանութիւնն ալ այս ոճիրս անպատիժ թողուց։

1768 ին իշխանի մը ազդեցութիւնը և իշխանուհւոյ մը քաջասրտութիւնը միայն կրցաւ Եդինբուրգի քաղաքներէն միոյն բնակչաց կատաղութենէն աղատել տասներկու կանայք, որք մոգութեամբ ամբաստանեալ էին։

1774 ին՝ Գերմանիա Կասնեը և Երէօքֆէը մնչեռանդից ձայնին կը լսէր, և անոնց հրաչից և երդմնեցուցմանց վարդապետութեանը կը յարէր։

Տանեւութերորդ դարուն մէջ տեղուանքը Գաղղիոյ մէջ նանրապաշտութեանց կործանեալ չէնքը վերականգնելու փորձ ընողներ դանուեցան. բայց Համբերսան Բատերոյ հեղինակներուն ահաւոր վաղանգը արմատաքի քանդեց հինգեւտասակ կործանեց զայն, և 93 ի բուռն մրրիկն նորա վլաճոյքն իսպառ ցրուեց ու անհետ ըրաւ։

Սպաքէն Եւրոպիոյ բոլոր ժողովուրդք, քիչ կամ շատ, այս մեծ դարագլխոյս չարժմանն մասնակից եղան. սակայն աւելորդապաշտական դաղափարք նոցա մէջ աւելի խոր արմատացեալ ըլլալով, միևնոյն դիւրութեամբ չկրցին խլուիլ հանուիլ։

Պաւիերայի և Սպանիոյ մէջ տակաւին մեր դարուն սկիզբները սատանային կը հաւատային, ու կախարդները կ'այրէին։ Դեռ յիսուն տարի չ'կայ, Վիւրցպուրգի հասարակաց հրապարակին վրայ տասներկու կախարդաց, զորս տանջանաց մատնել էին, մտացածին եղեռանց խոստովանութիւնը կարդացուեցաւ։ Այս խոստովանութիւնս սա պէս էր։

«Կը խոստովանիմք որ սատանային պաշտը բռնել ենք վհկաց դիշերաժողովին մէջ. կը խոստովանիմք որ մեր դիւթութեամբք շատ մը մարդկանց կեանքը դատաճանել ենք»։

Տանջանաց ուժով բռնի առնուած այս խոստովանութենէս աւտ բան չ'կար. վասն զի այն անձինքն, որոց համար կախարդները կըսէին թէ մեռնելնուն պատճառ եղել են, ներկայ կը դտնուէին այն ընթերցմանս. բայց դատաւորաց կուրութիւնը այն աստիճան էր՝ որ այս տասներկու թշուառացս արեամբն ձեռքերնին պղծեցին։

Իսկ Սպանիոյ դալով, դեռ չատ աւելն չ'կայ որ Հաւատաքննութեան Աւեներն խարոյկներն մարած են անդ. իրաքանչիւր ոք դիտէ թէ այս սոսկալի օրրանի բարբարոսութեամբ կախարդներն և հերետիկոսներն այրել կուտար։

Եթէ Սպանիացիք Կայսրութեան պատերազմները Գաղղիացւոց հրեսին տալու իրաւունք ունին, միւս կողմանէ օրհնելու են զանոնք՝ որ առաջին հարուածը տուին այս արիւնաւուչ օ-

բէնսգրութեան, որ այնքան երկար առևն իրեն դեղեցիկ երկիրն տասանորդեց։

Զգենք դարձեալ այս նահմաստուեր պատկերաց վրայ վարագոյրն, զոր պահ մը վեր առել էինք, և եղելութեանց յիշատակը միայն միտքերնիս պահելով՝ փառք տալու համար այն լուսաւորեալ անձանց, որք կրօնական աւելորդապաշտութեանց հրեշային չէնքն անդառնալի կերպիւ ջնջեցին. և դոհ ըլլամք մեծապէս որ այս օրինակ արիւնդուշտ տեսարանաց դէմ յաւետ փակեալ դարու մը մէջ կ'ապրիմք։

ԳԼՈՒԽ ԻԸ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ԳԻՇԵՐԱԺՈՂՈՎ ՎՀԿԱՑ (Sabbat)

Սապ- բառը, որ երբայական Շ-Բ-Թ բառն է, և հանգստեան օր կը նշանակէ, դիւագիրներն գործածել են դիւաց իշխանին նախագահութեանը ներքև կախարդաց երևակայական մէկ ժողովը նշանակելու մտօք։ Սա ալ ըսելիք այս տեղ, որ հնութիւնը բնաւ երբէք այնքան անճառնի առասպել մը, այնքան նողկալի պատկեր մը երկնած չէ։ Ս.հաւասիկ սոյն դիշերաժողովոյն նկարագրութիւնն՝ ըստ ամենէն ջերմեռանդ դիւամոլից։

Վհկաց դիշերաժողովը շաբաթը երկու անգամ կը գումարի՝ մէկ մը Հորեքշաբթիէ Հինգշաբթի լուսնալու, մէկ մ'ալ Ուրբաթէ Շաբաթ լուսնալու դիշերները։ Գումարման տեղը մեկուսի տեղ մը կամ քառուղի մընէ, ճախճախուտի մը կամ լճի մը եղերքն՝ թաւաստուեր

անտառի մը մէջ տեղ, Գիշերաժողովոյն հրաւիրեալք անկողին մտնելնէն յառաջ՝ պարտին ֆթիան օձոմը կատարել վրայնին, այսինքն է մարմինն չվնասել տեսակ մը անուշահոտ խզուվ(*), ղրմէ վերջը պիտի խօսիմք։ Երբ ժամադրուած թեան վայրկեանը կը հնչէ, Սադայէլ նշան մը կուտայ, և կախարդք՝ ոմանք նոխազի մը կամ սև կատուի մը, կամ գայլոյ մը, և կամ իշոյ մը վրայ հեծած, ոմանք ալ աւելի կոթի մը, կամ երեքժանուոյ մը, թռչուն արջնագորտի մը, և կամ ջղկիան մը վրայ աշտանակած՝ օդոյն մէջէն կ'անցնին, և որոշեալ տեղը կ'իջնեն։ Այս տեղ պարտիմք դիտել տալ որ՝ սովորաբար ձիւնելոյզէն, և եթէ ձիւնելոյզ չըլլայ, փականքին ծակէն դուրս կ'ելլեն կախարդներըն։

Գիշերաժողովոյն ներկայ գտնուիլը անհրաժեշտ հարկ է. այն կախարդն որ բացակայ դըտնուի, առաջին անգամ տասնիկ յանդիմանութիւն կը լսէ. իսկ երկրորդ անգամ եթէ բացակայ գտնուելու ըլլայ՝ Սադայէլ խիստ տասնիկ պատիժ մը կը սահմանէ անոր։

Քարտուղարաց ամենքն ժողովատեղին հաւաքուելէն վերջը, Սադայէլ յանկարծ երեան կուգայ մէջերնին՝ երկայն եղջիւրներ ունեցող նոխազի մը կերպարանօք, և պոչին ներքև ալ մարդկային դէմք մը ունենալով. ահա այն թանձրացուցչին, սեամորթի և տափկաքիթի դէմքին է

(*) Փոմատա։

որ՝ խորհրդազգեաց պարտին մատուցանել իրենց երկրպագութիւնն։ Բայց այս երեւմանց մէջ ամենէն զարմանալի կէտը սա է որ՝ նոխազը խիստ փոքրիկ ատեն մը դուրս կելնէ. հասակը հազիւ մկան մը չափ է. յետոյ քիչ քիչ կը մեծնայ, և յաւակ ուրնին հսկայական մեծութիւն մը կ'առնայ։

Գիւթական մատենից դիտութեանն ներկուսացուցիչ կախարդք և դիւամոլք կը հաւատան թէ՝ նոխազի կերպարանքը բացարձակապէս հարկաւոր չէ. այլ այսոց իշխանը կրնայ ըստ հաճոյս վայրի եզան, դոմզոյ, իշոյ, որսական բարակի, կատուի, օձի, անգղոյ, նշոյ. և այլն. կերպարանօք ալ երեւիլ. միայն սև գոյնը և յետսակոտմը մարդկային դէմքը գտնուիլը անպատճառ հարկաւոր է։ Երբ մարդ երեւակայութեան այս այլանդակ և հրեշային մոլորմանցը վրայ մըտածելու ըլլայ, կամայ ակամայ կ'տիպուի յիմարական ցնորման արդիւնք համարիլ զայնս։

Տըլանքր դիւագիրը կը հաստատէ թէ՝ հազարէն աւելի կախարդներ, զորս ինքն իսկ հարցաքննել և՛ հուր դատապարտել է, ամենքն ալ միաձայն Սադայէլը հետևեալ կերպիւ նկարագրել են։

Սադայէլ վհկաց ժողովոյն կը նախագահէ. բեհեմոթ այծոտոյ մը վրայ նստած. գլուխը սև եղջիւրներու պսակ մը բոլորուած է. միւսանգրէն աւելի երկայն եղջիւր մ'ալ ճակատէն կելնէ, և փոխանակ սրածայր վերջանալու փողոյ մը բեր-

նին նման խորանաձև կը լայնայ. այս խորանաձեւ բերանէն կիզանուտ կազ մը կ'ելնէ, որ դիւշերաժողովչին տեսարանը լուսաւորելու համար ջահի տեղ կը ծառայէ: Իր ժանտատեսիլ և ծամածուռ դիմաց մէջտեղ հնոցի մը չափ լայն, և յօլազի ակռաներով զինեալ բերան մը կը բացուի. քիմը արծուոյն կտուցին կը նմանի. իւր կլորակ և մեծ մեծ բացուած աչքերէն կապոյտ նաչորակ նշոյլներ կը ցոլտեն. սրածայր ականջները գլխոյն կատարէն ալ վեր կը բարձրանան: Նոխազի երկար մորուք մը կախուած է կզակէն. իրանը ոճև և սապատոներով ծածկուած է. սրունքները՝ այծամարդոյ մը սրունքին նման նիհար՝ երկար մազերով ծածկուած են. ոտքերը, ինչպէս նաև ձեռքերն հաւասարաչափ երկայնութեամբ, և միանդամայն զօրաւոր ճիրանաձև ըղունգներով զինեալ լայնչի մատներ ունին. պոչը բոլորովին նման առիւծու պոչին՝ սա տարբերութեամբ որ ծայրը գանուած մազէ փնջին մէջտեղ՝ կայծակնացայտ աչք մը կայ բաց. ձայնը լսես տեսակ մը հռնչիւն է, որ դեղեալ ամանի մը ձայնին կը նմանի: Դիւաց իշխանը՝ իւր սիրելիներէն և գլխաւոր սատանայներէն չրջապատեալ՝ գոռոզ շարժուածք մը, անայլելի լրջութիւն մը կը կեղծէ. բայց իւր դիմացը վրայ դիւրին է որոշել որ՝ տխուր և տաղտկացեալ բան մը կայ:

Նոխազին անունը Մոդէնէ (վայրի ծիծառն) է. իսկ սորագասեալ սատանայներն այլեւայլ

անուններ ունին աւելի կամ նուազ քնքոյշ. ինչպէս Գելըդ. — Փայտ-ծոպէլ. — Բոբեռոդ. — Նըքհոռոկ. — Խոտ-տոպըռէրոն եւլն. եւլն:

Ժողովը կը բացուի՝ սորակարգ սատանայի մը կախարդաց ամենուն մի առ մի անունը տալովը, և քանի անուններն արտասանուին, Սադայէլ մի առ մի այն անուանց տեղերուն քով երթալով՝ աչքէ կանցնէ զանոնք, սառուցելու համար թէ՝ արդեօ՞ք իւր ծառայութեանը մատած ըլլալուն նշանը կը կրեն վրայնին, և նոր եկողաց ալ՝ որ այդ նշանը չ'ունենին՝ ինքն անձամբ կը դրոշմէ կամ արեան անանցը վրայ, կամ երաստանացը վրայ, կամ բերնին մէջը, կամ շրթանցը վրայ, կամ անուիներու տակն, և կամ երանացը ներքև եւլն: Ա.յս նշաններս արձանագրուի թաթի մը, նապաստակի մը բերնի ծայրին, կատուի մը կնճթին, չղջիկան մը թեւոյն, եւլն. պատկերը կը ներկայացնեն: Մորթոյն այն մասն, որոյ վրայ կոխուած է այս դրոշմս, ալ այնուհետև անդադար կը դառնայ՝ մինչ զի ամենախորին խայթուածք, յօշատումնք կամ խարմունք բնաւ զգալի չ'են ըլլար: Ասկէց 'ի զատ Սադայէլի կնիքը՝ այս դիւրայինչուայտութեանց մէջ անցած գարձածները ամենևին գաղտնի պահելու, և ձերբակալ եղած կախարդներն հարցաքննող դատաւորաց բնաւ բան մը յայտնել չ'տալու առանձնաշնորհն ալ կուտայ:

Դիւերաժողովոյն արարողութիւնը արձնա-

գորեից կաքաւոցիս կ'սկսի. խիստ նորօրինակ և կարի ծիծաղաշարժ կաքաւ մը, որ անկնունք մեռնող տղայոց սուլելուն ձայնին ը կը կատարուի։ Յետոյ արշնագորտը կ'սկսին բոլոր ուժովնին կարկաչել, և այս անգամ ալ տղայք կ'սկսին պարել դլուխնին դեռինը և սրունքնին օդոյն մէջ խաղցնելով։ Այս երկու զուարճութիւնքս աւարտելե ետև՝ վհուկ կանանց երիցադոյնը բաց ճեացած անդրպետին մէջ յառաջ կուգայ, և դդեսաներն հանելով՝ բազմադիմի ծամածուռ շարժուածովք և անպարկեշտ գալարմամբք սատանայական տեսակ մը պար կը խաղայ։

Պարէն վերջը հանդիսականք կարգաւ մի առ մի նախագին առջև կերթան կը խոնարհին, նստոյ տեղին գանուած մարդկային դէմքը կը համբուրեն, և ձախ ձեռքերնին դիւթական մատեանի մը վրայ կոխառելով՝ երդումն կընեն որ հոգւով մարմնով Սադայէլինը, դժոխոց այս ամենակարող հրեշտակինը ըլլան։ Երդմանէն անմիջապես յետոյ իննոցքը կ'սկսի. սատրակարգեալ դևք վրան շռէզի հունտեր ցանուած կորեկի հացերով, արշնագորտի, կախուած գողերու, և մեռեալ ծնած մանկանց մսէն չինուած համադամներով, և մաղասերանգ, զդլխական և բոցակէզ ափրոդիտեաններ պարունակող դինեօք զարդարեալ սեղաններ կը պատրաստեն։ Ս՛նդէ ուտել, ըմպել. տարապայման ըմպել, դինոփլալ, սեղաններու վրայ ոստնուլ և կրկին և կրկին բաժակ առաջարկել՝ ի փառս դժոխոց։

Սեղանէն ելնելուն՝ կախարդաց սխալակ գունդը զարհուրելի ոռնումներ աճակելով կսկսի ճօճիլ ու երերալ. ա՛լ աշխատող աշխատողի թէ ո՛վ միւսէն աւելի խայտառակութիւն, միւսէն աւելի անվայել չարժուածք կրնայ ընել։ Երբ առաջին ճօճումն կ'աւարտի, կախարդք համարը կուտան Սադայէլի ա՛յն դիւթութեանց և հմայից, զորս գործել են, և այն դեղատուութեանց, հրդեհից, մարդասպանութեանց, և վերջապէս այն ամեն եղեռանց՝ յորս ձեռքերնին պղծել են, և Սադայէլ ալ գովեստ կամ կըշտամբանք կը շռայլէ իրենց՝ իրեն լաւ կամ դէշ ծառայութիւն մատուցած ըլլալնուն համեմատ։ Ա.պա ճօճումը նորէն կ'սկսի առջինէն աւելի սաստկութեամբ. արք և կանայք կ'սկսին կատաղաց նման հայհոյել, ոտքով ձեռքով նշանները կընեն, կ'ոստոստեն, գետինը կը թաւալին, սոսկալի ջղային ձգումներ կը բռնուին, և անդադար կ'ոռնան։ Ա.հա այս գժոխային ժխորիս մէջտեղն է որ՝ Ա.ռնակերպ և Իգակերպ Ճնշաճիւաղայ (*) պիղծ զուգաւորութիւնքն տեղի կունենան։

Բայց Սադայէլ պոչը վեր կը վերցնէ, ներքևէն բոմբիւն մը կը լսուի՝ նման թնդանօթի մը բոմբիւնին. աքաղաղը կը խօսի. ամեն բան նոյն հետայն կը խաղաղի։ Կախարդք իրենց անդրուարձներն կը հեծծեն, և չտապաւ բնակարանին կը ժամանեն։

(*) Incubes et sucubes. Ջեռպուս, քեռպուսէ։

Ահա այս է վճկաց գիշերաժողովը (Sabbat) կամ մանաւանդ այս է զառանցանքն երևակայութեան մը սահմանած ամենաազատեղի և ամենազազրալի անուրջը։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՄՈԳԱԿԱՆ ՕԾՈՒՄՆ

Օձմունք յաճախ կը դործածուէին նախնեաց մէջ. այս օձմունքս սովորաբար բնական կամ բազդրեալ իւղերով, անուշահոտ ճարպերով, սպեղանիներով եղյն. կը կատարուէին՝ թէ՛ մարմինը կակուղցնելու և առողջութիւնը պահպանելու իբր ողջապահիկ միջոց, և թէ՛ իբր ինչ ինչ հիւանդութեանց դիմակալելու և զանոնք ցրուելու ախտաբոյժ դարման։ Բայց հրաշագործք, ինչպէս արդէն ալ տեսանք, դաղտնի բաղադրութիւնները, վերձուած օծանելիքներ չինել դիտէին, որք խորին քուն մը, այլանդակ երազներ և տարօրինակ բանդագուշանքներ պատճառելու զօրութիւնն ունէին։ Յայժ հաւանական է որ՝ Միջին Դարու կախարդաց մոգական օծումն այս աղբերէս ծագումն առած է։ Միմիայն հինանաւուրց կախարդք գիտէին օծանելիք բաղկացնող նիւթոց ինչ ըլլալը, և այս դաղտնիքս՝ զոր այսպիսի թանկագին աւանդի մը արժանի համարէին՝ անոնց միայն կը հաղորդէին։

Արևէ անհատի, որ ընկերակցութեանն մտանակից և անդամ ըլլալ ուզէր, իւղ մը կ'ուտային՝ որով անկողին մտնելէ յառաջ մարմնոյն ինչ ինչ մասերն չփելու էր, որպէսզի դիշերը վրհկաց ժողովը փոխադրուի, և անոնց չուայտութեանցն մասնակից ըլլայ։

Յովհաննէս Մկրտիչ Բորդա, որ դաղտնի դիտութեանց մէջ ունեցած հմտութեամբն անուն հանած է, իր Բնական Մոգութեան երկրորդ դրքին մէջ կըսէ. «Ջատուկք տղու ճարպ կեռայնեն կաթսայի մը մէջ. յետոյ չղջկան արիւն, ակոնիտոմէլ, մանտրագոր, և քնաբեր խաչխաչ կ'ուելցնեն վրան. և երբ այս ամենքս լաւ մը եփին, սպեղանի մը կը չինեն անկից, որով մարմիննուն ծծիչ ծակոտիք չատ դանուած ինչ ինչ մասերը կ'օծեն։ Այս օծումս կատարելէ ետև կը ննջեն, և իրենց այնպէս կը թուիթէ՝ լուսնի լուսով օդոյն մէջէն դեղագեղարճ վայրեր կը փոխադրուին, ուրտեղ պարեր, խաղեր, և երիտասարդաց խառմբեր կը գտնեն, որոնցմէ չատ կախորժին։»

Քարտան դրելէ նմանօրինակ սպեղանւոյ մը բաղադրութեան դղանակը կը նշանակէ։ Այս սպեղանւոյս գլխաւոր նիւթը տղու ճարպն է. անկէց ետև կը խառնուի մէջը բուոյ արիւն, ձիալախուրի (1) արմատ, մորմի (2) մրգիկ, սիւ-

(1) Եապան մայրանօսու։ (2) Շան խաղող։

բալախուր (*), և սև կատուի աղբ։ — Ծ՛ուխը կատարուելէ յառաջ վհուկ կանայք երեք օր ծոմ կը պահեն, և երեք օր չարունակ բանդի հիւթոյ հետ խառնեալ չագանակ, ձիալախուր և հաղար կուտեն։ Մարմինը այսպէս կանխաւ պատրաստուելով, ապեղանւոյն զօրութիւնը ա-ւելի ազդու կերպիւ կ՛զգայ։ Քունը աւելի խո-րունկ կըլլայ. անուրջք անդադար կը ծնին, կ՛անհետին, և դարձեալ կը ծնին. քնացողը հմայական տեսարանաց, պարահանդիսից, խըն-ջոյից, և այլ հանդիսից ներկայ կը գտնուի, ուր վայելչադէմ պարմանեաց և գեղանի օրիորդաց խմբեր յիրեար կը խառնին. և կամ նահմաստուհեր բանաեր, մուայլապատ անգունդներ, ծառա-ծաւռ դէմքեր, եղջերաւոր սատանայներ, վեր-ջապէս Սադայէլ չաստուածն կը տեսնէ՝ իւր Դժոխային դրանիկներովն չրջապատեալ։

Յովհ. Ռուէրիոս անուն անճառնի մատենա-դրին խօսքին նայելով, որ մանաւորապէս մո-գական գեղագրոց վրայ խելք հոգնեցուցած է, կախարդաց գործածած օծանելիքը թմբրեցու-ցիչ նիւթոց և թունաւոր բուսոց խառնուրդ մ՛էր, որք մարդոյս ներքին դործարանները կը խռո-վէին, և ուղեղը պանդորրութեան մէջ կը ձգ-դէին։ Յիշեալ հեղինակին ամեն գրածներուն մէջէն այս պարբերութիւնս ամենէն ճշմարիտն է։

Ս. Հաւասիկ նախնի կիւսահմայ կանանց և մինչև դարու չաւակաց թմբրեցուցիչ գեղջերէն մին.

(*) Պէշ բարմագ։

Ափիոն . . . . .) հաւասար մասամբ։
Փշախնձորոյ ընկոյզ(1))

Ցոյզ թունաւոր հազարի) հաւասար քանակու-
Բուսաջուր փշախնձորոյ) թեամբ

Ափիոնը և փշախնձորոյ ընկոյզը նախ փշա-խընձորոյ բուսաջրոյն մէջ լաւ մը լուծուելու են, յետոյ հազարի յոյզն վրան կը լեցնես։

ԱՑԻ. ՄՈԳԱԿԱՆ ԴԵՂԱԳԻՐ

ՔՆԱՑՈՒՑԻՉ ԽՆՁՈՐ

Մեկոնի և Մանրագորի հիւթ (2)
Թանձրացեալ յոյզ մոլեխնդի.
Հունաք խոզոլոռան.
Մրուր դինւոյ.
Աւելցուր քիչ մ՛ալ մուշկ։

Այս ամեն նիւթերովս դնաակ մը կը շի-նէին, զոր բաւական էր որ ձեռացդ մէջ կլորէիր և հոտոտէիր, և ահա անմիջապէս ամենաթանձր քնոյ մէջ կ՛ընկնէիր։

Ս. յն դիւթական մատեանն, ուսկի այս դե-ղագրերս կը քաղեմք, կըսէ թէ՝ չատ կախարդ-կիներ վաւաշոտ երազներ յառաջ կը բերէին՝ սրբանունն մէջ բանդի արմատէ երաստանա-մոխ (3) մը ներմուծելով։

Բաալը Մինուչչի փլորենտացի իրաւագէտը՝

(1) Noix de Metel . (2) Larmes . (3) Suppositoire .

կախարդ կնոջ մը դիպուածը կը պատմէ, որ այն Աստանն բերուած ըլլալով՝ որոյ անդամներէն մէկն ալ ինքն էր, յայտարարեց թէ՝ նոյն իսկ այն երեկոյին վհկաց դիշերաժողովոյն ներկայ պիտի դառնար՝ եթէ տունը երթալ և մնդակաւ իւղով մարմինը չիւղուի հրաման տային իրեն։ Հրամանը տրուեցաւ. վհուկը դարձեալ իւր բանդը բերուելուն՝ դրեթէ յանկարծ դառաւորաց առջև քուն եղաւ։ Թշուառ կնոջ մարմնոյն վրայ չատ փորձեր ըլլուեցան. խայթուածք, հերձուածք, այրուածք, չկրցին ինքն իւր խորքնէն զարթուցանել։ Քանի և չորս ժամու կատարեալ անզգայութենէ մը վերջը՝ արթնցաւ նա, և ահաւոր նկարագրութիւն մը ըրաւ վհկական դիշերաժողովոյն վրայ, ուր կը կարծէր թէ փոխադրուել էր. բայց և այնպէս իւր պատմութեանը մէջ յիշեց այն կսկծագին ցաւն, զոր քնացած միջոցին բժշկաց վրան ըրած փորձերնէն զգացել էր։

Անուանի բժիշկն Անդրեաս Լակոնա պատմաւ կախարդ կնոջ մը տանը մէջէն, զոր ձերբակալ ըրել էին, սպնդանի մը գտաւ՝ որոյ համար են-թադրեց թէ մոգական օծանելիքն ըլլալու էր, և այնու կնոջ մը մարմինն օծելոց, որ ամէն մէ՛ն վեր քունը բոլորովին կորսուած էր։ Կինը չատ չանցաւ սպնդանոյն զօրաւոր ազդեցութիւնը զգաց, և ա՛յնպիսի քնոյ մը մէջ ընկաւ՝ որ ամենասաստիկ չշնկոցք իսկ չկրցին խռովել զայն։ Երեսունևվեց ժամ անցնելէետև Անդ-

րէաս Լակոն սէրպին կերպիւ ննջողին անդամները քաշել տուաւ, որ դժուարաւ կրցաւ զարթնուլ՝ տրտնջելով որ այնքան չուտ վինքն իւր տարփալուոյն դրկախառնութիւններէն կը բաժնէին։ Լակոնա՝ ոտղեղանուոյն մէկ մասը, զոր քովը պահել էր, տարբեր դրելով թմրեցուցիչ դեղերէն խառնուրդ մը դաւ անոր՝ տեսակ տեսակ բուսեղէններէ առնուած, ինչպէս մորմազդիններէ (1), մակոնազդիններէ (2), և ուրիշ նման մ՛ալ, որոյ ինչ ըլլալը լաւ մը չկրցաւ որոշել։

Լորանդ՝ իւր Պատմութիւն Հատուկտիներուն Սպանիոյ անուն դրքին մէջ կը պատմէ որ՝ չատ մը կախարդ ձերբակալ ըլլալնուն՝ ամէնքն ալ հաստատութեամբ կը յայտարերին միչտ թէ՝ վհկաց դիշերաժողովը երթալու համար անհրաժեշտ հարկ էր ափերն, գարշապարներն, երանքն, անուխներն, ալլն թունաւոր անկերպ չինուած իւղով մը չփել, որոյ մէջ կատղած դորտէն հոսած հեղուկն ալ խառնուած էր։

Յետադայ իրողութիւնը, որուն Աստանի խմաստասէրը ականատես եղաւ, կախարդաց դրծածած իւղոյն կազմիչ նիւթոց՝ ուղղին վրայ ինչ զօրաւոր ազդեցութիւն ընծեղնուն ապացոյց մը ևս կրնայ ըլլալ։

Աստանի, դիւղի մը չրջակայներն ժուռ եկած միջոցին, ուր իւր բարեգործութեամբ քը

(1) Solanées. (2) Papaveracées.

ամենուն ծանօթ էր, դիւղացւոց խումբ մը նըշմարեց, որ ոտքերն ու ձեռքերը ամուր կապուած հովիւ մը առջևնին ձգել, հրելով հրմըշտըկելով յառաջ կը վարէին։

— Տեսնենք ի՛նչ է ըրել այդ մարդը որ այդպէս կը խոշտանգէք, հարցուց իմաստասէրը։

— Տէր իմ, պատասխանեց դիւղացիներէն մին, բոլոր երկրին մէջ մարդիկն ու անասնոց հօտերը դիւթելովը ամենուն ծանօթ, և ամենուն ահ ազդող կախարդ մ'է այս մարդս. քիչ մը յառաջ գինքն ձերբակալ ըրինք՝ ճիշդ իւր հմայեակներն ու դիւթութիւնքը պատրաստելու վայրկենին, և այժմ ոստիկանութեան ձեռքն պիտի յանձնենք գինքը։»

Կախարդ բառը լսելուն՝ Կասանտիի իմաստասիրական դաղափարքն արթնցան մտացը մէջ, ուղեց որ անձամբ ատուդէ իմանայ թէ՝ այս թշուառական խաբեբայից ընծայեալ իշխանութիւնն մինչև ո՛ր աստիճանի կը հասնի. ուստի հրաման ըրաւ չինականաց որ իւր տունը տանին այն մարդը. նոքա ևս առանց վարանելու հնազանդեցան իրեն։

Երբ Կասանտի կախարդին հետ միայնակ մնայ. «Բարեկամ, ըսաւ անոր, հարկ է որ անկեղծաբար յայտնես ինձ թէ՝ դիւաց հետ որ և է դաշինք մը հաստատած ունի՞ս. եթէ յանցանքդ խոստովանիս, աղատ կը թողում գքեզ. բայց եթէ յամառիս ու պատասխան չտաս, անմիջապէս մեծ դատաւորին ձեռքըկը յանձնեմ գքեզ։»

— Տէր իմ, պատասխանեց հովիւը, վստահութիւն ունիմ ձեր վրայ, և կը խոստովանիմ ձեզ թէ չաբաթը երկու անդամ կախարդաց դիշերաժողովը կերթամ։ Երեք տարի է որ իբր կախարդ ընդունուած եմ. բարեկամներէս մին տուաւ ինձ այն ապրսամը, զոր կընելու է, որպէս զի կարենաս օդոյն մէջէն կտրել անցնիլ, և դիշերային հանդիսին երթալ ներկայ գտնուիլ։»

Կասանտի՝ խղճի մտօք և ամենամանր պարագայիւքն կարծեցեալ կախարդին ի՛նչ կերպիւ ընդունուելուն վրայ տեղեկութիւն առաւ։ Հովիւը Դժոխքին բնակչաց նկարագրութիւնն ըրաւ իրեն, իբր թէ կեանքն անոնց հետ անցուցած ըլլար. մի առ մի անուններն տուաւ անոնց, և մանրամասնաբար պատմեց այն զանազան աչխատութիւնքն, որոց իրենց իշխանը կ'ենթարկէր զիրենք։

— Դիշերաժողովն երթալու համար կընած դեղէդ ինձ ալ պարտիս տալ, ըսաւ Կասանտի, այս երեկոյ ես ալ քեզ հետ ընկերանալ կուզեմ։»

— Այդ քու կամքդդ կախուին ունի, Տէր իմ, պատասխանեց հովիւը. կէս գիշեր ըլլալուն պէս՝ գքեզ ինձ հետ միատեղ կը տանիմ։»

Որոշեալ ժամը հասնելուն՝ կախարդը փոքրիկ տուփ մը հանեց գրպանէն, որ տեսակ մը թրմբրախիւս (*) կը պարունակէր, ընկուզի մեծութեամբ կտոր մը առաւ անկից իրեն համար,

(*) Opiat.

այնչափ մ'ալ իմաստասիրին տուաւ՝ ըսելով։

— Կընէ՛ այս պատուական Բալասանս, ապա ծխնելուղին ներքև պահէ. չատ չ'անցած նոխազի կամ կատուի կերպարանօք դև մը պիտի դայ, ուսը ներկայացնէ քեզ որ վրան երթաս, և օդոյն մէջէն վհկաց դիշերաժողովը պիտի տանի զքեզ։»

Կասանտի բալասանը կընելու պէս ըրաւ. ապա ըսաւ կախարդին։

— «Օ՛ն. ահա պատրաստեմ եռանէդ դալու։»

— «Գետինը պահակինք երկուքս ալ ծխնելուղին քով, ըսաւ վհուկը, վասն զի անկից դուրս պիտի երթամք։»

Կախարդը իր բալասանը կընելէն քանի մը վայրկեան յետոյ կարծես թէ ընդարմացեալ ձայց, և Կասանտի՝ որ զանի կը դիտէր՝ տեսաւ որ երեսը բոլորովին կարմրեր, և արտանունքն ուռեցեր էին. քունքերուն ջիլերակները ուժդին կը բաբախէին. ուղեղային հիւթախմբման (*) սկզբնաւորութիւն կը տեսնուէր վրան։ Եաս չ'անցաւ, քունը խառվայոյզ, շնչառութիւնը չըչուն դարձաւ. անդամները ասդիս անդին կը շարժէին իբր թէ օդոյն մէջ սլանալու, աւելի կոթի մը վրայ աչտանակելու վրայ ըլլային. չըրթունքն ալ չարունակ անհասկանալի խօսքեր կը մրմնջէին։

Սուաւտեան ժամը վեցին տեղացողները հո-

(*) Congestion.

վիւը արթնցնալով ըսաւ Կասանտիի, որ տեսաւ թէ քունէ էր։

— Է՛հ ուրեմն, նոխազին քեզ երած ընդունելութեանը վրայ դոհ ես անշուշտ. խիստ մեծ պատիւ մ'է քեզ՝ որ ընդունելութեանդ առաջին օրէն՝ իւր երեստանը համբուրելու արժանացար.» և սկսաւ վհկական դիշերաժողովոյ բոլոր ղաղրալի և արտառոց տեսիլներն պատմել։

Կասանտի իմաստասերը՝ այս չուառիս վիճակին վրայ սիրտը չարժելով՝ սիսալ դաղափարէն դարձնելու չանաց ղայն, և այս մտօք անոր առջին իւր բալասանին փորձն ըրաւ չան մը վրայ, որ դրեթէ նոյնհետայն քնացաւ։ Հովիւը աղաւթոյլ սրտեցաւ. բայց սա չ'են ըսած թէ՝ արդեօք վհկաց դիշերաժողովոյ վրայ ունեցած յիմարական հաւատքէն բժշկուեցա՞։

Վ.երը յիշուած բոլոր իրողութիւններէն յետագայ հետևութիւնքն կելնեն։

Մոգական սպեղանին բաղադրութիւն մ'էր թմբրաթթու(1) նիւթոց, որք մեկոնաղդի, մորմադդի և հովանոցակերպ(2) տունկերէն կը հանուէին, ինչպէս քնաբեր խաշխաշէն, չալարատունկէն, մանրադորէն, միչախնձորէն, մոլեխընդէն, գինեծաղկէն և այլն. և այլն։ Հրաշագան պատմութեամբ, և վհկաց դիշերաժողովոյն հնամեայական արարուածոց ներկայ դառնալու բուռն

(1) Narcotico-acre. (2) Papaveracées, solannées et ombellifères.

ատենիւ երևակայութիւններին բորբոքեալ անձանց վրայ կատարուած օծումը՝ ծանր և վրդովեալ քնով մը ընկերացեալ ուղեղային հիւթախըմբումն մը յառաջ կը բերէր : Ա.յս քնոյս միջոցին յիրեար կը յաջորդէին կարգ մը նորանշան, այլանդակ, հրեշային երազները, որք ուրիշ բան չէին, բայց եթէ նախընթաց աւուր տպաւորութեանց ստուարացեալ անդրադարձութիւնն :

Ա.յս բռնադբօսիկ քնէս արթննալնուն՝ խեղճերը, որք մեծաւ մասամբ ժողովրդեան տգէտ և դիւրահաւան դասուն կը վերաբերէին, իրենց ցնորեալ երևակայութեան ծնած անուրջներն ստուգութեան տեղ կ'առնուին :

Ա.յս է ահա մոգական օծման և վհկական մատաղին գիշերաժողովոց բնական բացատրութիւնը :

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ԴԻՒԱՀԱՐՔ, ԱՑՍԱԶԱՐԶԱՐՔ, ԴԻՒԱՄՈՂՔ, ՋՂԱՍԱՐՈՒՔ.

Ա.յն տգիտութեան և արհաւրաց երկարատև դարուց մէջ, յորս դևք այնքան մեծ դեր խաղացին յերկրապագ, վերոյդրեալ զանազան անուանքս հնարուեցան այն դժբաղդներն նշանակելու համար, զորս գերոխային զօրութեան մը ճարակ եղած կը կարծէին . զօրութիւն մը՝ որ ջղաձիգ շարժմամբք, սոսկալի ծամածռութ դիմաց ձկտմամբք, և զառանցական ու անպարկեշտ գործողութեամբք կը յայտնուէր :

Տօն Քալմէ, որ չորս հատոր անճառնի գիրք շարադրած է այս խնդրոյս վրայ, Դէմոնոմոյ (1) և Ա.յսպէրտոյ (2) մէջ սա տարբերութիւնը կը դնէ.

Դէմոնոմոնեան մէջ սատանային ներխիդին կը բնակի և դիւահարին կողմէն կը խօսի, կ'երգէ, և կը գործէ . իսկ Ա.յսպէրտեան մէջ սատանային ներխիդին չէ կրցած մնանել , բայց բերդ մը պաշարելու պէս կը շրջապատէ զայն , անգադար

(1) Possédés . (2) Obsédés .

կը նեղէ, կը տագնապէ մարդը։ — Սոսոչ դիւահար էր. վասն զի սատանային անոր մտին մէջ պահուըտած տրտում, մելամաղձոտ, և երբեմն խիստ անգութ կրնէը ջնա, — Սոսա այսպէսչար էր միայն. վասն զի դևը չ'կրնալով քնաւ իւր մարմնոյն դպչիլ՝ որ բժժանքով մը պահպանուած էր՝ չորս կողմը կը թռչտէր, և անոր ամուսիններն խեղդելով կը բաւականանար։ — Ս. յսաչարչարք կըլլայ որ երբեմն անդուլ անդադար կը խոչտանգուին սատանայէն, որ մերթ քիթերնին ու ականջնին կը քաշէ, մերթ բաղուկնին, մերթ թամբերնին կը կճէ, մատերնին ու ուսերնին կը խածնէ, և սաստիկ ապտակներ կ'իջեցնէ երեսնուն, այնպէս որ որչափ ձայն ունին՝ կը պոռան։ Զարայիշատակն Ցակոբ Սբբրեններ չատուկներ դիտէ եղել, որք լաւագոյն կը համարին եղել փայտակուտի վրայ մեռնիլ քան թէ սատանային հանապազօրեայ խոչտանգանքը կրել. այնպէս որ այս դաղանաբարոյ հասատաքննիչս՝ կարեկցութենէ չարժեալ և անոնց ծառայութիւն մը մատուցանելու համար, կըսէ, դանունք 'ի հուր կը դատէ եղել։

Ս.

Մեր ժամանակակիցը Լույէ Վիլլերմէ և դիտնականն Էսգիրոլ, որ Տոն Քարմէէն շատ աւելի լաւ կը ճանաչէին մարդկային էակին ֆիզիքական և բարոյական կազմակերպութիւնը, այսահարոց, լղաճդաց, դիւամոլից եյլն. դերդաստանը երեք դասու կը բաժնեն։

Ա.ռաջին դասուն կը պատկանին այն մարմնով և մտօք տկար անձինքն, որք չար ոգւոյն ազդեցութեան ներքև կը կարծեն ինքզինքնին։

Երկրորդ դասը, որ միւս երկուքէն աւելի բազմաթիւ է, կը պարունակէ այն արհամարհելի էակներն որ դիւահար ըլլալ կը կեղծեն, և մեղապարտ դիտմամբ սոյն դերս կը խաղան։

Երրորդ տեսակին կը վերաբերին այն անմիտ մոլեռանդք, որք զերկինս երեսաց նայաստամատոյց ընելու յուսով՝ պաղ արեամբ իրենց բարեկամներն, ազգականներն, և մինչև իսկ որդիքն խողխողելու կարող են։ Ս.յս վերջիններս կապուելու արժանի խելագարներ, երկաթէ վանդակաց մէջ փակուելու արժանի գաղաններ են։ Բարեբաղդաբար այսօրուան օրս, ժողովրդեան վրայ սրսկուած լուսոյն չնորհիւ, այս հոգեչունչ մարդասպանաց վրայ խօսուիլ խիստ քիչ անգամ կը լսուի։

Ա.ռաջին կարգէն եղող դիւամոլք սովորաբար տկար և անզօր կազմուածքամբ, նախապաշարմամբք սնեալ, անդամին 'ի տղայ տիոց կախարդաց, սատանայից առասպելօք օրօրուած, և աւելորդապաշտութեան մէջ մեծցած, չափազանց դիւրահաւան, և սրտերնին անդադար խոլ արհաւրօք պաշարեալ մելամաղձոտ, ախտնդանոտ, արդանդախտացեալ կամ զգայազրկ (*)

(*) Cataleptique.

անձինք են։ Ա.յս չափէն կարելի է երևակայել թէ՝ ո՞րպիսի ծայրագոյն հետևանքներ կրնան յառաջ գալ այսօրինակ խառնուածքէ մը, երբ հրաշագործներու կառավարութեանները քննելու ըլլայ՝ որք չահ հանել ուզեն անկից։ Մի քանի օրինակք բաւական պիտի ըլլան ապացուցանելու թէ՝ դիւամոլութիւնն իսկական հիւանդութիւն մ'է, բարոյական պատճառէ յառաջ եկած, և որ շուտով կը տարածուի օրինակին տարաբախտութեամբն ու մարդոց միմեանց նմանելու համար ունեցած բնազդման զօրութեամբն։

Տասնևհինգերորդ դարուն մէջ դիւահարական համաճարակք խիստ սովորական, հասարակ բան մը դարձած են. ասոնցմէ ամենէն հռչակաւորն Դեւահարուհին Հաւտաւոյ խառնոյ բսուածը եղաւ, որ Գերմանիոյ և մանաւորապէս Սաքսէ և Պրանտէպուրկի վիճակաց մէջ դժնուած կուանոյ վանուց մէջ պատահեցաւ, Պաւիէրայի, Հոլանտիոյ, Պելճիդայի մէջ ևս ճարակեցաւ, և քիչ մնաց բովանդակ Եւրոպիոյ մէջ պիտի տարածուէր։ Սիմոն Կուլար այս համաճարակ դիւամոլութեանս վրայ խիստ հետաքրքրաշարժ բաներ կը պատմէ . . . . . «Ա.յս կանայքս կը պարէին, կ'ոստոստէին, պատերն ի վեր կը մագլցէին, կը մարգարէանային, և այլևայլ լեզուներ կը խօսէին, մատակ գայլոց նման կ'ոռնային, կամ մորթուելու վրայ եզող խոյից նման կը մայէին, և երբեմն ալ կատաղի շանց նման մեկզմեկ կը խածանէին։»

1532 ին, դիւահար կանանց սրածութիւն մը ճարակեցաւ ի Հռովմ. հարիւր կին ինքզինքնին դիւաց ձեռքն ընկած կարծեցին, և խումբ մը կրօնաւորաց երդմնեցուցմունքն ամենևին անօգուտ եղան։

1534 ին Քէրնտրօթի մենաստանին մայրապետուհին տեսան որ այսոց գումարտակէ մը պաշարուել կ'ին։ Ա.յս այսերս, խորհրդական (*) խօսքերու զօրութեամբ երդմնեցուցչաց հարցմանցը պատասխանելու հարկադրուելով, յայտնեցին թէ վանքին խոհակերը կինը կանչել էր զիրենք։ Ա.յս տարաբաղդ կինս առնչանաց մատնուելուն՝ իր ջատուկ ըլլալն խոստովանեցաւ, և բոլոր իւր տամբն հանդերձ այրուեցաւ։

Վ.ուվիէի մենաստանին դիւահարութիւնն արգանդախաիւ ըմբռնեալ մայրապետէ մը սկսաւ։ Ա.յս քշուառ կրօնաւորուհիս երևակայից թէ դևին ճարակ է եղել. և իբր ահաբեկ երևակայութիւնն հաղար տեսակ անճոռնի գործեր ընել, և յիմարական և արտառոց խօսք մը տեսիլքներ պատմել տուաւ իրեն։ Ա.խան համաճարակ դառնալ սկսաւ՝ նախ այն կրօնաւորուհեաց միջոցաւ, որք պահապան կարգուեալ էին անոր քով։ Քանի մը օր վերջը դիւամոլութիւնն ընդհանուր դարձեալ էր, և սատանայք այնքան աղմուկ և ժխոր կը պատճառէին վանուց մէջ, որ ոստիկանութիւնն միջամտելու հարկադրեցաւ։

(*) Sacramentel.

Ա. յն առեն՝ ոտիկանութեան սպառնալեացը առջև՝ սատանայք պատերազմի դաշտին հեռանալու սոխպուեցան, և բարեկարգութիւնը վերահաստատուեցաւ։

Լուսոնի դիւահար կանանց դէպքը ա՛լ աւելի բացայայտ կերպիւ կ՚ապացուցանէ՝ տկար և տզայամիտ մտաց վրայ՝ այլոց օրինակին ունեցած զօրութիւնը։ Ա. յս դիւամոլութիւնս որ՝ ի սկզբան, ինչպես յառաջն ըսինք, խաբեբայութիւն մ՚էր միայն, չատ չ՚անցաւ մերձակայ քաղաքներն տարածեցաւ, Սեւենեանց մէջ թափանցեց, և երբ բարձր Լանկտոքի մէջ ալ ճարակել կ՚սպառնար, այս տեսակ անոխակալ տութեանց թշնամի իմաստուն եպիսկոպոս մը, վանքին աւագուհուն և իր արբանեկաց խաբեպատիր ձեռնածութիւնքն հրատարակելով՝ նոյնհետայն տարափոխութեան առաջքն առաւ։

Քաջալեր անուանեալ Սեւենեանց դիւահարներն մխաներուն կընդմանէին, սա տարբերութեամբ որ՝ իրենց մոլեռանդութիւնն անլուր ծայրահեղութեանց մղեց զիրենք։ Վերջին ծայր խիստ միջոցներ դժբաղդաբար հարկ եղան այս ախտիս յառաջադիմութիւնն արգիլելու համար, որ կատարի մոլեգնութիւն մը դարձել էր։

Մեծահռչակն Էսպիրոլ չափազանց բարեպաշտութենէ մը, և մինչև վերջին աստիճան, այն է մինչև յիմարութիւն, վարեալ կրօնական երիւղներէ պատճառեալ դիւամոլութեան բաղմաթիւ դէպքեր հաւաքած է, Ա. յս օրինակներէս ամե-

նէն նշանաւորը ու զարմանալին սա հետևեալը երևցած է մեզ։

Յիսուն տարեկան կին մը, մանուկ հասակէն այն աւելորդապաշտ և տարապայման բարեպաշտութեան մատնուած, որ սովորաբար վերջը սեռամոլութեան կը դառնայ, ամուսինը և տղաքներէն մին կորոյս, և բնականաբար այս կրնաստ աստուածային բարկութեան վերրնծայեց, որ իր բռնած անկատար ծոմերուն և պատարագի ժամանակ խելքը ապիս անդին զբաղեցընելուն համար կը պատժէր զինքը։ Ուստի՝ իր պակասութեանց թողութիւն գտնելու մտօք այլ ևս եկեղեցիեն բնաւ չ՚էր հեռանար, իր զբաղմունքն, իւր ընտանեկան պարտականութիւնքն երեսի վրայ կը թողուր, անդուլ անգադար կուրծքը կը ծեծէր, և խուլ հեծկլտանքներ կ՚արձակէր։ Դժոխոց երկիւղն, որ հանապազ իւր միաքը կը պաշարէր, իւր ուղեղը խանգարեց, այնպես որ սատանային ձեռքը մատնուած կարծեց ինքզինքն, և օրին մէկը ինքզինքն պատուհանէն վար նետեց։ Բարիզու մեծ հիւանդանոցը տարուելով՝ հինգ ամիսէն եւս անկից, և կանանց յիմարանոցը փոխադրուեցաւ՝ կատարեալ դիւամոլութեան վիճակի մէջ. իր դաղափարքն անյարմարելի կերպիւ դժոխոց և սատանայից վրայ սևեռած էին. իր խօսակցութիւնն ալ բնաւ այս նիւթէն դուրս չէր ելներ. զրօրինակ. հաղար տարի կայ որ Մեծ սատանային կինն է, և իր տղայքը չարաճճի սատանի

ձագեր են, իւր մարմինը արշնագորտերով, օձերով, և այլ զազիր կենդանիներով լեցուն մեծ պարկ մըն է։ Ամեն տեսակ ոճիրք, ամբարշտութիւնք, սրբապղծութիւնք, դողութիւնք, մարդասպանութիւնք գործած ըլլալ կը խոստովանի, և անդադար իւր տղայքը սպաննելու և զանոնք ուտելու տենչիւ կը տադնապի. մէկ վայրկենի մէջ աւելի եղեռնագործութիւն ըրած է՝ քան թէ աշխարհի համօրէն ոճրագործք բոլոր իրենց կենաց մէջ։ Ամեն ինչ որ իրեն կուտան, թունաւորեալ է. եթէ սատանային կինը եղած չըլլար, մինչև ցարդ հազար անգամ մեռած էր։ Ո՛չես ամենաքաղցրոյն Աստուծոյ, ո՛չ ալ Սրբոց կը հաւատայ. այլ կը հաւատայ դժոխոց բոցերուն որք յաւիտեանս յաւիտենից պիտի այրեն զինքն։

Ա.յս տարաբաղդ կինս, որ վերջին ծայր նիհարցած, մշանջենաւոր դողդոջմամբ մը կը տատանի, մեկուսի կը կենցաղավարի. ինքնիրեն կը խօսի, և շատ անգամ սատանային հետ կը վիճի. ամենասյլանդակ յարմիներազգ իւր զառանցանաց նիւթ կուտան, և երբեմն ամենասաստիկ տխուր կատաղութեան մը կը մղեն զինքը։

Բ.

Դիւահարաց երկրորդ դասը կը բովանդակէ բոլոր այն թշուառականները, որք որ և է պատճառաւ ռամիկ ժողովուրդը խաբել կուզեն՝ լուսնոտութեան, արդանդախտի, և զգայարկութեան կեղծ ըմբռնմամբք զարհուրելի մռնչիւններով, անպարկեշտ ղազիդ շարժմամբ, և այլ հազար տեսակ նմանօրինակ ձեռնածութեամբք, որոց համար այնպէս հաւատացնել կուզեն թէ սատանայնի գործքն ըլլան։ Պէտք չ'ունիմք բսելու թէ՝ ի՞նչ էր այս հինաւուրց խաբեբայութեան նպատակը. բաւական է միայն բերել որ Դէլֆոսբոլեան և Ա.յսպարբոլեան դէմ մի միակ դէպք մը կայ, այն էր Երբոնեցւոյն(*)։

Ա.յս խաբեբայներս շատ չարիք գործեցին Եւրոպիոյ մէջ. վասն զի միմեանց օրինակին նմանելու տարափոխութիւնն արագապէս յերկրէ յերկիր կը տարածուէր, գաւառաց, ամբողջ Տէրութեանց մէջ կ'արշաւէր, և անդամ մը որ աւերմտապաշտութիւնք խորին արմատ ձգեն ընկերութեանց սրտին մէջ, ամեն մարդ գիտէ որ դարեր պէտք են զայնս անտի խլել հանելու համար։

Փրկչական թուականին առաջին դարուց պատմութիւնքն լի են այս տեսակ երեւոյթներով։ Սուրբն Բերնարդոս, Սուրբն Օգոստինոս, Սուրբ Ժերոմ, Լաքտան, և Տերտուղիանոս հազարաւոր օրինակներ կը յիշեն այս բանիս։ Գիւղ, չէն չ'կար որ իւր դիւահարներն, իւր գէհ հանողներն չ'ունենար։

Սատանայի երդմնեցուցման կերպութեամբ իւր

(*) Դևերը հանելու արուեստ կամ կերպ։ Ի.ֆետն։

ըմբռնած մարմնէն դուրս ելնելու ստիպուելով, մերթ սարդի, մկան, չղլկան կըլլը. կերպարանօք, մերթ ալ շոգւոյ կամ ծխոյ կերպարանօք դարչելի հոտ մը բուրելով խոյս կուտար։ Ս.ն առեն այսահարին չղային շարժումներն և դիմաց ձգտումներն կը դադրէին, հանդարտութիւնը տակաւ առ տակաւ կը վերահաստատուէր իւր ծանծռուռ դիմայ վրայ, և հիացմամբ և պատկառանօք լցուած ամբոխին առջև ի ծունր ընկնելով, դինքն այնպիսի անդուլ թշնամւոյ մը ձեռքէն ազատողներն կ'օրհնէր։

Վ.եսպասիանոսի թագաւորութեան օրով Եղիազար անուն հրէայ մը, ճարտար ձեռնածու, սոյն կայսեր ներկայութեանը բազմաթիւ դիւահարներ ողջացուց օգտանելի մը ղօրութեամբ, որոյ մէջ Սողոմոնի դրած Պ-ր-ղ ըսուած բոյսէն կտոր մը ազդուցած էր։ Օգտանելիին դպելնալն պէս՝ դիւահարք գետին կ'ընկնէին, և Վ.եսպասիանոս Կ'յոբ անունը բարձրաձայն արտասանութենէն ալ, սատանայն կը փախչէր ճարճատուն ածխոյ մը կերպարանօք։

Վ.եսպասիանոս, որոյ բանին կուգար որ ժողովուրդը իւր անուանակոչեցած այս ղօրութեանն հաւատայ, Եղիազարը կը քաջալերէր, կըսէր, որ դևերը հանելը չարունակէ։

Պետրոս Բիկրէ, Հենրիկոս Գ.ի բժիշկը, կը պատմէ թէ՝ Ս.միէն քաղաքին մէջ դիւահար կին մը ամէն մարդ իւր վրայ խօսել կուտար, և երկիւղածութեան առվարական եղանակներն բը-

նաւ աղղեցութիւն չէին ըներ ասոր մարմնոյն մէջ պահուած դիւին դէմ։ Ս.միէնի եպիսկոպոսը, որ խաբեբայ ձեռնածութեանց ատոնիկ թշնամի էր, յանձն առաւ որ ինքն բժշկէ զանի։ Հրաման ըրաւ իւր փոքրաւորին որ՝ եկեղեցական զգեստ հագած երթայնէ Սաղայէլը, յանուն Ս.ւեռաարանին, որ անմիջապէս թողու երթայ մարմնէ մը՝ որ իրը չէր։ Բայց եպիսկոպոսը փոխանակ Ս.ւեռաարանի՝ Սիկերոնի թուղթերը տուաւ փոքրաւորին, որ կարդայ։ Դիւահար կինը, որ լատիներէն չէր հասկնար, սատոնիկ տագնապեցաւ, կեղերձական ճիչ մը արձակեց, և եպիսկոպոսին ոտքն ընկնելով չնորհակալ եղաւ անոր որ դոնէ ժամանակ մը իւր մարմինը չարչարող դժոխային պիղծ ոգւոյն ձեռքէն ազատեց զինքը։ Ս.ն առեն այս յարգելի հայրապետս խաբէութիւնը մերժելով, և շուրջը դտնուող բազմախուռն հանդիսատեսից ուղղելով խօսքը, որոց մէջ յոգնաթիւ ականաւոր անձինք և եկեղեցականներ կային, խիստ ձայնիւ մը ըսաւ. — Կը տեսնէք, պարոնա՛յք, որ կրնայ մարդ սատանայն վանել՝ անհաւատ և հերձանոս Սիկերոնին զօրութեամբը։

Ներկայ դտնուող աշխարհականք որ եպիսկոպոսին միտք բանին կը հասկնային, ծափահարեցին այս խօսքերուս. իսկ անոնք՝ որոց ուղղուած էին այն խօսքերն՝ ամօթահար մնացին։

Թիէր, իւր Յաղագս Ս.ը-ը-պ-ղ-ն-ի անուն գրքին մէջ շատ տեսակ երկմտութեանց եղանակներ կամ հնարքներ կը նշանակէ, յորոց ոմանք

դիւաց, ոմանք ալ ընտանեաց դէմ յօրինուած են։ Այս վերջնոց մէջէն ձեադիր մը մեզ կը բերէ, որոյ համար կըսեն թէ Սուրբ Կրա յօրինել է, որ Աոսդի երկիրը բոլոր մըկնեբէն, օձասանդրերէն, բզէզներէն, թրթուրներէն և այլ ընտանեաց մեղջանեբէն մաքրեց։ Հին ժամանակի մաշտոցներուն մէջ խել մը կը գտնուին այս տեսակ ձեադրեր, որք այսօր անօգուտ դարձած և բոլորովին մոռցուած են։

Սէն–Սիւլբիսի ժողովրդապետը՝ Յովսէփ Լանկէ, որ այս տեսակ հնարքներու կուսակից չէր, մինչև այն ատեն բնաւ չգործածուած եղանակ մը գործածեց, որով անմիջապէս բժշկուեցաւ իր թեմին դիւահար կնոջ մին։ Այս թշուառականաս օրին մեկը իր եկեղեցւոյն մատուռներէն միոյն մէջ իր ևաբերայ խաչերն ընելու եկած ըլլալով, ժողովրդապետը մինչև բերանը լեցուն օրհնեալ ջրոյ աման մը բերել տալով անոր դլխոյն վրայ պարպեց, սա յիշատակի արժանի խօսքերս արտասանելով. «Կերդնուիմ քեզ, յանուն ոսոիկանութեան, կին դո՛ւ, որ սուրբ վայր մը կը պղծես, որ անմիջապէս ելնես դղաստարան երթաս, որպէս զի այն տեղ չգտնէ ձերդուհիներէդ բժշկուիս. ոաք ե՛լ և չուտ քա՛յլ տեղանեմ. վասն զի եթէ անմիջապէս չ'հնազանդիս, բռնի տանել կուտամ դքեզ։»

Այս երդմնեցուցումն սքանչելի կերպիւներ գործեց. տեսնելով թէ դիմացինը ինչ հասուստամիա մարդ էր, կինը իսկոյն ոտք ելաւ, ա-

ինչպէս արագութեամբ վախաւ, և մեկ մ'ալ չերևցաւ։

Մոլորութենէն և նախապաշարմունքէ հեղինակը կը պատմէ որ՝ 1795 ին Սանսի մօտ Տօլօ գիւղին հրապարակին մէջ դիւահար մը տեսաւ, յորմէ դևը հանելու ջրաղաց էին չորս քահանայք։ Այս դիւահարս դէմքը զարհուրելի կերպիւ կը ծռմռկէր, մարդոյն խնդալու կամ կարեկցութենէ ուսերը վեր վերցնել տալու աստիճան կը դալարէր, և ամեն անդամ որ օրհնեալ ջուր կը սրսկէին վրան, իբր մռնչիւններէն կը կրկնապատկէր։ Քահանայքն ու մշակիկը ծաղր կընէր. դեռևէ դեռին կը զարնուէր, չամբուշի մը նման կ'ոստոստէր, ապա կ'սկսէր միապետութեան վրդովարձը մարդաբէանալ։ Սակայն այն ատենուան ոսոիկանութիւնը այս վերջին կէտս լսելուն՝ ա՛լ այս այն մոիկ չերբաւ. դիւահարը ձերբակալ եղաւ, հրապարակաւ ձաղկուեցաւ, և անմիջապէս բանտը դրուեցաւ. Այս երդմնեցուցումս վաղ ցոյց տուաւ իր պղծեցութիւնը, այնպէս որ այնուհետև այլևս մեկուն ոտտանալի վրայ խօսիլը չը լսուեցաւ։

Այս առթիւ օրենագէտ բժիշկ մը կըսէր թէ՝ եթէ առաջին դիւահարաց հետ ալ այս կերպիւ վարուած ըլլային այն ատենի դատարանք, Մոնի, Լուտոնի, Սէվէնեանց, Լուվիէի, Մարթա Պրոսիէի, Մարեամ Պիւքայլի, Քատիէռի, Մաբիամ Վալոէի, և այլ այս տեսակ նենդաւորաց դայթակղոլից խաբէբայութիւնքն անշուշտ տեղի չէին ունենար։

Գ.

Դիւահարաց երրորդ դասուն մէջ կը դըտնուին այն ամէն անձինք, որք ինքնիրենց այնպէս կը համոզուին թէ՝ երկնից կամ դժոխոց անմիջական պաշտպանութեան ներքև են, և որք ինքզինքնին որևէ մեծ գործոյ մը կոչուած կը կարծեն։ Ասոնք երկիւղալի մոլեռանդներ են, յորոց պէտք է ղէպյշ կենալ. վասն զի նպատակնուն հասնելու համար ամէն բան աչքերնին կ'առնուն. դաշոյն ի ձեռին կ'ընթանան, և անայլայլելի անխռովութեամբ մը կը զարնեն զոհերնին. տանջանք, խոշտանգանք, բան մը չ'կասեցներ զանոնք։

Ա.յսպէս էին Հրէաստանի լեռնականին արբանեակները, որ չ'է թէ միայն նշանակեալ զոհերն զարնելու համար վինչև աշխարհի ծայրը կ'երթային, հապա նաև իրենց տիրոջը մէկ նշանացի հրամանաւն՝ ինքնիրենց դէմ կը դարձնէին մարդասիրական երկաթը, կամ խնդութեամբ անդընդոց մը խորը կը դահավիժէին։ Ա՛յսպէս են այն դաշնաբարոյ խելայեղները, ա՛յն արքայասպանները, որք սարսափ ու սուգ կը ներմուծեն ազգաց մէջ. ա՛յսպէս են դարձեալ այն տկար, աւելորդապաշտ էակները, զորս կրօնական սասփիկ երկիւղները մարդասպան մոլորութեան մը մէջ կը ձգեն, և որք հոգինին փրկելու համար

մինչև իսկ իրենց ծնողքնին ու բարեկամնին կ'սպաննեն (*)։

Լամպէր և Թալպոյ ճանապարհորդներն յոյժ հետաքրքրական իրողութիւններ մէջ կը բերեն՝ Ամերիկայի միասիքական աղանդաւորաց մէջ՝ այլոց օրինակին որքան տարափոխիկ ըլլալուն վրայօք։ Գրիդոր արքան ալ այս խնդրոյս վրայ ճառած է իւր կրօնական աղանդաց վրայ յօրինած երկասիրութեանը մէջ, և սապէս կըսէ.

„Կը տեսնես կրօնական աղանդներ երբեմն տասնէն տասներկու հազար հոգիէ և ամէն սեռէ, ամէն հասակէ անձինքներէ կազմուած, որք կ'ոտանուն, կ'երգեն, կը կաքաւեն, կը պոռան, կուլան, գետին կը թաւալին և հարիւրներով մէկտեղ կը մարին կ'ընկնին։ Ա.յս հաւաքմանց միոյն մէջ թալկացած ընկած մոլեգնելոց թիւն ութն հարիւրի չափ է։ Ա.յս հոգեբուռն եռանդս անհասից իրարու մօտենալովը իրարու կը փոխանցի. կրքոտութիւններն է դարձող աէրվիշներուն նման արագութեամբ ինքնիրենց վրայ դառնալ, մինչև որ քրտնալից և ընդարմացեալ գետինն ընկնին։ Ա.յն ատեն այս դարձողներս յարմար տեղ մը փոխադրեն, և հանդիսականք ալ անոնց չորս կողմն անցած կ'աղօթեն ու կ'երգեն։ Ա.յս օրինակ են ահա Պոթըներու և Եփըներու վարժութիւնքն ու արարո-

---

(*) Ա.յս տեսակէն էր նաև անցեալներն դՊիտմաքք սպաննել փորձող Փիլմանն. Ծ. Թ.

զանթիւններէն. բայց Հաջորդ ըսուածներուն ա՛լ աւելի այլանդակ են։ Անոնք նախ գլուխնին առջև ու ետև ճօճելով կ՛սկսին, վերջն ալ ձախէն դէպ՝ի աջը։ Այս ճօճումն՝ի սկզբան ծանր, չափաւոր, նուագաւոր կըլլայ, և տակաւ առ տակաւ տարօրինակ արագութիւն մը կ՛ստանայ։ Շատ չանցած շարժումն ներկայ դանուող անդամներուն ալ կը հաղորդուի, և Հաջորդներն ամէն կողմէ վերը կը վազեն. դէմքերնուն և անդամներուն ձգտումն ու ծամածուռ դալարմունքն այն ասպիճանի կը հասնին, որ մարդկային կերպարանքը անճանաչելի կը դառնայ. կիները մանաւանդ չզսպարուեր, ահաւելի մարմին մը կը դառնան . . . .

«Այս մոլեռանդութիւն մէջէն կը տեսնուին այնպիսիք, որք չան պէս չորս ոտքով կը քալեն, որք անոնց նման ակռայնին կը կճրտեն, կը խոշդան, կ՛ոռնան, և կը հաչեն։ Այս յուզմունքս մինչև անդամ ասոնց մասնակից ըլլալու ամենին փափաք չունեցող հանդիսատեսաց ալ կը հաղորդուի։ Երիցական մը կը յիշեն, որ իւր միաբանութեան այս ամօթալից մոլեգնութեանս դէմ հրապարակաւ խրատ խօսած միջոցին, յանկարծ անկից բռնուեցաւ, և սկսաւ միւսներէն աւելի ուժգին հաչել։ Գիւղերը չրջապատութեան եղող անձինք Հաջողներու թափորներուն առջև կանգ կ՛առնուն. յետոյ ամենքն՝ի միասին հաչելով անոնց նախէն կ՛երթան։ Ի՞նչ ըսելու է, ի՞նչ մեկնութիւն տալու է այսպիսի յիմարու-

թեանց։ — Սա թէ՝ մարդկային բնութիւնն տարօրինակ խառնուածք, մտքի մոլորութեանց ենթակայ է։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՋՂԱՍԱՐՍՈՒԹԻՒՆ

Այս գլուխս կը վերջացնեմ Սէն-Մէտարի ջղասարսուռներուն համառօտ պատմութեամբն. պատմութիւն մը կարի յոյժ հետաքրքրական, զոր այս տեղ կը դնեմք իբր ամենակատարեալ ապացոյց սա երկաք մեծ խնդրոց, այսինքն Ա. ժողովրդոց հրաշալեաց վրայ ունեցած սէրը. Բ. դիւրագրգիռ մտաց վրայ օրինակին արագ տարածութիւնը. Գ. այն մարդկանց վարպետ հնարքներն, որք հրաշագործութիւնը՝ի կիր կ՛արկանեն իշխանութիւններին աւելցնելու համար։

Ժողովուրդք ա՛լ ձանձրացել էին այն ատենուան ծաղրանական ունայն վեճերէն, որք այնքան երկար տանն արիւնլուայ ըրել էին զԵւրոպա։ Ա.յլ ևս բառերու համար իրարու դէմ պատերազմիլ չէին. ինչ ինչ ազանդաց այլանդակ անուանց վրայ, ինչպէս Պուրոյնի (1), Կալեստեան (2) սկսել էին մարդիկ ծիծաղիլ։ Սակայն և այնպէս Մոլինեանք և Յանսենեանք՝ տակա-

(1) Ombilicaux. (2) Stercoranistes.

էին Գաղղիոյ մէկ մէկ կիսոյն կը տիրէին. բայց այս վերջիններս այլ եւս քաղաքական եւ եկեղեցական իշխանութեան ներքեւ ընկճեալ՝ կը տեսնէին որ օր քան զօր դունդերնուն թիւը կը նուազէր բազմութիւ դասալքութեամբ. ուստի իրենց նախկին ազդեցութիւնն վերահաստատելու համար մտածեցին որ հրաշից դիմեն: Իրը սուրբ համբաւ թողուլ մեռած Պարիս անուն սարկաւագին մէկը՝ այս մասին լաւ առիթ հայթայթեց իրենց. ուստի իրենք իրենց իշխանութեամբն երկնից մէջ տեղ սահմանեցին անոր, եւ իւր գերեզմանին ալ հրաշագործութեան զօրութիւն չնորհեցին:

Մի քանի խաբեբայք Պարիս սարկաւագին գերեզմանին վրայ աղօթելու դնացին. և ո՛վ զարմանալեացս, ոմանք ականջ կամք կ՚ակսէին պարել, այլք չղային սարսուռէ բռնուած՝ դեռին կը դլորէին, ու ամենածիծաղելի կերպիւ կը տատանէին ու կը տապնապէին. բայց գործոյն ամենէն գեղեցիկ կատորը սա էր որ՝ բոլոր անոնք որ հիւանդ կուգային հոն, դլխովին առողջացած կը դառնային անկից: Իսկ ժողովուրդը, որ միշտ տխմար և խաբկանաց առարկայ ըլլալու յօժար է, այս ի՛ Հրեից փոխառեալ նորութիւննն մեծաւ եռանդեամբ ու փափաքանօք ընդունեց, և ամեն օր ա՛յնքան խուռն բազմութիւն մը կը խռնէր Սէն-Մէտարի գերեզմանատունը, որ տեսնողը կարծէր թէ ծովավաճառ կըլլար հոն: Ամեն մարդ կուզէր հոն երթալ, և մանաւանդ

արդանդախտիւ կամ չղային հիւանդութեամբ ախտացեալ կանայք, որոց բժշկական արհեստը օգուտ չէր կարացել ընել: Ամենք չատ մը օրեր ծոմ պահելէ վերջը Երանելոյն Պարսէ տապանին վրայ կերթային, և տեսնելով որ քովերնին ուրիշ կանայք չղային սարսուռէ կը բռնուէին, տարափոխութիւնն իրենց վրայ ալ կը ճարակէր, և իրենք ալ նմանօրինակ չղասարսուռ տապնապէ կ՚ընդունուէին. այս տագնապներս սովորաբար քրիստնաթօրութիւն, առատ ապաւինմունք, և այլ այս տեսակ վիրաւէտ ճգնաժամներ յառաջ կը բերէին, որով իրենց յաւերն կ՚ամրքէր կամ բոլորովին կը բժշկուէր: Սա ալ հարկ է ըսել որ՝ այս հրաշալի բժշկութիւնքս մի միայն Սէն Մէտար չէին պատահեր. անոնց նման հրաշքներ ուրիշ տեղուանք, ուրիշ գերեզմանաց վրայ ալ տեղի կ՚ունենային, ուր յոյսն ու մոլեռանդական տարապայման մտաբորբոքութիւն, հաւատոյ օժանդակութեամբ, հարկաւ մի և նոյն արդիւնքն յառաջ պիտի բերէր:

Ի Սէն-Մէտար, կուրաց աչքերը կը բացուէին. ապաստողք և կորամարմինք կ՚ուղղուէին, կաղաց սրունքներն կ՚երկայնէին, ամուլ կանայք բազմածին կը դառնային. ի մի բան որ ախտաժէտ որ երանելոյն Պարսէ գերեզմանին դըպչէր, բժշկութիւնը կը գտնէր: Սակայն այն ժամանակի ժողովրդական երդերէն մին, ղոր կըսեն թէ Մէնի դքսուհին յօրինած է, կարծել կուտայ թէ առհասարակ ամեն մարդ չէր բը-

ժըշկուէը, և շատ անգամ ալ կը պատահէր որ, ընդհակառակին, հիւանդութիւնը աւելի կը ծանրանար։ Ս.հաւատիկ այս երդէս քառատող մը.

Կոշկայարդար մ'արքայական
Հաշմ 'ի յահեակ գարշապարին,
Յատուկ չնորհօք եղև արժան՝
Կաղ դառնալու բոլորովին։

Սէն Մէտարի մէջ պատահած հրաշքները լսելով, Տարուստ կոմսուհի մը Գերմանիոյ խորէն Բարիզ եկաւ՝ մայր ըլլալու երջանկութիւնը ձեռք բերելու համար։ Երկ. տիս աղօթքն ու ղայլին սարսուռները շարունակելէ վերջը, դարձեալ մի և նոյն ամլութիւնը կը սիրէր վրան։ Բազմաթիւ այլ և այլ տեսակ միջոցներ գործածուած և օգուտ ըրած չ'ըլլալով, համոզեցին զինքը որ ամեն օր ճաշ ըրած ժամանակ՝ սարկաւագին գերեզմանէն քիչ մը հող ուտելու էր։ Կոմսուհին տղայ ունենալու չափազանց մեծ փափաք մը կը տածէր, ասոնց համար ալ երկ. քիլոկրամ հող կերաւ սպառեց։ Յետոյ Բարիզէն հեռանալ ստիպուելով՝ գերեզմանէն երկու պարկ հող տարաւ միատեղ, զորս գարձեալ իւր երկիրը կերաւ առանց բնաւ գարձեալ օգուտ մը տեսնելու. բայց այս հոգակերութիւնն իւր առողջութեան վնասած ըլլալով՝ խեղճ կոմսուհին քանի մը տարիէն հաքը մեռաւ երանելի Պարիսը անիծելով։

Մասյի մարդկանց Սէն-Մէտարի ձեռնա-

ծութեանց դէմ յօրինած ամեն երգիծաբանութեանցն հակառակ՝ անդ գործուած հրաշալի բժշկութեանց մասին ժողովրդեան ունեցած հաւատքը չ'էր պակսեր։ Ս.յս հաւատքս չ'է թէ միայն հասարակ ժողովրդեան, այլև ընկերութեանց միւս դասուց մէջ ալ այնքան մեծ էր, մինչ զի ով որ ըսելու ըլլար թէ՝ հոն գնացել ու չ'է բժշկուել, այն մարդոյն քթին կը խնդային, և սուտզրուցէ, ամբարշտի կ'ըսնէին զայն։

Քարերէ սը Մանժօրօն անուն մէկը, Բարիզու Խորհրդարանին անդամ, որ գրականութեան մէջ քիչ շատ անուն հանած էր, հետաքրքրութենէ շարժեալ Սէն-Մէտարի մէջ անցած գարձածը տեսնելու գնացած ըլլալով՝ սա համոզմունքը վերադարձաւ անկից թէ՝ յիշեալ գերեզմանին վրայօք բոլոր ըսուածներուն մէջ ամենևին չափազանցութիւն չ'կար։ Ս.յն օրէն հետէ Սէն-Մէտարի գերեզմանատունը ցանկորդեց, և ղազարոսեանց գլխաւոր մոլեռանդներէն մին եղաւ։ 1727 էն 'ի վեր Պարիս սարկաւագին գերեզմանին վրայ որքան հրաշք որ տեղի ունեցել էր՝ 'ի մի հաւաքելով քառածալ մեծ հատոր մը կազմեց Ճէնթրոնիան հրոյն Պ. Պոբէռ անուամբ։ Բարերէ անձամբ վկերսայլ երթալով փառակաղմ օրինակ մը ներկայացուց թագաւորին, և վարձատրութիւն մ'ըստացաւ՝ որում ամենևին չ'էր սպասեր . . . . անմիջապես պաշտօնէ ձգուեցաւ ու բանտարկուեցաւ։

Բայց Քարլէ ըը Մոնժօրոն ո՛չ միայն չ՛յու-
սահատեցաւ այս ձախողութեանս վրայ, այլև
իւր քանտարկեալութեան պարապ ժամերը իւր
երկասիրութիւնը կատարելագործելով անցուց,
և վերստին հրատարակել տուաւ զայն 1737 ին
շատ մը պատկերներ ու տպագրական զարդեր
աւելցուցած վրան: Ս.յս նորօրինակ գիրքս ո-
մանք պերճախօսութեան գլուխ գործոց մը հա-
մարեցան. մինչդեռ այլոց աչքին ալ անճոռնու-
թեան և տգայական դիւրահաւանութեան տար-
օրինակ արտադրութիւն մը երևցաւ:

Ս.յն մինչդին Սէն-Մէտարի հրաշքները միշտ
իրենց ընթացքը կը շարունակէին: Ս.յս կատա-
կերգութեանս հեղինակները լիա վարպետու-
թեամբ կարգադրել էին անոր շարժառիթ հը-
նարքները: Դերասանք մեթոտով գործ կը տես-
նէին, և յաջորդաբար մէկ խաղէն միսը կ՛անց-
նէին: Օրինակի աղագաւ, եթէ՝ ի սկզբան բը-
ժշկուելու համար դողդղալու էր, այժմ դող-
դողդողի մը միայն հալիլը բաւական էր ամենէն
աստիճ արմատացեալ ախտաժէտութիւնն իսկ
բժշկելու:

Երբ աղօթք, լիաօրեայ պաղատանք ու ծո-
մաստահութիւնք չէին յաջողել փափաքեալ բը-
ժշկութիւնը ձեռք բերելու, Մեծ հնարքները
ըստ ամեներուն կը դիմէին: Ս.յս նորօրինակ հը-
նարքներս փոխուէ, էրեկտրէ եղէրոյ, և տէլ մար-
գերուն վրայ կը կայանային, որոց լինչ տեսակ բան
ըլլալը պիտի բացատրեմք՝ ի տորև: Ընթերցողը

թող դատէ ալ թէ՝ մոլեռանդական յիմարու-
թիւնը մինչև ուր կրնայ հասնիլ:

Տախտակի մարդը սա էր. Ղազարոսուս կինը
դեռնամած կը պառկցնէին, վրան մեծ տախ-
տակ մը կը վանդէին՝ այնպէս որ ամեն կողմէն
ծածկէր զայն, և այն տախտակին վրայ կ՛ել-
նէին այնքան մարդ, որքան որ կրնար առնուլ
տախտակը. երբեմն կըլլար որ տասնէն մինչև
տասն երկու հոգի կ՛ելնէին այսպէս տախտակին
վրայ, որոց ծանրութիւնն դիւրութեամբ կը կը-
րէր Ղազարոսուսը, որ մինչև անգամ կըսէր թէ
շատ թեթև էր բեռը:

Քարլի կրթութեան մէջ՝ Ղազարոսուս կինը
կռնակին վրայ պառկած ըլլալով, կրօնաւորին
մին ահագին քար մը կ՛առնուր, ու կրկին և
կրկին անգամ անոր մէջքին կը զարնէր, և յե-
տոյ բոլոր ուժովն կնոջ կուրծքին կը նետէր զայն:

Կրակարանի երկաթյայն վարժութիւնը քան
և զինեն երեսուն լիարա ծանրութեամբ խոշոր
երկաթի ձողոյ մը միջոցաւ կ՛ըլլար. այս երկա-
թովս մինչև հարիւր հարուած կ՛իջնէին դող-
դողուհւոյն վարին և ստամոքսին վրայ, որ շատ
անգամ դոհ չէր ըլլար այնքանեաւ, և իրը չը-
նորհ կը հայցէր որ՝ դարձեալ կրկնեն այս նորա-
տեսիլ դղրդանքները:

Մարդոյն միտքը կը զայրանայ այսպիսի ալ-
լանդակ ձեռնածութեանց պատմութիւնը լը-
սելուն, և հաւատալը չ՛դար անոնց: Բայց թո-
ղանք որ Քարլէ ըը Մոնժերոն, որ այսուհա-

բանաց դերասան ուներբողիչն եղաւ, ինքն խօսի։

«Ս.հաւասիկ օրինակ մը, այնքան աւելի ուշադրութեան արժանի՝ որ ամեն կարդէ, ամեն ատիճանէ անձինք, եկեղեցականք, դասաւորք և աշխատական տիկնայք ականատես եղած են անոր։

Յովհաննէս Մուլէ, քսաներեք տարեկան մանկամարդ աղջիկ մը, պատին դէմ կրթնած ըլլալով՝ կաշխրհաւէն մարդոյն մին երեսուն լիպրանոց կրակարանի երկաթ մը կ'առնուր, և ամենաստահակ հարուածները կ'իջեցնէր անով աղջկան փորին, այնպէս որ հարուածներուն թիւը մինչև հարիւրը կ'անցնէր։ Մխաբաններէն մին օր մը մինչև վաթսուն հարուած իջեցուցած ըլլալով անոր՝ երկաթը պատին դէմ փորձեց, և քանեհինգերորդ հարուածին ծակ մը բացաւ անոր վրայ։

«Ս.յա եղելութիւնը իմ իսկ ձեռօքս պատահած ըլլալուն, կը չարունակէ Քարրէ որ Մոնժերոն, ընթերցողը չ'պիտի բարկանայ անշուշտ որ մանրամասն պարագայիւքն պատմեմ զայն։

Ս.ոչի բերան խիստ չափաւորեալ հարուածները սկսել էի տալ չգաճիպ կնոջ. բայց իւր մարտունչներէն դրդռւած թէ՝ բաւականին չափ ուժով չէին ղարներ՝ հետզհետէ հարուածոց ուժգնութիւնն աւելցուցի. վերջապէս որչափ որ այժ ունէի, գործածեցի. բայց աղջիկը դարձեալ կը տրանջէր թէ՝ այն հարուածները չատ սակար ըլլալով, բնաւ սփոփանք մը չէին առթեր իրեն։

Ուստի ստիպուեցայ որ երկաթը կարի հուժկու մարդոյ մը ձեռք տամ, որ հանդիսատեսաց մէջ կը գտնուէր։ Ս.սի ա՛լ բանի մը չէնայեցի. իմ ըրած փորձէս հասկնալով որ՝ աներկիւղ կրնար հարուածել, աղջկան ստամոքսին վրայ ա՛նպիսի սոսկալի հարուածներ իջեցուց, որ անոր յենարանի տեղ ծառայող պատը կը դղրդեր անկից։ Ս.յն առեն չզսասարսուռը կը դոչէր։ «Ս՛ո, այ է՛նչ-ը քան է. ա՛րէան օքոտ կընե ինձ. տալ-ըրուե՛, եղբա՛յր ի՛ր, ես ուրիշ կրնոդոդի՛»։

«Ս.յա մարդոյն կշռած հարուածներն ա՛լ այնքան բուռն եղան, որ երկաթէ ձողը դրեթէ տապալեցուհոյն ստամոքսին մէջ խրեցաւ, և մինչև կռնակը թափանցեց. այնպէս որ կը վախցուէր թէ մի դուցէ բոլոր ընդերքն փչրուին. բայց ամենևին այնպէս բան չ'ըկար, վասն զի տակաւին կը դոչէր նա. Ո՛ո, ի՛նչ ուրիշ է. տալ-ըրուե՛ եղբայր։

Ս.յսպէս էին ահա ձեռ օքոտ-ընդ-ուռ ըսուածները, զորս հիւանդաց կը մատուցանէին առաւօրէն երբ սովորական օգնութիւնները օգուտ մը չընէին։

Դեռ ուրիշ տեսակ առաւել կամ նուազ զարհուրելի ձեռնածութիւններ ալ կընէին, որոց չգաստադնապէք մեծ յօժարութեամբ կ'ենթարկէին ինքզինքնին. զոր օրինակ. այնպիսիք կային՝ որք խարազանի հարուածներով դգուել կուտային ինքզինքնին, ուրիշներ ալ ցիցերու հարուածներով. չատեր ինքզինքնին կախել, անուոլ ճմլել, կամ խաչել կուտային. վերջապէս մի

քանիները ալ՝ Մալապարի այրի կանանց օրինակին հետևելով՝ կրակի մէջ կը նետէին ինքզինքնին, և ո՛չ միայն չէին խորովիր, հապա նաև աւելի զովացեալ և ժպիտ՝ ի շուրթն դուրս կ՚ելլէին անկից։

Բայց վուլթամք, սա ալ ծանուցանել որ՝ այն ջղասարսուռք, որոց վրայ՝ ի գործ կը դնէին ֆֆնոմինիները, միշտ մի և նոյն անձինքն էին, որ ըսել է թէ՝ վարժուած էին այս զանազան մարդկաց, և անկից յառաջ դալիք վտանգաց դէմ կանխապատրաստութեամբք պատսպարուած։ Սոյն կանայքս իրենց արուներուն համաձայն անուամբք կը յորջորջուէին. ինքզինքն կրակը նետողը Սալամանդր կը կոչուէր. միաւ միաւ ընելով տատանողը էջ կոտոր կ՚ըսուէր. խաչել, անով ծխել անուններըը խաչի, անոյ տանջանքը կրողներըը կը ցուցնէին. կլլե. կլլե։ Բայց ատոր, ջղաձիգներն իրենք իրենց լեզու մ՚ալ ունէին, արկտուան բարբառ՝ զորս խորհրդապղեցք միայն կրնային հասկնալ։ Իրենց վարժիցը մէջ նթէ ֆոքեշտոք մը ուղէին, ցնոց մը ըսել էր, պոխնոտոք քար մը կը նշանակէր, ոտոճոկէնոք ահագին եղևկամէջ ձոզ մը կ՚ելլէ։

Ս. յոպէս՝ ուխտաւորաց, բժշկութեանց և հրաշից թիւը այնչափ աւելցաւ, մինչ դի Յանահեանց կուսակրօնութիւնը երկիւղ սկսաւ պատլուան դի կը կանխատուշակէր որ այսպիսի զեղծում մը իւր կարտահան պատճառ պիտի ըլլար։

1731 տարւոյն վերջերը՝ այն անկարդա-

թիւնքն, որոց ամենօրեայ հանդիսարան դարձել էր Սէն-Մետարի գերեզմանատունը, բոլորովին տարափոխիկ կերպարանք մը առած ըլլալով՝ ոստիկանութեան ուշադրութիւնը զարթուցին։ Մինչդեռ վիրաբոյժն Մօրան-Սօլէօր, բժշկութեան ճեմարանին մի քանի անդամներն ունենալով իւր հետ, իբր օգնական թաղատուրին կղզմանէ խրկուեցաւ որ՝ Պ. Պարիսի կարծեցեալ հրաշքները երթայ բուն իսկ տեղը քննէ։ Ջղասարսուռներուն ձեռնածութիւնքն չ՚կրցան խուսափիլ այս գիտնոյս աչքէն, որք տեղեկագրով մը ծանուցին իրը թագաւորին, և 1732 Յունուար 27 թուով արքունի հրովարտակաւ մը Սէն-Մետարի գերեզմանատունը ամեն մարդոց համար փակուեցաւ, մանաւար արգելք դնելով որ՝ այնուհետև ոչ ոք չ՚համարձակի անոր մօտենալ։

Սոյն փակման հետևեալ օրը, գերեզմանոցին դրանը վրայ սա ծագրական արձանագրութիւնս փակցուած դտնուեցաւ.

Արգիլեալ է Աստուծոյ, հրամանաւ արքայի
Առնել հրաշս յայսմ՝ ի վայրի։

Մի քանի հետս ջղասարսուռք սոյն արգելքս բանի տեղ դրած չ՚ըլլալով՝ ձերբակալ եղան ու բանտարկուեցան, և այս բանս զարմանալի կերպիւ Պ. Պարիսի կուսակրցաց եռանդը ցրտացուց։ Ալ այնուհետև միմիայն տարապայման

Տիլեռանդները դանուեցան, որ տակաւին ա-
տեն մը ջղային սարսուռէ բռնուիլը չարունա-
կեցին. բայց Սէն-Մէտարի դերեզմանատանէն
հեռու՝ որ անկից ետև լռիկ ու ամայի ձեաց:
Ահա այսպէս վերջացաւ այս երկայն կատակեր-
դութիւնս:

ԳԼՈՒԽ Լ.

ՀՐՈՎ, ՋՐՈՎ, ԸՄՊԵԼԵՕՔ, ԵՒ ԱՅԼՆ ԵՂԱԾ ՓՈՐՁԵՐՈՒ ՎՐԱՑ.

Փոյթ անունը կուտային այն այլևայլ արար-
մանց, որոց նպատակն էր ամբաստանելոյն ան-
մեղութիւնը կամ յանցաւորութիւնը երևան
հանել:

Նախնի ազգաց մէջ, ինչպէս նաև քաղաքա-
կըրթութիւններին ա՛յն ինչ սկսող նոր ազգաց
մէջ, փորձից բարբարոսական սովորութիւնը կը
դանեմք, պատմութիւնը քրմական դասուն այս
փորձերը միջոցներն ու գործիքները պատրաս-
տելը կը յայտնէ մեզ, այնպէս որ շատ դիւրին
էր ամբաստանեալ մը կորուսանել կամ ազատել:

Հնդիկք դոդոնոյեան նիւ մը կը գործածէին՝
սոյն փորձերն ընելու համար: Արծնական մի
քանի խեղկատակութիւններէ ետքը՝ ամբաստա-
նեալը կշռոյն վրայ դրուելով ի՞նչ ծանրութիւն
ունենալը կը նշանակուէր. ապա իւր ամբաս-
տանագիրը կը կարդային՝ ղոր գլխոյն վրայ կը
դնէին, և անմիջապէս նորէն կը կշռէին զայն:
Եթէ ծանրութիւնը առաջին անգամ կշռուա-
ծէն ունեցած ծանրութենէն առաւել ըլլար,
յանցաւոր կը հրատարակուէր. իսկ ընդհակա-
ռակն ծանրութիւնը թեթևացած դանուելուն պէս՝

անպարտ հրատարակելով Թող կուտային ղինքը։

Մեր գաւառական ծովեզերեայ մէջ կը տեսնուին երբեմն ձեռնածումներ, որք պարզամիտ ժողովրդեան կշիռները կը յուզեն՝ որ ըստ կամայ կ'ելլեն ու կ'իջնեն։ Հնդկաստանի քրմերն ալ ճիշդ անոնց պէս ձեռնածութեամբ կը գործէին, միայն սա տարբերութեամբ որ՝ քուրմք փորձը կենաց ու մահու խաղ մը դարձուցել էին, մինչդեռ մեր ձեռնածուներն կշռոյ խաղը իբր զուարճութիւն մը կընդունին։

Երբայեցւոց քահանայք ջրոյ փորձն ունէին չնայող կնոջ դէմ. սոյն յանցանօքս կասկածուած կնոջ դառնաջուր ըսուած հեղուկ մը կընել կուտային, որոյ մէջ տաճարին սալայատակայ վրայէն առնուած կաւոր մը փոշի կը ձգէին՝ մասնաւոր աղօթքներ արտասանելով։ Ս. յս ջուրս, կ'ըսէին, մեղապարտ առնակինն թունաւորելու զօրութիւն ունէր. իսկ ամբիծ մնացողին ամենևին վնաս մը չէր տար։

Հնդկաց քուրմերն ամբաղձութեան յանցանօք ամբաստանելոց ըմպելիք մը կը խմցնեն, որոյ մէջ Լինգոյ ընկղմած են։ Ս.ոնք կ'ըսեն, և այնպէս հաւատալ կուտան թէ՝ այս ըմպելիքս մեղապարտից աղիքները կը լափէ կ'այրէ, մինչդեռ անմեղ եղողներուն անճառելի բարօրութիւն մը կ'առթէ։

Յայտնի կ'երևի որ այս երկու օրինակաց մէջ փոշին և Լինգոյ միայն ոամիկը պատրելու կը ծառայեն։ Ըմպելիքն յառաջուց պատրաստեալ

ըլլալով, քահանային կրնայ ուղածին պէս փորձին մէջ յանցաւորը անպարտ հանել, և անմեղը դատապարտել։

Ճաբոնի մէջ և Ի Թահիտաոան՝ ամբաստանեալն դաւաթ մը ջուր կը խմէ, որոյ մէջ քրմացոյ ձեռօք դիտապրեալ մոգական տառերով գոյնզգոյն քառակուսի թուղթ մը ձգուած է։ Յանցաւորը զայն ըմպելուն պէս՝ դառնակսկիծ ստամոքսի ցաւերէ կը բռնուի. իսկ անմեղը ընդհակառակն հանդարտ կը մնայ, և քնաւ ցաւ մը չ'զգար։ Հոս ալ ըմպելիքը կանխաւ պատրաստուած է. առաւել կամ նուազ ասիճանի մանհատու տարրեր կը պարունակէ մէջը, և կամ պարզ ջուր է, դատաւորին դատապարտել կամ անպարտ արձակել ուղելուն համեմատ։

Ս.փրիկէի շատ երկիրներուն մէջ, երբ մարդասպանութիւն մը կը դործուի, սպանելոյն ծնողք կամ ազգականքը կը պահանջեն որ անոր սպանիչն եղած ըլլալուն վրայ կասկածուած մարդիկն փորձոյ ենթարկուին։ Ս.յն ատեն քուրմք իրենց պաշտած նիւթերնին կամ կուռքերնին ջրոյ ամանի մը մէջ կը թաթաւեն, և ամբաստանելոյն կը մատուցանեն այն ամանը. բայց խիստ շատ անգամ կը պատահի որ այս վերջինս չ'ուզեր խմել, վասն զի գիտէ որ մահ կայ ամանին մէջ, և մեռելոյն ծնողաց կամ ազգականացը ստակի դումար մը կը վճարէ, որուն կըսեն Ս.բեան ֆէն։

Հիւսիսային Ս.փրիկէի ներսերը խիստ զո-

բաւոր կրօնական աղանդ մը կայ, որոյ հետեւողք դողուբեան կամ մարդասպանութեան յանցանօք կատածեալ անձանց թեւոյն ու սրունկը վրայ թափուելու յատկացեալ փորձոյ ջուր մը կը պատրաստեն։ Ա.յս ջուրս անպատճառ յանցաւորին մորթը կ'այրէ. իսկ անմեղին մորթոյն վրայէն կը սահի կ'անցնի առանց բնաւ նեղչան մը թողլու։

Փորձերը Յունաց և Հռովմայեցւոց մէջ մի միայն ժողովրդեան սորին դասուն վրայ դործադրուած կը տեսնուին։ Ա.յս ազգերս այսպիսի մարդադաւ ձեռնածութեանց չհաւատալու չափ լուսաւորեալ էին։

Ա.

Մեր թուականին առաջին դարուց մէջ կը տեսնեմք որ՝ նախնի փորձերն նորասովոր մը կը դառնան՝ Օրդալ՝ ապաստնական յորջորջմամբ, որ կը նշանակէ Կամ Ա.ոդուածոյ. վերջերը Օրդալն միայն կրակով և ջրով եղած փորձերը նշանակելու դործածուեցաւ։

Կրակի փորձը կը կատարուէր կամ տորաչէկ երկաթէ ձողով մը, զոր առանց այրելու ձեռքը բռնելու էր մարդ մինչև որոշեալ ժամանակ մը, և կամ թէ հրաբորբոք թիթեղի մը վրայէն քայլելով, և կամ վառարանի մը մէջտեղ կանդնելով։ — Սորդ է որ Քաղդէացիք, Եդիպտացիք և Յոյնք անկիզուբեան դաղտնիքը դիտէին։

Ա.յս դաղտնիքս ուրիշ չատ մը դաղտնեաց պէս քրմական դասուն բաժինն էր, որ իւր իշխանութիւնը ամրապնդելու համար կը դործածէր զայն։ Ա.րդ, յանցաւոր բայց հարուստ մարդը անվտանգ փորձոյն ենթարկուելու դաղտնիքը կը դնէր ստակով. իսկ անմեղ բայց աղքատ մարդը միշտ զոհ կ'երթար. ուրիշ բան է որ դատաւորք զայն ազատելու մէջ չահ մը ունենային։

Հէրոդոտ, որք Հռովմայ մօտ Փաղիսկեանց երկիրը կը բնակէին, անպատիժ կրակին վրայէն կը քալէին, և ամեն տարի Սորակտ լերին վրայ իրենց անկիզութիւնը ի հանդէս կը հանէին։ Վիրդիլ և Սորաբոն ստոնց՝ առանց ամենափոքր կիզում մը կրելու՝ ինքզինքնին բոցերուն մէջ նետելնուն ինչ ինչ պարադայները կը պատմեն։ Սուրբն Եպիփան կըսե թէ՝ յԵդիպտոս մարդիկ կան, որ ինչ ինչ նիւթերով ինքզինքնին օծելնէն ետքը՝ եռացեալ ջրոյ կաթսայից մէջ կը նետէին ինքզինքնին, և անկից դուրս կ'ելլնէին մարմինին աչքան առոդ և զով, որքան հոն մտնելնէն յառաջ։

ՋՐՈՎ փորձը կ'ըլլար թէ պաղ ջրով և ընկղմամբ, և թէ՝ եռացեալ ջրով։ Ա.յս փորձոյս մէջ կը գործածուէին նաև եռացեալ ձէթ և ինչ ինչ լուծեալ մետաղներ։

ՊԱՂ ՋՐՈՎ փորձը սա էր. ամբաստանելոյն ձախ ձեռքը ալ ոտքին կապած ջրալիր հնձանի մը և կամ լճակի մը մէջ կը նետէին։ Եթէ յատակն երթալու ըլլար՝ ըսել է թէ յանցաւոր էր.

ֆոն եթէ ընդհակառակն երեսը միայն, անմեղութիւնը բացայայտ էր։

ԵՈՒՅԵՍԼ ՋՐՈՑ փորձն՝ բաղուկը եռացեալ ւղղոյ կամ ջրոյ սանի մը մէջ ընկղմելով յատակը գտնուած օղամանեակ մը դուրս առնելու վրայ կը կայանար։ Ամենափոքր այրուացքն յանցաւորութեան նշան էր. հետևաբար ամբաստանեալը պատժապարտ դատաւորաց ձեռք կը մատնուէր։

Երկաթահնոցի կրակով տարաշէկ դարձած ԵՐԿՍԹԻ ՋՈՂՈՑ փորձը ամենէն սոսկալին էր, և սակայն դաղտնիքը յառաջուց ծանուցին համար անվտանգ կը կատարուէր։ Այս երկաթէ ճողս տաճարի մը կամ եկեղեցւոյ մը մէջ կը պահէին, և այս ալ քահանայական դասուն յինքն դրաւած հաղարաւոր առանձնաշնորհութեանց մին էր։ Փորձոյ օրն գալուն, պատժապարտին վրայ ջրով մաքրութեան արարողութիւններ և աղօթքներ կընէին. յետոյ մեծաշուք հանդիսիւ երկաթէ ճողն դուրս կը հանէին։ Երբ երկաթը կարմրէր կրակին վրայ, ամբաստանեալն երկու ձեռօքը բռնելու, և առանց այրելու սրահին մէկ ծայրէն միւսը տանելու էր զայն. և յիրաւի այսպէս ալ կ'ըլլար, եթէ քահանայք այնպէս ուղէին։ Սոյն պարագայիս մէջ պատժապարտը կանխաւ պէտք եղած պատրաստութեան ենթարկուելէ ետև՝ ալ աներկիւղ կըրնար տարաշէկ երկաթը ձեռօք դործածել։

Այս տեղ միայն մի քանին յիշեմք այն իրողութեանց մէջէն, որք յանցանօք աղարտեալ բարձրաստիճան անձանց կը վերաբերին, և որք փորձը յանձն առին ժողովրդեան աչքին զայնս ջնջելու համար։

ԵԼՖՐԻՏԱ, եդուարդ Բ. ին զոքանչը, ողջ առողջ դուրս ելաւ տարաշէկ երկաթոյ փորձէն։

ԹԵՒԹԻՊԵՐԿԻ, Լոթարիոսի կինը, իր եղբօրը հետ, որ կրօնաւոր և կիսասարկաւագ էր, ազգապիղծ չնութեամբ ամբաստանուելով՝ եռացեալ ջրոյ փորձոյն ուղեց որ ենթարկուի, և ողջ առողջ և ալ այնուհետև անմեղ դուրս ելաւ անկից։

Այստեղ դարձեալ կը կրկնեմք ինչ որ արդէն վերը ըսինք. ընդհանրապէս ամեն մեծահասուտ և զօրաւոր մարդիկ անպատուհաս կըրնային փորձոյ ենթարկուիլ. իսկ խեղճուկրակ մարդիկ ընդհակառակն ամեն անգամ կ'այրէին, կամ ջրամոյն կը խեղդուէին։ Հալարաւորներու մէջէն երկու դէպք յիշեմք։

Սուրբ Կենկուֆի կինը մեծազօր մարդոյ մը թախանձանացը պիղանել չ'ուղելուն՝ չնութեամբ ամբաստանուեցաւ։ Իր վատ դատախազն երդումն ըրած էր որ զայն կորսուանէ. բայց այն տարաբաղդ կինը իր անմեղութեան վրայ ապահով ըլլալով՝ բազուկն ամենայն վստահութեամբ եռացեալ ջրոյ կաթսային մէջ ընկղմեց, և դուրս հանեց, աւա՛ղ, բոլորովին այրած տոչորած։

Տլուխմնթեկոյի ուրիշ կին մը, զորմէ իր ա-

մուսինը մեծ կասկած ունեցել էր թէ կը չնայ, կրակի փորձը կրելու հարկադրուեցաւ։ Ս.յս պոռնիկ կինս դնաց քաղաքին եպիսկոպոսը դըտաւ, և իւր դաղտնիքն հաղորդեց անոր. սա ալ իւր անմեղութիւնը ապացուցանելու հնարքը ցուցուց իրեն։ Ուստի եպիսկոպոսին տնէն ելնելով ուղղակի փորձավայրն դնաց, բռնեց սաթրաշէկ երկաթի ձողն, ղոր մաուցին իրեն, սբրահին չորս կողմը պատեցաւ, և ապա աթոռոյ մը վրայ դրաւ զայն՝ որ իսկոյն բռնկեցաւ։ Ս.մուսինը թէպէտև իւր կնոջ յանցաւոր ըլլալուն համոզուած էր, ատիպուեցաւ այս հրաշիւս առջև նորա անմեղութիւնն հռչակել։

Սա ալ հարկ է ըսել որ՝ շատ անդամ այն ջուրը, ղոր հանդիսաւորեալ եռացեալ կը կարծէին, եռացման-արտաքին երևոյթն միայն ունէր։ Բնալուծութիւնը դաղջ ջրոյն եռացեալ ջրոյ երևոյթ տալու հնարքը կը սովրեցնէ։ Ցոյժ հաւանական է որ՝ Ս.Նժէրի վանականք դատի մը մէջ դտնուելով, զայն վաստկելու համար նման օրինակ հնարք մը գործածեցին։ Ս.սոնք իրենց դատին արդար ըլլալուն իրը անհերքելի ապացոյց՝ ծերուկի մը յառաջ բերին, որ եռացեալ ջրոյ կաթսայի մը մէջ նետեց լինդրինքն, և առաջուընէ աւելի զովացեալ մարմնով դուրս եկաւ անկից։ Ս.յս ծերուկին, որում յառաջուց դաս առեր էին, ձեռքերը դէպի երկինք վերուց, և համորչն բազմութեան առջև դոչեց. «Ս.յո՛. Ս.սուտած ուղեց որ հրաշքով մը մեր

սուրբ կրօնաւորաց անմեղութիւնը հրապարակաւ հաստատէ։»

Ս.Ալեխան հետաքրքրեանց հեղինակը Հնդկաստանի մէջ այս փորձերուս ականատես վկայ եղաւ։ Երկու ամբաստանեալք մին սաթրաշէկ երկաթոյ և միւսը եռացեալ ջրոյ փորձը յանձն առին։ Առաջինը՝ Պրահմաններէն հալաստեալ՝ ողջ առողջ դուրս ելաւ փորձէն. իսկ երկրորդը եռացեալ ջրէն դուրս քաշեց ձեռքը՝ սոսկալի կերպիւ խարշատեալ։ Պրահմայի քուրմերն իրենց պաշտպանելոյն ձեռքերը բալադրութեամբ մը օծել էին, որոյ դաղտնիքն իրենք միայն դիտէին. մինչդեռ երկրորդը կորուսանելու շահ ունէին։

Ս.յս օրինակներս, և այլն ասոնց նման հաղարաւոր օրինակք, որք ապդայ պատմութեան մէջ կը դտնուին ատ և անդ ցրուեալ, կ'ապացուցանեն թէ խիստ հին ժամանակէ 'ի վեր մարդիկ ամենասաստիկ կրակի քանի մը վայրկեան դիմանալու դաղտնիքը դիտէին։ Եւ արդարև, ամեն ժամանակ և ամեն երկրի մէջ, Եւրոպա, Ասիա, ինչպէս նաև Աֆրիկէ, դոդցես անկիզութեան առանձնաշնորհն ունեցող մարդիկ տեսնուած են։ Զրադաշտէն սկսեալ, որ իւր աստուածային առաքելութիւնն հաստատելու համար աւերևոյթս ամենէն ահռելի և մահաբեր փորձերն կրեց, մինչև մեր արդի անկիզներն, որք բոցավառ հնոցի մը մէջ կը մտնեն, ատրաշէկ երկաթ մը ձեռքերնին կը բռնեն, լեղունուն

վրայ խարույկ մը կը դնեն, ևայլն. ևայլն. խել մը անձինք կը յիշուին՝ որ մեր ծննդավառարայ մէջ եռացեալ ջուրը և կրակը առ ոչինչ կը դրեն։ Մեր Բնական պատմաբան առն անուն երկին մէջ՝ մարդս առ վայր մը անատչորելի ընելու համար դժբաժուած այլևայլ հնարքներն հրատարակած եմք. ընթերցողը կրնայ անոր դիմել։

Բ.

Սոյն գլուխս պիտի աւարտեմք այն տակալի փոքրիկ պատմութեամբն, զոր Գերմանիոյ ըռաոխ (*) անուն աղանդաւորք կրկէ կատային՝ այն ամեն անձանց, որ իրենց ընկերակցութեան մէջ ընդունուիլ կ'ուզէին։ Ա.յս ահռելի արարողութեանն նկարագրութիւնը չարադրած է Պ. Լիւշէ, ուսկից առնելով կը դնեմք մեք ալ այս տեղ։

«Ընդունուելու հետամուտ եղող անձը մռայլ շաւղի մը մէջէն անցնելով՝ ահագին ընդարձակ սրահ մը կը տարուի, որոյ կամարն, տախտակամածն, և որմերն հրաշալի բոցերով, սպառնալից լիժերով նկարակերտեալ սև չուխայով մը ծածկուած են համակ։ Երեք հատ դերեզմանական կանթեղք չիմնլափառ լոյս մը կը նշուլեն մերթ ընդ մերթ, և այս սգատեսիլ վայրէս մէջ հազիւ ընդնշմարել կուտան եղերական շրջազգեստ մը, որ ամենուն կը ծածկէ զանոնք։

(*) Illuminés.

Հոգեւոյ վրայ դրուած մեռելոց նշխարներ. սրահին մէջ տեղը կմախքներու շղթակուռով մը կազմեալ տեսակ մը սեղան կ'երևի, որոյ քովիքն ալ իրարու վրայ դիզուած հատորներով դրքեր կը տեսնուին։ Ա.յս դրքերուս չատերը բայ դըրուած են. ոմանք երդմնազանցից դէմ սպառնալիք կը պարունակեն. այլոց մէջ ալ անտեսանելի ոգւոյն վրէժխնդրութեանց, և այ'ն դժխայլին դիւահոչութեանց ազիտաբեր պատմութիւնն դրուած է, զորս 'ի գուր կ'արտասանէ մարդ երկար տաեն։

«Ժամը ութ կը զարնէ. այն տեն ուրուականներ, մեռելի քօղեր ձգած եռանուն 'ի վար, ծանր ծանր քայլերով սրահին մէջէն կ'անցնին և գեռնայարկ նկուղից մէջ անհետանալ կըլլան, բայց այն կերպիւ որ բնաւ կաիարքի ձայն չըլսուիր։

«Խորհրդապգեաց կամ նոքընծայն քանի և չորս ժամ այս մռայլատեսո օթևանիս մէջ կը կենայ՝ ամենախորին լռութեան մը մէջ տեղ, խիստ ծոմապահութեամբ մը միտքն արգէն սըրկարացած է. չատուկ կազմուած հեղուկներ նախ կը յորդեցնեն, և հուսկ ապա բոլորովին կը ծխեցնեն իր զգայարանքները։ Ոտիքը առվև ետ ետ ամեն դրուած են՝ կանոչորակ ըմպելեաւ լցուած։ Ծարաւէ պատպակած իր շրթանց կը մօտեցնէ զայն, բայց ակամայ երկիւղն թոյլ չ'տար որ խմէ։

Հուսկ ուրեմն երկու հոգի երևան կ'երևնեն,

զորս մահուան պաշտօնեայքն կը կարծէ տես-
նողը. ասոնք ընկերակցութեան մէջ մտնելու
հետամուտ եղողին ճակատը՝ արիւնագոյն և միս-
թիքական տառերով ծածկուած նարօտ մը կը
կը կապեն, որոց վրայ Լօրէդի Սուրբ Աստուա-
ծածնայ պատկերը մասնաւորապէս կը նշմարուի.
յետոյ երկու մատ երկայնութեամբ պղնձէ խաչ
մը կուտան ձեռքը. վզէն մանիչակագոյն կեր-
պասի մէջ փաթթուած յուշարձաններ կը կախեն.
ապա բոլորը իւր դգեստներէն կը մերկացնեն
զինքը, և այն դգեստներն երկու ընկերակիցք
կ'առնուն սրահին ծայրը կառուցեալ վայտա-
կուտի մը վրայ կը տանին կը դնեն. անկից ետ-
քը խորհրդազգեցին մերկ մարմնոյն վրայ ա-
րիւնով խաչեր կը գծեն: Ս.յս վշտակրական և
խնդարհեցուցիչ վիճակին մէջ՝ մարդը կը տեսնէ
որ արիւնաշաղախ կերպասից մէջ փաթթուած
սուսերամերկ հինգ ուրուական արագաքայլ դէպ
ի իրեն կուգան: Քօղարկեալ դիմօք օձոց մը
կը սիրեն տախտակամածին վրայ, ծուներ կը դը-
նեն, աղօթք մը կընեն, և ձեռքերնին խաչա-
ձեւ կուրծքերնուն վրայ դրած և երեսնին գետ-
նամած, անձայն և երկիւղած ամիսիսման մը
մէջ կը մնան. ամբողջ ժամ մը այս դժուարին
կացութեան մէջ մնալու է: Ս.յս փորձս ալ
վերջանալուն, ազիողորմ ձայներ լսելի կըլլան.
վայտակոյտը կրակ կ'առնու և նախևառաջ
ժամգոյն լոյս մը միայն կը ձգէ. բայց բոլոր ըզ-
դեստները կայծին կ'ապառին: Մէկ մ'ալ վիթ-

խարի հսկայական դէմք մը դուրս կ'երևնէ վայ-
տակուտին մէջէն. զայս տեսնելնուն ծուներ դը-
րած հինգ մարդիկ սոսկալի ղղայիւն սարսուռով
կը բռնուին. ճչդրիտ պատկերը այն սրտաճըմ-
լիկ մեքաւմանց, որոց մէջ յանկարծահաս հի-
ւանդութեան մը ձեռք ընկած մահկանացու մը՝
վերջապէս տապալղլը դեռևին կ'ընկնի անոր
ձեռքէն:

«Յայնժամ ահեղաձայն բարբառ մը կամարը
կը ճեղքէ, և այն նոզկալի երդմանց ձևը կը
կարդայ, զորս նորընծայն պարտի արտասանել.
դրիչը կը վարանի և դրեթէ պատժապարտ կը
համարիմ ինքզինքս զանոնք այս տեղ նկարա-
դրելուս համար:

«Յանուն Որդւոյն խաչեցելոյ՝ երդումն ըրէ
որ խորտակես այն մարմնական կապերն, որով-
կապուած ես տակաւին հօր, մօր, եղբարց,
քերց, ամուսնոյ, աղգականաց, բարեկամաց,
սիրուհւոյ, թագաւորի, առաջնորդաց, բարե-
րարաց և վերջապէս որ և է արարածի հետ, ո-
րոց հաւատարմութիւն, հնազանդութիւն, ե-
ղբայրասիրութիւն կամ ծառայութիւն խոս-
տացած ես:

«Անունը տուր այն տեղւոյն՝ ուր ծնար,
որպէս զի ուրիշ երկրի մը մէջ կեանք ունենաս,
ուր միայն ժանտիւ ապականեալ երկրագունաս,
որ երկինից անարդ մնուրն է, ուրանալէ վերջը
կրնաս հանիլ:

«Ս.յս վայրկենիս սկսեալ հայրենեաց և օ-

բինաց տուած կարծեցեալ երդմանէդ ազատ ես։ Երդումնիդ որ այժմ իբր մեծաւոր ընդունած անձիդ. յայտնես բոլոր ինչ որ միանդամ տեսել ես, ըրել ես, առել ես, կարդացել կամ լսել ես, իմացել կամ գուշակել ես, և մինչև իսկ աչօքդ չ'տեսածդ ալ փնտռես, գտնես, կամ լրտեսես։

«Պատուէ՛ ու մեծարէ՛ Ա.ֆոնտֆֆանան (*) իբր անվրէպ, արագ և հարկաւոր միջոց մը՝ մանուանքի կամ ախտութեամբ (Hebetation) աչխարհս մաքրելու այն մարդկանց երեսէն, որք ճշմարտութիւնը նկուն ընելու կամ զայն մեր ձեռքէն յափշտակելու կը ջանան։

«Փախի՛ր Հռոմէն, փախի՛ր Սպանիայէն, փախի՛ր ամեն անհծեալ երկիրներէն. փախի՛ր վերջապէս այս տեղ տեսածդ կամ լսածդ մէկու մը երևան հանելու փորձութենէն. վասն զի կայծակն այնքան արագ չ'շանթահարեր, որքան այն դաշոյնը որ կրնայ քեզ հասնիլ՝ ուր որ ալ դանուելու ըլլաս։»

«Խորհրդապզեացն այս երդման ձևս ամբողջ լսելէն վերջը՝ եօթն հատ սև մոմերով զարդարեալ աշտանակ մը կը դնեն նորա դիմացը. ոտիցն առջև ալ՝ մէջը մարդոյ արիւն լցուած աման մը, ուսկից կ'սուխլեն որ կէս գաւաթ մը արիւն

(*) Կրանն թէ՝ Ա.ֆոնտֆֆանան մինչև ցարդ ճանչցուած ամենէն սաստիկ թոյներէն մին է։

խմէ. յետոյ երդումն կ'արտասանէ։

«Ա.րարողութենէն վերջը նորընծայն աւազանի մը մէջ կը լողցնեն, և անկից դուրս ելնելուն՝ զանազան արմատներէ բաղկացեալ ճաշ մը կը պատրաստեն իրեն։

«Ա.յսօրինակ ընկերութիւններ անպատճառ աղետաբեր կ'ըլլան ա՛յն երկրին՝ ուր կը կազմուին. խելքը գլուխը և հանդարտասիրտ քաղաքացին բոլոր ապահովութիւնը կը կորուսանէ, և իւր դրացնէն, բարեկամէն, և նոյն իսկ եղբայրներէն կը դողայ որ չ'ըլլայ թէ դաժանաբարոյ բռնաւորաց ծախուած, և անոնց եղեռնական հրամաններն ամեն ատեն կատարելու կազմ և պատրաստ մէկը դարձած ըլլան։

ԳԼՈՒԽ ԼԱ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՀՄԱՅԻՉՔ (1). — ՀԱՄԲԱՐՈՒԿ. — ՍՊԻՏԱԿ ՏԻԿՆԱՑՔ (2).

Հմայիչք և համբարուկք(3) Բիւզանդեան կայսրութեան ժամանակներէն մինչև միջին դարուվերջը մեծ դեր կը խաղան, և աւանդութիւնը դեռ կը պատմէ այն հրաշքներն, զորս ասոնք կը դործէին։ Եաա հաւանական է որ 'ի սկզբան մասնաւոր մարդիկ կամ կանայք՝ բնակիտութեան զուարճալի մասէն ինչ ինչ դաղտնեաց տեղեակ ըլլալով, տեղի տուին այն առասպելաբանութեանց, որոց վրայ մեք կը ծիծաղիմք այժմ, բայց որոց ամենայն վստահութեամբ կը հաւատային մարդիկ առենօք։

Հմայողներուն մէջ բարի հմայիչներ ու չար հմայիչներ կը գտնուէին, նոյնպես էր նաև համբարուաց մէջ ալ. ուստի առաջնոց տեսքը ուրախութիւն կը պատճառէր. իսկ վերջիններէն չատ կը վախցուէր, և անոնց բնակած տեղերուն մօտէն մարդ չ'էր համարձակէր անցնիլ։

(1) Enchanteurs. (2) Dames-Blanches. (3) Փերի։

ՄԵՈՒԼԷՆ հմայիչն և ՄԷԼԻԻԶԻՆԷ համբարուն այս առասպելական էակաց տիպար կրնան համարուիլ։ Մերլէնի վրայ հրաշալի, անկարելի բաներ կը պատմեն, ինչպէս հետևեալը։

Գաղղիոյ թագաւորը յորս եղած ըլլալով՝ խելքին այնպէս փչեց որ հմայիչին քարեկամ սեպուհի մը տունը երթայ ընթրիքն ընէ։ Սեպուհն իրեն եղած այս անղուգական պատուոյս վրայ չափազանց ուրախացած՝ գնաց Մերլէնը դտաւ, և աղաչեց իրեն որ արքային մեծափառ հիւրընկալութիւն ընելու համար իրեն պակսիլ։ Մերլէն ալ խօսք տուաւ որ իւր փափաքը լիապէս կատարէ. և արդարև այն պահուն որ թագաւորը դղեկին կախաղանաւոր կամրջին վրայէն կ'անցնէր, օդային երաժշտութիւն մը լսելի եղաւ, և մինչև ընդունելութեան սրահը թագաւորին ընկերացաւ։

— Իմ նուագածուներէս չատ գերազանց նուագածուներ ունիս, սիրե՛լի պարոնս, ըսաւ թագաւորը, ո՞ւր են, ըսե՛ որ չնորհաւորեմ զիրենք։

Սեպուհն, որ բնաւ նուագածու ունեցած չ'էր, տարօրինակ տագնապի մը մէջ կը գտնուէր, երբ յանկարծ փառաւոր զգեստներ հագած երաժշտաց խումբ մը երևան եկաւ՝ երկայն նրբուղեղ մը ծայրէն։

Թագաւորն իւր մարդիկներովը սրահն հասնելով, ուր հարիւր հոգւոյ սեղան մը պատրաստուած էր, հոն բազմեցաւ և մեծաւ ախորժանօք կերաւ այն համադամ խորտիկներն, զորս

սեպուհն կը մեծարէը իրեն։

— Ի՛նչ բանէ հասկցող խոհարար ունիս, սի՛րելի պարոն, ըսաւ Թագաւորը դոհութեամբ. լաւ կըլլայ որ ինձ Թողուս զայն՝ որ մեր Բարիզ քաղաքը առնուամ տանիմ, որպէս զի աշակերտներ հասցնէ այն տեղ։» Ա.յս խօսքերս արտասանած ժամանակ Թագաւորը սրահին առաստաղը կը դիտէր, որ խիստ վայելչաշուք կերպիւ նկարօք և դրուագօք զարդարուած էր. առաջին կերակրոյն պնակներն անմիջապէս վերցուեցան, և երկրորդ կերակրոյն ոսկիէ պնակներ դրուեցան անոնց տեղ։ Երբ Թագաւորը աչքերը վար առաւ, զարմացաւ միաց տեսածին վրայ։

— Տէ՛ր Ա.ստուած, դոչեց ոքանչացած, դըղեակդ համբարուաց վարչութեան ներքև՞ է, ի՞նչ է. պատասխան առ՛ր, Սեպուհ։

— Տէ՛ր արքայ, պատասխանեց Սեպուհն, մեծանուն և հզօր Մերլէնը բարեկամն է. ճաշուն պատրաստութիւնքն տեսնողը ինքն է։» Նոյն վայրկենին հեշտանուագ երաժշտութիւն մը կոչնականաց ականջներն մոգեց, և դեղանի պարող աղջկունք երևան ելան իրենց հիացքանչ աչացն առջև։

Մինչև ցարդ, յարեց Թագաւորը, չ'էի ուշած հաւատալ այդ մեծ հմայչին վրայ պատմուած առասպելաց. բայց այսօր տեսած եմ անոնց ճշմարտութիւնն խոստովանիլ։ Փափաքելի էր ինձ որ քո բարեկամիդ նման բառեակամ մը

ունենայի քովս, սիրե՛լի Սեպուհ, վասն զի դրժուարին պարագայից մէջ մեծ օգնականութիւն կրնար մատուցանել ինձ։»

— Քո ձեռքդ է, Տէ՛ր արքայ, Մերլէնը քեզ բարեկամ ունենալ. բայց այս բանիս համար պէտք է . . . . .։»

— Ի՞նչ պէտք է որ ընեմ։.

— Գաղղիոյ գահէն հրաժա՛րիլ . . . վասն զի բարի Մերլէն երդուաւ ըրած է Կռնոսլին մօրուքին վրայ՝ որ բնաւ երբէք թագակալ գլուխներու հետ գործ չ'ունենայ, այն օրէն՝ ի վեր որ մեծ վհատութեամբ մը խաբուեցաւ . . . ըսել կ'ուզեմ խոշտանգեցաւ։

— Ի՛նչ, դոչեց Թագաւորը, իմ սիրելի դահէս հրաժա՛րիլ. ո՛չ, ո՛չ, լաւագոյն կը համարիմ որ միամ ինչպէս որ եմ, Թող բարի Մերլէնը չ'ներողանայ ըսածիս։ Սակայն և այնպէս յոյժ երջանիկ պիտի համարիմ ինքզինքս՝ եթէ աչօքս տեսնելու ըլլամ զայն, որոյ համբաւն ու հըրաշքներն Եւրոպիոյ ամեն կողմը տարածայնուած են։ Ա.սի ընորհք մ'է, զոր կը խնդրեմ բարեկամէդ. կարելի՞ է արդեօք որ կատարէ զայն։

Սեպուհը, իւր Թագաւորին հաճոյանալու համար, պաղատական ձայնիւ մը արտասանեց.

— Ո՛վ դո՛ւ, զոր ընդունայն չ'կարդար մարդ. սիրելիդ երկնից, բարի ոգիդ իմ, Մե՛րլէն, բարեհաճէ՛ աչքերնուս առջև երևցիր։»

Յանկարծ սրահին վարի ծայրի պատը վեռեկելով՝ լայն անցքատեղ մը բացուեցաւ, որոյ

մէջ ոսկի և արծաթի շերտերով յերիւրեալ երկար սև վերարկուի մը մէջ փաթթուած մարդկային կերպարանք մը երևցաւ։ Իւր դիմագրութիւնն և վեհափառ կեցուածքը պատկառանք կ'ազդէր տեսողին, և իւր զօրաւոր ձեռքին վրայ ցուպ մը բռնած էր։ Ա.յս հրեայիս վայրկեան մը միայն տեւեց. յետոյ պատին իրարմէ զատուած երկու մասերն իրարու մօտեցան, և անտեսանելի ձեռք ձգուած վարագուրի մը նման յիրար գալով գոցուեցան։

Երբ թագաւորը Սեպուհին դղեկէն դուրս ելաւ, իրեն այնպէս թուեցաւ թէ երազ մ'էր տեսածը . . . . ։ Ս.րդարև ընթերցողք ևս մեզ հետ պիտի համաձայնին մտածելու թէ՝ յիրաւի երազ մ'էր այն։

ՀՈՄԲՈՒՐՈՒ անունն ատենօք դերբնական եղելութիւններ յիշել կուտար. այն ատենի մարդիկ համբարուաց գոյութեանն կը հաւատային, ինչպէս որ կը հաւատային այնքան անճառնի և անհեթեթ իրաց։ Համբարուք դղեակներ, պալատներ կը կառուցանէին միայն մէկ ցպոյ մը հարուածով, հարստահարեալ անմեղութիւնը կը պաշտպանէին, վրիպակներն կ'ուղղէին, դիւցազանց, իշխանաց, իշխանուհեաց, մեծամեծ մարդոց կյլլն. ծնունդն կը նախատուշակէին, և ըստ քանց վատ կամ բարի ձիրքերով կը զարդարէին զանոնք. այնպէս որ համբարու մը բարի կամ չար ոգի մ'էր։ Գրեթէ բաւական երկար ատեն համբարուաց առասպելք մեծ զուարճութիւն պատճառած են երկար դիշերները մեր պապերուն, և այսօր ևս ազգայքն անոնցմով կ'զբօսեցնեն։ Ա.մեն համբարուաց գլուխ Մ Ե Լ Ի Ս Զ Ի Ն Ի համբարուն կը համարէին, որոյ անունն ժողովրդական գարձած էր 'ի Գաղղիա. ամեն մարդ կը սիրէր ու կը յարգէր զինքը։ Մելիսզինէ, գործած հրաշքներովն և Լուսինեանի պղպատոմին վրայ ունեցած սիրովն ու հաւատարմութեամբն հռչակաւոր, այնպիսի համբարու մը ստացել էր՝ որ բոլոր միւս համբարուաց համբաւը կը գերազանցէր։ Ցպոյ մը հարուածով յիշեալ տանուտէրոյ անուանի ամուրն կանգնեց. դիշերները յաճախ աշտարակայ կատարէն կ'երևէր յուշկապարիկ մը կերպարանօք, և իւր ներկայութիւնն միշտ բարի կամ գեղ լուր մը կը գնկուցանէր. նմանապէս Լուսինեաններէն միոյն ծնած կամ մեռած ատեն կ'երևէր։

Կարծես Ե. և Կատարինէ Մէտիչի հետաքրքրութենէ չարժեալ՝ այն տեղուանքը գնացին չրջեցան, որպէս զի Մելուզինէ համբարուին վրայօք զրուցուած զարմանալի բաներն աւելի լաւ իմանան։ Վերջապէս երբ Լուսինեանց դղեակն Հենրիկոս Գ. ի հրամանաւ հիմնայատակ կործանեցաւ, չրջակայից բոլոր գիւղացիք համբարուն նշմարեցին, որ աւերակաց վրայ նստած կուլար ու կ'աչխարէր։

Դարէ մը աւելի չկայ որ Գերմանիոյ և Անգղիոյ մէջ Սպիտակ ժինեաց գոյութեանը կը հաւատային։ Խօսք մը միայն ըսեմք Սպիտակ տիկ-

նանց վրայ, որ իրենց պաշտպանութեան ներքեւ առել էին Ռոզեմպերկի, Պրունավիքի և Պրանտէպուրկի տոհմական անունն։ Սմեն անդամ որ տխուր դէպք մը պիտի պատահէր, դիշերը կերևէին ասոնք սպիտակ զգեստներ հագած, և սև ձեռնոցներ անցուցած. բայց եթէ բերած լուրերնին բարի ըլլար, սև ձեռնոցներուն տեղ սպիտակ ձեռնոցներ անցուցած կըլլային ձեռքերնին։ Նէվհաւսի զղեակն երկար ատեն Սպիտակ Տիկնին մը տեսնուեցաւ, որ զօտիէն բանալեաց տրցակ մը կախած ուներ. սենեկաց ամեն դռները խնամով կը բանար ու կը դոցէր, առանց բնաւ բանի մը դպչելու, բան մը խառնելու սենեակները կը պտտէր. յետոյ ետ կը դառնար։ Հեզահամբոյր և սիրելի բնաւորութեան տէր ըլլալով՝ ղինքը ողջունողին ողջոյնը կ'առնուր. բայց և այնպէս երբ չատմօտեսնալ ուղէին իրեն, յանկարծ անհետանալ կըլլար։ Օր մը որ բազմութիւն մը ժողովուեր էր ղինքը տեսնելու համար, թեթև դողդղոյ մը պէս չինչաւ։

Սյս այլևայլ երևոյթներս ամենքն ալ դաղտնի նպատակ մը ունէին. մերթ զղեկի մը տանուտեարքն ահաբեկ ընելու, և զանոնք ստիպելու մտօք էր՝ որ ինչօր ուղեն, չ'է չըսեն. մերթ ալ դաշնակցութեան մը, ամուսնութեան մը վրայ էր խնդիրը, զոր Սպիտակ Տիկնին մը կուդար առաջարկել, և անդամ մը

հրևման նպատակը ձեռք բերելէ ետև՝ մեկ մ'ալ չվերադառնալու պայմանաւ անհետանալ կ'ըլլար։

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՅԱՐԱԼԷԶ (*)

Ասլէզ կամ յարալէզ կըսէին այն դիւականց, որք գերեզմանին մէջ անեղծ կը մնային, և կըսեն թէ դիշերը անկից դուրս ելնելով քընացող մարդոց արիւնը կ'երթային կը ծծէին։

Երբ պատահմամբ սոցա գերեզմանքն բանալու ըլլային, յարալէզներն բոլորովին անարատ մնացած և դէմքերնին փափուկ, բայց ըմպած արիւնովնին չաղախեակ կը տեսնուէին։

Յարալէզներու հաւատալը գրեթէ բովանդակ Հունդարիոյ, Լեհաստանի, Աւստրիոյ, Սըրպիոյ և Մորավիոյ մէջ ընդհանուր դարձած էր. բաւական էր որ չարաճճի ծպրաճուին, մանաւանդ չարադործին մեկը՝ դիշերը գերեզմանատանէ մը դուրս ելնէր, և ահա բոլորը երկրին մէջ ահուսարսափ կը տիրէր։ Սմեն մարդ տեսել էր սոսկալի յարալէզը, այս կամ այն կերպարանօք էր. լայն բերան մը ուներ, և իւր սոսկալի ժանիքները կը ցուցնէր. ևյլն. ևյլն։ Սմեն մարդ տանը դուռը կը դոցէր և յարալիզին ձեռ-

(*) Խորթլախ։

քը չ'ընկնելու համար ներսէն կ'ամրացնէր զայն։

1726 ին Ս. Ընդլա անուն ծերունի յարալիղի մը գերեզմանը բացին, որ բոլոր չրջակայից ա. բիւնը կը ծծէր. և տեսան որ աչքերը բաց, դէմքը կայտառ կեցած էր իւր դագաղին մէջ։ Տեղւոյն դաստաւորը, որ յա. րալիզադիտութեան խիստ հմուտ մարդ մ'էր, ցից մը մխել տուաւ մեռելոյն սիրտը, և գլուխն ալ կտրել տուաւ. ապա դիակն այրեցին, և ան. կից վերջը ալ մարդոյ արիւն չ'ծծեց։

Ս. յս իրողութեանս առուդութիւնն հաստատ. ուած է Պելկրատի ատենին երկու դատաւորաց, որք գլխատման ներկայ գտնուեցան, և կայսեր մէկ պաշտօնակալին վկայութեամբը, որոց ա. մենքն ալ ականատես եղան այս բանիս։

ՀԱՏՈՒԱԾ Գ.

ՊՐՕՆՔՕԼԱՓՈՑՔ

Ս. յժմեան յոյներն քահանային խօսքովը կը հաւատան թէ՝ երբեմն կը պատահի որ բանա. դրեալ անձանց դիակաց մէջ դևեր մտնելով կենդանութիւն կուտան անոնց, և խմելու, ու. տելու, խօսելու կ'յլն. համար իրենց գործարան. ները կը գործածեն նոցա մարմնոյն մէջէն. այս խուճապացս Պրնդօլտոյ անունը տուին։ Հը. մայն քակելու համար անհրաժեշտ հարկ է ու.

րուականին փորը ճեղքել, և սիրտը քաշել հա. նել, զոր երբ կտոր կընեն. յետոյ շատ մը խա. չեր հանելով թաղելու է դարձեալ դիակը։

Պօղոս Դ.ուկաս՝ իւր Ո.ղ.ո.ր.դ.ութ.ի.ւն յՍ.ր.ե.լ.ա. նուն գրքին մէջ՝ կը պատմէ այս տարօրինակ ե. ղելութիւնս, որ առէպ կը պատահի Սանդորին կղզւոյն մէջ։ Մեռելները գերեզմանէն կ'ելնեն, կըսէ, ցերեկ առեն ամենուն կ'երևին, և ժա. մանակաւ բնակած տուներնին կը մտնեն. այն. պէս որ զայն նչմարողներն մեծ ահուդողի մէջ կ'ընկնին։ Պրօն.քօլաբայ մը երևելուն պէս՝ հմա. յութեան մը չ'պատահելու համար գերեզմա. նատուն վազելով դիակը գերեզմանէն կը հա. նեն, և յօշ յօշ կը կտրատեն. յետոյ կառավար. չին հրամանաւն կ'այրեն և մեռեալը մէկ մ'ալ գերեզմանէն չ'ելներ։

Ս. հա այսօրինակ էր անցեալ դարուց մէջ մարդոց դիւրահաւան պարզմտութիւնն։ Ջար. հուրանքն, զոր շատ դիւրին էր ներշնչել իրենց, խել մը խարեբայից ձեռք խաղալիկ կընէր զի. րենք. և տակաւին կը գտնուին յառաջադիմու. թեան թշնամի անձինք, որք կը համարձակին պարսաւել Դաղղիոյ իմաստասիրաց մեծ գործը, որ այսպիսի աւելորդապաշտութիւններն չնչեց։

ԳԼՈՒԽ ԼԲ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՀԱՄԱՍՏԵՂԱԿԱՆ ՕՂԱՄԱՆԵԱԿԻ

Ոսկին, արծաթը, պղինձն, երկաթն և ուրիշ մետաղներ ևս կը գործածուէին այս օղամանեակաց չինութեանը. ասոնք որ մոլորակին պաշտպանութեանն ներքև որ դրուած էին, անոր անունն ու պատկերը կը կրէին վրայնին:

Ոսկի օղամանեակը Սբեդական, այն է օրուան աստուածոյն անունն ու պատկերը ունէր վրայն. Սբծաթէ օղամանեակը դիշերց թագուհւոյն՝ Լունային իշխանութեան ներքև էր. Սնոթէ օղամանեակը Լուսընթացին, որ է աստեղց թագաւորը. Երկաթէ օղամանեակը Սրուսեկին՝ լուսափայլ աստեղ՝ իշխանութեան կը հպատակէը, իսկ Կապոյտ օղամանեակը Երևակն կամ Ծերութիւնը կը ներկայացնէր:

Սյս օղամանեակաց կամ մատանեաց շատերուն վրայ ծանրագին ակունք յեռեալ էին. բայց անհրաժեշտ հարկ էր որ այն ակնը խորհըրդաւոր ըլլար, այսինքն աստղը ներկայացնող մետալին համապատասխանէր. զորօրինակ:

Կարկեհանը (1), որ արևին քարը կը համա-

(*) Աթէչի եագուէթ:

րուէը, խաթիւ պատուիրուած էր որ ոսկի օղակին հետ գործածուի. ուրիշ որ և է քար հմայն կ'ունչընչացնէը. ըշխէ-ըշխ (1) արծաթէ օղակին սահմանուած էր. պոպէնը (2) անագէ օղակին. սոռոխը (3) երկաթէ օղակին. ըչխոխը պղինձէ օղակին, և նախոթրը (4) կապարէ օղակին:

Օղամանեակը վերոյդրեալ կերպերով չինուելէ և զարդարուելէ առաև, պէտք էր նաև ծածկաբար պատարագ եղած խորանի մը աստիճաններուն վրայ դնել զայն. յետոյ՝ պատարագը աւարտելուն՝ օրհնեալ ջրոյ ամանի մը մէջ ընկըղմելու էր: Սնդամ մը այս ամեն արարմունքներս կատարուելուն պէս՝ ալ անդին բժժանք մը կ'ունենայիր ձեռքդ:

Սյս բժժանաց երջանիկ տէրը անհնարին համարուած խել մը բաներու կրնար ձեռնարկել ու գործադրել զանոնք: Օրինակի աղագաւ. դիւրին էր իրեն անտեսանելի ընել ինքզինքն. օղամանեակը միայն դպցնելով՝ ուզած անձին կամ կնոջ ինքզինքն սիրել տալու մեծանշորհն ունէր. կրնար ուրիշին գաղտնեացը վերահասու ըլլալ, և մինչև իսկ անոր մտացը մէջ եղածը դիտնալ հասկնալ. այնպէս որ ալ անկարելի էր որ իւր կինը կամ սիրուհին խաբէը դինքն և ինքն չդիտնար: Համաստեղական օղամանեակն ուրիշ շատ մը զօրութիւններ ալ ունէը, զորս լուս-

(1) Թոպաճ: (2) Կէօք եագուէթ: (3) Եագուէթ:
( ) Սէ յան:

թեամբ կ'անցնիմք. միայն սա կ'աւելցնենմք որ այս օղամանեակս վրայն կրողը բնականաբար ամեն տեսակ որոգայթէ, և մանաւանդ իսկ ամեն տեսակ հիւանդութենէ զերծ կը մնա՛ր...

ՀԱՏՈՒԱԾ Բ.

ՄՈԳԱԿԱՆ ԿԱՄ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՀԱՑԵԼԻՔ.

Ս.յս հայելիներս, որք միանգամայն պժգալի և անհեթեթ կիւսական հանդերձանօք և արուքողութեամբք կը շինուէին, կըսեն թէ հեռաւ տեղ մը ինչ որ կանցնէր կը դառնար, զայն աչագրգռ առջև բերելու յատկութիւնն ունէին. ինչ իրաց կամ որ մարդոց պատկերն որ տեսնել ուզէիր, կուպային կը ցոլանային հոն: Մոգական հայելւոյն առաջին շինողն Պիւթագորաս եղած է կըսեն, որ նա ալ Մոդէ մը սովրած էր զայն: Ս.յս իմաստասէրս, կըսե Սուիտաս, աթեամբ դիր կը դրեր տեսակ մը հայելւոյ վրայ, զոր լուսնին շառաւիղներուն առջև կը դնէր, և ինչոր հայելւոյն վրայ գրել էր, յիշեալ աստեղ վրայ կը կարդար:

Նոել Լըքոնթ կը պատմէ թէ՝ այս գաղտնիքս ծանօթ էր Ֆրանչիսկոս Ս.. ոյն. ասի իր՝ Կարոլոս Ե. ի դէմ վարած պատերազմներուն ժամանակ՝ այսպիսի հայելեաւ մը Բարիզէն կըրնար իմանալ թէ՝ ի՞նչ կը պատահէր Միլանի

մէջ, Գործողութեան եղանակը շատ դիւրին էր:

— Միլան բնակող լրտես մը մոգական հայելւոյ մը վրայ, որ Գաղղիոյ թագաւորին հայելւոյն ճիշդ համանմանն էր, քաղաքական դէպքերը կը դրէր, և Ֆրանչիսկոս Ս.. ալ այն գիրը իր հայելւոյն վրայ կը կարդար:

Եթէ Սուիտասայ և Նոել Լըքոնթի պատմած իրողութեանց նկատմամբ մեր կարծիքը հարցնելու ըլլան, պատասխան կուտամք թէ պարզապէս առասպելաց կարգը պէտք է դասուին:

ՀԱՏՈՒԱԾ Գ.

ՄՈԳԱԿԱՆ ԴՐՕՇԵԱԼՔ

Եգիպտացւոց և Յունաց մէջ դժոխային մութիւն կամ կիսամութիւն ընող ատորին կարգի իղձերն՝ որ մարդոց որ ձևաս ընել կ'ուզէին՝ այն մարդոց ձևովը փոքրիկ մեղրամոմէ արձաններ կը շինէին: Երբ այս արձանիկներս ատաւէին, բուռ մը կը մորթէին, և արիւնը չոհեղեայ փայտակուտի մը շուրջը սրսկելով դժոխային ոգիները յոգնութիւն կը կարդային. ապա դրօշեալը տփոյ մը մէջ փակելով կը պահէին որ պէտք եղած ատեն գործածեն: Ցետս ի՞նչ կերպիւ կը գործէին այս կիսաերս:

Մերթ այս մարդադրօշիս բերրանը կը վանկէին, որպէս զի այն մարդը, որոյ պատկերն

էր, ո՛չ ջուր կարենայ խմել, ո՛չ կերակուր ուտել. մերթ ալ աչքերը կը ծակէին և սրտին, լերդին, կամ այլ ներքին խողովակացը մէջ դանակ մը կը մխէին. ուրիշ անգամ ալ կը ձաղկէին, կը ճանկրտէին կամ աղբով կը ծածկէին զայն՝ միշտ այն յուսով թէ ինչ որ արձանին դլխոյն կը բերէին, նշանակեալ մարդն ալ ենթակայ կըլլար անոնց:

Երբ մարդ այսպիսի խելքէ դուրս անհեթեթութիւնք կը կարդայ, պէտք չէ՞ որ մտքդիդ այն ազդին մեղապարտ կուրութեանը վրայ ողբայ: Եւ սակայն այս բանս նախնեաց մէջ դործուիլ զատ, առանձինքերըդարուն Կաատարինէ և Ալեքսանդր անձանց ձեռօք ալ նորոգուեցաւ:

Կը պատմեն թէ կախարդ մը, որ Աբեղքէն եկած նմ կըսէր, վերոյիշեալ իշխանուհւոյն ներկայացնել ուսաւ ինքզինքն և առաջարկեց իրեն որ, մեծ ակ դումարի մը ի փոխարէն, մոգական դրօչեալներ չինելու և դործածելու արհեստը ուսուցանէ իրեն: Կատարինէ իսկոյն յօժարութեամբ հաւանեցաւ այն առաջարկութեանս. բայց խաբեբան սուակը կորզելէն ետքը՝ թաղուհին իր սնոտի գաղանեացը տէր ընելով թողուց անբուժելի եղաւ: Կըսեն թէ վառասէր և քինախնդիր Կատարինէն խել մը մոգական դրօչեալներ չինեց, որոց սրտերն կը խոցէր՝ այն յուսով որ իրեն սուտերած բերող մեծամեծաց ձեռքէն ազատի: Կատարինէ այս

հրեշային ազդայնութեանցս հաւատս ընծայելու համար շատ պարզամիտ, բայց մանաւանդ զայն դործածելու համար կարի ոխակալ ըլլալու էր: Մնայ որ այն ատենի ժամանակագիրք և Մէզըրէյ պատմաբանը այնքան տխուր նկարագիր մը կը ներկայացնեն այս թագուհւոյս մասին, որ դիւրաւ կրնայ հաւատալ մարդ՝ որ մոգական դրօչեալներ չինելու կարող եղած ըլլայ:

Ձրոյց մը հանեցին թէ Հենրիկոս Գ. մոգական դրօչելոյ դաղանիքը ժառանգել էր իւր մօրէն, և այս անհեթեթի սուտս թագաւորին դէմ եղող ղօրաւոր կուսակցութեան մը ձեռօք տարածուած էր: Ժոթնալ տը Լ'Էթուալ լրագիրը կը պատմէ որ Հենրիկոս Գ. ի վրայ ամբաստանութիւն եղաւ թէ՝ Վէնսանի անտառին մէջ առանձնակոչութիւն կընէ. բայց ճշմարտութիւնը շատ չանցաւ երևան ելաւ, և ստախօսք իրենց արժանի եղած պատիժն կրեցին:

ԳԼՈՒԽ ԼԳ.

ԻՐԱՒՆ Է ՈՐ ՕՐՀԱՍԱԿԱՆԱՑ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԵՐՆ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԵՆ. ԵԿԱԿՈՋ (*).

Ա.տենօք կը հաւատային, և ռամիկը այժմ ևս կը հաւատայ տակաւին, թէ հոգեվարքնեբու և մահուան դատապարտելոց արտաբերած վերջին խօսքերն մարգարէական նշանակութիւն մը կը պարունակեն: Բաղմաթիւ ուրոյն ուրոյն պատահած իրողութիւններ տեղի տուած են այն կարծեացս. ասոնցմէ հետեւեալները յիշեմք:

Փերտինանտոս Զ. Քաստիլիոյ թագաւորը Քարժավալ եղբարց կողմանէ, զոր յանիրաւի մահուան դատապարտել էր, եկակոչ եղաւ որ երեսուն աւուր մէջ Ա.տուծոյ դիմաց ելնէ: Յիրաւի ալ երեսուներորդ օրը մեռաւ, և այն պատճառաւ Փերտինանտոս Եկուզեցի մականունը որուեցաւ իրեն:

Փիլիպպոս Գեղեցիկն և Կղեմէս Ե. պապը Տաճարականաց Մեծ Մագիստրոս Յակովբ Մօլէյի կողմէն եկակոչ եղան որ՝ տարին չվերջացած Ա.տուծոյ առենին առջև ելնեն: Յակովբ Մօլէյն այրեցին. բայց Կղեմէս Ե. քառամեայ ախտաժամութիւն մը ունենալով, նոյն տարին

(*) Ajournement.

մեռաւ, ինչպէս նաև Փիլիպպոս Գեղեցիկն:

Յովհաննէս Հուս, իբր հերետիկոս ողջ ողջ այրելու դատապարտուած ըլլալով, իւր դատաւորները հրաւիրեց երեք ամիս պայմանաժամ պալով՝ որ Ա.տուծոյ առենին առջև երևին: Դատաւորները թէև չ'մեռան. բայց Պապութիւնը սաստկապէս սասանեցաւ: Սա ալ ստոյգ է որ՝ Հռովմայ արքունիքն այնքան ծայրայեղ անչափութեանց տուած էր ինքզինք, որ Կաթոլիկ եկեղեցւոյ մէջ յեղափոխութիւն մը պատահելիքը դուշակելու համար՝ մարգարէ ըլլալու հարկ չ'կար:

Կրնայինք շատ մը նմանօրինակ եղելութիւններ պատմել. բայց կարծեմք թէ անօգուտ կըլլայ: Ուստի միմիայն սա հարցումը ընեմք.

— Օրհասականաց վերջին խօսքերուն մէջ ախտաբական (*) բան մը կա՞յ արդեօք:

— «Ա.յո՛ և ոչ:»

Ա.յո՛, անոր համար՝ որ կ'ընդունի թէ ապագայն գիտնալու կարողութիւնը ինչ ինչ մասնաւոր կազմութեանց յատուկ չնորհ մըն է: — Ո՛չ. անոր համար որ մարդոյս այսպիսի կարողութիւն մը ունենալը կը ժխտէ:

Ա.յս երկուքէն ո՞րն իրաւունք ունի:

Ա.յս տեղ, ինչպէս նաև կանխապուշակութեանց մասին, ընդհանրապէս հարիւր մարգարէական խօսքերէն երկուքն ստոյգ կ'ելնեն. արդ

(*) Fatidique. Քառէր հիւքմինի պէյան խէն:

լինելուն երկու տուա դուշակութիւնք կը մոռ-
ցուին, և ամեն մարդ միայն այն երկուքին վրայ
կը խօսի, որք իրենց կատարումը ունեցել են։
Խղճի մտօք խօսելով կրնա՞յ մարդարէ համար-
ուիլ այն մարդն, որ հարիւրէն լինելուն ութ
անգամ կը սխալի։

Յետագայ դէպքը՝ այս տեսակ դուշակու-
թեանց կարելի իրականացումն բացատրելու հա-
մար՝ կրնայ օրինակի տեղ ծառայել մեզ։

Շամբանեայի զօրագնդին սպայներէն մի-
ոյն վրայ շատ մը դուշակութիւն ընծղներ ե-
ղել էին, և ամենքն ալ առաւել կամ նուազ
կատարեալ կերպիւ իրականացել էին. այնպէս
որ յիշեալ սպայն մեծ վստահութիւն ստացել էր
ախտաբաց վրայ։ Մանաւանդ՝ դուշակել
էին իրեն որ բնաւ երբէք պատերազմի մէջ չը-
պիտի վիրաւորուէր, և ստուգիւ ալ թէև իր
քաջ զօրական մը քանի անգամ մահուան վը-
տանգի մէջ դրել ինքզինքն, ամենևին ամենա-
փոքր ցեստուած մը անգամ ընդունած չէր։

Օր մը յորս ելած ըլլալով՝ պառաւ կնոջ մը
պատահեցաւ, որ գեանին երեսը ընկած հոգին
աւանդելու վրայ էր. ուստի մօտենալով անոր
հարցուց թէ ի՞նչ օգնութիւն կրնար մատու-
ցանել իրեն։

— Ելակդ ա՛ռ դիս, ըսաւ ոգեսպառը և
տունդ տա՛ր դիր դիս. այնպէս աւելի անդորը
կերպիւ կը մեռնիմ։»

Սպայն կ'առարկէ անոր թէ՝ ինքն էտևին բը-

նիկը չէ. թէ բարեկամի մը տունն օթևանած է,
և թէ հետևաբար չ'կրնար այս ծառայութիւնս
մատուցանել իրեն։

— Լա՛ւ ուրեմն, յարեց պառաւը նուաղկաչ
ձայնիւ մը, շարունակէ՛ ճանապարհդ. հա վայր-
կեան մը Սատուծոյ առջև եղնելու կ'երթամ, և
դու ալ երկու ամսէն պիս պիտի գաս գտնես։»

Սպայն երեկոյին իր բարեկամացը պատ-
մեց թէ ի՞նչ պատահել էր իրեն, և դրեթէ ալ
անոր վրայ չմոռացաւ։ Իր թոյլտուութեան պայ-
մանաժամը լրանալուն, իր զօրագունդն դնաց
գտաւ, և իր սովորական զբաղմանցը պարա-
պեցաւ հոն։ Սակայն պառաւին նշանակած ժա-
մանակներէն երեք օր յառաջ՝ արկածը միտքը
կուգայ. այս գաղափարս եռևէն կ'ընկնի, ալ
չ'թողուր զինքը։ Երկրորդ օրը տենդ ունի, ան-
կողին կը մտնէ։ Բժշկին մէկը իր հիւանդու-
թեան շարժառիթը դիտնալով՝ դուն կը դործէ
որ անոր բարոյական վհատեալ զօրութիւնը վե-
րըսին զարթուցանէ. բայց ի՛ զո՛ւր... այն
հաստատուն, անյեղլի գաղափարը համակ ուղեղն
արշաւած է։ Եղբայրը, բարեկամներն ամեն
կարելի միջոցներով կը ջանան կը ճգնին որ այն
չարագոյժ գաղափարն լալեն, հանեն մտքէն. ա-
մենայն ինչ անօգուտ է...։ Մեռաւնա ո՛չ թէ
եկակոչոյն ճիշդ օրը, հապա քանի մը օր վերջը։
Ս.յստեղ պարզապէս կ'երևի որ մարմինը մեռ-
ցընողը գլուխն է։ Նոյն բանն կը պատահինաև
այս տեսակ ամեն եղելութեանց մէջ ալ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

ՄՈԴԱԿԱՆ ԿԱՄ ԸՂՋԱԿԱՆ ԳԱՒԱՋԱՆ

Ամեն ատեն գաւազանը զօրութեան, մեծ. ւորական դերագունութեան նշան մը համարուեր է. Դիք և Կիսաստուածք, մեծանուն մարդիկ, կիւսահմայք և կիւսահմայուհիք իրենց գաւազանօքն հրաշքները կը գործէին: Հերմէս, Բագոս, Կիրկէ, Մէտէա, Պիւթագորաս, Զրադաշտ, Մովսէս, և հին դարուց այլ մեծամեծ մարդիկ միշտ ձեռքերնին գաւազան մը բռնած կը նկարագրուին: Սրդէն նախընթաց գլխոց միոյն մէջ՝ մոգական գործողութեանց մէջ այս գաւազանիս ինչ պաշտօնի ծառայելը տեսանք:

Ըղձական ցուպը, որ միջին դարու բիւրատեսակ նախրապաշտութեանց մին եղաւ, տակաւին անցեալ դարուն 'ի պատուի էր: Սհասկի անոր ճիշդ նկարագրութիւնը:

Սյս ցուպս կաղնի (*) ծառէ և անպատճառ այն տարուան բուսած ծիլէն պիտի ըլլայ: Նոր լուսնին երրորդ օրը, կէս գիշերուն պիտի կըտրուի, որ այս ալ անհրաժեշտ հարկ է: Ճիւղը կտրելու գործածուած դանակը նոր և քնաւ չգործածուած ըլլալու է: Պէտք է որ, և ասի

(*) Ցընորդ ազգէ:

ամենաանհրաժեշտ է, այս դանակս եկեղեցի մը տաբուելով օրհնուի: Օրհնութենէն ետքը դանակին սայրին վրայ սա բառերս կը գրեն. Ա. էոչ, երախակալին մօտ. — մէջ տեղը ωγ. — և ծայրը ԹԷԿԷԼՕՓԱՆ: Իւրաքանչիւր բառին մէջ × նշանը անպատճառ դանուելու է: Սյս կարգերս կատարուելէ ետքը՝ նոր մուճակներ հագած և կուրծքերնուն վրայ վարդապան մը անէն դուրս կ'ելլենք. ժամը կէս գիշերը զարնելուն ցուպը կը կտրեն, երկնապիշ աչօք և բարձր ձայնիւ սա խօսքերս արտասանելով.

«Յանուն Սստուծոյ կենդանւոյ, կերդնուեցուներմ ղքեզ որ ինձ հնազանդիս. + երեսնին կը խաչակնքեն. — յանուն Սրբոյ և ճշմարտին Սստուծոյ, + գարձեալ խաչ կը հանեն. — յանուն ամենակալին Սստուծոյ երիցս անգամ կերդմնցնեմ ղքեզ որ ինձ հնազանդիս: + + + երեք անգամ կը խաչակնքեն երեսնին և ցուպը կոճղէն կը կտրեն. ապա արտերնուն վրայ կը դնեն զայն, այն կերպիւ որ վարդապանին դպի, և տուն կ'առնուն կը տանին: Ճանապարհին խստիւ արգիլուած է որ ոչ ոքի հետ հաղորդակցութիւն չընելու. եթէ այս պզտուկթեանս ուշ չդրուի, ցպոյն զօրութիւնը պարապը կ'ելլէ:

Սւա՛ղ, չմոռնանք ըսել այս տեղ՝ որ ռամիկ ժողովրդեան մէջ տակաւին ըղձական գաւազանին զօրութեանը հաւատացող խեղճ մարդիկ կը գտնուին: Դիւրին է երևակայել թէ՝

այսպիսի բժժանքի մը տէր եղող անձը հրաշքներ գործելու է. ուստի երկու անուանի ցոհեր այդ պատմութիւնը պիտի մէջ բերեմք աստ, որպէս վի ընթերցողն կարենայ դատողութիւն մը ընել սոյն խնդրոյս վրայ,

Յակովբ Էմար Վէռնէ՝ ծնեալ ի Սէն-Վէրան, որ ի Տոֆինէ, 1662 ին Սեպտեմբերի 8 ին իւր դիւղին միւս չինականաց մէջ ամենէն կ'ոգուէր միշտ անդադար խելքը միտքը խորամանկութեան տուած ըլլալովը։ Տանեւութ տարու եղած աեն ծերունի խաչնարածի մը հետ ծանօթացաւ, որ իւր կաղնի ցպոյն չնորհիւ բաւական մեծ համբաւ ունէր այն երկրին մէջ։ Յակովբ Էմար նշմարելով թէ ի՞նչ օգուտ կըրնար ձեռք բերուիլ այս արհեստէս, ծերունի հովուին աշակերտեցաւ, և իւր ցուպը գործածելու մասին ստացած յայողակութեամբն չատ չ'անցաւ իւր վարպետը գերազանցեց։ Քանի մը տարի վերջը՝ համբաւը Գաղղիոյ մէկ ծայրէն միւսն երիտասարդ ցպահմային գործած հրաշքները կը հռչակէր։

Յակովբ Էմարի գաւազանն ո՛չ միայն գետնին խիստ խորերը գտնուած աղբիւրքն կը դըտնէր, այլև հոն թաղուած մետաղներն ալ, ոսկին, արծաթը, պղինձը, և պահուած դանձերն ալ ի վեր կը հանէր։ Նոյնպէս չնացող կանայքն, գողերն ու մարդասպաններն ճանաչելու զարմանալի զօրութիւն ալ ունէր։

Այս մարդոյս ձեռք բերած յայողութիւնքն

այնքան հռչակ հանեցին բովանդակ գաւառին մէջ, որ Կրօնօպլը քաղաքը կրկին սպանութիւն մը պատահած ըլլալով՝ գինեվաճառի մը և իւր կնոջը անձին վրայ, տեղւոյն աեներին գատաւորը երիտասարդ դիւղացւոյն զօրութիւնը փորձել ուզեց։ Գահերէցը հարցնելով իրեն թէ՝ կարելի՞ էր արդեօք որ մարդասպանները դանուէին, ատորոշաբար պատասխան տուաւ անոր. ուստի իւր գաւազանին գործողութեանցը նպաստելու յարմար ամեն միջոցներն իւր տրամադրութեան ներքև դրուեցան։ Կը պատմեն թէ Յակովբ Էմար Լիոնէն մինչև Մարսիլիա մարդասպանաց հետքը բռնելց գնաց, թէ ասոնցմէ մին Պովէի մէջ գըտաւ, իսկ միւսներուն հետքը, երբ ծովեզրը հասաւ՝ ուսկից նաւ նստած էին անոնք, այն ատեն կորոյս։

Յակովբ Էմարի համբաւը քանի կ'երթար աճելու վրայ էր, երբ օր մը Քոնաէ իշխանին սրբատներուն մէջ՝ իւր և իւր ցպոյն գործած հըրաշից խօսքն եղաւ։ Իշխանը, որ ռամկաց առասպելաբանութեանց դիւրաւ խաբուող մարդ չէր, Յակովբ Էմարը քովը կոչել տուաւ. ցպահմայն ալ հրաւէրը ընդունեց. բայց այն տեղ գտնուղ հանդիսականք ա՛լ դիւրահաւան և դիւրախաբ դեղջուկներ չ'էին։ Յակովբ Էմար ուսեալ և խիստ լաւ զգոյշ կեցող անցանց դիմաց կը գտնուէր. ուստի խայտառակ եղաւ, և այս գժբաղդ պատահարէս քիչ ժամանակ վերջը սոսկալուեցաւ թողուլ արհեստ մը, որ մինչև

ցայնժամ խիստ չահաբեր եղել էր իրեն։

Յակովբ Լմարբէն ևս աւելի տարօրինակ ուրիշ չրագէտ-ցպահմայ մը երևան ելաւ՝ վերոյիշեալ դեպքէն քառասուն չիսուն տարի ետքը. տասը անունն էր Պղէտոն։ 1755 էն մինչև 1781 բոլոր ա՛յն ադարակաց և դղեկաց մէջ, ուր կանչուեր էր, երեք հարիւրէն աւելի աղբիւր դըտեր էր. վանորոյ դերագոյն աղբիւրագիտի համբաւ ստացաւ, և պատիւ ունեցաւ իւր ժամանակի ամենէն բազմահմուտ բնագիտաց և բժշկաց այցելութիւնն ընդունելու։ Անհատական այն դիտաւոր կազմագիտական երևոյթներն, որք Պղէտոնի վրայ կը տեսնուէին՝ ամեն անգամ որ ըստ դիպաց աղբեր մը, կամ գետնին խիստ խոնաւունկը գտնուած ջրաշերմի մը վրայ գտնուելու ըլլար։

Ստորերկրեայ ջրոյն անտեսանելի գոլորշիքն(1) Պղէտոնի վերնորովայնին (2) և սրտի առագաստին (3) կը զարնէին, ուսկից խիստ ակնյայտնի սրտնեղութեան դգացում մը յառաջ կուգար։ Շատ չանցած ընդհանուր տարտուռէ մը կը բռնուէր, և այս տարտուռս կը յայտնէր ա՛յնքան տատիկ դողդոջուն մը, որ Պղէտոն հազիւ կըրնար ոտքի վրայ բռնել ինքզինքն։ Վերին անդամները կը դողդողային. բաղկերակին զարնուածքը որ շատ ուժով էր յառաջ տակաւ առ տակաւ կը նուազէր. դիմացը վրայ ակնյայտնի դալուկ

(1) Effluves. (2) Epigastre. (3) Diaphragme.

մը կը տիրէր, պաղ քրտինք մը երեսը կը թանար. ի հակիրճ բան տեսնողը կրնար կարծել թէ չղաձգական տանդանքէ մը պիտի բռնուէր։ Ա.յս վիճակս կը տեւէր որչափ ատեն որ Պղէտոն աղբեր վրայ կը կենար. իսկ մէկդի քաշուելուն պէս կը դադրէր։ Ա.յս զանազան կանխազգեցոյց նշաններս առաւել կամ նուազ ատտիկ կ'ըլլային՝ աղբերական խորութեանն ու քանակութեանը համեմատ։ Անհանգստութիւնը աւելի զգալի կ'ըլլար աղբեր ընթացքն ի վեր երթալու, քան թէ անոր ընթացքն ի վար երթալու ատեն։ Երբ չրաշերմը մեծաքանակ ըլլար, և Պղէտոն ալ երկար ժամանակ այս մարդիս ներքարկուէր, այնպիսի հոգնութիւն մը կ'զգար, որ մերթ ընդ մերթ հանդիստ առնելու կ'ստիպուէր, լքման զգացում մը կը յաջորդէր իւր աշխատութեան։ Իւր զգացողութիւնքն աւելի զօրաւոր և աւելի որոշ էին անօթի եղած ատեն, քան թէ ճաշէն ետքը. և եթէ պատահէր որ կերակուր ուտելէ վերջը առատաբուղխ աղբերաց վրայ երկար ատեն աշխատելու ըլլար, մարսողութիւնը կը խանգարէր, և երբեմն ալ սիրտը ետ դալով կերածը դուրս կուտար։ Ջերմ և չոր օդը աւելի յարմար էր իւր գործողութեանց, քան թէ ցուրտ և խոնաւ օդը։ Ինքը կըսէր թէ տարածեալ կամ երկրին ընդերացը մէջ անշարժ կեցող ջուրերը չ'էր զգար, ո՛չ ալ յայտնի թէև սահուն ջրերը. միայն թէ այս վերջին պարագայիս մէջ՝ նաւու մը մէջ գտնուած ատեն զբե-

խոյ ցաւ և անդամներու սաստիկ հոգնիլ կ'զգար, բայց ո՛չ ներքին տառնոսքն։ Ա.յս աղբիւրա-դիւտիս ֆիզիդական կազմութեանը վրայ, ուրիշ մարդկանց հետ բաղդատմամբ, բնաւ նշանաւոր տարբերութիւն մը չ'էր տեսնուեր։ Մթնոլորտին փոփոխութիւնը, և մանաւանդ ելեքտրական փոփոխութիւնը, մանաւորապէս զարմանալի ազդեցութիւն կընէին իւր ջղային դրութեանը վրայ։ Մնաց որ Պղէտոն խիստ պարզ մարդ մ'էր, և իւր բնաւորական և բարոյական արարմանցը մէջ բնաւ բան մը չ'էր ցուցներ թէ խաբեբայ մը եղած ըլլայ։

Ա.րդ ահաւասիկ Պղէտոնին 'ի նպաստ տեղեկագիր մը, որ քանեւեօթն աղբերակունք ցուցընելով՝ չուր չ'գտնուած զանազան տեղերու առատութիւն պարգեւելուն վրայ խմբագրուած է։

«Մեք ստորագրեալքս, Տոֆինեի Սէն-Մարսելէնի դատաւորութեան սահմանին, Վալանսի ընարական շրջանակին, Սէն-Ժան-անբոյան թաղին քաղաքապետական պաշաօնակալքս, կը հաստատեմք և կը վկայեմք թէ՝ յիշեալ Ռօյանի Պուվանթի թեմին մէջ ծնեալ, և այժմ հոն բնակող Բարթուղիմէոս Պղէտոն անուն անձը երեսուն տարիէ 'ի վեր ակերն ու աղբիւրներն գտնելու մասին խորին հմտութիւն մը ստացած է. և թէ՝ իւր հաստատուն և որոշ ցուցմանց շնորհիւ՝ Ռօյանի երկրին մէջ բազմաթիւ անձինք մեծամեծ օգուտներ կը վայելեն անկից։»

Յետոյ կը յիշուին այն կալուածոց և տեղեաց

անուանքն, ուր Պղէտոն առաստաբուղխ աղբիւրներ գտեր և երևան հաներ է։

Բայց աստի՝ գտաւոնն և մինչև իսկ ցերութեան մեծապատիւ տանուտէր իշխաններէն կանչուած ըլլալուն, որք կատարեալ վստահութիւն ցոյց կուտան իւր վրան, չլսեր գտնելու մասին ունեցած կատարեալ ծանօթութեամբն, ինչպէս որ իրեն ուղղուած զանազան նամակներէն կ'երևայ։

«Գրեալ և վաւերացեալ վերոյիշեալ Սէն-Ժանի մէջ. յ 2 Ապրիլի 1781.

«Եւ ստորագրած են. ՖՐԱՆՍՈՒԱ տեղապահ Բերդակալի. — ԺԻՐՈՏԷՆ, առաջին հիւպատոս, — ՄԻՅՆԵՔՆ, երկրորդ հիւպատոս. — Վ.ԻՆԷ, առեղնապետը-քարտուղար։

«Չստուգութիւն դրոյս վաւերացնէ դատաստանական Հօրմանի դքսութեան, տեղապահն դործակալի (*) 'ի վիճակին Սէն Մարսելէնի։»

Ա.կէց 'ի զաս Պղէտոն ուխտուն և հինգ վկայական ունէր, որք կը հաստատէին թէ՝ ստորագրեալ կալուածոցը մէջ մէկ կամ բազմաթիւ աղբիւրներ գտեր երևան հանել էր։

Ա.յսպիսի վկայութեանց առջև ծայրայեղ անհաւատութիւնը՝ իմաստասիրի վայել բան չէ. այս ըսելէս բաւական կը հասկցուի որ՝ մեք Պղէտոնը փիչ մը յառաջ պատմած թշուառական դրաբանին հետ չեմք չփոթեր։ Ուստի կրնայ են.

(*) Subecloqué.

թադրուիլ թէ կը դանուին այնպիսի կաղմուածքութիւնք, որոց ջղային գրութիւնն կրնայ ջրային գոլորշիներէն զգածուիլ, և աղբերագիւտից ցոյց տուած երևոյթներն յառաջ բերել։ Ա.պաքէն ամենուն ծանօթ է որ՝ ճահիճներէն եւ-լած գոլորշիք, երբ մարդ զիշեր առեն անոնց մօտ դանուելով զանոնք ծծելու ըլլայ, յաճախ ճախնային (*) ըսուած սոսկալի տենդը յառաջ կը բերեն, որ շատ անգամ մահացու է։

Բայց ինչո՞ւ համար, պիտի ըսեն մեզ, աղբերագիւտք երբ վտակին ընթացիքը վրայ ձգուած կամրջոյ մը վրայ դանուելու ըլլան, կամ նաւաւ ճանապարհորդութիւն ընեն, մի և նոյն զեկուցիչ նշանները ցոյց չ'են տար։

Ա.յս հարցմանս կրնայ պատասխանուիլ թէ հաւանական է որ դարձեալ այն գոլորշիները կ'զգան, բայց խիստ նուազ աստիճանաւ. ուսկից կուգայ որ՝ ցոյց տրուած նշանները ևս յոյժ նուազ զգալի կըլլան։ Հուսկ ուրեմն սա ալ ըսելու է որ՝ գիտութիւնը պէտք եղածին չափ զբաղած չ'է տակաւին այս խնդրոյս վրայ, որ սակայն լուրջ և խորին հետազննութիւն մը կը պահանջէ։ Կարելի է որ ինչ ինչ ջրապատաց վարժութեանց չատը ձեռնհասականք խաղերը եղած ըլլան. բայց ատոյգն ալ կրնայ եղած ըլլալ, և այս վերջին կէտս կը պահանջէ որ խիստ զգուշութեամբ դատողութիւն ընեմք այս մասին։

(*) Paludéenne.

Ա.րդ կաղնիէ ցուպը ի՞նչ պաշտօն կը վարէ այս գործոյս մէջ. կրնա՞յ արդեօք դանել ցուցընել սա երկրի մը խորը դանուած աղբիւրները, ահուն ջրերը, թաղուած դանձերը, և այլ մետաղային հարստութիւնք։

Ա.յս մասին մեր պատասխանը բաց է՝ ի բայ ժխտական է։ Ա.րդարև ի՞նչ վերաբերութիւն կրնայ դանուիլ փայտի կտորի մը, և հողոյն մէջ խորագոյնս թաղուած վերոյիշեալ նիւթոց մէջ։ Մինչև ցայսօր բնագիտութիւնն ու տարրալուծութիւնը փայտին, ջրոյն և մետաղաց մէջ իրարու վրայ փոփոխակի ազդեցութիւն մը բնաւ գտած չ'ըլլալով, այս մասին անհաւատ մնալը արդարև նեղերկի է։

Վ.երջապէս ըղձական ցուպը մանաւոր մարդոյ մը ձեռօք գործածուելով՝ կատարուած իրողութիւնքն, ոճրագործութիւնքն, վատ գործերն, և այլն գտնել յայտնելու զօրութիւնն ունի՞ արդեօք։

Ա.յս հարցումս պատասխանի անգամ արժանի չ'է։

ԳԼՈՒԽ ԼԸ.

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔԱՐ.

Փիլիսոփայական քար ըսելով պէտք է հասկնալ դիւրավիաուր նիւթ մը, յայտնի(1) ըսուած, որ այլևայլ մետաղներն, և մանաւանդ պղինձն, ոսկի փոխելու սարսռելի յատկութիւնն ունէր: Այս փոշին, որ այնքան անխտիր և մշտատև ըռնմանց նիւթ էղաւ, բաղմաթիւ մարդոց կեանքն ու հարստութիւնը մաշեց սպառեց: Բայց մանաւանդ տանեհինգերորդ դարուն սկիզբները այս հետաքննութիւնս մոլութիւնը մը, բուռն կիրք մը դարձաւ: Աւազին կարդի արժանեաց տէր մարդիկ դանաւեցան, որ իրենց ժամանակն և ստացած դիտութիւնքն այս յիմար ձեռնարկութեանս վատնեցին: Բովերը, ածուխը, քուրայներն, մզկիներն(2), դնդաժայր սրբուակներն, և այլն. ի մի բան քիմիական դործածուածներն ապարդիւն կերպիւ ահագին դումարներ կընեցին: Արպետութեան խաբեբայք, փիլիսոփայական քարին դաղտնիքը դիտենք ըսելով, իրենց դործողութեանց ճարակ հայթայթելու ակարտութիւնն ունեցող դիւրահաւան մարդոց հարստութիւնքը փճացուցին:

(1) Poudre de projection. (2) Alamdie.

Այս հրաշալի փոշիս անխտիր յամառութեամբ փնտռել դանալու համար եղոյներուն Ալքիմիստ (*) անունը տրուեցաւ: Բայց և այնպէս սա ալ դըժուարին չէ որ՝ այս մարդոց դիւաերը, որք յաճախ յանակընկալ կը պատահէին, հորդեցին այն շաւիղն՝ ուսկից պիտի անցնէր յետոյ Ռնըսանսը. ՌՆԱՆՍԱՅՈՒԹԻՒՆԸ, այս լայնարձակ դիտութիւնս, որ օր ըստ օրէ արհեստագիտութեանց միջոցներն բազմապատկելով՝ աղդաց բարեկեցութիւնն ևս քան զևս կը յաւելու. բնազատութիւնը, որուն արդի քաղաքակրթութիւնը պարտի իր անհուն անսահման յառաջադիմութիւնքն, և որ սանկ ըսեմք, աչխարհն երեսը դողդոջ կերպարանափոխեց:

Այն իրենց դիտութեամբը նշանաւոր մարդոց լիքը, որք փիլիսոփայական քարը ձեռք ձգած ըլլալնին հաւատացնել ուզեր, կամ ոսկեփոխութեան հաւատ ընծայել են բաւական մեծ է. ասոնցմէ խիստ հռչակաւորներն միայն յիշեմք ասոր:

Ռեյմոն Լուլ կըսեն թէ առաչինն եղաւ որ փիլիսոփայական քարը փնտռելու ետևէ եղաւ: Իւր հարստութիւնն այս բժժանացս զօրութեանը կընծայեն. բայց իւր հարստութեանց իսկական աղբիւրը բրդերուն վրայ դրուած տուրքն էր, զոր հաստատել տուաւ և ինքը վարձու առաւ:

Ան. Ֆլամել մեծ բժիշկ, վարպետ քիմիա-

(*) Alchimiste.

դէտ էր. իւր յաճախորդքն և Պապերուն պաշտպանութիւնը, որք այն առեն յՍ.վինեօն կը նստէին, մեծամեծ հարստութիւնք առնելին իրեն: Ռամիկը կ'ըսէր թէ՝ Ս.բնօ իւր փիլիսոփայական քարին ուժովը չեղջաչեղջ ոսկի՛ կը չինէր:

Նիկոլայոս Ֆլամել իւր ժամանակակիցներէն ոսկեփոխութեան գաղտնիքը գիտցող բազմահմուտ քիմիագէտ մը կը համարուէր: Ան. հուն հարստութիւնն, զոր ձեռք բերաւ Գաղղիայէն վերնաուող Հրէից և նոցա պարտապանաց գաղտնի միջնորդ ըլլալով, կարծել տուաւ չատերուն թէ իմաստասիրական քարը չինելուն եղանակը գիտէր:

Բոմբաստ Ավրէոլ կախարդութիւնն ու բժշկութիւնը յիրեար խառնեց, և Հերմէսի անհատ բազատ դրոցը վրայ մեկնութիւն մը չարադրեց: Ս.յս մոլեռանդս տղայ հասակէն մոգական կամ կախարդական գիտութեանց ուսման տուաւ ինքզինք, և ձայն հանեց թէ Մեծ ֆրեդէր, այն է փիլիսոփայական քարին գաղտնիքը գտել էր. ուստի իւր ժամանակիցներէն ոսկեփոխ համարուեցաւ:

Բոթալլը, աստանդական երևակայութեան տէր մարդ մը, որ իւր գրուածոց մէջ խիստ լուրջ իրերու քով տղայական ոչնչաբանութիւններ ալ կը շարէր. յանձնապաստան և անպարծ մարդ մը, որ կը պարծէր թէ փիլիսոփայական քարն ու ամենաբոյժ դեղն (*) գտել էր. ասի չարլա-

(*) Panacée universelle.

թանի մը անամօթութեամբն կը հռչակէր նաև թէ՝ իւր երկարակեցութեան չաքարօղոյն ղորութեամբը՝ ուղածին պէս մարդոյս կեանքը կրնար երկարել:

Մոյսէ Սենդելսոն և Ադոն Պռէսլոյէ մեծ անուն հանեցին իրենք քիմիաբոյս. ասոնց համար կըսէին թէ՝ ինչ դիւրութեամբ որ երկաթագործ մը պղպատ կը չինէ, այնքան դիւրութեամբ ոսկի կը չինէին:

Սենեք, մեծանուն բժիշկը, կըսեն թէ քիմիագէտ մը սովրեցաւ քրայական նիւթերն յոսկի փոխելու արհեստը:

Մոբրէ Տ'Ավէր, դաստատու իմաստասիրութեան, երկար աուն քիմիագործոց ախոյեանն եղաւ: Կը պատմեն թէ օրին մէկը, որ փիլիսոփայական քարին դէմ չերմ վիճաբանութիւն մը կընէր մէկ քանի քիմիագործոց հետ, իւր հակառակորդաց մին կաղը մը կապար, քուրայ մը և բուվ մը բերել տուաւ: Երբ կապարը հալեցաւ, համբերն ժողովրդեան առջև իւր ցայտուշին անոր մէջը ձգեց, և անմիջապէս կապարը յոսկի փոխուեցաւ. յետոյ դաստատուին դառնալով,

— «Պատասխան տուր այս առարկութեանս» ըսաւ:

Ան օրէն հետէ Անվերցի Մարդէն դարձաւ քիմիագործ եղաւ:

Վան Հելմն, որ բժշկութեան և բնագիտութեան մասին եղական հանդիսացաւ, կըսէ թէ՝

բուն իսկ իւր փորձառութեամբը լինչ լինչ մեծատուններն յոսկի դարձնելու կարող փոշի մը գտնուիլը ընդունելու սիրաշատ է։ Ա. յս փոշիէս մէկ ցորենաչափով մը ինքն անձամբ յոսկի փոխակերպեր է հազարաւոր ցորենաչափ տալ անդիկ, ի մեծ զարմացումն հանդիսականաց։ Սա ալ յարենք որ՝ Վան Հելմոն երեւակայութեան տէր և հրաշալի երաց բարեկամ մարդ մ'էր, և շատ անգամ զառաջինն գտուած երանիներն վերջը վերջը իբր երականութիւն կընդունէր։

Կարծած և Բէ՛ Ցըսֆըռնոզ արդարև երկուքն ալ խիստ նշանաւոր անձինք, բայց որոց երեւակայութիւնն զբանաւարութիւնը կը խանգարէր, փիլիսոփայական քարին կը հաւատային ինչպէս որ սատանային, կախարդաց, այսահարաց, և իրենց դարուն նշանաբանն եղող ամեն այս տեսակ խենդութիւնքեան կարծեաց կը հաւատային։ Կարդան մանաւորապէս հրաշալոյն սերը մինչև մոլեգնութեան ասպիճան կը հասցնէր։

Շատ հաւանական է որ փիլիսոփայական քարին այս անկարելի գործութեանս հաւատք ընծայելու համար՝ վերոյիշեալ մեծանուն անձինք խիստ ճարտար խաբեբայներէ խաբուել էին։ Ա. հաւասիկ օրինակ մ'ալ դնեմք աստ, այս խոտամանդ ոսկեշինաց հնարագիտութեանը վրայ, որ քաղքէ քաղաք թափառելով իշխանաց և տանուտերաց հնաքէն չէին զատուեր, և ի վնաս անոնց կը հարստանային։

Փերտինանտոս Գ. կայսրը 1648ին Բրակա

գտնուելով՝ ցայտափոշոյ մէկ ցորենաչափով երեք լիտրայ մնդկին ոսկի դառնալուն ականատես վկայ եղաւ։ Ա. յս այլափոխութիւնս կատարողին անունն էր Րիխթա՛ուզէն, որ ի վարձատրութիւն՝ ստակ և սեպուհ ափտզոսը ընդունեցաւ։ Կայսրը միտալ մը կսխնել տուաւ այս փիլիսոփայական ոսկւով։ Միտալին մէկ երեսը երիտասարդ մը կը տեսնուէր, որոյ գլուխը լուսաճաճանչ արեգակ մըն էր. միւս երեսին վրայ սա բառերը կը կարդայուէին.

«Ա.ստուածային փոխակերպութիւն, որ եղև ի Բրահա, ի 15 Յունուարի յամին 1648, ի ներկայութեան կայսեր Փերտինանտոսի Գ. ի։»

Ա. յս Րիխթաուզէնս, որ վարպետորդի և խորամանդ մարդոյն մէկն էր, կայսեր ինչպէս նաև աւագանւոյն չսահին ցայտափոշոյ գաղանիքը ծախեց, և ահագին դումարներ կորզելով ամենայն արագութեամբ չուեց գնաց։

Ա.րդ՝ եղաւ որ փոշւոյն նոր տէրերն իրենք ալ ոսկի չինել ուզեցին. բայց ի զո՛ւր. չկրցան յաջողիլ։ Անմիջապէս Րիխթաուզէնը դառնալու բռնելու համար մարդ հանեցին ետևէն. բայց նա արդէն երկրին սահմանէն դուրս եղած էր։ Ա.յն առեն միայն նշմարեցին որ յանդուգն խաբկանաց մը զոհ եղել էին։

Ա.յլ օրինակ. Բլիւմըրօլի սեպուհ Յովհաննէս Կոթիէ Կարոլոս Թ. թագաւորին ներկայացուեցաւ իբր ոսկի չինելու կարող։ Թագաւորը

հարիւր հազար լիտր (1) տալ տուաւ իրեն, և քիմիագէտը անմիջապէս գործոյ սկսաւ. բայց ութ օր վայրապար աշխատելէն յետոյ՝ թագաւորին դրամները միատեղ առած խոյս տուաւ։ Ոսկիանութիւնը բանն իմանալով՝ ետևէն ընկաւ ու բռնեց զինքը, կախաղանն ալ իւր գողութեանց վերջ տուաւ։

Դարձեալ՝ Կիւյ տը Կրիւշենպուրկ քսան հազար սկուտ ընդունեցաւ որ Պաստիլլի մէջ ոսկի չինելու աշխատի, աշխատութիւն մը որոյ բոլոր արդիւնքը անգլին անկատար փոխակերպութիւնն (2) էր։ Դիչերը մը քսան հազար սկուտը միատեղ առնելով ձգեց փախաւ, և անգամ մ՚ալ Գաղղիոյ մէջ չ՚երևցաւ։

Տիւրական գիտութեան հմուտ խմաստասէր մը՝ Պուլլընի եչխան Հէնրիկոս Ա.ռալնոյն ներկայացաւ, և ոսկի չինելու գաղտնիքը ծախեց անոր քառասուն հազար սկուտի։ Ա.յս ճարտարիմաց արուեստագէտս Սէտանի բոլոր գեղաւաճառաց քով որչափ որ քարմարցանկ (3) կար, ծախու առեր էր. յետոյ քանի մը ունկի փոշի դարձած ոսկի խառնելով անոնց մէջ՝ նորէն ամէն դնով վաճառել տուեր էր անոնց։ Պուլլընի իշխանը ինքն անձամբ փորձ ընելով՝ յիրաւի քանի մը կտոր ոսկի ձեռք ձգեց. բայց երբ Սէ-

(1) Հին գաղղիական դրամ մը որ գրեթէ մէկ ֆրանգ կարժէր։

(2) Transmutation. (3) Մխրճէնք։

տանի գեղավաճառաց քով գտնուած բոլոր քարմարցանկն ապառեցաւ, և դուրսէն ուրիշ բերել տալ հարկ եղաւ, ցայտախոչին իւր յեղափոխիչ զօրութիւնը կորսյս։ Քիմիագէտը քառասուն հազար սկուտ առել մեկներ էր։ Պուլլընի իշխանը խաբէութեան մը զոհ ըլլալն տեսնելով երդումն ըրաւ որ անգամ մ՚ալ չ՚խաբուի։

Հարիւր յիսուն տարուան ժամանակամիջոցի մէջ, որ այս խմաստասիրական քարիս մոլեգնութիւնը տևեց, մեր վերը յիշածներուս նման խել մը արհեստագէտք՝ գիւրահաւան և իրենց հարստութիւնն աւերցնելու ցանկացող հարուստներէն լաւ ստակ կորզեցին։ Եաքերը առնց գործածած խարդախութիւնքն երևան ելան, յորոց ահաւասիկ մի քանին։

Ա.յն մեռադները, զորս կը պարծէին թէ յոսկի կը փոխարկեն, ոսկւով լցուն բահակներով (*) կամ մէջը դատարկ ցպերով կը խառնէին։ — Հալոցին մէջ ոքսիտացեալ ոսկւոյ փոշւոյ հետ խառնուած ածխոյ փոշի կը լեցնէին։ — Կրկնայատակ գուբայներ կը գործածէին, ներքևի յատակին մէջ ոսկի կը պահէին, և վրան ալ ուրիշ մեռադ մը կը դնէին. երբ հալումն սկսէր, խառնելու պատրուակաւ վերէն յատակը կը ծակէին, և ոսկին հանդիսականաց կը ցուցընէին։ — Հալոցին վրայ դրուելիք ածխոյն մէջը կը պարպէին, և ոսկի կը ներմուծէին անդ։

(*) Մէղլաք։

— Նմանապէս այնպիսի քուրայներ կը դործածէին, որոց ներքին երեսը՝ որ ոսկւոյ խառնըրդով մը անագեալ էր, չերմութենէն քակուելով քուրային տակը կ'ընկնէր, և ձոյլ ոսկւոյ ձև կ'առնուր։ — Ս.յլևս այսպիսի հարիւրաւոր հնաոքներ ի գործ կը դնէին, և այնքան վարպետութեամբ կը գործէին՝ որ ամենէն չրջահայեացք իսկ կը խաբուէին։ Ս.ակէց ի զատ իրենց սին գիտութիւնն յայտնելու համար ծաղրալից և խառնակ լեզու մ'ալ կը գործածէին, որոյ ընթերցումն անհասկանալի է այսօր։

Քիմիագիտաց մէջ, ինչպէս ամեն ուրեք, անկեղծաւոր մտօք մարդիկ, ինչպէս նաև խաբեբայք ալ կը գտնուէին։ Ս.յս արհեստիս հաւատացողք, որք իրենց կենցաղն քիմիական գործարանի մը խորը քաշուած կ'անցընէին, փափաքեալ նպատակնուն չ'հասնելէ ի զատ, ամեն անգամ ալ կորստեան հանդիպելով կը կործանէին. ասկից ելաւ այն առակը թէ՝

Քիմիագիտութիւնը արուեստ մ'է անարուեստ, որոյ սկիզբն է սուտութիւնը, մէջտեղը աշխատութիւնն ու հոգնութիւնը, և վախճանն ալ մուրացկանութիւնը։»

Ս.րդ մեր եզրակացութիւնը, նկատմամբ փիլիսոփայական քարին, հետևեալն է.

Երկրագունդս պարզ և բաղադրեալ մարմիններէ կազմուած է։ Ս.րհեստն ու գիտութիւնք՝ չատ մը պարզ մարմնոց քիմիական բաղադրութեամբն բաղկացեալ մարմիններ չատ

բերելու չքնաղած են. բայց մարդս չ'կրնար պարզ նիւթ կամ տարր չատ բերել. վասն զի զայն չատ բերելու համար ստեղծագործել հարկ է, և ստեղծագործութիւնն ալ իւր ձեռքը չ'է։ Ոսկին պարզ մարմին ըլլալով՝ խելքի դեմ, այսինքն բացարձակապէս անկարելի բան է՝ ուրիշ քրայական նիւթերով չատ բերել զայն։ Ս.յս այսպէս ըլլալով՝ բոլոր ինչ որ փիլիսոփայական քարին հռչակաւոր գաղտնեաց վրայ գրուցուած է, զոր իբր թէ մէկ քանի քիմիագէտք գիտեն եղել, բոլորն ալ սուտ է, և առասպելաց կարգը պէտք է դասուիլ։

ԳԼՈՒԽ ԼԶ.

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. ԻՐ ՄԻՋՈՑ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Կենդանական մագնիսականութիւնը նախնեաց մէջ ամենէն աւելի գործածուած հրաշագործական հնարիք մին էր, ինչպէս որ պատմական յիշատակարանք բնաւ տարակոյս չ'են թողուր այս մասին: Մենք այս տեղ Մ-ֆ-ն-ա-ն-ո-ն-ի-ն ըսելով բառին ամենէն ընդարձակ նշանակութեամբը կ'իմանանք, այն է մարդոյ մը ձայնին, հայեցուածքով, հպմամբ, և այլն. ևս և կամաց զօրութեամբ իւր նմանին վրայ ըրած ազդեցութիւնը:

Ա.պաքէն՝ հին ազգաց պատմութիւնն յոգնաթիւ եղելութիւնք կը յիշէ մեզ, որոց ամենքն ալ Մագնիսականութեան պէտք է ընծայուին: Ա.յսպէս Պրահմանք և Մոգք հայեցուածոց զօրութեամբ բաղմաթիւ բժշկութիւնք կը գործէին, որոց միջոցաւ հիւանդաց ցաւերը կ'ամոքէին և քուն կը շնորհէին անոնց: — Քաղդէացիք և Եգիպտացիք միևնոյն եղանակը կը գործէին և միևնոյն արդիւնքը կ'ստանային: — Հերոդոտոս, ինչպէս արդէն տեսանք, բաղում մեհեաններ կը յիշէ, ուր ախտաժէտք կերթային քրմաց ձեռօք քնանալու, և երազնուն մէջ իրենց բժշկութեանը պատճառ ըլլալիք դաղանիքն իմանալու: — Դիոդորոս յայտնապէս կըսէ թէ՝ հիւանդք քրմաց ձեռօք քնանալու համար դունդադունդ Իսիսի մեհեանն կը դիմէին. Ա.յս ախտաժէտաց մեծագոյն մասը Փնուխոս դառնալով, այսինքն իրենց մագնիսական ներհման միջոցին խօսելու կարողութիւն ստանալով, քրմաց իրենց ուղղած հարցմանց կը պատասխանէին, և իրենց բժշկութեանը համար ինչ առանձին դարմանատուութեան հարկ ըլլալը ինքնին կը յայտնէին: — Սդրաբոնէն կ'իմանամք որ Մեմփիսի մեհենին մէջ ալ միևնոյն բաները կը պատահէին, միայն սա տարբերութեամբ որ՝ փոխանակ հիւանդաց՝ քրմերը կը քնացնէին, և անոնք պատասխան կուտային հարցմանց: — Կէղսի և Սրնովպայ ըսածին նայելով Եգիպտացւոց մէջ անյիշատակ ժամանակներէ՝ ի վեր բժշկութեան ուսամբ մարդիկ կային, որք չօշափմամբ և փրչմամբ յաղթող կը հանդիսանային ինչ ինչ հիւանդութեանց, որոց դէմ բժշկականութիւնը անզօր մնացել էր:

Եվրայեցւոց ազգին մէջ մագնիսացնողք խիստ բաղմաթիւ եղան. ասոնք անլսուր հրաշքներ կը գործէին. ա՛չ միայն ախտացեալներն կը բժըշկէին, հապա մեռելոց կենդանութի՛ւն ալ կուտային . . . : Ա.սի կը նշանակէ անչուշտ թէ անոնց, որք մեռեալ կը կարծուէին: Ա.մենուն ծանօթ է որ Հրէայք հրաշալեաց վրայ տարփածին սէր կը տածէին. բայց ասոր խիստ աւելի դասալաշ էին. ուստի պատմութիւններին չատ ան-

գամ համբարուաց առասպելաց կը նմանի։

Յոյնք ալ նմանապէս մագնիսականութիւն՝ի դործ կը դնէին մեհենից մէջ, և Թրոփոնիոսի պատգամին սպասարկուք հռչակաւոր եղած էին այս դործողութեանցս մէջ։ — Հերոդոտոս կ՚իմացնէ մեզ թէ՝ քուրմք վհկի մը մագնիսական հպմամբք դործած բժշկութեանց վրայ նախանձելով՝ դաւաճանեցին զայն։ Ի մի բան՝ յունական պատմութեան մէջ խել մը եղելութիւնք կը յիշատակուին, որք բացորոշ կերպիւ մագնիսականութեան կիրառութիւնը կ՚ապացուցանեն։

Հռովմայեցիք ևս, որք յամենայնի յունաց նմանողք էին, իրենց մեհեանքն ու պատգամատուղիքն առնեցան, ուր հիւանդներն կը մագնիսացնէին։ Կերպ կը պատմէ որ՝ Ասկղեպիատէս Բրուզացին մըտիդնութեամբ ըմբռնեալ անձինքն ձեռաց հպմամբք կը քնացնէր։ — Եւսէբ, Որոպինէս, և Յամպղիկ մագնիսականութեամբ ևս կիւզապեայ մեհենից մէջ հրաշքները դործուիլը միաձայն վկայութեամբ կը հաստատեն։ — Դըբոյիդք և Դրոյիդուհիք իրենց սնապաշտական արարողութեանց մէջտեղ՝ մագնիսականութիւն՝ի կիր կառնուին. ասանց դործած բժշկութիւնքն այնքան յոգնաթիւ էին, որ ամեն երկրէ խորհուրդ հարցնել կուդային իրենց։

Արդ՝ ինչպէս կը տեսնուի, մագնիսականութիւնը խիստ հին ժամանակէ հետէ ծանօթ էր, և ամեն ազգերէ կը դործածուէր։ Մեր ժամանակի մագնիսականութիւնը հնոց մագնիսական-

նութեան բոլորովին յարևնմանն է. միայն թէ այժմու շարլաթանք հին ժամանակներէն շատ աւելի բաղմաթիւ են։

Կենդանական մագնիսականութիւնը այժմ Արաբացւոց և Եդիպտացւոց մէջ կը դործածուի՝ խիստ հետաքրքրական կերպիւ, այնպէս որ կ՚արժէ որ այս տեղ մէջ բերեմք։ Ու. Լէնի Եդիպտացւոց բարուցը վրայ յօրինած պատուական դրուածքին մէջ՝ արաբ կիւսահմայի մը մասին խիստ հետաքրքրական պարագայից պատմութիւնը կը գտնուի, որ հայեցուածոյ և մտադական ինչ ինչ արարմանց զօրութեամբ մասնաւոր տղայքներ կը մագնիսացնէր, և անոնց աչերնուն մէջ ո՛չ միայն Դահիրէ քաղաքին, այլ նաև Եդիպտոսի բոլոր միւս քաղաքաց մէջ անցած դարձածը տեսնելու կարողութիւնը կուտար անոնց։ Ընթերցողն կը հրաւիրեմք որ յիշեալ երկասիրութիւնը կարդայ, և մեք բաւական կը համարիմք այստեղ Պ. Լէեն որ Լապորտի Հերոդոտոսին՝ ի վերայ Եդիպտական հանդիսից անուն տետրակէն մի քանի տող մէջ բերել։

Պ. Լապորտ Դահիրէ կը գտնուէր, երբ Մոդական արհեստից մասին խիստ ճարտար եղող արաբացւոյ մը հրաշալի դործերուն վրայ խօսուիլը լսեց։ Իրեն պատմուած աքանչելեաց մի քանին բուն իսկ իւր աչօքն տեսնելու հետաքրքրութենէ չարժեալ՝ գնաց կիւսահմային դրան, և առակի դումար մը խոստանալով հաճեցոյց զայն որ իւր աչացն առջև կատարէ իւր դործը։

Կիւսահմայն երեսուն տարեկան մարդ մ'էր մեծահասակ, գեղեցիկ, քաղցր ու սիրուն կերպարանք. սուր, թափանցիկ, և մինչև իսկ անըմբռներելի հայեցուածք մը ունէր, և սոսր համար աչքերը կ'զգուշանար որ ուրիշին աչացը վրայ չ'սեւեռէ, վասն զի իւր ակնարկին զօրութիւնն կը ճանաչէր։ Ներկայացման համար որոշեալ օրը հասնելուն՝ Պ. տը Լաղորտ բազմաթիւ անձանց ընկերակցութեամբ, որոց մէջ էր նաև Լորտ Բրիւտոն, Սրաբացւոյն պանուած տեղը գնաց. քանի մը տղայք ալ ներկայ կը պտուէին անդ՝ ոմանք եւրոպացի, ոմանք արաբ։ Բոլոր պանուած անձինք բոլորակի բազմելնէն վերջը, կիւսը տղայոց միւն քովը նստեցնել տուաւ, և ձեռքը բռնելով ուշի ուշով դիտեց զայն։ Ս.յս տղայն, որ Եւրոպացւոյ մը տղայ էր՝ տասն և մէկ տարեկան, այն երկիրը մեծցած էր և դիւրաւ արաբերէն կը խօսէր։ Կիւսահմայն՝ որոյ Ս.հմէտ էր անունը՝ դրչամանը մէջքէն հանելով ըսաւ իրեն. «Տղա՛յ. մի՛ վախնար. ափիդ մէջ քանի մը բառ պիտի գրեմ, և դուն ալ վրայն պիտի նայիս։» Ս.հմէտ տղան ձեռքին մէջ քառակուսի մը գծեց, որոյ մէջտեղը մի քանի թուանշաններ կային. յետոյ կաղամարին մէջ պանուած մելանը անոր վրայ թափեց։

— «Պատկերդ կը տեսնե՞ս մէջը, հարցուց իրեն կիւսը։

— «Ա.յո՛,» պատասխանեց տղայն։

«Ս.յն առեն քառակոյն կրակարան մը ա-

ռաւ, մի քանի ծխանելիք նետեց մէջը, և աչքերը տղուն աչացը մէջ պինդ յառելով՝ հրամայեց որ դարձեալ ձեռացը մէջ նայի, միանգամայն լմնաց տալով իրեն որ տաճիկ դինուորի մը անցնիլը պիտի տեսնէր։

»Խորին լռութիւն մը կը տիրէր. տղայն աչքերը ձեռքին վրայ սեւեռած էր. ծուխը բարդ՝ի բարդ կրակարանէն ելնելով՝ համամային հոտ մը կը տարածէր։ Ս.հմէտ իւր մերթ տկար և հնչուն, մերթ թնդացող և կսկծուր ձայնիւն կարծես թէ երեւմնեան կը հրամայէր, երբ յանկարծ տղայն գլուխը եռաւ նետելով՝ պոռաց որ ալ նայիլ չ'էր ուզեր, թէ ահագին դէմք մը տեսել էր, և իւր դէմքին ալ կ'երեւէր որ սաստիկ զարհուրած էր։ Կիւսը առանց այս բանիս վրայ զարմանք ցուցնելու ըսաւ.

— Ս.յս տղայն վախցաւ. թողելու է ղինքը. վասն զի եթէ շարունակելու ըլլամք, երեւակայութիւնը չափէն աւելի կը նեղգործուի։

Ուսոի արաբ տղայ մը կանչեցին, որ ամենայն հանդարտութեամբ թոյլ տուաւ որ մոգական պատրաստութիւններն ընեն իւր վրայ։ Մելանը ձեռքին մէջ թափուեցաւ. ծխանելեաց ծուխը բարձրացաւ, և մոգը մերթ զօրաւոր և մերթ թեթև և նուագեալ ձայնիւ աղօթք մը երգեց. յետոյ տղուն ուղղելով խօսքը,

— «Լաւ նայէ՛. բան մը կը տեսնե՞ս» ըսաւ.

— «Ա.յո՛, ահաւասիկ։»

— «Ի՞նչ կը տեսնես։»

— «Ձինուորը։»

— «Ի՞նչ գդեստ հագած է։»

— «Ոսկեթել կարմիր պարեգօտ մը հագած և գլուխը փաթթոց մը կապած է. մէջքն ալ ատրճանակներ ունի։»

— «Ի՞նչ կընէ։»

— «Վրայն ոսկի գնաւակներով՝ կարմիր կանաչ շերտաւոր վրանի մը առջև գորգ մը կը տփռէ։»

— «Նայէ՛. հիմա ո՞վ կուգայ»

— «Սլքայն, եռանէն ալ իւրթիւնապահները. . . . . Ա՜հ, ի՜նչ գեղեցիկ աեսիլ . . . . .»

«Զայս ըսելով աղային ձեռքին մէջ կը նայէր այնպէսի ուշադրութեամբ մը, որ արքայն և իր պալատականքը տեսնելովը զդացած յաճոյքը կը յուշեր։

— Ձի՞ն ինչպէս է։»

— «Ձերմակ է. գլուխն ալ փետրազարդ։»

— «Խակ կա՞յորը։»

— «Սև մորուքէն, գլուխն ալ կանաչ փաթթած»

Տղային երկար բարակ նկարագրութիւն մը սկսաւ ընել կայսեր ընկերակցող հեռւակայ վրան. տալա երկվարէն իջնելը, և վրանին ներքև նստիլը տեսաւ, ուր սպասներ երկար ծխափայտ մը մատուցին անոր։

«Ցետոյ կխոսը հանդիսականաց դառնալով ըսաւ։

Փարնանայք, ո՛վ որ կուզէք երկիր տալ, առնողը առէք։ Փոյթ չէ, ո՛րչափ հեռաւոր երկիր

դտնուին և ո՛ր ժամանակի մէջ ապրած ըլլան. բաւական է որ անունները առաք, և ահա աղային ափին մէջ անոնց երևիլը պիտի տեսնէ։

— «Եէյքսփիրը երևցո՛ւր, ըսաւ Լորա Բրիւտհօ։»

«Կիսաը հարցուցմը կրկնեց աղուն՝ սա կերպիւ.

— Տղա՛յ. հրամայէ՛ ձինուորին՝ զոր կը տեսնես, որ Եէյքսփիրը քեզ բերէ։»

Տղային տիրական ձայնիւ մը գոչեց.

— Ձինուո՛ր, հոս բե՛ր Եէյքսփիրը։»

Մի քանի երկվայրկեան ետքը աղային գոչեց.

— «Ա՜հաւասիկ։»

«Ի՞նչպէս է։»

— Երկար մօրուք մը և սև վերարկու մը ունի. բոլոր զգեստները սև են։»

— Ա՞ւր ծնած է։»

— Ջրով չրջապատեալ երկիր մը, ասկից չատ հեռու դտնուած կղզի մը։»

Ա.յս պատասխանս սաստիկ զարմանք պատճառեց Լորա Բրիւտհօի, որ յարեց.

— «Բրատոքը բերել տուր։»

«Պարոն Բրատոք այն միջոցին Ա.ղեքսանդրիոյ կուսակալին քով կը գտնուէր՝ դեսպանական պաշտօնիւ։

«Տղային անտեսանելի ղօրականին հրամայեց որ Պ. Բրատոքը առնու բերէ, և Ձինուորն հնազանդեցաւ։

— «Ի՞նչ հազուստ հագած է» հարցուց Լորա Բրիւտհօ։

— «Կարմիր զգեստ հագած է, և մեծ սև գլխարկ մը ունի. Հա՛. ի՞նչ զարմանալի կոչիկներ են . . . . . երբէք անոնց նման կոշիկ տեսած չեմ. սև կոշիկներ են, և մինչև ծունկերը կը հասնին։»

«Բոլոր այս պատասխաններս, որք զարմանալի կերպիւ ճիշդ էին, անոր համար աւելի տարօրինակ էին՝ որ յայտնապէս կ'երևէր թէ աղջկան աչքին առջև բոլորովին նոր մարդիկ և զգեստներ կը տեսնէր։ Եէյքսփիր՝ իր մօրուսոնին և իր դարուն կարճ սև մեկնոցաւը. Պ. Քրատոք իր եռանկիւնի գլխարկաւն, և տատիան վրայէն քաշած սև կոշիկներովը։»

«Ուրիշ շատ մը երևոյթներ ալ խնդրեցին, որք ամենքն ալ միևնոյն ճշդութեամբ իրարու կը յայտնէին. բայց Ա.Հմէտ ներկայ եղողայ դիտել տալով որ տղայն քրտինք կը թափէր, դժուարաւ շունչ կառնուր, և յոգնած էր, մատերը անոր աչացը վրայ դպցնելով դլուխը վեր վերցուց, և նիստը վերջացուց։»

Պ. Տը Լապորտ բոլոր այս միջոցիս խորին ուշադրութեան և սաստիկ զարմանաց մէջ ըլլալով՝ վախցաւ որ խաբեբայութեան մը նշաւակ եղած չըլլայ. ուստի միտքը դրաւ որ Ա.Հմէտի գաղտնիքը գնէ, որպէս զի քալ խելամուտ ըլլայ բոլոր այս խորհրդոցս։ Եւ արդարև Ա.բաթը ստակի ուրիշ գումար մ'ալ ստանալով յանձն առաւ որ իւր արհեստը սովրեցնէ անոր։

— Սրնամ ես, կըսէր Ա.Հմէտ, նշանացի չարժ-

մանց, ձայնի և հայելուածոց զօրութեամբ այս կամ այն մարդը քնացնել, ընկնել կամ դեռևին վրայ թաւալիլ տալ, և ստիպել որ ըրած հարցմանցս պատասխանէ։»

Ստուդիս ալ չուրջը դառնուած տղայոց վրայ իրօք ինչոր կըսէր, կը դործէր։

Պ. Տը Լապորտ դիտեց որ Ա.Հմէտի նշաններն ու չարժմունքն մեր եւրոպացի մագնիսացուցչաց նշանացն ու չարժմանցը հետ մեծ համանմանութիւն ունէին, և անկից հետևցուց թէ՝ Ա.բաթացւոյն մոգական արհեստը պարզապէս մագնիսականութիւն էր՝ աւելորդապաշտական արարողութեամբ և առաւել կամ նուազ աննշան արարմանց ձևերով խառնուած։ Քանի մը դասատուվենէ վերջը՝ Պ. Տը Լապորտ սովրած արհեստը տղայոց վրայ փորձեց, և իսկ և իսկ ինչոր Ա.Հմէտ կընէր, նոյնը նաև ինքը կրցաւ ընել։

Մեր ընթերցողաց մէջէն անունք, որ եգիպտական մագնիսականութեան վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւնք առնուլ կուզեն, Ռեվէ-դե-դէս Մօռ անուն Գաղղիարէն պարբերական հանդիսին 1841 ի թիւերը պարտին կարդալ, որոց մէջ նշանակած է Պ. Տը Լապորտ բոլոր ինչոր այս մասին պատահած է իրեն։

Սակս չմոռնանք ըսել այս տեղ՝ որ մեր մեծ մագնիսողն Տիւբօսէ՝ Բարիզու մէջ Գահիրէի Ա.բաթացւոյն ամենևին համանման եղանակաւ կը դործէ, և միևնոյն արդիւնքն կ'ստանայ. իր մագնիսափորձերուն, որք խիստ հետաքրքրական են,

ներկայ դանուողը մեր այս ըսածին դիւրաւ կը համոզուի։

Յեղիզաոս և Աստուծոյ լերանց մէջ բազմութիւն մագնիսացնողաց կը դանուին, որ մեր քիչ մը վերը պատմածներնէս շատ աւելի զարմանալի հրաշքները կը գործեն, և հաւանական է որ Ս. Հմէտ ալ, որ բուն ձեղայիրցի էր, անոնցմէ ուսած էր իր արհեստը։

Վերոյիշեալ եղելութեան համանման, և անկից ո՛չ նուազ հետաքրքրաշարժ եղելութիւն մ՚ալ, որ 1700 ին առիւծները Գաղղիոյ մէջ տեղի ունեցաւ, կարծել կուտայ մեզ թէ մոգական արհեստից հմուտ մի քանի Արեւելցիք՝ իրենց տաղանդն փայլեցնելու համար հոն եկած ըլլան։ Արդարև Սէր Սէճէ չլաուոլոթոց էրրորդ հատորոյն մէջ կը կարդամք.

«Հաւասիկ բան մը, զոր Օրլէանի դուքսը Իտալիա երթալէն յառաջ՝ Մնորլէի սրահին մէջ դլուխ դլխոյ տուած պատմեց ինձ, և այս բանս վերջէն պատահած դէպքերէն առուգուելով, զորս չէր հնար այն առեն դուշակել, կը հարկադրէ զիս որ զանց չընեմ յիշելէ զայն այս տեղ։ Ինքը առեն տեսակ արհեստից և մակացութիւնից մասին մեծ հետաքրքրութիւն ունէր, և թէև Կատարինէ Մէտիչիէն շատ աւելի մտացի էր, բայց և այնպէս անոր Իտալիայէն բերած աւերը ընդհանրական տկարամտութիւններէն բոլորովին ազատ չէր։ Օրլէանի դուքսը դաղտնաբար յայտնեց ինձ որ՝ բոլոր կենացը մէջ սատանայն տես-

նելու չանացել էր, բայց բնաւ չէր յաջողած. արտաքոյ կարդի բաներու յոյժ սիրահար էր, և սատիկ կը բաղձար որ ապագայն դիտնայ։ Ծածկեալ հետաքրքրական իրաց դիտակ խնդրել մը այլևայլ խաբեբայից մէջէն, որոց պէս չատ տեսած էր Օրլէանի դուքսը, Աերիի տունը որ այն առեն իւր սիրուհին էր, օտարական մարդ մը ցուցուցին իրեն, որ կը հաստատէր թէ՝ ջրոյ դաւաթի մը մէջէ կրնար տեսնել ինչ բան որ պիտնալ փափաքէին։ Նախ ուզեց որ նորահասակ և անմեղ մէկը դանեն իրեն, որ դաւաթին մէջ նայի. ուստի ինն տարեկան փոքրիկ աղիկ մը բերին, որ Սէրիի տունը ծնած և բնաւ երբէք անկից դուրս ելած չէր։ Այժեն մարդ իբր զբօսանք սկսաւ հարցումներ ընել՝ հեռաւոր երկիրներու մէջ անցած դարձածներուն վրայ, և փոքրիկ աղիկին օրոշակի կը պատասխանէր ինչ որ չրոյ դաւաթին մէջ կը նշմարէր, և անմիջապէս մէջը նայելով կը տեսնէին։

Օրլէանի դուքսն բաղում տեսակ խորհրդաւորութեանց նշանակ եղած ըլլալուն՝ ուզեց որ այնպիսի փորձ մը ընել տայ, որ կարենայ դինքը համոզել։ Ուստի իւր մարդերէն մէյն գաղտնաբար հրամայեց որ՝ անմիջապէս սիկին Նանքրէի ապարանքը երթայ, և աղեկ մը տեսնէ տեսուչէ թէ ո՞վ կար հոն, կահկարասիքն ինչ կերպիւ յարդարուած էին, և ի՞նչ կանոներ կը դառնար հոն, և առանց մէկու մը բան մը ըսելու դայ ճիշդ ուճիշդ պատմէ իրեն։

Վայրկեան մը չ'անցած յանէնարարութիւնը կատարուեցաւ՝ առանց ոչ ոք բան մը իմանալու։ Դուքսը լաւ մը ամեն բանի վերահասու ըլլալէետև փոքրիկ աղչկան ըսաւ որ՝ դաւաթին մէջ նայի թէ ի՞նչ կանցնէր կը դառնար Տիկին Նանքրէի տունը։ Աղջիկը անմիջապէս բառ առ բառ պատմեց ինչոր Գաքսին ըրած մարդը տեսել էր. այսինքն նաստած, յոտին կեցած խօսակցութիւն ընող անձանց դիմաց և հագած զգեստները. կարագրութիւնը. ի մի բան բոլոր ինչ որ կանցնէր կը դառնար հոն։ Օրլէանի դուքսը Պ. Նանքրէն ղրկեց, որ շատ չ'անցած եկաւ պատմեց իրեն թէ ամենայն ինչ ճիշդ փոքրիկ աղչկան պատմածին պէս գտել էր։

«Օրլէանի դուքսը շատ չ'էր խօսեր ինձ այսպիսի իրաց վրայ. վասն զի «ամէթ է» ըսելու, և զինքը այս տեսակ ձեռնածութեանց հաւատս ընծայելէ, և անոնցմով ժամանակ անցնելէ ետև կենալ յորդորելու կը համարձակէի. բայց ամենն այս չէ, շարունակեց, և ես այս բանս միայն ձեռացածին ալ միտ դնել տալու համար պատմեցի քեզ։ Փոքրիկ աղչկան ըրած պատմութեան ճշդութենէն քաջալերուելով, որ բնաւ երբեք ոչ զվերապայ և ոչ ալ պալատականներէն մին տեսած ունէր, խնդրեցի որ նայի թէ ի՞նչ կար չ'կար թագաւորին սենեկին մէջ, որ այն աստեն հիւանդ էր։ Աղջիկն աչքերը ղրկեց դաւաթին վրայ յառեց, և ամենայն ճշդութեամբ վերապայլի մէջ դանուած թագաւորին նկարագիրն

ըրաւ։ Յաստուկ յաստուկ պատմեց թէ ի՞նչպէս թագաւորը անկողնոյն մէջ պառկած էր, և պալատականք ալ նորա մօտ կամ սենեկին մէջ յոտին կեցած էին։ Մէկ մ'ալ զարմացման փոքրիկ ճիչ մը արձակեց՝ տիկին Վանդատուրի դերկը մանկիկ մը տեսնելով, վասն զի օրիորդ Սէրիի տունը տեսած էր այն մանկիկը։ Նաև Տիկին Մէնթընոնը, Յակոնի տարօրինակ դէմքը, Օրլէանի տիկին դքսուհին, Բոնթի իշխանուհին, և այլն ամենն ալ ճանչցուց. ի մի բան որքան իշխան, դրանիկ և սպասաւորք կը տեսնէր, ամենն ալ մի առ մի նկարագրեց։ Երբ աղջիկը բոլոր տեսածը պատմեց լմնցուց, Օրլէանի դուքսը զարմացած թէ ի՞նչպէս Պուրկոյնեի դուքսուհին, Պէրրիի դուքսը, և մանաւանդ թագաւորին եղբայրը Մոնսէօրնէօրը չ'էր նշմարեր, հարցուց աղչկան թէ այս ինչ կամ այն ինչ ձևով դէմքեր չէ՞ր տեսներ։ Տղայն միշտ ո՛չ կըսէր, և տեսած մարդոց անուանքն կրկնեց։ Օրլէանի դուքսը շատ զարմացաւ այս բացակայութեանս վրայ, և ի զուր այս բանիս պատճառը երևակայել դտնալու աշխատեցաւ. բայց դէպքերն այդ բանին մեկնութիւնը տուին։ 1706 տարւոյն մէջն էին, բացակայ դտնուողչորս անձինքն ալ ողջ առողջ էին, և չորսն ալ թագաւորէն յառաջ մեռան։

Ս.յս հետաքրքրութիւնս յագեցնելէ յետոյ՝ Օրլէանի դուքսը ուղեց որ իրեն ալ ինչ ըլլալիքն իմանայ։ Ս.յն առեն դաւաթը մէկդի առնուե-

ցաւ, և կիւսահմայն առաջարկեց իրեն որ պատմէ վրայ նկարուած ցուցնէ այս բանս, միայն թէ հոն ինքն իւր պատկերը տեսնելով չ'զարհուրի։ Օտարականը ամբողջ քառորդ մը ժամ նշանացի չարժուեցաւ, և անիմանալի խօսքեր ընելէն վերջը, Օրլեանի դքսին պատկերը՝ իրեն այն տաճն հատած զգեստներովն ու բնական մեծութեամբը՝ երևցաւ յանկարծ պատին վրայ թաղ մը գլուխը դրած։ Ս.յս թաղս ո՛չ Գաղղիոյ թաղ էր, ո՛չ Սպանիոյ, ո՛չ Անդղիոյ, ո՛չ ալ կայսերական։ Օրլեանի դուքսը, որ երկու աչօք կը դիտէր զայն, չ'կրցաւ բնաւ անոր ի՞նչ թաղ ըլլալը հասկնալ. երբէք անոր նման թաղ տեսած չունէր։ Ս.յս թաղս ամբողջ գլուխը ծածկած էր։

«Շատ ժամանակ չ'անցաւ, Օրլեանի դուքսը պետութեան խնամակալ անուանեցաւ։»

«Բոլոր այս վերը պատմածներս Բարիզու մէջ պատահեցան, Օրիորդ Աբրիի տունը, 'ի ներկայութեան իրենց ամենէն ներքին մտերմաց, և Օրլեանի դքսին զայն լինէ պատմելուն նախընթաց օրը. այս դէպքս այնքան տարօրինակ երևցաւ, որ յիշատակրոյս մէջ պարտք համարեցայ նշանակել զայն։»

Ս.յս իրողութիւնս, որ խիստ նորանշան պիտի երևի ընթերցողին, և որոյ նման դէպքեր բազում անգամ տեսնուած են, բնականաբար կենդանական մագնիսականութեան ահմանին մէջ կը մտնեն, ոյսինքն մագնիսական

պղեցութեամբ ուղեղին գրգռմանէն յառաջ կուգան. միայն թէ կիւսահմայի անուն հանել ուզող մարդոց սովորաբար գործածած ուրուական պարագայներ ալ միատեղ խառնուած կը գտնուին յայնմ։

ԳԼՈՒԽ ԼԷ·

ԲԱԽՂՈՂ ՈԳԻՔ · — ԴԱՐՁՈՂ ՈՒ ԽՕՍՈՂ ՍԵՂՄՆԱՏԽՏԱԿՔ ·

Ա.յս տեղ կարի՛ դէպ է որ գարձող սեղանաց երեւութին, և բաղխող ոգիներու արուեստին վրայ երկարօրէն խօսիմք · բայց մեք արդէն այս խնդրոյս վրայ հիմնական կերպիւ ճառած ենք մեր նախընթաց երկասիրութեանց մէջ (*) · ուստի այս մասին լուսաւորուելու, այսինքն ճշմարիտը առաջին որոշելու ցանկացող ընթերցողներն կը հրաւիրեմք որ կարդան զայն : Պէտք չ՛է որ ծածկեմք զայն ու ինքզինքնիս խաբեմք : Շարլաթանութիւնը, խաբեբայութիւնը, հարստանալու համար ապօրինաւոր ու անպատիւ միջոցներու կիրառութիւնը թերևս ուրիշ տեղէ աւելի յաճախադէպ են Գաղղիոյ մէջ, վասն զի բարեկեցութեան ծարաւը առաւել զարգացեալ, առաւել ընդհանուր դարձած է անդ : Ինչևիցէ, մեք այս տեղ խիստ հակիրճ համառօտութիւն մը պիտի ընեմք այն իրաց, զորոց խիստ հետաքրքրաշարժ պարագայիւք ընդարձակօրէն ճառած ենք Մ՛ֆինոսիանոսընեան գպրանեաց մէջ :

(*) Գաղանիք Քնոյ և Մագնիսականութեան :

Յայտնի է ամենուն որ բաղխող ոգւոց նորելուկն՝ վեց տարի կայ՝ Ա.մերիկայէն Գաղղիա եկաւ · իսկ այս տեսակ մը աւելորդապաշտութիւնն բանեցնելով շահ հանելու դաղափարը առաջին անգամ յղացողն է Տիկին Ֆօքս : Սա որբևայրի ըլլալով, և երկու հատ խիստ հանճարեղ աղջիկ ունենալով, մին տասնեւհինգ և միւսը տասնեւօթին տարեկան, քանի մը ամսուան մէջ դէպ-է (1), այսինքն ոգիներուն և մարդոց միջաեղ միջնորդ ըլլալու համար՝ ինչ որ պէտք էր ընել՝ սովրեցուց անոնց : Ա.րդարև այս դեռահասակ աղջկունքս ինքնակոչ ոգիները բաղխել տալու մասին զարմանալի յարմարութիւն մը ցոյց տուին, ինչպէս որ Ռօսթերթ Չուտէնի տղայն անդրտեսութեան (2) շատ աւելի գժուար, և մանաւանդ աւելի զուարճալի արհեստը սովրելու մասին ցոյց տուել էր : Համբաւը, որ ամենախօսը իրերը կը մեծցնէ, Հիւսիսային և Հարաւային Ա.մերիկայի Ֆօքս օրիորդաց գործած հրաշից դրուցիլը թնդացուց, և շատ չ՛անցաւ յԵւրոպա բերաւ նոցա անունը :

Նորութիւնը այնպիսի զօրաւոր հրապոյր մը կ՛ազդէ Գաղղիացւոց, որ առանց որ և է խորհրդածութիւն ընելու՝ ամենէն այլանդակ անհեթեթութեանց իրականութեանն ալ հաւատալ կուտայ անոնց : Բաղխող ոգւոց և դարձող սեղանաց նորելուկն Գաղղիոյ մէջ ներմու-

(1) Medium · (2) Seconde vue ·

ծուելուն պէս, իւրաքանչիւր ոք իւր սեղանը դարձընել և խօսեցնել ուղեց։ Կարևոր դործերն երեսի վրայ կը մնային . . . ։ Ա՛լ ամեն գիրար սեանողն սա բառերը կըսէր դիմացինին . . Սէր ղանդ ի՞նչ ըսաւ քեզ . . . . . Ա՛լ տենդ մը, ղառանցանք մը դարձաւ այն . այլևս ուրիշ բանի վրայ չէին մտածեր , բայց եթէ ոդիներուս ու սեղաններուս վրայ . . . . Ակսեալ այն մեծ ատուներէն , որ իւր բարեկամքին կը հրաւիրեր ոսկեզօծ սեղանատախտակի մը շուրջը ձեռք ձեռքի տուած բոլորելու , մինչև աղքատ հնակարկատան , որ իւր աղտոտ իզոտ սեղանոյն մէջ բնակող ոդին հարցաքննելու համար աչխատութիւնը կը գադրեցնէր , մեծ ու պզտիկ ամեն մարդ ոբպեղհմայութեան կուռքին . այսպէս է ահա բարեզգաց բնաւորութիւնը (*) ։

Սեղանոյ վարձոյն պարապողներէն շատերուն մէջ դանուեցան ևս երևակայութեան տէր և բնական դիտութեանց խիստ դոյդն ծանօթութիւն ունեցող էպիկուրոսեր , որք սեղաններու չարժման ֆիզիկական պատճառին չկրնալով խելամուտ ըլլալ , ոդիներուն , մեռելոց հոդիներուն ընծայեցին զայն . . . . ։ Ա՛յն վայրկենէն սկսեալ՝ ոդիք , ուրուականք յօդնութիւն կարդացուեցան , և իրենց ուղղուած հարցմանց

(*) Տես այս մասին Գաղղիացւոց մէջ առաջին թատրոններէն մինչև մեր օրերը նորելուկ պալորութեանց և զարդարանաց վրայ մեր յօրինած երկասիրութիւնը ։

պատասխանելու համար աշտանակաբարձի մը, սեղանոյ մը, սեղանոյ մը, և այլ որ և է կարասւոյ մը մէջ մտնելու սահպուեցան . մինչև անդամ անանց ձեռքը գրիչ մը կամ մատիտ մը և թուղթ տալով կրնար պահանջել մարդ՝ որ իրենց , ինչպէս նաև իրենց ապրած ժամանակին պատմութիւնն գրեն ։ Մարդ կը հարցնէ իւրովի՝ թէ արդեօք տրապեզամիլք լո՞ւրջ մտօք , թէ չէ զուարճաբանութեան համար այսպիսի առասպելներ կը գրեն ։

Ուրիշ փարձողք ալ վառարանին մօտ նստած տեղերնին՝ ոգւոց հետ խօսելու համար իրենց կրակարանի թիակին կամ ունելեաց մէջ բնակեցուցին զանոնք , ոմանք ալ իրենց գիշերուան սեղանատախտակաց մէջ ։ Ա՛յս առասպելներս ամենայն վստահութեամբ պատմուելով՝ բանավարութեան ամեն հաշիւներն ալ այնպէս չփոթեցին ու տակնուվրայ բրին , մինչ դի ասոնց հաւատացողաց կուսակցութենէն եղողներուն շատին ուղեղը ցնորեցաւ ։

Հուսկ ուրեմն՝ երկու մեծանուն դիտնականք , Ֆարատէյ և Ա՛նդ դիա , և Պապինէ՛ի Գաղղիա դիմեցին շատին ձեռնածութիւնքն երևան հանելու , և իրողութիւնն չուրջը յարմարցուած դերբնական դրուագներէն մերկացնելու համար դրիչ ձեռք առին ։ Դժբաղդաբար այս երկու դիտնականներս , նախապաշարմունքն ի հիմանց քանդել հանելու մասին ունեցած եռանդնէն՝ խնդրոյն միմիայն բնագիտական կողմը աչաց առ-

ջեւ բերին, իսկ մարդկային կազմագիտութեան ըսել կուզեմ համաց զօրութեամբ կենսական կամ ջղային հոսանուտին արտաթօրման վերաբերեալ մասը մոռացան։

Ցարատէյ, մեր դարուն անուանի բնագէտը, բաղմաթիւ փորձեր ըրաւ՝ ցուցնելու համար թէ՝ մատանց սեղանոյն մակերեւութին հպիլը հարկաւոր պայման մ'էր՝ զանոնք չարժել տալու համար։ Մատանց հպումը անդամ մը հաստատուելէ ետև, բաղկաց ջղային և դնդևրային դրդմանէն (1) երթալով այնքան զօրութիւն կ'ըստանան որ կրնան սեղանոյն չարժումն ազդել։ Իսկ մատնային հպման փորձն կրնայ ըլլալ՝ սեղանոյն վրայ փենճեկարդ քարի (2) փոչի ցանելով։ Այս փոշին մատանց սեղանատախտակը չօշափելը անկարելի ընելով՝ կը տեսնես որ սեղանը բնաւ տեղէն չչարժիր, և մատանց տախտակին վրայէն սահելով թողուցած հետքերն կերևան։ Այս ամենս կատարելապէս ճիշդ է. բայց մատանց հպումն և դնդևմունքն այս երևութիս կատարեալ մեկնութիւն մը չ'են կրնար տալ։

Պ. Պապինէ, գերազանց բաղմահմուտն և Գաղղիոյ ուսումնական փառքերէն մին, սեղանոց երևոյթը նորէն և անլծուելիք չարժմամբ բացատրել ուզեց. իր տեսութիւնը թէև մի մասամբ ճիշդ, միւս մասամբ պակասաւոր է, քանի թէ ջղային կամ կենսական երևոյթը, որ գլխաւոր դեր կը խաղայ այս գործոյս մէջ, յիշելու կը մնայ։

1). Սեղանք՝ չղթայ կազմող բաղմաթիւ անձանց մատանց հպման մրբը միայն չարժիլ կ'սկսին։

2). Միայն կամքը կրնայ չարժիչ համարուիլ. թէ չէ սեղանոյ ազդուած չարժման մէջ օժանդակին պաշտօն միայն կը վարէ։

3). Սեղանը ոտքերուին հարուած կուտայ. կը կանգնի. իրեն տրուած հրամանները կը կատարէ. իրեն ուղղեալ հարցմանց կը պատասխանէ, և իր պատասխաններն եղած հարցմանց կը համապատասխանե՞ն։

4). Սեղանոց չարժմունքն և հրաշալի պատասխաններ ըսուածներն, զոր կուտան, հոգւոյ մը, ոգւոյ մը, կոչուած ատտանայի մը, զօրութեա՞նը ընծայելի են։

Այս առաջարկութեանցս պատասխանը մեր Գաղղիոյ Մաքնէսիոնէն անուն աշխատասիրութեան մէջ գտնուելուն, ընթերցողն հոն կուզարկեմք։

Տրոթեհմայնէնը կամ սեղանոց միջոցաւ ըղձութիւնը, սեղանատախտակի մը օդնութեամբ ծածկեալ իրաց, աչխարհի զանազան մատանց մէջ անցեալ, ներկայ, և ապառնի դիպուածոց ծանօթութիւնը աւելորդապաշտութիւնեմ է՝ որ դիտութեան դարերէն նորոգուած, յորս ամէն տեսակ առարկայ կիւսահմայի մը ձեռացը մէջ ըղձութեան միջոց կը դառնար։ Այս ձեռնածութիւններէս, որք այնքան յաղնաթիւ էին ժամա-

(1) Trepidations. (2) Էվրէն փոխ. Գլ. Talc.

նակաւ, այսօր միայն թուղթ բացողներն ու բաղդատացներն սկսած են։ Իսկ ոգւոց, հոգւոց, և դիւաց գալով, որք դիւահոչման մը ամենակարող զօրութեամբն բնակած անծանօթ տեղերնին թողլով՝ կուգան մեր տեղաններուն, կահ ու կազմածներուն, խոհանոցի գործիքներուն ալլն. մէջ կը մտնեն, գոներնիս կը բաղխեն, և պատուհանաց ապակիներն կը կոտրեն. իրենց պատգամներն յուշարէն, լսելիներէն, չինեներէն, գաղղիարէն ալլն. լեզուօք կը յաւնեն. վասն զի բազմալեզու ալ են, ևս խիստ կամահաճ և խիստ դիւրագրգիռ, ամենապարզ ուղիղ պատուհասիւնը երկար աւուն կայ որ ճանչցուցած է այս առասպելաբանութեանս արժէքը, որով մեր նախնիքը ինքզինքնին կ'օրօրէին։ Իսկ այն անկեղծ մարդոց նկատմամբ, որք ոգիներն չիրաւի տեսած և հետերնին խօսած եմ կըսեն, մեր կարծիքն այն է որ՝ խաբէութեան մը զոհ եղած ըլլալու են, և կամ վայրկենական կերպիւ իրենց տարտապարման դիւրահաւանութեան աղդեցութեան ներքև հետզհետէ տուարացող զգայարանաց մը ներքև կը դտնուին։ Ա.պաքէն խուճապոյ, վարդապային քաղից, կախարդալլն. առասպելք ամեն ձմեռ գիւղացւոց գիշերային հսկմանց աւուն կրկնուելով կրկնուելով, վերջապէս տկարամտաց երևակայութիւնը կը պաշարեն, ինչպէս որ քաղաքաց մէջ ալ խօսող տեղաններն կրնեն, և այսպէս պարզամիտ կամ դիւրավախ մարդոց մտացը մէջ այս առ-

րէն կարդի հրաշալեաց հաւատքը կը տպաւորուի։ Ա.սկից կը ծագին այն ամենատխոր չուկէ մը զգացուած երկիւղներն, խօլ սարսափներն, այն քնոյ մէջ տեսնուած ահռելի մղձաւանջներն, այն չղացին հիւանդութիւններն՝ մանաւանդ կանանց մէջ, և երբեմն ալ մտաւորական կարողութեանց խանգարումն։

Ա.պաքէն ոգիներու խնդրոյն վրայ չ'արժեր որ աւելի երկար խօսիմք այս տեղ. սակայն այս մասին համառօտ պատմութիւն մ'ալ յիշեմք։ Տես ի՞նչ պատահել է՝ անցեալներս այս ակումբներուս միոյն մէջ։

Լայն թերթի մը թղթով ծածկեալ սեղանոյ մը վրայ դրուած դարակի մը առքին՝ մատիտ մը յարմարցուած ըլլալով, երկու սեղանաշարժիչք ձեռքերնին յիշեալ դարակին վրայ դրին, որ շատ չ'անցաւ շարժիլ սկսաւ, և գժուարաւ անընթեռնլի տառեր գծեց։ Հանդիսատեսաց միոն, որ երկար ժամանակէ ի վեր սեղանոց չարժման գործնական հետազօտութեանն կը պարապէր, դարակին գիր գրել տուողներուն ըրածը պարզ խաբեբայութիւն մը ըլլալը նշմարելով՝ ըսաւ իրենց։

— Պարոննե՛ր. չ'մտածեցի՛ք որ միայն մէկերնիդ աւելի լաւ կրնար գործել, քան թէ երկուքնիդ միասին։ Եթէ դարակիդ այդքան գէշ գիր կը գրէ, խիստ հաւանականաբար անոր համար է որ՝ սեղանոյն վերի կողմը կեցող պարոնը գեղագիր չէ, այնպէս որ դարակը մէկեր-

նիդ շղագրոյ, մէկերնիդ ալ բոլորագրոյ համեմատ վարելով՝ բնականաբար ձեր գրութեան ընդհանուր հակառակ և խառնաչփոթ կը նկատէք. անկէց է որ դարակին գրած գրերը այնքան տաճև են: Ես գրաւ կը դնեմ, պարտնէք, որ եթէ ձեր երկուքէն մին ձգել, թաչուելու ըլլայ, և իւր արհեստակիցը մինակ թողու որ գործէ, դարակը շատ աւելի դիւրութեամբ պիտի գրէ:»

Երկու սեղանաշարժիչք այս հեղնական աղդարարութիւնս լսելով՝ փոխանակ խնդալու բարկացան, և պնդեցին թէ՝ երկու հոգւոյ աշակցութիւնն անհրաժեշտ էր սկսին բանտարկելու համար:

Ցամառ հանդիսատեսը գործնական փորձով ցուցուց երկու շարժիչներուն՝ որ ալ անճահ էր շարունակել խաղ մը, որոյ գաղտնիքն դըտնուել էր. ուստի ինքն անձամբ ձեռքերը դարնկին վրայ դնելով՝ նախ դառնալ, և տառեր, հաքն ալ այնքան ուղիղ կերպիւ դրուած բառերը գրել տալու անոր, որ դեղագրութեան դասատուն եթէ տեսնէր՝ պիտի նախանձէր. ապա ակմբին մէջ դտնուող հանդիսականաց դառնալով, տալէս խօսեցաւ.

«Պարոնա՛յք. գիս որ կը տեսնէք, դարձող, խօսող և գրող սեղանոյ ջնրմ սիրահար մ՛եմ. այժմ իմ գործելու եղանակս տեսաք, որ չինէ յառաջ գործողաց՝ ի կէր արիած եղանակին չափ դիւրին, և կրնամ ըսել անկից շատ աւելի բնական է: Բայց ես գործող սեղանոյ երեւոյթին

մէջ որ և է ոգւոյ ներկայութիւնն կամ ազդեցութիւնը գտնուիլը կը մերժեմ. դի այս երեւոյթս բոլորովին բնագիտական է: Ես ո՛չ սատանային, ո՛չ կիւտահմայից, ո՛չ կախարդաց, և ո՛չ իսկ ճիւաղներու կը հաւատամ:

«Կրկին կըսեմ թէ՝ մատանոյ միջոցաւ սեղանոյ մը, կամ որ և է անշարժ մարմնոյ մը հաղորդուած չարժման մէջ՝ միմիայն խիստ բնական երեւոյթ մը կը տեսնեմ, և զայն բացատրելու համար բնաւ որ և է ոգւոյ միջնորդութեանը պէտք չ՛ունիմ: Սրդ. սա հարցումը կընեմ տրապեզամոլաց, որք կը պնդեն թէ չարժման միակ պատճառ ոգիներն են, և կը կանան որ մեզ ալ այնպէս հաւատացնել տան.

«Թէպէտ մարդ ոգիներն կրնայ կոչել, և որ և է դարանի մը մէջ բանտարկել ընել. եթէ ստոյգ է որ՝ սեղանոյ մը ոտքը բացխել տալով, կամ գիր գրել տալով անոր, մեր հարցմանց կը պատասխանեն, ներելի է ինձ հաւատալ թէ կրնան ևս խօսիլ:

— «Ոգին չ՛խօսիր» կը պատասխանէք.

— «Ո՞վ ըսաւ թէ ոգին չ՛խօսիր:

— «Ոգի ըսածդ աչօք չ՛տեսնուիր կը յարէք. բայց դգալի արդեամբք իւր ներկայութիւնը կրնայ յայտնել:

— Շատ բարի. այս տեղ այս արդիւնքը խիստ դգալի է, որովհետեւ սեղանը ոտքը վեր կը վերցնէ: Բայց ի՞նչպէս կըլլայ որ ոգին սեղանոյն ոտքը վեր վերցնել կաւտայ. մինթէ թե-

ւերո՞վը, ուսերո՞վը, չնչո՞վը կընէ այս բանս։ Կը խնդա՛ք, արդարև զարմանալի բան է, բայց խընդալը պատասխանել չէ։ Եթէ սեղաննիդ ոտքը վէր կը վերցնէ, թէ մատերնուդ ճնշմանքն ըլլայ, թէ՛ ձեր կամքէն բղխող չզային ղօրութեան մը ցայտմանքն, ասի չատ դիւրին է ըմբռնել։ Բայց դուք կը ժխտէք թէ մատերնիդ և կամքերնիդ ըլլան յիշեալ չարժման պատճառն, և ոգւոյ մը կը վերագրէք զայն։ Ա.յդ այդպէս ըլլալով՝ նախ կըսեմ ձեզ. Մէկէն դո՛ք ժողովեցէք. քանզի անօգուտ են. անկէց վերջը սա ևս ինձ հետ ընդունել տալ կուտամ ձեզ, թէ ոդին սեղանոյն ոտքը վեր առնելու համար անպատճառ հարկ է որ և է ղօրութիւն մը, այժ մը դործածէ։ Ա.րդ՝ դիցուք թէ այդ այժը չամանդայրական չունչ մը խակ ըլլայ, պէտք է որ ոդին չընչելու մարմնեղէն գործարան մը ունենայ. և եթէ ընչելու գործարան ունի, խօսելու գործարան ինչո՞ւ չ'ունենայ. . . ։ Դուք այս մասին չինէք ասելի բան չ'էք դիտեր. վասն զի անկարելի ըլլալով ձեզ ոդի տեսնել, կամ ձայնը լսել, ի՞նչ ունի կամ ի՞նչ չ'ունի չէք կրնար դիտնալ։ Խընդացէ՛ք, դարձեալ խնդացէ՛ք, և իրաւունք ունիք եթէ ձեր բաղխող, դրագիր, ոռնացող, երաժիշտ, դղրդող կլլն. ոգւոյ ծիծաղելի խեղկատակութեան հաւատացողաց վրայ կը խնդաք...

«Ա.րդարև՝ յաւնական առասպելք նուազ անհեթեթ են քան թէ այս մեր կարասեաց մէջ բնակող ոգւոյ պատմութիւնքն, և նախնիք հա-

րիւր անդամ աւելի իրաւունք ունին ձեր վրայ ծիծաղելու, պարոն Տրապեղամոլք, քան թէ դուք անոնց վրայ։»

Բայց ամեն նորելուկ ժամանակ մը միայն կը տևէ. ամեն խաբեբայութիւն վերջը վերջը երևան կելնէ։ Ա.յսպէս բաղխող ոգւոց ցնորական կատակերգութեան վախճանն ալ տեղի ունեցաւ Գազղիոյ Գիտութեանց Կառատին (1) համախմբեալ անդամոց առջև, ի մեծ ափշութիւն Հաւատացելոց։ Ա.յս հետաքրքրական նըստիս պատմութիւնը տես Մ՚ֆինհաֆնոմիան Գազդնոց մէջ։

Վերջացնելէ սա խորհրդածութիւնն ընելով. — Ա.յն կշտամբանքն, զորս անբաւական մտաց տէր անձինք չեն դադրիր Գազղիական Կառատին դիտնականաց ընելէ՝ թէ ինչ նոր բան ըլլայ՝ թէնամի կելլեն անոր, ինքնիրեն կը ցրի։ Ա.յս մեծահռչակ ընկերութիւնս ընդհակառակն յօժարափոյթ կը գտնարի՝ ամեն անդամ որ կարևոր և հետաքրքրական նիւթոյ մը վրայ խնդիր ըլլայ։ Բայց բոլոր հրաշից և սքանչելեաց հերիւնակը առ հասարակ Գիտութեանց ճեմարանին քննութենէն կը վախնան, ինչպէս եռացեալ ջուր խարշատեալ կատուն տաք չրէն կը վախնայ, և եթէ երբեմն այս երաշտաւանութենէս մին անոր սեմէն ներս մտնելով ունկնդրութիւն մը ստանալու ալ ըլլայ, ամեն անդամ ակնկոր և յուսաբեկ դուրս կելնէ անկից։

(1) Institut.

ԳԼՈՒԽ ԼԸ.

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ ՍՈՒՀԱՍՍԱՐԱԿ

Ներկայ երկասիրութիւնս անուս որերոյն համար գրուած ըլլալով, որպէս զի թէ հետաքրքրութիւնքն գոհացնէ, և թէ հրահանգիչ ղբօսանք մը առնէ իրենց, նորա վերջին երեսներն ամենէն աւելի ծանօթ եղած Ելեկտրական երեւութից համառօտ բացատրութեանն ուղեկցինք նուիրել: Մի քանի ընթերցողք զարմացմամբ տեսանելով թէ ինչ համամատութեան, վայրկենականութեան վերաբերութիւնք կան բուն իսկ Ելեկտրականութիւն ըսուածին (1) ընծայեալ ինչ ինչ երեւութից, և Ելեկտրօ-համակրութիւն (2) ըսուած այն տարօրինակ կարողութենէն յառաջ եկած երեւութից մէջ, զորմէ Մաքնիսականութեան գաղտնիոց մէջ խօսեցանք, այն ընթերցողներն, կըսեմ, թերեւս դանեն ու՝ի վեր հանեն այն խորհրդաւոր չղթային, որոյ մէն մի օղակն մէկ մէկ էակի կեանք կը ներկայացնէ. անհո՜ւն չղթայ ուր ամեն կեանքեր իրարու կը դիպին, և որոց իւրաքանչիւրն աստիճանաբար մէկզմէկու առարակարգեալ են գոգցես:

(1) Electricité proprementdite (2) Electro-sympatisme.

Ելեկտրականութիւնը, որոյ աղբիւրն անծանօթ է, լուսոյ և ջերմութեան երեւոյթներուն կը յայտնուի մարդոյս: Իր դանուելու օրէն ընկըճեալ բաղում տեսակ վարդապետութիւնք առաջարկուեցան իւր նորանշան և զարմանահրաշ զօրութիւնքն բացատրելու համար. ասոնցմէ Ֆըրանքլինի վարդապետութիւնն, իւր պարզութեանը չափ ալ ճարտարապետուած ըլլալով, երկար տեսն իմաստասոց ամենամեծ մասին հաւանութիւնն դրաւեց. բայց այսօր գրեթէ առ հասարակ մէկդի թողուած, և Ամմըրի այլօրինակ ձևափոխեալ ենթադրութիւնն ընդունուած է:

Այս վերջին վարդապետութեանս նայելով՝ ամեն մարմին ալ առաւել կամ նուազ ասաքանաչափ մասնաւոր հոսանուտ մը կը պարունակէ, որ բնական կամ չեզոք հոսանուտ կըսուի, և որոյ երկրագունտս ընդունարանն է: Բնական հոսանուտը, որ ուրիշ բան չէ, բայց եթէ մին դրական կամ ապակայինն, և միւսը ժխտական կամ խեժայինն ըսուած երկու հոսանուտից համազուգութիւնն, ինքնիրեն բնաւ ազդեցութիւն մը չ'ունի: Բայց երկու հոսանուտներէն մին միւսէն բաժնուելուն պէս՝ Ելեկտրական երեւոյթք յերեւան կ'ելնեն:

Ելեկտրականութիւնը դանազան եղանակաւ, այսինքն է չփմամբ, ճնշմամբ, ջերմութեամբ, և հպմամբ յառաջ կուգայ կամ դդալի կըլլայ մարմնոց մէջ:

Չփմամբ, — Ապակեայ ցպոյ մը, կամ մեղ-

բամամէ հաստ դաւաղանի մը խիստ դժալի ելեք-
տրական յատկութիւններ հաղորդելու համար՝
բաւական է որ քիչ մը ժամանակ չփես զանոնք։
Ամպակեայ ցուպը՝ դորշագոյն թղթէ խիտով մը
շփուելով՝ մութ տեղը աղօտ լոյս մը կը ցուցնէ.
և թէեր մատդ ծայրին դպցնելու ըլլաս, կրնաս
փոքրիկ կայծեր ցայտել տալ անկից. մեղրա-
մոմէ դաւաղանը աւելի դժուարաւթող կուտայ
որ կայծ ցայտէ. բայց թէեր երեսիդ մօտեցնես
զայն, սարդի ոստայնի մը հպուելն ինչ զգացուելի
որ կը պատճառէ, ճիշդ նոյնպիսի զգացուելի մը
յառաջ կը բերէ։ Սաթը (1), յունարէն էլէկտրոն,
ուստի եղած է ելեքտրականութիւն բառը, ա-
պակին, մեղրամոմը, մոխրաձիգը (2) և շատ մը
ուրիշ մարմիններ նախ և յառաջ լաւ մը չփուելէ
ետև՝ թեթև մարմիններն իրենց կը քաշեն, և
իրենց ելեքտրականութիւնը անոնց հաղորդելէ
ետև՝ յետս կը մղեն զանոնք. սա օրինաց ուժովը
թէ համատեսակ ելեքտրականութիւնք զիրար
կը վանեն, մինչդեռ հակատեսակք զիրար կը
ձգեն։ Եթէ ան երեք արկեալ մարմնոյն ի՞նչ տե-
սակ ելեքտրականութիւն ստացած ըլլալը որո-
շելու համար՝ զայն ուրիշ մարմնոյ մը մօտեցը-
նելու է, որում կանխաւ ծանօթ ելեքտրակա-
նութիւն մը հաղորդուած ըլլայ։ Եփուն սա
մանաւորութիւնն կը ներկայացնէ որ՝ երկու
մարմնոց մին դրականապէս կ'ելեքտրականայ,

(1) Բէհրիպար։ (2) Tourmaline.

միւսը ժխտականապէս։ Ասոր օրինակը հասա-
րակ ելեքտրական մեքենային վրայ կը տեսնուի.
պնակը (1) դրական, իսկ բարձիկներն բացասա-
կան կը դառնան։

Ճնշմամբ։ — Մետաղի սկաւառակ մը խէժով
օծուած անդուսի մը դէմ ճնշուելով, և ապա
զատուցչաւ (2) մը վերառնուելով ելեքտրական
նշաններ ցոյց կուտայ։ Այլևայլ հանքածոյք,
ինչպէս ապագինը, դիտն, Գ--ոյնը (3), տ-ոնը (4),
և այլ ասոնց նման քարային նիւթեր մատանց
մէջ ճնշուելով միևնոյն երևոյթները ցոյց կուտան։

Ջերմութեամբ։ — Շատ մը հանքային նիւթեր,
մանաւանդ մոխրաձիգը և մի քանի յակինթ-
ներ (5) թեթև կերպիւ տաքցուելէ ետև ելեք-
տրական զօրութիւն կստանան։

Հպմամբ։ — Մին միւսին դէմ դրուած երկու մե-
տաղներ ելեքտրական յատկութիւնք կ'ստանան։
Ասոնց այս սկզբանս վրայ շինուած է Վոլդայեան
տանդը։ Մետաղներէն մին ապակային հաստա-
նուտ, իսկ միւսը խէժային հաստանուտ կ'տա-
տադրէ։ Առաջին պղինձ տարրով վերջացած ծայ-
րը ժխտական բևեռ, իսկ դինով վերջացած միւս
ծայրը դրական բևեռ կըսուի։

Վոլդայեան տանդերն դիտութեանց համար
խիստ բարձր կարևորութիւն ունեցող խել մը
փորձեր ընելու կը դործածուին, ինչպէս մինչև

(1) Plateau. (2) Isoloir. (3) Կէվէրէյ։ (4) Չաճարի
չիւպպաթիյէ։ (5) Սարը կագութ։

այն առեն պարզ մարմին համարուած նիւթոց տարբաղադրութիւնն, ամենէն աւելի կրակի դիմացող մետաղաց հրաշէկ սպիտականութիւնն ու լուծուելն, և մինչև իսկ գոլորշիացումն ալ։

Բնութեան մէջ գտնուած համօրէն մարմինները առ հասարակ երկու տեսակի կը բաժնեն բնագէտք, այն է լաւ հաղորդիչք և դէշ հաղորդիչք ելեքտրականութեան։ Առաջին դասէն են բոլոր մետաղները, թաց փայտը, բուսական ածուխն, ջուրն, և մանաւանդ թթուաշ ջուրը, կենդանի անասնոց մարմինը ալն։ Երկրորդ դասուն մէջ առաջին կարգը կը համարուին խիժերն ու ապակային մարմիններն, ետքը կուգան մետաքսը, բուրդը, ճարպերն, ալն։ Կրնայ ըսուիլ որ բացարձակապէս չհաղորդող մարմին ամենևին չգտնուիր. զորօրինակ՝ չոր օդը, որ իրը դէշ հաղորդող ճանչցուած է, երբ խոնաւութեամբ լցուի, շատ լաւ հաղորդիչ կը դառնայ։

Երբ ելեքտրական սասեակ ցնցումներ միանգամայն յառաջ բերել ուզեն, շատ մը Լէյտեան շիշերէ բազկացեալ գործիք մը կը գործածեն, որ ելեքտրական հոսքից կրսուի. այն կայծը, որ որոտալին պայթելով յիշեցալ մարդկոցին կը ցոլայտ, թռչուններն ու փոքրիկ կենդանիները կ'սպանանէ. անկից զօրաւորագոյն մարտկոցի ցնցումն կրնայ մարդս իսկ չանթահարել։

Վերոյդրեալ ելեքտրական այլևայլ գործեաց, և մի քանի այլոց ևս միջոցաւ խել մը հետաքրքրական փորձեր կ'ըլլուին. ելեքտրական կաքաւն ու զանգակահնչիւնն, չուառչիւն աղիւսը, ելեքտրական եղէգն ու կանթեղն, փիլիսոփայական հաւկիթը, մետաղաց այլևայլ գունով դեղեցիկ բոցեր արձակելով այրիլ, որոտալին ճայթմունք, ալն։ Սա ալ դիտելիք որ խանժի հասարակով կամ բիւրեղեայ սկաւառակաւ մը կզգիացեալ մարդ մը՝ կրնայ ելեքտրականութեամբ լցուիլ մինչ հասարակ մեքենայութիւնը ըլլայ, մինչ լաւ չորցուած կաղամի մոմիոյ մը կրկին և կրկին ընդհարմամբ։ Թէպէտ մեզմով այն անձին մարմնոյն դպցնելու ըլլաս, կը տեսնես որ պզտիկ կայծեր կելնեն ճարճատմամբ, և մինչև ցնցուիլ մ'ալ կիմանաս։ Սոյս այլևայլ փորձերս գուարճական բնագիտութեան սահմանին մէջ ընկած են այսօր, որ յաջողութեամբ կը դործածէ զայն իրը դաստեցուցիչ հնարք։

Սկզբն հիանալի արագութիւնն, որով ելեքտրական հոսանուտն աստ ու անդ կը տարածուի, բազմաթիւ փորձերով ապացուցուած է. հարիւր հոգի իրարու ձեռք ձեռքի տուած ամենքն ալ միևնոյն վայրկենին ելեքտրական ցնցումն կ'զգան, և շղթային յետին ծայրը գտնուողն ու առաջին ծայրը գտնուողն միանգամայն կը սարսռին։

Ելեքտրական հեռագրութենէն հիանալի գիւտը, որոց միջոցաւ մի քանի երկվայրկեան մէջ կրնայ մարդ աշխարհիս մէկ ծայրէն միւսը թղթակցել, այս մասին որ ևէ խորհրդածութիւնն առնլոյդ կրնէ։

Ս.յսպէս՝ ելեքտրական հոսանքին արագութիւնն միմիայն լուսոյն արագութեանը հետ կըրնայ բաղդատուիլ։

Տախտակն(1) շատ մը տեսակներ, էլեկտր (2), քառոտանը (3), և մանաւանդ լերկաձուկը (4), ելեքտրական յատկութիւններ ունին, զորս թէ իրը յարձակողական և թէ իրը պաշտպանողական զէնք կը դործածեն։

Լերկաձուկը, որ տեսակ մը օձաձուկն է հինգ վեց ոտնաչափ երկայնութեամբ, ձի մը ընդարմացնելու և յերկիր կործանելու չափ զօրաւոր քառատուն յիսուն ցնցման հարուած կրնայ արձակել։ Պ. Հումպոլտ ամբողջ օր մը կրեց լերկաձկան մը պատճառած ցնցման ազդեցութիւնն, որոյ վրայ կոխել էր անզգուշութեամբ։ Ս.յս կենդանեացս ներսիդին դտնուած ելեքտրական դործարանը դնդերային հիւսուածք մը բազկացած է, որոյ անջրպետներն թանձրամած նիւթերով լըցուն են։

Ս.յն փոսփորային նշոյլն, զոր ինչ ինչ միջատք և մի քանի բոյսեր կ'արձակեն, թուի թէ ելեքտրական լուսոյն արդիւնք են։ Եւրոպիոյ լուսատճանճը կամ փոսուռային, որոյ արօտաւայրէն դալարեաց վրայ փայլիլը ամեն մարդ տեսած է, իր փոսփորային յատկութիւնն փորին տակի վերջին օղակներէն կ'արտադրէ։ — Հա-

(1) Փխի պալըղը։ (2) Տեսակ մը անոյշ ջրոյ ձուկ։ Silure. (3) Tetradone. (4) Gymnote.

բուային Ս.մերիկայի Ենկեն-էլ-էֆե ըսուած բըզէզը՝ իր միջամարմնոյն (*) երկու կողմը դիշեր առեն կարդալ տալու չափ լոյս տուող երկու փոսփոր ունի։ Հնդիկք այս միջատներէն չատերը տաքերնուն կը փակցնեն, և դիշեր առեն տեղ երթալու միջոցին ջահու տեղ կը դործածեն զայնս։ — Բազում ուրիշ թևաւոր միջատներ ալ նուազ աստիճանաւ մի և նոյն երեւոյթներն կը ներկայացնեն, և ամառուան դաղջ դիշերներն լուսանչյուլ հետքեր կը թողուն մըթնոլորտին մէջ։ — Դարձեալ՝ տարբոյն ինչ ինչ երդանակաց մէջ տեսնուած ծովուն փոսփորականութիւնն միլիոնաւոր լրտաճիներէ յառաջ կուդայ. մանաւորապէս միանանգ ծաձանման առեն, երբ ալիքը կը ծփայ և ինքնիր վրայ կը ծռի, կրնայ հիացական զմայլմամբ դիտել մարդ այն երկար լուսաւոր տողերն, որք արագ արագ իրարու կը յաջորդեն, և բոցանչյուլ վէտերով կուդան ծովափին վրայ կը տարածին։ Ս.յս որդերուն արձակած նշոյլը խաչորացուցիչ դիտուելով՝ այնպէս երևցել է թէ՝ մարմիննուն ամեն կողմէն ցայտող անթիւ մանր կայծերու միաւորութենէն յառաջ կուդայ։ Նմանապէս փուտած փայտին և նեխեալ գործարանաւոր նիւթոց փոսփորականութիւնն ալ նմանօրինակ մանրացուցական միջատաց ներկայութեան կուտան։ — Շատ մը բոյսեր ալ ելեքտրական լուսոյ երևոյթներ

(*) Lorselet.

կ'ընծայեն. ինչպէս փոսփորացնցուղ Պէ-ը և ձիթենւոյ վրայի կոճակը (1), որ անոր ճմլման առաջին դիչերները կը փայլփլի: Նոյնպէս Հընդկակոտիճի (2) ծաղիկը երբեմն երեկոյին տըժդոյն նշուլիւ մը կը շրջապատի. վաղանցո՛ւկ ճաճանչապատակ, որ օդոյն ամենափոքր շարժմամբն կամ երբ մարդ մօտը երթալու ըլլայ, նոյնհետայն կը ցրի:

ՄԹՆՈԼՈՐՏԱՑԻՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ելեկտրական մեքենային հնարուելէն առաջ ելեկտրականութիւնը՝ անկէց յայտած կայծը կայծակին հետ բաղդատուելով. նմանութիւնն արդարև ակնյայտնի էր. միայն հանճարոյ աչեր մէկը կուզէր որ այս երկուքին մի և նոյն բանը ըլլալն ապացուցանէ: Փրանքլին առաջինն եղաւ՝ որ թըռուցիկով ելեկտրականութիւնը ամպրոպոյ մէջ երթալ փնտռելու յանդուգն գաղափարը յղացաւ, և իւր փորձը յաջող եղաւ: Ըստ Բօմաս Վաղդիոյ մէջ այս փորձս կրկնեց, և փոխարկի մը առեն իննէն մինչև տասն ոտք երկայնութեամբ կրակի ցայտումնք յառաջ բերաւ՝ ատրճանակի մը պայթման նման բոմբիւնով մը ընկերացեալ:

Փոխարկաձիւ ամպերն այլ և այլ կերպիւ ելէքտրացեալ են. ոմանք խժային ելէքտրա-

(1) Գ.անիգուն. ազատ մանթարը: (2) Capucine. Ինա Քերե օֆուսը:

կանութիւն կը պարունակեն, ոմանք ապակեային, այնպիսիք ևս կան, որ երկու հոսանուտ միատեղ ունենալով ներսերնին՝ չեզոք վիճակի մէջ կը կենան: Թէսր մէկը մըրկի մը առեն դիպադիպ ամպոյ մէջ տեղի ունեցած խթարու հակառակ շարժումներն դիտելու ըլլայ, խթաւոր կրնայ ենթադրել թէ՝ միմիայն հոդմերն չեն անոնց շարժիչները, և թէ ելէքտրական ձգումներն ու վանումներն մեծ դեր կը խաղան այն արագավազ տեղափոխութեանց մէջ: Ահա սովորաբար այս ընդհանուր յուզմանս միջոցին է որ՝ փայլատակումն ու որոտումը տեղի կունենան:

Ելէքտրական կայծին ցայտած առեն՝ այն բոլոր դղրդոյն խառերուն մէջ, ուր չանթը կը փայլակէ, բնական հոսանուտը կը տարբաղադրի, և դարձեալ կը բաղադրուի: Այդ փայլակները կրնամք երեք տարբեր տեսակներու բաժնել. առաջին անոնք, որ լուսավառ, արագաթռիչ, դիկզակի ձևով են, և միևնոյն վայրկենի մէջ բազմաթիւ փարասխ հեռատարածութիւն կը կտրեն և՛ անցնին. ասի բուն իսկ շանթ ըսուածն է, որ հրդեհ և մահ կը բերէ իւր հետ: — Երկրորդ տեսակ փայլակները աւելի լայն միջոց մը կը բռնեն, և առաջնոց օ՛չ արագութիւնն, օ՛չ ալ սաստիկ լոյսն ունին. հապա ամպոց ծխրերն, և երբեմն ամբողջ ամպերն ալիտակադոյն ապօտ նշուլիւ մը կը լուսաւորեն: — Երրորդ տեսակ փայլակներն, որք չատ հազուագէպ են, հրաղնեմի ձևով կ'երևին. յամր յամր կը վառին, և կը-

նայ մարդ աչօք անոնց ընթացքին հետեւիլ։

Ոչոռուն։ —Ասի մերթ յանկարծական պատառում մը, պայթիւն մը, սոսկալի ճայթիւն մ'է. այնպէս որ կարծես թէ երկինքը կամարը զարհուրելի շառաչմամբ կը փլի. մերթ ալ սոսկալի հրբանօթի արձակմունք, ահաւոր բոմբիւնք են, որ արձագանգէ արձագանգ կ'ոստոստեն, անհուն անեզը տարածութեան մէջ կը դլին, և խըլացնող որոտմամբ հեռուները կերթան կը նըւազին. վասն զի լերանց, բլրոց, և այլ դարուվոս տեղեաց պէս՝ ամպերն ալ իրենց արձադանգն ունին։

Իսկ որոտման ձայնը ուրիշ բան չ'է, բայց եթէ դղրդեալ օդոյն թրթռումը, և սապէս կը բացատրուի. երկբարական հոսանուտը մթնոլորտին մէջ տեղէն իրեն ճանապարհն բանալով՝ հարկաւ դատարկութիւն մը կը թողու հետէն, և չրջակայ օդոյ խառնուրդն ալ բուռն կերպիւ այս դատարկութեան մէջ կը վազեն կընկնին, ուսկից յառաջ կուգայ պայթումն. պատռնի մը հանած ձայնը, երբ մէկէն՝ ի մէկ բանալու ըլլաս պէտք, փոքրիկ բայց նմանօրինակ երեւոյթ մը կ'ընծայէ։

Վերը ըսինք որ կայծակը մէկ վայրկենի մէջ բաղում փարոսիկ տարածութիւն ունեցող ամպոյ մէջէն կ'ակօսէ կ'անցնի. որոտման ձայնը անկից շատ աւելի չափ կը տարածէ, այնպէս որ երկար հարիւր քառասուն մեթր միջոցը կրտրել անցնելը մէկ երկվայրկեան կը թշէ. նաև

վայրկեան երկայնութեանը համեմատ՝ ձայնն ալ երկար կը տեւէ։ Ասպէս՝ թէպէտ ամպոյն միայն մէկ կիտէն վրայ և դիտողի մը մօտը փայլակն, այս վերջինս մէկ հարուած մը միայն կը լսէ. իսկ եթէ ընդհակառակն կայծակը հեռու տեղէ պարնէ, և դէպի հեռուն փախի, դոռումը շատ աւելի ետքը ականջի կը հասնի, և այնքան երկվայրկեան կը տեւէ, որքան անգամ փայլակը հարիւր քառասուն մեթր միջոց կտրէ։ Թարձեալ որքան որոտման ձայնը փայլատակման չատ յաջորդէ, կայծակը այնքան աւելի մօտ կ'ընկնի քեզ. ուստի անոնք որ անգամ մը կայծակին փայլիլը կը տեսանեն, ա՛լ վախնալու բան չունին. վասնզի չանթահար եղողներն ո՛չ լսոր կը տեսանեն, ո՛չ ալ ձայնը կը լսեն։

Ետնէն կաղմութիւնը։ Միևնոյն հոսանուտով լցուած երկու ամպեր դիրար կը վանեն. իսկ երբ հակառակ հոսանուտներ պարունակելու ըլլան, դիրար կը քաշեն, և այն տեղն երկբարականութիւնը մէկէն միւսին մէջ կը պարպուի։ Ամպոյ մը երկրին որևէ մէկ կիտէն վրայ ընել կրցած աղեցութիւնը սա է որ՝ մարմնոց երկբարականութիւնը կը տարբաղադրէ՝ իրեն մէջ գտնուած հոսանուտին հակառակ հոսանուտն անոնց երեսը հանելով. եթէ ձկտումն բաւական մեծ է, և հեռաւորութիւնն ալ պատշաճ, կայծը ամպէն կը ցայտէ, և երկիրը կայծակնահար կըլլայ։ Ասյս բանիս ընթերցողն լաւ հասկնալու համան օրինակաւ մը բացատրեմք։

Ենթադրենք որ ապակային էլեքտրականութեամբ լցուած ամպ մը կը սաւառնի բլրոյ մը վրայ. այս ամպս հողոյն բնական էլեքտրականութիւնը պիտի տարբաշադրէ, ապակային հոսանուտը դեռնին դէպի խորերը պիտի վանէ, և խիժային հոսանուտը երեսը հանէ. դարձեալ հողոյն մէջ գտնուած մարմնոց լաւ կամ դէշ հաղորդիչ ըլլալնուն համեմատ՝ կայծակը առաւել կամ նուազ ուշ պիտի մեկնի ամպէն, և իր արդիւնքն աւելի կամ նուազ բուռն պիտի ըլլան: Ապաքէն ամպրոպները տեսնուած են, որք մեռաղային խաւեր պարունակող հողոյ մը վրայէն անցնելու ատեն՝ յանկարծ պայթել են, և կայծակը դեռները ճեղքել ու գնացել մեռաղներն հալեցուցել, և քարերը ապակեցուցել է: Ապա չանթահարիչ արձակմանս ուղիղ ընթացքն (1) անունը տուել են, որ ամենէն վտանգաւորն և ամենէն սոսկալին է, և որոյ արդիւնքն չատ անգամ անհատատալի է: Սակայն կենդանի էակներն ուրիշ կերպիւ մը, այն է ծպտեալ (2) ընդհարմամբ կրնան չանթահար ըլլալ, զգլօրինակ.

Ապոյ մը երկու ծայրերն երկրին մտուցած են. արձակումը ալ կողմի ծայրէն տեղի կունենայ, և ճանապարհորդ մը՝ որ միւս ծայրը դպնուելու ըլլայ՝ առանց կայծակը իրեն գարնելու կ'ընկնի կը մեռնի: Ապատիկ ասոր պատ-

(1) Choc direct. (2) Choc indirect.

ճառը. — Դիտցուք թէ ամպը դրական էլեքտրականութեամբ լցուած ըլլայ, ճանապարհորդին բնական էլեքտրականութիւնը ամպոյն աղդեցութեամբն տարբաշադրուած է. իսկ իր դրական էլեքտրականութիւնն հողոյն խորը մղուելով ժբխտական վիճակի մէջ կը դտնուի: Ապ իրմէ հեռու պատահած փայլատակմանէն անմիջապէս ետքը՝ իր բնական էլեքտրականութիւնը իսկ և իսկ նորէն կը կաղմուի. այսինքն դրական հոսանուտը ոչ ևս ամպոյն աղդեցութեամբն հողոյն մէջ կենալու սոխպուած ըլլալով, ժխտական հոսանուտին միանալու համար նորէն մարմնոյն մէջ կ'անցնի, և այս երկրորդ անգամ բաշադրութիւնս այնքան յանկարծական, այնքան բուռն կերպիւ տեղի կունենայ, որ ճանապարհորդը չանթահար կ'ընկնի՝ առանց բնաւ դիակին վրայ ինչ պատճառաւ մեռած ըլլալուն նշան մը ցուցնուելու:

Ապահաւարակ դիտուած է որ կայծակը մասնաւորապէս դեռնէն վեր բարձրացող մարմնոց կը ջարնէ. լեռները, շէնքերը, ջանգակատուները, մկնկիծները, փառաւոր ատուներն չատ աւելի ատեպ կայծակէ կը ջարնուին, քան թէ ցած և տափայարկ ատուները: Ապատաց բարձրաբերձ ծառերն, սարահարթի մէջ մեկուսի գտնուած ծառերն վտանգաւոր ապատաններ են. ուստի պէտք է առնուազն քան և հինգ մեթր հեռու կենալ անոնցմէ: Հազարաւոր ողբալի իրողութեամբք ապացու-

ուած է որ՝ եթէ կայծակը ծառոյ մը վրայ ընկնելու ըլլայ, անոր ծայրերէն քաշուելով անմիջապէս զայն կը թողու և հոն ապաստանող մարդոյն կը զարնէ, վասն զի անոր մարմինը բոլորէն աւելի լաւ հաղորդիչ է։

Ս. Բդէն այն աւելորդապաշտութիւնն, որով վթարիկը մօտեցած առեն երկնից հուրը՝ ի բաց վանելու համար կոշնակները կախելին զարնել, Գաղղիոյ գաւառաց շատին մէջէն անհետացած է։ Սակայն փափաքելի է որ այն աւանդ և գիւղից մէջ, որ այս աւելորդապաշտութիւնս դեռ կը կենայ, կառավարութիւնը աստիճապէս արգելք ըլլայ, և չթողու որ փորձով որքան վտանգաւոր ըլլալը հաստատուած այսպիսի իրողութիւն մը տակն ունենայ։ Սուր ալաքաձև ծայրից լինչ բանի ծառայելը ալ այսուհետև ստուգուած ըլլալով՝ կրնայ գուշակուիլ որ կայծակը աւելի զանգակատան բրդին վրայ պիտի ընկնի, քան թէ շրջակայ տանց վրայ։ Բրդէն ալ էլէքտրական հեղուկը հարկաւ կոչնակներուն վրայ պիտի անցնի, և զանոնք շարժելու համար գործածուած չուանին վրայէն սահիլ իջնելով կոշնակահարներն պիտի չանհանգարէ։ Հետքն ալ եկեղեցւոյն մէջ մնալով աւելորդ և քանդմունք պիտի գործէ հոն։

Շանթարգել։ — Ս. մեն պահպանողական միջոցներէն լաւագոյնն, ամենաբնական պահպանողականն, բնագիտութեան սովրեցուցած կանոնաց համաձայն կանգնուած շանթարգելն է։ Եթէ

կայծակին աւերմունքէն ղերծ մնալու այս միջոցս ընդհանրապէս միջակ աստիճանի տէր անձանց համար գործածուած չէ, ասոր պատճառը մէկ մը չանհարդելի կատարեալ գործիքի մը սղութիւնն, և անոր պահպանութեանը համար պէտք եղած խնամքներն, մէկ մ՚ալ ասոնց տգիտութիւնն և անոր պահպանողական զգուշութեանը վրայ ունեցած կասկածներն կրնամք համարիլ։ տգիտութիւն մը որ իրենց անձին և ընչից ապահովութեան միանգամայն վնասաբեր է։

Շանթարգելը պարզապէս երկաթի բունէ մը և հաղորդիչ թել մը կը բաղկանայ։ Ջողոյն բունն ութ մեթր վեր թաղուած հարիւրորդամեթր հատատութիւն ունենալու, և ծայրը ըլատինէ սըլաքաւ մը վերջանալու է, որովհետև այս միջոցս բնաւ չժանգոտիր։ Հաղորդիչը երկաթէ ձող մը կամ աւելի լաւը երկաթի թելով հիւսուած և իւղաւ վերթիճալ օծուած չուան մ՚է, որ բունին ստորոտէն եղնելով չէնքին պատին երկայնութեանը վար կ՚իջնէ, և գետինը հասնելուն չատ մը ճիւղերու կը բաժնուի, որոց ծայրերն չորս հորոյ մը կամ որ և է չրակուտի մը մէջ կը մխին։ Եթէ ջուր չգտնուի, հորոյն մէջ կրնայ մասնաւոր քանակութեամբ մը այրած ածուխ լցուիլ, այն կերպիւ որ հաղորդչին ճիւղերը լաւ մը չրջապատէ։ Շանթարգելի մը ազդեցութեան չրջանը տասը մեթր է չորս կողմէն. ուստի մեծաստուած չէնքերու վրայ իրարմէ քսանական մեթր հեռաւորութեամբ դրուած ըլլալու են.

եթէ աւելի իրարու մօտ դրուած ըլլան , իրարու կը միսաեն :

Շանխաբերին գործողութեան կերպը : — Երբ փոթորիկ մը չանթարդելին վրայէն անցնելու ըլլայ , գործիքին ծայրէն բղխած հսսանուտը օդոյն մէջ կը տարածի , և մինչև ամպը կը հասնի , որով հաւասակ էլեքտրականութիւնը կը չեզոքացնէ . անկից ետքը երկուքնուն մէջ մեկէն միւսը փոխադիակի հսսանք մը կը հաստատուի , որով հետեւութիւնը կըլլայ ամպը իւր պարունակած էլեքտրականութենէն պարպել : Այս պատմութենէս դիւրաւ կը հասկցուի որ՝ կայծակը աղեկ չինուած և լաւ վիճակի մէջ պահպանուած շանթարդելի մը վրայ չկրնար ընկնիլ . վասն զի միւս տեսակ հսսանուտը ամպոյն հաղորդելով որ և է կարելի տարբերութեան առաջքը կ'առնու :

Այն անձինք , որք շանթարդել չունեցող տան մը մէջ կը գտնուին , փոթորկի որոտմանն և գլխուընուն վրայ պայթիլ սպառնացած մէջոցին վտանգէ ղերծ մնալու համար՝ հետեւեալ դուշրութեանց մի քանին ընելու են . — Դռներն ու պատուհանները լաւ մը գոցել . — օդոյ չքեղջանն արդիլուլ . — մեռաղային նիւթերէ և մանաւանդ ծխնելուղէն հեռանալ . վասն զի շատ անգամ տանը երդիքէն դուրս բարձրացող այս անցից միջոցաւ է որ կայծակը սենեկայ մէջ կը մտնէ . — անջատիչ մարմնոյ մը , օրինակի համար անկողնոյ մը , խիժէ խմորոյ մը , և կամ ապակի սկաւառակի մը վրայ կենալ . բայց այս

վերջիններս ամեն մարդոյ ձեռքին տակ չկրնալով գտնուիլ , կրնայ անոնց տեղ գործածուիլ կղզիանալու համար աթոռակ մը , որոյ չորս ոտքերն բնութիւններու կամ չիչի յատակներու մէջ անցուած ըլլան : Հոսակ ուրեմն այն անձինքն , որոց որոտման ձայնը անյապաղելի սոսկում մը կը պատճառէ , մեռաքեայ կերպասներու մէջ փաթթուելու , անոնց ներքև ծածկուելու , և փոթորկին բոլոր տեւողութեան միջոցին անկողնոյ պատսառներու վրայ պառկելու են . այսպէս՝ մեռաքսն ու բուրդը գեշ հաղորդիչ ըլլալով էլեքտրականութեան , այս միջոցիս դիմողն բնաւ կայծակէն վախնալու տեղի չ'ունենար , և այնուհետև վտանգէ ղերծ ըլլալուն վրայ ապահովուելով վստահութիւնն ու հանդարտութիւնը թող իւր երկչոտ հոգւոյն մէջ ծնի :

Ապաքէն յայտնի է որ այնքան տարօրինակ , այնքան հիասքանչ կայծակի ազդեցութիւնները կը պատահին , որ մարդոյս զանոնք առասպելի տեղ դնել և իբր անկարելի չհաւատալը կուգայ : Եւ սակայն ամեն օր այնպիսի նորանոր դէպքեր կ'ստուգուին՝ արժանահաւատ անձանց վկայութեամբ : Այդ՝ ինչպէս որ մարդկային իմացականութիւնը չէ կրցած մինչև ցարդ Մատնիսականութեան և էլեքտրա-համակրութեան ինչ ինչ տարօրինակ երեւութից պատճառն մեկնել , նմանապէս ալ անթիւ էլեքտրական երեւոյթներ ալ անբացատրելի մնացած են ցարդ . միայն սա չափը դուշակելի է թէ՝ էլեքտրականութիւնը

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Երես

Յառաջաբան Թարգմանչին . . . . . Ա.
» Հեղինակին . . . . . Դ.
Մագումն Թագուն Գիտութեանց 9
Գլ. Ա. Հատուած Ա. — Մոգութիւն. իր ծագումն ու յառաջադիմութիւնը . . . 13
Հատուած Բ. — Մոգութեան ազատաղիլը : — Հասարակութեան ձեռքն անցնելով մոգութիւնը այլեւայլ տեսակներու կը բաժնուի 22
Հատուած Գ. — Դիւցական մոգութիւն 26
— Դիւցահմայութիւն. — Աքանչելագործութիւն . . . . . .
Հատուած. Դ. Դիւցահմայութիւն. — Հրաշագործութիւն 29
Գլ. Բ. Հատուած. Ա. Սև մոգութիւն կամ կխեսութիւն 39
Հատուած Բ. Չնարք կամ սրտարողութիւնք Կրօնականք 51
Գլ. Գ. Ա. Պատգամք : Սոցա թիւն և հնոց մէջ ունեցած կարևորութիւնն 55
Դեպիեան Պատգամ 57
Բ. Պատգամ Դոդոնէի (Եպիրոս) . 60
Գ. Պատգամ Ամբամպղայ Ամմոնի ի Լիբիա 60
Դ. Պատգամ Թրոփոնիոսի (ի Բէոտիա) 61
Ե. Ծերպ կամ քաւարան Արբոյն Պատրիկի 63
Զ. Պատգամ Կումայի (Իտալիա) . 67
Գլ. Դ. Հատուած Ա. — Պիթեան հարցկաց և

չատ աւելի ընդարձակ պաշտօն կը վարէ երկրագնահս վրայ, քան զոր մինչև յայսօր չ'են կարծել մարդիկ : Թերևս ապագային մէջ Նեւտոններու, Քեփլերներու նման անձինք, որք ծանրութեան օրէնքը գտան, այն տեսակ հանճարներէն մին, որ դարու մը փառքն ու մարդկութեան պարծանայն ու հիացման առարկայն կըլլան, գտնեն այն օրէնքն՝ որ գլանական նիւթը կը կառավարէ :

Վ Ե Ր Ջ

Սիբիլլայից վրայ 73
Սիբիլլեայք 77
Հատուած Բ. Սիբիլլեան մատեանը . . 81
Գլ. Ե. Իղձք. — Հաւահմայք. — Լերդահմայք. 84
Հատուած Ա. — Իղձք կամ Ըղձապատումք 85
Հատուած Բ. Հաւահմայք 92
Հատուած Գ. Լերդահմայք 95
Գլ. Զ. Ըղձութեան վրայ 102
Գլ. Է. Աստեղագիտութիւնը իբր ըղձութեան միջոց գործածուած 118
Գլ. Ը. Հատուած Ա. — Նոյդ բառումն աստեղագէտն և իւր հարիւրեակները բաղդացոյց գրեանք. — Մարզարէական գրեանք 129
Հատուած Բ. 154
Գլ. Թ. Ընթացք բարձրացման և անկման աստեղագիտութեան՝ ատան և հինգերորդ գարէն ինչուան մեր օրերը: — Մի քանի նոր աստղաբաչխից և մարգարէից վրայօք 159
Գլ. Ժ. Անրջահմայութիւն կամ երազոց միջոցաւ ապագայն դուշակելու արհեստ . . 151
Գլ. ԺԱ. Ձեռնահմայութեան վրայ 156
Գլ. ԺԲ. Հատուած Ա. — Ոգեհոչութիւն . . 163
Հատուած Բ. — Ուրուատեսիլք . . 175
Գլ. ԺԳ. Երևմունք 188
Գլ. ԺԴ. Կանխագէտից նշանք 215
Գլ. ԺԵ. Գիտութեանց վիճակը 'ի Հնումն . . 225
Հատուած Ա. — Տեսարանութիւն . . 226
Հատուած Բ. — Մեքենագիտութիւն . 229
Հատուած Գ. — Լսագիտութիւն . . 235
Հատուած Դ. — Բնագիտութիւնն նախնեաց մէջ 241
Գլ. ԺԶ. Շարժագիտութիւն. — Մեքանոգիտութիւն 246
Գլ. ԺԷ. Հրաշք. — Հրաշալի իրողութիւնք առ նախնիս 253
Գլ. ԺԸ. Հրաշագործական կամ սրբազան բժշկութիւն 265
Գլ. ԺԹ. Հրաշագործաց գործածած այլ և այլ դեղերից և նիւթոց վրայ 281
Գլ. Ի. Նախնեաց մէջ ևս և նոր ժամանակներս գործածուած թունից վրայ . . . 313
Գլ. ԻԱ. Վտանգաւոր կենդանիքն նուաճելու և գանոնք անվնաս դարձնելու համար նախնեաց գտածք այլ և այլ գաղտնի հնարքներուն վրայ 337
Գլ. ԻԲ. Պատմութիւն հրաբուխի 'ի վաղուց անտի մինչև ցայսօր 352
Հատուած Բ. 363
Գլ. ԻԳ. Պայթուցիկ վառօդներու և բանպակավառօդի վրայ. Հատուած Ա. Պայթուցիկք 362
Հատուած Բ. Վառօդ արամպակ կամ պայթարանպակ կամ ազոդուտ բամպակի 377
Գլ. ԻԴ. Ելեքտրականութիւնը նախնեաց մէջ . 387
Գլ. ԻԵ. Կախարդական ըմպելիք. — Սիրարծարծ օշարակք. — Ձիամոլք. — Բժժանք. — Ցուռութք 392
Հատուած Ա. Սիրարծարծ օշարակք . 392
Հատուած Բ. Ձիամոլութեանք . . 397
Հատուած Գ. Բժժանք 404
Հատուած Դ. Ցուռութք 413
Գլ. ԻԶ. Երևակայութիւնը և իւր ազդեցութիւնը մարդկային կազմութեան վրայ . . 528
Գլ. ԻԷ. Կախարդութիւն. Հատուած Ա. — Կա-

խարդք · — Վհուկ կանայք կամ Ջա-
տուկք 452
Հատուած Բ · Ընթացք և յառաջադիմու-
թիւն կախարդութեան 461
Հատուած Գ · Նշանաւոր մարդիկ որք
կախարդութեան հաւատացեալ են . . 470
Հատուած Դ · Պարսամ , որ և Քակլի-
ոպդրայ 475
Հատուած Ե · Կախարդութեան զհոգ ըս-
նացող անձինք 479
Գլ· ԻԸ · *Հատուած Ա · Դիւերաժողով վհկայ · 503*
Հատուած Բ · Մոգական օծումն . . 510
Գլ· ԻԹ · *Հատուած Ա · Դիւահարք · — Ա յտա-*
չարչարք · — Դիւամոլք · — Ջղասար-
սուռք 521
Հատուած Բ · Ջղասարսուռք 557
Գլ· Լ · *Հրով , Ջրով , Ըմպելեօք կլլն · եղած*
վարձերու վրայ 549
Գլ· ԼԱ · *Հատուած Ա · — Հմայիչք · — Համբա-*
րուք · — Սպիտակ սիկնայք 564
Հատուած Բ · — Յարալէզք 571
Հատուած Գ · — Պրօնքօլաքայք . . . 572
Գլ· ԼԲ · *Հատուած Ա · — Համասեռական օգտ-*
մանեակք 574
Հատուած Բ · — Մոգական կամ Կախար-
դական հայելիք 576
Հատուած Գ · — Մոգական դրօշեալք · 577
Գլ· ԼԳ · *Իրա՞ւ է որ օրհասականայ վերջին խօս-*
քերն մարգարէական են · Եկակոչ · 580
Գլ· ԼԴ · *Մոգական կամ ըղձական դաւազան · 584*
Գլ· ԼԵ · *Փիլիսոփայական քար 584*
Գլ· ԼԶ · *Կենդանական Մագնիսականութիւնը կամ*
միջոց հրաշագործութեան 604
Գլ· ԼԷ · *Բաղխող ոգիք · — Դարձող և խօսող սե-*
ղանատախտակք 620
Գլ· ԼԸ · *Եկեղեցականութեան վրայ առ հասարակ 632*
Մի հոգևորական եկեղեցականութիւն . 640

ՎՐԻՊԱԿՔ(*)

ԵՐԵՍ	ՏՈՂ.	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ.
15	14	*վիւտալայց*	*վեռտալայց*
49	26	*կը յուզէին*	*կը յագէին*
50	17	*աւարքն*	*աւուրքն*
56	13	*'ի Թհօմիտիա*	*'ի Բհօմիտիա*
59	3	*վանդակատան*	*վանդակատաւտ*
64	28	*· չորս*	*զորս*
70	22	*յուզել*	*յագել*
76	16	*Պիւթեանն*	*Պիւթիան*
77	11	*ծաթուբիւն*	*ծանօթութիւն*
81	15	*Սիրիլլայց*	*սիբիլլայից*
105	29	*ծամանակը*	*ժամանակը*
120	29	*հասամիտութիւնքն*	*հակամիտութիւնքն*
122	10	*Ծակագ խոսութիւն*	*Հակագ խոսութիւն*
137	22	*դրուածին*	*դրուածքն*
140	23	*ըլաւ*	*եղաւ*
142	25	*Ա.բէսին*	*Ա.բէսան*
144	3	*ապդել*	*ահ ապդել*
152	15	*հասամէտ*	*հակամէտ*
160	15	*հասամիտութիւնքն*	*հակամիտութիւնքն*

(*) Մեր ասն թ արդ մանութեան ՃՂՔ տեարը հրատարակեցնէ և եւս ծանր հիւանդութիւն մը զրկեցնէ զմեզ չկրցինք զժրատղտարար սրբագրութեան մասին ակնաթ եղած հակոզութիւնն ընել մինչև 15ՂՔ տեարը. ատոր այն մէջցին ապրած վրիպակներէն զլուսորները միայն կը դնենք ատ՝ վերծանողաց ներողամտութիւնն խնդրելով հրատարակութեանս այս առաջին թերութեանն վրայ։

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ



175	13	օդաչուխեան	օդաչուխեան
»	29	Lhumbre noir	Fantasmagorie
176	29	Fantasmagori	Chambre noire
189	11	քաչեր	քաղեր
192	2	, վիվիպոպէ ,	փիլիպոպէ
194	8	երեսուն տարու	երեսուն դարու
»	15	պատրգուխեան	պատրգուխեն
207	14	մինչ	մեզ
253	19	Գոզանոսը	Վրթանոսը
250	13	հովս	հովս
256	1	տարր	տարր նկատուած է
264	3	. . . . ներ	անդ ամոլոյծ ներ
268	1	վայրենարարքն	վարքն ու բարքն
466	1	քանական	քնական



2001

1024

2013

0025326

ՀՀ Ազգային գրադարան
NL0025326